



ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР
INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER



ԿԱՃԱՌ
ԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐԳ

КАЧАР
НАУЧНЫЙ ЕЖЕГОДНИК

KATCHAR
SCIENTIFIC
YEARBOOK

2017



ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA



ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР
INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER



ԿԱՃԱՌ
ԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ

•
КАЧАР
НАУЧНЫЙ ЕЖЕГОДНИК

•
KATCHAR
SCIENTIFIC
YEARBOOK



ՉԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ-2017

Երաշխավորվել է տպագրության ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի կողմից:

Рекомендовано к печати Ученым советом Международного научно-
образовательного центра Национальной Академии наук РА

Recommended by the Scientific Council of the International
Scientific-Educational Center of NAS RA

ՀՏԴ 001(045)
ԳՄԴ 72 ց1
Գ 602

Գ 602 Գիտական հոդվածների ժողովածու) ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային
կենտրոն: Գլխ. խմբ.՝ Ն. Հակոբյան.— Եր.: Զանգակ, 2017.— 472 էջ:

ՀՏԴ 001(045)
ԳՄԴ 72 ց1

ISBN 978-9939-68-346-1

© ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ, 2017
© «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ, 2017

Խմբագրական խորհրդի նախագահ՝

Ալբերտ Սարգսյան – ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝

Նաիրա Հակոբյան – ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պարասխանապուր քարտուղար՝

Մելինե Սարգսյան – ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի գիտքարտուղար

Խմբագրական կոլեգիա՝

Յուրի Շուրբուրյան – ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս

Աշոտ Խաչատրյան – ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան Քոչարյան – ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի քաղաքագիտության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

Մանուկ Հարությունյան – ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլիսոփայության գիտությունների թեկնածու

Արմեն Սահակյան – Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի պատմության և տեսության ամբիոն, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայկ Պետրոսյան – Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր

Նաիրա Ավագյան – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր

Գոհար Գրիգորյան – ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի օտար լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

Председатель редакционного совета

Юрий Шукурян – вице-президент НАН РА, академик

Альберт Саргсян – директор Международного научно-образовательного центра Национальной Академии Наук РА, доктор физико-математических наук, профессор

Главный редактор

Наира Акопян – декан Международного научно-образовательного центра Национальной Академии Наук РА, доктор психологических наук, профессор

Ответственный секретарь

Мелинэ Саркисян – ученый секретарь Международного научно-образовательного центра Национальной Академии Наук РА

Редакционная коллегия

Ашот Хачатрян – член конституционного суда РА, доктор юридических наук, профессор

Тигран Кочарян – заведующий кафедрой политологии Международного научно-образовательного центра Национальной Академии Наук РА, доктор политических наук, профессор

Манук Арутюнян – заведующий кафедрой философии Международного научно-образовательного центра Национальной Академии Наук РА, доктор философских наук

Армен Саакян – кафедра истории и теории социологии Ереванского государственного университета, кандидат наук, профессор

Гайк Петросян – Ереванский Государственный университет лингвистики и социальных наук имени В. Брюсова, доктор педагогических наук, профессор

Наира Айвазян – директор Института физиологии им. Л. А. Орбели, доктор биологических наук

Гоар Григорян – Заведующая кафедрой иностранных языков Международного научно-образовательного центра Национальной Академии Наук РА, кандидат филологических наук, доцент

Chief of the Editorial Board

Albert Sargsyan – *Director of the International Scientific–Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor*

Editor-in-Chief

Naira Hakobyan – *Dean of the International Scientific–Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Doctor of Psychological Sciences, Professor*

Executive Secretary

Meline Sargsyan – *Scientific Secretary of the International Scientific–Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia*

Editorial Board

Yuri Shoukourian – *Vice-President of NAS RA, Member of the Presidium of NAS RA, Academician*

Ashot Khachatryan – *Member of the Constitutional Court of RA, Doctor of Law, Professor*

Tigran Qocharyan – *Head of the Chair of Political Science of the International Scientific–Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Doctor of Political Sciences, Associate professor*

Manuk Harutyunyan – *Head of the Chair of Philosophy of the International Scientific–Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Candidate of Philosophical Sciences*

Armen Sahakyan – *Yerevan State University, Chair of Theory and History of Sociology, Doctor of Sociological Sciences, Professor*

Hayk Perosyan – *Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Doctor of Pedagogical Sciences, Professor*

Naira Ajvazyan – *Director of Institute of Physiology after L. A. Orbeli NAS RA, Doctor of Sciences*

Gohar Grigoyan – *Head of the Chair of Foreign Languages of the International Scientific–Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Lecturer of Canolidate of Philological Sciences, Associate professor*

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի կողմից հրատարակված գիտական հոդվածների ժողովածուն ներառում է հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտների գիտական հոդվածներ: Ժողովածուում գերերկված են գիտաբնական և գիտամեթոդական բնույթի հոդվածներ, որոնք կօժանդակեն հասարակական և հումանիտար գիտությունների առջև ծանրացած խնդիրների լուսարանմանը, համաշխարհային փորձի ուսումնասիրմանը և առաջընթացին: Գիտական հոդվածների ժողովածուն նախատեսված է քաղաքագետների, իրավաբանների, հոգեբանների, հումանիտար ու հասարակական գիտությունների ոլորտների մասնագետների և առհասարակ հիշյալ գիտակարգերի զարգացմանը շահագրգիռ յուրաքանչյուրի համար:

Сборник научных статей, изданный Международным научно–образовательным центром НАН РА, включает в себя работы в области гуманитарных и общественных наук. Сборник состоит из статей теоретического и научно–методического характера, которые посвящены проблемам различных отраслей науки, изучению международного опыта и передовых технологий. Сборник предназначен для политологов, юристов, психологов, специалистов гуманитарной и общественной областей науки и всех, интересующихся достижениями указанных направлений науки.

Collection of scientific articles published by the International Scientific–Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia includes research in the humanities and social sciences. The collection consists of articles of theoretical and scientific–methodological character, which are devoted to highlighting the problems of various branches of the language, the study of international experience and advanced technologies. The collection is intended for political scientists, lawyers, psychologists, specialists of social and humanitarian fields of science and all those interested in the achievements of these areas of science.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶԻԿԱ, ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

ԱԼԲԵՐՏ ՍԱՐԳՍՅԱՆ, ՍԵՐԳԵՅ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, ԵՐՋԱՆԻԿ ԶԱՐԳԱՐՅԱՆ, ԷԴԳԱՐ ՄՈՒՂՆԵՑՅԱՆ Կրկնակի կարճատև ջերմամշակման ազդեցությունը երկարատև պահված բազմաբյուրեղային $YBa_2Cu_3O_x$ գերհաղորդիչների էլեկտրատրանսպորտային հատկությունների վրա.....	16
ԱԼԵԿՍԱՆԴՐ ՏՐՈՒՍԻՆ, ԳԱՌՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ Բարդ համակարգերի մոդելավորումը դիսկոնտիկայի խնդիրներում	23
ԳՈՒՇԱՐԻԿ ԴԵՏՐՈՍՅԱՆ, ԷԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ Համացանցի ազդեցության և գովազդի արդյունավետության վերլուծությունը	31

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ԽԱԶԱՏՐՅԱՆ Սահմանադրական անվտանգությունը և քաղաքացիների իրավունքների ու ազատության պաշտպանության բնագավառում սահմանադրական վերահսկողության առանձին հարցեր. օրինաչափություններ և շեղումներ	38
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ, ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ Իրավունքի համակարգում նորմատիվ կարգավորիչների հիերարխիկ տարաբնույթ կապերը	43
ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Սահմանադրական սկզբունքների և նորմերի դերն ու նշանակությունը Եվրասիական տնտեսական միության միջպետական ինտեգրման գործընթացների շրջանակներում	50
ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրը սահմանադրական ժամանակակից գործընթացում	56
ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ Իրավունքի համակարգում աստիճանակարգության (հիերարխիայի) իմաստավորման առանձնահատկությունները	63
ՆՈՐԻԿ ՆՈՐԻԿՅԱՆ Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը՝ որպես Զինված ուժերի մարտունակության գրավական (կամ ինչո՞ւ է անհրաժեշտ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումը)	70
ՀԱՅԿ ՄԿՐՏՅԱՆ Ռեցիդիվը՝ որպես հանցագործությունների բազմակիության տեսակ	82
ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ Իրավունքի աղբյուրների սնվող-ապրտեսական հասկացություն	89
ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ Ներպետական (ազգային) իրավունքի և միջազգային իրավունքի փոխգործակցության կառուցակարգը. իրավական բովանդակությունը, ձևերը և մեթոդները	96
ԵԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Իրավական ռեժիմի հասկացությունը և հատկանիշները	103
ՎԱՂԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ Վարչական հայեցողության ինստիտուտի բարելավման ուղիները վարչարարության սահմանադրական հիմքերի իրացման համատեքստում	108

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Ներդրումների ներգրավման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ կայուն տնտեսական աճի համատեքստում	115
ԱՆՆԱ ԲԱՐՈՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ Գիտական հետազոտությունների և նորարարական լուծումների արդյունքների առևտրայնացման խնդիրները և զարգացման միտումները ՀՀ-ում	120
ՀԱՍՄԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ Մրցունակ արտադրանքը՝ որպես ձեռնարկատիրական ռիսկերի նվազեցման երաշխիք	126
ՀԱՅԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ Ներդրումային միջավայրի դերը և գնահատման առանձնահատկությունները	135

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իրադրային մոդելների դերը տնտեսական իրադարձության հասկացության դաշտի ձևավորման գործընթացում..... 142

ՌԱՖԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանկային համակարգի ֆինանսական կայունության էությունը և սահմանափակ հիմնական մոտեցումները..... 148

ՌԱԴԻԿ ՎԵՐԴՅԱՆ

Տնտեսության գործարքային հատվածի կառուցվածքը և դինամիկան ՀՀ-ում..... 157

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Ռուսաստանի դերը Ղարաբաղյան հիմնախնդրի քանակցային ձևաչափում..... 164

ԲԱԳՐԱՏ ԲԱԳՐԱՏՅԱՆ

Օրենսդիր իշխանության դերը իշխանությունների տարանջատման համակարգում 172

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Քենդի- Դևիդի (1979թ.) ժառանգությունը. Իսրայելի հետ անհատական խաղաղության հաստատման հետագա փորձերը..... 178

ԱՆԺԵԼԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն-ՆԱՏՕ ռազմական հարաբերությունների համառոտ վերլուծությունը..... 183

ՀԱՅԿ ՂՈՒԼՅԱՆ

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ Մադրիդյան սկզբունքների ձևավորման հիմնական նախադրյալները..... 191

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՀՄԱՆ ԲԱՀԱԴՈՐԻ

Անվագ քաղաքի էկոլոգիական վիճակի գնահատումն՝ ըստ արբանյակային և օդային նկարներից ստացված տվյալների 198

ԱԲԴՈՒԼԼԱՀ ՅԱՐԱՀՄԱԴԻ

Դիտարկումներ Իրանի Անվագ քաղաքի մարդկային աշխարհագրության վերաբերյալ 205

ԳՐԻԳՈՐ ԶԱԽԱՐՅԱՆ

Հայաստանի էներգետիկ ոլորտը «կայուն զարգացում» հասկացության համատեքստում..... 209

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ, ԼԻԼԻԹ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ծողո-դեռահաս փոխհարաբերությունները սեռադերային նույնականցման դեատրոլոգիաներ ունեցող դեռահասաների մոտ 217

ԱԲԴՈՒԼՄԱՋԻԴ ՆԵԳԱՐԵՇՆԵԺԱԴ

Ուսանողների անձնային հատկանիշների և հուզական ինտելեկտի հարաբերակցության հետազոտություն 223

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ընտանեկան միջավայրը և կրտսեր դպրոցականի անձի ձևավորման հիմնախնդիրը 228

ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ընտանիքի դերն ու ազդեցությունը կնոջ մասնագիտական ինքնիրացման գործընթացում..... 235

ԺՈՋԵՖԻՆԱ ԵՍԱՅԱՆ

Սոցիալական կարծրատիպերի հոգեքանական հետազոտությունների հիմնական առանձնահատկությունները..... 240

ԼՈՒՍԻՆԵ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Ղեկավարի կառավարչական ընդունակությունների համալիրն ըստ իրականացվող դերերի 244

ՄԱՐԻԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՏԱԹԵՎ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ինտելեկտի ասիմետրիկ գիտության մեջ և տեսությունների վերլուծությունը..... 251

ՄԱՐԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Աշխատակիցների նկատմամբ հոգեքանական բռնության դրսևորումները..... 255

ՌՈՒԶԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կին մարդասպանների հոգեքանական առանձնահատկությունները 261

ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ, ԱՆԺԵԼԻԿԱ ԱՅՎԱԶՅԱՆ

Գենդերային դերերի առանձնահատկություններն ու դրանց նկատմամբ ձևավորված վերաբերմունքների տարբերությունները հայ հասարակության մեջ..... 265

ԱՐԱՅԻԿ ՖԻՐՅԱՆ

Սահմանամերձ գոտում բնակվող դեռահասների հոգեբանական կայունության բնութագրումը 270

ԿԱՐԼԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Հոգեբանական երևույթների դերի կարևորումը տնտեսական գործընթացներում..... 277

ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

Կրտսեր դպրոցականի կողմից տեքստը հասկանալու հիմնախնդիրը հոգեբանության մեջ..... 283

ՍՈՆԱ ԴԱՎԹՅԱՆ

Կենսաբարոյագիտությունը՝ որպես միջառարկայական և արժեքանական ուսումնասիրությունների նոր բնագավառ..... 294

ԱՐՄԱՆ ԲԵԳՈՅԱՆ

Միջանձնային հարաբերությունների ընդհանուր բնութագիրը 302

ԱՆԱՀԻՏ ՋԻՋՅԱՆ, ՌՈՄԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ, ՆԵՐՍԵՍ ՔՈՉԱՐՅԱՆ

Քրիստոնեական կենսակերպի արմատավորումը՝ որպես ընտանիքի բարոյահոգեբանական վիճակի բարելավման գործոն..... 318

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՄԻՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ

Աղքատ ընտանիքների աջակցության սոցիալական տեխնոլոգիաների վերաիմաստավորման ներկա հիմնախնդիրը Հայաստանում 327

ՌԱՋԱԲԱԼԻ ԱԼԼԱՀՅԱՐԱՀՄԱԴԻ

Հասարակական անխտանգության մակարդակի ընկալման ազդեցությունը սոցիալական վտահոտության ձևավորման վրա 335

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մեդիաիրազեկության հիմնախնդիրը ուսանողների շրջանում..... 343

ՄԱՌԼԵՆԱ ԱԼԵԲՅԱՆ

Ուսումնական դրդապատճառներ. տեսակներն ու առանձնահատկությունները..... 346

ԱՆՆԱ ՉԱՐՉՅԱՆ

Տարրական դասարանների՝ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող աշակերտների գրավոր խոսքի խանգարումների շտկման հիմնական մոտեցումները մայրենիի ուսուցման գործընթացում..... 352

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ազդեցությունը հեռուստատարադրանքի փոխակերպման վրա 360

ԻՆԳԱ ՄԱՐՏԻՆՅԱՆ

Մոբիլոլոգիա. ազդեցությունը և հետևանքները Հայաստանում..... 365

ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հանրային կապերը զբոսաշրջության ոլորտում..... 373

ԻՐԻՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Առկայացման կարգի դրսևորումները արևմտահայ չափածոյում..... 378

ՔՐԻՍՏԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ստեփան Ոսկանյանի «Արևելք» հանդեսի 15–րդ համարի անոտագլիզմ մատենագիտությունը 386

ԼԱՌԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

Միջմշակութային հաղորդակցության մեջ էթիկետի նորմերի խախտումը՝ որպես հաղորդակցական ձախողումներ 390

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ <i>Ծիսապաշտամունքային մոտիվները փեսայի շեմին կատարվող հարսանեկան ծիսերգերում.....</i>	395
ԶԱՐՈՒՇԻ ՀԱՅՐՅԱՆ <i>Վահագն Դավթյանի պոեզիայի համեմատական վերլուծությունները Իրինա Մեզգովայի թարգմանություններում.....</i>	401
ԶԱՐՈՒՇԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ <i>«Բարեկամական հարաբերություններ» ինստային դաշտն արտահայտող դարձվածային միավորներն անգլերենում, հայերենում և իսպաներենում.....</i>	407
ԱՐՈՒՍՅԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ <i>Հատուկ նպատակների լեզուն (ՀՆԼ) և անգլերեն իրավագիտական ենթալեզվի ձևավորման որոշ հարցեր.....</i>	414
ԱԼԼԱ ՄԿՐՏՉՅԱՆ <i>Զանգվածային-լրատվական բառապաշարի ընտրության հիմնախնդիրը ուսանող-լրագրողների ինքնաբերական խոսքի ուսուցման ընթացքում.....</i>	424
ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ <i>Ալեասանդրո Մանձոնիի «Նշանվածները» («Ֆերմո և Լոիշիա») պատմավեպի առանձնահատկությունները....</i>	430
ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ <i>Միջնալուծային և միջանձնային հաղորդակցության դերը օտար լեզու ուսուցանելիս.....</i>	437
ՀԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ <i>Փոխառյալ բառերն անգլերենում.....</i>	442
ԼՅՈՒՍՅԱ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ <i>Բնագրային տեքստերի ընտրության սկզբունքները տնտեսագետ ուսանողների բանավոր խոսքի զարգացման նպատակով.....</i>	448
ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ <i>Երկրորդ լեզվի ուսումնասիրության գործընթացում վերլուծաբնադատական հմտությունների զարգացման և կիրարկման եղանակները.....</i>	453
ԳՐԱԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՀԱՅԿԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ, ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ <i>Հայ տպագիր ժառանգությունը պատմության հոլովույթում.....</i>	459

СОДЕРЖАНИЕ

ФИЗИКА, ИНФОРМАТИКА

АЛЬБЕРТ САРГИСЯН, СЕРГЕЙ НИКОГОСЯН, ЕРДЖАНИК ЗАРГАРЯН, ЭДГАР МУГНЕЦЯН <i>Влияние двойной кратковременной термообработки на электротранспортные свойства поликристаллических сверхпроводников длительного хранения $YBa_2Cu_3O_x$.....</i>	16
АЛЕКСАНДР ТЫРСИН, ГАРНИК ГЕВОРГЯН <i>Моделирование сложных систем в задачах диагностики.....</i>	23
ГОАРИК ПЕТРОСЯН, ЭЛЯ АВАГЯН <i>Анализ влияния интернета и эффективности рекламы.....</i>	31

ЮРИСПРУДЕНЦИЯ

АШОТ ХАЧАТРЯН <i>Конституционная безопасность и вопросы конституционного контроля по защите прав и свобод граждан: закономерности и отклонения.....</i>	38
ГАРНИК САФАРЯН, ДАВИД АКОПЯН <i>Иерархические разнородные связи нормативных регуляторов в системе права.....</i>	43
АБРААМ АБРААМЯН <i>Роль и значение конституционных принципов и норм Евразийского Экономического Союза в рамках</i>	

<i>межгосударственных интеграционных процессов</i>	50
АРАМ ХАЧАТРЯН	
<i>Проблема суверенитета Республики Армения в современном конституционном процессе</i>	56
ДАВИД АКОПЯН	
<i>Особенности осмысления иерархии в системе права</i>	63
НОРИК НОРИКЯН	
<i>Институт военного омбудсмана как гарантия боеспособности вооруженных сил</i>	70
ГАЙК МКРТЧЯН	
<i>Рецидив как форма множественности преступлений</i>	82
ТИГРАН ТОРОСЯН	
<i>Англо-саксонское понимание источников права</i>	82
ВАГЕ ТОРОСЯН	
<i>Механизм взаимодействия внутригосударственного (национального) права и международного права: правовое содержание, формы и методы</i>	96
ЕГОР КАРАПЕТАН	
<i>Понятие и особенности правового режима</i>	103
ВАГАРШАК САРКИСЯН	
<i>Пути совершенствования института административного усмотрения в контексте реализации конституционных основ администрирования</i>	108

МЕНЕДЖМЕНТ ОБРАЗОВАНИЯ

КАРЕН САРГСЯН	
<i>Проблемы привлечения инвестиций в контексте устойчивого экономического роста в РА</i>	115
АННА БАРОЯН, НАРИНЭ МАНУКЯН	
<i>Проблемы и тенденции развития коммерциализации результатов научных исследований и инновационных решений</i>	120
АСМИК ГЕВОРГЯН	
<i>Конкурентоспособная продукция как гарантия снижения бизнес – риска</i>	126
АЙК МХИТАРЯН	
<i>Роль инвестиционной среды и особенности ее оценки</i>	135
ЛУСИНЕ АРУТЮНЯН	
<i>Роль эпизодических моделей в процессе концептуализации экономических событий</i>	142
РАФИК АРУТЮНЯН	
<i>Сущность финансовой стабильности банковской системы и основные подходы к ее определению</i>	148
РАДИК ВЕРДЯН	
<i>Структура и динамика транзакционного сектора экономики в РА</i>	157

ПОЛИТОЛОГИЯ

АРМЕН АГАБАБЯН	
<i>Роль России в формате переговоров по Карабахскому конфликту</i>	164
БАГРАТ БАГРАТЯН	
<i>Роль законодательной власти в системе разделения властей</i>	172
АНДРАНИК АРАКЕЛЯН	
<i>Наследство Кэмп-Дейвида (1979г.): Индивидуальные попытки арабских стран по достижению мира с Израилем</i>	178
АНЖЕЛА МНАЦАКАНЯН	
<i>Армения-НАТО: краткий анализ военных отношений</i>	183
ГАЙК ГУЛЯН	
<i>Основные предпосылки формирования Мадридских принципов по урегулированию Карабахского конфликта</i>	191

ГЕОГРАФИЯ

БАХМАН БАХАДОРИ <i>Оценка экологического состояния города Айваз по данным спутниковых и воздушных снимков</i>	198
АБДУЛЛА ЯРАХМАДИ <i>Наблюдения о географии человека в Иранском городе Айваз</i>	205
ГРИГОР ЗАХАРЯН <i>Энергетический сектор Армении и концепция «устойчивого развития»</i>	209

ПСИХОЛОГИЯ

НАИРА АКОПЯН, ЛИЛИТ ХАЧАТРЯН <i>Детско-родительские взаимоотношения у подростков, имеющих деструкцию сексуально-ролевой идентификации</i>	217
АБДОЛМАДЖИД НЕГАРЕШНЕЖАД <i>Исследование соотношения индивидуальных качеств и эмоционального интеллекта студентов</i>	223
ГАЯНЭ ГРИГОРЯН <i>Семейная среда и проблема формирования личности младшего школьного возраста</i>	228
АЙКУИ АРУТЮНЯН <i>Роль и влияние семьи на процесс профессиональной самореализации женщин</i>	235
ЖОЗЕФИНА ЕСАЯН <i>Основные особенности психологических исследований социальных стереотипов</i>	240
ЛУСИНЕ ЧИЛИНГАРЯН <i>Комплекс управленческих качеств руководителя в соответствии с осуществляемыми ролями</i>	244
МАРИАНА АВЕТИСЯН, ТАТЕВ АВЕТИСЯН <i>Определение интеллекта в науке и анализ теорий</i>	251
МАРИНЕ МИКАЕЛЯН <i>Проявления психологического насилия работников</i>	255
РУЗАННА МАРКАРЯН <i>Психологические особенности женщин-убийц</i>	261
АНАИТ САРГСЯН, АНЖЕЛИКА АЙВАЗЯН <i>Особенности гендерных ролей и различия в отношении к ним, сформировавшиеся в армянском обществе</i>	265
АРАИК ФИРЯН <i>Характеристика психологической устойчивости подростков, проживающих в приграничной зоне</i>	270
КАРЛЕН ВОСКАНЯН <i>Значимость роли психологических явлений в экономических процессах</i>	277
ОФЕЛЯ АВАГЯН <i>Проблема понимания текста младшими школьниками в психологии</i>	283
СОНА ДАВТЯН <i>Биоэтика как новая область междисциплинарных и аксиологических исследований</i>	294
АРМАН БЕГОЯН <i>Общая характеристика межличностных отношений</i>	302
АНАИТ ДЖИДЖЯН, РОМИК КОЧАРЯН, НЕРСЕС КОЧАРЯН <i>Укоренение христианского образа жизни как фактор улучшения нравственно-психологического состояния семьи</i>	318

СОЦИОЛОГИЯ

МИРА АНТОНЯН <i>Проблема переосмысления социальных технологий социального содействия бедным семьям в постсоветской Армении</i>	327
РАДЖАБАЛИ АЛЛАХЯРАХМАДИ <i>Влияние восприятия уровня общественной безопасности на формирование социального доверия</i>	335

ПЕДАГОГИКА

МАРГАРИТА ПЕТРОСЯН <i>Формирование медиакомпетенции у студентов</i>	343
МАРЛЕНА АЛЕКЯН <i>Учебные мотивации: виды и особенности</i>	346
АННА ЧАРЧЯН <i>Основные подходы коррекции нарушения письменной речи в процессе обучения родного языка у учащихся начальных классов с нарушениями умственного развития</i>	352

ЖУРНАЛИСТИКА

АСТГИК АВЕТИСЯН <i>Воздействие развития коммуникационных технологий на трансформацию телевизионного продукта</i>	360
ИНГА МАРТИНЯН <i>Мобильные телефоны, влияние и последствия в Армении</i>	365

МЕТОДИКИ ОБУЧЕНИЯ И ПРЕПОДАВАНИЯ

НАРИНЕ ВАРДАНЯН <i>Связи с общественностью в сфере туризма</i>	373
ИРИНА МЕЛКОНЯН <i>Особенности проявления грамматических категорий определенности и неопределенности в западноармянской поэтической речи</i>	378
КРИСТИНЕ ОГАННЕСЯН <i>Аннотированная библиография 15-го номера журнала Ст. Восканяна “Аревелк”</i>	386
ЛАУРА МЕЛИКЯН <i>Коммуникативные неудачи как нарушение этикетных норм в межкультурной коммуникации</i>	390
НВАРД ВАРДАНЯН <i>Ритуально-культурные мотивы свадебных песен, исполняющихся на пороге жениха</i>	395
ЗАРУИ АЙРЯН <i>Компаративный анализ переводов Ирины Снеговой поэзии Ваагна Давтяна</i>	401
ЗАРУИ СОГОМОНЯН <i>Идиоматические единицы семантического поля “родственные отношения” в английском, армянском и испанском</i>	407
АРУСЯК АРУТЮНЯН <i>Английский для специальных целей (АСЦ) и некоторые аспекты формирования юридического английского</i>	414
АЛЛА МКРТЧЯН <i>Проблема отбора масс-медийной лексики при обучении английской спонтанной речи студентов-журналистов</i>	424
АННА АРУТЮНЯН <i>Особенности исторического романа Мандзони “Обрученные” (Фермо и Лучия)</i>	430
ГОАР ГРИГОРЯН <i>Роль межкультурной и межличностной коммуникации в преподавании иностранного языка</i>	437
АСМИК АБРААМЯН <i>Заемствованные слова в английском языке</i>	442
ЛЮСЯ ТЕР-САРГСЯН <i>Принципы отбора аутентичных текстов в целях развития устной речи студентов-экономистов</i>	448
ЛИЛИТ МЕЛИКЯН <i>Методы разработки и применение навыков критического мышления в усвоении второго языка</i>	453

БИБЛИОТЕКОВЕДЕНИЯ

ТИГРАН ЗАРГАРЯН, АЙКАНУШ КАЗАРЯН, МАЙА ГРИГОРЯН <i>Армянское печатное наследие в процессе исторической эволюции</i>	459
--	-----

CONTENTS

PHYSICS, INFORMATICS

ALBERT SARGSYAN, SERGEY NIKOGHOSYAN, YERJANIK ZARGARYAN, EDGAR MUGHNETSYAN <i>Double Short-Term Heat Treatment Effect On The Electrical Transport Properties Of Long-Term Stored $Yb_{2}Cu_{3}O_{x}$ Polycrystalline Superconductors</i>	16
ALEKSANDR TIRSIN, GARNIK GEVORGYAN <i>The Modeling Of Complex Systems In Problems Of Diagnosis</i>	23
GOHARIK PETROSYAN, ELYA AVAGYAN <i>The Impact Of The Internet And The Analysis Of The Advertising Effectiveness</i>	31

IURISPRUDENCE

ASHOT KHACHATRYAN <i>Constitutional Safety And Issues On Constitutional Control Over The Protection Of Rights And Freedoms Of Citizens: Regularities And Deviations</i>	38
GARNIK SAFARYAN, DAVID HAKOBYAN <i>Hierarchical Heterogeneous Relations Of Normative Regulators In Law System</i>	43
ABRAHAM ABRAHAMYAN <i>Role And Importance Of Constitutional Principles And Norms Of Eurasian Economic Union Within The Framework Of Interstate Integration Processes</i>	50
ARAM KHACHATRYAN <i>The Problem Of Sovereignty In The Republic Of Armenia In The Modern Constitutional Process</i>	56
DAVID HAKOBYAN <i>Peculiarities Of Comprehension Of The Hierarchy In Law System</i>	63
NORIK NORIKYAN <i>Institute Of Military Ombudsman As A Guarantee For Armed Forces Fighting Efficiency</i>	70
HAYK MKRTCHYAN <i>Recidivism As A Form Of Crime Plurality</i>	82
TIGRAN TOROSYAN <i>The Anglo-Saxon Concept Of Sources Of Law</i>	89
VAHE TOROSYAN <i>Interaction Mechanism Of Interstate (National) Law And International Law: Legal Content, Forms And Methods</i>	96
YEGOR KARAPETYAN <i>The Concept And Features Of Legal Regime</i>	103
VAGARSHAK SARGSYAN <i>Ways Of Improvement Of Administrative Discretion In The Context Of The Implementation Of Administration Constitutional Basis</i>	108

MANAGEMENT

KAREN SARGSYAN <i>The Issues On Attracting Investments In The Context Of Sustainable Economic Growth In The RA</i>	115
ANNA BAROYAN, NARINE MANUKYAN <i>Problems Of Commercialization Of Scientific Research Results And Innovation Solutions And Their Development Trends In The RA</i>	120
HASMICK GEVORGYAN <i>Competitive Production As A Guarantee Of Reduction In Business Risk</i>	126
HAYK MKHITARYAN <i>The Role Of Investment Environment And Specifics Of Its Evaluation</i>	135
LUSINE HARUTYUNYAN <i>The Role Of Episodic Models In The Process Of The Conceptualization Of Economic Events</i>	142

RAFIK HARUTYUNYAN <i>The Essence Of Financial Stability Of The Banking System And The Main Approaches To The Definition</i>	148
RADIK VERDYAN <i>The Structure Of Transaction Sector And Its Dynamics In RA.....</i>	157

POLITICAL SCIENCE

ARMEN AGHABABYAN <i>Russia's Role In The Format Of Talks On Karabakh Conflict.....</i>	164
BAGRAT BAGRATYAN <i>The Role Of The Legislative Power In The Separation Of Powers</i>	172
ANDRANIK ARAKELYAN <i>Camp-David's (1979) Legacy: Arab Countries' Individual Peace Efforts With Israel.....</i>	178
ANZHELA MNATSAKANYAN <i>Armenia-Nato: A Brief Analysis Of Military Relations.....</i>	183
HAYK GHOULYAN <i>Key Prerequisites Of Madrid Principles Formation On Karabakh Conflict Settlement.....</i>	191

GEOGRAPHY

BAHMAN BAHADORI <i>Environmental Assessment Of The State Of The City Of Ahvaz , According To Data Received From Satellite And Air Images.....</i>	198
ABDOLLAH YARAHMADI <i>Observations On Human Geography Of Ahvaz City Of Iran</i>	205
GRIGOR ZAKHARYAN <i>Energy Sector Of Armenia And The Concept Of Sustainable Development.....</i>	209

PSYCHOLOGY

NAIRA HAKOBYAN, LILIT KHACHATRYAN <i>Parent-Child Relationships Of Teenagers Having Destruction Of Sexual Identification.....</i>	217
ABDOLMAJID NEGARESHNEJAD <i>Results Of Survey Concerning The Students` Individual Peculiarities And Emotional Intellect Ratio</i>	223
GAYANE GRIGORYAN <i>Family Environment And The Problem Of Formation Of Personality Of Primary School Age</i>	228
HAYKUHI HARUTYUNYAN <i>The Role And Influence Of The Family On The Process Of The Professional Self-Realization Of Women.....</i>	235
JOZEFINA YESAYAN <i>Main Features Of Psychological Research On Social Stereotypes.....</i>	240
LUSINE CHILINGARYAN <i>Set Of Leadership Competencies According To The Roles Enacted.....</i>	244
MARIANA AVETISYAN, TATEV AVETISYAN <i>Definition Of Intellect In The Science And Analysis Of Theories</i>	251
MARINE MIKAELIAN <i>The Manifestations Of Psychological Violence Of Workers</i>	255
RUZANNA MAKARYAN <i>Psychological Peculiarities Of Women- Killers.....</i>	261
ANAHIT SARGSYAN, ANZHELIKA AYVAZYAN <i>Features Of Gender Roles And Differences In Attitudes Formed Towards Them In Armenian Society</i>	265
ARAYIK FIRYAN <i>Psychological Stability Characteristics Of The Teenagers Living On The Borderline</i>	270

KARLEN VOSKANYAN <i>Importance Of The Role Of Psychological Phenomena In Economic Processes.....</i>	277
OFELYA AVAGYAN <i>The Issue Of Text Comprehension By Junior Pupils In Psychology.....</i>	283
SONA DAVTYAN <i>Bioethics As A New Field Of Interdisciplinary And Value Research.....</i>	294
ARMAN BEGOYAN <i>General Characteristics of Interpersonal Relations</i>	302
ANAHIT JIJYAN, ROMIK KOCHARYAN, NERSES KOCHARYAN <i>Enrooting Of Christian Life Mode As Factor For Improving The Family Moral–Psychic Atmosphere</i>	318

SOCIOLOGY

MIRA ANTONYAN <i>The Issue Of Reconsidering Current Social Technologies Of Support Of Poor Families In Post Soviet Armenia</i>	327
RAJABALI ALLAHYARAHMADI <i>Influence Of Perception Of The Level Of Public Safety On The Formation Of Social Confidence</i>	335

PEDAGOGY

MARGARITA PETROSYAN <i>The Problem Of Media Competency Among Students</i>	343
MARLENA ALEKYAN <i>Teaching Motivation: Types And Characteristics</i>	346
ANNA CHARCHYAN <i>The Essential Correctional Ways Of Writing Disorders Of Primary Schoolchildren With Mental Development Disorders In Native Language Teaching Process</i>	352

JURNALISTICS

ASTGHIK AVETISYAN <i>The Impact Of Development Of Communication Technologies On Transformation Of Television Product.....</i>	360
INGA MARTINYAN <i>Mobile Phones, Impact And Consequences In Armenia</i>	365

THE ARMENIAN LANGUAGE AND LITERATURE

NARINE VARDANYAN <i>Public Relations In Tourism.....</i>	373
IRINA MELKONYAN <i>Peculiarities Of Expressing The Category Of Determination In Western Armenian Verse</i>	378
KRISTINE HOVHANNISYAN <i>The Annotated Bibliography Of The 15Th Issue Of The Journal ‘The Arevelk’ By St. Voskanyan.....</i>	386
LAURA MELIKYAN <i>Communication Failures In Intercultural Communicatios As A Breach Of Etiquette Rules</i>	390
NVARD VARDANYAN <i>Ritual–Religious Motives Of Wedding Songs Sung At The Groom’s Threshold</i>	395
ZARUHI HAYRYAN <i>Comparative Analysis Of The Translations By Irina Snegova In Vahagn Davtyan’s Poetry</i>	401
ZARUHI SOGHOMONYAN <i>Idiomatic Units Of The Semantic Field “Family Relationship” In English, Armenian And Spanish</i>	407
ARUSYAK HARUTYUNYAN <i>English For Specific Purposes (ESP) And Several Aspects Of Formation Of Legal English</i>	414
ALLA MKRTCHYAN <i>The Problem Of Selecting Mass–Media Vocabulary To Teach Spontaneous Speech To Student–Journalists.....</i>	424

ANNA HARUTYUNYAN <i>Features Of Historical Novel The “Betrothed Lovers” (Fermo And Lucia) By A. Manzoni</i>	430
GOHAR GRIGORYAN <i>The Role Of Intercultural And Interpersonal Communication In Teaching Foreign Languages.....</i>	437
HASMICK ABRAHAMYAN <i>Borrowed Words In English</i>	442
LUSYA TER-SARGSYAN <i>The Principles Of Selecting Authentic Texts To Develop Skills Of Students Majoring In Economics.....</i>	448
LILIT MELIKYAN <i>Methods Of Development And Application Of Critical Thinking Skills In Learning A Second Language.....</i>	453

LIBRARY SCIENCE

TIGRAN ZARGARYAN, HAYKANUSH GHAZARYAN, MAYA GRIGORYAN <i>The Armenian Printed Heritage Through The Centuries</i>	459
--	------------

ՖԻԶԻԿԱ, ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

ԿՐԿՆԱԿԻ ԿԱՐՃԱՏՆ ԶԵՐՄԱՄՇԱԿՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԿԱՐԱՏԵՎ ՊԱՀՎԱԾ ԲԱԶՄԱԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ $YBa_2Cu_3O_x$
ԳԵՐՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ԷԼԵՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

ԱԼԲԵՐՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի Կոնստանտին
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍԵՐԳԵՅ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Երևանի ֆիզիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

ԵՐԶԱՆԻԿ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ուսումնական մասի պետ,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

ԷԴԳԱՐ ՄՈՒՂՆԵՑՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի աշխատակից,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

Աշխատանքում ուսումնասիրված է սովորական մեթոդով սինթեզված և դրանից հետո 30 տարի սենյակային պայմաններում պահված բազմաբյուրեղային $YBa_2Cu_3O_x$ միացության գերհաղորդչային և նորմալ բնութագրերի վրա 400°C-ում կրկնակի կարճատև ջերմամշակման ազդեցությունը ջերմաստիճանային (77–290)K տիրույթում տեսակարար դիմադրության որոշման ճանապարհով: Ցույց է տրված, որ ստացված արդյունքները մեծապես կախված են ջերմամշակումից հետո նմուշը մինչև սենյակային ջերմաստիճան սառեցնելու արագությունից:

Հանգուցային բառեր և բառակապակցություններ. բարձր ջերմաստիճանային գերհաղորդականություն (ԲԶԳ), գերհաղորդչային (ԳՀ) անցում, ԳՀ անցման լայնություն (ΔT_c), ԳՀ անցման սկզբի և վերջի կրիտիկական

ջերմաստիճան (T_c^{on} և T_c^{0}), իտրիումային միացություն ($YBa_2Cu_3O_x$), ֆլուկտուացիոն հաղորդականություն, փուլային շերտավորման երևույթ:

Նախաբան

Բարձր ջերմաստիճանային գերհաղորդիչների (ԲԶԳ) բնութագրերը ինչպես գերհաղորդչային (գհ), այնպես էլ նորմալ վիճակում զգայուն են ջերմամշակման և հետագա պահպանման պայմանների նկատմամբ [1–21]: Բերված աշխատանքներից պարզ է դառնում, որ ջերմամշակումից հետո դիտվող բնութագրերի փոփոխությունը զգալիորեն կախված է նմուշում խառնուրդների պարունակությունից, մշակման ջերմաստիճանից, տևողությունից, տաքացման և սառեցման արագությունից, ինչպես նաև հետագա պահպանման ջերմաստիճանից և միջավայրից: Իտրիումային նմուշների համար հատկապես մեծ կար-

և որություն է ներկայացնում ցածր ջերմաստիճանային մշակումը, քանի որ այդ ժամանակ նմուշում պահպանվում է թթվածնային ստեխիոմետրիան [1-5]: Ընդ որում նմուշում առաջացած դեֆեկտների բնույթը կախված է ջերմամշակման տևողությունից [1, 7-10]: Կրկնակի ջերմամշակումը օգտագործվել է անցանկալի դեֆեկտների վերացման և, հետևաբար, լավորակ գի նյութեր ստանալու նպատակով [9, 10]: Բացի դրանից՝ օդում կամ վակուումում կարճատև (5:15 րոպե; 400-700°C) ջերմամշակման ճանապարհով կարելի է ստանալ տարբեր փուլային վիճակներում (այդ թվում նաև կիսահաղորդչային) գտնվող իտրիումային գի նմուշներ [11]: Տարբեր խառնուրդներ պարունակող ԲԶԳ միացություններում ջերմամշակումից հետո դիտվող գի և նորմալ բնութագրերի փոփոխությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստացված արդյունքները երբեմն ունեն հակասական բնույթ [2, 6, 14, 15]: Որքան մեզ հայտնի է, քիչ են երկարատև ծերացած ԲԶԳ միացությունների գի և նորմալ վիճակների բնութագրերի վրա տարբեր ռեժիմներով ջերմամշակման ազդեցությանը նվիրված աշխատանքները [2, 12; 16, 19-21]: Ներկա աշխատանքում ուսումնասիրվում է կարճատև կրկնակի ջերմամշակման ազդեցությունը սինթեզից հետո 30 տարի սենյակային պայմաններում պահված բազմաբյուրեղային $YBa_2Cu_3O_x$ նմուշների գի և նորմալ բնութագրերի վրա տեսակարար դիմադրության ջերմաստիճանային կախվածության կորերի որոշման ճանապարհով:

2ափման մեթոդներ

Հետազոտության համար ընտրվել է բազմաբյուրեղային $YBa_2Cu_3O_x$ ԲԶԳ միացությունը, որը սինթեզվել է սովորական եղանակով 10 ժամ 960°C-ում օդում տաքացնելու ճանապարհով [19-21]: Ռենտգենյան ֆլուորեսցենցիայի չափումները ցույց են տվել, որ հետազոտվող նմուշի մեջ բարիումի ատոմների կոնցենտրացիան, ըստ կշռի, ավելի վաղ մեր պատ-


րաստած նմուշների համեմատությամբ մոտ 3 տոկոսով փոքր է [19-21]: Այն սենյակային պայմաններում մոտ 30 տարի պահելուց հետո ենթարկվել է կրկնակի ջերմամշակման. սկզբում՝ 30 րոպե 400°C-ում օդում տաքացնելուց հետո վառարանի հետ միասին դանդաղ (3-4°C/րոպե) սառեցվել է մինչև սենյակային ջերմաստիճան: Մեկամսյա չափումներից հետո այդ նմուշը նույն պայմաններում երկրորդ անգամ ջերմամշակումից հետո արագորեն (150-200°C/րոպե) սառեցվել է մինչև սենյակային ջերմաստիճան: Ելակետային, մեկանգամյա և կրկնակի ջերմամշակում անցած նմուշները այսուհետև համապատասխանաբար կհամարակալվեն ինչպես 1, 2 և 3: Յուրաքանչյուր ջերմաշակումից հետո մեկ ամսվա ընթացքում պարբերաբար որոշվում են տեսակարար դիմադրության ջերմաստիճանային կախվածության $r(T)$ կորերը (88-290)Կ միջակայքում Երկրի մագնիսական դաշտի առկայության պայմաններում՝ օգտագործելով վոլտամպերային բնութագրերի չափման քառակոնտակտ մեթոդը [19-21]: Նշենք նաև, որ այդ կորերը, որպես կանոն, 1 ամիս անցնելուց հետո, ժամանակից կախված, շատ դանդաղ են փոխվում նմուշի կայունացման պատճառով: ԳՀ անցման լայնությունը որոշվել է հետևյալ ձևով՝ $\Delta T_c = T_c^{0.9} - T_c^{0.1}$ (որտեղ $T_c^{0.9}$ և $T_c^{0.1}$ նորմալ վիճակի տեսակարար դիմադրության $0.9r_n$ և $0.1r_n$ արժեքներին համապատասխանող ջերմաստիճաններն են): Ընդունված է նաև, որ $T_c^{0.9}$ և $T_c^{0.1}$ համապատասխանում են ԳՀ վիճակին անցնելու սկզբի և վերջի (դիմադրության 0 դառնալու) ջերմաստիճաններին՝ T_c^{on} և T_c^0 :

Ստացված արդյունքները և նրանց քննարկումը

Նկ.1(a, b)-ում տարբեր մասշտաբներով և երկու տարբեր ջերմաստիճանային տիրույթներում 1, 2 և 3 նմուշների համար պատկերված են տեսակարար դիմադրության ջերմաստիճանային կախման կորերը: Ինչպես երևում է

այդ նկարից, 1-ին նմուշի T_c^{on} , T_c^0 և DTc բնութագրերը համապատասխանաբար կազմում են 86.7Կ, 82.5Կ և 4.2Կ (տե՛ս աղյուսակը և Նկ.1-a, b, կոր 1), սակայն $T_c^0 < T < T_c^{on}$ տիրույթում 2-րդ նմուշի դիմադրության նկատվող աճը 1-ին նմուշի համեմատությամբ շատ ավելի մեծ է և պայմանավորված է $Cu-O$ շղթաներում թույլ կապված O_4 և O_1 ատոմների կարգավորվածությամբ [2-5, 24, 25]: Մինչդեռ ավելի բարձր ջերմաստիճաններում տեսակարար դիմադրությունը որոշվում է ուժեղ կապված թթվածնային ատոմների կարգավորվածությամբ $Cu-O$ հարթություններում [25]: Քանի որ շղթաներում թթվածնի ատոմները ավելի թույլ են կապված, քան հարթություն-

ներում, ապա ջերմամշակումը շղթաներում առաջացնում է ավելի մեծ թվով դեֆեկտներ, որոնք, նպաստելով կուպերյան զույգերի քանդմանը, բերում են տեսակարար դիմադրության ավելի մեծ աճի: 2-րդ նմուշում այդպիսի աճը ուղեկցվում է գի անցման ջերմաստիճանի նվազումով ընդամենը 1 աստիճանով, իսկ անցման լայնությունը մնում է հաստատուն՝ $DTc = 4.2Կ$ (տե՛ս աղյուսակը): Ինչպես տեսնում ենք, արագ սառեցման ռեժիմում (3-րդ նմուշ) դիտվող գի անցման կորը շեղված է դեպի ցածր ջերմաստիճանների տիրույթ (նկ.1-a, b, կոր 3): Ընդ որում, եթե անցման սկզբի ջերմաստիճանը T_c^{on} նվազում է 86.7Կ-ից մինչև 83.7Կ, ապա T_c^0 -ն ավելի արագ



Նկ. 1. Տեսակարար դիմադրության (r) ջերմաստիճանային կախվածությունը 1, 2 և 3 նմուշների համար ջերմաստիճանի փոքր բեր փոփոխությունում (a, b,): Հորիզոնական սլաքները մասրանաչում են համապատասխան օրդինատների առանցքները:

նվազելով, շեղվում է դեպի հեղուկ ազոտի ջերմաստիճանից էլ ցածր տիրույթ: Սա նշանակում է, որ, DTc -ն մեծանում է և նմուշը դառնում է ավելի անհամասեռ: Անհամասեռության դրսևորման մասին է վկայում տեսակարար դիմադրության ջերմաստիճանային կորի վրա պարզորոշ նկատվող համեմատաբար թույլ և լայն գի անցումը 80Կ- ի շրջակայքում (նկ. 1-a, b): Բացահայտված է, որ ջերմամշակումից հետո $YBa_2Cu_3O_{6.8}$ միաբյուրեղներում նույնպես հայտնվում են տարբեր կրիտիկական ջերմաստիճաններով (այդ թվում նաև՝ $T_c = 80Կ$) գի փուլեր, ինչպես նաև տարբեր չա-

փեր ունեցող ամորֆ մասնիկներ [7, 10]: Այս երևույթը հայտնի է իբրև փուլային շերտավորման երևույթ: Այն ենթադրում է, որ ջերմամշակումից հետո նմուշում առաջանում են երկու փուլեր. մեկը՝ թթվածնով հարուստ $YBa_2Cu_3O_7$, իսկ մյուսը թթվածնով աղքատ և ցածր կարգի օրթոռոմբային համաչափությամբ: Դրանցից առաջինը նորմալ վիճակում օժտված է լավ մետաղական հաղորդականությամբ, իսկ մյուսը՝ մեկուսչային հաղորդականությամբ [7]: Նույն այդ աշխատանքում ցույց է տրվում, որ ջերմամշակման ժամանակ օդում եղած ջրային գոլորշիների մասնակցությամբ

գերհաղորդչում նկատվում է նաև բյուրեղային ցանցի ծանր մետաղական ատոմների՝ Y-ի և Ba-ի ապակարգավորման երևույթ, իսկ գի հատիկների մերձեզրային մասերում առաջանում են 20 նմ չափերի հասնող ամորֆ տիրույթներ: Այս ամենը բերում է դիֆրակցիոն գծերի լայնացման [7], իսկ մեր դեպքում՝ գի անցման լայնության մեծացման: Այս երևույթները մեր նմուշներում դրսևորվում են ավելի արտահայտված ձևով, քանի որ ելակետային նմուշը արդեն ունի Ba-ի ատոմների 3 տոկոսանոց պակասորդ [7, 10]: Վերը թվարկած անհամասեռությունները, ինչպես նաև Y-ի և Ba-ի ենթացանցերում առաջացած ապակարգավորությունները նմուշում դառնում են միջհատիկային և ներհատիկային տարածություններում դեֆեկտների կուտակման հավաքատեղիներ [19]: Նմուշի արագ սառեցման հետևանքով այդ կուտակումների շուրջն առաջանում են զգալի առաձգական լարվածություններ, ինչը դառնում է հոսանքակիրների լրացուցիչ ցրման աղբյուր, որն էլ բերում է տեսակարար դիմադրության և գի անցման լայնության ավելի մեծ աճի դանդաղ սառեցման համեմատությամբ [2, 7]: Այս ամենի հետևանքով ցածր ջեր-

մաստիճանային տիրույթում տեսակարար դիմադրության դիտվող աճը մի քանի հազար անգամ մեծ է նորմալ վիճակի համեմատությամբ (նկ.1, կոր 3): Եթե դանդաղ սառեցման ռեժիմում այդ աճը բացասական է և սենյակային ջերմաստիճանում չի գերացանցում 20%-ը, ապա արագ սառեցման ռեժիմում այն մեծանում է ավելի քան 60%-ով (տես աղյուսակը): Բացի դրանից՝ գի անցումից հետո, նորմալ վիճակում նմուշը դրսևորում է կիսահաղորդչային վարքագիծ, որը արտահայտվում է c բնութագրի կտրուկ աճով (տես աղյուսակը): Նմանատիպ վարքագիծ մեր կողմից վերջերս դիտվել էր իտրիումային բազմաբյուրեղներում, դրանք ջերմամշակումից հետո դանդաղորեն սառեցնելուց և սենյակային ջերմաստիճանում երկարատև պահելուց հետո միայն [19]: Արժի հիշատակել, որ ինչպես մեր բազմաբյուրեղային [19], այնպես էլ այլ հեղինակների կողմից սենյակային պայմաններում երկարատև պահված իտրիումային միաբյուրեղներում նույնպես դիտվել է փուլային շերտավորման երևույթ, որը գի անցման կորերի վրա ի հայտ է եկել աստիճանների դրսևորվման ձևով [17]:

Աղյուսակ

Ուսումնասիրվող նմուշների գի և նորմալ վիճակի որոշ բնութագրեր

նմուշ	T_c^{on}, K	T_c^0, K	$r(290K), \mu\Omega \times cm$	$r(100K), \mu\Omega \cdot cm$	$d=r(100K)/r(290K)$	$\Delta T_c, K$
1	86.7	82.5	2700	1733	0.64	4.2
2	85.6	81.4	2200	1765	0.8	4.2
3	83.7	-	4420	5880	1.33	-

ԲԶԳ միացություններում կիսահաղորդչային տիպի վարքագծի առաջացման հնարավոր պատճառներից մեկը համարվում է նյութում միկրոսկոպիկ մակարդակով առկա անհամասեռությունը [26]: Աղյուսակից երևում է, որ 3-րդ նմուշում ի հայտ եկած կիսահա-

ղորդչային վարքագիծը միաժամանակ ուղեկցվում է $d= r(100K)/r(290K)$ բնութագրի և տեսակարար դիմադրության կտրուկ աճով: Ենթադրվում է, որ այն կարող է պայմանավորված լինել կիսահաղորդչային $BaCuO_2$ և մեկուսչային Y_2BaCuO_3 փուլերի առաջացմամբ, ինչը

ուղեկցվում է $r(T)$ կորի վրա մինչև 82Կ ձգվող «պոչի» դրսևորմամբ [13]: 1-ին և 2-րդ նմուշներից յուրաքանչյուրում (նկ.1-a, կոր 1 և 2), նույնպես դիտվում է թույլ արտահայտված պոչ, որոնցից մեկը ձգվում է մինչև 82.5Կ, իսկ մյուսը՝ մինչև 81.4Կ, սակայն 3-րդ նմուշում այդ պոչը դառնում է առավել պարզորոշ արտահայտված և շեղվում է դեպի ավելի ցածր ջերմաստիճաններ, երբ d –ն 0.64-ից կտրուկ աճում է մինչև 1.33 (տես աղյուսակը): Միաժամանակ դիտվող դիմադրության զգալիորեն մեծ աճը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ինչպես կիսահաղորդչային փուլի տեսակարար դիմադրությունը մի քանի կարգով գերազանցող մեկուսչային Y_2BaCuO_3 փուլի հայտնվելով, այնպես էլ $Y_2Ba_4Cu_xO_x$ և $Y_2Ba_4Cu_8O_x$ փուլերի առաջացմամբ [7, 13]:

Եզրահանգում

Տեսակարար դիմադրության ջերմաստիճանային կախվածության կորերի որոշման միջոցով ուսումնասիրվել է գի և նորմալ բնութագրերի փոփոխությունը սինթեզվելուց հետո 30 տարի սենյակային պայմաններում պահված ելակետային $YBa_2Cu_3O_x$ նմուշում 30 րոպե 400ՕC-ում միանգամյա և կրկնակի ջերմամշակման ենթարկելուց հետո հետագայում մինչև սենյակային ջերմաստիճան սառեցնելու արագությունից: Պարզվել է,

որ արագ սառեցման դեպքում թույլ կապերի խզմամբ պայմանավորված տեսակարար դիմադրության աճը և լրիվ գի վիճակի անցման T_c^0 ջերմաստիճանի նվազումը անհամեմատ մեծ է, քան դանդաղ սառեցված նմուշում: Դանդաղ սառեցված նմուշը նորմալ վիճակում դրսևորում է մետաղական վարքագիծ, իսկ արագ սառեցման դեպքում՝ կիսահաղորդչային: Այսպիսի տարբերությունը բացատրվում է նրանով, որ արագ սառեման հետևանքով բյուրեղական ցանցում առաջացած լրացուցիչ առաձգական լարվածությունները նպաստում են տարբեր տեսակի ինչպես գի, այնպես էլ՝ կիսահաղորդչային կամ մեկուսչային բնույթի փուլերի հայտնվելուն: Բացի դրանից, եթե դանդաղ սառեցման դեպքում գի անցման լայնությունը մնում է անփոփոխ (4.2Կ), ապա արագ սառեման դեպքում դիտվում է դրա ընդարձակում և նորմալ վիճակի տեսակարար դիմադրության էական մեծացում, որն էլ ուղեկցվում է T_c^{on} ջերմաստիճանի զգալի նվազումով: Այսինքն՝ կարճատև ջերմամշակումից հետո արագ սառեցված իտրիումային նմուշը ձեռք է բերում ավելի վատ բնութագրեր:

Ստացված արդյունքները թույլ կտան մատնանշել բարձր և կայուն գի բնութագրերով օժտված միացություններ ստանալու ուղիները:

ՔՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Sinchenko. Proc. 2nd All-Union Conf. High Temperature Superconductivity, Vol. 3, Institute of Metal Physics of the Academy of Sciences of the Ukrainian SSR, Kiev, p. 103, 1989.
2. Veal B.W., Paulikas A.P., Hao Shi, Fang Y., and Downey J. W. Observation of temperature-dependent site disorder in $YBa_2Cu_3O_{7-x}$ below 150ՕC, Phys. Rev. B, 1990, v. 42, 6305–6316.
3. Jorgensen J.D., Pei Shiyou, Lightfoot P., Shi Hao, Paulikas A.P. and Veal B.W. Time-dependent structural phenomena at room temperature in quenched $YBa_2Cu_3O_{6.41}$ local oxygen ordering and superconductivity, Physica C, 1990, v.167, pp. 571–578.
4. Shaked H., Jorgensen J.D., Hunter B.A., Hitterman R.L., Paulikas A.P. and Veal B.W. Local ordering and charge transfer during room-temperature annealing of quenched tetragonal $YBa_2Cu_3O_{6.25}$, Physical Review B, 1995, v.51, N1, pp.547–552.
5. Libreht S., Osquguil E., Wuyts B., Maehoudt M., Gao Z.X. and Bruynserede Y. Effect of room temperature annealing on the properties of oxygen-deficient $YBa_2Cu_3O_x$ films, Physica C, 1993, v. 206, pp. 51–58.
6. Амитин Е.Б, Громилов С.А, Наумов В.Н, Рояк А.Я. Влияние закалки на свойства сверхпроводящих керамик Bi–Sr–Ca–Cu–O различного состава, СФХТ, 1989, т.2, N2, с. 157–162.
7. Блинова Ю.В., Титова С.Г., Сударева С.В., Романов Е.П. Механизм термического распада

- нестехиометрического соединения $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_{6.8}$, Физика твердого тела, 2009, том 51, вып. 6, с.1041–1045.
8. Титова С.Г., Блинова Ю.В., Сударева С.В., Бабылев И.Б, Зюзева Н.А. Термическая устойчивость нестехиометрической керамики $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_{6.8}$ при 200 °С в осушенном воздухе, Физика твердого тела, 2011, том 53, выпуск 3, с. 427–429.
 9. Бабылев И.Б, Зюзева Н.А. Влияние низкотемпературной обработки и последующего высокотемпературного отжига на критическую плотность тока $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_y$, Физика твердого тела, 2012, том 54, выпуск 7, с.1256–1259.
 10. Бабылев И.Б, Герасимов Е.Г., Зюзева Н.А. Влияние структурной воды на критические характеристики высокотекстурированного $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_y$, Физика твердого тела, 2014, том 56, выпуск 9, с.1684–1689.
 11. Самойлов М.И., Сухов В.А, Рахманов А.Л. Метастабильные фазы в пленках YBCO, создаваемые кратковременными отжигами, ФТТ, 2003, т. 45, вып. 1, с. 17–21.
 12. Vidyalal V. Electrical and magnetic measurements on some high T_c superconductors, Thesis. Department of Physics, Cochin University of Science and Technology, Cochin– 682022, December 1993.
 13. И.А.Тихоновский, В.Т.Петренко, А.С.Тортика, А.А.Мацакова, Т.Ю.Рудычева, Л.И.Иартынюк, Л.Ф.Верхоробин, Н.В.Лапина, В.А.Панов, Микроструктура и сверхпроводящие свойства кристаллизованной иттриевой керамики, ВАНТ, серия: Ядерно–Физические исследования, Научно–технический сборник, 1993, вып. 1/26/, с.3–15.
 14. Наумова Д. Д., Войтенко Т. А., Недилько С. А. Зависимость физико–химических свойств ВТСП–соединений от размера кристаллитов, Наносистемы, наноматериалы, нанотехнологии , 2011, т. 9, № 4, сс. 855–862.[http://perst.issph.kiae.ru/supercond/bullein.php?menu=bull_subj&id=532]
 15. Vovk R.V., Vovk N.R. and Dobrovolskiy O.V. Aging effect on electrical conductivity of pure and Al-doped $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_{7-\delta}$ single crystals with a given topology of planar defects. Advances in Condensed Matter Physics, v. 2013, Article ID 931726, 7 pages. <http://dx.doi.org/10.1155/2013/931726>.
 16. Vovk R.V., Vovk N.R., Goulatis I.L., Chroneos A. Effect of long aging on the resistive properties of Aluminum doped $\text{YBa}_2\text{Cu}_3-\gamma\text{Al}_y\text{O}_{7-\delta}$ single crystals with a given twin boundary topology, J. Low Temp. Phys. 2014, v.174, pp. 214–221.
 17. Хаджай Г.Я., Вовк Р.В. Электротранспорт и устойчивость кислородной подсистемы монокристаллов $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_{7-\delta}$ при длительной выдержке в воздухе. Физика низких температур, 2014, т. 40, N12, с.1343–1347.
 18. Хаджай Г.Я., Вовк Н.Р., Вовк Р.В. Проводимость монокристаллов $\text{Y}_{1-y}\text{Pr}_y\text{Ba}_2\text{Cu}_3\text{O}_{7-x}$ в широком интервале температур и концентрации Pr, ФНТ, 2014, т. 40, N6, с. 630–635.
 19. S.K. Nikoghosyan, V.V. Harutyunyan, V.S. Baghdasaryan, E.A. Mughnetsyan, E.G. Zargaryan, A.G. Sarkisyan, The appearance of semiconducting (dielectric) conduction in polycrystalline high temperature superconducting cuprates after heat treatment, Armenian Journal of Physics, 2015, vol. 8, issue 1, pp. 1–6.
 20. S.K. Nikoghosyan, V.V. Harutyunyan, V.S. Baghdasaryan, E.A. Mughnetsyan, E.G. Zargaryan and A.G.Sarkisyan, The effect of aging on the superconducting transition temperature and resistivity of Y–Ba–Cu–O ceramics after high temperature treatment, IOP Conf. Series: Materials Science and Engineering 49 (2013) 012042.
 21. Nikoghosyan S.K., Harutyunyan V.V., Baghdasaryan V.S., Mughnetsyan E.A., Zargaryan E.G. and Sarkisyan A.G., Effect of Direct Transport Current and Heat Treatment on Resistive Properties of Bismuth-based Ceramic High-temperature Superconducting Oxides of Various Compositions, Solid State Phenomena 2013, Vol. 200, pp 267–271.
 22. Соловьев А.Л., Дмитриев В.М. Флуктуационная проводимость и псевдощель в высокотемпературных сверхпроводниках YBCO, ФНТ, 2009, т. 35, N3, с. 227–264.
 23. Solovjov A.L. Fluctuation conductivity in Y–Ba–Cu–O films with artificially produced defects, Fizika Nizkikh Temperatur, 2002, v. 28, N11, p. 1138–1149.
 24. Gaffney C., Petersen H. and Bednar R. Phase-slip analysis of the non–Ohmic transition in granular $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_{6.9}$, Physical Review B, 1993–I, v.48, N5, pp.3388–3392.
 25. Балаев Д.А., Семенов С.В., Петров М.И. Доминирующее влияние эффекта сжатия магнитного потока в межгранулярной среде гранулярного ВТСП на процессы диссипации во внешнем магнитном поле, ФТТ, 2013, т. 55, вып.12, с.2305–2311
 26. Mosqueira J., Pomar A, Veira J., A., Maza J., and Vidal F. Resistivity–peak anomaly in $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_7$ crystals and nonuniformly distributed critical temperature inhomogeneities. J. Appl. Phys. 1994, V.76, N3, pp. 1943–1945.

DOUBLE SHORT-TERM HEAT TREATMENT EFFECT ON THE ELECTRICAL
TRANSPORT PROPERTIES OF LONG-TERM STORED $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_x$
POLYCRYSTALLINE SUPERCONDUCTORS

ALBERT SARGSYAN

*Director of the International Scientific-Educational Center of NAS RA
Doctor of Physical and Mathematical Sciences, Professor*

SERGEY NIKOGHOSYAN

*Senior Researcher of Yerevan Physics Institute
PHD in Physical and Mathematical Sciences*

YERJANIK ZARGARYAN

*Head of Education Department of the International Scientific-Educational Center of NAS RA
PHD in Physical and Mathematical Sciences*

EDGAR MUGHNETSYAN

*Co-Worker of the International Scientific-Educational Center of NAS RA
PHD in Physical and Mathematical Sciences*

The article deals with the study of double impact of short-term heat treatment at 400°C by means of determining the resistivity in (77–290) K range on superconducting and normal characteristics of polycrystalline $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_x$ compound synthesized by the ordinary method and then stored in room temperature for 30 years. It is shown that the obtained results greatly depend on the cooling speed of the sample in room temperature after the heat treatment.

ВЛИЯНИЕ ДВОЙНОЙ КРАТКОВРЕМЕННОЙ ТЕРМООБРАБОТКИ НА
ЭЛЕКТРОТРАНСПОРТНЫЕ СВОЙСТВА ПОЛИКРИСТАЛЛИЧЕСКИХ
СВЕРХПРОВОДНИКОВ ДЛИТЕЛЬНОГО ХРАНЕНИЯ $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_x$

АЛБЕРТ САРГИСЯН

*директор Международного научно-образовательного центра НАН РА,
доктор физико-математических наук, профессор*

СЕРГЕЙ НИКОГОСЯН

*старший научный сотрудник Ереванского института физики,
кандидат физико-математических наук*

ЕРДЖАНИК ЗАРГАРЯН

*начальник учебной части Международного научно-образовательного центра НАН РА,
кандидат физико-математических наук*

ЭДГАР МУГНЕЦЯН

*Сотрудник учебной части Международного Научно-Образовательного Центра НАН РА,
кандидат физико-математических наук*

В работе изучено влияние кратковременной двойной термообработки при температуре 400°C на сверхпроводящие и нормальные характеристики поликристаллического соединения $\text{YBa}_2\text{Cu}_3\text{O}_x$, который был синтезирован обычным методом и после этого хранился 30 лет при комнатной температуре, путем определения удельного сопротивления в температурном диапазоне (77–290) К. Показано, что полученные результаты в значительной мере зависят от скорости охлаждения до комнатной температуры после термообработки.

МОДЕЛИРОВАНИЕ СЛОЖНЫХ СИСТЕМ В ЗАДАЧАХ ДИАГНОСТИКИ

Предложен подход к моделированию сложных систем. Он основан на построении диагностических моделей. Это позволяет устранить ряд проблем, связанных с невозможностью создания адекватных моделей сложных систем. Приведен пример энтропийной диагностической модели сложной системы. При этом сложную систему описывают в виде случайного вектора. В качестве модели используется дифференциальная энтропия случайного вектора. Приведен пример практической реализации модели для исследования динамики макроэкономической системы.

Ключевые слова: сложная система, модель, энтропия, многомерная случайная величина, стохастическая система, дисперсия, корреляция.

В настоящее время расширяется количество задач, связанных с исследованием сложных систем. При этом одной из главных проблем эффективного управления сложными системами является их моделирование. Хорошо известно, что невозможно полностью смоделировать поведение сложных систем. Сложные системы многогранны, определяются множеством различных показателей, затрудняющих выбор единого критерия эффективности управления. Они характеризуются тем, что взаимодействие их элементов нельзя или крайне затруднительно представить в явном виде. Еще одним затруднением при моделировании является проблема разнородности входной

информации о функционировании различных элементов. Поэтому представляется актуальным поиск путей построения адекватных моделей сложных систем.

Моделирование сложных систем

Математическая модель должна вместить в себе все это разнообразие элементов и связей сложной системы. Поэтому выбор эффективного метода математического моделирования является одним из основополагающих для такого рода систем.

Формально сложными системами занимается системный анализ. Согласно общей концепции системного анализа модель сложной системы должна учитывать общесистемные закономерности [1]. Однако, несмотря на большое количество работ, сегодня так и не создано общей теории моделирования сложных систем. Рассмотрим проблематику системного моделирования на примере учебника [2]. Авторы приводят следующие рекомендации по практическому применению положений общей теории систем:

- 1) надо опираться на основные понятия теории систем и философские концепции, лежащие в основе исследования общесистемных закономерностей;
- 2) надо производить структуризацию целей;
- 3) основной методикой применения системного анализа является постепенная формализация частных задач;
- 4) целесообразно проводить рекур-

сивное улучшение частных моделей;

5) адекватность частных моделей должна доказываться последовательно по мере их формирования.

Суть подхода заключается в формализации частных моделей. Однако здесь нет системных и конструктивных рекомендаций для движения от частного к общему. Поэтому он вряд ли может иметь широкое практическое применение: ни одна частная модель не может быть адекватна абсолютно, и новый класс сложных систем потребует решения новой частной задачи.

В работе [3] автор, касаясь вопроса описания объекта моделирования как наиболее важного этапа построения модели сложной системы выделяет следующие моменты:

1) выбор показателей качества, отражающих цели моделирования;

2) определение управляющих переменных, выбор состава контролируемых характеристик объекта моделирования;

3) детализация описания функционирования системы;

4) представление информации о воздействии внешней среды.

Одной из серьезных проблем при исследовании сложных систем становится определение уровня ее детализации, т.к. попытка максимально приблизить модель к объекту исследования – бессмысленна. Это отмечает Г.Б. Клейнер: «Современный уровень развития математического моделирования практически не позволяет сколько-нибудь адекватно моделировать реальные объекты» [4]. Схожую точку зрения высказал В.В. Налимов, отмечая неоднозначность математического моделирования плохо организованных систем, он указывал, что моделирование возможно лишь при ослаблении требований к его математическому описанию [5].

Поэтому нужно каким-то образом найти компромисс между общим и частным и перейти к некоторой формальной модели. Идеи поиска этого компромисса,

можно увидеть в основных принципах системологии, приведенных Б.С. Флейшманом в [6]. Это: 1) формирование законов; 2) рекуррентное объяснение; 3) минимаксное построение моделей.

По первому принципу, постулируются осуществимые модели, а из них в виде теорем выводятся законы сложных систем. И несоответствие реальной сложной системы закону говорит о том, что эта система не соответствует тому классу моделей, для которых выведен закон.

Второй принцип – это объяснение явлений на более высоком уровне явлениями на низких уровнях системы, т.е. свойства системы определенного уровня логически выводятся на основе свойств элементов и связей между ними, согласно первому принципу. Это довольно ослабленное объяснение, т.к. постулируемая модель может быть не адекватной реальной системе, и при рекуррентном описании это никак не корректируется.

Минимаксное построение моделей заключается в том, что теория должна состоять из простейших моделей нарастающей сложности или, в минимаксной терминологии, грубая модель более сложной системы может оказаться проще более точной модели более простой системы.

Следовательно, по Б. С. Флейшману, возможности построения теории сложных систем связаны с возможностями построения их простых оптимизационных моделей. Как справедливо указывает Г. Я. Гольдштейн [7], «построенная таким образом теория будет страдать неизбежными принципиальными пороками: оценочным характером простых моделей и неизбежным стохастическим характером выводов, достоверность которых будет определяться допустимой грубостью оценок».

Таким образом, имеем основные проблемы системного моделирования. Во-первых, нужно каким-то образом формализовать первую, достаточно простую математическую модель. Такая модель

должна быть [8]:

- 1) простой и понятной пользователю;
- 2) целенаправленной;
- 3) надежной в смысле гарантии от абсурдных ответов;
- 4) удобной в управлении и обращении, т.е. общение с ней должно быть легким;
- 5) полной с точки зрения возможности решения главных задач;
- 6) адаптивной, позволяющей легко переходить к другим модификациям или обновлять данные;

7) допускающей постепенные изменения, т.е. будучи вначале простой, она может становиться все более сложной.

Во-вторых, данный подход не учитывает требования, чтобы математическая модель сложной системы учитывала общесистемные закономерности, к которым относят целостность, аддитивность, изолированность, коммуникативность, идентифицируемость, множественность, наблюдаемость, неопределенность, отображаемость, нетождественность отображения, иерархичность, эквививальность, закон «необходимого разнообразия», историчность, закономерность самоорганизации [2, 9].

Ввиду невозможности построения адекватной модели для сложной системы рассмотрим проблему по-иному. Исследуем сложную систему как объект моделирования с позиций диагностики. Считаем, что для нас достаточно лишь достоверно оценить состояние системы, т.е. рассмотрим задачу диагностики. Для ее решения необходимо построить диагностическую модель.

В диагностической модели должна в определенной форме выражаться связь измеряемого вектора признаков x с тестируемым свойством, которое в дальнейшем будет обозначаться как y [10]. Т.е. должен быть раскрыт механизм преобразования $y=f(x)$. Первое предъявляемое к модели требование – конечный результат должен быть максимально точ-

ным и надежным. Второе требование – лаконичность и интерпретируемость способа получения конечного результата. Указанные требования находятся в тесной взаимосвязи. Чем более экономно по форме и содержательно по смыслу преобразование $y=f(x)$ при соблюдении заданной точности модели, тем более общие закономерности структуры экспериментальных данных вскрывает используемая модель и, значит, тем более устойчива и надежна количественная оценка диагностируемого показателя, получаемая с помощью преобразования $f(x)$. Таким образом, от диагностической модели не требуется максимальной адекватности описания исследуемого объекта в целом. Она предназначена лишь для описания степени отклонения технического состояния объекта от нормы.

Следует отметить, что диагностические модели эффективно применяются не только при оценке технического состояния, но и при исследовании организационных систем. Так, диагностические модели, как показано в [11], помогают: 1) упорядочить данные об организации; 2) улучшить понимание организационных проблем; 3) систематически интерпретировать данные; 4) разрабатывать подходящие стратегии изменений.

Построение диагностической модели фактически включает в себя две задачи. Во-первых, требуется определить вид функции $f(x)$. После установления или задания вида модели объекта решают задачу определения неизвестных параметров модели.

Таким образом, математическое моделирование сложной системы предлагается заменить на несколько задач построения диагностических моделей. В каждой из этих задач сложную систему уже можно формализовать на основе соответствующего тестируемого свойства y .

Рассмотрим примеры диагностических моделей сложных систем.

Дифференциальная энтропия как математическая модель сложной системы

Сложные системы в экономике, как правило, имеют стохастический характер поведения и являются многомерными.

Рассмотрим предложенный энтропийный подход для моделирования многомерных стохастических систем [12]. Он основан на введенной К.Шенноном [13] дифференциальной энтропии многомерной случайной величины $\mathbf{Y} = (Y_1, Y_2, \dots, Y_m)$ с плотностью распределения $p_Y(x_1, \dots, x_m)$ равной.

$$H(\mathbf{Y}) = - \int_{-\infty}^{+\infty} \dots \int_{-\infty}^{+\infty} p_Y(x_1, x_2, \dots, x_m) \ln p_Y(x_1, x_2, \dots, x_m) dx_1 dx_2 \dots dx_m. \quad (1)$$

В частном случае для одномерной непрерывной случайной величины X дифференциальная энтропия определяется по формуле

$$H(X) = - \int_{-\infty}^{+\infty} p_X(x) \ln p_X(x) dx$$

где $p_X(x)$ – плотность распределения случайной величины X .

Представим сложную стохастическую систему S в виде многомерной непрерывной случайной величины $\mathbf{Y} = (Y_1, Y_2, \dots, Y_m)$, имеющей некоторую совместную плотность распределения $p_Y(x_1, \dots, x_m)$. Каждый элемент Y_i этого вектора является одномерной случайной величиной, которая характеризует функционирование соответствующего элемента исследуемой системы. Элементы могут быть как взаимозависимыми, так и не зависеть друг от друга.

Для гауссовского случайного вектора получено [14] представление дифференциальной энтропии (1) в виде

$$H(\mathbf{Y}) = \sum_{i=1}^m H(Y_i) + \frac{1}{2} \ln |\mathbf{R}|, \quad (2)$$

где $H(Y_i) = \frac{1}{2} \ln [(2\pi e) \sigma_{Y_i}^2]$, $\sigma_{Y_i}^2$ – дисперсия случайной величины Y_i , \mathbf{R} – корреляционная матрица случайного нормально распределенного вектора \mathbf{Y} , – определитель матрицы \mathbf{R} .

Для общего случая случайного вектора \mathbf{Y} с произвольным распределением получено соотношение [12]:

$$H(\mathbf{Y}) = \sum_{i=1}^m \ln \sigma_{Y_i} + \sum_{i=1}^m \kappa_i + \frac{1}{2} \sum_{k=2}^m \ln(1 - R_{Y_k/Y_1 Y_2 \dots Y_{k-1}}^2), \quad (3)$$

где $\kappa_i = H\left(\frac{Y_i}{\sigma_{Y_i}}\right)$ – энтропийный показатель типа закона распределения случайной величины Y_i , $i = 1, 2, \dots, m$; – индексы детерминации регрессионных зависимостей между компонентами случайного вектора \mathbf{Y} , $k = 2, 3, \dots, m$.

Первые два слагаемых в (3)

$H(\mathbf{Y})_Y = \sum_{i=1}^m \ln \sigma_{Y_i} + \sum_{i=1}^m \kappa_i$ названы энтропией хаотичности, а третья

$H(\mathbf{Y})_R = \frac{1}{2} \sum_{k=2}^m \ln(1 - R_{Y_k/Y_1 Y_2 \dots Y_{k-1}}^2)$ – энтропией самоорганизации.

Достоинством формулы (3) является то, что энтропийное моделирование многомерных стохастических систем на ее основе не требует знания или определения закона распределения многомерной случайной величины \mathbf{Y} , что практически нереализуемо в реальных задачах. При этом в отличие от методов многомерного статистического анализа здесь не теряется формальная строгость и соответствие модели (3) реальным экспериментальным данным. Это позволяет использовать формулу (3) для моделирования и исследования реальных многомерных стохастических систем и процессов по экспериментальным данным ограниченного объема.

Согласно (1), параметрами энтропийной модели являются:

- средние квадратические отклонения σ_{Y_i} компонент Y_i ,

- энтропийные показатели κ_i законов распределений, $i = 1, 2, \dots, m$,

- индексы детерминации $R_{Y_k/Y_1 Y_2 \dots Y_{k-1}}^2$ регрессионных зависимостей между компонентами случайного вектора \mathbf{Y} , k

= 2, 3, ..., m .

Пример. Исследуем макроэкономическую систему в виде набора важных социально-экономических показателей субъектов РФ за 2000–2014 годы, взятых с сайта Росстата <http://www.gks.ru/>: Y_1 – естественный прирост населения на 1000 человек населения, чел.; Y_2 – ожидаемая продолжительность жизни при рождении, лет; Y_3 – уровень безработицы, %; Y_4 – среднедушевые денежные доходы, тыс. руб. (в ценах 2000 года); Y_5 – средний размер назначенных пенсий, тыс. руб. (в ценах 2000 года); Y_6 – об-

щая площадь жилых помещений, приходящаяся в среднем на одного жителя на конец года, кв. м.; Y_7 – численность населения на одного врача на конец года, чел.; Y_8 – число зарегистрированных преступлений на 100000 человек населения, ед.; Y_9 – индекс потребительских цен (декабрь к декабрю предыдущего года), ед. Для обеспечения статистической устойчивости из выборки были удалены 10% регионов с аномальными наблюдениями, а также с пропущенными данными. Результаты расчетов – в табл. 1.

Таблица 1

Энтропия системы макроэкономических показателей по годам

Годы	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
$H(Y)_V$	11, 30	11, 85	11, 91	12, 11	12, 31	13, 12	12, 65	13, 10
$H(Y)_R$	-3, 38	-3, 30	-2, 96	-3, 75	-3, 69	-3, 59	-3, 18	-3, 36
$H(Y)$	7, 93	8, 55	8, 95	8, 36	8, 61	9, 54	9, 47	9, 74
Годы	2008	2009	2010	2011	2012	2013	2014	
$H(Y)_V$	13, 11	13, 19	12, 68	12, 49	12, 16	12, 33	12, 89	
$H(Y)_R$	-3, 49	-3, 42	-3, 60	-3, 63	-3, 67	-3, 53	-3, 39	
$H(Y)$	9, 62	9, 77	9, 07	8, 87	8, 49	8, 80	9, 50	

Из табл. 1 видим, что в 2000–2008 годах энтропия $H(Y)$ росла, что соответствовало периоду экономического роста. Затем до 2012 года видим уменьшение, вызванное последствиями мирового экономического кризиса. Рост энтропии в 2013 году можно объяснить стабилизацией экономики. На первый взгляд неожиданный рост в 2014 году вызван увеличением энтропии хаотичности за счет роста вариации региональных показателей. Этот рост вызван разным влиянием на регионы секторальных санкций, в одних случаях оно весьма значительно, в других – оказалось не существенным.

Адекватная модель сложной системы должна объяснять поведение исследуемой системы, удовлетворять общесистемным

закономерностям и позволять осуществлять воздействия на систему с помощью управляющих переменных. Рассмотрим соотношение (2) с этих позиций.

1. *Наличие основных системных закономерностей.*

Модель (2) должна в том или ином виде описывать основные системные закономерности. Рассмотрим каждую их них.

Целостность и аддитивность. Закономерность целостности проявляется в системе в возникновении новых обобщающих качеств, не свойственных образующим ее элементам. Двумя сторонами целостности являются:

– свойства системы (целого) Q не являются суммой свойств элементов (частей) q_i : $Q \neq \sum_{i=1}^n q_i$;

– свойства системы зависят от свойств ее элементов: $Q = f(q_1, \dots, q_n)$.

Энтропия удовлетворяет данной закономерности, поскольку $H(\mathbf{Y}) \neq \sum_{i=1}^m H(Y_i)$ и $H(\mathbf{Y}) = f(H(Y_1), H(Y_2), \dots, H(Y_m))$.

Закономерностью, двойственной по отношению к целостности, является *аддитивность* – рассмотрение целостного объекта как состоящего из частей. В случае абсолютной аддитивности система представляется распавшейся на независимые элементы, т.е. . В этом крайнем случае говорить о системе как таковой нельзя.

Для энтропии (2) абсолютная аддитивность достигается при $|\mathbf{R}| = 1$, что соответствует взаимной независимости случайных величин Y_1, Y_2, \dots, Y_m .

Очевидно, что любая система всегда находится между крайними состояниями абсолютной целостности и абсолютной аддитивности, и ее состояние можно охарактеризовать степенью проявления этих свойств.

Изолированность и коммуникативность. Закономерность *изолированности* состоит в том, что совокупность объектов, образующих систему, и связи между ними можно ограничить от их окружения и рассматривать изолированно. *Коммуникативность* – это двойственная закономерность относительно изолированности системы. Она характеризует взаимосвязанность системы со средой.

Очевидно, что влияние среды на систему, описываемую выражением (2), заключается в изменении числовых характеристик многомерного нормального распределения, к которым относят вектор математических ожиданий \mathbf{a} и ковариационную матрицу Σ .

Идентифицируемость. Каждый элемент системы может быть отделен от других составляющих, то есть идентифицирован. Очевидно, что по имеющимся выборочным данным можно оценить все числовые характеристики каждой компоненты Y_i многомерного вектора \mathbf{Y} .

Множественность. Каждый элемент системы обладает собственным поведением и состоянием, отличным от поведения и состояния других элементов и системы в целом. Данная закономерность также учитывается в энтропийной модели, поскольку каждый элемент системы описывается отдельной случайной величиной.

Наблюдаемость. Все без исключения входы и выходы системы либо контролируются наблюдателем, либо наблюдаемы. В данном случае каждая компонента случайного вектора моделирует конкретную подсистему, которая является наблюдаемой.

Неопределенность. Наблюдатель не может одновременно фиксировать все свойства и отношения элементов системы и именно с целью их выявления осуществляет исследование.

Отображаемость и нетождественность отображения. С одной стороны, модель должна отражать все свойства и отношения исследуемой системы, которые нужны для решения задачи (*отражаемость*). А с другой, любая модель, в том числе энтропийная, не тождественна исследуемому объекту (*нетождественность отображения*).

Иерархичность системы заключается в том, что более высокий иерархический уровень оказывает направляющее воздействие на нижележащий уровень, подчиненный ему. В результате подчиненные члены иерархии приобретают новые свойства, отсутствовавшие у них в изолированном состоянии. Данную закономерность применительно к энтропийной модели (2.3) можно интерпретировать следующим образом. Каждая компонента Y_i , в свою очередь, может являться многомерной системой и состоять из собственных элементов.

Эквифинальность (потенциальная эффективность) характеризует предельные возможности систем. Применительно к открытой системе – это ее способность (в

отличие от состояний равновесия в закрытых системах, полностью детерминированных начальными условиями) достигать не зависящего от времени состояния, которое не зависит от ее исходных условий и определяется исключительно параметрами системы. В энтропийной модели под воздействием внешней среды система за счет изменения своих параметров (\mathbf{a} , Σ) может варьировать свои свойства в пределах от абсолютно аддитивной до абсолютно целостной.

Закон «необходимого разнообразия». Создаваемая система должна иметь (способна создать в себе) разнообразие не менее, чем разнообразие решаемой проблемы. Применительно к энтропийной модели данная закономерность обеспечивается за счет того, что, варьируя параметры модели, можно получить любое состояние многомерной системы Y .

Историчность. Любая система в процессе функционирования должна изменяться. Энтропийная модель обеспечивает данную закономерность за счет изменения своих параметров, например, под воздействием внешней среды.

Закономерность самоорганизации. Во всех явлениях имеет место дуализм. С одной стороны, справедлив второй закон термодинамики, то есть стремление к возрастанию энтропии, к распаду, дифференциации, а с другой, наблюдаются

негэнтропийные тенденции, лежащие в основе эволюции, развития.

Модель (2) объясняет как рост энтропии, так и ее уменьшение. Рост (снижение) энтропии достигается за счет увеличения (уменьшения) дисперсий компонент Y_i и определителя $|R|$ корреляционной матрицы.

2. Наличие управляющих переменных.

Воздействие на систему в рамках энтропийной модели осуществляется с помощью изменения параметров формулы (2). К таким параметрам следует отнести дисперсии $\sigma_{Y_i}^2$ случайных величин Y_i и коэффициенты парной корреляции $r_{Y_i Y_j}$ между случайными величинами Y_i и Y_j , $i, j = 1, 2, \dots, m$.

Таким образом, установили, что энтропийная модель (2) удовлетворяет всем признакам модели сложной системы и может использоваться для ее описания и эффективного управления. Аналогично показывается адекватность соотношения (3) для моделирования сложных систем.

Выводы

1. Показано, что использование диагностических моделей позволяет формализовать процедуру моделирования сложных систем.

2. Энтропийная модель удовлетворяет всем признакам модели сложной системы и может использоваться для ее адекватного описания.

ЛИТЕРАТУРА

1. Прангишвили И.В. Энтропийные и другие системные закономерности: Вопросы управления сложными системами. – М.: Наука, 2003. 428 с.
2. Волкова В.Н., Денисов А.А. Основы теории систем и системного анализа. – СПб: Изд-во СПбГТУ, 1999. 512 с.
3. Антонов А.В. Системный анализ. – М.: Высшая школа, 2004. 454 с.
4. Клейнер Г.Б. Системное моделирование микроэкономических объектов // Системный анализ в экономике: Сб. науч. тр. – Таганрог: Изд-во ТРТУ, 2001. С. 186–203
5. Налимов В.В. Теория эксперимента. – М.: Наука, 1971. 215 с.
6. Флейшман Б.С. Основы системологии. – М.: Радио и связь, 1982. 368 с.
7. Гольдштейн Г.Я. О несистемности общей теории систем // Известия ТРТУ. 2004. № 4(39). С. 71–75.
8. Шеннон Р. Имитационное моделирование систем – искусство и наука: Пер. с англ. – М.: Мир, 1978. 420 с.
9. Фон Бергаланфи Л. История и статус общей теории систем // Системные исследования: Ежегодник: Пер. с англ. – М.: Наука, 1973. С. 20–37.

10. Биргер И.А. Техническая диагностика. – М.: Наука, 1978. 239 с.
11. Lok P., Crowford J. The Application of a Diagnostic Model and Surveys in Organizational Development // Journal of Managerial Psychology. 2000. V. 15. № 2. P. 108–125.
12. Тырсин А.Н. Энтропийное моделирование многомерных стохастических систем. – Воронеж: Издательство «Научная книга», 2016. 156 с.
13. Shannon C.E. A Mathematical Theory of Communication // The Bell System Technical Journal, 1948, Vol. 27. P. 379–423, 623–656.
14. Тырсин А.Н., Соколова И.С. Энтропийно–вероятностное моделирование гауссовских стохастических систем // Математическое моделирование. 2012. Т. 24. №1. С. 88–103.

ԲԱՐԴ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ

ԱԼԵԿՍԱՆԴՐ ՏԻՐՍԻՆ

Ռուսաստանի դաշնության Ռուսաստանի առաջին նախագահ Բ.Ն Ելցինի անվան Ուրալի ֆերդերալ համալսարան, Ուրալի Էներգետիկայի ինստիտուտի կիրառական մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, դոցենտ

ԳԱՌՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ռուսաստանի դաշնության Ռուսաստանի առաջին նախագահ Բ.Ն Ելցինի անվան Ուրալի ֆերդերալ համալսարան, Ուրալի Էներգետիկայի ինստիտուտի կիրառական մաթեմատիկայի ամբիոնի սասյիրանտ

Առաջարկված է բարդ համակարգերի մոդելավորման եղանակ, որը հիմնված է դիագնոստիկ մոդելների կառուցման վրա: Այն թույլ է տալիս հաղթահարել մի շարք խնդիրներ՝ կապված բարդ համակարգերի ճշգրիտ մոդելների ստեղծման անհնարինության հետ: Ներկայացված է բարդ համակարգի էնթրոպիական դիագնոստիկայի մոդելի օրինակ: Ընդ որում, բարդ համակարգը նկարագրվում է պատահական վեկտորի տեսքով: Որպես մոդել դիտարկվում է պատահական մեծության դիֆերենցիալ էնթրոպիան: Բերված է մոդելի գործնական իրականացման օրինակ՝ մակրոէկոնոմիկական համակարգի դինամիկայի ուսումնասիրության համար:

THE MODELING OF COMPLEX SYSTEMS IN PROBLEMS OF DIAGNOSIS

ALEKSANDR TIRSIIN

*The Ural Federal University Named after the Russian President Boris Yeltsin, RF
The Ural Power Engineering Institute, Head of the Department of Applied Mathematics
Doctor of Technical Sciences , Associate Professor*

GARNIK GEVORGYAN

*The Ural Federal University Named after the Russian President Boris Yeltsin, RF
The Ural Power Engineering Institute, Department of Applied Mathematics, Postgraduate*

Hereby an approach is proposed for modeling complex systems, based on the diagnostic models construction. This allows to eliminate a number of issues associated with the impossibility of creating proper models of complex systems. The example is provided for entropy diagnostic model of the complex system, where it is described as a random vector. The differential entropy of the random vector is used as a model. An example for the practical implementation of the model in the study of macroeconomic system dynamics is being discussed.

**ՀԱՄԱՑԱՆՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքում ուսումնասիրվել է տուր-գործակալությունների արդյունավետ աշխատանքի վրա համացանցի ազդեցությունը և նոր գործընկերների փնտրման հնարավորությունները: Համակարգչային ծրագրերի օգնությամբ (Microsoft Office Excel, SPSS) վերլուծվել և գնահատվել է համացանցով գովազդային գործունեության կիրառման արդյունավետությունը՝ «Տաթև S.S.S.» տուրիստական գործակալության օրինակով: Ուսումնասիրության արդյունքում տրվել են կիրառական առաջարկներ՝ հետագայում տուր-գործակալության աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. համացանց, ինֆորմացիոն ռեսուրսներ, տուր-գործակալություն, զբոսաշրջություն, որոնողական համակարգեր, Microsoft Office Excel, SPSS:

Համացանցն ամբողջ աշխարհում համարվում է հզոր տեխնոլոգիա և համաշխարհային ինֆորմացիոն ցանց:

Ինֆորմացիայի հսկայածավալ չափերի և տվյալների փոխանակման արագության շնորհիվ համացանցն ունի միլիոնավոր օգտատերեր, որոնք օգտվում և ստանում են անհրաժեշտ ինֆորմացիա:

Համաշխարհային ինֆորմացիոն ցանցն այնքան արագ է զարգանում, որ ամեն տարի օգտվողների և տեղեկատվական ռեսուրսների ծավալը բազմապատկվում է, որի շնորհիվ զարգանում են բազմաթիվ ոլորտներ, որից

մեկը տուրիստական բիզնեսի ոլորտն է, և համացանցի կիրառումն անմիջականորեն ազդում է տուրիստական ձեռնարկության գործունեության արդյունավետության բարձրացման վրա, հետևաբար համացանցի օգտագործումը որպես հզոր գործիք հանդիսանում է արդիական խնդիր:

Համացանցում հայտնվել են տուրիստական բիզնեսի բազմաթիվ բաժիններ՝ տուր-գործակալություններ, հյուրանոցներ, ավիափոխադրիչներ, տասնյակ ամրագրման ցանցեր տուրիստական ոլորտում: Հետևաբար, տուր-գործակալությունները բացի ավանդական եղանակներից, պետք է ունենան տուրիստական ծառայությունների մատուցման նոր ձև՝ էլեկտրոնային: Տարեցտարի ավելանում է այն տուր-գործակալությունների թիվը, որոնք օգտվում են ամրագրման և հյուրանոցների «ռեզերվ» համակարգերից: Այսպիսի ծրագրերը թույլ են տալիս տեղեր ամրագրել ամբողջ աշխարհի հյուրանոցներում, անմիջապես ստանալ թարմ տեղեկություններ ամրագրման պայմանների, գների, զեղչերի մասին: Նախկինում այս ամենի վրա ավելի շատ ժամանակ և միջոցներ էր ծախսվում: Համացանցն ունի հարմար որոնողական համակարգ, որը հնարավորություն է տալիս մի քանի վայրկյանի ընթացքում պատասխանել յուրաքանչյուր հարցի: Բոլոր հանգստյան տներում և հանգստյան գոտիներում տեղի ունեցող փոփոխությունները լրացվում են համակարգում: Տեղերի մասին տվյալներն

ամեն ամրագրումից հետո ավտոմատ կերպով թարմացվում են, ինչը շատ կարևոր է սեզոնային պիկերի ժամանակ: Այն գործակալությունները, որոնք մուտք են գործում այդ համակարգ, օգտվում են վերջին թարմ ինֆորմացիայից, այլ ոչ թե հին: Նշված խնդիրների ուսումնասիրությամբ են զբաղվել գիտնականներ Գ. Վ. Անտոֆենը, Վ. Պ. Ռուսյանցը և Ի. Ի. Թելետնիկովը:

Տուր-գործակալության գործունեությունը և նրա տեսակները

Ձրոսաշրջությունը, որը ծագել և զարգացել է որպես ժամանակի և հասարակության պահանջմունք, հանդես է գալիս զարգացման երեք շրջաններով.

ա) նախանշաններ, որոնք նպաստում են կազմակերպել խմբակային ճանապարհորդություններ, արշավներ;

բ) արշավների հաստատման՝ որպես դաստիարակման մեթոդ;

գ) զբոսաշրջության՝ որպես հասարակական երևույթի, կայունացման և հետագա զարգացման:

Տուր-գործակալն իր կատարած աշխատանքի բնույթով հանդիսանում է որպես գործակատար: Դասական տուր-գործակալը չի ստեղծում իր սեփական տուրիստական արտադրանքը, այլ զբաղվում է դրանց վերավաճառքով¹:

Համացանցում գնահատվում է ինֆորմացիայի թարմությունը և օպերատիվությունը: Ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս ամեն օր թարմացնել ինֆորմացիան: Համացանցը թույլ է տալիս զգալի աստիճանով բարձրացնել կապի որակը, իջեցնել ծախսերը գործուղումների համար, ընդլայնել գործունեության աշխարհագրությունը, հաճախորդների շրջանակը և գործակիցները: Համացանցի թվարկված հնարավորությունների մեծամասնությունն օգտագործվում է ժամանակակից զբոսաշրջության ոլորտում, սակայն հատուկ հետաքրքրություն են

առաջացնում զբոսաշրջային կազմակերպությունների մոտ գլոբալ ցանցի հետևյալ ձևերը.

- կուրմունիկացիան և արդյունավետ կապը,

- զբոսաշրջության արտադրանքի գովազդը և առաջընթացը,

- մարքետինգային հետազոտությունները,

- գործակալության էլեկտրոնային կայքերը և արտադրանքների գովազդը,

- էլեկտրոնային հնարավորությունների օգտագործումը միջազգային տոնավաճառներում և ցուցահանդեսներում,

- ամրակալման և պահեստային համակարգի օգտագործումը,

- տուրի ինքնուրույն ձևավորումը,

- զբոսաշրջային ուղեգրի ձեռքբերումը,

- զբոսաշրջության արտադրանքի էլեկտրոնային օգտագործումն ըստ երկրների ու ուղղությունների,

- երկրների մասին ինֆորմացիա ստանալը,

- տարբեր երկրներում եղանակի տեսությանը տեղեկանալը,

- տրանսպորտի տարբեր տեսակի շարժման ցուցակներին ծանոթանալը, նաև հյուրանոցների գների մասին տեղեկություն ստանալը,

- ռեստորանների և տարբեր զբոսաշրջային ծառայությունների մասին,

- համացանցի օգտագործումը վճարումների նպատակով,

- վիրտուալ զբոսաշրջային օֆիսի ձևավորումը²:

Համացանցի հնարավորությունները կարող են օգտագործվել նաև զբոսաշրջային արտադրանքի ձևավորման, և առաջտանելու, գովազդի նպատակով, ընդ որում, պահանջվող տեղեկության որոնում համակարգում, մարքետինգային հետազոտություն, զբոսաշրջային

1 http://tourlib.net/books_tourism/aleks55.htm

2 http://tourlib.net/books_tourism/shahovalov13.htm

ծառայությունների արդյունավետ գովազդ, գործընկերների որոնում, զբոսաշրջային ծառայությունների ամրագրում և պահեստավորում, զբոսաշրջային արտադրանքի վաճառք¹:

“ՏԱԹ-և S.S.S.”տուրիստական գործակալության ընդհանուր բնութագրերը

«ՏԱԹ-և S.S.S.» –ն գործում է 1992թ-ից և այս տարի տոնում է իր հիմնադրման 25 ամյակը: Ի շնորհիվ տարիներ շարունակ կուտակած փորձին՝ ընկերությունը կազմակերպում է տարատեսակ հետաքրքիր շրջագայություններ ՀՀ տեսարժան վայրերով, օգնում է օտարերկրյա գործարարներին իրենց բիզնես ուղևորությունները դեպի Հայաստան դարձնել ավելի դյուրին և արդյունավետ, կազմակերպում է հանդիպումներ հուսալի գործընկերների հետ և լուծում է ցանկացած խնդիր կապված նրանց ՀՀ այցի և հանգրվանի հետ: Գործակալությունը մեծ ուշադրություն է դարձնում զբոսաշրջիկների Հայաստան այցելությանը, ինչպես նաև մեր երկիրը օտարերկրացիների համար գրավիչ դարձնելուն՝ առաջարկելով և երաշխավորելով նրանց որակյալ ծառայություններ, լավ ժամանց և անմոռանալի հիշողություններ:

«ՏԱԹ-և S.S.S.»–ն հանդիսանում է նաև Հայաստանում իրանական «Aseman Airline» և «MahanAir» մասնավոր ընկերությունների վաճառքի գլխավոր գործակալը:

Իր աշխատանքային գործունեության ընթացքում “Տաթև S.S.S.”տուրը գրավել է իր կայուն դիրքը շուկայում և ձևավորել է իր հաճախորդների շրջանակը, սակայն այսօր մրցակցությունն աճում է, և գործակալությանը հարկավոր է բարձրացնել իր վարկանիշը:

Գովազդային գործունեության ակ-

տիվությունն ավելացնելու նպատակով հարկավոր է.

1. Ամեն տարվա սկզբում հստակ պլանավորել գովազդային գործունեությունը և կազմել գովազդային բյուջեն, հարկավոր է մտածել և կարևորել գլխավորը պլանավորված իրադարձություններում, որ կարիք ունեն գովազդի: Կազմել հաշվետվություն գովազդային կորպորացիայի անցկացման և ծախսերի մասին:

2. Տեղադրել գովազդը ոչմիայն գործնական, այլ նաև գովազդային ասագրերում:

3. Համացանցում վեբ-կայքի աշխատանքի արդյունավետության բարձրացում: Կայքում պետք է տեղադրվեն տեղեկատվություն այն իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունենում հյուրանոցներում (միջոցառումներ, ռեստորանային երեկոներ և այլն), պետք է պարունակի տեղեկատվություն ազատ համարների և դրանց ամրագրման մասին²:

4. Բարձրացնել ուղիղ հասցեագրված ցրման որակը:

5. Ստեղծել ներկայանալի տեսաֆիլմ “Տաթև” գործակալության մասին:

6. Նոր լրացուցիչ ծառայությունների ստեղծում, որը դրական կազդի զբոսաշրջային գործակալության վարկանիշի վրա և հօգուտ գործակալության՝ ընտրության դեպքում:

7. “Տաթև” գործակալության ծառայությունների ցանցի ընդլայնում:

Բոլոր նշված խորհուրդները կարող են օգնել ավելի հայտնի դարձնելու “Տաթև” տուրիստական գործակալության բրենդի ձանաչելիությունը, և շնորհիվ գովազդային գործունեության, “Տաթև”–ը կընկալվի որպես մեծ համակարգ, որն ունի լայն ծառայությունների տեսակետ լիարժեք հանգստի և բիզնե-

1 Аванесова, Г.А. Сервисная деятельность: Историческая и современная практика, предпринимательство, менеджмент / Г.А. Аванесова. - М.: Аспект Пресс, 2005., стр.328

2 Каурова А.Д. Организация сферы туризма: Учебное пособие.-Изд. 2-е, перераб и дополн.-СПб.: «Издательский дом Герда», 2006, стр.126


սի համար:

Գովազդի արդյունավետության վերլուծությունը “ՏԱԹ-ն S.S.S.” տուրիստական գործակալության օրինակով

Գովազդի արդյունավետությունը կարող ենք տեսնել “Տաթն” տուրիստական գործակալության մի քանի տարիների տուրիստների հոսքն ուսումնասիրելով:

“ՏԱԹ-ն S.S.S.” տուրիստական գոր-

ծակալության առաջին կայքը ստեղծվել է 2002 թվականին: Դրա նախորդ տարիների, ստեղծման տարվա և հետագա տարիների աճն ու հետընթացը տեսնելու համար կազմել է հետևյալ աղյուսակը Excel ծրագրով, որն ամիսների ու տարիների տվյալների մուտքագրումից հետո սանդղակով ցույց կտա, թե որ տարիներին են գրանցվել առավել շատ տուրիստական հոսքերը /տես նկար1/:



Նկար 1. Տարիների վիճակագրական գծապարկեր:


Նկատում ենք, որ 2002 թվականի մարտ ամսին հոսքերը բավականին շատ են եղել, որը նաև կարելի է բացատրել կայքի ստեղծման հետևանքով:

SPSS ծրագրային փաթեթը լայն տարածում է գտել զանազան հետազոտողների շրջանում: SPSS-ը (Statistical Products and Service Solution) վիճակագրական վերլուծության և տվյալների կառավարման առավել կիրառվող համակարգերից մեկն է, որը կառուցված է որպես տվյալների ավանդական բազա, սակայն քանի որ փաթեթը նախատեսված է հարցումների արդյունքների մշակման համար, այն կառուցվածքային տարբերություններ ունի տվյալների ավանդական բազաներից, որոնք արտահայտված են ելակետային տեղե-

կությունների կուտակվող զանգվածի ձևականացման, տեղեկությունների վիճակագրական մշակման և արդյունքների ներկայացման սկզբունքներում:


Կազմվել է «Տաթն S.S.S.»-ի ծառայությունների սանդղակ՝ հիմնված հարցաթերթիկների վրա, որոնք լրացվել են զրոսաշրջիկների կողմից: Հարցաթերթիկը կազմվել է գործակալության կողմից, որպեսզի կարծիքների շնորհիվ առավել բարելավվեն մատուցվող ծառայությունների որակը: Նկար 5-ում նշված է հարցաթերթիկի օրինակը:

SPSS ծրագրում համապատասխան աղյուսակների միջոցով մուտքագրվում են տվյալները և ստացվում են վերլուծությունների հետևյալ գծապատկերները:



Նկար 2. Վիճակագրական գծապատկեր:


Նկար 2-ում տեսնում ենք, որ ընտրվել է վարորդի ծառայություններին վերաբերող հարցեր՝ մեքենայի ծառայություն, վարորդի տրանսպորտավաճառքը և օգնության ցուցաբերումը, վարորդի վերաբերմունքը: Ինչպես տեսնում ենք, ընդհանուր առմամբ, մեքենայի ծառայությունը գնահատվել է լավ, չնայած որ կան և շատ վատ կարծիքներ, և շատ լավ: Այս առումով կարող ենք ասել, որ տուրիստական կազմակերպությունն ավելի հետևողական պետք է լինի վարորդի ցուցաբերած վերաբերմունքի նկատմամբ:



Նկար 3. Վիճակագրական գծապատկեր:

Նկար 3-ում անդրադարձվել է տուրիստներին և գիղին՝ ընտրելով 3 ծառայություններ. գիղի վերաբերմունքը, տուրի-

րիկազմակերպվածությունը և արժեքը: Ինչպես նկատում ենք գծապատկերից, գերակշռում է շատ լավ կարծիքը, ինչից կարող ենք հետևություն անել, որ տուրիստների հարցում կա բարձր կազմակերպվածության մակարդակ, հաճախորդներին գոհացրել են և գիղի մատուցած ծառայությունը, և տուրիստների կազմակերպվածությունը, և տուրիստների արժեքը: Սա, իհարկե, շատ կարևոր է տուրիստական գործակալության վարկանիշի համար, քանի որ մեծամասամբ տուրիստներից են կախված կարծիքներն ու գնահատականները:



Նկար 4. Վիճակագրական գծապատկեր:

Նկար 4-ում կազմվել են գծապատկերներ՝ անդրադառնալով 3 կարևոր ծառայություններին, այն է տուր-լիդերի ծառայություն, գիղի ծառայություն և կեցության վայրի ծառայություն: Սրանք տուր-փաթեթի բաղադրիչ ամենակարևոր ծառայություններն են, որոնք պետք է մատուցվեն առավելագույնս լավ կերպով: Ինչպես տեսնում ենք գծապատկերից, պատկերը 3 ծառայություններում էլ վատ չէ, որը նշանակալի դեր ունի տուրիստական գործակալության լավ համբավի համար:

Հարցաթերթիկը կարելի է տեղադրել կայքում /տես նկար 5/, SPSS ծրագրով կարող են կազմվել բազամաթիվ գծա-

պատկերներ՝ էլեկտրոնային հարցերի քանակից և տրված պատասխաններից, և ըստ գծապատկերների հասկանալի, թե որ ծառայություններն են առավելագույնս արժանացել գոհունակության և դժգոհության:

Եզրակացություն

Համացանց-տեխնոլոգիաների մշակումը և կատարելագործումը, համապատասխան համակարգչային ծրագրերի կիրառումը տուր-գործակալության աշխատանքի վերլուծության, էլեկտրոնային փոստի, համացանցի միջոցով գովազդի տեղադրումը զբոսաշրջության ոլորտում հետքերը չեն թողնում և առաջացնում ոչ միայն առանձին կազմակերպությունների աշխատանքի մեջ, այլև այն կարող է դրական ազդեցություն ունենալ Հայաստանի զբոսաշրջության զարգացման վրա:

Շնորհակալություններով հարգելի է հարգելու համար ձեր նախնական կողմնակցությունը, խնդրում ենք ներկայացնել Ձեր քննարկումները և պատասխանել ձեր մտադրած հարցերին: Եթե կան հարցեր, կարող եք կապվել:

Մեծ Ազգանուն

Ներդրում ժամանակահատված

1. Ինչպե՞ս եք տեսնում ձեր նախնական քննարկումը

- 1. Համապատասխան
- 2. Իրական գերազանց զգացում
- 3. Հերքող զգացում

2. Ինչպե՞ս եք տեսնում ձեր նախնական քննարկումը ներքին մեզ համար շատ կարևոր կարգից

Վերադառնալով ժամանակահատված

- 1. Նախնական քննարկումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 2. Վատ և արևմտյան քննարկումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 3. Տեղեկատվության կարգից շատ վատ գնահատելի է շատ լավ
- 4. Մեղմունքի նախնական քննարկումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 5. Վարդի արևմտյան քննարկումը և գնահատումը չեն գերազանցում շատ վատ գնահատելի է շատ լավ

Մեծացրե՞լ

- 1. Նախնական քննարկումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 2. Նախնական քննարկումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 3. Գնահատումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 4. Գնահատումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 5. Վարդի քննարկումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 6. Մեծ գնահատումը արևմտյան քննարկումը շատ վատ գնահատելի է շատ լավ

Ներդրումը կապում ե՞ս ձեր քննարկումը

- 1. Ներդրումը վերաբերում է ներքին զգացումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 2. Ներդրումը վերաբերում է նախնական քննարկումը շատ վատ գնահատելի է շատ լավ
- 3. Մեծ գնահատումը կարգից շատ վատ գնահատելի է շատ լավ

Եթե ունեք նախնական քննարկումներ և կենցաղային հարցեր, խնդրում ենք ներկայացնել ստորագրված քննարկումը կարգից շատ լավ:

Շնորհակալություններով ձեր ժամանակը մեզ արժեքավորում է:

Հարգելի է հարգելու համար ձեր ժամանակը

Նկար 5. Վիճակագրական հարցման թեստ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Каурова А.Д. Организация сферы туризма: Учебное пособие.–Изд. 2-е, перераб и дополн.–СПб.: «Издательский дом Герда», 2006
2. Аванесова, Г.А. Сервисная деятельность: Историческая и современная практика, предпринимательство, менеджмент / Г.А. Аванесова. – М.: Аспект Пресс, 2005. – 320 с.
3. http://tourlib.net/books_tourism/shahovalov13.htm
4. www.tatev.com

АНАЛИЗ ВЛИЯНИЯ ИНТЕРНЕТА И ЭФФЕКТИВНОСТИ РЕКЛАМЫ

ГОАРИК ПЕТРОСЯН

НАН РА МНОЦ, преподаватель, канд. физ-мат. наук, доцент

ЭЛЯ АВАГЯН

НАН РА МНОЦ, магистр

В данной работе рассмотрено влияние Интернета на результативность работы туристического агентства и возможность поиска новых партнеров.

На примере туристического агентства «Татев ТТТ», с помощью компьютерных прикладных программ, таких как MS OfficeExcel, SPSS, проанализирована и оценена эффективность рекламной деятельности в Интернете. В результате исследований были даны практические рекомендации для повышения эффективности работы туристического агентства.

ANALYSIS OF THE IMPACT OF THE INTERNET AND EFFECTIVENESS OF ADVERTISING

GOHARIK PETROSYAN

Lecturer at ISEC, NAS, RA, PHD in Physics and Mathematics, Associate Professor

ELYA AVAGYAN

MA Student at ISEC, NAS, RA

The article explores the impact of the Internet, productive work of tour agencies and possibilities of searching for new partnerships. With the help of computer programs (Microsoft Office, Excel and SPSS) the effectiveness of internet advertising activities was analyzed and evaluated on the example of “Tatev T.T.T.” travel agency. During the study practical suggestions were made in order to increase working productivity of tour agencies.

КОНСТИТУЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ И ВОПРОСЫ КОНСТИТУЦИОННОГО КОНТРОЛЯ ПО ЗАЩИТЕ ПРАВ И СВОБОД ГРАЖДАН: ЗАКОНОМЕРНОСТИ И ОТКЛОНЕНИЯ

В XXI веке международное сообщество пришло к осознанию необходимости соблюдения важнейших общечеловеческих ценностей как во взаимоотношениях между государствами, так и во взаимоотношениях государства с собственными гражданами, обеспечение безопасности как собственной, так и граждан, что было и будет главной задачей, стоящей перед любым современным государством.

А для этого необходимо обеспечить подлинную реализацию закрепляемых Конституцией государства прав и свобод человека и гражданина. Решение этих задач предполагает реализацию различных взаимосвязанных задач в политической, экономической, социальной, правовой, идеологической сферах развития общества и государства.

Современная обстановка любого демократического правового государства в мире характеризуется поиском путей укрепления конституционной безопасности, проведением всесторонних исследований, различных аспектов ее обеспечения¹.

Это обусловлено необходимостью создания внутренних и внешних условий, обеспечивающих благополучие, стабиль-

ность и устойчивое поступательное развитие личности, общества и государства.

Следует констатировать, что в тексте Конституции государства вообще отсутствует понятие «конституционная безопасность», однако необходимо подчеркнуть, что принципиальное изменение конституционно-правового устройства стран новой демократии, в том числе и Армении, в конце прошлого столетия вызвало необходимость создания новой модели конституционного государства.

В связи с этим обозначенная проблема данной работы становится весьма актуальной, поскольку направленность научного интереса связана с теоретико-методическим осмыслением современных основ конституционной безопасности, как источника защищенности прав и свобод человека и предпосылок ее осуществления. Ведь конституционная безопасность рассматривается уже как необходимое условие безопасного и устойчивого развития всей социальной системы государства.

С учетом решений данной проблематики можно выдвинуть следующие вопросы:

Насколько совместимы защищенность конституционных прав и свобод человека и обеспечение конституционной безопасности?

Какие закономерности сложились в соотношении конституционной безопасности с государственной или национальной безопасностью?

¹ См. Бондарь Н.С. Конституционная безопасность личности, общества, государства: постановка проблемы в свете конституционного правосудия, обеспечения социальной справедливости, равенства и прав человека // Правовая реформа, судебная реформа и конституционная экономика. Сборник статей. М., 2011. с.28

Создана ли необходимая правовая среда в правозащитной деятельности конституционного суда по обеспечению конституционной безопасности?

Если попытаться в тезисной форме ответить на эти вопросы, то можно констатировать следующее:

1) Одним из основных условий естественного и гармоничного развития человека и общества является стабильное развитие государства, предполагающее множество взаимосвязанных факторов, важнейшим из которых является обеспечение его конституционной безопасности. Решение проблем конституционной безопасности связано с решением различных, но взаимосвязанных задач в политической, экономической, социальной, правовой, идеологических сферах развития любого современного общества и государства.

Новая редакция Конституции Республики Армения провозглашает человека высшей ценностью и выделяет две важнейшие функции публичной власти. Она обязана: 1) уважать и 2) защищать основные права и свободы человека и гражданина (ст. 3 Конституции РА).

Каждая из этих функций публичной власти носит одновременно самостоятельный и общий характер. Если уважение прав и свобод, посредством их признания и соблюдения, обеспечивается благодаря усилиям, прежде всего, законодательной ветви власти и конкретной деятельности исполнительной власти, тогда защита конституционных прав и свобод — прерогатива судебной власти.

Одновременно их функциональное значение является тем индикатором, который позволяет судить о безопасности государства и всего общества в целом.

То есть на примере Конституции Республики Армения, если обязанностью демократического правового государства является уважение и защита прав и свобод человека и гражданина, то эта обязанность предполагает само состоя-

ние защищенности этих прав и свобод в соотношении защищенности конституционного строя государства, его суверенитета, стабильности системы публичной власти и ее институтов.

Отсюда вытекает следующее:

а) конституционная безопасность не есть часть государственной безопасности, а наоборот;

б) конституционная безопасность государства это состояние защищенности прав и свобод человека и гражданина, а также защищенности интересов общества и государства, где правозащитная деятельность государства рассматривается как прерогатива в отношении собственно его безопасности.

2) Важнейшее место в механизме обеспечения конституционной безопасности государства занимает конкретная правозащитная деятельность Конституционного Суда.

В данном случае судебный орган конституционного контроля выполняет двойную роль: он не только принимает непосредственное участие в устранении препятствий для надлежащего осуществления гражданами прав, неконституционность ограничения которых оспаривается ими в жалобе, но и способствует реализации гражданами права на судебную защиту, являющегося гарантией всех других конституционных прав и свобод.

Тот, кто не исполняет решение Конституционного Суда, фактически выступает не только против Конституции, но и является реальной угрозой конституционной безопасности.

3) Совпадение конституционной безопасности и конституционализма — важнейшее условие и проявление единства государства, общества и граждан. Когда же в обществе вызревают новые идеи, направленные на корректировку конституционных устоев и стандартов по обеспечению конституционной безопасности, можно делать вывод об отсутствии консенсуса, об

утрате у определенной части населения уважения к конституционным нормам, так как защита их прав и свобод находится под угрозой. Когда сторонников перемен становится много, отсутствует базовый консенсус, тогда и происходит замена старой Конституции новой.

С другой стороны, общепризнанным является факт, что Конституция государства служит прогрессу общества, если в ней отражен оптимальный баланс интересов государства и граждан, если они — равноправные и равноответственные субъекты. Такая Конституция, отражая общепризнанные принципы международного права, учитывает и содействует защищенности прав и свобод граждан.

Если проанализировать Конституцию любого современного государства, то можно найти закрепленные в ней принципы правового демократического государства. Их реализация — важнейшее условие разумного правового регулирования, т.е. такого правового воздействия на общественные отношения, которое способствует прогрессивному развитию общества в силу учета объективно складывающихся закономерностей. По своей природе конституционная безопасность является именно таким правовым принципом, который связан с предметной сферой и целевым назначением правозащитной деятельности органов судебного конституционного контроля.

4) В соответствии с частью 15 статьи 68 Закона Республики Армения «О Конституционном суде», если Конституционный Суд находит, что признание оспариваемого нормативного правового акта или какого-либо его положения противоречащим Конституции и недействительным в момент провозглашения постановления Конституционного Суда неизбежно создаст такие тяжелые для общества и государства последствия, которые нарушат правовую безопасность, устанавли-

ваемую на этот момент отменой данного нормативного акта, и Конституционный Суд, признав данный акт противоречащим Конституции, может отсрочить в своем постановлении утрату юридической силы этого акта.

В контексте содержания данной работы следует иметь в виду, что только нормативного закрепления понятия правовой или конституционной безопасности будет недостаточно. Соответственно необходимо выработать такие механизмы обеспечения конституционной безопасности, которые призваны защищать правовую сферу, объекты, нуждающиеся в правовой защите, принципы, юридические средства обеспечения безопасности, критерии оценки состояния правовой безопасности и ее эффективности. В конечном счете конституционная безопасность государства должна преследовать цели защиты конституционных прав и свобод граждан и человека, а также интересов общества и государства, и выявление существующих рисков.

5) Важной проблемой является также проблема соотношения защищенности прав и свобод человека и гражданина с проблемами обеспечения конституционной безопасности.

Конституция государства однозначно определяет, что права и свободы человека и гражданина могут быть ограничены только в той мере, в какой это необходимо в целях обеспечения безопасности личности, общества и государства.

В отличие от них, другие угрозы в сфере конституционной безопасности имеют специфическое проявление, и уж если возникают такие конституционные риски, то именно здесь эти риски неизбежно сопутствуют любым конституционно организованным обществам.

Соответственно наличие этих фундаментальных рисков свойственно и конституционализму. Ситуации конституционного риска в современных государствах охватывают конституционное правот-

ворчество, реализацию и интерпретацию Конституции, существующие в сложных взаимосвязях и взаимозависимостях¹. Прежде всего указанные взаимосвязи и взаимозависимости концентрируются вокруг неопределенности по вопросу защищенности прав и свобод граждан.

Под конституционным риском может пониматься вероятность наступления негативных, нежелательных для субъектов конституционных решений правовых и, в конечном счете, иных социальных последствий. Думается, что и такое, в узком смысле, определение понятия конституционного риска имеет право на существование при рассмотрении многих теоретических вопросов, связанных с различными его характеристиками.

Таким образом, к одной из прогностических задач современной науки конституционного права можно отнести выявление, оценку, определение вероятных последствий и правовых средств минимизации возможных неблагоприятных последствий риска кардинальной эволюционной конституционной реформы.

Исходя из этого, можно сформулировать условия сочетания конституционной безопасности и защиты прав человека в контексте конституционного правосудия, закономерностей и отклонений этих условий:

А) Конституционная безопасность должна рассматривать состояние защищенности прав и свобод граждан как доминирующую часть конституционного строя государства. В данном случае закономерность состоит именно в том, что данная обязанность государства предполагает состояние защищенности конституционного строя государства в целом, его суверенитета, территориальной целостности, стабильности системы государственной

власти и ее институтов. Однако правовым путем возможно допущение такого отклонения, когда конституционная безопасность рассматривается как институт государственной безопасности.

Б) Основным способом обеспечения конституционной безопасности по защите конституционных прав и свобод человека и граждан, как приоритета в отношении защиты интересов общества и государства, является не только качественное правотворчество, но и эффективное правоприменение. Следовательно, обеспечение безопасности личности, как впрочем и безопасности общества и государства, является процессом перманентным, требующим постоянного мониторинга ситуации, непрерывного научного осмысления путей обеспечения безопасности в реально сложившейся ситуации. Как видим, налицо вполне легально допустимый вариант отклонения от правозащитной деятельности с предпочтением другого варианта – защиты интересов общества и государства.

В) Буквальное понимание конституционной безопасности в большей степени применимо к деятельности органа судебного конституционального контроля как высшего арбитра в вопросах соответствия конституционному тексту всего внутреннего законодательства. В данном случае закономерность состоит именно в том, что соответствующий орган занимается, по сути, правотворческой деятельностью, по формальным критериям он стоит на страже Конституции и является безусловным и основным гарантом ее безопасности. Это, однако, не исключает деятельности других органов государства в процессе обеспечения конституционной безопасности государства. А в этом случае не исключается нежелательный вариант, который состоит в том, что подобное правовое правило будет отклоняться путем допущения негативного отношения к недолжному применению деятельности этих органов.

В конце не лишним будет вспомнить,

1 См. Григорьев И.Б. «Конституционная безопасность» как категория в конституционно-правовой доктрине Российской Федерации // «Правозащитник» М., 2014. с.48.

определение американского правоведа Томаса Пейна (1737—1809) Конституции как «документа высшей юридической силы, она исходит от народа, а не государства, предшествует государственной власти и существует только тогда, когда мы можем положить ее в карман».

ЛИТЕРАТУРА

1. Бондарь Н.С. Конституционная безопасность личности, общества, государства: постановка проблемы в свете конституционного правосудия, обеспечения социальной справедливости, равенства и прав человека // Правовая реформа, судебная реформа и конституционная экономика. Сборник статей. М., 2011. 528 Стр.
2. Григорьев И.Б. «Конституционная безопасность» как категория в конституционно-правовой доктрине Российской Федерации // Правозащитник. М., 2014.
3. Димитрова С.А. Обеспечение конституционной безопасности федеративного государства в условиях современного развития Российской Федерации (конституционно-правовой аспект). Дисс. к.ю.н.: М.: 2008, 146 Стр.
4. Пейн Томас. Права человека. М.: 2015, стр. 233.
5. Шуберт Т.Э. Конституционная безопасность: конституционно-правовые аспекты. Сравнительно-правовые исследования // Право и закон. 2001.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՅԵՐ.
ՕՐԻՆԱԶՍՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇԵՂՈՒՄՆԵՐ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոդվածում անդրադարձ է կատարվել սահմանադրական անվտանգության տեսության և պրակտիկայի հիմնահարցերի, դերի ու բովանդակային նշանակության, ինչպես նաև սահմանադրական սպառնալիքների չեզոքացման և այլ հիմնախնդիրների հետազոտությանը:

CONSTITUTIONAL SAFETY AND ISSUES ON CONSTITUTIONAL CONTROL OVER
THE PROTECTION OF RIGHTS AND FREEDOMS OF CITIZENS:
REGULARITIES AND DEVIATIONS

ASHOT KHACHATRYAN

Doctor of Law, Professor

The article touches upon some issues on the theory and practice of constitutional security, its role and significance, as well as research aimed at neutralizing constitutional threats and other problems.

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆՈՐՄԱՏԻՎ ԿԱՐԳԱՎՈՐԻՉՆԵՐԻ
ՀԵՐԱՐԽԻԿ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԿԱՊԵՐԸ**

Իրավունքի տեսության ներկայացուցիչների կողմից ձևակերպվել և հիմնավորվել է իրավունքի ներքին և արտաքին ձևերի սահմանազատման անհրաժեշտության վերաբերյալ արդյունավետ գաղափարը. առաջինը՝ դիտարկվում է տրված պատմական տիպի իրավունքի համակարգ և հնարավորություն ընձեռում բացահայտելու իրավունքի նորմատիվ-կամային բովանդակության ներքին կազմակերպումը, երկրորդը՝ նշում է արտաքին արտահայտման եղանակը, նման բովանդակության ձևակերպմանը և հանդիսանում այլ սոցիալական կարգավորիչների շարքում իրավունքի ճանաչման ֆորմալ չափորոշիչ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. իրավունք, համակարգ, նորմատիվ, կարգավորիչներ, հիերարխիկ տարաբնույթ կապեր:

Իրավունքի ներքին ձևի կառուցվածքային կազմակերպման մեջ առկա կապերի բնույթի տեսանկյուններից, ըստ մեր կարծիքի, կարելի է խոսել նորմատիվ-կարգավորիչ միջոցների, իրավունքի ճյուղերի և իրավունքի ճյուղի «ըստ ծավալի» տարբեր կառուցվածքային տարրերի միջև նկարագրության հիերարխիայի գոյության վերաբերյալ:

Իրավունքի համակարգը կառուցվում է բազմամակարդակ, հիերարխիկ կազմակերպված բուրգի սկզբունքով, դրա հիմքով տեղակայված նորմատիվ-կարգավորիչ միջոցները միավորվում են իրավական սուբինստիտուտներում և ինստիտուտներում, դրանք՝ իրավունքի ենթաճյուղերի և ճյուղերի, որոնք իրենց հերթին իրավական հանրույթնե-

րում (զանգվածներում), և սահմանափակված ձևով կազմում են իրավունքի համակարգը, ընդ որում՝ իրավունքի համակարգի յուրաքանչյուր ստորին տեղակայված մակարդակը գտնվում է սուբորդինացված հարաբերություններում վերինների հետ և յուրաքանչյուր վերին մակարդակում ծագում է էմերջենտության հատկություն:

Դրա հետ կապված վիճելի ներկայանում է իրավունքի համակարգի հիերարխիկ հատկությունների վերաբերյալ Վ. Ա. Տոլստիկի թեզը, ով պնդում է, որ իրավունքի համակարգում հիերարխիայի դեպքում «խոսք է գնում ոչ թե համապատասխան կառուցվածքային տարրերի ուժային ենթակայության, այլ կախվածության վերաբերյալ, նրա նման, որը տեղակայված է, օրինակ, իրավական ակտերի դասակարգիչի կառուցման հիմքում»:¹

Իսկապես, կազմակերպչական հիերարխիան բնորոշ չէ իրավունքի համակարգի տարբեր տարրերի համար, սակայն բերված համեմատությունը, առաջինը, կոռեկտ չէ համեմատական համակարգերի էության տեսանկյուններից՝ բոլոր դեպքերում իրավունքի համակարգը, ըստ իր էության, օբյեկտիվ է, բնութագրում է իրավունքում ընթացող իրական երևույթներ և գործընթացներ, իսկ իրավական ակտերի դասակարգիչը հանդիսանում է յուրօրինակ մատրիցա կոնկրետ ակտի իրավունքի աղբյուրների համակարգերի համար հաստատված (ընդ որում սուբյեկտիվիզմի էական աստիճանով) որոշակի չափորոշիչին «հարմարեցման» համար, երկրորդը, ճիշտ չէ

հիերարխիայի ընդհանուր հասկացության տեսանկյուններից, իրավունքի համակարգի մեջ աստիճանակարգությունը արտահայտվում է նշված համակարգի նկարագրության ժամանակ վերին և ստորին տարրերի միջև սուբորդինացման մեջ, սակայն նշված հարաբերությունները միջնորդված են մարդու գիտակցությամբ և այդ իսկ պատճառով կարող են ընկալվել իրենց բացահայտող սուբյեկտի կողմից՝ որպես սեփական կամային ակտի արտահայտում, որը անմիջական հարաբերություն չունի իրավունքի համակարգի հետ:

Նշենք, որ բազմաթիվ հետազոտություններ, որոնք նվիրվել են իրավունքի տարբեր նորմատիվ-կարգավորիչ միջոցների, սուբինստիտուտների, ինստիտուտների ոլորտների «իրավական բնույթի» բացահայտմանը, կողմնորոշված են իրավունքի համակարգի առավել խոշոր և փոքր տարրերի միջև հիերարխիկ (սուբորդինալ) կապերի բացահայտմանը:² Դա իրականացվում է նաև գործնական նպատակներով՝ ընկալելու, թե որ ոլորտային, ճյուղային ինչ ռեժիմ է գործում իրավական իրականության տվյալ հատվածում:

Բացի դրանից՝ երբեմն նաև գիտնականները, օրենսդիրները և քաղաքագետները բացահայտ խոսում են իրավունքի համակարգի մեջ հիերարխիկ հիմքերի վերաբերյալ: Օրինակի որակով կարելի է բերել գերակայող իրավական գաղափարախոսության հարաբերակցությունը հանրային և մասնավոր իրավունքին³, ազգային և միջազգային իրավունքին:

Նկարագրության հիերարխիան արտահայտվում է նաև տարբեր մասշտաբների նորմատիվ-կարգավորիչ միջոցների համագործակցության դեպքում. այսպես՝ իրավունքի սկզբունքների նկատմամբ կիրառական, ընդհանուր իրավական սկզբունքները կոնկրետացվում և արտահայտվում են ճյուղերում՝ ճյուղայինները հատուկ սկզբունքներում:

Իրավունքի հատուկ և ընդհանուր նորմերի միջև փոխհարաբերությունները ևս կարող են բացահայտվել նկարագրության հիերարխիայի ասպեկտներում:

Հիերարխիկությունը (աստիճանավորությունը) սակայն փոքր-ինչ այլ տեսակի, առանձնահատուկ է նորմատիվ-կարգավորիչ միջոցների միջև հարաբերությունների մի շարքի համար:

Գրականության մեջ առանձնացնում են տարբեր հիերարխիկ կապեր, որոնք բնութագրում են նորմատիվ-կարգավորիչ միջոցների միջև փոխհարաբերությունները, ընդ որում հիերարխիկ կախվածության նկարագրության ժամանակ շեշտադրությունը կատարվում է ոչ թե որոշ նորմատիվ-կարգավորիչ միջոցների՝ մյուսներից ուղիղ կազմակերպչական կախվածության, այլ ըստ իրավունքի որոշումների ընդունման մակարդակների առանձնահատկության վրա:

Օրինակ, երբ խոսվում է իրավունքի և այլ նորմատիվ-կարգավորիչ միջոցների նպատակների և խնդիրների միջև հիերարխիայի վերաբերյալ, արտահայտվում է կարծիք, որ նպատակները և խնդիրները կանգնած են իրավական կատեգորիաների հիերարխիայում առավել բարձր մակարդակում, քան իրավունքի սկզբունքները, քանի որ հատկապես նպատակները և խնդիրներն են սահմանում ամբողջ իրավական ճյուղի առաքելությունը, իսկ տարբեր նպատակներ՝ հանգեցնում իրենց ձեռքբերման տարբեր մեթոդների, իսկ հետևաբար, տարբեր է իրավունքի համակարգի կառուցման և իրավակիրառական գործունեության սկզբունքների շրջանակները: Եվ հակառակը, որոշակի սկզբունքների պահպանությունը կարող է հանգեցնել ոչ թե ցանկացած, այլ միայն խիստ որոշակի նպատակների ձեռքբերման: ⁴

Իրավունքի նորմերի և սկզբունքների հարաբերակցության խնդրի լուծման ոչ միանշանակությունը, իրավական հիերարխիայում իրավունքի սկզբունքների տեղի սահմանման բարդությունը «հնա-

րավոր է՝ պայմանավորված են սկզբունքների և դրանց գործառույթների իրավաբանական նշանակությունների շփոթությամբ»։⁵ Որպես կանոն՝ իրավական նորմերի և սկզբունքների հիերարխիկ ենթադասությունը բացատրվում է նրանով, որ վերջիններս ներծծվում են իրավական հյուսվածքում, արտահայտում իրավունքի համակարգի կամ դրա առանձին խոշոր ենթահամակարգերի (ինչպիսիք են՝ իրավունքի ճյուղը կամ ենթաճյուղը) համար բնորոշը, օրինաչափը և ընդհանուրը։ Իրավունքի սկզբունքները «ոչ միայն ամրապնդում են իրավունքի բազմազանությունը միասնական, կայուն, փոխհամաձայնեցված համակարգում, այլ նաև իրավունքին հաղորդում ամբողջական բնույթ»։⁶ Ինչպես արդարացի նշել է Վ. Պատուդը. «իրավական սկզբունքները կիրառվում են իրավաբանների կողմից, որպեսզի մեկնաբանվեն և միմյանց հետ համաձայնվեն առկա իրավաբանական կանոնները, սահմանելով դրանց կիրառության ոլորտները, ինչպես նաև, երբ դրանում առկա է պահանջ կանոնների ստացման համար, որոնք նախկինում գոյություն չունեին»։⁷

Իրավունքի տեսությունում ևս արտահայտվել է նորմերի նկատմամբ սկզբունքների գերակայման վերաբերյալ կարծիք։ Յու. Ա. Տիխոնովը նշում է, որ իրավական համակարգի համար բնորոշ է մի շարք հատուկ կոռելյացիաների առկայություն, այդ թվում նաև այսպիսինի՝ «նորմեր-սկզբունքները և նորմ-նպատակները ունեն առաջնություն այլ նորմերի նկատմամբ»⁸, քանի որ «իրավունքի նորմերը չպետք է հակասեն իրավունքի սկզբունքներին»։

Նման ձևով դատում են նաև ճյուղային հետազոտություններում։⁹ Օ. Ա. Կուզնեցովը համարում է, որ «քաղաքացիական իրավունքի սկզբունքները համակարգային հիերարխիայում ունեն ընդհանրացվածության ամենաբարձր մակարդակը։ Հիերարխիայի հաջորդ, առավել ցածր մակարդակում, գտնվում են նորմ-

սկզբունքների իրավաբանական իմպերատիվները։ Դրանք հաճախ տարածում են սեփական ազդեցությունը քաղաքացիական իրավունքի առանձին ճյուղերի կամ ինստիտուտների, հասարակական հարաբերությունների որոշակի տեսակի, օրինակ, պայմանագրային հարաբերությունների վրա։ Հիերարխիան ավարտում են հատուկ նորմերը, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունների կոնկրետ տեսակ»։¹⁰ Միջազգային պայմանագրերի նորմերի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին համապատասխանության անհրաժեշտությունը նշվում է միջազգային իրավունքի գրականության մեջ։¹¹

Միևնույն ժամանակ նման մոտեցման շրջանակներում մինչև վերջ հասկանալի չէ. հնարավոր է արդյոք կոնկրետ նորմերի և ընդհանուր սկզբունքի հակասության դեպքում հրաժարվել ընդունել նորմը և գործել սկզբունքի հիման վրա։ Այս հարցի դրական պատասխանը բացակայում է։ Ռ. Դվորկինը, օրինակ, համարում է, որ իրավունքի ընդհանուր բովանդակային սկզբունքները հիերարխիայում գերազանցում են իրավական նորմերին, «նույնիսկ այն դեպքում, եթե օրենքի նորմը լիարժեք պարզ է, սակայն չի համապատասխանում այդ բովանդակային սկզբունքներին»։¹¹⁽¹⁾ Միևնույն ժամանակ, նշված խնդիրը պահանջում է առավել խորը վերլուծություն, որը տեղին չէ աշխատանքում։ Նշենք միայն «nota bene», որ իրավական սկզբունքների և նորմերի հիերարխիկ հարաբերակցության հայեցակարգը ստացել է ամրագրում նաև միջազգային իրավունքի մեջ։

Միջազգային իրավունքի տեսական հիմքերին նվիրված միջազգային իրավունքի 2006թ. ՄԱԿ-ի Հանձնաժողովի հեղինակային եզրակացության մեջ ընդգծվում է, որ չնայած միջազգային իրավունքի մեջ հիերարխիկ հիմքերի արտահայտվածության աստիճանների որակական տարբերություններին, միջազգային իրավունքում ներպետա-

կանի համեմատությամբ «միջազգային իրավունքի որոշ նորմեր միջազգային իրավական համակարգում զբաղեցնում են առավել բարձր դիրք կամ հատուկ կարգավիճակ: Երբեմն դա արտահայտվում է «մարդասիրության տարրական դատողությունները» կամ «միջազգային իրավունքի անբեկանելի սկզբունքները» արտահայտող որոշ նորմերի «հիմնարարականներ» նշմամբ»: ¹² Այսպիսով՝ միջազգային իրավունքի համար բնորոշ է հիերարխիան միջազգային իրավունքի ընդհանուր ընդունված սկզբունքների (jus cogens) և այլ նորմերի միջև. «Միջազգային իրավունքի նորմը կարող է ունենալ առաջնություն այլ նորմերի նկատմամբ իր բովանդակության կարևորության, ինչպես նաև դրա առաջնության ընդհանուր ուժով: Այդպիսին է միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերի դեպքում (jus cogens)¹³, այսինքն՝ նորմեր, որոնք ընդունվում և հաստատվում են պետությունների միջազգային հանրության կողմից որպես «jus cogens» նորմեր՝ շեղումները հնարավոր չեն»: ¹⁴

Ավանդաբար իրավունքի համակարգի շրջանակներում իրավագիտությունը դիտարկում է բոլոր ընդունվող իրավունքի աղբյուրները ոչ թե ուղղակի մեխանիկական համախումբ, այլ նաև որպես համակարգ¹⁵, որը բաժանվում է իրավունքի տարբեր տեսակներից բաղկացած մի շարք համակարգերի՝ նորմատիվ իրավական ակտերի ենթահամակարգ, նորմատիվ պայմանագրերի ենթահամակարգ, իրավական ավանդույթների ենթահամակարգ:

Որպես կանոն՝ հետազոտողները գրում են, որ հիերարխիկ հիմքը բնորոշ է նորմային իրավական համակարգին: Օրինակ, ըստ Վ. Մ. Սիրիխի, իրավունքի և դրա աղբյուրների (հետերարխիա հիերարխիայի փոխարեն) կառուցման հիմքերի հետմոդեռնիստական մոտեցման քննադատությունը մոդեռնի դիրքորոշումներից գրեթե անհնարին է մեկ պարզ պատճառով. դա չեն թույլատրում

փիլիսոփայական դրույթների և աշխարհընկալումների արմատական տարբերությունները, որոնք առաջարկվում են Մոդեռնի և Հետմոդեռնի նախագծերում: Չի հաջողվում երկու տարբեր աշխարհընկալումների ներկայացուցիչներին պայմանավորվել նաև տերմինների վերաբերյալ:

Գ. Ֆ. Շերշենևիչը, վերլուծելով օրենքի և ավանդույթների հարաբերակցությունները, կատարեց պատմական եզրակացություն. «Իրավունքի ձևերի հավասար ուժից նույն հաջողությամբ կարելի է ստանալ ինչպես այն, որ յուրաքանչյուր ձևը կարող է չեղյալականացնել իրեն հակասող այլ ձևի դրույթները, այնպես նաև այն, որ ձևերից որևէ մեկը ի գործու չէ չեղյալականացնել մյուսի կողմից ստեղծված դրույթները, որոնք հավասարազոր են վերջինիս՝ ըստ ուժի»: ¹⁶ Ն. Մ. Կորկունովը ուղղակի նշում է իրավունքի աղբյուրների համընդհանուր հիերարխիայի անհրաժեշտությունը: ¹⁷

Համանման ձևով դատում է նաև Մ. Մացայկովը: Բացահայտելով իրավունքում հիերարխիայի դերը և նշանակությունը՝ նա գրում է. «Իրավական ակտերի հիերարխիկ կապը հանդիսանում է վճռորոշ պահ համակարգի բնութագրման մեջ: Սահմանադրության, այլ օրենքների հետ հակասություններ ունեցող ցանկացած ակտի նորմատիվ հաստատումը ենթակա է չեղյալացման, այսինքն՝ չեն հանդիսանում տվյալ համակարգի տարրեր, այլ իրենցից ներկայացնում են իրավախախտման տարատեսակ»: ¹⁸ Ընդ որում, ինչն է բնորոշ, իրավունքի աղբյուրի հիերարխիայի մեջ վերինի և ստորինի հարաբերությունները կառուցվում են ըստ կազմակերպման տեսակի՝ ստատիկ և դինամիկ կապերի հիման վրա, առավել բարձր մակարդակի էշելոնները սահմանում են ստորինների բովանդակային և ֆորմալ բնութագրիչները:

Ծագում է հարց, հնարավո՞ր է արդյոք պնդել, որ հիերարխիկ կապերը բնորոշ են իրավունքի աղբյուրների ամբողջ համակարգին:

Մոդեռնի պարադիգմայում իրավական հիերարխիան հետազոտող հեղինակների մեծամասնությունը դրական են պատասխանում այս հարցին: Նրանց համար իրավունքի աղբյուրների խիստ աստիճանակարգությունը (հիերարխիկությունը) պատմականորեն պայմանավորված է, տեսականորեն հիմնավորված և քաղաքական արդարացված: Միևնույն ժամանակ, Հետմոդեռնի դիրքորոշումներից առաջարկվող հետազոտողների համար իրավունքի դիտարկմանը նման մոտեցումը ակնհայտ չէ՝ տեղեկատվական պայթյունի, գլոբալացման, արժեքների արժեզրկման և աշխարհի նկատմամբ արևմտյան տեսանկյունների հաղթանակած արշավի իրավիճակում ակնհայտ է իրավական հիերարխիայի հայեցակարգից ի օգուտ իրավունքի ցանցաձև կառուցվածքի (հետերարխիայի) հրաժարման կամ, որպես մինիմում, իրավունքի նկարագրության հիերարխիկ մոտեցման հիմնական դրույթների հերքելիության չափորոշիչն չհամապատասխանության հայտարարման գայթակղությունը: ¹⁹

Կարգի (հատկապես ժամանակակից) առկայությունը և գործառնությունը հնարավոր չէ առանց նշված ինստիտուտի կամ սկզբունքի: Հիերարխիայի միջոցով իրավունքի մեջ ձեռք է բերվում իրավական նորմերի (ակտերի) հսկայական թվի միասնություն և դրանց համաձայնեցված գործունեություն... Առանց իրավունքի մեջ հիերարխիայի հնարավոր չէ իրավական կարգի գործառնությունը, քանի որ դա կհանգեցնի գերակայող հասարակական ուժերի առաջադրված նպատակների իրականացման համար արժեքավոր նախադրյալների անբավարարության...²⁰

Պոզիտիվ իրավունքի ձևերի հիերարխիկ բնույթը, որն ամենից առաջ բնորոշ է նորմատիվ-իրավական ակտերի համակարգին (ենթահամակարգին) արտահայտվում է նրանում, որ տվյալ մասնավոր համակարգի կառուցվածքային տարրերը այս կամ այն ազգային իրավունքի շրջանակներում գոյություն ունե-

ցող, առանց բացառության բոլոր ձևերը ընդգրկող ընդհանուր համակարգում զբաղեցնում են իրենց խիստ սահմանված, իրենց իրավաբանական ուժով և սոցիալական արժեքավորությամբ պայմանավորված տեղը:

Իրավունքի տարբեր աղբյուրների միջև հիերարխիկ կապի առկայության վերաբերյալ գրում է Մ. Ն. Մարչենկոն: Միևնույն ժամանակ իր դատողություններում նա ընդգծում է իրավունքի տարբեր տեսակների միջև հիերարխիկ կապերի արտաքին արտահայտման եղանակների և բնույթի ոչ միանշանակության վերաբերյալ: «Եթե նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ իրավունքի ձևերի հիերարխիկության օրենսդրորեն ամրագրված սկզբունքը արտահայտվում է առավել լիարժեք և ուղղագիծ, ապա իրավունքի երկու աղբյուրների նկատմամբ... ձևերի (իրավունքի աղբյուրների) այնպիսի տեսակների հիերարխիկ բնույթը, օրինակ, իրավական ավանդույթը, իրավական պայմանագիրը և այլն, արտահայտվում են ոչ այդքան վառ և ակնհայտ»: ²¹

Իրավունքի աղբյուրների հիերարխիայի խնդրայնության հետազոտությունները ցանկացած պետությունում առաջացնում են ոչ միայն իրավաբան-տեսաբանների, այլ նաև պրակտիկ աշխատողների հետաքրքրությունը, քանի որ գիտնականների համար հիերարխիայի՝ որպես իրավունքի ներհամակարգային կազմակերպման կարգի ուսումնասիրությունը սերտորեն կապված է այլ՝ հիերարխիայի առավել աշխարհիկ և գործնական ասպեկտի «lex superior» կանոնների կատարման միջոցով իրավական համակարգում հակասությունների չեզոքացման խնդրայնության հետ: Այլ խոսքերով՝ իրավունքի աղբյուրների հիերարխիայի իրավաբանական-դոգմատիկ նշանակությունն ամենից առաջ այն է, որ հաստատվի տարբեր իրավաբանական ուժով օժտված օբյեկտների միջև հիերարխիկ կոնֆլիկտների լուծման կանոնների համակարգը:

ՉԲԱՇՆՈՒԹՅՈՒՆ

1. Толстик В. А. Иерархия источников российского права. Дис. ... д-ра юрид. наук. Нижний Новгород, 2002, с. 16–17
2. Осипов М. Ю. Системы о праве и правовые процессы. М., 2015, с. 13–14
3. Дорохин С. В. Деление права на публичное и частное: конституционно-правовой аспект. М., 2006.
4. Келина С. Г., Кудрявцев В. И. Принципы советского уголовного права. М.: Наука, 1988. С. 24–25.
5. Бертельс Ж. Л. Общая теория права. С. 175.
6. Черданцев А. Ф. Толкование права и договора: учеб. пособие. М.: Юнити, 2003. С. 33.
7. Дробышевский С. А. История политических и правовых учений: основные классические идеи. С. 434.
8. Тихомов Ю. А. Нормативное регулирование: взлет или кризис? // Журнал российская правда. 2006. №4. С. 56.
9. Кузнецова О. А. Специализированные нормы российского гражданского права: Теоретические проблемы: автореф. дис. ... д-ра юрид. наук. Екатеринбург. 2007. С. 7, 18, Филимонов В. Д. Принципы уголовного права. М.: Центр Юринформ. 2002. С. 51–55.
10. Кузнецова О. А. Специализированные нормы российского гражданского права. С. 17–18
11. Тиунов О. И. Об основании юридической силы международного договора// Государство, право, законность: Ученые записки №284. Вып. 4. Пермь, 1973. С. 182. 11(1) Дворкин Р. О. О правах в всерьез. М., 2004, с. 27–28
12. Организация Объединенных нации. Доклад Комиссии международного права: 58-я сессия (1 мая – 9 июня и 3 июля – 11 августа 2006). Нью-Йорк, 2006
13. Венская конвенция о праве международных договоров 23.05.1969г// Международное публичное право: сб док. Т.1.М.: Бек, 1996. С. 67–87
14. Венская конвенция о праве международных договоров 23.05.1969г// Международное публичное право: сб док. Т.1.М.: Бек, 1996. С. 67–87
15. Марченко М. Н. Источники право: учеб.пособил. М.: Проспект. 2015. С. 97–99
16. Шершеневич Г. Ф. Философия права. Т. 1. Часть теоретическая. Общая теория права. Вып 1. М. 1990. С. 121.
17. Коркунов Н. М. Лекции по общей теории права. СПб.: Юрид. центр Пресс. 2003. С. 370–372
18. Сырых В. М., Логические основания общей теории права. В. 2 т. Т. 1. Элементарный состав. М.: Юстинциформ. 2000. С. 59
19. Яковлев А. М. Социальная структура и право. М., 2015. С.33–34., Осипов М. Ю. Системы в праве и правовые процессы. М., 2015, с. 5–6.
20. Мицайков М. Иерархия права. С. 53–56.
21. Марченко М. Н. Источники права., 2-е изд. М., 2014. с. 30–31.

ИЕРАРХИЧЕСКИЕ РАЗНОРОДНЫЕ СВЯЗИ НОРМАТИВНЫХ РЕГУЛЯТОРОВ В СИСТЕМЕ ПРАВА

ГАРНИК САФАРЯН

НАН РА, Институт философии, социологии и права, доктор юридических наук, профессор

ДАВИД АКОПЯН

НАН РА, Институт философии, социологии и права, аспирант

В настоящей статье обстоятельно рассматриваются иерархические разнородные связи нормативных регуляторов. В статье подчеркивается, что система права, имея многоуровневую, иерархическую структуру, строится по принципу пирамиды, в основании которой нормативные регуляторы объединяются в отрасли, институты, нормы права, при этом каждая нижняя ступень системы права находится в субординационных отношениях с находящимися на высших ступенях, подчиняется им.

HIERARCHICAL HETEROGENEOUS RELATIONS OF NORMATIVE
REGULATORS IN LAW SYSTEM

GARNIK SAFARYAN

Doctor of Law, Professor

DAVID HAKOBYAN

National Academy of Sciences, Institute of Philosophy, Sociology and Law

The article in detail discusses the various hierarchical relations of normative regulators. It is emphasized that the law system, having a multi-level and hierarchic structure, is constructed on the principles of a pyramid, where the normative regulators are united in branches. Institutions and norms of law. Thus, the lower levels of the law system are subordinate to those being on higher levels.

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ԳԵՐՆ ՈՒ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Հոդվածում անդրադարձ է կատարվել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում պետությունների սահմանադրական սկզբունքների և նորմերի դերի ու նշանակության հիմնախնդիրներին, հատկապես, միջպետական ինտեգրման գործընթացների խորացման տեսանկյունից:

Հեղինակը, կատարելով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սահմանադրական նորմերի, այդ թվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (2015 թվականի փոփոխություններով) ամրագրված առանձին դրույթների համակարգային վերլուծություն և ընդհանրացնելով արդյունքները, կատարել է եզրահանգում, որ սահմանադրական իրավունքը արդյունավետորեն և համարժեքորեն պետք է կարգավորի Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջպետական փոխհարաբերությունների համակարգը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սահմանադրություն, Եվրասիական տնտեսական միություն, միջպետական ինտեգրում, վերպետական միջազգային կազմակերպություն:

Միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացում կարևոր նշանակություն ունեն սահմանադրական սկզբունքներն ու նորմերը, որոնք միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության շրջանակին նոր առաջնահերթություններ են հաղորդում:

Ակնհայտ է, որ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սահմանադրական իրավունքի

զարգացումն ուղղված է, մասնավորապես, միջպետական տնտեսական ինտեգրմանը: Այդպիսի գործընթացի տեսանկյունից ներկա ժամանակաշրջանում կարելի է նկատել հետխորհրդային տարածքում միջպետական միություններին պետությունների մասնակցության սահմանադրական ապահովման ինստիտուտի որոշակի խնդիրների առկայության մասին:

Անշուշտ, համապատասխան սահմանադրական նորմերի բացակայությունը կամ ոչ ամբողջական ամրագրման առկայությունը արդեն իսկ կարող են արգելակել առանձին պետությունների և միջպետական միավորման իրավական համակարգերի օրգանական փոխգործակցությանը:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սահմանադրական կարգավորումների բնույթը, մասնավորապես՝ ներպետական իրավական նորմերի նկատմամբ միջազգային իրավունքի նորմերի գերակայությունը հանգեցնում են նրան, որ միջազգային կազմակերպության շրջանակում պայմանագրային գործընթացն ենթադրվում է, որ պետք է զարգանա՝ թուլացնելով նույն սահմանադրական սկզբունքների դերակատարությունը¹: Օրինակ՝ և՛ Հայաստանի Հանրապետության, և՛ Ռուսաստանի Դաշնության, և՛ մյուս անդամ պետությունների Սահմա-

1 Sbu՝ С.Д. Примбетов. Европейский Союз и Евразийское экономическое сообщество – использование опыта и перспективы сотрудничества. Информационно-аналитический журнал «ANALYTIC». Алматы, №3/2003. էջ 8:

նադրությունները, եթե չեն նախատեսում դաշնային պետության ստեղծման հիմնադիր գործընթացներ, ապա նույնը չի կարելի ասել վերպետական միջազգային կազմակերպության անդամակցության իրագործման կառուցակարգերի մասին: Դրա համար էլ այդ խնդիրը լուծվում է միջազգային պայմանագրային հարաբերություններում¹:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սահմանադրական դրույթների առավել հատկանշական գծերից է այն, որ միջազգային կազմակերպություններում նրանց մասնակցության վերաբերյալ բոլոր երկրների սահմանադրություններում բովանդակում են համապատասխան նորմեր:

Բնավ, տվյալ հարցում զգացվել է 1990-ական թվականների հետխորհրդային շրջանի քաղաքական տրամադրությունների ազդեցությունը՝ պետությունների անկախության և ինքնիշխանության վերաբերյալ սահմանադրական ամրագրումների շեշտադրմամբ: Դիտարկենք Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության սահմանադրությունների համապատասխան նորմերը²:

1) Բելառուսի Հանրապետության Սահմանադրության (1996թ.) 8-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է, որ «Բելառուսի Հանրապետությունը միջազգային իրավունքի նորմերին համապատաս-

խան կամավորության հիման վրա կարող է անդամակցել միջպետական կազմավորումներին և դուրս գալ դրանցից»: Միաժամանակ, նույն Սահմանադրության 116-րդ հոդվածի 4-րդ մասով անուղղակիորեն հաստատում է, որ միջպետական այն կազմավորումների ակտերը, որոնց մասնակցում է Բելառուսի Հանրապետությունը, ճանաչվում են որպես նրա իրավական համակարգի մաս և ենթակա են քննության Սահմանադրական դատարանի կողմից:

2) Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության (1995թ.) առանցքային հարցադրումներից է պետությունների միջև բարիդրացիության սկզբունքի հաստատումը (հոդված 8), ըստ որի՝ «Ղազախստանի Հանրապետությունը հարգում է միջազգային իրավունքի սկզբունքները և նորմերը, վարում է պետությունների միջև համագործակցության և բարիդրացիական հարաբերությունների, նրանց հավասարության և ներքին գործերին չմիջամտելու, միջազգային վեճերի խաղաղ կարգավորման քաղաքականություն, միաժամանակ, հրաժարվելով առաջինը ռազմական ուժ կիրառելուց»:

3) Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (1993թ.) 79-րդ հոդվածի համաձայն՝ «Ռուսաստանի Դաշնությունը կարող է մասնակցել միջպետական միավորումներին և միջազգային պայմանագրերին համապատասխան նրանց փոխանցել իր լիազորությունների մի մասը, եթե դա չի առաջացնում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակում և չի հակասում Ռուսաստանի Դաշնության սահմանադրական կարգի հիմունքներին»:

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 13-րդ հոդվածը հռչակում է, որ «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պե-

1 Stn' Предложения по законодательному регулированию миграционной политики государств – членов ЕврАзЭС (одобрены постановлением Бюро Межпарламентской Ассамблеи ЕврАзЭС от 14.11.2013 № 5). Тематический сборник № 2(8.1) Межпарламентской Ассамблеи ЕврАзЭС. Спб., 2014:

2 Stn' Конституция Российской Федерации. Текст Конституции опубликован в "Российской газете" от 25 декабря 1993 г. N237., Конституция Республики Беларусь 1996 г., Конституция Республики Казахстан 1995 г., Конституция Республики Кыргызстан 1993 г. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2015 թվականի փոփոխություններով):

տությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»: Իսկ նույն Սահմանադրության 205-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով»: 5) Դրդգստանի Հանրապետության Սահմանադրությամբ (1993թ.) չի շոշափում միջպետական միավորումներում մասնակցության վերաբերյալ հարցը, սակայն, արտաքին քաղաքականության մասով նշվում, որ այն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու նպատակով:

Սահմանադրական հիշատակված նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Եվրասիական տնտեսական միության բոլոր պետություններում միջազգային կազմակերպություններին անդամակցության հիմնախնդիրն ունի համընդհանուր նշանակություն և այն բխում է բոլոր պետությունների հետ բարիդրացիական ու փոխշահավետ հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունից:

Եվ միայն Բելառուսի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություններում է ուղղակիորեն սահմանվում միջազգային կազմակերպություններին անդամակցությանն առնչվող առանձին հարցեր և դրանց լուծման մեխանիզմներ: Անշուշտ, այս առումով տեղին է նկատել պրոֆեսոր Օ.Գ.Ռոմյանցևի այն նկատառումը, ըստ որի, «սահմանադրական կարգի հիմունքները՝ որպես ընդհանուր սկզբունքների համակարգ, որոշում են ոչ միայն հասարակության հիմնական ենթահամակարգերում հարաբերությունների վրա իրավական

ներգործության բովանդակությունը, այլև միջպետական հեռանկարային ինտեգրացիայի նպատակով միջազգային կազմավորումներին պետությունների մասնակցությամբ օբյեկտիվորեն պայմանավորված գործընթացները»:

Անհրաժեշտ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության երկրների սահմանադրություններով այդպես էլ չի սահմանվում միջազգային կազմավորումներին ու միություններին անդամակցության հիմքերն ու երաշխիքները, որոնց առկայությունը, կարծում ենք, կվկայեր սահմանադրական մակարդակում միջազգային այդ միությունների նոր իրավական ձևի ու դրա ուժի բարձրացման ու դերակատարության երաշխավորման մասին:

Անշուշտ, Սահմանադրությունը կարող է չպարունակել կոնկրետ Եվրասիական տնտեսական միությունում պետությունների անմիջական մասնակցության որոշակի մեխանիզմներ, սակայն, չպետք է բացառել, որ ինտեգրման զարգացման արդյունքում պետությունների նման իրավական ձևի համագործակցությունը կարող է վերածվել համադաշնային պետության ստեղծմանը, ինչպես օրինակ, դա իրականացվեց Եվրոպական Միության երկրների փորձով:

Այս հիմնավորմամբ պայմանավորված՝ կարծում ենք՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սահմանադրական զարգացումների համատեքստում տեղին կլինի «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝ «Պետությունը միջազգային իրավունքի հիման վրա այլ պետությունների հետ կարող է մասնակցել միջազգային միություններին և դրանց մարմինների ստեղծմանը՝ միջազգային պայմանագրերին համապատասխան փոխանցելով իր

1 Stu' Румянцев О. Г. Основы конституционного строя России (понятие, содержание, вопросы становления). М., 2010, էջ 54:

լիազորությունների մասը, եթե դա համապատասխանում է իր ազգային շահերին»¹:

Հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական միությունն, ըստ էության, ստեղծում է միջպետական համագործակցության իրավական շրջանակներ, այդ թվում միջազգային պայմանագրի կնքումից, այնուհետև, միության համապատասխան իրավասությամբ օժտված մարմինների կողմից պարտադիր կատարման ենթակա որոշումներ ընդունելուց մինչև այդ միության մասնակից երկրների միջև տնտեսական ինտեգրացման գործընթացների հաստատումը, սակայն, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես է, միության այլ մասնակից պետությունների Սահմանադրությունները որևէ վերապահում չեն կատարում կամ մատնանշում կոնկրետ միությանը տվյալ պետության մասնակցության վերաբերյալ:

Իհարկե, անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ ԽՍՀՄ փլուզման արդյունքում առաջացած նոր անկախ պետությունների ձևավորման ու կայացման շրջանում նկատվել են իրար հակասող ու իրարամերժ միտումներ: Մի կողմից՝ նոր անկախ պետությունները ձգտում էին, ինչպես հնարավոր է, արագ ամրացնել անկախացած երկրի պետական ու ազգային ինքնիշխանությունը, մյուս կողմից՝ նրանք ձգտում էին պահպանել երբեմնի միասնական պետության շրջանակներում ձևավորված տնտեսական կապերը:

Հայտնվելով «ազատ ինքնիշխանության» պայմաններում՝ Եվրասիական տնտեսական համագործակցության երկրների համար այդպես էլ որոշիչ էր դառնում միջազգային և սահմանադրական իրավունքի նորմերի հարաբերակցության հիմնախնդիրը: Այս տեսանկյունից, չի կարելի չհամաձայնվել պրոֆեսոր Վիշնյակովի կարծիքին, որը միջազգային և սահմանադրական իրա-

վունքի նորմերի հարաբերակցության հարցի լուծված չլինելը՝ կապված միջազգային կամ սահմանադրական իրավունքին առաջնահերթ վերապահում տալու հետ, հանգեցնում է նրան, որ Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգն իր հերթին բովանդակում էր հիմնականում հակասական ու տարերային բնույթի տարրեր²:

Այս առումով հատկանշական է նաև այն, որ Եվրասիական տնտեսական միության կազմակերպման ու գործունեության իրավական համակարգում կարևորվեցին «Մաքսային միության մասին» և «Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականներին ընդունված պայմանագրերը, որոնք առաջադրեցին օրենսդրության մերձեցման և ունիֆիկացման խնդիրներ: Մասնավորապես՝ դրանք վերաբերում են՝ ա) օրենսդրական և այլ իրավական ակտերի նախապատրաստման գծով գործունեության համակարգմանը, այդ թվում՝ ազգային օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով, բ) նմուշային (մոդելային) ակտերի ընդունմանը, գ) օրենսդրության մերձեցման ու ունիֆիկացման համար այլ միջոցառումների ձեռնարկմանը:

Անհրաժեշտ է նկատել, որ պետությունների օրենսդրության մերձեցմանն ուղղված ներպետական գործընթացները ոչ բոլոր դեպքերում են արդյունավետ լինում՝ հաշվի առնելով մասնակից պետությունների արտաքին քաղաքականության իրականացման բնագավառում տարբեր մոտեցումների առկայությունը:

Ընդ որում, այս առումով անհրաժեշտ է կարևորել Եվրասիական տնտեսական միության երկրներում միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի կատարման միասնական համակարգի ներմուծման սկզբունքի նշանակությունը, ինչն ենթադրում է՝ վավերացված

1 Այս լրացումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կարելի է նախատեսել 13-րդ հոդվածում նոր 2-րդ մաս շարադրելու միջոցով:

2 Տե՛ս՝ Вишняков В. Г. Правои межгосударственные объединения. СПб., 2003, էջ 78:

միջազգային պայմանագրերի ներառում ազգային իրավական համակարգեր, գործող ազգային օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի համապատասխանեցում միջազգային պայմանագրերի դրույթներին, ազգային օրենսդրության համակարգից միջազգային իրավունքի նորմերին հակասող ակտերի «չեղարկում», ազգային օրենսդրության իրավական բացերի «լրացում» կնքված միջազգային պայմանագրերի կատարման գծով նոր ակտերի ընդունում և այլն:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ միջազգային իրավական ընթացակարգերի արդյունքում էապես դանդաղեց սահմանադրական իրավունքի համապատասխան ինստիտուտների զարգացումը ինչպես Եվրասիական տնտեսական միության շրջանակում, այնպես էլ նրա առանձին մասնակից պետություններում:

Պրակտիկան ցույց է տալիս, որ այդ ինստիտուտների թերագնահատումը բացասական ներգործություն է ունենում միջազգային իրավունքի նորմերի կատարման վրա¹:

Անգամ այդ միության շրջանակներում առկա են ստորագրված տասնյակ պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնց, սակայն, մեծ մասը այդպես էլ ուժի մեջ չեն մտել: Դա անսպասելի չէր, քանի որ առանձին երկրների ազգային օրենսդրության ներդաշնակեցման իրավական ընթացակարգերի օգտագործումը այդպես էլ չի համապատասխանեցվել Եվրասիական տնտեսական միության նպատակին. այն է՝ Միության անդամ պետությունների տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործմամբ նպաս-

տել ժողովուրդների կենսամակարդակի բարձրացման համար:

Բնականաբար, Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի կայացման ու զարգացման գործում ինքնուրույն ու էական դերակատարությունը պետք է վերապահել սահմանադրական իրավունքին, որը կոչված է կարգավորելու այն հարաբերությունները, որոնք դրսևորվում են մասնակից պետությունների համատեղ ու կամաարտահայտման արդյունքում և չեն կարող կրել բացառապես միջպետական կամ վերազգային բնույթ:

Միաժամանակ, Միության շրջանակում մասնակից երկրների որպես ինքնիշխան պետություններ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի զարգացման հիմքում պետք է դրված լինեն սահմանադրական որոշակի սկզբունքներ ու նորմեր, որոնք կարող են լրացվել միջազգային իրավունքի նորմերով²:

Այսպիսով՝ սահմանադրական իրավունքը առավել արդյունավետորեն, իսկ գլխավորը, ավելի համարժեքորեն պետք է կարգավորի Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջպետական փոխհարաբերությունների համակարգը, սակայն այստեղ առաձևակի նշանակություն կարող են ունենալ այդ հարաբերությունների գիտական հետազոտություններն ու վերլուծությունները, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի ներքին միասնականության ապահովման ուղղված պետությունների ձգտումները:

1 Միջազգային կազմակերպության իրավական ակտերի վերաբերյալ համեմատական իրավական վերլուծություն կատարվել է Բելառուսի Հանրապետության Նախագահին առընթեր Ազգային կենտրոնի կողմից, որի արդյունքները քննարկվել են Եվրասիական տնտեսական միության 2011 թվականի նոյեմբերի 17-ին Իրավական հարցերով մշտական հանձնաժողովի կողմից: Стн' Постановление Постоянной комиссии по правовым вопросам МПА ЕврАзЭС № 9 от 17.11.2012г.:

2 Այս առումով, տեղին է նկատել ՀՀ Սահմանադրության 205-րդ հոդվածի սահմանադրական կարգավորման կարևորությունը, ըստ որի՝ վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցի լուծումն իրականացվում է բացառապես հանրաքվեի միջոցով:

ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրությունը՝ 2015 թվականի փոփոխություններով, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, Հատուկ թողարկում, հոդվ. 1118, 21 դեկտեմբերի 2015 թ.:
2. Конституция Российской Федерации Текст Конституции опубликован в “Российской газете” от 25 декабря 1993 г. N 237.,
3. Конституция Республики Беларусь 1996 г.,
4. Конституция Республики Казахстан 1995 г.,
5. Конституция Республики Кыргызстан 1993 г.
6. Тематический сборник № 2(8.1) Межпарламентской Ассамблеи ЕврАзЭС. Спб., 2014:
7. Информационно–аналитический журнал «ANALYTIC». Алматы, №3/2003:

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ КОНСТИТУЦИОННЫХ ПРИНЦИПОВ И НОРМ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА В РАМКАХ МЕЖГОСУДАРСТВЕННЫХ ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ

АБРААМ АБРААМЯН

Европейская региональная образовательная академия, кафедра юриспруденции, аспирант

В статье автор обратился к исследованию основных проблем конституционных норм и принципов, роли и значения межгосударственных интеграционных процессов в рамках Евразийского экономического союза.

Отмечая важность основных проблем интеграционных процессов государств – членов Евразийского экономического союза, а также результаты системного анализа конституционных норм, автор пришел к выводу, что конституционное право этих государств эффективно и адекватно регулирует межгосударственные взаимоотношения в рамках Евразийского экономического союза.

ROLE AND IMPORTANCE OF CONSTITUTIONAL PRINCIPLES AND NORMS OF EURASIAN ECONOMIC UNION WITHIN THE FRAMEWORK OF INTERSTATE INTEGRATION PROCESSES

АБРАХАМ АБРАХАМЯН

European Regional Educational Academey Department of Law, Postgraduate

In the article the author touches upon to the study of the basic problems of the constitutional norms and principles, the role and importance of interstate integration processes within the Eurasian Economic Union.

Stressing the importance of the main problems of integration processes of states – members of the Eurasian Economic Union, as well as results of the system analysis of the constitutional norms, the author came to the conclusion that the constitutional law of these countries is to effectively and adequately regulate the interstate relations in the framework of the Eurasian Economic Union.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՉԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Հողվածում անդրադարձ է կատարվել ինքնիշխանության սահմանադրական ամրագրման ու կարգավորման հիմնախնդիրների հետազոտությանը Հայաստանի Հանրապետության սահմանադրական նոր կարգավորումների տեսանկյունից:

Հեղինակն ընդհանրացնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (2015 թվականի փոփոխություններով) ամրագրված առանձին դրույթների համակարգային վերլուծության արդյունքները, բացահայտել է ինքնիշխանության սահմանադրական կարգավորման ժամանակակից միտումներն ու հիմնախնդիրները, և համապատասխան հիմնավորումներով պայմանավորված՝ ներկայացրել է առաջարկություններ սահմանադրական բարեփոխումների շրջանակում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սահմանադրություն, պետության ինքնիշխանություն, ինքնիշխանության սահմանադրական կարգավորում, սահմանադրական գործընթաց:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության հռչակումը յուրահատուկ որակ հաղորդեց իրավական պետության և պետության ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդիրների լուծման տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ ինքնիշխանությունը՝ որպես սահմանադրական կարգի սկզբունք, հռչակվել էր դեռևս Խորհրդային Հայաստանի օրենսդրությամբ, այնուամենայնիվ, 1995 թվականի ՀՀ Սահմանադրությամբ՝ այն իր կիրառումը ստացավ իրավական նոր

իրողությունների և սահմանադրական ժամանակակից արժեքային համակարգում:

Հիշյալ հանգամանքը պայմանավորեց ինքնիշխանության վերաբերյալ գիտական հետազոտություններում նոր մեթոդաբանական մոտեցումների դրսևորմանը: Օքսֆորդի համալսարանի պրոֆեսորներ Մ.Ջանիսի և Ռ.Քեյի կարծիքով՝ միջազգային իրավունքի արդյունավետ համակարգի առաջացումը պայմանավորված է առավել զգայուն այնպիսի ոլորտների կարգավորման անհրաժեշտությամբ, որոնք նախկինում գտնվում էին բացառապես պետության ինքնիշխանության տիրույթում¹:

Իսկ պետության ինքնիշխանության և միջազգային իրավունքի հարաբերակցության ժամանակակից իրավաբանական վերլուծումների վերաբերյալ ավելի արմատական կարծիք է արտահայտել ամերիկացի պետական գործիչ Հ.Քիսինջերը, ըստ որի՝ պետության ինքնիշխանության և պետությունների ներքին գործերին չմիջամտելու միջազգային իրավունքի ավանդական սկզբունքները արդի ժամանակաշրջանում վերածվել են համաշխարհային խաղաղության ու արդարության ստեղծման գլխավոր խոչընդոտների²:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական ժամանակակից գործընթացներում հատկանշականն այն է, որ և՛ 2005 թվականի, և՛ 2015 թվականի սահմանադրական գործընթացներով

1 Տե՛ս Janis M.W., Kay R.S., European Human Rights Law: Connecticut, Oxford University Press, 1990, էջ VII:

2 Տե՛ս Kissinger H. Does America Need a Foreign Policy? Forward Diplomacy for the 21 Century. N.Y. 2001, էջ 234:

Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրության Նախաբանում և 1-ին հոդվածով ինքնիշխանության վերաբերյալ սահմանադրական նորմերը փոփոխությունների չենթարկվեցին, այնուամենայնիվ, երկու տասնամյակների ընթացքում հայրենական սահմանադրական իրավունքի գարգացման առումով նոր բովանդակային իմաստ է հաղորդվել ինքնիշխանության կատեգորիայի սահմանադրա-իրավական ժամանակակից ընկալումների հատկապես՝ համակարգային առումով ինքնիշխանության հետ փոխկապված սահմանադրական այլ հոդվածների շրջանակում:

Թերևս, դա պահանջարկված իրողություն է դառնում ոչ միայն ելնելով իրավունքի գերակայության սկզբունքի իրացման սահմանադրական կառուցակարգերի կատարելագործման ու իշխանությունների հավասարակշռության լիարժեք ապահովման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ, այլև համաշխարհային գործընթացների խորացման պայմաններում Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային նոր պարտավորությունների ստանձնումով պայմանավորված հիմնարար խնդիրների լուծմամբ, ինչպես նաև ինտենսիվ ինտեգրացմանն ու պետությունների փոխգործակցությանը նպաստելու առումով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Նախաբանի, 1-ին և 2-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ պետության ինքնիշխանության կրողը (սուբյեկտը) Հայաստանի Հանրապետությունն է, իսկ ժողովրդի՝ որպես իշխանության միակ կրող ու աղբյուր լինելը վկայում է ժողովրդական ինքնիշխանության՝ որպես հայ ժողովրդի ինքնակազմակերպման եղանակի առկայության մասին:

Միաժամանակ, Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանա-

փակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունքի, ինչը ենթադրում է ինքնիշխանության բացարձակ սահմանափակության առկայություն, քանի որ իրավունքի գերակայության սկզբունքի իրացումը կարող է իրականացվել ինչպես անմիջականորեն, այնպես էլ վերպետական կամ միջազգային իրավական պաշտպանվածության ներքո:

Բացի այդ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 205-րդ հոդվածը սահմանում է, որ վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը վերաբերող հարցը լուծվում է հանրաքվեի միջոցով¹, իսկ 204-րդ հոդված 3-րդ կետի համաձայն՝ միջազգային պայմանագրերին վերաբերող օրենքների նախագծերը չեն կարող դրվել հանրաքվեի:

Հիշատակված այդ նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության կամ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը վերաբերող հարցերի լուծումը դուրս է գալիս պետական ինքնիշխանության իրացման շրջանակից և դիտարկվում որպես ժողովրդական ինքնիշխանության իրացման առարկա:

Այն դեպքում, երբ անհրաժեշտ է նույն հարցերի կապակցությամբ քաղաքացիական նախաձեռնության կարգով

1 Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) «Եզրափակիչ և անցումային դրույթներ» գլխում այդպես էլ չեն սահմանվում այդ դրույթի իրացման կառուցակարգերը՝ մինչև 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ենթացակարգով Հայաստանի Հանրապետության կողմից վերպետական միջազգային կազմակերպություններին արդեն իսկ անդամակցած հարցերը:

ներկայացված օրենքների նախագծերի վերաբերյալ հարցերը հանրաքվեի միջոցով լուծել, ապա այդ հարցերն արդեն ժողովրդական ինքնիշխանության իրացման շրջանակից դուրս են գալիս և անցնում պետական ինքնիշխանության իրացման տիրույթ¹:

Չնայած այն հանգամանքին, որ պետական ինքնիշխանության և ժողովրդական ինքնիշխանության հարաբերակցության մեջ նման ոչ տրամաբանական կապի կամ ներքին հակասության վերաբերյալ այդ հիմնախնդրի առկայությունը և, տվյալ պարագայում, վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցությանը վերաբերող հարցի լուծման օբյեկտիվ անհրաժեշտությունը առաջադրում են այդ հարաբերություններից բխող խնդիրների փոխհամաձայնեցված լուծումներ, ինչը և՛ միջազգային, և՛ սահմանադրա-իրավական հարաբերություններում անհրաժեշտ է դիտարկել որպես պետությունների վերպետական գործակցության նոր ձև, որտեղ յուրաքանչյուր ինքնիշխան երկիր ինքնակամ մասնակցելով վերպետական կազմակերպություններին, իրենց

մասնակցության կամքի արտահայտման միջոցով ապահովում է իր իսկ ինքնիշխանության և ազգային շահերի պաշտպանության երաշխավորումը:

Դա, ինչպես արդեն նշվել է, համահունչ է նաև ՀՀ Սահմանադրության նախաբանով հռչակված ինքնիշխան պետության վերականգնման, հայրենիքի հզորացման ու բարգավաճման, սերունդների ազատության, ընդհանուր բարեկեցության, քաղաքացիական համերաշխության վերաբերյալ համամարդկային արժեքներին՝ ելնելով Հայաստանի Հանրապետության հավատարմության վերաբերյալ դրույթների բովանդակությունից, ինչով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության ու այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում:

Հայաստանի Հանրապետությունում ընթացող ժողովրդավարացման գործընթացները, այդ թվում, ՀՀ Սահմանադրության առանձին հոդվածներով նախատեսվող հանրային իշխանության համակարգային ամբողջականության մեջ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքի առավել հետևողական իրացման նորամուծությունները, էական են ինքնիշխանության վերաբերյալ պատկերացումները զարգացնելու առումով:

Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության գինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը:

Հիշատակված դրույթի տրամաբանությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը

1 Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներին նվիրված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքներով «Հանրային քաղաքականության վերլուծության և երկխոսության Ապելլա ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը արձանագրել է առնվազն երեք տեսակետ՝ ա) սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում ամրագրված է հիմնավորված եզրահանգում, ըստ որի՝ ինքնիշխանության սահմանափակմանը հանգեցնող միջազգային պայմանագրերը պետք է դրվեն հանրաքվեի, բ) հանրաքվեի ինստիտուտի այդչափ ընդլայնման իշխանություններին քաղաքական և իրավական պատասխանատվությունից խուսափելու հնարավորություն կընձեռի կարևորագույն որոշումներ կայացնելիս և գ) գործող Սահմանադրության ինքնիշխանությունն ամրագրող հոդվածներն ինքնիշխանության որևէ սահմանափակում չեն ենթադրում և փոփոխման ենթակա չեն: Մանրամասն տես Սահմանադրական բարեփոխումներ. ինչ են կարծում փորձագետները // Հանրային քաղաքականության վերլուծության և երկխոսության Ապելլա ինստիտուտի գեկույցը, Երևան, 2014, էջ 17-18:

տարածվում է ամբողջ տարածքի վրա: Դա նշանակում է, որ պետական տարածքը հանդիսանում է պետական իշխանության գործողության տարածք, որտեղ պետական իշխանության տարածքային գերակայությունը արտահայտվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետության սահմաններում գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ որևէ իշխանություն, բացառապես Հայաստանի Հանրապետության:

Մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունից բխում է իր՝ Հայաստանի Հանրապետության գերակայությունը, որը տարածվում է նաև պետական տարածքի սահմաններից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ: Սահմանադրության 47-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել Սահմանադրության 55-րդ հոդված 2-րդ մասի պահանջը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Հիշատակված նորմերի բովանդակությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն օժտված են Սահմանադրությամբ վերապահված բոլոր իրավունքներով, կրում են սահմանադրական պարտականություններ և օգտվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունից՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Ակնհայտ է նաև այն, որ ՀՀ Սահմանադրության 1, 4, 13, 14, 19, 53, 54, 61, 81

և 116-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ ինքնիշխանությունը՝ որպես պետության անքակտելի հատկանիշ, բնութագրում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավիճակը: Այն ենթադրում է, որ պետական իշխանությունն ունի գերակայություն ու անկախություն երկրի ներսում և միջազգային հարաբերություններում և այն տարածվում է երկրի ամբողջ տարածքի վրա՝ բացառելով երկիշխանությունը, և իրականացնում օրենսդիր, գործադիր և դատական լիարժեք իշխանություն: Այսինքն՝ նշված հոդվածների բովանդակային իմաստը հաստատում է պետության բացարձակ ինքնիշխանության մասին:

Միաժամանակ, Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, ինչն ենթադրում է, որ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների մասով այլևս իրողություն է դարձել միջազգային իրավունքի պրիմատը (գերակայություն), հատկապես՝ միջազգային արդարադատության և կոնվենցիոն վերահսկիչ մարմինների որոշումների պարտադիրության պարագայում:

Ի տարբերություն հիշատակված նորմի բովանդակային նշանակության՝ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը. դրույթի բովանդակությունից կարելի է բխեցնել ոչ այնքան

միջազգային իրավունքի գերակայության մասին, որքան պետության ինքնիշխանության արդեն բացարձակ անսահմանափակության կամ, այսպես կոչված, «ինքնիշխանության էքսպանսիայի (գավթողականության)» մասին, ինչը ևս անթույլատրելի է:

Ակնհայտ է, որ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածների համատեքստում պետության ինքնիշխանությունը միջազգային հարաբերություններում կարող է նաև ենթարկվել որոշակի սահմանափակումների հետևյալ դեպքերում.

ա) երբ Հայաստանի Հանրապետությունը կամավոր ստանձնում է միջազգային պարտավորություններ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով (բխում Սահմանադրության 13-րդ հոդվածի բովանդակությունից),

բ) երբ Հայաստանի Հանրապետությունը կամավոր մասնակցում է (վավերացնում, հաստատում, ստորագրում) երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրերին (բխում է Սահմանադրության 5, 19, 116, 132-րդ և այլ հոդվածների բովանդակությունից),

գ) երբ Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է միջազգային կազմակերպություններին՝ ստանձնելով որոշակի պարտավորություններ (բխում է Սահմանադրության 13, 205-րդ և այլ հոդվածների բովանդակությունից),

դ) երբ միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված որոշումները ենթակա են պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետության կողմից (բխում է Սահմանադրության 5, 13, 19, 81, 116-րդ և այլ հոդվածների բովանդակությունից),

ե) երբ Հայաստանի Հանրապետությունը ընդունում է միջազգային իրավունքի գերակայությունը ազգային օրենսդրության նկատմամբ (բխում է Սահմանադրության 13-րդ հոդվածի բո-

վանդակությունից):

Իհարկե, հիշատակված վերլուծությունների շրջանակում անհամատեղելի են պետության բացարձակ ինքնիշխանությունը կամ այդ ինքնիշխանության բացարձականացումը միջազգային իրավունքի գերակայության հետ:

Պետության ինքնիշխանության և դրա հետ փոխկապակցված Սահմանադրության այլ դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական ժամանակակից կարգավորումների շրջանակում անհրաժեշտ է վերաիմաստավորել պետության ինքնիշխանությունը, հատկապես՝ միջազգային իրավունքի նորմերի հետ հարաբերակցության տեսանկյունից:

Այդ հիմնավորմամբ պայմանավորված՝ սահմանադրական հետագա բարեփոխումների շրջանակում անհրաժեշտ է կատարել համարժեք փոփոխություններ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 19-րդ և 81-րդ հոդվածի 1-ին մասերում, ինչպես նաև հստակեցնել 204-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածով ամրագրված դրույթները՝ բացառելով դրանց միջև առկա ներքին հակասությունները:

Ընդհանրացնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) ամրագրված առանձին դրույթների համակարգային վերլուծության արդյունքները, կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումը.

1) բացահայտելով ինքնիշխանության սահմանադրական կարգավորման արդի միտումներն ու հիմնախնդիրները՝ ներկայացված են կոնկրետ առաջարկություններ, որոնք միտված են Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական ժամանակակից կարգավորումների շրջանակում ինքնիշխանության հասկացության սահմանադրա-իրավական ժամանակակից ընկալումներին նոր

բովանդակային իմաստ հաղորդելուն, ինչպես նաև պետության ինքնիշխանության և, հատկապես, միջազգային իրավունքի նորմերի հետ հարաբերակցության տեսանկյունից՝ դրանց հարմարեցման (ադապտացման) ու նոր իրողությունների վերահիմնաստվորմանը՝ այն առումով, որ չի կարելի միջազգային իրավունքը մշտապես դիտարկել որպես պրիմատ (գերակա) կամ պետական ինքնիշխանությունը՝ բացարձակ անսահմանափակ,

2) հիշատակված հիմնավորումներով պայմանավորված, առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 19-րդ հոդվածի և 81-րդ հոդվածի 1-ին մասերն ուժը կորցրած ճանաչել,

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 204-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածով ամրագրված դրույթները հստակեցնելու ու դրանցում առկա ներքին հակասությունները բացառելու նպատակով անհրաժեշտ է՝ կա՛մ ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 205-րդ հոդվածը, կա՛մ Սահմանադրությունը լրացնել նոր 221-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 221. Մինչև Սահմանադրության 205-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը վերապետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության միջազգային պայմանագրերի գործողությունը շարունակում են մնալ ուժի մեջ մինչև այդ պայմանագրերի գործողության ժամկետի ավարտը»:

ՊԲՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրությունը՝ 2015 թվականի փոփոխություններով, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, Հատուկ թողարկում, հոդվ. 1118, 21 դեկտեմբերի 2015 թ.:
2. Սահմանադրական բարեփոխումներ. ինչ են կարծում փորձագետները // Հանրային քաղաքականության վերլուծության և երկխոսության Ապելլա ինստիտուտի զեկույցը, Երևան, 2014:
3. Janis M.W., Kay R.S., European Human Rights Law: Connecticut, Oxford University Press. 1990, էջ VII,
4. Kissinger H. Does America Need a Foreign Policy? Forward Diplomacy for the 21 Century. N.Y. 2001, էջ 234:

ПРОБЛЕМА СУВЕРЕНИТЕТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В СОВРЕМЕННОМ КОНСТИТУЦИОННОМ ПРОЦЕССЕ

ԱՐԱՄ ԽԱՇԱՏՐՅԱՆ

Кандидат юридических наук

В статье затронуты проблемы исследования суверенитета конституционного закрепления и урегулирования в контексте конституционных реформ Республики Армения.

Обобщая результаты системного анализа закрепленных в Конституции Республики Армения, определены современные тенденции и проблемы суверенитета конституционного регулирования, представлены соответствующие предложения в рамках конституционных реформ.

THE PROBLEM OF SOVEREIGNTY IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE
MODERN CONSTITUTIONAL PROCESS

ARAM KHACHATRYAN

Candidate of law

The article touches upon the study problem of the sovereignty of constitutional securing and settlement in the context of constitutional reforms, in the Republic of Armenia. Summarizing the results of the system analysis set forth in the Constitution of the Republic of Armenia, the author identified current trends and problems of constitutional regulation sovereignty, provided relevant proposals within the framework of constitutional reforms.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ (ՀԻԵՐԱՐԽԻԱՅԻ) ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածում վերլուծվում են իրավունքի համակարգում աստիճանակարգության (հիերարխիայի) իմաստավորման առանձնահատկությունները, քանի որ աստիճանակարգության գաղափարը էական դերակատարում ունի իրավակարգավորումների ոլորտում:

Այս իմաստով՝ իրավական նորմերի աստիճանակարգությունը հաստատում է սոցիալական (հասարակական) հարաբերությունների և սոցիալական նորմերի (այդ թվում իրավական նորմերի) հիերարխիկ բնույթը, որտեղ մարդկանց վարքագիծը համապատասխանում է (պետք է համապատասխանի) այդ նորմերի հիերարխիկ կառուցվածքի պահանջներին:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սոցիալական նորմեր, իրավական նորմեր, հիերարխիա, մարդկանց վարքագիծ, իրավակարգավորում, հիերարխիկ կառուցվածք:

Իրավունքի համակարգում աստիճանակարգության գաղափարը պատմականորեն էական դեր է խաղում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումներում: Սոցիալական գոյի հիերարխիայի գաղափարը տարածվում է նաև իրավունքի վրա: Իրավական նորմերի աստիճանակարգությունը հաստատում է սոցիալական հարաբերությունների հիերարխիայի, որտեղ էլ մարդիկ համատեղում են իրենց վարքագիծը միմյանց հետ և գործում որպես մեկ ամբողջություն¹:

Բացի իրավունքի մեջ աշխարհի կառուցման հիերարխիկության հիմնարար

արտացոլումից, իրավունքի և իրավական համակարգի վրա «հիերարխիա» հասկացության տարածումից, մեր կարծիքով, ամենը մեծամասամբ պայմանավորված է տվյալ հասկացության կրոնական իմաստի բաղադրիչով, որը լիարժեք շոշափելի է ցանկացած սոցիալական հիերարխիայում, «արտահայտվում է հասարակական կարգի կազմակերպության ձևով, հենվում է ներգիայի՝ այդ աղբյուրներն արդարացնող դատողությունների կոլեկտիվ համակարգի վրա»²: Հիերարխիկ կառուցված իրավունքի կերպարի ստեղծումը կարելի է դիտարկել որպես առկա իրավակարգի ռացիոնալ սրբացման, մարդկանց և նրանց հանրությունների աչքերում դրան արդարացվածության հաղորդման եղանակներից մեկը: «Հիերարխիան նաև այսօր ընդունվում է որպես ճիշտ դիտարկվող լուծումների հաստատման մեթոդ»³ – նշում են հետազոտողները:

Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ տարբեր դարաշրջաններում փիլիսոփաները և իրավաբանները իրավունքի մոդելավորման ժամանակ էական ուշադրություն էին հատկացնում հիերարխիկ սկզբին (Լատ Ցգի կառավարիչի հատկությունների հիերարխիա⁴, Պլատոնի օրենսդրական նպատակների

2 Hierarchy in Natural and Social Sciences. P. 223–224.t

3 Նույն տեղում, էջ 224:

4 Ըստ չինական մտածողների կարծիքի՝ «լավագույն կառավարիչը նա է, ում վերաբերյալ ժողովուրդը գիտի միայն այն, որ վերջինս գոյություն ունի: Փոքր-ինչ վատն են այն կառավարիչները, ում ժողովուրդը սիրում և մեծարում է: Առավել վատն են այն կառավարիչները, որոնցից ժողովուրդը վախենում է: Եվ ամենից վատն են այն կառավարիչները, ում ժողովուրդը ատում է: »

(Տես՝ Добрышевский С.А. История политических и правовых учений: основные классические идеи: учеб. пособие. М.: Норма, 2007. Ը. 30).

1 Stu՝ Осипов М.Ю. Системы в праве и правовые процессы, М., 2015, с. 4–5

առջև կանգնածների հիերարխիա¹, Գրոցիոսի մարդկային և բնական, աստվածային իրավունքի և այլ միջնադարյան սխոլաստների հիերարխիա² և այլն):

Չնայած նրան, որ պետաիրավական հանրություն հիերարխիկ հիմքերի արտահայտումների բազմանիստությունը նշվում էր հնագույն ժամանակներից և տարբեր ասպեկտներով, սկսած Լուսավորության դարաշրջանից, արևմտյան

1 Ինչպես կարծում էր Պլատոնը, գոյություն ունեն «... երկու տեսակի բարիքներ, մեկը՝ մարդկային, մյուսները՝ աստվածային: Փոքր բարիքները նրանք են, որոնց գլխավորում են առողջությունը, հետո գեղեցկությունը, երրորդ տեղում՝ վազքում և մարմնական այլ ներուժը, չորրորդում՝ հարստությունը, սակայն ոչ կոյր, այլ աշալուրջ, գիտակվածության ուղեկիցները: Աստվածային բարիքներից առաջինը և գլխավոր գիտակցությունն է: Երկրորդը՝ գիտակցությանը համապատասխանող հոգու առողջ վիճակը: Արիության հետ դրանց միացումից ծագում է երրորդ բարիքը՝ արդարությունը: Չորրորդ բարիքը՝ արիությունը...»: Այս հիերարխիան իր արտացոլումը պետք է ստանանա իրավունքի մեջ, այդ իսկ պատճառով փիլիսոփան կոչ էր անում օրենսդիրներին. «Հաստատե՛ք... օրենքներ, որոնք ... ուղղորդում են մեր մտքերը ոչ դեպի հարստություն... իսկ քանի որ գոյություն ունեն երեք առարկաներ՝ հոգի, մարմին և դրամներ, ապա մեր օրենքներում ամենից բարձր պետք է տեղակայեք համապատասխանաբար հոգին, երկրորդ տեղում՝ մարմնի կատարելությունը..., իսկ երրորդում և վերջինում՝ հարստությանը ենթակայումը, քանի որ այն ըստ էության և մարմին, և հոգի է» (Տես՝ Добрышевский С.А. Եզվ. Աշխ. էջ 39): Այլ համարժեք օրինակ՝ Ի. Բենտոնը, սահմանելով օրենսդրի նպատակը՝ որպես «հասարակության անդամների առավելագույն երջանկություն», կառուցում էր ըստ նշված նպատակի ձեռքբերման խնդիրների հետևյալ հիերարխիան. 1) անվտանգության ապահովում, 2) գոյության միջոցների ապահովում, 3) հավասարության ձեռքբերում, 4) գոհունակության ձեռքբերում (Լույն տեղում: էջ 175–178):

2 Տես՝ 6 Царьков И.И. Развитие правовопонимания в европейской традиции права. СПб.: Юрид. центр Пресс. 2006. С. 53–54. Բ. Շարրիյակը Գրոցիոսի արժանիք համարում է այն, որ բոլորնայն վանականը «համակարգավորել և միմյանց հետ է համապատասխանեցրել տարբեր ծագման տեքստեր՝ բաշխելով դրանք հիերարխիկ կարգով կախված աղբյուրներից» (Кабринак Р. Кодификации. М.: Статус. 2007. С. 43): Ըստ Ա. Մ. Միխայլովի կարծիքի՝ «արդիականության հետազոտողները Գրոցիոսի արժանիքը ամենից առաջ տեսնում են իրավունքի տարբեր աղբյուրների կանոնավոր ուսումնասիրության, դրանց հիերարխիկ համադրության մեջ, ինչի արդյունքում ստացվեց դոկտրինալ սխոլաստիկ ավանդույթի «իրավական համակարգը» (Михайлов А.М. Идея естественного права: история и теория. М.: Юлитинформ, 2010. С. 95):

իրավագիտության մեջ իրավունքում հիերարխիան, որպես կանոն, հետազոտվում է խիստ տրված անկյան տակ³ որպես իրավունքի ձևերի հիերարխիա և, որպես կանոն, վերլուծական իրավաբանական պոզիտիվիզմով տրված շրջանակներում: Հետաքրքրական է նշել, որ և՛ բնական իրավունքի, և՛ իրավական ռեալիզմի կողմնակիցները, դիմելով իրավունքի հիերարխիկության խնդրայնությանը, իրավական հիերարխիայի քննարկումներում բովանդակային շտկումներ ներառող իրենց դատողություններում, որպես կանոն, օգտվում են վերլուծական պոզիտիվիզմի հասկացությունների ապարատով⁴:

Ենթադրվում է, որ իրերի այդպիսի վիճակը պայմանավորված է ամբողջական համալիր գործոններով:

Ամենից առաջ, հատկապես վերլուծական իրավագիտությունը, սահմանափակելով իրավունքի մեջ հիերարխիայի խնդրայնությունների ասպեկտը տեխնիկական–իրավաբանական հարցերով, կարողացավ իրավունքի հիերարխիայի ձևերում արտահայտել իրավունքի՝ որպես կարգավորված, բացատրվող և կանխատեսվող սոցիալականության արտացոլման համաձայնեցվածության գաղափարը: Եվրոպական մտածելակերպով՝ իրավաբանի համար իրավունքի ձևերի հիերարխիայի պաթոսը միշտ եղել է և կլինի կոորդինատների չհակասող համա-

3 Անիրաժեշտ է իրավական պոզիտիվիզմում սահմանագատել երկու ուղղություններ. 1) իրավական իրականության (սոցիոլոգիական պոզիտիվիզմի) հայեցակարգեր, որոնք «առաջադրում են իրավակիրառության ոլորտում և իրավունքը որպես «այն, ինչը իրականում կատարում են դատավորները» սահմանող «իրական» սոցիալական հարաբերությունների ուսումնասիրության խնդիրները» և 2) վերլուծական պոզիտիվիզմի դոկտրինան, որը կողմնորոշված է «իրավական լեզվի, իրավական տեքստերի» ուսումնասիրությանը: Այստեղ իրավունքը հանդիսանում է «որոշակի կարգին համապատասխան ընդունված կանոններ»:

4 Pound R. Hierarchy of Sources and Forms in different systems of law// Tulane law review. №4 P. 467–477
Lundmark, T. Charting thr Didide between Common and Civil law. NY: Oxford University Press 2012 P. 310–312.

կարգի ստեղծման մեջ, որը հնարավորություն կտա իրավական տեքստերի կոնգլումերատի հետևում տեսնել վարքագծի մոդելների և նմուշների ռացիոնալ կառուցված համակարգ: Նման համակարգը հենարան կհանդիսանա ցանկացած իրավաբանական գործունեության մեջ, լինի դա իրավաստեղծ, անհատականացված որոշումների ներածում, իրավական նյութի հետազոտություն և համակարգավորում կամ քաղաքացիներին՝ իրենց վարքագծի իրավաչափության վերաբերյալ խորհրդատվություն:

Հավանաբար, հատկապես իրավունքի ձևում ներդաշնակության և հիերարխիկության միջև կապը առավել հեշտությամբ է բացահայտվում: Այդ իսկ պատճառով իրավունքի ձևի հիերարխիկ կառուցվածքի գաղափարը իրավաբանին տրամադրում է հոգեբանական հարմարավետության բացառիկ զգացողություն, որը հենված է նրա բացատրություններում անհամաձայնությունների բացակայության հավատքին, ինչ կարելի է կամ արգելված է իրականացնել ըստ իրավունքի:

Ամենայն հավանականությամբ այս երևույթի արմատները անհրաժեշտ է որոնել եվրոպացիների մտածողության առանձնահատկություններում: Ըստ հետազոտողների կարծիքի, ըստ որի «սովորական կանոնի բացատրությունը պետք է լինի մեկը, և եթե ինչ-որ բանի տրվում է երկու, երեք, տասը բացատրություն, ապա մտածողության եվրոպական եղանակը միանգամից որոնում է վերիֆիկացման գործընթացներ, որոնք հնարավորություն են ընձեռում այս կամ այն հեղինակությանը դիմելու մեթոդով... պարզաբանել, այդ երկու, երեք, տասը բացատրություններից որն է ճշմարիտ: Հասկացությունների նկատմամբ անհանդուրժողականությունը եվրոպական մտածողության շարժիչ ուժերից, որը ստիպում է վերջինիս անընդհատ որոնել նոր ներդաշնակ մեկնաբանություններ, միևնույն ժամանակ եվրոպա-

կան հոգեբանական դրույթների էական գծերից մեկը, որը չունի նմանություն այլ մշակույթներում»:

Կարելի է ասել, որ նոր ժամանակների վերլուծական իրավագիտությունը առավել ընդհանուր սկզբունքների ստացման ուղիով ընդունել և որոշակի աստիճանով կատարելագործել է հակասությունների չեզոքացման միջնադարյան սխոլաստիկ եղանակը և փորձել առավել հետևողական այն մարմնավորել իրավական հիերարխիայի հետ կապված իր տեսական և դոգմատիկ կառույցներում:

Մյուս կողմից՝ աշխարհիկ կառավարչի և քաղաքական իշխանության հավակնություններ ունեցող հռոմեական-կաթոլիկ եկեղեցու միջև բարդ, գրեթե հակասական փոխհարաբերությունները, որը բնորոշ է միջնադարյան Արևմտյան Եվրոպայի համար, հանդիսացան իրավաբանության բաժանման գաղափարի վերաիմաստավորման խթան²: Որպես

1 Царьков И.И. О правовых принципах в средневековой юриспруденции. Правоведение 2003, №2 С.197-207

2 «VII դարից Արևմտյան Եվրոպայում տարածում ստացավ թագավորների օժան արարողությունը, որի էությունն այն է, որ եկեղեցին ընդունում էր տվյալ անձին իր համայնք, սակայն դա չէր նշանակում, որ եկեղեցին թագավորին օժան արարողությամբ օժտում էր իշխանական իրավունքով... եկեղեցին պատասխանատվություն էր ստանձնում թագավորի գործողությունների համար՝ պատասխանելով նրա փոխարեն Աստծո դատարանի առջև: Եկեղեցին օժանը նոր թագավորին տրամադրում էր ապահովագրություն (ֆրանս. «Polls»՝ ապահովագրություն), նրա ապագա գործողությունների որոշակիության ապահովածություն»: Այսպիսով՝ եկեղեցին չէր հավակնում նրան, որ հանդիսանա աշխարհում իշխանության միակ աղբյուր: Թագավորը՝ մասնատիպ իշխանությանը լիազորված անձ է, ինչպես եկեղեցին, միայն թագավորական իշխանության իրավադատությունից պետք է առանձնացվեր այն հարցերի լուծման իրավունքը, որոնք կապված էին սահմանային բարոյական իրավիճակների սահմանման հետ: Դրա հիման վրա միջնադարյան իրավական միտքը մշակել է իրավադատության սահմանափակման գաղափարը... Քաղաքական-իրավական մտքի պատմության մեջ առաջին անգամ ձևավորվեց պատկերացում, որ մեկ տարածքի սահմաններում կարող են գոյություն ունենալ միյանցից անկախ երկու իրավաբանական ատյաններ, որոնցից յուրաքանչյուրն օժտված է կանոնակարգերի (օրենքների) հրատարակման իրավունքով (նույն տեղում՝ էջ 200):

արդյունք, արևմտյան երկրների իրավակարգում տարբեր հանրային քաղաքական մարմինների սեփական իրավաստեղծ իրավասությունների հետ կապված՝ իրավունքի ֆորմալ աղբյուրների տեսակների բազմազանության, այդ աղբյուրների ազդեցության ոլորտների փոխադարձ հավելման իրավիճակում քաղաքական-իրավական միտքը վաղ թե ուշ պետք է դիմեր իրավունքի այս կամ այն աղբյուրի գլխավորության գաղափարի խնդրայնությանը: Մեր կարծիքով՝ իրականում հիերարխիայի՝ ըստ իր արտաքին ձևի առումով ուսումնասիրությանը եվրոպական քաղաքական-իրավական մտքի ուղղման գլխավոր պայման, ամենայն հավանականությամբ, հանդիսացավ մայրցամաքային Եվրոպայի պետական տարբեր մարմինների մոտ սեփական իրավաստեղծ իրավասությունների ձևավորումը:

Պարադոքսալ է, սակայն, մայրցամաքային Եվրոպայի պետություններում իրավունքի աղբյուրների հիերարխիկ հարաբերակցության ևս մեկ գաղափարի ծագման կարևոր գործոն անհրաժեշտ է ընդունել քաղաքականապես կազմակերպված հասարակության, ինչպես նաև քաղաքականապես կազմակերպված հասարակության սոցիալական կարգավորման մեջ որպես բարձրագույն հանրային իշխանության կրիչ գերիշխանի (այդ թվում ժողովրդի) հայեցակարգը: Դրանով իսկ պայմանավորվում է պետությունից բխող իրավական նորմերի հիերարխիկ առաջնության հաստատումը համընդհանրությանը հավակնող մնացյալ բոլոր սոցիալական նորմերի նկատմամբ: Պարզ, պետությունից բխող իրավունքը, հենվելով հիերարխիկության գաղափարին, հռչակել և հիմնավորել է իր առաջնությունը քաղաքային, եկեղեցական և այլ կանոնների նկատմամբ, որոնք ևս հավակնում են նրան, որպեսզի կարգավորեն մարդկանց վարքագիծը:

Էական դեր խաղացել է նաև «Լու-

սավորության» ոգուն բնորոշ ռացիոնալիզմը, որը ենթադրում է սոցիալական կառուցվածքի օրինաչափությունների մարդկային գիտակցությամբ իմացությանը հենված հասարակության որպես «մեզամեքենա» վերակառուցման հնարավորությունը, վերջինումս նորմատիվ կարգավորումներում գլխավոր դերը (որպես սոցիալական ինժեներիայի ձև) հատկացվում է ընդհանուր և անհատական իրավական ակտերի ձևում մարմնավորված, գերիշխանի ռացիոնալ և կարգավորված հրամաններում արտահայտված իրավունքին, ամենայն հավանականությամբ, նաև արսոյուտիզմի երկրներում օրինակարգված աշխատանքների աճը¹:

Այսպիսով՝ որպես «մտածողության աճի» «լուսավորության ոգուն», վերլուծական պոզիտիվիզմի որպես իրավական տեսությանը, հասարակական կյանքի իրավական երկարատև կարգավորմանը հավակնող կենտրոնացված ազգային պետությունների որպես սոցմշակույթային երևույթի և տարբեր պետական մարմինների իրավաստեղծ լիազորությունների դիֆերենցիայի ծագմանը պարտական ենք նրանով, որ իրավունքում հիերարխիայի խնդիրների հետագոտության տեսանկյունները մայրցամաքային իրավական ավանդույթներում տեղաշարժել են իրավունքի արտաքին ձևերի կողմ և, անհրաժեշտ է նշել, որ վերջինս գերակայում է մինչ այսօր²:

Վիճելի է իրավունքի հիերարխիկ կառուցման վերաբերյալ հարցը: Ինչպես կարծում է Ժ. Լ. Բերժելը, «ըստ

1 Кабриак Р. Классификации. С. 129-139. П. Чаррիյակը ընդգծում է, որ «սոցիալական պահանջի և քաղաքական կամքի կոնֆլիկտը անհրաժեշտ է ցանկացած օրինակարգման ծագման համար» (Նույն տեղում էջ 139):

2 Իրավունքում հիերարխիայի հասկացության տվյալ թեզի հաստատումը դիտարկել աշխատանքներում. Мицайко М. Иерархия в праве. С. 53-71. Толстик В. А. Иерархия источников российского права; Зивс Л. С. Источники права. М.: Наука 1981

ամենայնի, չնայած տարբեր իրավական համակարգերի կառուցվածքների բազմազանության, միշտ գոյություն ունի դրանցում առկա կանոնների հիերարխիա»¹: Ռ. Պատունդը սահմանափակում է հիերարխիկ կառուցված իրավական համակարգերի ցանկը՝ կախված հասարակության, պետության և իրավունքի զարգացման մակարդակից, ըստ նրա կարծիքի՝ իրավունքի մեջ հիերարխիան «ենթադրում է սոցիալական և տնտեսական համակարգերի զարգացում, ինչպես նաև դրանց համապատասխանող, ըստ իրավակիրառական և իրավաստեղծ գործունեության, հստակ սահմանված իրավասություններով կազմակերպված դատական և վարչական հիերարխիայով իրավական կարգ և բացի դրանից՝ իրավական ոլորտում որակավորված մասնագետների առկայություն»²:

» Տ. Լունդարկը առավել նեղացնում է հիերարխիայի հայեցակարգերի կիրառության ոլորտները՝ պատասխանելով, որ իրավունքի աղբյուրների որպես տրամաբանական կառուցված համակարգի վերաբերյալ պատկերացումները առավել լիարժեք և հաջորդական բացահայտվում է գերմանական իրավագիտության մեջ, իսկ, օրինակ՝ ԱՄՆ, Շվեդիայի, Անգլիայի և Ուելսի իրավական համակարգերի համար հիերարխիայի գաղափարը այդքան նշանակալից չէ³: Մեր կարծիքով՝ նախ՝ «իրավունքի աղբյուրների առավել հստակ հիերարխիա առկա է առավել կենտրոնացված իրավական համակարգերում, երկրորդ՝ այն առկա է համակարգերում, որոնք համոզված են, որ իրավունքը ոչ թե օբյեկտիվ գոյություն ունի, այլ հաստատվում է մարդկանց կողմից. հատկապես այս

դեպքում է ծագում աղբյուրների խիստ հիերարխիայով իրավական համակարգի՝ ըստ նախապես կազմված պլանի ստեղծելու ձգտումներ: Ըստ էության՝ նման պատկերացումները հաղթանակեցին բուրժուական հեղափոխության դարաշրջանում մայրցամաքային իրավակարգերում: Անգլիայում գործնական և գործիքակազմային մտածող դատավորները պաշտպանեցին իրավունքի իրենց ընկալումները, որոնք մոտ են ոչ թե ռացիոնալիզմի, այլ սենսուալիզմի գաղափարներին հենված բնական-իրավականին, որոնց շնորհիվ ձևավորվեց «դատական իրավունքը» կամ «նախադեպային իրավունքը»:

Վերջնական արդյունքում, տրամաբանական է, որ հատկապես գերմանական վերլուծական պոզիտիվիզմը ծնեց իրավունքի արտաքին ձևերի հիերարխիայի դասական տեսությունը (Ա. Մարկելի աստիճանների տեսություն, որը հետագայում զարգացվեց Հ. Քելզենի «իրավունքի մաքուր տեսության» մեջ)⁴:

Ըստ մեր կարծիքի՝ Հ. Քելզենի իրավունքում հիերարխիայի վերաբերյալ ուսմունքի հիմնական թեզի որակով կարելի է բերել հետևյալ գաղափարը. «Իրավունքի նորմերը, որոնց իրականության հիմնական հիմք հանդիսանում է ... հիմնական նորը, իրենցից ներկայացնում են ոչ թե միմյանց մոտ գտնվող իրավական նորմերի համալիր, այլ վերև և ներքև տեղակայված նորմերի հիերարխիկ կառուցվածք»⁵:

Ըստ Հ. Քելզենի կարծիքի՝ այլ նորմի ստեղծումը կարգավորող նորմի և վերջինիս միջև հարաբերությունները կարող են ներկայացվել որպես ստորա-

1 Бержель Ж. Л. Общая теория права. М.: Нота Бене. 2000 С. 160.

2 Pound R. Hierarchy of Sources and Forms in Different Systems of Law// Tulane law review. Vol. VII №4 P. 469.

3 Lundmark T. Charting the divide between Common Civil Law. NY: Oxford University Press. 2012. P. 310–312, 315–341.

4 Маркель А. Юридическая энциклопедия. СПб, 1902 С. 15–20, 37–43, 95–103 и др. Kelsen H. The pure theory of law and analytic jurisprudence // Harvard law review, 1941. Vol. 55. P. 44–70. Kelsen H. On the theory of interpretation // Legal Studies 1990. Vol. 10 №2 P. 127–135. Чистое учение о праве Ганса Кельзена: сб. Переводов. Вып. 2 М. 1988 С 67–93.

5 Кельзен Г. Удվ. Աշխ. էջ 68–69:

դասման հարաբերություններ¹: Մինևույն ժամանակ այն նորմը, որը կանխորոշում է այլ նորմայի ստեղծումը, զբաղեցնում է առավել բարձր դիրք, իսկ տվյալ կարգադրագրերի հիման վրա ստեղծված նորմը՝ առավել ցածր: Իրավակարգը հանդիսանում է նորմերի տարբեր աստիճանների հիերարխիա, ընդհանուր և անհատական նորմերի համակարգ, որոնք միմյանց հետ կապված են ըստ այն սկզբունքի, որ իրավունքը կարգավորում է իր սեփական օբյեկտը և տվյալ կարգի յուրաքանչյուր նորմը ստեղծված է ըստ որևէ այլ նորմի, իսկ վերջին նորմը՝ ըստ հիմնական նորմի կարգադրագրերի, ինչն էլ ապահովում է նորմերի այս համակարգերի և այս իրավական կարգի միասնությունը: »

Իրավակարգի իրականության հիմնավորման որակով Հ. Քելզենը կիրառում է հետևողականություն, որում «նվազագույն նախադրյալ ձևավորում է հիմնական նորմը պարունակող անհրաժեշտության վերաբերյալ դատողությունները. «Պետք է վարվի փաստացի հաստատված և գործող սահմանադրությանը համապատասխան», մեծ նախադրյալը ձևավորում է որոշակի փաստ հաստատող գոյի վերաբերյալ դատողությունները. «Սահմանադրությունը փաստացի հաստատվել է, և այն գործում է (այսինքն՝ դրան համապատասխանությամբ հաստատվող նոր մեծերը հիմնականում ընդունվում և պահպանվում են), իսկ եզրակացության որակով հանդես է գալիս անհրաժեշտության վերաբերյալ դատողությունը. «Պետք է վարվի իրավակարգին համապատասխան (այսինքն՝ իրավակարգը իրական է)»²: Նույն սխեման տարածվում է իրավունքի կոնկրետ իրավական նորմի իրականության հիմնավորման վրա:

Ըստ Հ. Քելզենի՝ «մեկ նորմի իրա-

կանության հիմք կարող է հանդիսանալ միայն մյուս նորմի իրականությունը: Նորմը, որը իրենից ներկայացնում է այլ նորմի իրական լինելու հիմք, կերպարանային անվանում են «բարձրագույն» (այսինքն՝ «առավել բարձր») նորմ մյուս նորմի նկատմամբ, որին անվանում են «ստորին»³: Իրավունքի հիերարխիկ կազմության մեջ «եթե ստորին նորմը համարվում է իրական, ապա այն պետք է համարվի վերին նորմի հետ համապատասխանող»⁴:

Նորմերի ամբողջ հիերարխիկ համախմբի իրականության հիմքի որակով, այսինքն՝ «նրա վերաբերյալ հարցի պատասխանը, ինչու տվյալ իրավակարգի նորմերը պետք է պահպանվեն և կիրառվեն» Հ. Քելզենը նշում է հիմնական հաստատող նորմայի առկայությանը համաձայն «պետք է վարվեն փաստացի հաստատված, հիմնականում և ամբողջովին գործող սահմանադրությունը, իսկ նշանակում է, այս սահմանադրությանը համաձայն փաստացի հաստատված, հիմնականում և ամբողջովին»⁵:

Այսպիսով՝ իրավունքի մեջ հիերարխիայի վերաբերյալ ընդհանուր պատկերացումների հունով, ուշադրություն պետք է դարձվի իրավունքի հիերարխիայի ընդհանուր տեսական բնութագրությանը, հատկապես իրավունքի աղբյուրների ենթահամակարգի՝ նորմատիվ իրավական ակտերի հիերարխիկ կառուցվածքին, քանի որ վերջինս էական դերակատարում ունի իրավակարգավորումների ոլորտում:

3 Նույն տեղում:

4 Чистое учение о праве Ганса Кельзена: сб. переводов. Вып. 2. М 1988 С86

5 Նույն տեղում՝ էջ 162:

1 Kelsen H. On the theory of interpretation // Legal Studies 1990 Vol. 10 №2 էջ 127-128

2 Kelsen H. Նշվ. Աշխ. էջ 130-131

ОСОБЕННОСТИ ОСМЫСЛЕНИЯ ИЕРАРХИИ В СИСТЕМЕ ПРАВА

ДАВИД АКОПЯН

НАН РА, Институт философии, социологии и права, аспирант

В настоящей статье анализируются особенности осмысления иерархии в системе права, поскольку идея иерархии играет важную роль в сфере праворегулирования. В этом смысле иерархия правовых норм свидетельствует о иерархическом характере социальных (общественных) отношений и социальных норм (в том числе правовых норм), в которых поведение людей соответствует (должно соответствовать) требованиям иерархической структуры этих норм.

PECULIARITIES OF COMPREHENSION OF THE HIERARCHY IN LAW SYSTEM

DAVID HAKOBYAN

National Academy of Sciences, Institute of Philosophy, Sociology and Law, Postgraduate

This article analyzes the characteristics of the comprehension of the hierarchy in the legal system, since the idea of hierarchy is important in the field of legal regulation. In this sense, the hierarchy of legal norms indicates the hierarchical nature of the social (public) relations and social norms (including legal norms), where people's behavior corresponds (must correspond) to the requirements of the hierarchical structure of these norms.

**ՌԱԶՄԱԿԱՆ ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ (ԿԱՄ ԻՆՉՈՒՒ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՌԱԶՄԱԿԱՆ ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ)**

Հոդվածում քննարկվում են ռազմական օմբուդսմենի ինստիտուտի (այսուհետ՝ օմբուդսմեն) ներդրման անհրաժեշտությունը, և որպես քաղաքացիական առանձին ու անկախ կամ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հովանու ներքո այդ ինստիտուտի առանձնահատկությունները՝ համարելով, որ այն Զինված ուժերի մարտունակության կարևորագույն գրավականներից մեկն է: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների հասկացության համատեքստում անդրադարձ է կատարվել «Օմբուդսմեն» հասկացությանը, մի շարք երկրներում այդ ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններին և ստանձնած առաքելություններին: Բացի այդ, վերլուծելով միջազգային փորձը և ՀՀ Զինված ուժերի առջև ծառայած մարտահրավերներին դիմագրավելու հանգամանքները, հոդվածում առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել ռազմական օմբուդսմենի ինստիտուտ՝ նախանշելով նրա հիմնական իրավասություններն ու դերակատարությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ռազմական օմբուդսմեն, մարդու իրավունքների պաշտպանություն, զինված ուժեր, մարտունակություն, սահմանադրություն:

Հայաստանի Հանրապետության նախագահի 2012թ. հոկտեմբերի 29-ի թիվ ՆԿ-159-Ն կարգադրությամբ հաստատվել է «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարու-

թյունը»¹, որի 47-րդ կետով ամրագրվել է, որ Ռազմավարության ընդունումից հետո՝ վեցամսյա ժամկետում, ՀՀ կառավարության կողմից կմշակվի Գործողությունների ծրագիր 2013–2016թթ. համար՝ ներառելով նաև պատասխանատու մարմինները, կատարման ժամկետները, ֆինանսավորման աղբյուրները և կատարողականի ցուցանիշները:

2014թ. փետրվարի 27-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 303-Ն որոշումը, որի հավելվածի 115-րդ կետով ամրագրվել է **«Ստեղծել Ռազմական օմբուդսմենի ինստիտուտ** «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումներին համապատասխան»²:

Որոշման ընդունման պահին իրականացման ժամկետ է սահմանվել մինչև 2014թ. ավարտը, որի ընթացքում պետք է նախապատրաստվեր և ՀՀ կառավարություն ներկայացվեր համապատասխան իրավական ակտի նախագիծը:

Նկատի ունենալով, որ սահմանված ժամկետում չի ընդունվել համապատասխան նորմատիվ ակտը, ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 12-ին ընդունված թիվ 1302-Ն որոշմամբ³ համապատասխան փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2014թ. թիվ 303-Ն որոշման մեջ, համաձայն որի՝ նշ-

1 <http://www.president.am/hy/Directives/item/838/>
2 <https://www.e-gov.am/gov-decrees/item/24104/>
3 <https://www.e-gov.am/gov-decrees/item/26525/>

ված որոշման 115-րդ կետի 4-րդ սյունակում «2015թ. երրորդ եռամսյակ» բառերը փոխարինվել է «2016 թ. երրորդ եռամսյակ» բառերով:

Ասվածից հետևում է, որ մինչև 2016թ. սեպտեմբեր ամիսը ներառյալ պետք է կազմվեր և ՀՀ կառավարություն ներկայացվեր համապատասխան իրավական ակտի նախագիծը՝ «Ռազմական օմբուդսմենի ստեղծման մասին», որն, ըստ էության, չի կատարվել:

Փոխարենը, ս.թ. հունվարի 9-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի որոշմամբ ստեղծվել է Պաշտպանին առընթեր Զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհուրդ: Այն կազմված է զինծառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և անկախ մասնագետներից (սոցիոլոգ, հոգեբան և իրավաբան): Խորհրդի կազմում ընդգրկվել է նաև զինծառայողի ընտանիքի անդամ:

Խորհրդի նպատակն է աջակցել Պաշտպանին վեր հանելու զինապարտների, այդ թվում՝ զինծառայողների իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրները և ներկայացնելու դրանց լուծմանն ուղղված առաջարկներ: Խորհրդի կողմից կիրականացվեն նաև զինապարտության և զինվորական ծառայության հետ կապված օրենսդրության վերլուծություններ, ինչպես նաև Պաշտպանին կտրամադրվեն փորձագիտական գնահատականներ առանձին հարցերի վերաբերյալ:

Սա հնարավորություն է տալիս եզրահանգելու, որ իրավասու ատյաններում իշխում է այն մտայնությունը, որ ռազմական օմբուդսմենի ինստիտուտը պետք է ընդգրկված լինի և գործի Մարդու իրավունքների պաշտպանի հովանու ներքո՝ նրա ենթակայության տակ:

Հարց է ծագում. արդյո՞ք ՀՀ կառավարության 2014 թիվ 303-Ն որոշմամբ

ամրագրված այն դրույթը, որ «Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը» պետք է ստեղծվի «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումներին համապատասխան», ինքնին ենթադրում է Ռազմական օմբուդսմենի ուղղակի ենթակայություն մարդու իրավունքների պաշտպանին:

Հարցադրումը կարևորվում է այնքանով, որքանով որ Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1742 (2006) հանձնարարականի 9-րդ հոդվածի 9.2 կետով ամրագրվել է այն դիրքորոշումը, որ Ռազմական օմբուդսմենը պետք է լինի անկախ մարմին¹:

Բացի այդ՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովն ընդունել է զինծառայողների իրավունքների պաշտպանության մասին հանձնարարականներ, որոնցում ընդգծվում է այն միտքը, որ պետք է ստեղծել զինվորական օմբուդսմենի մարմիններ այն պետություններում, որտեղ նման հաստատություն չկա:

Այդ մարմինները պետք է համալրվեն քաղաքացիական անձանցով և պատասխանատվություն կրեն զինծառայողների հիմնարար իրավունքների ապահովման համար, իրավաբանական օգնություն տրամադրեն նրանց և այլն²:

Ավելին, նույն հանձնարարականով վեհաժողովն անդամ պետություններին առաջարկում է, որպես զինծառայողների իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոց, ներդնել ռազմական օմբուդսմենի անկախ քաղաքացիական ինստիտուտը:

Նշված հանձնարարականի բացառական հուշագրի V մասի 85-րդ կետի համաձայն՝ զինծառայողները իրենց

1 http://www.coe.int/t/dghl/standardsetting/hrpolicy/Others_issues/Armed_Forces/Rec/Publication_FA_ru.pdf

2 Dr. Karl von Gleumes. Der Wehrbeauftragte. Hilfsorgan des Bundestages bei der

Ausbung der parlamentarischen Kontrolle. Berlin, 2005 (http://www.bundestag.de/interakt/infomat/schriftenreihen/downloads/wehrbeauftragter_download.pdf):

խախտված իրավունքների պաշտպանության նպատակով պետք է հնարավորություն ունենան գանգատ ներկայացնել անկախ մարմին¹, որը, տվյալ դեպքում, կարող է լինել Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը:

Որպեսզի սույն վերլուծությունը բովանդակային առումով լինի ամբողջական, անհրաժեշտ է այս կամ այն չափով անդրադառնալ, ընդհանուր առմամբ, «Մարդու իրավունք» հասկացությանն ընդհանրապես, և «Օմբուդսմեն» սահմանմանը՝ մասնավորապես:

Եվ այսպես. ի՞նչ է մարդու իրավունքը, ինչո՞վ է առանձնահատուկ մարդու իրավունքների անհրաժեշտությունն ու պաշտպանությունը Զինված ուժերում և ինչո՞ւ է կարևոր, որ ՀՀ-ում գործի ռազմական օմբուդսմենի ինստիտուտը՝ որպես առանձին քաղաքացիական ինստիտուտ:

Ըստ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի Դաշնության ԳԱ ակադեմիկոս Վ. Ներսեսյանցի՝ **մարդու իրավունքներն իրավունքի բոլոր տիպերի սուբյեկտային-մարդկային ըմբռումներն են. «իրավունքն ընդհանրապես և մարդու իրավունքները ոչ թե տարբեր (իրենց էությանը, գործառնությունը և առավելությամբ) ֆենոմեններ են, որոնք ունեն իրարից անկախ կյանք, այլ միևնույն կարգի և միևնույն տիպի երևույթներ են: Մարդու իրավունքները ամեն մի իրավունքի անհրաժեշտ, անբաժանելի և անխուսափելի բաղադրատարրերն են: Իրավունքն առանց մարդու իրավունքների անհնար է, ինչպես մարդու իրավունքները՝ առանց իրավունքի և իրավունքից դուրս²:**

«Օմբուդսմեն» հասկացությունը

սահմանել է «Փաստաբանների միջազգային ասոցիացիան»՝ նշելով, որ **«Մահմանադրությամբ կամ օրենսդիր իշխանության ակտով նախատեսված, խորհրդարանին հաշվետու բարձրաստիճան հասարակական պաշտոնատար անձի կողմից դեկլարվող ծառայություն, որը տուժած անձանցից ընդունում է պետական մարմինների, ծառայողների, գործատուների դեմ ուղղված դիմում-բողոքներ կամ գործում է սեփական նախաձեռնությամբ և իրավասու է հետաքննություն իրականացնելու, առաջարկելու ուղղորդող քայլեր և ներկայացնելու գեկույցներ»³:**

Առավել ընդգրկուն և արժեքանական առումով առավել ծանրակշիռ է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված և հռչակված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը⁴, որի նախաբանում ընդգծվում է այն միտքը, որ մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը հանդիսանում է ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքը, որ մարդու իրավունքների ոտնահարումն ու արհամարհումը հանգեցրել են բարբարոսական, մարդկային խիղճը վրդովող գործողությունների, և որ մարդկության վեհ նպատակն է հռչակված այնպիսի մի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կունենան խոսքի ու համոզմունքների ազատություն և գերծ կլինեն վախից ու կարիքից, որ անհրաժեշտ է, որպեսզի մարդու իրավունքները պաշտպանվեն օրենքի ու

3 Տե՛ս Ա. Ռ. Ավետիսյան. «Զինվորական օմբուդսմենի հաստատություն. դերն ու գործունեությունն առանձնահատկությունները»: «Հայկական բանակ». ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ռազմագիտական հանդես 4/54/ 2007թ.:

4 http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf

1 <http://hcav.am/wp-content/uploads/2015/07/%D5%8C%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%85%D5%B4%D5%A2%D5%B8%D6%82%D5%A4%D5%BD%D5%B4%D5%A5%D5%B6.docx.pdf>

2 Нерсисянц В. С., Философия права. –М., 1997, с. 376.

ժով՝ նպատակ ունենալով ապահովել, որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու բռնության ու ճնշման դեմ ուղղված ապստամբության՝ որպես վերջին միջոցի:

Նույնատիպ ուղենշային փաստաթուղթ է հանդիսացել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան:

Վերը շարադրվածի հիման վրա աշխարհի բազմաթիվ երկրներ՝ այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը, իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանեցրել են մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայի դրույթներին: Այսպես՝

ՀՀ փոփոխված Սահմանադրության 3-րդ հոդվածով՝ ամրագրվել է, որ մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարող ենք հանգել այն հետևությանը, որ մարդու իրավունքը նրա արժանապատիվ ապրելու, իր իրավունքների և ազատությունների ապահովման ու պահպանման ամբողջությունն է, և հանրային իշխանությունը ոչ միայն պարտավոր է հարգել այն, այլև կաշկանդված է այդ իրավունքով:

Նոր սահմանադրությամբ առավել ծավալուն անդրադարձ է կատարվել

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին:

191-րդ հոդվածով սահմանվել է, որ Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, ով հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

Նույն հոդվածով սահմանվել է, որ Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Ավելին, սահմանվել է նաև, որ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև աջակցել նրա աշխատանքներին:

Այս լույսի ներքո հարկ ենք համարում ընդգծել, որ նոր Սահմանադրությամբ որևէ անդրադարձ կամ ակնարկ չի կատարվել ռազմական օմբուդսմենի՝ որպես առանձին քաղաքացիական ինստիտուտի հնարավոր ներդրման վերաբերյալ, ինչն ինքնին չի ենթադրում, որ այդ ինստիտուտի ներդրումը պետք է պայմանավորված լիներ բացառապես սահմանադրական կարգավորմամբ կամ ամրագրմամբ:

Փոփոխված սահմանադրության 122-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրա-

1 <http://www.irtek.am/views/act.aspx?aid=83237&m=%27%27&sc=#>

կանացումն ապահովելու, ինչպես նաև Մահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ:

Նույն հոդվածով ամրագրված է, որ այդ մարմիններին օրենքով կարող է վերապահվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն, իսկ նրանց լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող պահանջները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով: Սա նշանակում է, որ վերը նշվածի լույսի ներքո համապատասխան որոշման ընդունման դեպքում օրենսդիր մարմինը կարող է ընդունել «Ռազմական Օմբուդսմենի մասին» ՀՀ օրենք՝ ստեղծելով ինքնավար մարմին:

Անգամ, եթե նշված իրավակարգավորումը չարժանանանա համապատասխան հավանության և չընդունվի անվերապահորեն, կարելի է դիտարկել ինստիտուտը մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հովանու ներքո ստեղծելու հարցը՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում հստակորեն ամրագրելով այդ ինստիտուտի առանձնահատկություններն ու ուղղվածությունը:

Այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում որոշակիորեն անդրանդառնալ Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործում գործող իրավակարգավորումների շրջանակին ու ծավալին, որը, մեր կարծիքով, ոչ միայն բավարար չէ, այլև, շատ դեպքերում գործադրված ջանքերը չեն բերում անհրաժեշտ արդյունքի:

Այսպես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի՝

8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելելու գորամիավորումներ...և այլ վայրեր՝ դրանցում գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար: ...Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչը պետք է երաշխավորվի գորամիավորումներում, ...և այլ վայրերում գտնվող անձանց հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությամբ: Պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների՝ այդ անձանց հետ խոսակցությունները ենթակա չեն միջամտության և գաղտնալսման:

Այս հոդվածում մենք խնդիր չենք դրել վերլուծելու Մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունները:

Մեր նպատակը այն սահմանափակ հնարավորության արձանագրումն է, որն այսօր առկա է գործող իրավակարգավորումների շրջանակում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունը հասցեագրված դիմումների հետագա ընթացքը որոշելու գործընթացում:

Անդրադառնալով ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման անհրաժեշտությանը՝ հարկ ենք համարում կատարել հետևյալ մի քանի շեշտադրումները.

- Ձինված ուժերը ժողովրդավարական պետության և հասարակության բաղկացուցիչ մասն են:

- Ձինված ուժերը, իրականացնելով իրենց գործառնությունները պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման բնագավառում, հանգուցային դեր ունեն անվտանգության այնպիսի միջավայր ստեղծելու գործում, որը հնարավորություն է տալիս մեզ օգտվելու այն անօտարելի իրավունքներից և ազատություններից, որոնցով բոլորս օժտված ենք մարդ էակ լինելու շնորհիվ:

- Որպես պետական ապարատի

1 <http://www.ombuds.am/library/browse/page/103>

ներկայացուցիչներ՝ զինծառայողները պարտավոր են իրենց պարտականություններն իրականացնելու ընթացքում հարգել մարդու իրավունքները և պահպանել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը:

• Բայց զինծառայողները թե՛ զորամասերում և թե՛ մարտական պայմաններում իրենց առջև դրված խնդիրներն իրականացնելիս միայն այն դեպքում կպահպանեն նշված իրավունքները, եթե ապահովված լինեն նրանց սեփական իրավունքները սեփական հաստատության ներսում:

Զինվորական օմբուդսմենի հաստատության կարևորությունն առաջին հերթին պայմանավորված է նրա իրավասության մաս կազմող հետևյալ լիազորություններով.

- պաշտպանության ոլորտի նկատմամբ վերահսկողություն,
- մասնակցություն ԶՈՒ-ի գործունեության օրինականության ապահովմանը,
- զինվորական մարմինների գործունեության թափանցիկության ապահովում,
- պաշտպանական ոլորտում իրավական գործունեության արդյունավետության ապահովում,
- հասարակության և ԶՈՒ-ի միջև փոխադարձ վստահության աստիճանի բարձրացում, մասնավորապես՝ պետության պաշտպանության կազմակերպման հարցերում²:

Քաղաքակիրթ երկրներում աստիճանաբար արմատավորվում է այն փաստի գիտակցումը, որ «Համազգեստով քաղաքացիները»՝ Զինված ուժերի անձնակազմը՝ և՛ պրոֆեսիոնալ, և՛ զո-

րակոչված ժամկետային զինծառայողները, օժտված են մարդու այն նույն իրավունքներով և հիմնարար ազատություններով, ինչ մնացած բոլոր քաղաքացիները:

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի առանձնահատկությունն այն է, որ բացի այն, որ զորքերի ճնշող մեծամասնությունն իրականացնում են մարտական հերթապահություն, ավելին՝ հայ-ադրբեջանական հակամարտության գոտում տիրող վիճակն էլ ավելի է ընդգծում Զինված ուժերի՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում լարվածության մակարդակի աստիճանի մասին:

Ասել է, թե ՀՀ Զինված ուժերը մշտապես գտնվում են կիսապատերազմական վիճակում՝ դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ:

Եվ հենց այստեղ է գծվում այն սահմանագիծը, որ անգամ այսպիսի պայմաններում Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցը պետք է գտնվի առաջնային ուշադրության կիզակետում՝ ելնելով այն համոզմունքից, որ Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը նրա մարտականության և բարոյահոգեբանական հոգեվիճակի անբաղդատելի մասն է:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ թեև վերջին տարիների ընթացքում կատարվել են մի շարք առանցքային փոփոխություններ, որոնք թեև իրենց բնույթով առաջադիմական են և շոշափելի, ավելին՝ միտված են իսկապես մարտունակ Զինված ուժերի կայացմանը, այդուհանդերձ, դեռևս ամբողջական չեն և չեն արտացոլում այն ներկայակալը, որը նախանշվել է ընդունված իրավական ակտերով: Խոսքը գնում է ՀՀ պաշտպանության նախարարության և Զինված ուժերի գլխավոր շտաբի գործառույթների տարանջատմանն ու հստակեցմանը, որն իր առարկայական դրսևորումն է ստացել ՀՀ կառավարության 2008թ. դեկ-

1 file: ///C: /Users/USER/Downloads/ARMENIANVERSIONHRinAF78303.pdf

2 Տես Ա. Ռ. Ավետիսյան. «Զինվորական օմբուդսմենի հաստատություն. դերն ու գործունեության առանձնահատկությունները»: «Հայկական բանակ». ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ռազմագիտական հանդես 4/54/ 2007թ.:

տենբերի 25-ի թիվ 1554-Ն որոշմամբ:

Այս լույսի ներքո Պաշտպանության նախարարությունը, հանդիսանալով որպես Ջինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սուբյեկտ, ով օժտված է առանձնահատուկ իրավասություններով, ինքը պետք է ցուցաբերի նախանձախնդրություն՝ ապահովելու համար Ջինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը՝ այդ թվում ռազմական օմբուդսմենի ինստիտուտի միջոցով:

Ավելին, Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը կարող է դառնալ լավագույն գործիքներից մեկը՝ Ջինված ուժերի առջև ծառայած ներքին մարտահրավերները չեզոքացնելու գործում, որոնք մեր պատկերացմամբ, կայանում են հետևյալ հարցերի շուրջ.

- բանակային կոռուպցիա, հովանավորչություն,
- կադրային բանկի սահմանափակ ռեսուրս,
- ինտելեկտուալ զինվորականության սուղ պաշար,
- զինծառայողների բժշկական ապահովման ոչ լիարժեքություն,
- գորքերում ոչ կանոնադրական հարաբերությունների առակայության, ոչ ֆորմալ ինստիտուտների գերակայություն,
- գորանոցային, կենցաղային պայմանների բարելավում,
- Ջինված ուժերի ընդհանուր բարոյահոգեբանական վիճակի բարելավում.
- հասարակական վստահության ամրապնդում,
- Ջինված ուժերի համալրման համակարգի կատարելագործում (գորակոչային գործընթաց, պայմանագրային զինծառայության ընդլայնում):

Եվ եթե այս ամենին հավելենք նաև այն, որ մեր ազգային գիտակցության մեջ դեռևս ամբողջովին արմատացած չէ սեփական իրավունքների պաշտպանությանը հետամուտ լինելու, ավելին՝ խոր

արմատներ ունի խնդիրը չբացահայտելու, քողարկելու, հարցերը սեփական պատկերացումներով լուծելու մտայնությունը, պատկերն ամբողջական է դառնում:

Այդուհանդերձ, ցանկանում ենք արձանագրել այն փաստի գիտակցումը, որ մարտունակ բանակի գրավականներից մեկը իրավունքը պահպանված ու հարգված զինծառայողի առկայությունն է: Ավելին, պետք է գերիշխի այն համոզմունքը, որ իրավաճնշված կամ իրավախախտումների զոհ դարձած և իր իրավունքների պահպանման ու վերականգնման գործընթացում հաջողություն չարձանագրած զինվորականը բոլոր առումներով չի կարողանալու ապահովել բանակի մարտունակությունը, հակառակը, նա պոտենցիալ սպառնալիք է այդ համակարգի գոյության համար, իսկ դա նշանակում է, որ մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը ուղղակիորեն առնչվում է ազգային անվտանգության ապահովման համակարգի հետ, քանի որ մարտունակ Ջինված ուժերի բացակայությունը կոնկրետ սպառնալիք է ազգային անվտանգությանը:

Հետևաբար, գալիս ենք եզրահանգման, **որ Ջինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խարսխումը բանակի մարտունակության հետ պետք է դիտարկվի որպես ռազմավարական խնդիր:**

Նկատի ունենալով վերը նշվածը՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումը դառնում է ոչ միայն անհրաժեշտություն, այլև ժամանակի պահանջ նաև այն առումով, որ հասարակությունն իրավասու է ոչ միայն իրագեկվելու գորքերում տիրող իրավիճակի մասին, այլև ակնկալելու իրավասու ատյաններից հաշվետվություն՝ Ջինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին, որը կարող է օբյեկտիվորեն իրականացնել ռազմական օմբուդսմենի ինստիտուտը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ չնայած Զինված ուժերում գանգատարկման ընթացակարգերի գոյությանը՝ աշխարհի տարբեր երկրներ օմբուդսմանի ինստիտուտ ունեն՝ որի նպատակն է քննության առնել գանգատները՝ Զինված ուժերում ոչ պատշաճ և իրավունքներ խախտող վարքագծի դրսևորումների, զինվորական քաղաքականության բացերի, ինչպես նաև Զինված ուժերի համակարգային հիմնախնդիրների մասին:

Այս գանգատները և բացերը քննության առնելուց հետո օմբուդսմենը մշակում է հանձնարարականներ իրավիճակը շտկող գործողությունների վերաբերյալ: Այս առումով, օմբուդսմենի կարևորությունը կարելի է տեսնել մի քանի ոլորտներում.

1) Նրա անկախ վերահսկողությունը բարձրացնում է վստահությունը զինվորական հատվածի նկատմամբ՝ վարչարարության գործընթացում ավելի մեծ թափանցիկություն ստեղծելով, միաժամանակ չվնասելով ենթակայության աստիճանակարգին:

2) Որպես վերահսկող անկախ մարմին՝ այն խթանում է Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը: Այն ուժեղացնում է գորանոցներում պատշաճ կառավարման, քաղաքացիական վերահսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքները:

3) Օմբուդսմենն առանձին զինծառայողներին էական պաշտպանություն է տրամադրում նրանց իրավունքների խախտման, չարաշահումների և անարդարացի որոշումների դեմ:

4) Օմբուդսմենը կարող է զինվորական հրամանատարներին օգնել հասնելու ներքին բարեփոխումների և կատարելագործելու Զինված ուժերի ներքին աշխատանքը:

5) Արդյունքում օմբուդսմենը կարող է դրական ներգործություն ունենալ զինծառայողների կյանքի որակի, նրանց մարտական ոգու, զորքերի մարտական համախմբվածության վրա, որոնք կարող են նաև օգնել պահելու զինվորներին անձնակազմի չափազանց թերի համալրման պայմաններում:

Մի շարք երկրներ ինքնատիպ լուծումներ են գտել ռազմական օմբուդսմենի ինստիտուտի կառուցվածքի և իրավասությունների սահմանման գործում:

Բելգիայիում և Նիդեռլանդներում ռազմական օմբուդսմենը գտնվում է հենց Զինված ուժերի կազմում և հանդիսանում է որպես գլխավոր տեսուչ, Շվեդիայում, Դանիայում և Լեհաստանում ռազմական օմբուդսմենի իրավասությունները դրված են հենց քաղաքացիական օմբուդսմենի վրա, իսկ Գերմանիայում, Կանադայում և Իռլանդիայում գործում է անկախ ռազմական օմբուդսմենի ինստիտուտը:

Բավականին ինքնատիպ է Գերմանիայի օրինակը: Այդ երկրի խորհրդարանական հանձնակատարի գրասենյակը հիմնադրվել է 1959թ. Գերմանիայի Զինված ուժերի վերաստեղծման մասին որոշման արդյունքում: Գերմանիայի օմբուդսմենը Գերմանիայի խորհրդարանի մարմին է: Նա ընտրվում է խորհրդարանի կողմից և ենթակա է նրան: Խորհրդարանական հանձնակատարը, որ խորհրդարանի անդամ չէ, կարող է գործել խորհրդարանի կամ նրա պաշտպանության հարցերով հանձնաժողովի հանձնարարությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, երբ իրեն հայտնի են դառնում այնպիսի հանգամանքներ, որոնք զինծառայողի իրավունքների ոտնահարման կամ «Innere Führung»-ի սկզբունքների խախտման կասկած են հարուցում²:

1 file: ///C: /Users/USER/Downloads/ARMENIANVERSIONHRinAF78303.pdf

2 Խորհրդարանական հանձնակատարի իրավասության շրջանակները սահմանվում են Զինված ուժերի խորհրդարանական օմբուդսմենի մասին օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով:

Բացի այդ՝ զինծառայողները կարող են դիմում ներկայացնել անմիջականորեն խորհրդարանական հանձնակատարին՝ առանց զինվորական գանգատարկման ընթացակարգերը սպառելու: Իր իրավասությունն իրականացնելիս խորհրդարանական հանձնակատարը իրավունք ունի պահանջելու տեղեկություններ, լսելու վկաներին և փորձագետներին, ինչպես նաև առանց նախագուշացման այցելելու զինվորական օբյեկտները: Ցանկացած քննության արդյունքում խորհրդարանական հանձնակատարը տալիս է հանձնարարականներ և վերահսկում դրանց կատարումը: Խորհրդարանական հանձնակատարը տարեկան զեկույցով դիմում է խորհրդարանին, որում ընդգրկվում են Ջինված ուժերում առկա բացասական երևույթներն ու տեղի ունեցած պատահարները, և որը հիմք է դառնում Ջինված ուժերի ներքին զարգացման մասին քննարկումների և այդ ուղղությամբ անհրաժեշտ որոշումների կայացման համար:

Բավականին ինքնատիպ հեռուստաների ծնունդ է հանդիսանում Կանադայի ազգային պաշտպանության և Ջինված ուժերի օմբուդսմենի գրասենյակը, որը հիմնվել է 1998թ. պաշտոնական հետաքննության արդյունքում, որն իրականացվել էր 1992թ. Սոմալիի խաղաղապահ առաքելության ընթացքում սոմալիացի դեռահասներին ծեծելու, խոշտանգելու և սպանության մեջ ռազմաօդային դեսանտային գնդի զինծառայողների ունեցած մասնակցության կապակցությամբ¹:

Կանադայի զինվորական օմբուդսմենը լիովին անկախ մարմին է, որը նշանակվում է կառավարության կողմից և ենթակա է անմիջապես պաշտպանության նախարարությանը: Օմբուդսմենը քննում է զինծառայողների, նրանց

ընտանիքների կամ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված անհատական գանգատները կամ քննություն է իրականացնում սեփական նախաձեռնությամբ:

Ի տարբերություն Գերմանիայի՝ նախքան օմբուդսմենին դիմելը գանգատարկուն պետք է, բացառությամբ անհետաձգելի դեպքերի, փորձի իր գանգատի լուծումը ստանալ ըստ վերադասության ներկայացնելու կամ զինվորական գանգատարկման համակարգի միջոցով²:

Օմբուդսմենը հրապարակում է տարեկան զեկույց, որը պաշտպանության նախարարի կողմից ներկայացվում է խորհրդարանին և քննարկվում խորհրդարանական համապատասխան հանձնաժողովներում, ինչպես նաև՝ առանձին հետաքննությունների արդյունքներով կազմված զեկույցներ, եթե համարում է, որ դա բխում է հանրային շահերից:

Այս երկու՝ միմյանցից էապես տարբերվող օրինակների ընդգծումը հետաքրքրական է այն առումով, որ եթե Գերմանիայի դեպքում Ռազմական օմբուդսմենը ընտրվում և հաշվետու է բացառապես խորհրդարանին, Կանադայի պարագայում այն նշանակվում է կառավարության կողմից և ենթակա է անմիջապես պաշտպանության նախարարությանը: Վերջինիս միջոցով է օմբուդսմենը հաշվետվություն ներկայացնում խորհրդարանին:

Կարծում ենք, որ Հայաստանի պարագայում լավագույն տարբերակը կարող է դիտարկվել Գերմանիայի օրինակն այն համոզմունքով, որ պաշտպանության նախարարությունը ներկա ռազամաքաղաքական իրավիճակում օբյեկտիվորեն

2 Andre Marin, "Systemic treatment of CF members with PTSD", National Defence and Canadian Forces Ombudsman, February 2002 [Կանադայի ազգային պաշտպանության և Ջինված ուժերի օմբուդսման Անդրե Մարին, «Կանադայի Ջինված ուժերի ՀՏՄԽ ախտորոշում ունեցող զինծառայողների համակարգված բուժումը», փետրվար, 2002 թ.], տես այստեղ՝ <<http://www.ombudsman.forces.gc.ca/rep-rap/sr-rs/pts-ssp/doc/pts-ssp-eng.pdf>>:

1 Սոմալիում Կանադայի Ջինված ուժերի տեղակայման հետաքննության հարցերով հանձնաժողովի մասին ավելի մանրամասն տե՛ս <http://www.forces.gc.ca/site/Reports/somalia/vol0/index_e.asp>:

պատրաստ չէ ամբողջովին ապահովելու ռազմական օմբուդսմենի ինստիտուտի լիովին անկախությունն ու օբյեկտիվությունը, ինչպես նաև բնականոն գործունեության ապահովումը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Գերմանիայում ռազմական օմբուդսմենին ներկայացվում են այնպիսի հարցեր¹, որպիսիք են՝ զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները, դեկավարման ոճը և վարքագիծը, ռազմական ուսուցման պայմանները, կարգապահական կանոնադրությունների կիրառումը, աշխատանքային ժամերը և վարձատրության կարգավորումը, առաջադրանքի կատարման տեղը և տեսակը, զինծառայողների ներկայացուցչությունը կարգավորող դրույթները, ապրելու պայմանների մասին գանգատները (կացարան, հագուստ և այլն), բժշկական սպասարկման և ծառայությունների մատչելիությունը, առաջխաղացմանը, ատեստավորմանը և փոխադրումներին վերաբերող հարցեր:

Վերը նշվածը չի ենթադրում, որ ուշադրությունը սևեռում ենք բացառապես Գերմանիայի օրինակի վրա, և այն դուրս, որ այն տեղայնացվի մեր երկրում, հակառակը, ինչպես նշել ենք հողվածի սկզբնամասում, մեզ համար հարցի լուծումը կարող է դիտարկվել ինստիտուտը մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հովանու ներքո ստեղծելու հարցը՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում հստակորեն ամրագրելով այդ ինստիտուտի առանձնահատկություններն ու ուղղվածությունը:

Համադրելով մի շարք երկրների փորձը՝ միջազգային փորձագետներն առանձնացրել են այն լավագույն օրինակները, որոնք կարող են օգտագործ-

վել²:

Մասնավորապես՝ դրանց թվում հանգել են այն հետևությանը, որ՝

- օբյեկտիվ օմբուդսմենը, ով գտնվում է զինվորական աստիճակագրությունից դուրս և ունի զինվորական հարցերով զբաղվելու իրավասություն, Զինված ուժերում գանգատների, սխալների և համակարգային խնդիրների ուսումնասիրման արդյունավետ մեխանիզմ է.

- օմբուդսմենը պետք է ունենա օրենքով սահմանված իրավասություն, օպերատիվ անկախություն և սպասարկող անձնակազմ

- օրենքով (եթե ինստիտուտը ներդրվում է Մարդու իրավունքների պաշտպանի հովանու ներքո, ուրեմն՝ Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքում) պետք է ամրագրվեն դրույթներ՝ հետևյալ հարցերի վերաբերյալ. օմբուդսմենի իրավասության շրջանակը, օմբուդսմենին դիմելու իրավունքն ունեցող սուբյեկտները, օմբուդսմենի քննության ենթակա գործերը/գանգատները, օրենքով պաշտպանվող տեղեկատվության մատչելիությունը, զինվորական օբյեկտներ մուտք գործելու իրավունքը, նախքան օմբուդսմենին դիմելը զինվորական գանգատարկման ներքին ընթացակարգերը սպառած լինելու անհրաժեշտության հարցի լուծումը, օմբուդսմենի՝ քննություն իրականացնելու իրավունքը, օմբուդսմենի նշանակման և ազատման գործընթացը, սպասարկող անձնակազմի ֆինանսավորման հաստատման կարգը, օմբուդսմենի հանձնարարականների իրավաբանական կարգավիճակը և զեկույցներին ներկայացվող պահանջները (տարեկան զեկույցներ, հատուկ զեկույցներ).

- օմբուդսմենը պետք է սեփական նախաձեռնությամբ քննություն սկսելու լիազորություն ունենա՝ Զինված ուժե-

1 Աղբյուրը՝ Գերմանիայի խորհրդարանի ինտերնետային կայք՝ http://www.bundestag.de/htdocs_e/orga/03organs/06armforce/index.html:

2 file: ///C: /Users/USER/Downloads/ARMENIANVERSIONHRinAF78303.pdf

րում առկա համակարգային խնդիրներին լուծում տալու նպատակով:

Իհարկե, հեռու ենք այն մտքից և հավակնությունից, որ մեկ հողվածով հնարավոր է անդրադառնալ և պատասխանել ոլորտին վերաբերող բոլոր հարցադրումներին: Հասկանալի է, որ խնդիրը բազմաշերտ է, փոխկապակցված բազմաթիվ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների հետ: Սրանով հանդերձ, աներկբա է, որ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումն այլընտրանք չունի:

Նկատի ունենալով ՀՀ Ջինված ուժերի առջև ծառայած մարտահրավերները, ժամանակակից զինված ուժեր ունենալու հրամայականը, աստիճանաբար պայմանագրային և պրոֆեսիոնալ բանակի վերածվելու հեռանկարը, ժողովրդավարական ինստիտուտների հաստատման անշրջելիության հանգամանքը, ընդունելով, որ Ջինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն անխզելիորեն կապված է Ջինված ուժերի մարտունակության հետ, և մարդու իրավունքների՝ որպես կարևոր բաղադրիչի անտեսումը կամ ստորադասումն ուղղակիորեն ազդելու է բանակի մարտունակության և բարոյահոգեբանական վիճակի վրա՝ իր ամբողջական հետևանքներով հանդերձ, անհրաժեշտ է ստեղծել **«Ռազմական Օմբուդսմենի ինստիտուտ»**, որը կընտրվի Ազգային ժողովի կողմից կամ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հովանու ներքո հիմնել **«Ռազմական օմբուդսմենի հաստիք՝ Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալի կարգավիճակով»** օրենսդրորեն ամրագրելով նրա իրավասություններն ու լիազորությունները:

ՀՀ ռազմական օմբուդսմենը կամ Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալ-ռազմական օմբուդսմենը պետք է օժտված լինի առնվազն այնպիսի իրավասություններով, որը նրան հնարավորություն կտա՝

1) Հաշվետու լինել բացառապես ՀՀ Ազգային ժողովին և Մարդու իրավունքների պաշտպանին, և զեկույցի տեսքով առնվազն տարեկան մեկ անգամ իր գործունեության մասին Մարդու իրավունքների պաշտպանի հավանությամբ ու համաձայնությամբ անձամբ հաշվետվություն ներկայացնել ՀՀ Ազգային ժողովին:

2) Անարգել, անսպասելի, առանց սահմանափակման և թույլտվության ցանկացած ժամանակ այցելել բոլոր տեսակի զորամասեր, որտեղ գտնվում են զինվորական ստորաբաժանումներ:

3) Մարդու իրավունքների պաշտպանի կամ սեփական նախաձեռնությամբ Ջինված ուժերում ցանկացած հարցի կապակցությամբ կատարել ուսումնասիրություն և արդյունքները իր կամ Մարդու իրավունքների պաշտպանի միջոցով ներկայացնել ՀՀ Ազգային ժողով,

4) Ջինձառայողների կողմից իրեն հասցեագրված դիմումների ուսումնասիրման և դրանց պատշաճ կերպով ընթացք տալու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության և Ջինված ուժերի ղեկավարությունից պահանջել և ստանալ իրեն հետաքրքրող և դիմումի բովանդակությամբ վերաբերող ցանկացած տեղեկատվություն:

5) ՀՀ պաշտպանության նախարարության և Ջինված ուժերի գլխավոր շտաբի ղեկավարությունից պահանջել և ստանալ իր նախաձեռնությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում ծագած հարցերի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն և պարզաբանումներ:

6) Ծանոթանալ զինձառայողների նկատմամբ հարուցված քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, տնտեսական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև՝ այն նյութերին, որոնց կապակցությամբ

մերժվել է գործերի հարուցումը:

7) ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարբերություններում նշված մարմինները պարտավոր կլինեն ներկայացնելու օմբուդսմենի՝ ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասություններից բխող գործառնությունների իրականացման

նպատակով պահանջվող ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերի:

Մեր խորին համոզմամբ՝ Ռազմական օմբուդսմենի գործունեության սկզբունքները, իրավասությունները և բնականոն կերպով գործելու երաշխիքները պետք է սահմանվեն օրենքով:

ИНСТИТУТ ВОЕННОГО ОМБУДСМЕНА КАК ГАРАНТИЯ БОЕСПОСОБНОСТИ ВООРУЖЕННЫХ СИЛ (ИЛИ ПОЧЕМУ НЕОБХОДИМО СОЗДАНИЕ ИНСТИТУТА ВОЕННОГО ОМБУДСМЕНА)

НОРИК НОРИКЯН

*Член палаты адвокатов Республики Армения,
руководитель юридической фирмы , , Норикян и партнеры»*

В статье представлен вопрос о необходимости внедрения института военного омбудсмена как отдельного, гражданского, независимого института, учитывая, что он является одним из ключевых факторов, определяющих боеспособность вооружённых сил. В частности, автор ссылается на термин «Омбудсмен» в контексте понятия «права человека». Обсуждаются основные направления его деятельности и миссии в ряде стран. Кроме того в статье, анализируя международный опыт и существующие обстоятельства, с которыми вооружённые силы Армении сталкиваются в решении проблем, предлагается создание института военного омбудсмена в РА с указанием его основных полномочий и ролей.

INSTITUTE OF MILITARY OMBUDSMAN AS A GUARANTEE FOR ARMED FORCES FIGHTING EFFICIENCY

NORIK NORIKYAN

*Member of the Chamber of advocates of the Republic of Armenia,
Head of «Norikyan & Partners» Law Firm*

The article highlights the need for introduction of the institute of military ombudsman and its peculiarities as a separate and independent civil institute, considering it as one of the most important guarantees of armed forces efficiency.

In particular, the author refers to the term “ombudsman” in the context of the concept of “human rights”.

In particular, the context of the concept of human rights, a was made to the term “Ombudsman”, the main activities and missions of the institute in a number of other countries. Besides, analyzing the international experience and existing circumstances that face the Armed forces of RA, the article suggests to create an institute of military ombudsman in the Republic of Armenia specifying its primary rights and roles.

**ՌԵՑԻԴԻՎԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ**

Գիտական հոդվածում ներկայացվել է հանցագործությունների ռեցիդիվը՝ որպես հանցագործությունների բազմակիության տեսակ: Ուսումնասիրվել է գիտնականների կարծիքները՝ տվյալ հիմնախնդրի վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել անչափահասների կողմից կատարվող հանցագործություններին, որոնց համատեքստում քննարկվել են հանցագործությունների ռեցիդիվի որակման հիմնախնդիրները: Արդյունքում առաջարկվել են մի շարք լուծումներ, որոնք կօգնեն բարելավել ներպետական օրենսդրությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հանցագործություն, ռեցիդիվ, կրկնահանցագործություն, բազմակիություն, անչափահասներ, դիտավորություն, անգուշություն:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը սահմանում է հանցագործությունների բազմակիության հետևյալ տեսակները.

- համակցություն,
- ռեցիդիվ:

Հանցագործությունների ռեցիդիվի հարցը շատ է քննարկվել քրեական իրավունքի գիտության մեջ. տրվել են դրա գիտական հասկացությունը, տեսակների բնութագիրը: ՀՀ նախկին քրեական օրենսգիրքը տալիս էր ոչ թե երևույթի՝ ռեցիդիվի, այլ առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունը (հոդված 23¹): Քրեական գործող օրենսգիրքը հրաժարվել է առանձնապես վտանգավոր ռե-

ցիդիվիստի գաղափարից¹: Նախկին քրեական օրենսգիրքը նախատեսում էր առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հատկանիշներ պարունակող հանցագործությունների ցանկը: Պրակտիկայում կիրառելու համար տվյալ հոդվածը անհարմար էր, քանի որ հանցագործությունների թվարկումը բավականին երկար էր և այն անընդհատ փոփոխության էր ենթարկվում: Նույնիսկ մի շարք հեղինակներ, վերլուծելով առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի բնորոշումը, հանգել են եզրակացության, որ այն ունի բարդ կառուցվածք, որն օրենքի լեզուն դարձնում է բարդ նույնիսկ մասնագետների համար²: Բացի այդ՝ տվյալ դեպքում կարիք էր առաջանում, առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստից բացի, օրենսդրորեն սահմանելու նաև վտանգավոր և հասարակ ռեցիդիվիստի հասկացությունները:

«Ռեցիդիվ» տերմինը առաջացել է լատիներեն «recidivus» բառից, որը նշանակում է վերսկսվող, վերադարձող³, այսինքն՝ հանցագործությունը կատարվում է մի քանի անգամ: Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ռեցիդիվը բնորոշվում է, որպես հիվանդության վերսկսում, այն դեպքում, երբ թվում էր թե հիվանդն ապաքինվել է, ինչպես նաև ցանկացած իրադարձության կրկնու-

1 Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: ԵՊՀ հրատ., Եր.: 2012, էջ 304:
 2 Տե՛ս Кузнецова Н.Ф. Эффективность уголовно-правовых норм и языка закона. М. 1973г. էջ 333:
 3 Տե՛ս Словарь основных понятий и терминов Общей части уголовного права. Караганда, 1996г. էջ 50:

թյուն, ինչպես նաև կրկնահանգագործություն¹, սակայն քրեաիրավական առումով ռեցիդիվը չի նույնանում հանցագործության կրկնակիության հետ և այս երևույթի ուսումնասիրությունը պահանջում է մանրակրկիտ և հանգամանավից հետազոտություն:

Հանցագործությունների ռեցիդիվը համարվում է հանցագործությունների բազմակիության ամենավտանգավոր ձևը, քանի որ անձը ոչ միայն կատարում է երկու կամ ավելի հանցագործություններ, այլև նոր հանցագործությունը կատարում է նախորդ հանցագործության համար դատապարտվելուց հետո՝ ունենալով դատվածություն:

Տեսության մեջ հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունը և տեղը հանցագործությունների բազմակիության համակարգում ընկալվում է ոչ միանշանակ: Այս կապակցությամբ տարբեր տեսաբաններ արտահայտել են սեփական մոտեցումները, որոնք երբեմն իրարամերժ են: Այսպես՝ մի շարք գիտնականների, այդ թվում՝ Վ.Պ. Մալկովի կարծիքով, հանցագործությունների բազմակիությունը կարող է դրսևորվել միայն երկու ձևերով՝ հանցագործությունների համակցության և հանցագործությունների կրկնակիության, իսկ հանցագործությունների ռեցիդիվը վերջիններս համարում են կրկնակիության² տարատեսակ³: Համանման դիրքորոշում է հայտնում նաև Տ.Է. Կարանը, ով նշում է, որ հանցագործությունների բազմակիությունը կարող է դրսևորվել երկու կամ

ավելի հանցանքների միաժամանակյա կամ հաջորդական կատարմամբ⁴: Այս ձևակերպման մեջ միաժամանակյա կատարման ներքո անհրաժեշտ է ի նկատի է ունենալ իդեալական համակցությունը, կրկնակիությունը և ռեցիդիվը: Տեսաբանների մեկ այլ խումբ հանցագործությունների ռեցիդիվը համարում է բազմակիության ինքնուրույն տարատեսակ: Վ.Ն. Կուդրյավցևը նշում է, որ հանցագործությունների բազմակիությունն ունի երեք տեսակ՝ հանցագործությունների համակցություն, կրկնակիություն և ռեցիդիվ⁵: Ռեցիդիվը՝ որպես հանցագործությունների բազմակիության ինքնուրույն տեսակ են դիտարկում նաև Պ.Ս. Դագելը⁶, Վ. Վ. Շմելյովը⁷ և մի շարք այլ տեսաբաններ: Նման մոտեցումն ավելի հիմնավորված է թվում:

Այսպիսով՝ քրեագետների մեծամասնությունը համակարծիք է, որ ռեցիդիվ պետք է համարել այն իրավիճակները, երբ անձը հանցանք է կատարում ունենալով նախորդ հանցանքի համար չհանված կամ չմարված դատվածություն: Մ.Ա. Եֆիմովը և Մ.Դ. Շարգորոդսկին այդ առումով գտնում են, որ հանցագործության ռեցիդիվի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ անձը հանցանք է կատարել նախորդ հանցանքի համար պատիժ կրելու ընթացքում կամ դրանից հետո⁸:

Տեսաբանների մեկ այլ խումբ պնդում է, որ դիտավորությունը չի կարող լինել հանցագործությունների ռեցիդիվի պարտադիր հատկանիշ և ան-

1 Տե՛ս Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան: Երևան 1976, էջ 1263:

2 Չնայած ՀՀ գործող քրեական օրենսդրությունը հրաժարվել է կրկնակիության ինստիտուտից, այնուամենայնիվ, դրան առնչվող որոշ տեսական մոտեցումների քննարկումը կարող է նպաստել հանցագործությունների ռեցիդիվի էության առավել ամբողջական բացահայտմանը:

3 Տե՛ս Малков В.П. Совокупность преступлений > Казань: Изд-во Казанского ун-та, 1974. էջ 21:

4 Տե՛ս Караев Т.Э. նշված աշխ. էջ 31:

5 Տե՛ս Кудрявцева В.Н. Теоритические основы квалификации преступлений. էջ 287:

6 Տե՛ս Дагель П.С. Множественность преступлений. Владивасток, 1969. էջ 3:

7 Տե՛ս Шмелев В.В. Уголовная ответственность при совокупности преступлений. М., 1992. էջ 9:

8 Տե՛ս Шаргородский М.Д. наказание по советскому уголовному праву -М., 1958-С. 43, Ефимов М.А., Шкурко В.А. Рецидивная преступность и ее предупреждение- Минск, 1977. էջ. 8:

զգուշությամբ հանցանքի կատարումը այն դեպքում, երբ անձը դատվածություն ունի նախկինում անզգուշությամբ հանցանք կատարելու համար, ևս պետք է դիտվի ռեցիդիվ և ստանա համապատասխան քրեաիրավական գնահատական: Այնուամենայնիվ, նման դիրքորոշմանը հակադարձում են բազմաթիվ քրեագետներ՝ նշելով, որ հանցագործությունների ռեցիդիվ պետք է համարել միայն այն իրավիճակները, երբ դիտավորությամբ հանցանք է կատարում նախկինում դիտավորությամբ հանցանք կատարելու համար դատվածություն ունեցող անձը: Նրանց կարծիքով՝ միայն այդ իրավիճակներն են վկայում անձի առավել բարձր հանրային վտանգավորության մասին, ինչից էլ բխում է վերջինիս նկատմամբ առավել խիստ պատիժ նշանակելու անհրաժեշտությունը¹:

Մեր կարծիքով՝ անզգուշությամբ կատարվող հանցագործությունների ռեցիդիվը ևս օժտված է բարձր հանրային վտանգավորությամբ և նման իրավիճակները չպետք է անտեսվեն օրենսդրի կողմից: Այլ խնդիր է, որ այս դեպքում հանցանք կատարած անձի վտանգավորությունը չպետք է նույնացնել դիտավորությամբ ռեցիդիվ կատարած անձի վտանգավորության հետ: Կարծում ենք՝ անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել անզգուշ հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտը:

Տեսաբանների մեկ այլ խումբ էլ կարծում է, որ հանցագործությունների ռեցիդիվ պետք է համարել միայն այն իրավիճակները, երբ դիտավորությամբ հանցանք է կատարում նախկինում դիտավորությամբ հանցանք կատարած չափահաս անձը, ընդ որում, նախկին հանցանքը կատարելու պահին անձը ևս պետք է չափահաս եղած

լինի: Վերջիններիս կարծիքով՝ միայն այս դեպքում է հնարավոր խոսել ռեցիդիվ կատարած անձի մոտ կայուն հակահասարակական կողմնորոշումների մասին և այս դեպքում առավել խիստ պատիժը կարող է արդարացված լինել:

Ըստ էության համանման մոտեցում է ամրագրված նաև ՀՀ քրեական օրենսգրքում, որի հոդված 22-ի չորրորդ մասի համաձայն՝ այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում:

Մեր համոզմամբ՝ անձը կարող է օժտված լինել բարձր հանրային վտանգավորությամբ նաև մինչև տասնութ տարին լրանալը, քանի որ անչափահասը կարող է նախատեսել և հասկանալ իր արարքների և դրանց հետևանքների բարձր հանրային վտանգավորությունը: Որպես վերոնշյալ տեսակետի հիմնավորում նշենք, որ կրիմինալոգիական հետազոտությունների արդյունքում հարցման ենթարկված ռեցիդիվ կատարած անձանց 34%-ը նշել է, որ առաջին անգամ հանցանքը կատարել է մինչև 18 տարին լրանալը²:

Պատահական չէ, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 24-ը նախատեսում է, որ քրեական պատասխանատվության ենթական է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը, իսկ հոդվածի երկրորդ մասում նշվում է, որ այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության սպանության (104-108-րդ հոդվածներ), դիտավորությամբ առող-

1 Տե՛ս Шугов Ю.И. Некоторые вопросы уголовного рецидива, 1964. էջ. 103:

2 Տե՛ս Ефимов М.А. Рецидивная преступность и ее предупреждение-Минск, 1997. էջ 12:

ջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու (112–116–րդ հոդվածներ), մարդուն առևանգելու (131–րդ հոդված), բռնաբարության(138–րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139–րդ հոդված), ավագակության(175–րդ հոդված), և այլ հանցանքների համար:

Կարծում ենք, որ անչափասաները, ովքեր նախկինում հանցանք են կատարել և կատարում են նոր հանցանք, օժտված են բավականաչափ բարձր հանրային վտանգավորությամբ և վերջիններիս նկատմամբ չափազանց մեղմ վերաբերմունքն ի գորու է վտարաբացնել անչափահասների հանցավորության միտումները: Առաջարկում ենք հանցագործության ռեցիդիվը գնահատելիս հաշվի առնել այն հանցագործությունների համար դատվածությունը, որոնք կատարվել են անձի 16 տարին լրանալուց հետո:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22–ի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում կատարված հանցանքի համար:

Ռեցիդիվի դեպքում, ինչպես և իրական համակցության ժամանակ, անձը կատարում է երկու կամ ավելի արարք, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է ինքնուրույն հանցակազմ, սակայն հանցագործությունների համակցությունից ռեցիդիվը տարբերվում է նրանով, որ կատարված նախկին հանցանքի համար անձը պետք է դատապարտված լինի, ընդ որում դատվածությունը չպետք է մարված կամ հանված լինի:

Քրեական օրենսգրքի հոդված 63–ի առաջին կետի համաձայն՝ ռեցիդիվը բոլոր հանցագործությունների համար պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է: Ինչպես կարելի է նկատել վերը տրված հաս-

կացությունից, հանցագործությունների ռեցիդիվին բնորոշ իրավական հատկանիշներից առաջինն այն է, որ թե՛ նախորդ և թե՛ հաջորդ հանցանքները պետք է կատարված լինեն դիտավորությամբ: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 29–ի առաջին մասի համաձայն՝ դիտավորությամբ կատարած հանցանքը կարող է դրսևորվել ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ:

Հանցանքը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանց վրա հասնելը (քրեական օրենսգրքի հոդված 29–ի երկրորդ մաս):

Դիտավորությունը՝ որպես մեղքի ձև, բաղկացած է գիտակցական և կամային չափանիշներից:

Ուղղակի դիտավորության գիտակցական չափանիշը բնութագրվում է երկու հասկացությամբ՝ գիտակցել և նախատեսել: Ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարող անձը գիտակցում է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր բնույթը և նախատեսում է վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը: Գիտակցել արարքի հանրային վտանգավորությունը նշանակում է գիտակցել դրա փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը: Այլ կերպ ասած՝ ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարող անձը գիտակցում է, որ իր արարքը (գործողությունը կամ անգործությունը) վտանգավոր է մեկ այլ անձի, պետության կամ հասարակության շահերի համար: Արարքի հանրային վտանգավորության գիտակցումը չի նշանակում անպայման դրա հակաօրինակականության գիտակցում: Համենայն դեպս,

չի պահանջվում, որ անձը գիտակցի, թե կոնկրետ որ նորմի պահանջներն է ինքը խախտում: Նախատեսել արարքի վտանգավոր հետևանքները նշանակում է գիտակցել արարքի և օբյեկտիվ իրականության մեջ ապագայում սպասվելիք փոփոխությունների միջև պատճառական կապի առկայությունը: Արարքի վտանգավոր հետևանքների առաջացումը նախատեսելն ընդգրկում է ոչ միայն ապագայում սպասվելիք փոփոխությունների փաստական բովանդակության գիտակցումը, այլ նաև այդ փոփոխությունների սոցիալական նշանակության (հանրային վտանգավորության) գիտակցումը¹:

Ուղղակի դիտավորության դեպքում հետևանքների նախատեսումը կարող է դրսևորվել երկու ձևով՝

- հետևանքների առաջացման անխուսափելիության նախատեսում.
- հետևանքների առաջացման իրական հնարավորության նախատեսում:

Այս հանգամանքը ուղղակիորեն նշված է Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի հոդված 25-ի երկրորդ մասում: Վտանգավոր հետևանքների առաջացումը նախատեսելու այս կամ այն տարբերակը կախված է հանցանքը կատարելու իրադրությունից, եղանակից և այլ հանգամանքներից:

Վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիության նախատեսումն առկա է այն դեպքում, երբ արարքի և վտանգավոր հետևանքների միջև կա միանշանակ պատճառական կապ, որի զարգացումը գիտակցվում է հանցավորի կողմից (օրինակ՝ հանցավորը լավ ստուգված հրազենով դիմահար կրակում է տուժողի գլխին):

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում անձը նախկինում կատարում է հանցանք ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ և ունենալով կատարված հանցանքի համար դատվածություն՝ կատարում է նոր հանցագործություն, որի նկատմամբ ևս դրսևորում է ուղղակի կամ անուղղակի դիտավորություն, սակայն, ինչպես վերը նշել ենք, մեր կարծիքով, նման մոտեցումն այնքան էլ արդարացված չէ: Կարծում ենք՝ ռեցիդիվի հասկացությունը պետք է ավելի լայն լինի և իր մեջ ընդգրկի մեղքի անզգույշ ձևով կատարված հանցանքները ևս: Համաձայն մեր մոտեցման՝ ռեցիդիվին կարելի է տալ ավելի լայն օրենսդրական բնորոշում, այսինքն՝ հանցագործությունների ռեցիդիվ համարել նախկինում դատվածություն ունեցող անձի կողմից նոր հանցանքի կատարումը: Բնական է, որ մեղքի տարբեր ձևերով (կամ միայն անզգույշությամբ) կատարված հանցանքներից բաղկացած ռեցիդիվի քրեաիրավական գնահատականը պետք է այլ լինի (ավելի մեղմ), քան միայն դիտավորյալ հանցագործություններով կատարված ռեցիդիվինը:

Վերոշարադրյալի հիման վրա առաջարկում ենք քրեական օրենսգրքի հոդված 22-ի առաջին մասը շարադրել հետևյալ կերպ՝ հանցագործությունների ռեցիդիվ է համարվում հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում կատարված հանցանքի համար: Հանցագործությունների ռեցիդիվն առկա է, եթե՝

- դիտավորությամբ հանցանք է կատարում նախկինում դիտավորությամբ հանցանք կատարելու համար դատվածություն ունեցող անձը.
- անզգույշությամբ հանցանք է կատարում նախկինում անզգու-

1 Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: ԵՊՀ իրատ., Եր.: 2012, էջ 193:

շությանը հանցանք կատարելու համար դատվածություն ունեցող անձը.

- դիտավորությանը կամ անզգուշությանը հանցանք է կատարում այն անձը, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությանը կամ անզգուշությանը հանցանք կատարելու համար:

Հանցագործությունների ռեցիդիվի կարևորագույն իրավական հատկանիշներից մեկը նախկինում կատարված դիտավորյալ հանցագործության համար առկա դատվածությունն է: Դատվածությունը անձի յուրահատուկ իրավական դրություն է, որն առաջանում է մեղադրական դատավճռով պատժի նշանակման արդյունքում: Այդ իրավական դրության առանձնահատկությունն այն է, որ դատվածություն ունեցող անձի համար կարող են ծագել քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ, որոնք նախատեսված են քրեական օրենսգրքով¹:

Վերոշարադրյալի հիման վրա կարելի է փաստել, որ դատվածությունը հանդիսանում է հանցագործությունների ռեցիդիվի պարտադիր իրավական հատկանիշ և առանց դատվածության առկայության հանցագործությունների ռեցիդիվի մասին խոսք լինել չի կարող: Այն իրավիճակներում, երբ անձը կատարել է մի շարք հանցագործություններ, սակայն դրանց համար չի ենթարկվել քրեական պատասխանատվության, հանցագործությունների ռեցիդիվը բացակայում է, քանի որ անձի նկատմամբ չեն կիրառվել պետական հարկադրանքի միջոցներ, որպիսիք կարող էին վերջինիս հետ պահել հետագա հանցավոր վարքագծի դրսևորումներից: Հանցագործությունների ռեցիդիվ կատարած անձի բարձր

հանրային վտանգավորությունը այն է, որ, չնայած կիրառված պատժին կամ պետական հարկադրանքի այլ միջոցներին, տվյալ անձը չի ուղղվում և շարունակում է իր հակահասարակական ուղղվածություն ունեցող գործունեությունը՝ կատարելով նոր հանցանք: Այս առումով դժվար է համաձայնել Բ.Ս. Ուտևսկու այն մոտեցմանը, համաձայն որի՝ հանցագործությունների ռեցիդիվ պետք է համարել բոլոր այն իրավիճակները, երբ անձը դիտավորությանը կատարում է երկու կամ ավելի հանցագործություն՝ անկախ դրանց համար դատվածության առկայությունից²:

Մի շարք տեսաբաններ կարծում են, որ հանցագործությունների ռեցիդիվ կարելի է գնահատել միայն այն իրավիճակները, երբ դիտավորությանը հանցանք է կատարում այն անձը, ով ամբողջությամբ կրել է նախորդ հանցանքի համար նշանակված պատիժը: Նման մոտեցման հետ կարելի է համաձայնել: Հանցագործությունների ռեցիդիվի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ անձը, ենթարկվելով պատժի ազդեցությանը, չի ուղղվում և կատարում է նոր հանցանք: Եթե վերջինս ամբողջությամբ չի կրել պատիժը, չի ընկալել իր նկատմամբ կիրառվող պետական հարկադրանքի ողջ ազդեցությունը, չի կարելի խոսել վերջինիս կայուն հակահասարակական ուղղվածության մասին:

Այս կապակցությամբ առաջարկում ենք օրենսդրորեն սահմանել, որ հանցագործությունների ռեցիդիվն առկա է միայն այն դեպքերում, երբ վերստին հանցանք է կատարում պատիժն ամբողջությամբ կրած կամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված անձը:

1 Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: ԵՊՀ իրատ., Եր.: 2012, էջ 509:

2 Տե՛ս Утевский Б.С. Преступность и рецидив–М, 1977. էջ 32:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն // www.arlis.am:
2. ՀՀ քրեական օրենսգիրք // www.arlis.am:
3. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք // www.arlis.am:
4. Всеобщая декларация прав человека: Сборник стандартов и норм ООН в области уголовного правосудия. Нью-Йорк, ООН, 1992, էջ 275–279:
5. Уголовный кодекс Франции. М.1993, էջ 290–318:
6. Уголовный кодекс Российской Федерации 1996.// www.lawlibrary.ru
7. Առաքելյան Ա.Վ., Գաբրիելյան Ա.Հ., ՄԱրգարյան Ա.Ռ., Կրիմինոլոգիական հետազոտությունների մեթոդիկա: Երևան 2001, էջ208:
8. Հայաստան 2020. Զարգացման և անվտանգության ռազմավարություն: Եր. 2003, էջ 184:

РЕЦИДИВ КАК ФОРМА МНОЖЕСТВЕННОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ

ԴԱԿ ՄԿՐՏՇՅԱՆ

*НАН РА, Международный научно-образовательный центр,
кафедра юриспруденции, магистрант*

В научной статье представлен рецидив преступлений как вид множественного преступления. Исследованы мнения ученых относительно этой проблемы. Также были представлены преступления, которые совершались несовершеннолетними, и в этом контексте обсуждены проблемы квалификации рецидива преступлений. Предложены различные решения, которые помогут улучшить внутреннее законодательство.

RECIDIVISM AS A FORM OF CRIME PLURALITY

HAJK MKRTCHYAN

International Scientific Educational Center of NAS RA, Master's degree student 2nd year

The article focuses on the concept of recidivism as a kind of crime plurality. Opinions of international scientists on recidivism were viewed and considered. Junior crimes are also presented and in this context issues regarding the qualification of recidivism of crimes are discuss. Therefore various solutions were proposed that will help to improve the domestic legislation.

АНГЛО–САКСОНСКОЕ ПОНИМАНИЕ ИСТОЧНИКОВ ПРАВА

В отношении источников права Англо–американская концепция формировалась долгие годы, получив в результате твердую логическую структуру.

Концепция англосаксонской концепции права развивалась под значительным влиянием прецедентного права.

Если для юриста материкового права главным является создание строгой логической системы норм, пусть и с пренебрежением отдельных требований практики, то юрист англо–американской системы следит за каждым шагом практики.

Тем не менее, понятие “источник права”, используемый в системе англосаксонского права, в значительной степени совпадает с аналогичными понятиями, используемыми в ряде других правовых систем, в частности – в системе романо–германского права.

Ключевые слова: источник права, прецедент, правотворчество, статут, система, законодательство, нормы права, общеобязательные правила.

В самом общем плане “источник права” рассматривается в рамках данной правовой семьи как “один из путей”, средств или способов формирования той или иной национальной правовой системы, который «признается и используется» судами.

В более развернутом варианте «источник права» понимается, во–первых, как «официальный документ, акт (record), который содержит в себе нормы права». В Англии это, например, судебные отчеты (law records) и статуты. Обобщенно их называют “литературными источниками”.

Во–вторых, под “источником права” подразумевается “власть, от которой исходит принцип господства права и которая наполняет его реальным содержа-

нием”. В качестве такового выступает государство, а точнее – парламент. Это – “формальный источник” права.

В–третьих, в качестве “источников права” иногда рассматривают различные явления, институты и учреждения, которые создают условия и тем самым “стимулируют” процесс формирования права, хотя сами непосредственного участия в этом процессе не принимают.¹

И, в–четвертых, под “источниками права” понимаются те конкретные процедуры, формы и процессы, с помощью которых “право приобретает свою реальность”. Это – законодательный процесс, “судейское правотворчество”, процесс формирования традиций и обычаев и др. Такого рода “источники права” называют “юридическими источниками”.

Все бытующие в пределах англосаксонской правовой семьи представления об “источниках права” вводятся в научный оборот по общему правилу лишь тогда, когда решаются спорные вопросы, касающиеся содержания, путей формирования, роли и назначения всей системы англосаксонского права или же когда проводится сравнительный анализ всех источников данной системы права с источниками, формирующими другие системы права.

В этом смысле весьма показательным и к тому же довольно типичным в западной литературе является сравнение источников английского права, состав-

1 Богдановская И. Ю. Прецедентное право. – М.: 1993. Backer J.H. An introduction to English History. Butterworth, 1990; Wix W, jurisprudence: teory and Context, J, 2000; Catherine C. and Quinn F., 2007, English Legal system, London: Longman; Eliot C and Quinn F. English Legal system, Longman; Hart H.L.A. Concept of law Oxford e t. c.

ляющего основу англосаксонской правовой семьи – системы общего права, и источников французского права – весьма важного звена романо-германской правовой семьи – системы континентального (“цивильного”) права.

Исследователи традиционно исходят из того, что англосаксонская правовая семья – это семья типичного судейского, а точнее – прецедентного права (*case law*), в которой исторически главенствующая роль принадлежала такому источнику права, как судебная практика или прецедент.

Согласно существующим правилам, суд при решении какого бы то ни было вопроса является формально связанным решением по аналогичному вопросу, вынесенным вышестоящим судом или судом той же инстанции. Однако фактически в процессе выбора соответствующего прецедента, его толкования, принятия или непринятия под предлогом значительного отличия обстоятельств вновь рассматриваемого дела от ранее рассмотренного и ставшего прецедентом, суд в целом и отдельные судьи обладают значительной свободой. Признание прецедента источником права дает возможность фактически творить право.

Следует отметить, что признание прецедента в качестве источника права имеет место и за пределами англосаксонского права.¹ Однако нельзя назвать его основным источником права. Прецедент в таком качестве свойственен лишь общему праву, которое создается судьями при рассмотрении конкретных дел и разрешении различных споров между людьми. В силу этого общее право нередко именуется, как было сказано, судейским правом и тем самым выделяется как по названию, так и по содержанию среди других правовых систем. Не касаясь далее общей характеристики источников англо-

саксонского права, остановимся на более детальном рассмотрении каждого из них. Обратим внимание, прежде всего, на судебную практику и судебный прецедент.

Строго говоря, эти два явления и отражающие их понятия не являются идентичными феноменами. Ибо, когда речь идет о судебной практике как источнике права, то имеются в виду, по крайней мере, два ее смысловых значения. В одних случаях – это деятельность судов, связанная не столько с правоприменением, сколько с правотворчеством, выработкой в процессе рассмотрения конкретных дел общеобязательных правил поведения. В других случаях судебная практика – это сами выработанные в процессе судебной деятельности общеобязательные решения. Под судебной практикой, пишет по этому поводу В. А. Туманов, следует понимать сформированные судами общи “правовые положения” в виде правил, принципов, указаний и определений, которые обладают определенной степенью общепризнанности и обязательности².

В то же время, когда речь идет о судебном прецеденте как источнике права, то имеется в виду не столько процесс судебной деятельности, в ходе которого формируются “правовые положения”, сколько результат этой деятельности, а именно сами эти вырабатываемые судебной деятельностью общи “правовые положения”.

Однако, несмотря на явные противоречия и расхождения в понимании некоторыми авторами понятий “судебной практики” и “судебного прецедента”, в большинстве научных исследований эти явления и понятия рассматриваются как идентичные и взаимозаменяемые, выступающие к тому же по общему правилу, под одним и тем же названием “прецедент”.³

2 См. Рамнов А.К. Правовая система Англии, М, 2000, с. 128;

3 См. Рене Давид, Камилла-Жоффри Спинози. Основные правовые системы современности. М., 2011, с.218– 220;

1 См. Марченко М.Н. Сравнительное правоведение. Общая часть. Учебник для вузов. М., 2001, с. 391;

Говоря о прецеденте как об источнике права и как о результате правотворческой деятельности судов, следует особо отметить, что речь идет о деятельности не всех, а только высших (в странах общего права) судов. В Канаде – это Верховный суд Канады и Федеральный суд Канады, заменивший собой в 1971 г. Суд Казначейства. В Соединенных Штатах Америки на уровне федерации – это Верховный Суд США, а на уровне отдельных штатов – это верховные суды штатов. В Англии – это сложившаяся в результате судебных реформ, проведенных в стране за последнее столетие, и соответствующих законодательных актов (Акты о судоустройстве 1873–1875 гг., Закон о суде 1971 г., и др.), система высоких судебных инстанций, объединенных единым Верховным судом Англии и Уэльса. Среди этих судебных инстанций выделяются следующие три самостоятельных суда – Суд короны, Высокий суд и Апелляционный суд.¹ Каждый из них, обладая определенной юрисдикцией и “специализируясь” на рассмотрении определенной категории дел, в процессе их рассмотрения не только применяет, но и одновременно творит право.

Суд короны, созданный в 1971 г., делает это при рассмотрении уголовных дел в первой инстанции (с участием присяжных заседателей, если обвиняемый не признает себя виновным), а также при рассмотрении апелляций на приговоры и решения нижестоящих магистратских судов.

Высокий суд, состоящий из трех специализированных отделений – королевской скамьи, канцелярского отделения и отделения по семейным делам, творит прецедентное право при рассмотрении наиболее сложных гражданских дел, связанных, в частности, с доверительным управлением собственностью, банк-

ротством, с морскими перевозками, выплатой алиментов, установлением опеки и попечительства и др.

Наконец, Апелляционный суд, состоящий из гражданского и уголовного отделений, создает общие “правовые положения” в процессе рассмотрения апелляций на приговоры и решения других судов.²

Кроме названных судов, в компетенцию которых входит не только правоприменение, но и правотворчество, следует упомянуть также еще такие весьма важные судебные учреждения, как Апелляционный комитет Палаты лордов и Судебный комитет Тайного совета.

Первый, действуя от имени Палаты лордов – высшей судебной инстанции Англии и всего Британского содружества, создает общие “правовые положения” при рассмотрении апелляций по гражданским и уголовным делам, вынесенным апелляционными судами Англии и Уэльса, а также исключительно по гражданским делам – судебными инстанциями Шотландии.

Общие “правовые положения” формируются при этом не столько самими решениями Апелляционного комитета Палаты лордов, которые, имея по существу рекомендательный характер, направляются в суд, вынесший обжалуемое постановление, для принятия окончательного решения с учетом высказанных рекомендаций, сколько в процессе обсуждения рассматриваемого дела. Весьма важным при этом является мнение каждого в отдельности судьи, высказываемое при обсуждении данного дела.

Судебный комитет Тайного совета участвует в формировании прецедентного права путем рассмотрения жалоб на решения “верховных судов британских заморских территорий или государств – членов Содружества, поскольку эти государства не исключают возможности

1 См. Петросян Р.Г. Сравнительный анализ англосаксонской и романо-германской систем гражданского процесса в современной юриспруденции. Вопросы юриспруденции. N4, 1997, с. 15–26 (на арм. яз.).

2 См. Богдановская И. Ю. Прецедентное право. – М.: 1993. Прецедент в Английском Праве – М.: 1985 и т.д.;

такой жалобы”¹. В состав данного комитета входят судьи Палаты лордов и судьи заморских территорий. Решения их основываются на общем праве и по своей юридической силе и характеру приравниваются к решениям Апелляционного комитета Палаты лордов. В юридической науке и практике их рассматривают в качестве юридически значимых мнений – рекомендаций, которые сообщаются Короне для осуществления ее прерогатив.

Реальность и эффективность правотворческой и правоприменительной деятельности английских судов, равно как и судов общего права других стран, обеспечивается самыми различными средствами – политическими, материально-финансовыми, юридическими и иными.

Среди них следует особо выделить такие, как наличие у судов вполне достаточных материальных и правовых возможностей для того, чтобы обеспечить “уважительное отношение к суду” и гарантировать выполнение всех принимаемых им решений.

Наряду с прецедентом, среди источников англосаксонского права важное место занимают законы. В Англии и Канаде их называют статутами, а в большинстве других стран общего права – просто законами/statute/.² Иногда в понятие закона (в “широком смысле”), наряду со статутами, “включают” и все другие законодательные акты. Традиционно английское право уделяло закону второстепенное значение. Функция закона (статута) ограничивалась тем, что он мог вводить

изменения или дополнения в созданное судами, действующее право.

В настоящее время ситуация значительно изменилась. Сейчас в Англии законы и подзаконные акты не могут считаться второстепенными. Они фактически играют такую же роль, какую играют аналогичные источники на Европейском континенте.

Как таковые, все законы, действующие в пределах англосаксонского права и выступающие как один из источников этой правовой семьи, подразделяются на различные виды или группы. В основе такой классификации лежат самые разные критерии.

Так, в зависимости от юридической силы и, соответственно, от занимаемого места в системе источников права законы подразделяются на конституционные и обычные, или текущие. К числу первых относятся сами конституции, а там, где нет единых текстов конституций (Англия, Канада) – заменяющие их конституционные акты. В Англии – это акт о Парламенте 1911 г., Закон 1949 г. об изменении акта о парламенте 1911 г., акт о Министрах Короны 1937 г. и 1964 г., акт о народном представительстве 1969 г., акт о местном самоуправлении 1972 г., акт о Министрах Короны 1975 г. и др. В Канаде – это так называемый канадский акт 1982 г. (Canada act 1982), Конституционный акт 1982 г., 30 актов и “положений” (orders), составляющих “приложение” к Конституционному акту 1982 г., и акты, с помощью которых вносятся изменения и дополнения в любой из вышеназванных актов.³

В странах, где конституция выступает в виде единого документа, к числу конституционных актов относят, кроме самой конституции, также акты, с помощью которых вносятся изменения или дополнения (поправки) в конституцию. Типичным примером в этом отношении

1 Богдановская И. Ю Судебный прецедент-«Источник права?» М.: –государство и право, 2002, с.5– 10; Судебная практика как источник права. М., 1997; Марченко М.Н. Является ли судебная практика источником российского права.–Журнал российского права, 2000; Смирнов Л.В., Деятельность судов РФ как источник права.–Журнал российского права, 2001 и др.

2 См. Туманов В.А. Роль судебной практики в развитии советского права. СССР–Франция: социологический и международно-правовой аспект сравнительного правоведения. М., 1987, с. 36–37;

3 Precedent in English Law., L, 1990, P. 25–53;

являются США.

Наряду с конституционными законами особое место в системе нормативно-правовых актов англосаксонского права занимают обычные, или текущие законы.

В Великобритании, как справедливо подмечает И.Ю. Богдановская, “вследствие отсутствия в ней писаной конституции законы не могут быть признаны неконституционными”. Поскольку подобное положение может привести к тому, что одни статуты будут противоречить другим, то во избежание этого в английской правовой системе установлена “презумпция приоритета более позднего закона над более ранним”.

Это говорит, с одной стороны, о существовании в рамках английской правовой системы принципа равного статуса всех без исключения законов (статутов), исходящих от парламента, об отсутствии в ней традиционного для других правовых систем деления законов на основные и неосновные, обычные законы, а с другой – о полной самостоятельности, “несвязности” каждого последующего состава парламента решениями, принятыми предыдущим, об имеющейся у него полной возможности путем использования обычной процедуры рассмотрения “отменить или изменить любой действующий закон”.

По содержанию статуты, принимаемые Парламентом, подразделяются на пять видов:

1. Акты реформы права, большинство законодательных актов, принимаемых Парламентом, прямо не связаны с пересмотром правовых положений, относящихся к материальному праву (гражданское право, уголовное право). При необходимости эти задачи решаются на основе постановлений Палаты лордов или рекомендаций Правовой комиссии.

2. Консолидированные акты. В рамках этих законодательных актов Парламента объединяются в одном законе другие от-

дельные законодательные акты, принятые ранее с последующими изменениями и дополнениями к ним.

3. Кодифицирующие акты. В этих законах делается попытка объединить все нормы права, относящиеся к одному вопросу или институту. Например, в одном источнике объединяются нормы статутного и общего права, а также положения права справедливости (к примеру, Закон об уголовном праве 1977 г.).

4. Акты о взимании доходов. Это ежегодно принимаемые Парламентом финансовые акты, на основании которых вносятся предложения в бюджет. Формально они представляют собой собрание законодательных актов, которыми утверждаются ежегодные налоговые поступления в казну государства.

5. Текущее законодательство. Это законы, принимаемые для решения текущих вопросов жизни страны. Ничто так не обуславливает специфику положения закона в системе права (к примеру, Акт об арендной плате от 1974 г.).

В Англии и некоторых других странах общего права все законы классифицируются также по признаку публичности на публичные и частные. Уже само название их ориентирует на то, что публичные законы (статуты) содержат в себе правила общего характера, т. е. рассчитанные на неопределенный круг лиц и на неоднократное применение. Они действуют, как правило, на территории всей страны.

В отличие от публичных, частные статуты аккумулируют в себе нормы “частного порядка”, касающиеся вполне определенного круга юридических или физических лиц и содержащие в отношении них строго определенные установления. Речь при этом может идти об установлении или отмене различных привилегий лицам, о предоставлении им особых полномочий, об изменении правового статуса отдельных лиц и т.д.

Говоря о нормах “частного порядка”,

необходимо отметить, во избежание терминологической путаницы и “понятийных” недоразумений, что понятие нормы права, используемое в английской правовой системе, не совпадает с понятием нормы, вошедшим в правовую теорию и практику других стран. Норма права в представлении английских теоретиков и практиков отличается большим своеобразием.

Суть этого своеобразия заключается, прежде всего, в том, что понятие правовой нормы в английском праве трактуется гораздо шире и многообразнее, чем в любом другом, в частности, в “континентальном” праве.

В правовой системе Англии, подмечалось зарубежными и отечественными исследователями, “любое правило поведения, вне зависимости от того, носит оно общий или индивидуальный характер, подпадает под правовую норму”.¹ В английском праве фактически отсутствует деление на нормативные и индивидуальные акты. Индивидуальные акты рассматриваются как нормативные.

Такого рода специфика в понимании нормы права непосредственно связана, с одной стороны, с исторической традицией законодательной деятельности английского парламента, наделяющего зачастую одинаковой юридической силой издаваемые им как публичные, так и частные акты. В английском праве определенное место занимают частные законы, которые “по существу, содержат индивидуальные положения, но наравне с публичными считаются нормативными, так же как и огромное количество разнообразных актов исполнительных органов”.²

А с другой стороны, специфика в понимании нормы права в английской пра-

вовой системе в значительной мере обусловлена нормотворческой деятельностью высших судебных органов страны, создающих прецедентное право не иначе, как при рассмотрении конкретных дел.

На протяжении XX века среди источников английского права существенно возросла роль делегированного законодательства, особенно в здравоохранении, образовании, социальном страховании. Высшей формой делегированного законодательства считается «приказ в Совете», издаваемый правительством от имени монарха и тайного совета (совещательного органа при монархе, включающего высших должностных лиц Великобритании). Многие акты делегированного законодательства издаются министерствами и другими исполнительными органами по уполномочию Парламента. Их развитие так же, как и уставное право обусловлено не только внутренними требованиями страны, но и внешними – международными, экономическими и другими причинами. В связи с этим имеет большое значение развитие английских связей со странами Британского Содружества, а также увеличение ее роли в рамках Европейского экономического содружества.

В наше время делегированное законодательство играет важную роль не только в Англии, но и в других странах общего права.

Кроме вышеупомянутых источников англосаксонского права, для развития данной правовой семьи важную роль играют традиции, правовые доктрины, правовые обычаи, разум – разумное решение споров, когда не существует ни прецедента, ни законодательных норм, ни обязательного обычая. Кроме этого, в некоторых национальных правовых системах особыми источниками права являются интегрированные принципы и нормы права, зародившиеся в результате влияния международных и национальных (зарубежных) систем.

1 Уолкер Р. Английская судебная система. М., 1980;

2 Марченко М.Н. Правовые системы современного мира. М., 2001, с. 168–169;

ЛИТЕРАТУРА

1. Богдановская И. Ю. Прецедентное право. – М.: 1993.
2. Богдановская И. Ю. Прецедент в Английском Праве – М.: 1985.
3. Богдановская И. Ю. Судебный прецедент–«Источник права» М.: –государство и право, 2002, с.5– 10; Судебная практика как источник права. М., 1997.
4. Богдановская И.Ю. Закон в английском праве. М., 1994. с. 70–77.
5. Backer J.H. An introduction to English History. Butterworth, 1990; Wix W, jurisprudence: teory and Context, J, 2000; Catherine C. and Quinn F., 2007, English Legal system, London: Longman; Eliot C and Quinn F. English Legal system, Longman; Hart H.L.A. Concept of law Oxford e t. c.
6. Марченко М.Н. Сравнительное правоведение. Общая часть. Учебник для вузов. М., 2001, с. 391.
7. Марченко М.Н. Является ли судебная практика источником российского права.–Журнал российского права, 2000.
8. Марченко М.Н. Правовые системы современного мира. М., 2001, с. 168–169.
9. Петросян Р.Г. Сравнительный анализ англосаксонской и романо–германской систем гражданского процесса в современной юриспруденции. Вопросы юриспруденции. N4, 1997, с. 15–26 (на арм. яз.).
10. Рамнов А.К. Правовая система Англии, М, 2000, с. 128.
11. Рене Давид, Камилла–Жоффри Спинози. Основные правовые системы современности. М., 2011, с.218– 264.
12. Решетников Ф.М. Правовые системы стран мира. М., 1983, с. 39–41.
13. Романов А.К. Правовая система Англии. М., 2000, с.129–134.
14. Смирнов Л.В., Деятельность судов РФ как источник права.–Журнал российского права, 2001 и др.
15. Туманов В.А. Роль судебной практики в развитии советского права. СССР–Франция: социологический и международно–правовой аспект сравнительного правоведения. М., 1987, с. 36–37;
16. Уолкер Р, Английская судебная система. М., 1980.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԱՆԳԼՈ–ՍԱՔՍՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, ասպիրանտ

Գիտական հոդվածում համակողմանի ներկայացված են անգլո–սաքսոնական հայե–
ցակարգի էությունն ու բովանդակությունը՝ իրավունքի աղբյուրների մասին:

Հոդվածն ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական–կիրառական նշանակություն:

THE ANGLO–SAXON CONCEPT OF SOURCES OF LAW

TIGRAN TOROSYAN

Institute of Philosophy, Sociology and Law, Postgraduate

The article comprehensively comprises the nature and content of the Anglo–Saxon concept of the sources of law. The article is about scientific and practical significance.

**ՆԵՐՊԵՏԱԿԱՆ (ԱԶԳԱՅԻՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈՆԵԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ. ԻՐԱՎԱԿԱՆ
ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԶԵՎԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Հոդվածում անդրադարձ է կատարվել ներպետական (ազգային) իրավունքի և միջազգային իրավունքի փոխգործակցության կառուցակարգի հիմնախնդիրների, բովանդակության և այդ կառուցակարգի իրականացման ձևերի ու մեթոդների հետազոտությանը:

Կարևորելով ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցության կառուցակարգի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, ինչպես նաև բացահայտելով այդ կառուցակարգի իրականացման ձևերն ու մեթոդները և դրանց գործառնությանն նշանակությունը՝ հեղինակը կատարել է եզրահանգում, այդպիսի փոխգործակցման կառուցակարգը՝ որպես իրավական կատեգորիա, օբյեկտիվ իրականության մեջ իրականացվում է հաշվի առնելով այդ երկու իրավական համակարգերի պահանջները ինչպես ներպետական մարմինների, այնպես էլ միջազգային մարմինների մասնակցությամբ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ներպետական (ազգային) իրավունքի, միջազգային իրավունք, ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցության կառուցակարգ, կառուցակարգի իրականացման ձև, կառուցակարգի իրականացման մեթոդ:

Ներպետական իրավունքի և միջազգային իրավունքի փոխգործակցության կառուցակարգը (մեխանիզմ) ժամանակակից իրավագիտության կողմից քիչ ուսումնասիրված հիմնահարցերից է: Եվ հատկապես գլոբալիզացիայի ժամանակակից պայմաններում այդ կառուցակարգի հիմնախնդիրն անդրադառնալը

հրատապ է ու արդիական:

Այս հարցի դիտարկման համատեքստում, «փոխգործակցություն» ասելով, կարելի ընկալել որպես ազգային և միջազգային իրավական համակարգերի համաձայնեցված գործունեություն՝ պայմանավորված դրանց ընդհանուր նպատակներով ու փոխադարձ գործողություններով:

Ի դեպ, փոխգործակցության նպատակը՝ այդ երկու իրավական համակարգերի այնպիսի հարաբերակցության ձևավորումն է, որի ժամանակ հնարավոր կլինի դրանց ընդհանուր առաջնայնությունների իրականացումը: Նշված գործընթացում այդ համակարգերից յուրաքանչյուրը հիմնվում է մյուսի վրա՝ իր նպատակների ձեռքբերման համար, իսկ ընդհանուր առաջնայնությունների առկայությունը, անհրաժեշտ է դարձնում դրանց համաձայնեցված գործունեությունը:

Փոխգործակցության կառուցակարգը նույնպիսի իրավական երևույթ է, ինչպես իրավական կարգավորումը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատության պաշտպանությունը և այլն¹: Որպես կանոն՝ «իրավական կառուցակարգ» եզրույթի նշանակությունը կարելի է դիտարկել որպես հասարակական հարաբերությունների վրա հատուկ իրավաբանական ազդեցության մոդելային և միաժամանակ տրամաբանական այնպիսի սխեմա, որն բովանդակում է փոխկապակցված բաղադրիչներ

1 Տես մանրամասն՝ Хижняк В.С. Право человека на информацию: механизм реализации. Саратов, 2008, էջ 85:

և ուղղված է օբյեկտիվորեն գոյություն ունեցող կարգավորիչ միջոցառումների իրականացմանը:

Բացի այդ՝ պետությունների շահերը ունեն իրավական բնույթ, իսկ դրանց իրականացումը ձեռք է բերվում իրավաբանական միջոցների համադրման, այդ թվում՝ երկու իրավական համակարգերի (ներպետական և միջազգային) բովանդակության համընկման ու համադրման շնորհիվ:

Ժամանակակից աշխարհում ներպետական և միջազգային իրավական համակարգերի այդպիսի համընկման կամ համադրման երևույթներ նույնպես առկա են: Եվ քանի որ պետություններն ունեն իրենց շահերը, իսկ հիմնական շահերը մշտապես համընկնում են ու «աճում» փոխադարձության կապերով, ուստի այդ պատճառով անհրաժեշտ է դառնում երկու իրավական համակարգերի նորմերի միավորումը կամ առնվազն բարենպաստ պայմանների ստեղծումը իրավակիրառական ոլորտում դրանց փոխգործակցության համար:

Անհրաժեշտ է նկատել, որ ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցության ընթացքը սկսելու համար անհրաժեշտ է իրավաբանական որոշակի փաստի առկայություն, այսինքն՝ այնպիսի հանգամանքների գոյություն, որոնց ժամանակ հնարավոր կլինի դրանց միջև փոխգործակցության իրագործումը: Այդպիսի իրավաբանական փաստ կարող է դիտարկվել միջազգային պայմանագրի ստորագրումն ու վավերացումը, իսկ փոխգործակցության իրագործման փաստ կարող է լինել միջազգային պայմանագրի չեղարկումը կամ դրա գործողության ժամկետի ավարտը:

Հարկ է նշել այն, որ ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցությունը բնութագրվում է նաև հետևյալ երկու իրավական համակարգերի փոխադարձ ազդեցությամբ: Մի կողմից՝ այդ գործընթացը նպաստում է միջազգային և ներպետական իրավուն-

քում նշանակալի փոփոխությունների իրականացմանը, այն է՝ միջազգային իրավունքի սահմանադրականացում և սահմանադրական իրավունքի միջազգայնացում, իսկ մյուս կողմից՝ միջազգային իրավունքն ունի իր ազդեցության ուղիները ներպետական իրավունքի վրա՝ համաձայնեցման և իրականացման կառուցակարգերի միջոցով¹:

Ավելի մանրամասն դիտարկենք այդ կառուցակարգերը:

Ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի ներգործության կամ ազդեցության իրականացման կառուցակարգ ասելով՝ առաջին հերթին պետք է հասկանալ միջազգային իրավունքի պարտավորություններին համապատասխան պետության կողմից կիրառվող ներպետական և կազմակերպչական իրավական միջոցների ամբողջականություն: Ընդ որում, յուրաքանչյուր պետության համար միջազգային իրավունքի նորմերի իրականացման կառուցակարգը կրում է միայն իրեն բնորոշ գծեր, որոնք կախված են ներքին իրավական համակարգի առանձնահատկություններից, սակայն մի շարք հատկանիշներ, որոնք ամենից առաջ բնութագրում են դրա կառուցվածքը, հանդիսանում են ընդհանուր՝ յուրաքանչյուր պետության համար:

Միաժամանակ, անհրաժեշտ է նաև նկատել, որ ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի ազդեցության իրականացման կառուցակարգի կառուցվածքն իր մեջ ներառում է մի շարք բաղադրիչները, որպիսիք են.

ա) ներպետական օրենսդրությունում ամրագրված իրավական միջոցներ, որոնք ուղղված են ներպետական մակարդակով միջազգային պարտավորությունների կատարմանը.

բ) պետական մարմինների համա-

1 Տես մանրամասն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վարդյանի. Եր., 2010., 1086 էջ:

կարգը, որոնց գործունեությունն ուղղված է միջազգային իրավունքից բխող պարտավորությունների կատարմանը.

գ) ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի ազդեցության իրավակիրառական պրակտիկայի առկայությունը.

դ) կազմակերպչական միջոցներ, որոնք կոչված են երաշխավորելու ներպետական մակարդակով միջազգային իրավունքի արդյունավետ իրականացումը:

Նախ՝ ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի ազդեցության իրականացման կառուցակարգում պետությունները, որպես կանոն, օրենսդրական կարգով որոշում են իրավասու մարմինների համակարգը և ընդհանուր գծերով ժամանակագրում այդ մարմինների լիազորությունների իրականացման համար, որոնց իրավասության մեջ մտնում են միջազգային պայմանագրերով կարգավորվող հարցերը: Այդ մարմինների գործունեությունն ուղղված է միջազգային պայմանագրերի կնքմանը, կատարմանն ու չեղյալ հայտարարմանը, իրավաստեղծ գործունեության իրագործմանը:

Այնուհետև, ներպետական մակարդակով իրականացման կառուցակարգի կարևոր բաղադրիչ են հանդիսանում կազմակերպչական միջոցները, որոնք կիրառվում են ներպետական մակարդակով միջազգային իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

Իրենց բովանդակությամբ դրանք ներպետական իրավաստեղծ գործունեության հետ չկապված օրակարգային բնույթի այն միջոցներն են, որոնք ընդունվում են միջազգային պայմանագրի մասնակից պետության իրավասու մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից: Այդ միջոցների թվին են պատկանում ազգային օրենսդրության վերլուծության կատարումը՝ միջազգային իրավունքի նորմերին հա-

մապատասխանեցման տեսանկյունից, խորհրդատվությունների, սեմինարների անցկացումը, միջազգային իրավունքի մասին գիտելիքների տարածումը, միջազգային իրավունքի այս կամ այն դրույթների կատարման ընթացքի մասին տեղեկատվության փոխանցումը, նյութատեխնիկական գործողություններին կատարումը և այլն:

Ինչ վերաբերում է միջազգային իրավունքի նորմերի ներպետական մակարդակով իրականացման կառուցակարգի առկայությանը, ապա այդ հանգամանքը պետություններին հնարավորություն է տալիս ապահովելու միջազգային պարտավորությունների ամբողջական, բազմակողմանի և ժամանակին իրագործումը:

Անշուշտ, ներպետական համակարգում միջազգային իրավունքի նորմերի կիրառման իրականացման կառուցակարգը նույնպես փոխկապակցված է նրանց իրավաբանական բնույթի հետ (պայմանագրային նորմեր և սովորույթային նորմեր): Ավաճի համատեքստում, ներպետական իրավական համակարգում կարելի է առանձնացնել միջազգային իրավունքի նորմերի իրականացման կառուցակարգերի հետևյալ երեք կատեգորիաները.

1) սահմանադրական իրականացման կառուցակարգեր, որոնց գործողությունը հիմնված է միջազգային պայմանագրի՝ որպես ազգային իրավունքի կամ ազգային իրավական համակարգի մասի հաշվառման վրա (օրինակ, ԱՄՆ-ում, Արգենտինայում, Բուլղարիայում, Եգիպտոսում, Ճապոնիայում, Ղրղզստանում, Լիտվայում, Նիդեռլանդներում, Ռումինիայում, Շվեյցարիայում, Վենեսուելայում և այլն),

2) սահմանադրական իրականացման կառուցակարգեր, որոնց գործողությունն ուղղված է ներպետական իրավական ոլորտում միջազգային իրավունքի կիրառման հնարավորության ճանաչման մեջ (օրինակ՝ Ավստրիայում, Էստոնիայում, Հունգարիայում և Իռլանդիայում),

3) սահմանադրական իրականացման կառուցակարգեր, որոնք հիմնված են միջազգային իրավունքի յուրաքանչյուր նորմի՝ որպես ազգային իրավական համակարգի մասի ճանաչման վրա (օրինակ՝ ՌԴ, Հունաստան, Մոլդովայիա, Հարավային Կորեա, Վրաստան և այլն):

Վերը նշվածից հետևում է, որ միջազգային իրավունքի նորմերի կիրառման իրականացումը՝ որպես ներպետական իրագործման միջոց և միջազգային նորմերի իրականացման մեթոդների ամբողջություն, հանդիսանում է առավել տարածված ձև, որի ժամանակ ներպետական իրավունքի համաձայնեցումը պայմանավորվում է միջազգային իրավունքի պահանջների հետ:

Առանձին հեղինակներ այդ համաձայնեցումը անվանում են ունիֆիկացում կամ միասնականացում¹: Նրանց կարծիքով՝ օրենսդրական համակարգերի միասնականացումը կամ ունիֆիկացումը տեղի է ունենում ինչպես նմանատիպ նորմեր պարունակող միջազգային պայմանագրերի կնքման ճանապարհով, այնպես էլ մոդելային օրենքի ընդունման միջոցով:

Իսկ մեկ այլ խումբ հեղինակներ ունիֆիկացումը դիտարկում են որպես համաձայնեցման ձև², երբ ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցության կառուցակարգը իրականացվում է ազգային օրենսդրական մակարդակի վրա, իսկ այդ իրագործման բուն գործընթացը կարգավորվում է դարձյալ ներպետական իրավունքի նորմերով: Այս գործընթացի բացառապես օրենսդրական կարգավորման առարկա է, հետևաբար դրանում իրենց մասնակցությունը ցուցաբերում են պետության միայն օրենսդիր մարմինները:

Միաժամանակ, ներպետական իրա-

վունքի համաձայնեցումը միջազգային հետ կարող է իրականացվել ինչպես պետության կամաարտահայտությամբ, այնպես էլ պարտավորությունների կատարման պատճառով: Ընդ որում, ինքնակամ համաձայնեցումը տեղի է ունենում պետության նախաձեռնությամբ, ինչի արդյունքում ազգային իրավունքի նորմերի համաձայնեցումը միջազգային իրավունքի նորմերի հետ նպաստում է առաջինի զարգացմանն ու արդյունավետությանը: Իսկ ներպետական իրավունքը միջազգային իրավունքի պահանջների հետ համաձայնեցնելու պարտավորությունը բխում է միջազգային պայմանագրից, որի պարտադիր լինելուն պետությունը տվել է իր համաձայնությունը:

Համաձայնեցումը, սակայն, կարող է ժամանակավոր լինել: Պետությունն, իր օրենսդրությունը համապատասխանեցնելով միջազգային իրավունքի հետ, կամ կատարում է տվյալ պահին ստանձնած իր պարտավորությունները կամ դա կատարում է՝ քաղաքական նկատառումներից ելնելով: Հետագայում նրա մոտ կարող է առաջանալ այլ պարտավորություն, և ներպետական իրավունքը կարող է կրկին փոփոխվել³:

Միաժամանակ, միջազգային իրավունքում գոյություն ունեն պետության կողմից ընդունելի, պարտադիր միջազգային պայմանագրի համաձայնեցումն արտահայտելու ձևեր: Դրանցից են վավերացումը, ստորագրումը, հաստատումը և միավորումը: Միջազգային պայմանագրի պարտադիր լինելու համաձայնեցման արտահայտումը այս մի-

1 Stu՝ Павлова Л.В. Международное право в правовой системе государств. Минск. 2009. Էջ 60.

2 Stu՝ Буткевич В.Г. Теоретические основы взаимодействия международного и внутригосударственного прав, Киев, 2010, էջ 32:

3 Իրավաբանական գրականության մեջ առանձնացվում են նաև համաձայնեցման մեթոդների երեք խմբեր. ա) միջազգային-իրավական ակտերի իրավաբանական պարտադիր ճանաչման մեթոդներ, որոնց հետ պետք է համաձայնեցվեն ներպետական նորմատիվ-իրավական ակտերը, բ) նորմատիվ-իրավական ակտերի պահանջների մասին տեղեկատվության մեթոդներ, գ) ներպետական նորմատիվ-իրավական ակտերի միջազգային իրավունքի պահանջների հետ համաձայնեցման մեթոդներ: Stu՝ Павлова Л.В. Նույն աշխ. Էջ 215.

ջոցներից յուրաքանչյուրով հանդիսանում է նախապայանան ներպետական մակարդակով համաձայնեցման կառուցակարգի իրագործման սկզբի համար: Համաձայնեցումը կարող է ստեղծվել հետևյալ ձևերով. 1) հղման, 2) ընդունման, 3) զուգահեռ իրավաստեղծման, 4) ունիֆիկացման, 5) վերակառուցման, 6) հատուկ իրավական վարչակարգի ստեղծման, 7) միջազգային պարտավորություններին հակասող ներպետական որոշումները չեղարկելու, 8) միջազգային իրավունքի պահանջներից վրիպած օրենքներից հրաժարման¹:

Իր հերթին ներպետական իրավական համակարգն ունի ազդեցություն միջազգային իրավունքի նորմերի վրա: Այսպիսի ազդեցությունը տեղի է ունենում պետության արտաքին քաղաքականության և դիվանագիտության միջոցով:

Ինչպես հայտնի է, միջազգային իրավունքի նորմերը ձևավորվում են տարբեր պետությունների կամարտահայտության համաձայնեցման ճանապարհով: Այսպիսով՝ դրանք պետք է արտացոլված լինեն որոշակի ոլորտում և ներկայացվեն պետության համար ընդհանուր հետաքրքրություններ: Պետությունը իր արտաքին քաղաքականության և դիվանագիտության միջոցով կարող է հայտնել որևէ հետաքրքրության առկայության մասին:

Պետք է նշել, որ ներպետական իրավունքի փոխազդեցությունը միջազգային իրավունքի վրա խիստ համակարգված է հենց միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների իրացման տեսանկյունից: Միջազգային մակարդակի վրա տեղի է ունենում երկու իրավական համակարգերի փոխգործակցության գործընթացը, որն արտահայտվում է նրանով, որ ներպետական իրավունքը և ազգային շահերը ազդում են միջազգային իրավունքի զարգացման վրա, իսկ միջազգային իրավունքով ազգային

իրավական համակարգերի ազդեցությունը սահմանափակ է:

Այդ համակարգերի փոխգործակցության սահմանները սահմանվում են միջազգային մակարդակով միջազգային հարաբերությունների մասնակիցների կողմից, որոնք իրենց համար ոչ շահավետ են համարում այն ժամանակ, երբ այլ պետություն կունենա ավելի մեծ հնարավորություններ միջազգային իրավունքի զարգացման վրա ազդելու համար:

Այդպիսի սահմաններ սահմանող նորմեր են հանդիսանում միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները, որոնք արտացոլվել են ՄԱԿ-ի Կանոնադրությունում և ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների մասին հռչակագրում:

Այնուամենայնիվ, ներկա ժամանակներում միջազգային իրավունքի նորմերի իրացումը նույնպես հավասարաչափ չեն երաշխավորվում, քանի որ պետությունները գործնականում միջազգային իրավունքի վրա ազդելու ոչ հավասար հնարավորություններ ունեն: Հիմնականում դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, թե ինչպիսին է պետության տնտեսական վիճակը, ինչպես նաև նրա հեղինակությունը միջազգային հարաբերություններում:

Միջազգային մակարդակում ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցման առանձնահատկությունը դրսևորվում է նրանում, որ այստեղ մասնակցում են պետական մարմիններ, միջազգային մարմիններ և կազմակերպություններ:

Ինչպես վերը նշվեց, փոխգործակցման կառուցակարգը ձեռք է բերում տարբեր ձևեր և իրագործվում է տարբեր մակարդակների վրա: Դրանք կարող է լինել նորմատիվ-իրավական և կազմակերպչա-իրավական:

Մասնավորապես, եթե նորմատիվ-իրավական ձևը արտահայտվում է նորմատիվ-իրավական ակտի կամ գործող նորմատիվ-իրավական ակտե-

1 Տես՝ Буткевич В.Г., նույն տեղում:

րի մեջ այնպիսի փոփոխությունների ներմուծմամբ, որոնք կարող են նպաստել ներպետական օրենսդրությունը միջազգային իրավունքի պահանջներին համապատասխանեցմանը, ապա կազմակերպչա-իրավական ձևը բնութագրվում է ներպետական մարմինների գործունեությամբ. առաջին հերթին՝ ներպետական իրավունքը միջազգայինի հետ համապատասխանեցմամբ, երկրորդ հերթին՝ պետության տարածքում միջազգային իրավունքի նորմերի իրականացմամբ:

Հիշատակված երկու ձևերի մասով փոխգործակցության կառուցակարգում մասնակցում են պետական իշխանության մարմիններ, իսկ համաձայնեցման գործընթացում գլխավոր գործառույթը

կատարում են օրենսդրական իշխանության մարմինները:

Այսպիսով՝ ներպետական և միջազգային իրավունքի փոխգործակցման կառուցակարգը՝ որպես իրավական կատեգորիա, օբյեկտիվ իրականության մեջ իրականացվում է՝ հաշվի առնելով երկու իրավական համակարգերի պահանջները. դրա իրագործմանը մասնակցում են պետության ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մարմիններ: Միաժամանակ, այդ կառուցակարգը օգտագործում է տարբեր իրավական համակարգերի բաղադրիչներ և դրանց ներդաշնակ համադրության հնարավորությունից է կախված այդ կառուցակարգի գործողության արդյունավետությունը:

ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրությունը՝ 2015 թվականի փոփոխություններով, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, Հատուկ թողարկում, հոդվ. 1118, 21 դեկտեմբերի 2015 թ.:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. Եր., 2010., 1086 էջ:
3. Հարությունյան Գ.Գ., Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր., 2003. 73 էջ.:
4. Буткевич В.Г. Теоретические основы взаимодействия международного и внутригосударственного прав, Киев, 2010, 401 էջ,
5. Павлова Л.В. Международное право в правовой системе государств. Минск. 2009. 451 էջ.
6. Хижняк В.С. Право человека на информацию: механизм реализации. Саратов, 2008, 385 էջ:

МЕХАНИЗМ ВЗАИМОДЕЙСТВИЯ ВНУТРИГОСУДАРСТВЕННОГО (НАЦИОНАЛЬНОГО) ПРАВА И МЕЖДУНАРОДНОГО ПРАВА: ПРАВОВОЕ СОДЕРЖАНИЕ, ФОРМЫ И МЕТОДЫ

ВАГЕ ТОРОСЯН

Аспирант кафедры юриспруденции Европейской региональной образовательной академии

В статье автор обратился к изучению основных проблем и содержания механизма взаимодействия внутригосударственного (национального) права и международного права, форм и методов реализации этого механизма.

Отмечая важность основных проблем механизма взаимодействия внутригосударственного (национального) права и международного права и путей их решения, а также выявляя формы и методы реализации этого механизма и их функциональное значение, автор пришел к заключению, что механизм такого взаимодействия, как правовая категория, в объективной реальности осуществляется с учетом требований этих двух правовых систем, с участием как внутригосударственных, так и международных органов.

INTERACTION MECHANISM OF INTERSTATE (NATIONAL) LAW AND
INTERNATIONAL LAW: LEGAL CONTENT, FORMS AND METHODS

VAHE TOROSYAN

European Regional Academy, Department of Law, Postgraduate

The article refers to the main issues and content of interaction mechanism of interstate (national) and international law, as well as the implementation ways of that mechanism and survey methods. Noting the importance of the main problems of the interaction mechanism between domestic (national) and international law and ways of their solution, as well as identifying the forms and methods of implementation of the mechanism and its functional significance, the author came to the conclusion that the mechanism of this interaction, as a legal category, in the objective reality shall be based on the requirements of these two legal systems, involving both domestic and international authorities

ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է իրավաբանական գրականությունում արդիական հիմնախնդիրներից մեկի՝ իրավական ռեժիմի հասկացության և դրա հատկանիշների բացահայտմանը: Հոդվածում հեղինակը ներկայացնում է իրավաբանական գրականությունում իրավական ռեժիմի հասկացության և հատկանիշների վերբերյալ տարբեր տեսակետներ: Քննարկվող թեմայի շրջանակներում ընգծվում են «իրավական ռեժիմ» և «իրավական վիճակ» հասկացությունների ընդհանրություններն ու տարբերությունները: Ավելին, հեղինակը նաև ներկայացնում է «իրավական ռեժիմ» և «իրավական կարգ» հասկացությունների փոխկապակցվածությունը:

Հանգուցային բառերն ու արտահայտությունները. իրավական ռեժիմ, հասկացություն, իրավական կարգավորում, իրավունքի համակարգ, օրենսդրական ակտեր:

Իրավական ռեժիմը որոշակի համակարգ է, որոշակի երևույթների միասնականություն, որոնք կոչված են ապահովելու իրավական կարգավորման նպատակների իրականացումը [7, էջ 24–25]: Այնուամենայնիվ, տվյալ հասկացության հետագա ուսումնասիրությունը բարդանում է՝ կապված, այսպես կոչված, հիմնական սահմանող բառի բացակայության հետ, որի միջոցով կարելի է բացատրել իրավական ռեժիմ հասկացությունը: Այդ պատճառով, առաջարկում ենք «կարգ» եզրույթի կիրառումը, քանի որ իրավական ռեժիմի ընկալումը որպես իրավունքի նորմերի կամ իրավական ինստիտուտների միասնականություն, միավորում է նրա բովան-

դակությունը, դարձնում այն ստատիկ երևույթ՝ նույնականացնելով իրավական նորմերի քիչ թե շատ նշանակալից լամբով, որոնք ամրապնդված են նորմատիվ իրավական ակտում:

Մեր կարծիքով՝ որպես «եղանակ» սահմանող կատեգորիայի կիրառման դեպքում իրավական ռեժիմը դառնում է դինամիկ կատեգորիա, որում կարելի է առանձնացնել ինչպես նրա կառուցվածքային տարրերը, այնպես էլ նրա իրականացման փուլերը: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ խոսքը գնում է իրավական կարգավորման հատուկ եղանակի մասին, քանի որ այն գործողության մեջ է դրվում ըստ յուրահատուկ դրդապատճառների, սոցիալական իրավիճակի յուրատիպության հաշվառմամբ, անընդունելի է նրա նույն վիճակում լինելը այլ բնագավառներում:

Արդյունքում կարելի է ստանալ առաջնային հիմքը՝ ավելի ձիշտ սահմանման համար, իրավական ռեժիմը իրավական կարգավորման հատուկ կարգ, որը ծառայում է իրավական կարգավորման ընդհանուր նպատակների անարգել իրականացմանը: Իրավական ռեժիմի սահմանման ժամանակ ևս մեկ կարևոր պահ է նրա սահմանազատումը հարակից ընդհանուր տեսական կատեգորիաներից, որոնք պետք է ենթարկել վերլուծության: **Այդպիսին են՝ իրավական ռեժիմը և իրավական դրությունը:**

Իրավական դրությունը (վիճակը) իրենից ներկայացնում է սոցիալական վիճակի կամ դրության տարատեսակ, սուբյեկտների, օբյեկտների կամ հասարակական հարաբերությունների իրավաբանական կեցության միջոց ժա-

մանակի որոշակի պահին ու որոշակի տարածության մեջ, որպես կանոն, օրենքով նախատեսված կարգով ամրագրված ու հաստատված:

Ըստ Ն.Ի. Մատուզովի՝ իրավական դրության կատեգորիան մեթոդաբանորեն արդյունավետ է տարբեր քաղաքական–իրավաբանական երևույթների խմբի վերլուծության ժամանակ: Ավելի նպատակահարմար է նշված կատեգորիայի հետազոտումը՝ որպես մեթոդաբանական գործիքի, իրավական գիտակցության, իրավական մշակույթի, օրինականության, իրավակարգի, իրավաբանական պատասխանատվության վերլուծության ժամանակ: Գիտական ճանաչողությունը իրավաբանության ոլորտում սովորաբար սկսվում է վիճակների տարանջատումից ու մեկնաբանությունից, որոնցում գտնվում է, կարող է գտնվել, կամ պետք է գտնվի այս կամ այն իրավական օբյեկտը [2, էջ17–19]:

Իրավական ռեժիմը հանդիսանում է կատեգորիա, որը բավականին սերտորեն կապված է իրավական վիճակի հետ: Եվ եթե վերջինս կիրառվում է սուբյեկտների, օբյեկտների կամ հասարակական հարաբերությունների իրավական վիճակի բնութագրի հետ, ապա իրավական ռեժիմը ավելի համընդհանուր կատեգորիա է, քանի որ ակտիվորեն կիրառվում է իրավական երևույթների մեծ շրջանակի հանդեպ:

Եթե նորից անդրադառնանք «ռեժիմ» հասկացության ստուգաբանությանը, ապա նրա սահմանման մեջ կարելի է առանձնացնել երկու բնագավառներ. ռեժիմը որպես որոշակի օբյեկտի գոյության միջոց (իրականում առկա այս կամ այն օբյեկտի որոշակի չափումների միասնականություն) և որպես գոյության տվյալ միջոցին հասնելու ուղի (կանոնների, միջոցների ու մեթոդների միասնականություն, որոնք ուղղված են օբյեկտի տվյալ չափումների ձեռքբերմանը):

Ընտևաբար, իր նյութական նշանա-

կության առումով, իրավական ռեժիմ հասկացությունը կարող է նույնականացվել իրավական վիճակ հասկացությանը և ընկալվել որպես որոշակի օբյեկտի գոյության միջոց, որն արտահայտվում է նրա բնութագրերի տեսքով՝ ժամանակի որոշակի պահի և տարածության մեջ:

Ինչպես արդեն նշվեց, իրավական ռեժիմի սահմանումը անհրաժեշտ է որոշակի սոցիալական արդյունքի առաջացման համար, որին ձգտում է օրենսդիրը առավել օպտիմալ միջոցների ու եղանակների ընտրության ուղիով՝ որպես նրա ձեռքբերման նպատակ: Որպես կարգավորման այդպիսի նպատակ հաճախ հանդես են գալիս որոշակի իրավական վիճակի զարգացումը, ամրապնդումը, պաշտպանությունը և դադարեցումը [4; 6]:

Այսպիսով, եթե իրավական ռեժիմ ասելով հասկանում ենք իրավական կարգավորման եղանակ, ապա իրավական վիճակը այն նպատակն ու արդյունքն է, որին ձգտում է օրենսդիրը՝ սահմանելով այս կամ այն իրավական ռեժիմը:

Դրանով իրավական ռեժիմը իրավական վիճակի շրջանակներում ստեղծում է սուբյեկտների՝ որպես սուբյեկտիվ իրավունքների ու իրավաբանական պարտականությունների օպտիմալ գործարկման ու գոյության կրողների, ու օբյեկտների՝ որպես իրավաբանական նշանակություն ունեցող որոշակի որակների կրողների, համար պայմաններ: Իրավական ռեժիմը սահմանում է իրավական վիճակի կարգավորման եղանակը, այսինքն՝ այն սահմանվում է օրենսդրի կողմից և իրականանում դեպի իրավական վիճակ անցման միջոցով:

Իրավական վիճակը կրում է կայունացնող բնույթ, հանդիսանում է ժամանակի մեջ ընթացող երևույթ (օրինակ՝ ամուսնություն, փոխադարձ իրավունքներ և պարտականություններ, քաղաքացիություն և այլն):

Իրավական վիճակի բովանդակության դրսևորման բնույթն ու առածնահատկությունները անմիջական ազդեցություն են ունենում նրանց կարգավորման միջոցների ընտրության վրա [1, էջ 199–200]:

Այն դեպքում երբ իրավական վիճակը դրական ազդեցություն է ունենում հասարակական հարաբերությունների ու նրանց մասնակցիների վրա՝ որպես վերջինիս կրողների, օրենսդիրը հիմնավորում է նրա գոյությունն ու զարգացումը:

Իրավական վիճակի բովանդակությունը ազդեցություն կունենա իրավական կարգավորման միջոցների, մեթոդների, իրավաբանական գործիքավորման ընտրության վրա իրավական ռեժիմների շրջանակներում:

Եթե իրավական վիճակը ձևավորվում է մասնավոր իրավունքի շրջանակներում, ապա կարգավորումը իրականանում է ընդհանուր թույլատրելի տիպով: Այսինքն՝ իրավական վիճակի առաջացման, փոփոխության կամ դադարեցման ընդհանուր կարգը տեղի կունենա այն կրողի կամքով:

Եթե իրավական վիճակը իրականանում է հանրային իրավունքի բնագավառում, ապա առաջնահերթ նշանակություն ունեն ոչ թե իրավական վիճակի կրողների կամքը, այլ հասարակության ու պետության օրինական շահերը:

Արդյունքում, կարելի է եզրակացնել, որ իրավական ռեժիմն ու իրավական վիճակ հասկացությունների սահմանազատումը կարելի է անցկացնել հետևյալ հիմունքներով՝

- իրավական ռեժիմը իրավական կարգավորման եղանակ է, որն իր մեջ ամփոփում է իրավական միջոցների համալիր: Իրավական վիճակը սուբյեկտների, օբյեկտների ու հասարակական հարաբերությունների իրավական արտացոլման միջոց է,

- իրավական ռեժիմը մարմնավորում է իրավական կարգավորման կարգ

(եղանակը), իսկ իրավական վիճակը՝ նրա նպատակն ու արդյունքը:

Այսպիսով՝ իրավական վիճակն ու իրավական ռեժիմն հասկացությունների հարաբերակցությունը արտահայտվում է բանաձևով. իրավական ռեժիմը որոշակի կարգավորման եղանակ է:

Ուշագրավ են «իրավական ռեժիմ» և «կառավարում» հասկացությունների համեմատական առանձնահատկությունները: Համեմատելով «իրավական ռեժիմ» և «կառավարում» հասկացությունները՝ կարելի է եզրակացնել, որ և՛ կառավարումը, և՛ իրավական ռեժիմը հանդիսանում են պետության՝ հասարակական հարաբերությունների բոլոր բնագավառների վրա ազդեցության միջոցներ: Միաժամանակ կառավարումը հանդիսանում է ավելի լայն հասկացություն իրավական ռեժիմի համեմատ, քանի որ կիրառում է իրավական ռեժիմները՝ որպես գործիքներ, բացառիկ դեպքերում, որոշակի տարածքների, օբյեկտների, սուբյեկտների հանդեպ:

Այսպիսով՝ ռեժիմն ու կառավարումն հասկացությունները փոխկախվածության մեջ են, բայց նույնական չեն. իրավական ռեժիմները հանդես են գալիս որպես պետական կառավարման համալիր միջոց, և կիրառվում են կա՛մ բացառիկ դեպքերում, երբ անհրաժեշտ է համալիր իրավական կարգավորում, կա՛մ էլ սուբյեկտների, տարածքների, օբյեկտների հանդեպ, որոնք մեծ նշանակություն ունեն պետության համար:

Ինչ վերաբերում է «իրավական ռեժիմ» ու «իրավակարգ» հասկացությունների հարաբերակցությանը, ապա առաջինը իրենից ներկայացնելով իրավական կարգավորման եղանակ, կարգ՝ ուղղված է իրավունքի սուբյեկտների համար օպտիմալ պայմանների ստեղծմանը, որոնք իրականացնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները իրավակարգին համապատասխան: Դրանով իրավակարգը՝ որպես հասարակական հարաբերությունների

վիճակ, որի դեպքում ապահովվում է օրենքին ու այլ նորմերին հետևելը, հանդիսանում է իրավական ռեժիմի նպատակ:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականությունում կարելի է հանդիպել որոշ հեղինակների կողմից իրավական ռեժիմը ինստիտուտի, ճյուղերի, իրավունքի նորմերի միասնականության միջոցով սահմանման փորձին: **Կարծում ենք, որ** այդպիսի մոտեցումը հանդիսանում է մեթոդաբանորեն սխալ՝ հետևյալ պատճառներով. նշված կատեգորիաները մանրամասն մշակված են իրավաբանական գիտության կողմից, ձևակերպված են նրանց հասկացությունները, հատկանիշները, կառուցվածքը, դասակարգումը և այլն: Իրավունքի նորմերը միավորվում են իրավունքի ինստիտուտների և ճյուղերի, իսկ իրավունքի ճյուղերը բաժանվում են ինստիտուտների, որոնք իրենց հերթին կարող են ձևավորել ենթաճյուղեր ու ենթաինստիտուտներ, սակայն իրավական ռեժիմը իրենից ներկայացնում է որակապես այլ գոյացություն և այս շրջանակներում չի տեղավորվում: Բացի դրանից՝ իրավունքի նորմերի տվյալ բաժանումը մշակվել է իրավաբանական գիտության կողմից ու կիրառվում է միայն գիտական աղբյուրներում ու ուսումնական

գրականության մեջ, այն դեպքում, երբ իրավական ռեժիմ կատեգորիան լայնորեն ներկայացված է տարբեր տեսակի նորմատիվ-իրավական ակտերում [3]:

Իրավաբանական գրականության մեջ իրավական ռեժիմը, տեղեկատվական-հոգեբանական մոտեցման տեսանկյունից, սահմանվում է որպես իրավական ազդեցության յուրահատուկ տեսակ, որն արտահայտված է իրավական դրդապատճառների ու իրավական սահմանափակումների որոշակի համալիրում [5, էջ 31–32]:

Այսպիսով, վերլուծելով վերոշարադրյալը՝ կարելի է ձևակերպել ռեժիմի հետևյալ սահմանումը. ***իրավական ռեժիմը նորմատիվ իրավական ակտով սահմանված և պետության կողմից ապահովվող հասարակական հարաբերությունների կոնկրետ ոլորտների իրավական կարգավորման եղանակ է, որը ժամանակի ու տարածության սահմաններում ներկայանում է իրավական միջոցների համալիրով, որոնք ստեղծում են բարեհարմարության կամ անբարեհարմարության կոնկրետ աստիճան՝ իրավունքի առանձին սուբյեկտների օրինական շահերի բավարարման համար և նպատակ ունի պետությունում ու հասարակությունում պահպանել իրավակարգը:***

ՓՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Исаев И.А. Нормативность и авторитарность. Пересечения идей. М., 2014.
2. Матузов Н.И. Правовая система и личность. Саратов, 1986.
3. Петров А.А., Шафиров В.М. Предметная иерархия нормативных правовых актов. М., 2014.
4. Скурко Е.В. Принципы права. М., 2008.
5. Терещенко Л.К. Правовой режим информации: автореф. дис. ...докт. юрид. наук. М., 2011.
6. Шамсурова Э.Ф. Правовые режимы(теоретический аспект): Дисс..канд.юрид. наук.Екатеренбург, 2001.
7. Яковлев А.М. Социальная структура общества и права. М., 2015.

ПОНЯТИЕ И ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО РЕЖИМА

ЕГОР КАРАПЕТЯН

Начальник службы «Дорожная полиция» Полиции Республики Армения, полковник полиции, соискатель Института философии, социологии и права Национальной академии наук РА

Статья посвящена одной из актуальных проблем современной юридической литературы–раскрытию понятия и характерных черт правового режима. В статье автор представляет разные мнения правоведов о понятии и особенностях правового режима, отраженные в юридической литературе. В рамках обсуждаемой темы, подчеркивается сходства и отличия терминов «правовой режим» и «правовое положение». Более того, автор также представляет взаимосвязь терминов «правовой режим» и «правопорядок».

THE CONCEPT AND FEATURES OF LEGAL REGIME

YEGOR KARAPETYAN

Head of the Traffic Police, Police Colonel Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of RA, student PHD

The article is devoted to one of actual problems of modern legal literature–the disclosure of the concept and characteristics of the legal regime. In the article, the author presents various opinions of legists which are about the concept and features of legal regime in legal literature. In the framework of the topic, the author highlights the similarities and differences between the terms «legal regime» and «legal status». Moreover, the author presents the relationship of the terms «legal regime» and «legal order».

**ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Սույն հոդվածը վարչարարության սահմանադրական հիմքերի իրացման համատեքստում ներկայացնում է վարչական հայեցողության ինստիտուտի բարելավման ուղիները, որոնք կարող են լինել կամայականությունների արգելքի սկզբունքի իրացման երաշխիք: Վարչական հայեցողությունը սահմանադրական առանցքային հիմնադրույթների, մասնավորապես իրավական որոշակիությանը, կանխատեսելիությանը, ինչպես նաև համաչափությանը համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտություն կա օրենսդրությամբ ամրագրելու այս ինստիտուտի կիրառման իրավական հիմքերն ու պայմանները, որոնք համահունչ կլինեն նշված հիմնադրույթներին և կերաշխավորեն առավելագույնս պատշաճ վարչարարություն:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. վարչական հայեցողություն, կամայականություն, համաչափություն, իրավական որոշակիություն, սահմանադրականություն, ընթացակարգային նորմեր:

Իրավական պետության կայացմանը զուգընթաց՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծվեցին իրավական մի շարք ինստիտուտներ, որոնցում կարևոր դերակատարություն ունի հայեցողության ինստիտուտը:

Հայաստանի երրորդ Հանրապետության համար առանցքային խնդիրներից էին պետաիշխանական լիազորություններով օժտված մարմինների սահմանադրական գործառույթների և իրավասությունների ներդաշնակումը,

դրանց հայեցողության սահմանների հստակեցումը, իրավունքով իշխանության սահմանափակման իրական նախադրյալների ստեղծումը, որոնք պետաիշխանական լիազորություններն իրականացնելիս կլինեին լավագույն ճանապարհը սովերային երևույթներն ու կամայականությունները հաղթահարելու գործում¹:

Համացանցային և տեղեկատվական այլ աղբյուրներում հաճախակի ենք լսում իշխանական տարաբնույթ կամայականությունների, անարդար գործելակերպի, տարբեր հարցերում պետական ու տեղական իշխանությունների կամայական վերաբերմունքի դրսևորումների, իրավակիրառ մարմնի սուբյեկտիվ նախընտրության և այլ դժվարությունների մասին: Ավանդական է դարձել պաշտոնյաներին պատկանող առևտրային տարբեր կազմակերպություններին արտոնյալ կարգով վարկերի ու հարկային արտոնությունների տրամադրումը: Բացի դրանից՝ հանրային շահը՝ որպես վարչական հայեցողության ստուգաչափ, հաճախ «կուլ է գնում» ներգերատեսչական, կորպորատիվ և մասնավոր շահերին: Վարչական հայեցողության աղավաղումը հետևանք է նաև իրավական նորմատիվ ակտերում ի հայտ եկող խնդիրների, ինչպես նաև պայմանավորված է սահմանադրական ինչ-ինչ հիմքերի բացակայությամբ:

Դրանք զգալի չափով դրսևորվում

1 Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, հոկտեմբեր, 2014, էջ 6:

են հատկապես պետական կառավարման ոլորտում. նյութական-վարչական նորմերը չեն ուղեկցվում վարչադատավարական նորմերով, ոչ ամբողջական կամ ոչ ճիշտ են սահմանված իրավական մարմինների գործառնությունները, լիազորություններն ու դրանց իրականացման թույլատրելի միջոցները, ինչպես նաև հարաբերությունները, պատասխանատվության հիմքերն ու տեսակները:

Ժամանակակից պայմաններում վարչական հայեցողության իրավական ծավալը ձևափոխվում է նաև հաստատված միջազգային իրավական ակտերի լայնածավալ կիրառման միջոցով: Դրանք ոչ միայն հիմք են, այլև կանոնակարգող կողմնորոշիչներ: Ցավոք, վարչական պրակտիկայում այս երևույթը դժվար է գարգանում, քանի որ պաշտոնատար անձինք չունեն իրազեկության բավարար մակարդակ և կառավարչական վարքագիծը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ցանկություն ու ձգտում:

Վարչական մարմինների իրազեկության բարձրացման անհրաժեշտությունը և ս պայմանավորված է արդյունավետ վարչարարության իրականացման կարևորագույն խնդրով: Պաշտոնյայի իրազեկվածության մակարդակի բարձրացումը միանշանակ կարող է դրականորեն ազդել հայեցողական լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա: Տարբեր վարչական մարմինների միջև փորձի փոխանակումը, խորհրդակցությունները, տարատեսակ համագործակցության հուշագրերի ստորագրումը, միջազգային դրական փորձի ներդրումը կարող են ձևավորել վարչարարական պատշաճ քաղաքականություն՝ երաշխավորելով անձի իրավունքների և ազատությունների բարեխիղճ պաշտպանությունը:

Վարչական մարմինների միջև խորհրդակցությունների կազմակերպումը և անցկացումը կարող են դրական ազդեցություն ունենալ նաև միատեսակ

իրավակիրառ պրակտիկա ձևավորելու գործում:

Խորհրդակցությունների արդյունքը կարող է լինել նաև այնպիսի ներդաշնակ վարչարարության իրականացումը, որը կանխատեսելի կլինի անձանց համար և ինչ որ չափով կապահովի իրավական որոշակիության սկզբունքը:

Այս տեսակետից հիշարժան է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախկին նախագահ Լ. Վիլդ-հաբերի (նախագահել է 1998-2007 թթ.) այն դիրքորոշումը, որ հենց իրավունքի միատեսակ կիրառմամբ է կյանքի կոչվում օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, հավասար իրավունքի, դատական պաշտպանության բոլորի հավասար իրավունքի միջազգային և սահմանադրական սկզբունքները, և միայն այս եղանակով է ստեղծվում իրավական որոշակիություն¹:

Արդյունքը լինում է առավել հիմնավորված հայեցողական որոշումների կայացումը: Հողվածի ուսումնասիրության առարկայից ելնելով՝ նշենք նաև, որ վարչական հայեցողության շրջանակներում օրենսդրությամբ նախատեսված որևէ տարբերակ ընտրելիս նպատակահարմար է հիմնավորումները շարադրել այնպիսի ծավալով ու հստակությամբ, որ բացառվեն հետագա տարընթերցումներն ու տարբերակված մոտեցումները: Այսինքն՝ այդ հիմնավորումները կլինեն կամայականության արգելքի սկզբունքի գործունեության երաշխիք:

Մեր խորին համոզմամբ՝ վարչական ակտերի հիմնավորված լինելը արդիական և առաջնային խնդիր է մեր երկրում: Երբեմն այս կամ այն գործի առնչությամբ ակնհայտ է դառնում, որ վարչական մարմինների իրավասու պաշտոնյաների կայացրած որոշումներն անհիմն են, ինչն անշուշտ չափազանց

1 St' u Л. Вильдхабер, Прецедент в Европейском Суде по правам человека, "Государство и право", 2001, № 12, էջ 5-12:

վնասակար գործելաճի հետևանք է: Ավելին՝ սովորական է դառնում մի երևույթ. վարչական ակտում նշվում են միայն այն դրույթները, որոնք ենթակա են կիրառման, իսկ գործում առկա հանգամանքները, մասնավորապես վարչական ակտի կարևորագույն բաղկացուցիչ հանդիսացող պատճառաբանական մասը կա՛մ բաց են թողնվում, կա՛մ տրվում են աղավաղված ձևակերպումներով: Վարչական ակտի հիմնավորվածության նպատակը վարչական վարույթի մասնակիցների համար արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների ապահովումն է, որն էլ իր հերթին կերպաշխավորի անձանց իրավունքների իրացումը, ապահովումը, պաշտպանությունը:

Նշենք նաև, որ վարչական հայեցողության սահմանադրական հիմքերի իրացման համատեքստում հայրենական օրենսդրությամբ վերապահված է բացառապես վարչական վարույթի առանձին տեսակների պարագայում առանձնահատկություններ սահմանելու իրավական հնարավորություն: Այնուամենայնիվ, պատշաճ վարչարարության սահմանադրական էությունը, մասնավորապես վարչարարության համատեքստում լիարժեք հայեցողություն դրսևորելու անհրաժեշտությունը անխուսափելի են դարձնում այդպիսի առանձնահատկություններ սահմանելու իրավական հիմքերի ամրագրումը նաև վարչարարության առնչությամբ:

Հայեցողական լիազորություններն օգտագործելիս լավագույն տարբերակ այն է, որ վարչական մարմինների իրավասու պաշտոնյաները առաջնորդվեն բացառապես օրենքով և անպայման գործեն ի շահ հասարակության, սակայն կառավարչական գործընթացի արդյունավետությանն ու որակի ապահովմանը կոչված հայեցողությունը գործնականում երբեմն ունենում է բացասական դերակատարություն՝ հանգեցնելով կառավարման մեջ այնպիսի անթույլատ-

րելի երևույթների, ինչպիսիք են չարաշահումը, կամայականությունը, շահերի նենգափոխումը և այլն: Այդ տեսակետից հիմնավոր է այն պնդումը, որ «հայեցողության խնդիրն առավել լայն դիտարկելու դեպքում առհասարակ անհնար է դառնում պատասխանել այն հարցին, թե հայեցողությունը զուտ բացասակա՞ն, թե՞ զուտ դրական երևույթ է, և ինչպիսին պետք է լինի դրա ճակատագիրը ապագայում»¹:

Վարչական մարմիններն իրենց մասնագիտական գործառույթների և խնդիրների իրականացման ընթացքում առավել մոտ են հասարակությանը, ամեն օր փոխհարաբերվում են քաղաքացիների հետ, լուծում կառավարչական կարևոր հարցեր: Ուստի այս կամ այն իրավիճակում անհատական արձագանքման անհնարիությունը կարող է հանգեցնել այդ գործառույթների կատարման անհնարիությանը, իսկ չափազանց ազատությունը կարող է ծնել չարաշահում և կամայականություն: Արդյունքում դա բացասաբար կանդրադառնա պետական իշխանության բոլոր մարմինների վրա. քաղաքացիները ոչ միայն անվստահություն կդրսևորեն պետական իշխանությունների հանդեպ, այլև պետությունը իրավական առումով կունենա ցածր վարկանիշ: Այդ պատճառով հայեցողության դրսևորումները, մասնավորապես վարչական հայեցողությունը կարգավորելու և այս ինստիտուտից դրական պտուղներ քաղելու նպատակով անհրաժեշտ է զարգացումներն ուղղորդել դեպի սահմանադրական սկզբունքները:

Իրավագիտության մեջ լիազորությունների լիարժեք իրականացումը հաճախ կապում են վարչաիրավական ներգործության այնպիսի միջոցների հետ, ինչպիսիք են իրավունքի հստակ

1 А. Пиголкин, М. Николаева, М. Студеникина и др., Правоприменение в советском государстве, М., 1985, с. 39.

ամրագրումը, հստակությունը, պաշտպանությունը, վերահսկողությունը (հսկողության, այդ թվում՝ դատական), սանկցիայի կիրառման մեթոդները, որոնք պետք է իրենց ամրագրումը ստանան վարչական ընթացակարգային նորմերի տեսքով:

Ինչ խոսք, վարչական ընթացակարգային նորմերի համահունչ ներդրումը մեծ կարևորություն կարող է ունենալ վարչարարության ընթացքում հայեցողական լիազորությունների արդյունավետ իրականացման գործում. վստահ ենք, որ այն կհանգեցնի վարչական մարմինների գործունեության որակի բարելավման:

Ինչպես նշում է Ս. Զ. Ժենետլը, «Ընթացակարգերը իրավունքի նորմերում ամրագրված պետական իշխանության մարմինների գործողությունների այն հաջորդականությունն (կարգն) են, որն անհրաժեշտ է նրանց նորմատիվային կարգով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար»:

Իրավակիրառ գործունեության մեջ վարչական ընթացակարգային նորմերի սահմանման ամենից դրական կողմը գործուն ազդեցությունն է վարչական հայեցողության իրագործման վրա:

Պետական մարմիններն իրենց մասնագիտական գործառույթների և խնդիրների իրականացման ընթացքում առավել մոտ են հասարակությանը, ամեն օր փոխհարաբերվում են քաղաքացիների հետ, լուծում կառավարչական կարևոր հարցեր: Ուստի այս կամ այն իրավիճակում անհատական արձագանքման անհնարինությունը կարող է հանգեցնել այդ գործառույթների կատարման անհնարինությանը, իսկ չափազանց ազատությունը կարող է ծնել չարաշահում և կամայականություն: Դա բացասաբար

կանդրադառնա պետական իշխանության բոլոր մարմինների վրա. քաղաքացիները ոչ միայն անվստահություն կդրսևորեն պետական իշխանությունների հանդեպ, այլև պետությունը իրավական առումով կունենա ցածր վարկանիշ:

Հանրային իշխանության մարմինները իրենց լիազորություններն իրականացնելիս հաճախ հանդիպում են իրավիճակների, որոնք առաջ են անցնում իրավական կարգավորումից: Դա պաշտոնատար անձանց հնարավորություն է ընձեռում որոշումներ ընդունել սեփական հայեցողությամբ: Վարչական իրականության իրավական համալիր կարգավորման անհնարինությունը հաշվի առնելով՝ օրենսդիրը կանխամտածված կարգավորում է հարաբերությունների որոշակի շրջանակը՝ հղում կատարելով «հայեցողությանը»:

Հայեցողության իրականացումն ընթանում է երկու ձևով՝ *հսկազոդողական* (ռեակտիվ) և *նախաձեռնողական*: Առաջինը ենթադրում է այնպիսի իրավիճակներ, որոնցում օրենսդրությունը նախապես ստիպում է գործել, պահանջում է անմիջական իրավական արձագանք, սակայն գործունեության տեսակին առնչվող հարցի լուծումը մնում է իրավակիրառ մարմնի հայեցողությանը: Նախաձեռնողական ձևը բնութագրական է նրանով, որ համապատասխան նորմերի կիրառման անհրաժեշտությունը վերջնականապես սահմանվում է ոչ թե օրենսդիրի, այլ իրավակիրառ սուբյեկտի կողմից: Վարչական հայեցողությունը ենթադրում է որոշման կայացման գործընթացում որոշակի ազատության աստիճան, որը անսահման չպետք է լինի: Ժամանակակից պայմաններում անհրաժեշտ է սահմանել վարչական հայեցողության սահմաններն ու ծավալը:

Վ. Մ. Մանոխինը դեռևս 1990 թ. անդրադարձել է գործադիր իշխանության մարմինների գործունեության մեջ վարչական հայեցողության հիմնախնդիրներին: Նա մասնավորապես նշում է.

1 С. Женетль, Административный процесс и административные процедуры в условиях административной реформы, автореф. дис. д.-ра юрид. наук, М., 2009, с. 14.

«Քանի որ հայեցողությունը գոյությունի ունի և գործում է որպես իրավաբանական երևույթ, և այդպիսին կմնա հետագայում, այն օրենսդրության և իրավակիրառ գործընթացում պետք է ստանա քաղաքացիության իրավունք: Այն չի կարելի թաքցնել «կաուչուկե» այսպիսի ձևակերպումներում, ինչպիսիք են՝ «անհրաժեշտության դեպքում», «բացառիկ դեպքերում», «նպատակահարմարության դեպքում» և այլն»¹:

Ա. Պ. Կորենևի կարծիքով՝ վարչական հայեցողությունը մարմնի՝ օրենսդրության շրջանակներով սահմանված ազատության հայտնի աստիճանն է կոնկրետ անհատական գործի իրավական լուծման ընթացքում, որը տրվում է գործի վերաբերյալ օպտիմալ որոշման նպատակներով²:

Ի վերջո, կարելի՞ է արդյոք օրենսդրությունից բացառել հայեցողությունը: Ըստ երևույթին, ո՛չ, ինչը պայմանավորված է կառավարչական գործունեության բարդ և բազմակողմ օբյեկտով: Այս ոլորտում իրավական տարբեր խնդիրների լուծումը չպետք է տեսնել հայեցողական լիազորությունների վերացման կամ առավել սահմանափակման մեջ: Վարչական հայեցողությունը կոչված է ապահովելու բարդ հասարակական հարաբերությունների կարգավորումը: Ընդհանրապես իրավական հայեցողության, մասնավորապես վարչական հայեցողության դրական ներուժը կարելի է օգտագործել վերահսկողության իրական մեխանիզմների մշակմամբ (այդ թվում՝ դատական, վարչական, հասարակական), որը կբարձրացնի հասարակության իրավագիտակցության մակարդակը: Վարչական մարմինների լիազորությունների շրջանակը պետք է հստակ և որոշակի լինի, որպեսզի բա-

ցառվի լիազորությունների կրկնությունը, որը կարող է հանգեցնել պաշտոնական անգործության: Պաշտոնատար անձինք, իրենց տրված լիազորությունների իրականացման իրավունքը ստանալով, կարող են գործել միայն սեփական հայեցողությամբ տրամադրված իրավասությունների սահմաններում, որոնց մեխանիզմը պետք է հստակ սահմանվի օրենսդրությամբ:

Այս խնդրին զուգահեռ՝ հարկ ենք համարում ամփոփ անդրադառնալ նաև վարչական մարմինների հստակ ցանկի բացակայության հիմնախնդիրներին:

Բանն այն է, որ վարչական հայեցողության իրավասությամբ օժտված մարմինների ամբողջական ցանկի բացակայության պայմաններում անիրատեսական է խոսել դրանց շրջանակներում վարչական հայեցողության սահմանների բնորոշման, ուրվագծման և որոշակիացման մասին: Ակնհայտ է, որ առանց այս հիմքերի վարչական հայեցողության ոլորտում հնարավոր չէ խոսել կոռուպցիայի և չարդարացված լայն լիազորությունների շրջանակի հիմնախնդիրների լուծման մասին, քանի որ չկան միասնական մոտեցումներ և նշված մարմինների կազմի լիարժեք ընկալում:

Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի, մասնավորապես հարկային, մաքսային, քաղաքաշինական ոլորտների շատ օրենսդրական ակտերում, արտոնագրման վերաբերյալ օրենսդրությունում հաճախ են կիրառվում գերմանական իրավագիտական ուսմունքից վերցված իրավական անորոշություն պարունակող հասկացություններ՝ «բավարար հիմքեր», «ըստ անհրաժեշտության», «իրավունք ունի», «կարող է», և այլն, որոնք վարչական մարմիններին բավական լայն հնարավորություն են տալիս հայեցողական լիազորությունները ոչ օրինաչափ կիրառելու:

Օրինակ՝ օրենսդիրը ՀՀ Մաքսային օրենսգրքի 141 հոդվածի 1-ին մասի

1 В. Манохин, Правовое государство и проблема управления по усмотрению, "Советское государство и право", 1990, N 1, с. 34-35:

2 Sնն А. Коренев, Нормы административного права и их применение, М., 1978, էջ 421:

իրավակարգավորմամբ՝ մաքսային հսկողությունն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը և տրամադրման կարգը սահմանելու լիազորությունը պատվիրակել է Հայաստանի Հանրապետության Կառավարությանը, որը պատվիրակված լիազորությունների շրջանակում 21.11.2003 թ. ընդունել է թիվ 1779-Ն որոշումը: Նշված որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետով սահմանելով որպես հայտարարատու հանդես գալու իրավունք ունեցող անձանց և լիազորությունների ծավալը՝ ոչ իրավաչափորեն, իրավաբանական տեխնիկայի ոչ հստակ կիրառման հետևանքով Մաքսային օրենսգրքի համապատասխան իրավակարգավորման համեմատությամբ սահմանափակել է մաքսային հայտարարագիր ներկայացնելու սուբյեկտների կազմը (համենայն դեպս իրավակիրառ պրակտիկայում այդ միտումը ակնհայտ է): Նշված խնդիրը հնարավոր է եղել հարթել և իրավակիրառ պրակտիկան ուղղորդել Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառնություն իրացման արդյունքում: Այսպես, ՀՀ Վճ-

ռաբեկ դատարանը թիվ ՎԴ 0990/05/11 գործով կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթն անհրաժեշտ է մեկնաբանել՝ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավամեկնաբանողական կանոնը, համաձայն որի՝ եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը մեկնաբանվում է՝ առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները:

Այսպիսով, անհրաժեշտ է կատարելագործել վարչական մարմինների գործունեության մեջ վարչական հայեցողության իրականացման իրավական մեխանիզմները՝ հիմքում ունենալով իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների առաջնահերթության գաղափարը, ինչը կնպաստի կամայականության ու կոռուպցիայի տարածման արգելքին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, հոկտեմբեր, 2014:
2. Вильдхабер Л., Прецедент в Европейском Суде по правам человека, “Государство и право”, 2001, № 12.
3. Женеть С., Административный процесс и административные процедуры в условиях административной реформы, автореф. дис. д.-ра юрид. наук, М., 2009.
4. Корнев А., Нормы административного права и их применение, М., 1978.
5. Манохин В., Правовое государство и проблема управления по усмотрению, “Советское государство и право”, 1990, N 1.
6. Пиголкин А., Николаева М., Студеникина М. и др., Правоприменение в советском государстве, М., 1985.

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНСТИТУТА АДМИНИСТРАТИВНОГО
УСМОТРЕНИЯ В КОНТЕКСТЕ РЕАЛИЗАЦИИ КОНСТИТУЦИОННЫХ ОСНОВ
АДМИНИСТРИРОВАНИЯ

ВАГАРШАК САРГСЯН

Аспирант Академии государственного управления РА

Данная статья рассматривает пути совершенствования института административного усмотрения в контексте реализации конституционных основ администрирования, которые могут стать гарантией осуществления принципа запрета произвола. В целях приведения административного усмотрения в соответствие с основными конституционными положениями, в частности, о правовой определенности, предсказуемости, а также пропорциональности, необходимо закрепить в законодательстве правовые основы и условия применения данного института, которые будут соответствовать упомянутым положениям и будут гарантировать максимально надлежащее администрирование.

WAYS OF IMPROVEMENT OF ADMINISTRATIVE DISCRETION IN THE CONTEXT OF
THE IMPLEMENTATION OF ADMINISTRATION CONSTITUTIONAL BASIS

VAGHARSHAK SARGSYAN

Ph.D Student of the Public Administration Academy of the RA

This article studies the ways of improvement of administrative discretion institute in the context of the realization of constitutional basis of administration, which can be a guarantee of realization of arbitrariness prohibition principle. In order to comply the administrative discretion with the constitutional fundamental basis, particularly with legal certainty, predictability and proportionality there is a need to fix under the legislation the legal basis and terms, which will be in compliance with the mentioned basis and will guarantee maximum proper administration.

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆ ԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ՝ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հետձգնաժամային ժամանակահատվածում, չնայած որոշակի դրական շարժընթացին, մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները չվերադարձան մինչձգնաժամային մակարդակին, ինչպես նաև չապահովվեց երակարաժամկետ կայուն տնտեսական աճ ՀՀ-ում: Հողվածում վերլուծվել են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների շարժընթացը, ինչպես նաև Հայաստանում կայուն տնտեսական աճի ապահովման համատեքստում ներկայացվել են ներդրումների խթանման ուղղությամբ մի շարք մոտեցումներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ներդրումների խթանում, կայուն տնտեսական աճ, հակաձգնաժամային միջոցառումներ, մակրոտնտեսական ցուցանիշների շարժընթաց:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման վերլուծությունը վկայում է, որ սկսած 1990-ական թվականների կեսերից Հայաստանը եղել է արագ զարգացող անցումային երկրներից մեկը: Շուկայական ուղղվածություն ունեցող բարեփոխումների հետևողական իրականացման արդյունքում արդեն 2002 թվականից ՀՀ տնտեսությունը թեակոխել էր տնտեսական աննախադեպ վերելքի փուլ՝ գրանցելով երկնիշ տնտեսական աճ (միջինում շուրջ 13%), սակայն 2008 թվականի համաշխար-

հային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում մեր հանրապետությունում տնտեսական կայուն աճը խաթարվեց:

Այս ճգնաժամի գլխավոր առանձնահատկություններից մեկը տեղ գտած գործընթացների գլոբալ բնույթն էր: Սա առաջին ճգնաժամն էր, որն ուներ գլոբալիզացիայի այդպիսի մասշտաբ: Համաձայն Ռոչեստերի համալսարանի պրոֆեսոր Մ. Ագիյարի և Հարվարդի համալսարանի նրա համահեղինակ Գ. Գոպինատի վերջին հետազոտությունների՝ տնտեսական աճի տատանումները զարգացած և զարգացող երկրներում խիստ տարբերվում են¹: Հետևաբար տնտեսական ճգնաժամի ազդեցությունները այդ երկրների վրա զգալիորեն կարող է տարբերվել:

Միջազգային փորձագետները նշում են վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի մի շարք ընդհանրացված պատճառներ: Դրանք են՝

- տնտեսության զարգացման բնականոն ցիկլերը.
- վարկային շուկայի գերակտիվացումը կամ հիփոթեկային ճգնաժամը.
- հումքի բավական բարձր գները.
- անարդյունավետ ֆինանսա-

1 M. Agiyar, Gh. Ghopenhat Economic Crisis: Indonesia: Indonesia Agrees to Revised IMF Economic Plan; Political and Economic Upheaval Continues// Journal of Economics, 2007, 9, pp. 60-69

կան կարգավորման մեթոդների կիրառությունը տարբեր երկրներում¹.

Նշենք, որ համաշխարհային տնտեսական վիճակի էական վատթարացումը հատկապես բացասական ազդեցություն ունեցավ բաց տնտեսություն ունեցող երկրների, այդ թվում՝ Հայաստանի վրա: Ճգնաժամի հիմնական հարվածն իր վրա ընդունեց տնտեսության իրական հատվածը՝ արձանագրելով անկման միտումներ արդեն 2008 թվականի վերջին եռամսյակից: Դրանք ֆինանսատնտեսական ճգնաժամի երկրորդային ազդեցություններն էին, որոնք ՀՀ տնտեսության վրա հետևյալ ուղղություններով՝

- արտերկրից ստացվող մասնավոր տրանսֆերտների զգալի կրճատում.

- համաշխարհային շուկաներում ապրանքների, հատկապես հումքի և հատկապես մետաղների գների նվազում, ինչպես նաև արտահանվող ապրանքների պահանջարկի անկում՝ համաշխարհային տնտեսության մեջ դրսևորված համախառն պահանջարկի անկման հետևանքով.

- դրամի մեծ չափով արժեզրկում:

Հայաստանում համեմատաբար ավելի խորը անկման հիմնական պատճառը դեռևս 2000 թվականից ՀՀ-ում արձանագրվող տնտեսական աճի կառուցվածքային առանձնահատկություններն էին, այն է՝ 2000–2008 թվականներին տնտեսական բարձր աճն արդյունք էր ոչ արտահանելի հատվածի և, հատկապես՝ շինարարության ձյուղի աննախադեպ աճի, ինչը ՀՀ ներհոսող կապիտալ հոսքերի կտրուկ ավելացման և շինարարության ոլորտում այդ միջոցների կենտրոնացման արդյունք էր: Դրա վկայությունն է, որ

2009 թվականին արձանագրված 14.1% անկման 10.5 տոկոսային կետը բաժին էր ընկնում շինարարության ոլորտին:


Տնտեսական բարձր աճով և արտերկրից ստացվող դրամական փոխանցումների խոշորածավալ հոսքերով պայմանավորված՝ մինչձգնաժամային հատվածում մեծ էր հատկապես մասնավոր ներդրումների ծավալը, այդ թվում՝ բնակարանային շինարարության ոլորտում: 2008թ. արդեն ներդրումների և ազգային խնայողությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում բարձրացավ՝ կազմելով համապատասխանաբար 43% և 32%, սակայն ձգնաժամի ընթացքում այս ցուցանիշը ՀՆԱ-ում կտրուկ իջավ՝ պայմանավորված հիմնականում մասնավոր դրամական փոխանցումների նվազմամբ, իսկ ազգային խնայողությունները նվազեցին ավելի մեծ չափով:

Տնտեսության զարգացման վերոնշյալ առանձնահատկություններն իրենց արտացոլումն են գտել ինչպես տնտեսության տարբեր հատվածների զարգացումներում, այնպես էլ իրականացված մակրոտնտեսական քաղաքականության ուղղություններում:

Չնայած 2009 թվականին արձանագրված խորը անկմանը՝ հետձգնաժամային ժամանակահատվածում, շնորհիվ կոորդինացված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների, հնարավոր եղավ խուսափել մակրոտնտեսական վիճակի ապակայունացումից. արդեն 2010–2013 թվականներին տնտեսությունում արձանագրվեցին տնտեսական աճի որոշակի միտումներ, սակայն, չնայած հետձգնաժամային ժամանակահատվածում որոշակի դրական շարժընթացին, մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները չվերադարձան մինչձգնաժամային մակարդակին, ինչպես նաև չապահովվեց երակարժամկետ կայուն տնտեսական աճ

1 Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները / Կ. Սարգսյան. – Եր. : ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016. – էջ 2017:

ՀՀ-ում: Հետձգնաժամային ժամանակահատվածում իրական ՀՆԱ-ի ամենամեծ աճի տեմպը արձանագրվել էր 2011 թ-ին՝ 4.7 %, իսկ արդեն 2012–2015 թթ իրական աճի տեմպերը դանդաղել էին և 2015 թ-ին այն կազմել էր 3.01 % (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՀ-ում իրական ՀՆԱ-ի, արդյունաբերության և ներդրումներ /ՀՆԱ աճի տեմպերի(%)շարժը/թացքը՝ 2005–2015 թթ-ին՝:

Նմանատիպ միտում էր արձանագրվել արդյունաբերության իրական աճի տեմպի պարագայում: Թեպետ 2015 թ. արդյունաբերության դրական աճի տեմպ էր արձանագրվել, սակայն այն պայմանավորված էր հիմնականում հանքագործական արդյունաբերության էլեկտրականության, գազի, գուլորշու և լավորակ օդի մատակարարման աճի հաշվին, մինչդեռ մշակող արդյունաբերության պարագայում 4. 0% անկում էր գրանցվել²:

2012 թ-ից սկսած՝ համեմատաբար դանդաղ տեմպերով մինչև 2015 թ. ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի նվազեցվող արժեքները,

պայմանավորված էին համախառն կուտակման բացասական աճի տեմպերով (2013 թ-ին՝ -9.1 %, 2014 թ-ին՝ -3.0 %, 2015 թ-ին՝ -1. 2 %)՝: Ինչ վերաբերում է գործազրկության մակարդակին, ապա այն մեր հանրապետությունում ձգնաժամից հետո էականորեն չի նվազել՝ 2015 թ-ին մնալով դեռևս 18.5 %-անոց մակարդակի վրա:

Պետական պարտքի ցուցանիշը մեր հանրապետությունում ևս անշեղորեն աճել է հետձգնաժամային հատվածում և 2015թ. -ին կազմել է 46. 6%:

Այսպիսով՝ դիտարկելով ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան՝ հետձգնաժամային հատվածում պետք է փաստել, որ վերջիններս չվերադարձան մինչձգնաժամային մակարդակին, ինչպես նաև չապահովվեց երկարաժամկետ կայուն տնտեսական աճ ՀՀ-ում:

Մեր հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերում և ոլորտներում ֆինանսատնտեսական ձգնաժամի ազդեցությունները վերջնականապես հաղթահարելու, ազգաբնակչության զբաղվածության մակարդակը բարձրացնելու և կայուն տնտեսական աճ ապահովելու հիմնական ելքերից մեկը, կարծում ենք, տնտեսության վրա հարկային բեռի թուլացումն է, ինչպես նաև անհրաժեշտ ծավալով օտարերկրյա ներդրումների ներգրավումն է: Այս առումով ևս լուրջ խնդիրներ կան ծառայողականության առջև, ինչի մասին է վկայում հետձգնաժամային տարիներին օտարերկրյա ներդրումների ծավալների շարժը/թացքը:

Միայն համեմատության համար նշենք, որ 2008 թվականին օտարերկրյա համախառն ներդրումները մեր հան-

1 Գծապատկեր 1-ը կազմվել է հեղինակի կողմից՝ հետևյալ աղբյուրների հիման վրա՝ International Monetary Fund, World Economic Outlook Database, April 2016 (<http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/01/weodata/index.aspx>), World Bank, World Development Indicators Online Database (Last Updated: 08/10/2016, <http://databank.worldbank.org/data/reports.aspx?source=world-development-indicators>):

2 ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների ՀՆԱ-ի արտադրության «ՀՆԱ» սովյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>) ըստ «ԱՀՀ 2008»:

3 ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների ՀՆԱ-ի արտադրության «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» սովյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>) ըստ «ԱՀՀ 2008»:

րապետությունում կազմել են 1257643.1 հազ. ԱՄՆ դոլար, որոնցից ուղղակի ներդրումները՝ 1000911.2 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2014 թվականին՝ 612900.0 հազ. ԱՄՆ դոլար, որից 404000.0 հազ. ԱՄՆ դոլարը ուղղակի: Ինչպես երևում է ներկայացված տվյալներից՝ ներդրումների ծավալը 2008 թվականից հետո կտրուկ նվազման միտումներ է ունեցել՝ ավելի քան կրկնակի: Չնայած մի շարք տարիներին արձանագրել է այս ցուցանիշի որոշակի աճ, սակայն, այն բավական հեռու է եղել նույնիսկ 2009 թվականի մակարդակից:

Ակներև է, որ նման պարագայում ներդրումների ներգրավման աջակցությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության առանցքային ուղղություններից մեկը, որը նպատակաուղղված է ներդրումներին խոչընդոտող գործոնների թուլացմանը կամ վերացմանը, ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, ինչպես նաև վերոհիշյալ նպատակների իրականացմանը նպաստող շուկայա-

կան ենթակառուցվածքների զարգացմանը:

Ներդրումների խթանման ուղղությամբ՝ ՀՀ կառավարության մոտեցումները, կարծում ենք, պետք է լինեն հետևյալը՝

- ներդրողների համար ստեղծել բարենպաստ միջավայր տնտեսության բոլոր ոլորտներում՝ ապահովելով կայուն և կանխատեսելի պայմաններ գործարքների և ներդրումների պատշաճ իրավական պաշտպանության համար.

- նվազեցնել ներքին ներդրումների ռիսկը՝ վերացնելով հարկային և մյուս կարգավորող և վարչական սահմանափակումները.

- տնտեսության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ դիվերսիֆիկացնել տնտեսության կառուցվածքը:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ ներդրումային քաղաքականության իրականացումը կլուծի մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ նոր աշխատատեղերի ստեղծումը, տնտեսության արդիականացումը և դիվերսիֆիկացումը՝ կարևոր նախադրյալներ ստեղծելով կայուն տնտեսական աճի համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. M. Agiyar, Gh. Ghopenhat Economic Crisis: Indonesia: Indonesia Agrees to Revised IMF Economic Plan; Political and Economic Upheaval Continues// Journal of Economics, 2007, 9, pp. 60-69
2. Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները / Կ. Սարգսյան. -Եր. : ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016. - 416 էջ
3. ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների ՀՆԱ-ի արտադրության «ՀՆԱ» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>)՝ ըստ «ԱՀՀ 2008»:
4. International Monetary Fund, World Economic Outlook Database, April 2016 (<http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/01/weodata/index.aspx>), World Bank, World Development Indicators Online Database (Last Updated: 08/10/2016, <http://databank.worldbank.org/data/reports?source=world-development-indicators>):

ПРОБЛЕМЫ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ В КОНТЕКСТЕ УСТОЙЧИВОГО
ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РА

КАРЕН САРГСЯН

*НАН РА, Международный научно-образовательный центр, заведующий кафедрой
"Экономика и менеджмент", кандидат экономических наук, доцент*

Несмотря на определенную положительную динамику в посткризисный период, основные макроэкономические показатели не достигли докризисного уровня, а также не был обеспечен долгосрочный устойчивый экономический рост в РА. В статье проанализирована динамика основных макроэкономических показателей, а также представлен ряд подходов, направленных на стимулирование инвестиций в контексте обеспечения устойчивого экономического роста в Армении.

THE ISSUES ON ATTRACTING INVESTMENTS IN THE CONTEXT OF SUSTAINABLE
ECONOMIC GROWTH IN THE RA

KAREN SARGSYAN

*International Scientific-Educational center of NAS RA
Head of the Chair "Economics and Management",
Candidate of Economic Sciences, Associate Professor*

Despite some certain positive dynamics in the post-crisis period, the main macroeconomic indicators have not reached pre-crisis levels, and a long-term sustainable economic growth in the RA was not secured. The article analyzes the dynamics of the main macroeconomic indicators, and presents a number of approaches aimed at stimulating investment in the context of sustainable economic growth in Armenia.

ԱՆՆԱ ԲԱՐՈՅԱՆ

*Հայաստանի «Քեմբրիջ» միջազգային դպրոցի մենեջեր,
«Ռեզարդ Գրուպ» ընկերության մարդկային ռեսուրսների ղեկավար,
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
«Բիզնեսի կառավարում» բաժնի մագիստրոս*

ՆԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն,
յունաբուսագիտության և կառավարման ամբիոն, դասախոս*

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Զարգացող երկրների թույլ արտադրողականության ցածր մակարդակի պատճառներից մեկը նորարարական գործողությունների ոչ բավարար ցուցանիշն է, որը կարող է պայմանավորված լինել, ինչպես հնուտ աշխատուժի բացակայությամբ և խրախուսմամբ, այնպես էլ գիտահիմնված պետական ծրագրերի ցածր կատարողականությամբ: Բարձր մակարդակի ներդրումներ իրականացնող երկրները, որոնք հիմնականում զբաղված են հանքահումքային արտադրությամբ, այլ ոչ թե տեխնոլոգիաների զարգացմամբ «ռեսուրսային անեծքի» տնտեսության ռիսկի առջև են կանգնում: ¹ Տեխնոլոգիաների վրա ներդրումներ իրականացնելը երաշխավորում է շարունակական արտադրողականության աճ և ներուժ, ուստի կարևոր է կենտրոնանալ այն գործոնների վրա, որոնք ներգրավված են զարգացնելու տեխնիկական արդյունավետությունը և տեխնոլոգիական փոփոխությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. գիտական հետազոտություն, առևտրայնացում, զարգացման միտումներ, նորարարական լուծումներ:

Գիտական տեխնոլոգիաների առաջընթացը, գիտական հետազոտություն-

ների և նորարարության առևտրայնացման հիմնահարցերը հիմնականում կապված է պետությունների գիտական հետազոտությունների և նորարարական գաղափարներով հարուստ արտադրանքների, արտադրական հարաբերությունների և մի շարք այլ մրցակցային առավելությունների առաջացման հետ: Հարավային Կորեայի ներկայիս կառավարությունը շարունակում է երկրի ինովացիոն համակարգի զարգացումը 2013թ. մշակված «Կրեատիվ տնտեսության ծրագրի» շրջանակներում: Խթանելով կրեատիվությունը տնտեսությունում՝ այս ծրագիրը ներառում է առանձնապես հեռանկարային և համապարփակ միջոցառումների շարք, որն ուղղված է խթանելու նորարարությունը և գիտելիքահենք տնտեսությունը: ²

Չնայած համաշխարհային ֆինանսական ճգնաժամի կողմից առաջացած բյուջեի սղությանը՝ Կորեայի կառավարությունը ներդրումներ է իրականացրել հետազոտության և զարգացման վրա (R&D): Կառավարությունը 2012 թ. ներդրում է կատարել ՀՆԱ-ի մինչև 5% հետազոտության և զարգացման վրա, արդյունքում, 2012 թ-ին ներդրումը 1, 5

1 Harvard Business Review–Россия, “Проклятые сырьем”, январь–февраль 2010, стр.42

2 MSIP (2013), “Korea’s Creative Economy Plan”, Press release, June 2013, Korea, and MOSF (2013), “Plan for Venture and Start-up Ecosystem”, May 2013, Korea.

անգամ ավելի բարձր էր քան 2008թ-ին: Համաձայն գիտության և տեխնոլոգիայի հնգամյա ծրագրի (2013–17)՝ ներդրումները շարունակվում են և ներկայիս կառավարությունը նախատեսում է հասցնել ներդրումները տարեկան միջին 18, 5 տրլն KRW մինչև 2017 թ. (35%-ով աճ նախորդ կառավարության համեմատ), դեռ ավելին հետազոտության և զարգացման վրա ծախսերի 40% նախատեսված է ուղղորդել հիմնարար հետազոտությունների վրա (2011 թ.– 30.7%): Ներդրումներն ուղղված են ընդհանուր ամամբ զարգացող 120 տեխնոլոգիաների վրա, հատկապես 30 առաջնահերթ տեխնոլոգիաների հինգ ոլորտում (տոցիալական ապահովություն, առողջապահություն, շրջակա միջավայր, SCS և այլ ոլորտներ):¹

Հետաքրքիր է նաև դիտարկել հետխորհրդային Հստոնիայի օրինակը, որը «Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության ինդեքս 2016» զեկույցում երկրների առաջին տասնյակում է:² Վերջին տասնամյակի ընթացքում Հստոնիան ամրապնդել է իր հետազոտության, զարգացման և ինովացիոն համակարգը՝ նախկին խորհրդային համակարգի շուկայական բարեփոխումների միջոցով: Հստոնիան ունի համեմատաբար ուժեղ հանրային և համալսարանական հետազոտական համակարգ, մարդկային կապիտալի բազա, ինտերնետ ենթակառուցվածք և լավ կապեր համաշխարհային գիտելիքների ցանցերում: 2008թ. Հստոնիայի համար շրջադարձային էր, ավարտվեց ութ տարվա արագ տնտեսական աճը և ՀՆԱ-ն նվազեց 3.6%, չնայած տնտեսական ձգնաժամին 2008 թ. հետազոտության և զարգացման ծախսերը կազմում էին ՀՆԱ-ի 1.28%, իսկ

2010թ. աճեցին՝ մինչև 1.63%:³ «Գիտելիքահենք Հստոնիա»․ այսպես է կոչվում հետազոտությունների զարգացման և ինովացիոն ռազմավարության ծրագիրը, որտեղ սահմանված են հիմնական նպատակները և տեխնոլոգիական առաջնահերթությունները: Ծրագրի հիմնական նպատակներն են բարձրացնել հասարակական հետազոտությունների և մասնավոր հատվածի նորարարության որակը, զարգացնել մարդկային կապիտալը և ձեռնարկությունների նորարարական կարողությունները, ինչպես նաև քաղաքականություն մշակել երկարաժամկետ աճի համար: «Գիտելիքահենք Հստոնիա» ռազմավարական ծրագրում առանձնացված ոլորտներն են՝ SCS, էներգետիկ տեխնոլոգիաները, կենսատեխնոլոգիան, բնապահպանական և բժշկական տեխնոլոգիաները: Հստոնիայի կառավարությունը մտադիր է խթանել գործարար նորարարությունը ուղիղ ֆինանսավորմամբ, օրինակ ինովացիոն վաուչերներով և ոչ-ֆինանսական միջոցներով:

Գիտական հետազոտությունների և նորարարության միջազգային առևտրայնացման միջոցով կազմակերպությունների համար բացվում են ազգային տնտեսությունների սահմանները, ընդլայնվում ինտեգրման հնարավորությունները:

Գիտական հետազոտությունների և նորարարության առևտրայնացման զարգացման հեռանկարները պետք է նախանշվեն և ծրագրվեն գիտական հետազոտությունների և նորարարության առևտրայնացման համաշխարհային շուկայի զարգացման միտումներին համապատասխան: Հայաստանի Հանրապետությունում գիտական հետազոտությունների առևտրայնացման հիմնահարցերի ուսումնասիրությունը, վերլուծությունը և այդ հիմնահարցերի

1 OECD Reviews of Innovation Policy Industry and Technology Policies in Korea, էջ 47

2 https://www.cba.am/AM/panalyticalmaterials-researches/For%20webpage_HF_2016.pdf

3 <http://www.oecd.org/estonia/sti-outlook-2012-estonia.pdf>

հնարավոր տեսական ու կիրառական լուծումների մշակումը, որոնք նպաստում և խթանում են տնտեսության հետագա զարգացումը, արդիական են և հրատապ:¹

2013–14 թթ. ՄԱԿ–ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի փորձագետների կատարած ուսումնասիրությունների ու քննարկումների հիման վրա պատրաստվել է Հայաստանի ինովացիոն զարգացման զեկույցը, որի նպատակն էր բազմակողմանիորեն գնահատել ինովացիայի բնագավառում Հայաստանում առկա վիճակն ու ներուժը և համապատասխան խորհրդատվություն տրամադրել ՀՀ կառավարությանը՝ ինովացիոն գործընթացների կազմակերպման ուղղությամբ առավել արդյունավետ քաղաքականության մշակման գործում: Զեկույցում հանգամանորեն ներկայացված են ՀՀ գիտական և գիտատեխնիկական ոլորտը, ազգային գիտահնովացիոն համակարգն ու քաղաքականությունը, գիտություն–արտադրություն կապն ու ինովացիոն գործընթացներում համագործակցությունը, ինովացիոն ձեռնարկատիրության ֆինանսավորման խնդիրները:²

Այսօր Հայաստանում գիտական հետազոտությունները և նորարարությունը առևտրայնացվելու լայն հնարավորություններ ունեն, հատկապես համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման ոլորտը, գործիքաշինության, կենսատեխնոլոգիաների, բժշկական գենետիկայի և էներգախնայողության ոլորտները: 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից գիտության ոլորտի ֆինանսավորման ծավալը կազմել է 14, 2 մլրդ դրամ, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի քաղաքականության համաձայն՝ առաջիկա տարիներին ավել-

լանալու են գումարները կիրառական արդյունքների ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների համար:

Տեխնոլոգիական ոլորտը Հայաստանի այն եզակի ոլորտներից է, որը զարգանում է ոչ միայն Երևանում, այլ նաև մարզերում: ՏՏ լուրջ ներուժ կա ողջ երկրում:³ Հայաստանը բարձր տեխնոլոգիաների ոլորտում հասել է մի հանգրվանի, երբ կան հաջող նախաձեռնություններ շղթայի բոլոր օղակներում՝ տեխնոլոգիական կենտրոններ ու լաբորատորիաներ՝ մարզերում, կրթական, ինովացիոն կենտրոններ, ինկուբատորներ, վենչուրային հիմնադրամ՝ Երևանում և այլ մարզերում, իսկ շղթայի սկիզբը դրվեց 2002 թվականին՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի ստեղծմամբ: Վերջին տարիներին Հայաստանում ՏՏ, իսկ այժմ նաև ինժեներական և պաշտպանության ոլորտի պետական կարևորության խոշոր ծրագրեր է իրականացվում: Կարևորելով շուկայի պահանջներին համապատասխան մրցունակ կադրերի վերապատրաստման գործառույթը, երիտասարդների մասնագիտական կարողությունների զարգացումը և սկսնակ թիմերին ու ընկերություններին աջակցությունը՝ ստեղծվել են մի շարք ուսումնական, ինովացիոն կենտրոններ:

Շնորհիվ այդ նախաձեռնությունների՝ տարեկան պատրաստվում և վերապատրաստվում են ավելի քանի 3000 մասնագետներ, 50–ից ավել կազմակերպություններ ստանում են աջակցություն, ներգրավում են ներդրումներ, այդ թվում՝ վենչուրային: Առհասարակ, տեխնոկենտրոնները ոչ միայն զբաղվում են բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացմամբ, ներդրումների խթանմամբ, նոր աշխատատեղերի ստեղծմամբ, այլ նաև կանխում են արտագաղթը, կերտում են որոշակի մշակույթ, մտածե-

1 Գիտական մշակումների առևտրայնացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ա.Մարկոսյան, Զ.Մկրտչյան, «21–րդ դար», թիվ 3 (9), 2005թ, էջ 120:

2 <http://scs.am/am/f258495314eedca116211602>

3 UNESCO Science Report: towards 2030 – Executive Summary

լակերպ, կատարում են ուղղորդիչ դեր և, ամենակարևորը, իրենց շուրջ ձևավորում են երիտասարդության համար գրավիչ միջավայր:

Հայաստանում ավելի ու ավելի շատ երիտասարդներ են ձգտում «start-up» ստեղծել: «Start-up» ընկերությունները Հայաստանում ֆինանսավորում ստանում են մեծամասամբ գլոբալ շուկայի վրա կենտրոնացած նախագծերը: Հայաստանում գործում են կազմակերպություններ և ծրագրեր, որոնք աջակցում են սկսնակ ընկերությունների ստեղծմանը և խթանում իրենց հետագա զարգացմանը, իրականացնում են մի շարք դրամաշնորհային նախագծեր, վերապատրաստման և աջակցման ծրագրեր:

ՀՀ-ում գիտահետազոտական հաստատությունների և «start-up» ընկերությունների կողմից ծրագրերի իրականացման խոչընդոտներն ու հիմնական խնդիրները հասկանալու համար 2016 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրականացվել է հարցում:¹

Ստորև ներկայացված են հարցադրումները և ստացված արդյունքները՝

1. Ո՞րոնք են ընթացիկ ծրագրերի իրականացման հիմնական խնդիրները.

- հիմնարար գիտական հետազոտությունները ենթակա չեն առևտրայնացման լայն շուկայի համար, իսկ նեղ մասնագիտացված շուկա ՀՀ-ում առկա չէ և չի կարող լինել:

Միջազգային շուկան կասկածամտորեն է վերաբերվում մեզ և հատկապես խուսափում է երկարատև համագործակցությունից տարածաշրջանի անկայուն պայմաններում գտնվելու պատճառաբանմամբ,

- հեռավար դասընթացների անտրակայնացում,
- արտասահմանյան կապերի բացակայություն,

- մասնագիտացված մարդկային ռեսուրսների պակաս,

- վաճառքները (գտնել պատվիրատուներ) ավելացնելու խնդիրներ,

- լավ շուկայագետների պակաս,
- ֆինանսների բացակայության պակաս, պետական աջակցության ու օժանդակության պակաս:

2. Ի՞նչ խնդիրներ և հեռանկարներ ունի Հայաստանը գիտական հետազոտությունների և նորարարությունների զարգացման համար.

- պետական աջակցություն,
- ոչ բավարար հետաքրքրություն դեպի նորարարություններ,

- վստահություն,
- երիտասարդ մասնագետները ունեն բարձր ներուժ, որը պետական մակարդակով աջակցություն ստանալու դեպքում կնպաստի գիտական հետազոտությունների և նորարարությունների զարգացմանը,

- նոր սերնդի լաբորատորիայի ստեղծում,

- կրթությունը և կարճաժամկետ մտածողությունը,

- արտասահմանյան վենչուրային հիմնադրամները պետք է ներկայացուցչություններ ունենան Հայաստանում,

- պետական և մասնավոր ընկերությունների ոչ բավարար համագործակցություն,

- համաշխարհային շուկաների միտումների թույլ իմացություն, համապատասխան մտածելակերպի բացակայություն,

- խնդիրների առևտրայնացման գլոբալ փորձի պակաս:

3. Ի՞նչ խնդիրների հետք են առնչվում ընկերությունները՝ ներդրումներ ներգրավելու համար.

- ադմինիստրատիվ և հաշվապահական խնդիրներ,

- անվստահություն, ռիսկայնություն, ներդրումների արդարացման երկար ժամանակահատված,

- բարձր հարկեր ՀՀ-ում,

¹ <https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScqOr-3rPGNSy2CQ4VMNizsZLZv9oTYadVp0VCByAo2g7ArZg/viewform>

- մարդկային ռեսուրսներ համապատասխան նորարարական գաղափարների իրականացման համար,
 - օրենսդրության թերի իմացություն,
 - արտասահմանյան նոր կապերի հաստատում,
 - համապատասխան ֆինանսական գործիքները Հայաստանում դեռևս կայացման փուլում են, հետևաբար փնտրվում են այլ աղբյուրներ,
 - հարկային անհամապատասխանություններ, մասնագետների պակաս:
4. *Գիտահետազոտական կառույցի և բիզնեսի հետ համագործակցում է հասարակությունը, թե՞ ոչ.*
- չկան այնպիսի կենտրոններ, որոնց հետ կարելի է համագործակցել և գտնել խնդրի լուծումները: ՀՀ գիտական կենտրոնները մեծամասամբ գնտ-

վում են պետական հովանու ներքո, շատ ժամանակ հին և պատկառելի տարիք ունեցող դասախոսակազմի ձեռքում (համացանցի օգնությամբ ավելի շատ բաներ կարելի է սովորել և անել):

- անհրաժեշտ հարթակ չկա,
- չեն հասկանում կամ մոնոպոլիզացված պետական ծառայություններն են ուզում առաջ տանել, որոնք ավելի վատ ու թանկ են:

Վիճակագրական տվյալները փաստում են, որ կայուն տնտեսական աճ ապահովում են այն երկրները, որոնք զգալի ֆինանսական միջոցներ են ուղղում գիտական հետազոտությունների և նորարարության իրականացման և առևտրայնացման վրա, որտեղ գիտական հաստատությունների և բիզնեսի միջև հետադարձ կապ կա:

ПРОБЛЕМЫ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ КОММЕРЦИАЛИЗАЦИИ РЕЗУЛЬТАТОВ НАУЧНЫХ ИССЛЕДОВАНИЙ И ИННОВАЦИОННЫХ РЕШЕНИЙ

АННА БАРОЯН

Менеджер Международной школы "Кембридж" в Армении, Руководитель человеческих ресурсов компании Регарт групп, магистрант по специальности "Бизнес-менеджмент", Международного научно-образовательного центра НАН РА

НАРИНЭ МАНУКЯН

НАН РА, Международный научно образовательный центр, кафедра экономики и менеджмента, преподаватель

Изучение, анализ коммерциализации научных исследований и инноваций и разработка прикладных решений имеют важное значение для нашей республики. При поддержке государства и частного сектора осуществляются программы, содействующие коммерциализации научных исследований и инноваций, однако этого недостаточно, поскольку налицо некоторые проблемы.

PROBLEMS OF COMMERCIALIZATION OF SCIENTIFIC RESEARCH RESULTS AND
INNOVATION SOLUTIONS AND THEIR DEVELOPMENT TRENDS IN THE RA

ANNA BAROYAN

*Manager of Cambridge International School in Armenia,
Head of HR Department of the Regart group company,
International Scientific–Educational Center of NAS RA,
Master’s degree student of “Business Management”*

NARINE MANUKYAN

*International Scientific–Educational Center of NAS RA,
Department of Economics and Management, Lecturer*

The study of analysis of the scientific research and innovation commercialization, as well as the development of its theoretical and applied solutions are essential issue for our country.

There are many ongoing and planned programs for the commercialization of scientific research and innovation by governmental and private sectors, although it is not enough, because there are still some persisting issues.

**ՄՐՑՈՒՆԱԿ ԱՐՏԱԴԻԱՆՔՆ ՈՐՊԵՍ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ
ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

Ձեռնարկատիրական գործունեության ռիսկի մակարդակի վրա ազդող գործոններից առանձնակի կարևորվում է մրցունակ արտադրանքի արտադրությունը:

Կազմակերպության և ապրանքի մրցունակությունը արդյունավետությունը բնութագրող այն հիմնական ամբողջական ցուցանիշն է, որով պայմանավորված է ինչպես ձեռնարկատիրոջ գլխավոր նպատակը՝ առավելագույն շահույթը, այնպես էլ նվազագույն ռիսկայնությունը ապահովելու հնարավորությունը: Ռիսկը և մրցունակությունը սերտորեն փոխկապակցված են և կազմակերպության ու նրա արտադրանքի բարձր մրցունակության պայմաններում ռիսկերի ազդեցությունն էականորեն նվազում է: Մրցունակության բարձրացումը ենթադրում է կազմակերպատնտեսական և այլ համալիր միջոցառումների իրականացում՝ արտադրանքի որակի բարելավում, տեսականու ընդլայնում, ինքնարժեքի իջեցում, մարքեթինգային, ձեռնարկատիրական գաղտնիքի պահպանության, ռիսկ մենեջմենտի ծառայությունների ստեղծում, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների, աշխատանքի ու արտադրության կազմակերպման և անձնակազմի կառավարման առաջադիմական մեթոդների ներդրում, ինչպես նաև պետական համակողմանի աջակցությունն ուղղված ձյուղի զարգացմանը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ռիսկ, մրցունակություն, արբորիզեն, գինեգործություն, բրեն:

Հայաստանի ագրովերամշակող արդյունաբերությունը դեռևս խորհրդային տարիներից իր ուրույն տեղն է ունեցել

և ներկայումս էլ համարվում է երկրի տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող ձյուղերից մեկը, որը կարևոր նշանակություն ունի ինչպես երկրի պարենային անվտանգության, բնակչության զբաղվածության և սոցիալական, այնպես էլ ժողովրդավարական հիմնախնդիրների լուծման գործում: Ագրարային հետազոտման տարիներին ագրովերամշակող կազմակերպությունները շրջափակման հետևանքով մատնվեցին անգործության և հիմնականում դադարեցրեցին իրենց գործունեությունը:

1990-ական թվականների կեսերից սկսված ոլորտում նկատվեցին կայունացման միտումներ: Ներկայումս հանրապետության գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում գործող կազմակերպություններն աստիճանաբար հարմարվում են շուկայական տնտեսության պայմաններին և նույնիսկ լուրջ բարեփոխումներ են իրականացնում և ձեռնարկում են միջոցներ բարձրացնելու արտադրության արդյունավետությունը և բարելավելու արտադրանքի որակը՝ ներդնելով ժամանակակից տեխնոլոգիաներ, սարքավորումներ և կառավարման արդյունավետ համակարգեր: Բարեփոխումներն առանձնակի նկատելի են հատկապես գինեգործության ոլորտում: Դեռ ոչ վաղ անցյալում հայրենական շուկայում իր տեղն ու դեմքը չգտած գինիներն, այսօր դուրս գալով համաշխարհային շուկա, փորձում են մրցակցել ճանաչում ունեցող գինիների հետ: Հայաստանն ունի անհրաժեշտ նախադրյալներ որակյալ, պահանջված, մրցունակ գինի արտադրելու, սակայն միայն նախադրյալներ

րով գործը գլուխ չի գա: Անհրաժեշտ են գործնական լուրջ քայլեր և միջոցառումներ նպատակին հասնելու համար:

Գինեգործության պատմությունը Հայաստանում գրեթե նույնքան հին է, որքան խաղողագործությանը: Հայկական հողը խաղողի և գինու հնագույն օրրաններից է, ինչի վառ վկայությունն է Արենի քարանձավի հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված գինու արտադրամասը, որն ունի ավելի քան 6100 տարվա վաղեմություն: Ըստ Աստվածաշնչի՝ Նոյ նահապետը ջրհեղեղից հետո Արարատ լեռան ստորոտին տնկեց խաղողի առաջին որթը, որից էլ հետո ստացան գինին:¹

ՀՀ գինու շուկայում ձեռնարկատիրության զարգացումը երկրի պարենային մթերքների արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի, հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման, գյուղական բնակավայրերի աղքատության հաղթահարման կարևորագույն գործոններից է: Վերջինս պահանջում է հանրապետության խաղողագործության և գինեգործության ձյուղի ավանդույթների, ստեղծված վիճակի համակողմանի ուսումնասիրությունների հիման վրա գինու շուկայի զարգացման և մրցունակության բարձրացման խոչընդոտների բացահայտում և դրանց լուծման քաղաքականության ուղղությունների առաջադրում:²

ՀՀ տնտեսության գինեգործության ձյուղի արդյունավետ գործունեության կազմակերպումը և օրինաչափ զարգացումն ունի համապետական կարևոր նշանակություն, և տարբեր մակարդակներում դրա արդյունավետ լուծումն հանդիսանում է բավական բարդ խնդիր, քանի որ վերջինիս գործունեությունը սերտ կապված է ողջ ագրոարդյունա-

բերական արտադրության ընդհանուր զարգացման հետ: Գինեգործական արտադրության արդյունավետության բարձրացմանը, գինեգործական կազմակերպությունների շուկայական միջավայրին ադապտացմանը, ձեռնարկատիրական ռիսկերի արդյունավետ կառավարմանը և ոլորտում առկա բազմաթիվ այլ խնդիրների արդյունավետ հաղթահարմանը մեծապես կնպաստի գինեգործական արտադրանքի մրցունակության բարձրացումը: Հայաստանի գինեգործության զարգացման և արտադրության ծավալների ավելացման նախապայման է հանդիսանում միջազգային շուկայում մրցունակ, բարձրորակ գինիների արտադրությունը:

Շուկայական հարաբերությունները որքան ազատություն են տալիս ձեռնարկատիրոջը (ձեռնարկատիրական գործունեության ընթացքում), այնքան էլ դարձնում են վերջինիս գործունեությունն առավել ռիսկային, ինչով էլ պայմանավորված, միշտ չէ, որ երաշխավորված է շահույթի ստացումը, ուստի ձեռնարկատիրական ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով առանձնահատուկ կարևորվում են այն գործոնները, որոնց ազդեցությամբ ձևավորվում է ռիսկային իրավիճակը և ռիսկի մակարդակը: Ձեռնարկատիրական գործունեության ռիսկային իրավիճակների վրա ազդող գործոններից առանձնակի կարևորվում է մրցակցությունը և մրցունակ արտադրանքի արտադրությունը: Ինչպես գիտենք, մրցակցությունը շուկայական տնտեսության շարժիչ ուժերից է, մրցակցային պայքարը շուկայի պայմաններում մշտական երևույթ է, և այն մեծանում է ոչ միայն գործընկերների ավելացման, այլ նաև այն դեպքում, երբ ապրանքների և ծառայությունների առաջարկի մեծացման պայմաններում պահանջարկը դրանց նկատմամբ համամասնորեն չի մեծանում, ուստի շուկայում իր տեղն ու դիրքը կպահպանի նա, ով ուժեղ է իր մրցակիցներից, այսինքն՝ արտադրում է

1 Պետրոսյան Ա., «Հայաստանի գինեգործությունը և հայկական գինիների ուղեցույց», Անտարես, 2015:

2 Խաչատրյան Ք., Գինու ոլորտի վերլուծությունը ՀՀ-ում, Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր, ԵՊՀ, 2016:

մրցունակ արտադրանք՝ ձիշտ գնահատելով յուրաքանչյուր էտապում շուկայում տիրող առաջարկի և պահանջարկի համամասնությունը:

Մրցունակությունը ապրանքի հատկությունն է, որն իրական կամ պոտենցիալ մակարդակում բավարարում է կոնկրետ պահանջմունք՝ համեմատած շուկայում ներկայացված նմանատիպ այլ ապրանքների հետ: Մրցունակությամբ է որոշվում մրցակցությանը դիմակայելու կարողությունը, դրանով իսկ նաև՝ ձեռնարկատիրական ռիսկերին դիմակայելու կարողությունը: Հատկանշական է, որ ապրանքի մրցունակությամբ մասնակիորեն պայմանավորված է նաև կազմակերպության մրցունակությունը: Ապրանքների և կազմակերպության մրցունակությունը հարաբերվում են մեկը մյուսին, ինչպես մասը և ամբողջը: Որոշակի շուկայում կազմակերպության մրցակցելու հնարավորությունը անմիջականորեն կախված է ապրանքի մրցունակությունից և կազմակերպության գործունեության տնտեսական մեթոդներից, որոնք ազդում են մրցակցային պայքարի արդյունքների վրա, իսկ այդ բոլորն ամբողջությամբ պայմանավորում են ձեռնարկատիրական ռիսկերի արդյունավետ կառավարման հնարավորությունները:

Ապրանքի մրցունակությունը նրա տեխնիկատնտեսական շահագործման պարամետրերն են, որոնք հնարավորություն են տալիս դիմակայելու շուկայում նմանատիպ այլ ապրանքների հետ մրցակցությանը: Բացի դրանից՝ մրցունակությունը ապրանքի համեմատական բնութագրիչ է, որ պարունակում է արտադրական, առևտրային, կազմակերպատնտեսական ցուցանիշների ամբողջություն:

Համանման ապրանքների մեջ ավելի մրցունակ է համարվում այն ապրանքը(K), որն իր յուրահատկությունների շնորհիվ ապահովում է առավել օգտակարություն(P)՝ համեմատած սպառման

գնի հետ(C):

Այսպիսով՝ ապրանքի գերադասումը մյուսներից ունի հետևյալ տեսքը՝

$$K = P/C \text{ max}$$

ՀՀ տնտեսության համար կարևորելով գինեգործության ճյուղը՝ մեր կողմից մշակվել և առանձնացնել են գինեգործական արտադրության զարգացման խնդիրների հետազոտման մի քանի փուլեր, որոնք էլ կհիմնավորեն գինեգործական արտադրանքի մրցունակության բարձրացման խնդրի արդիականությունը և այդ նպատակով կազմակերպատնտեսական միջոցառումների մշակման անհրաժեշտությունը: Առաջին հերթին պետք է ուսումնասիրել գինեգործական արտադրության կազմակերպման արդի խնդիրները շուկայական տնտեսության պայմաններում: Երկրորդ փուլում պետք է ուսումնասիրել գինու շուկայում ձևավորված խնդիրները և միտումները շուկայի անկայունության և անորոշության պայմաններում: Հաջորդիվ, գինեգործական արտադրանքի մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել բարձրորակ, մրցունակ գինի արտադրելու միջազգային չափանիշները: Այս փուլում կարևորում ենք նաև գինու արտադրության լիմիտավորված ծավալների որոշումը, ինչը կապահովի սպառողների պահանջմունքները բարձրորակ, էկոլոգիապես մաքուր արտադրանքի նկատմամբ: Եվ վերջում, գինեգործական արտադրանքի մրցունակության բարձրացմանն ուղղված կազմակերպատնտեսական միջոցառումների մշակում, մասնավորապես, ճյուղում արդյունավետ ինտեգրացիոն մեխանիզմների ձևավորում, գինու առաջխաղացման իրատեսական շուկաների սխեմաների մշակում, գնագոյացման արդյունավետ ձևերի կիրառում, գինու որակի խթանում և այլն:

Մրցունակ գինին որակի և գնի օպտիմալ հարաբերակցությամբ օժտված արտադրանքն է: Գիտականորեն հիմնավորված է, որ գինու որակական

հատկանիշները կախված են հուսման՝ խաղողի աճեցման պայմաններից՝ հողից, ջրից, արևից, կլիմայից, ինչպես սաուն են գինու գիտակ ֆրանսիացիները՝ տեռուարից (terroir): Հայաստանն առանձնահատուկ է իր կլիմայով, հողով, արևով և հատկապես ջրով, ինչի արդյունքում էլ հայկական խաղողի արքրիզեն սորտերն էապես տարբերվում է աշխարհի այլ վայրերում աճող խաղողից, իսկ գինու որակական հատկանիշները մեծապես պայմանավորված են հենց խաղողի որակական առանձնահատկություններով: Այստեղից էլ գալիս են հայկական գինու համային և որակական առանձնահատկությունները, ինչը հավաստի երաշխիք է և՛ ներքին, և՛ արտաքին շուկաներում հայկական գինու մրցունակ լինելու համար:

Գինու համաշխարհային շուկայում ներկայումս առաջ է քաշվել նոր գաղափարախոսություն՝ խաղողի և գինու «արքրիզենիզմ»: Տեղին է նշել, որ աշխարհում գոյություն ունեցող 6–7 հազ. խաղողի սորտերից ավելի քան 1200–ը աճում են հայկական լեռնաշխարհում, ընդ որում, դրանցից 500–ը տեղածին, այսինքն՝ արքրիզեն սորտեր են, սակայն, ի հակադրություն սրա, վերջին տարիներին նկատվում է հակառակ երևույթը. գինու արտադրությունում առավել հաճախ խաղողի տեղածին սորտերի փոխարեն սկսել են օգտագործել «եվրոպացի» սորտեր, ինչը բիզնես տեսակետից լավ է, սակայն հայկական հողում դրանց մշակումը չպետք է կատարվի՝ ի հաշիվ արքրիզեն սորտերի: Այս երևույթը վտանգում է հայկական գինու համը: Սա, իհարկե, արգելված չէ, եթե պահպանվում են աշխարհագրական նշումով գինի արտադրելու պահանջները: Խնդիրն առաջանում է հետևյալում. Հայաստանն, ի թիվս Վրաստանի, Հունաստանի, Մակեդոնիայի, Խորվաթիայի և մի շարք այլ պետությունների, դասվում է խաղողի և գինու «արքրիզենիզմ»-ի գաղափարախոսությանը հավակնող

երկրների շարքին, իսկ վերջինս էլ համարվում է գինու համաշխարհային շուկայի զարգացման հիմնական միտումներից մեկը:¹

Դեռ խորհրդային տարիներին հանրապետության խաղողի սորտային կազմը զգալի փոփոխությունների է ենթարկվել: Արքրիզեն սորտերը կամաց–կամաց փոխարինվել են սելեկցիոն սորտերով: Իհարկե, սելեկցիոն սորտերի ստացումը փաստում է երկրում գիտական և տեխնոլոգիական մտքի բարձր զարգացվածությունը, սակայն պետք է նկատի ունենալ, որ սելեկցիոն սորտերի ստեղծումն ինքնանպատակ չէ, դրանք պետք է լրացնեն արքրիզեն սորտերի տեխնոլոգիական թերությունները: Շուկայական հարաբերությունների անցման առաջին տարիներին խաղողի տարածությունների կտրուկ կրճատման արդյունքում անվերադարձ անհետացան բազմաթիվ արքրիզեն սորտեր: Այս խնդրի լուծման առաջնահերթ նախապայման է հանդիսանում խաղողի այգիների սորտային կազմի կատարելագործումը: ՀՀ կառավարության, ի դեմս Էկոնոմիկայի նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ մշակվել է ՀՀ խաղողագործության զարգացման ռազմավարություն, որն առավել նպատակային կլինե, եթե ընդգրկեր կարևորագույն այնպիսի հարցեր, ինչպիսին են խաղողի այգիների գույքագրումը, խաղողի կոլեկցիոն այգու ստեղծումը, սորտերի տեսակային կազմի պահանջարկի ճշգրտումը և այլն:

Գինեգործական արտադրանքի մրցունակության գնահատման նպատակով մեր կողմից առանձնացվել են երեք խումբ պարամետրեր՝ սպառողական, տնտեսական և ենթակառուցվածքային:

Գինու մրցունակության գնահատման

1 Մ.Մելքոնյան, «Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը ՀՀ», Երևան, 2005:

սպառողական պարամետրերը որոշում են նրա սպառողական արժեքը կամ օգտակարությունը, և հանդես են գալիս հետևյալ բնութագրիչներով՝ որակ և տեսականի:

Գինեգործության ոլորտում համաշխարհային միտումներն այնպիսին են, որ գինու որակը, որն, իհարկե, պարտադիր մի բան է, դարձել է ընդամենը ֆոն: Եվ այդ ֆոնի վրա պետք է կառուցվի լեգենդը, որի շնորհիվ էլ պետք է բացվեն մեր պատմությունն ու ինքնությունը ցույց տվող շերտերը: Եվ այդ լեգենդով ու գինեգործության հազարամյակների մեր պատմությամբ մենք կարող ենք հաստատվել գինու համաշխարհային շուկայում, որտեղ մենք ուղղակի դատապարտված ենք հանդես գալ նվազագույնը միջին որակի ու արժեքի գինիներով, քանի որ մեր ռեսուրսները խիստ սահմանափակ են: ¹ Հարկ է նշել, որ գինու մրցունակության գնահատման սպառողական պարամետրի հիմնական բնութագրիչը՝ որակը, հանդիսանում է գինու արտահանման ուղղակի նախապայման: Այսինքն՝ այս առումով՝ որակը կարելի է դիտարկել նաև գինու մրցունակության գնահատման տնտեսական պարամետր: Գինու որակը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, մասնավորապես՝ հումքային բազայով, արտադրության տեխնոլոգիայով, արտադրության տեխնիկական հագեցվածությամբ, որակյալ կադրերով և այլն:

Գինու որակի գնահատման նպատակով կատարվում են մի շարք քիմիական և միկրոբիոլոգիական անալիզներ, սակայն գինին «բարդ» արտադրանք է, որն իր մեջ կրում է բազմաթիվ տարրեր, որոնց բնույթն անհայտ է, քանակությունը՝ չնչին, լաբորատոր անալիզների միջոցով՝ չբացահայտվող, սակայն էականորեն ազդում են գինու համային և հոտային հատկանիշների վրա՝ ձևա-

վորելով գինու սպառողական որակը: Գինու որակական այս հատկանիշները բացահայտվում և գնահատվում են համտեսի(դեգուստացիա) միջոցով: Համտեսը հատուկ արարողություն է, հատուկ օրենքներով, որի ժամանակ հատուկ մշակված սանդղակներով գնահատվում է գինու համը, բույրը, գույնը, և որպես կանոն, համտեսին հաջորդում է գինու «պարզևատրումը» և որոշվում գինու ռեյտինգը: Ակնհայտ է, որ գինու համաշխարհային շուկայում բարձր պահանջարկ է ձևավորվում հեղինակավոր մրցույթներում, հեղինակավոր քննադատների կողմից բարձր ռեյտինգային գնահատականի արժանացած գինիների նկատմամբ:

Ճիշտ է, վերջին տարիներին հայկական գինու արտադրությունում նկատելի են մեծ ներդրումներ ուղղված տեխնիկական և տեխնոլոգիական վերազինմանը, բայց միայն այդքանը բավարար չէ համաշխարհային շուկայում պահանջված արտադրանք արտադրելու համար:

Կարծում ենք՝ գինու համաշխարհային շուկայում կայուն տեղ և բարձր դիրք գրավելու համար կարևոր է Հայաստանում անցկացվող գինու համտեսները ժամանցային կարգավիճակից տեղափոխել առավել լուրջ և գործնական հարթություն, մասնակցել միջազգային համտես-մրցույթների միասնական հայկական բրենդով և փորձել հայտնվել ռեյտինգային արժանավայել դիրքերում՝ համաշխարհային հայտնի անունների հետ միասին: Կասկածից վեր է, որ այս հանգամանքը մեծապես կբարձրացնի հայկական գինու մրցունակությունը և որոշակիորեն «կապահովագրի» արտադրողին բազմաթիվ ռիսկերից: Այս գործընթացի կազմակերպման համար բացակայում են անհրաժեշտ պայմանները, մասնավորապես՝ համապատասխան որակյալ կադրերը և ենթակառուցվածքները: Հարցի լուծման նպատակով առաջարկում ենք համապատասխան լրացում կատարել և՛ ռազմավարության,

1 А.Ф. Арутюнян Виноградарство и виноделие в Армении, Ереван 2007.

և՛ օրենքի մեջ, և՛ շուտափույթ զբաղվել համապատասխան որակյալ կադրերի պատրաստմամբ:

Բացի այդ՝ կարծում ենք՝ պետք է պետական աջակցություն՝ հայկական գինու համաշխարհային համտեսներին մասնակցությունն ապահովելու համար:

Համաշխարհային շուկայում սպառողների հիմնական մասը փնտրում են ոչ թե կոնկրետ անվանումով գինի, այլ կոնկրետ երկրի գինի, օրինակ՝ ֆրանսիական, իտալական, հիմա նաև՝ արգենտինական, Չիլիի արտադրության, հետխորհրդային երկրներում՝ վրացական, մոլդովական: Ինչպես նկատեցինք, ոչ մի պարագայում չի նշվում կոնկրետ արտադրողի կամ կոնկրետ անվան գինի: Համաշխարհային շուկայում գինիները մրցակցում են երկրի մակարդակով: Հայաստանը դեռևս չունի գինեգործական երկրի համբավ, և առանձին արտադրողներ իրենց արտադրանքի առաջնորդան խնդիրներ ունեն, և դրանով պայմանավորված էլ բախվում են արտադրանքի իրացվելիության ռիսկի հետ: Անհրաժեշտ է գինու համաշխարհային շուկայում ձևավորել և տարածել Հայաստանի՝ որպես գինեգործական երկրի համբավը, ինչն անշուշտ պահանջում է համակարգված աշխատանք ոլորտի գիտականների և առաջատարների կազմակերպությունների կողմից՝ պետության անմիջական աջակցությամբ: Գինու համաշխարհային շուկայում հայկական գինու առաջնորդան ռազմավարության հիմնական նպատակը պետք է լինի համալիր գործողությունների միջոցով ձևավորել և բարձրացնել հայկական գինու համբավը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով որակին, քանի որ այս դեպքում հարվածի տակ է դրվում ոչ թե առանձին արտադրողների վարկանիշը, համբավը, այլ Հայաստանի տնտեսական իմիջքը: Արտադրել որակյալ գինի, որը սակայն սպառողների լայն շրջանակներում հայտնի չէ, տնտեսական տեսանկյունից արդարացված

քայլ չէ: Հայկական գինին համաշխարհային շուկայում ճանաչելի դարձնելու համար անհրաժեշտ է գինին բրենդավորել: Որակյալ գինին պարտադիր պետք է ուղեկցվի համապատասխան մարքեթինգային ռազմավարությամբ: Հաջող մարքեթինգային ռազմավարության առանցքը մեր պարագայում պետք է լինի Հայաստանի՝ որպես գինեգործական երկրի լեգենդի ստեղծումը: Այս ուղղությամբ արդեն գործնական քայլեր նշմարվում են: Կառավարության՝ հունիսի 23-ի նիստին կայացրած որոշմամբ՝ խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության և զարգացման ծրագրերի իրականացման նպատակով կստեղծվի Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ, որի հիմնական գործառույթներից են՝ երկրի գինեգործության վարկանիշի և մրցունակության բարձրացումը և «Հայկական գինիների ապրանքանիշի ձևավորումն ու առաջնորդումը»:

Ինչպես գիտենք, մրցունակությունը բնութագրող հիմնական ցուցանիշներից է՝ գինը: Մասնագետների գնահատմամբ՝ այսօր աշխարհում սպառվող գինիների 75–80%–ը ցածրարժեք են՝ 1.5–3 եվրո արժողությամբ: Հայկական գինին համաշխարհային շուկայի այդ սեգմենտում չի կարող տեղ ունենալ՝ պայմանավորված խաղողի ծախսատար մշակությամբ, արտահանման հաղորդակցական բարձր գներով, ինչի արդյունքում էլ բարձր է լինում նաև գինու ինքնարժեքը: Ստացվում է, որ հայկական գինին ուղղակի «չի տեղավորվում» ցածր գնային միջակայքում: Համաշխարհային շուկայում բարձրորակ, ամենօրյա օգտագործման թանկարժեք գինիների արժեքը տատանվում է 7–8-ից մինչև 30–35 եվրոյի շրջանակներում: Կարծում ենք՝ հենց այս սեգմենտի շուկան է հայկական գինու իրական տեղը: Հայկական գինու արտահանման 70%–ը բաժին է ընկնում ԱՊՀ երկրներին, իսկ մնացած մասը՝

ԱՄՆ և ԵՄ երկրներին: ¹ ՀՀ սահմանից մինչև ՌԴ-ում վերջնական սպառողին հասնելը հայկական արտադրության ապրանքները, այդ թվում նաև գինին, միջինում թանկանում են մոտ 60%-ով. ԱՄՆ և ԵՄ արտահանման դեպքում այս ցուցանիշն, իհարկե, նույնը չի լինի: Սրա հիմնական պատճառները, ցավոք, քիչ չեն: Ռուսաստանյան շուկայից միջին հեռավորությունը գնահատվում է 3000կմ. գործում է երկու ուղղություն, երկուսն էլ՝ Վրաստանի տարածքով (Փոթի նավահանգստով համեմատաբար արագ է և թանկ, Լարսի անցակետով՝ երկար է և բարձր ռիսկային), Իրանի տարածքով ակոհոլային խմիչքների արտահանումն արգելված է, օդային փոխադրումները համեմատաբար ապահով են, բայց և թանկ: Բացի այդ՝ հայկական գինու մրցունակության վրա, հատկապես՝ ռուսաստանյան շուկայում, բավական մեծ բացասական ազդեցություն են թողնում արժույթի փոխարժեքի տատանումները, ինչն էլ մեծացնում է արժույթային ռիսկերի հավանականությունը: Դրա վառ ապացույցը՝ 2014 թվականի կեսից ռուբլու անսպասարկեալ արժեզրկումն էր դոլլարի նկատմամբ, երբ արտահանման պայմանագրի արժույթից կախված՝ մեծ թվով արտահանողներ կրեցին բավական մեծ վնասներ:

Անվիճելի է, որ գինու արտահանման խնդրի լուծումը միանշանակ պահանջում է պետական միջամտություն, ինչը, մեր կարծիքով, կարող է ուղղված լինել լոգիստիկ համակարգի ներդրմանը: Հավելենք, որ այս քայլով կարող է լուծվել նաև այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է փոխադրումների ապահովագրումը, որով պետությունն արտադրողին «կազատի» կարևորագույն այնպիսի խնդրից, ինչպիսին է տրանսպորտային ռիսկը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով հայկական գինու մրցունակության բարձրաց-

ման առանցքային հարցերը, բացահայտեցիք մի շարք նախադրյալներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ համաշխարհային շուկայում մրցունակ արտադրանք արտադրելու համար, ինչն էլ, ինչպես հանդավեցինք, ռեալ երաշխիք է ձեռնարկատիրական ռիսկերի նվազեցման և դրանց արդյունավետ կառավարման համար: Այդ ամենն իրատեսական դարձնելու համար անհրաժեշտ է՝

- խաղողի այգիների սորտային կազմի նպատակային կատարելագործմամբ և խաղողի որակի բարելավմամբ ստեղծել հումքային բավարար բազա.
- կազմակերպությունների մրցունակության բարձրացման գործում շատ կարևոր է հայկական գինու իրացման աշխարհագրության ընդլայնումը և առաջին հերթին եվրոպական երկրներ արտահանումը.
- անհրաժեշտ է ձևավորել գինու սպառման բարձր մշակույթ.
- Հայաստանում արտադրվող գինիների արտահանման խնդիրները արդյունավետ լուծելու նպատակով ձևավորել միջազգային լոգիստիկ կենտրոն,
- մշակել արտահանման պայմանագրերի առավել կատարյալ մոդել.
- հնարավորինս կարճ ժամկետներում ստեղծել հայկական գինու խոսուն բրենդ.
- արտաքին տնտեսական կապերի զարգացմամբ հայկական գինին ճանաչելի դարձնել համաշխարհային շուկայում.
- ձևավորել արտադրություն-վերամշակում-իրացում ինտեգրացիոն շղթա.
- գիտություն-կրթություն-արտադրություն արդյունավետ և փոխկապակցված շղթայի միջոցով բարձրացնել խաղողի մշակության կուլտուրան.
- կրթական ոլորտում կատարելագործել ժամանակակից չափանիշներին համապատասխան կադրերի պատրաստման գործընթացը.
- սպառողների հարաձուլում պա-

1 Նույն տեղում:

հանջմունքների բավարարման համար շատ կարևոր պայման է նաև տեսակա- նու անընդհատ թարմացումը և դրանց կատարելագործումը, որն իր որակական հատկանիշներով չի գիջի գինու ար- տադրության առաջատար երկրներին.

- հայկական գինին աշխարհին ներկայացնելու գործում անհրաժեշտ է լայնորեն օգտագործել ագրոտուրիզմի հնարավորությունները:

Պետք է նկատի ունենալ, որ գինե- գործության արտադրանքի մրցունակու- թյան բարձրացումը և հետևաբար ոլոր- տի կազմակերպությունների ռիսկերի նվազեցումը հնարավոր չէ առանց պե- տության համակողմանի աջակցության: Պետական աջակցության ուղղություն- ները, մեր կարծիքով, կարող են լինել՝

- խաղողի նոր այգիներ հիմնելու նպատակով գյուղացիական տնտեսու- թյուններին առևտրային բանկերի կող-

մից տրամադրվող վարկերի տոկոսադ- րույքի մի մասի սուբսիդավորումը.

- ճկուն և շուկային արագ հարմար- վող փոքր արտադրությունների ստեղծ- ման աջակցություն, նրանց ներդրու- մային և հարկային արտոնությունների, ինչպես նաև խաղողի արտադրության նպատակով պետական պահուստային ֆոնդի հողերը վարձակալությամբ ար- տոնյալ պայմաններով տրամադրման միջոցով.

- արտաքին շուկաներ մուտք գոր- ծելու համար բիզնես տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում, արտահանման արտոնյալ մաքսատուր- քերի սահմանում և այլն.

- արտաքին շուկաներ մուտք գոր- ծելու համար բիզնես տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում, արտահանման արտոնյալ մաքսատուր- քերի սահմանում և այլն:

КОНКУРЕНТОСПОСОБНАЯ ПРОДУКЦИЯ КАК ГАРАНТИЯ СНИЖЕНИЯ БИЗНЕС – РИСКА

АСМИК ГЕВОРГЯН

АНАУ, кафедра организации агробизнеса, соискатель

Из факторов, влияющих на уровень риска предпринимательской деятельности, особо выделяется производство конкурентоспособной продукции. Конкурентоспособность компании и продукции является основным полноценным показателем, характеризующим эффективность производства, что одновременно обеспечивает максимальную прибыль предпринимателя и позволяет минимализировать риск. Риск и конкурентоспособность тесно взаимосвязаны, и в условиях высокой конкурентоспособности организации и ее продукции влияние риска значительно снижается. Повышение конкурентоспособности предполагает реализацию организационно-экономических и других комплексных мер – инвестиции в улучшение качества продукта, расширение ассортимента, снижение издержек, маркетинг, защиту коммерческих тайн, создание услуг риск-менеджмента, современное оборудование и технологии, внедрение передовых методов организации труда и производства, управления персоналом, а также, всестороннюю помощь государства.

COMPETITIVE PRODUCTION AS A GUARANTEE OF REDUCTION IN BUSINESS RISK

HASMICK GEVORGYAN

ANAU, Chair of Agribusiness Organization, Applicant

Among the factors influencing on the level of business activity risk, the most risky is the production of competitive products.

Competitiveness of companies and production is the basic complete indicator characterizing the effectiveness of production that simultaneously maximizes entrepreneur's profit, but also minimizes the risks. Risk and competitiveness are closely related, and in conditions of high competitiveness of the organization and its products the risk impact is greatly reduced.

The competitiveness increase requires implementation of organizational and economic and other complex measures: product quality improvement, assortment extension, cost reduction, creation of marketing, trade secret protection, risk management services, investment of modern techniques and technology, labor and production organization and progressive methods of personnel management, as well as overall state assistance aimed to the development of the sector.

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին տասնամյակներում համաշխարհային տնտեսության ընդլայնողականացման համատեքստում ներդրումային կապիտալի միջազգային հոսքերը ավելի նշանակալի դեր են իրականացնում, քան ապրանքների և ծառայությունների համաշխարհային առևտուրը: Կապիտալի միջազգային հոսքերը վերջին հաշվով նպաստում են նրան, որ ազգային տնտեսությունները ավելի կախվածության մեջ են ընկնում դրանցից: Հետևաբար, տնտեսական զարգացումների արդի փուլում ցանկացած պետության առաջնահերթ խնդիրներից մեկը ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար համապատասխան պայմանների ապահովումն է, քանի որ վերջինս համարվում է երկրի տնտեսության ազատ և կայուն աճի ապահովման կարևոր գրավականը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ներդրումային միջավայր, պետություն, տնտեսական քաղաքականություն, կապիտալի հոսք, ռիսկ, ներդրող, մոնիթորինգ:

Տնտեսական զարգացման համաշխարհային փորձի հետազոտությունը վկայում է այն մասին, որ տնտեսական քաղաքականության առանցքային ուղղությունների շարքում կաևորագույն տեղ են զբաղեցնում մակրոտնտեսական կայունության ապահովումը և ներդրումների խթանումը: Ներդրումային գործընթացը հիմնարար դեր է խաղում արտադրության կառուցվածքի ձևավորման ու զարգացման մեջ, հետևաբար արդյունավետ շուկայական տնտեսության ձևավորման պայմաններում տնտեսության մեջ հիմնական փոփոխությունները մեծապես կախված կլի-

նեն խոշորածավալ ներդրումների ներգրավման հնարավորություններից:

Ներդրումների մակարդակն էական տնտեսական ու սոցիալական ազդեցություն է գործում տվյալ երկրի տնտեսության վրա, այդ թվում՝ տնտեսական աճի, ազգային եկամտի և գործազրկության մակարդակների վրա: Բացի այդ՝ ներդրումներն են կանխորոշում տվյալ տնտեսության մեջ ընդլայնված վերարտադրության գործընթացը. նոր արտադրական ձեռնարկությունների հիմնումը, ենթակառուցվածքների զարգացումը և նոր աշխատատեղերի ստեղծումն ուղղակիորեն կախված են տվյալ երկրում իրական կապիտալ ներդրումներից¹:

Ակնհայտ է, որ ներդրումային քաղաքականության առանձնահատկություններով է պայմանավորվում տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացվածությունը, տնտեսական աճի տեմպերը և զբաղվածության մակարդակը: Միաժամանակ, ներդրումները հանդիսանում են ՀՆԱ-ի ամենահիմնական ու փոփոխվող բաղադրիչներից մեկը: Ինչպես վկայում է արևմտյան երկրների փորձը, տնտեսական կայուն աճ ապահովելու համար ներդրումները համախառն ներքին արդյունքի նկատմամբ պետք է կազմեն շուրջ 20-25%:

Միջազգային ներդրումային գործընթացների վերլուծությունը վկայում է այն մասին, որ աշխարհում գոյություն չունի մի երկիր, որը ներգրավված չլինի միջազգային ներդրումային համագործակցության գործընթացներում: Նկատենք, որ վերջին տասնամյակներում համաշ-

1 Курс экономической теории: учебник – 6-е исправ. , доп. и перераб. Издание / Под ред. М. Н. Чепурина. – Киров: «АСА», 2007. – 848 с. , с. 421.

խարհային տնտեսության ընդլայնողականացման համատեքստում ներդրումային կապիտալի միջազգային հոսքերը ավելի նշանակալի դեր են իրականացնում, քան ապրանքների և ծառայությունների համաշխարհային առևտուրը: Կապիտալի միջազգային հոսքերը վերջին հաշվով նպաստում են նրան, որ ազգային տնտեսությունները ավելի կախվածության մեջ են ընկնում դրանցից: Ներկայումս, ուղղակի ներդրումների արտահանման և ներմուծման գերակշիռ մասը բաժին է ընկնում ինդուստրիալ և հետինդուստրիալ երկրներին, սակայն, ըստ առանձին տնտեսագետների կարծիքի՝ ներդրումների շեղումը դեպի զարգացած երկրներ ժամանակավոր երևույթ է: Ավելի մեծ թվով զարգացող երկրներ ազգային տնտեսական բարեփոխումների համատեքստում բարելավում են ներդրումային միջավայրը՝ մեծացնելով այդ երկրների ներդրումային գրավչությունը: Իսկ ինչ վերաբերվում է արևմտյան երկրներին, ապա դարասկզբի ներդրումային բումից հետո ամենայն հավանականությամբ օտարերկրյա ներդրումների տարեկան աճը երկարաժամկետ հատվածում կկայունանա 10-12 % մակարդակի վրա¹ :

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ցանկացած պետության առաջնահերթ խնդիրներից մեկը ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար համապատասխան պայմանների ապահովումն է՝ քանի որ վերջինս համարվում է երկրի տնտեսության ազատ և կայուն աճի ապահովման կարևոր գրավակներ:

Ներդրումային միջավայրը բավական բարդ և բազմաչափ եզրույթ է, որը կարելի է բնորոշել որպես մի շարք գործոնների համախումբ, որոնք անդրադառնում են տնտեսության ոլորտում

ներդրումային որոշումների իրականացման գործընթացի վրա և ձևավորում են երկրում ներդրումային միջավայրի վերաբերյալ հիմնական պատկերացումները: Վերջինս արտահայտում է այս կամ այն երկրում (տարածաշրջանում, ճյուղում) ձևավորված իրավիճակի բարենպաստ լինելու աստիճանը՝ ներդրումային ներուժի համեմատությամբ:²

Մասնագիտական գրականության մեջ ներդրումային միջավայրին տրվում են բազմաթիվ սահմանումներ: Որպես կանոն, վերջինիս տակ հասկացվում է տնտեսական, սոցիալական, կազմակերպչական, իրավական, քաղաքական և այլ գործոնների հանրագումարի ընդհանրացված բնութագիրը, որոնք սահմանում են տվյալ երկրի այս կամ այն ոլորտում ներդրումների իրականացման գրավչությունը և նպատակահարմարությունը³:

Մեկ այլ սահմանմամբ երկրի, տարածաշրջանի, ձեռնարկության ներդրումային միջավայրը բնորոշվում է որպես ներդրումային գրավչության և ներդրումային ակտիվության համամասնություն, որը ձևավորում է ներդրումների նկատմամբ վճարունակ պահանջարկ, իսկ ներդրումային գրավչության վերաբերյալ եղած բնորոշումներից մեկը սահմանում է «արտադրատնտեսական գործունեությունից կայուն համախառն տնտեսական ազդեցությունը»՝ որպես վերջնական արդյունք⁴:

Համաշխարհային բանկի կողմից ներդրումային միջավայրը սահմանվում է որպես գործարարների համար արդյունավետ ներդրումներ կատարելու, նոր աշխատատեղեր ստեղծելու և գործունե-

1 Гретченко А. А. Инвестиционные процессы в условиях глобализации // Аудит и финансовый анализ. – 2008. – №1. – С. 204-213.

2 Инвестиционный рейтинг российских регионов. 1999-2000 гг. // Эксперт. 2000, N 41, с. 73-90.

3 Большой экономический словарь / А. Н. Азрилян [и др.]; под общ. ред. А. Н. Азриляна. – 5-е изд. перераб. и доп. – М.: Институт новой экономики, 2002. – 1280 с., с. 263.

4 Теплицкий В., Костюковский Ю. «Как оценить инвестиционную привлекательность предприятия» // Деловая жизнь. 2002. N 9, с. 26-31.

ությունն ընդլայնելու համար հնարավորություններ: «Բարենպաստ ներդրումային միջավայրը երկրի ռազմավարության հենասյունն է տնտեսական աճը խթանելու նպատակով, որն իր հերթին աղքատ մարդկանց հնարավորություն է ընձեռում ունենալու առավել լավ աշխատանք և ավելի բարձր եկամուտ»¹:

Ներդրումային միջավայրի տակ շատ հաճախ հասկացվում է օբյեկտիվ նախադրյալների համագումարը, որը գնահատվում է մակրոտնտեսական այնպիսի բնութագրիչների հիման վրա, ինչպիսիք են՝ արտադրության գործոնների առկայությունը այս կամ այն աշխարհագրական վայրում, սպառողական պահանջարկը, գիտության զարգացվածության և դրա ձեռքբերումների ներդրման մակարդակը, շուկայական տնտեսության առաջատար ինստիտուտների զարգացվածությունը, ենթակառուցվածքները:²

Հարկ է նշել, որ ներդրումային միջավայրը բնորոշվում է առաջին հերթին կապիտալի համար տնտեսական պայմաններով, սակայն կարևոր նշանակություն ունեն նաև սոցիալական և քաղաքական պայմանները, որոնց պարագայում գործում է ներդրողը: Այլ կերպ ասած, ներդրումային միջավայրն այն պայմանների ամբողջությունն է, որոնց պարագայում ընթանում են ներդրումային գործընթացները: Այն ձևավորվում է նորմատիվ-իրավական, կազմակերպատնտեսական, սոցիալ-քաղաքական և այլ գործոնների փոխկապակցված ազդեցության արդյունքում, որոնք սահմանում են ներդրումային գործունեության պայմանները՝ տվյալ երկրում կամ տարածաշրջանում:

Պետք է նշել, որ ներդրումային միջավայրը՝ հանդիսանալով ներդրումային քաղաքականության ազդեցության օբյեկտ՝ մի կողմից՝ սահմանում

է ներդրումային քաղաքականության համար մեկնարկային պայմաններ, իսկ մյուս կողմից՝ հանդիսանում է վերջինիս փաստացի արդյունքը: Ներդրումային քաղաքականությունը, հանդես գալով որպես տարբեր միջոցառումների համախումբ, ազդեցություն է գործում ներդրումային միջավայրի տարբեր բաղադրիչների վրա՝ ձևավորելով ներդրումային միջավայրի վրա ազդեցության գլխավոր գաղափարախոսական հիմքը՝ կառավարվող գործոնների սահմանման և զարգացման միջոցով: Ընդ որում, ներդրումային քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է ներդրումային միջավայրի բարենպաստ փոփոխությունների աստիճանով, իսկ իր հերթին՝ բարենպաստ ներդրումային միջավայրն ազդում է ներդրումային քաղաքականության հետագա կատարելագործման վրա՝

Ներդրումային միջավայրի կառուցվածքն իր մեջ ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները՝

1. պետության ինստիտուցիոնալ կառուցվածքը և օրենսդրական դաշտը.
2. ներդրումային ներուժը.
3. ներդրումային ռիսկերը:

Ներդրումային միջավայրի գնահատման մեթոդները շատ բազմազան են ու բազմաբնույթ: Վերջիններս հիմնվում են տնտեսական, քաղաքական և ֆինանսական տարբեր ցուցանիշների համախմբի ուսումնասիրության վրա, որոնց շնորհիվ տվյալ երկրին (տարածաշրջանին) վերագրվում է ներդրումային ռեյտինգ: Միաժամանակ պետք է փաստել, որ ներդրումային միջավայրի գնահատման մեթոդաբանությունը դեռևս հեռու է կատարյալ լինելուց, քանի որ «ներդրումային միջավայր» եզրույթին բնորոշ է որոշակի սուբյեկտիվություն:

Ներդրումային միջավայրի ընդհանրական գնահատումները տատանվում են բարենպաստ և անբարենպաստ գնահատականների սահմաններում: Բարենպաստ է համարվում այն միջա-

1 www.worldbank.org/investmentclimate

2 Jones R. , «Comparative and absolute advantage», Institute for International Economic Studies, University of Stockholm, 1980, p. 310.

վայրը, որը նպաստում է ներդրողների ակտիվ գործունեությանը և խթանում է կապիտալի ներհոսքը: Անբարենպաստ ներդրումային միջավայրը մեծացնում է ներդրողների ռիսկերը, ինչը հանգեցնում է կապիտալի արտահոսքի և ներդրումային գործունեության անկման:

Հարկ է նշել, որ ներդրումային միջավայրի գնահատում տարբեր երկրներում իրականացվում է տարբեր կերպ: Մասնավորապես, Ճապոնիայում կիրառվում են ներդրումային միջավայրի նկարագրողական բնութագրիչներ՝ առանց քանակական գնահատականների, իսկ ԱՄՆ-ում ներդրումային միջավայրի գնահատումը ենթադրում է չորս ընդհանրացված ցուցանիշների սահմանում, որոնք բնորոշում են գործարար ակտիվությունը, տնտեսական համակարգի զարգացման ներուժը, ներդրումների տնտեսական արդյունավետությունը և հարկային քաղաքականության հիմնական բաղադրիչները:

Ներդրումային միջավայրը կարող է գնահատվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ներդրողի տեսանկյունից: Առաջին դեպքում գնահատվում է ներդրողների համար օրենսդրական դաշտը, ներքին տնտեսական քաղաքականությունը, ինչպես նաև ֆորմալ և ոչ ֆորմալ գործոնների ազդեցությունը: Արտաքին ներդրողի տեսանկյունից գնահատվում է օտարերկրյա ներդրողների նկատմամբ կիրառվող պետական տնտեսական քաղաքականությունը, ինչպես նաև ոչ ֆորմալ ինստիտուտների և գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են՝ ազգային մտածելակերպը, հոգեբանական առանձնահատկությունները, պատմական նախադրյալները, քաղաքական իրավիճակը, ազգային մշակույթը և այլն:

Ներդրումային միջավայրի վրա ազդող հիմնական գործոններն՝ ըստ վերջիններիս ունեցած ազդեցության՝ կարելի է տարանջատել օբյեկտիվ և սուբյեկտիվ տեսակների: Օբյեկտիվ գործոններից

կարելի է նշել բնակլիմայական պայմանները, էներգա-հումքային ռեսուրսներով ապահովվածությունը, աշխարհագրական դիրքը, ժողովրդագրական իրավիճակը և այլն: Սուբյեկտիվ են համարվում մարդկանց գործունեության կառավարման հետ կապված գործոնները:

Հարկ է նշել, որ ներդրումային միջավայրի գնահատման մոտեցումներից առավել ընդունելին համարվում է գործոնայինը, որը հիմնվում է ներքոհիշյալ գործոնների համախմբի գնահատման վրա.

- տնտեսական ներուժի առանձնահատկությունները,
- տնտեսվարման ընդհանուր մակարդակները (նյութական արտադրության ճյուղերի զարգացումը, հիմնական ֆոնդերի մաշվածքի աստիճանը, անավարտ շինարարությունը),
- շուկայական միջավայրի կայացվածությունը (ենթակառուցվածքներ, տեղական շուկայի տարողունակություն, սղաձ, սեփականության հարաբերություններ, արտահանման հնարավորություններ, ազգաբնակչության ներգրավվածություն ներդրումային գործընթացներում, օտարերկրյա կապիտալի առկայություն և այլն);
- երկրի քաղաքական իրավիճակը,
- սոցիալական գործոնները (բնակչության կենսամակարդակը, իրական աշխատավարձի չափը, օտարերկրյա մասնագետների աշխատանքի պայմանները, վերաբերմունքը օտարերկրյա ներդրողներին և գործարարներին),
- ֆինանսական ցուցանիշները(պետական բյուջեի եկամուտները, բյուջետային միջոցների և վարկերի հասանելիությունը, բանկային տոկոսադրույքի մակարդակը, բնակչության մեկ շնչին ընկնող ավանդների գումարը, երկրաժամկետ վարկերի տեսակարար կշիռը¹:

1 Ткаченко И. Ю. Инвестиции: учеб. пособие. – М.: Издательский центр «Академия», 2009. – 240 с., с. 234.

Գործոնային գնահատման մեկ այլ մոտեցմամբ՝ ներդրումային միջավայրի գնահատման համար իրականացվում է այդ միջավայրը բնորոշող ելքային գործոնների (կապիտալի ներհոսքը և արտահոսքը, սղաձի և տոկոսադրույքի մակարդակը, ՀՆԱ-ում խնայողությունների բաժինը), ինչպես նաև մուտքային գործոնների բնութագրիչների վերլուծություն, որոնք էլ կանխորոշում են ելքային բնութագրիչների նշանակությունը և արտահայտում ներդրումների ներգրավման գծով երկրի ներուժը և վերջիններիս իրականացման ռիսկերը: Դրանց շարքին են դասվում՝


- բնական ռեսուրսները և տնտեսության վիճակը.
- աշխատուժի որակը.
- ենթակառուցվածքների առկայությունը և զարգացման մակարդակը.
- քաղաքական կայունությունը և կանխատեսելիությունը.
- մակրոտնտեսական կայունությունը.
- տնտեսության կառավարման ու կարգավորման առանձնահատկությունները.
- օրենսդրական դաշտի կատարելությունը և օրենքների գերակայությունը

նր.

- սեփականության իրավունքների պաշտպանությունը.
- հարկային համակարգի բնույթը և հարկային բեռի մակարդակը.
- բանկային համակարգի զարգացվածությունը և վարկային միջոցների հասանելիությունը.
- տնտեսության հրապարակայնությունը.
- միջազգային առևտրի պայմանները.
- շուկա մուտք գործելու համար վարչական, տեխնիկական, տեղեկատվական և այլ խոչընդոտների առկայությունը.
- տնտեսության մենաշնորհացման մակարդակը:

Յուրաքանչյուր տնտեսական համակարգի ներդրումային միջավայր բնութագրվում է դինամիզմով, հետևաբար չափազանց կարևոր խնդիր է հանդիսանում վերջինիս մոնիթորինգի իրականացումը: Ներդրումային միջավայրի մոնիթորինգը հիմնականում իրականացվում է 3 մակարդակներով՝ միամակարդակ, երկմակարդակ և եռամակարդակ (գծանկար 1):

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ



Գծանկար 1. Ներդրումային միջավայրի մոնիթորինգի իրականացման ձևերը:

1-ին դեպքում դիտարկում է երկրի ներդրումային միջավայրը՝ չառանձնացնելով վերջինիս մեջ առանձին տնտեսական համակարգեր (տարածաշրջաններ, ոլորտներ): Երկմակարդակ մոնիթորինգի իրականացումը դիտարկում է ինչպես

ամբողջ երկրի, այնպես էլ դրա առանձին տարածաշրջանների ներդրումային միջավայրը: Եռամակարդակ մոնիթորինգն իրականացվում է երկրի, առանձին տարածաշրջանների և առանձին միջտարածաշրջանային տնտեսական գոտիների և

ձյուղերի մակարդակով:

Նշված եղանակներից առավել արդյունավետ կարելի է համարել թերևս 3-րդ տարբերակը, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս պարզեցնելու մոնիթորինգի գործընթացը, տեղեկատվության հավաքագրումը, ինչպես նաև մշակել երկրի տնտեսության բոլոր մակարդակներում ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված հստակ առաջարկներ:

Ներդրումային միջավայրի յուրահատկությունն այն է, որ վերջինիս հիմնական ցուցիչները հանդիսանում են ոչ միայն անընդհատ մշտադիտարկման առարկա, այլև ենթակա են պետական կարգավորման: Վերջինս իրականացվում է պետական ներդրումային քաղաքականության միջոցով, որն իրենից

ներկայացնում է երկրի կամ առանձին տարածաշրջանի մակարդակով կառավարման մարմինների կազմակերպչական և տնտեսական փոխազդեցության միջոցառումների համախումբ՝ միտված ներդրումների համար օպտիմալ պայմանների ձևավորմանը:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը և դրա մոնիթորինգը հանդիսանում է պետական մակրոտնտեսական քաղաքականության այն կարևոր ուղղությունը, որը կխթանի ինչպես ներքին, այպես էլ արտաքին կապիտալի մեծ հոսքեր դեպի տնտեսության տարբեր ոլորտներ, ինչն էլ իր հերթին կապահովի երկրում երակարծամկետ և կայուն տնտեսական աճ:

Պ Բ Ա Վ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Чепурина М. Н. /Под ред. / – «Курс экономической теории»: учебник – 6-е исправ. , доп. и перераб. Издание – Киров: «АСА», 2007. – 848 с.
2. Гретченко А. А. – «Инвестиционные процессы в условиях глобализации/ Аудит и финансовый анализ». – 2008. – №1. – С. 204–213.
3. Инвестиционный рейтинг российских регионов. 1999–2000 гг. // Эксперт. 2000, N 41, с. 73–90.
4. Азрилян А. Н. / под общ. ред. [и др.] / – «Большой экономический словарь» – 5-е изд. перераб. и доп. – М. : Институт новой экономики, 2002. – 1280 с.
5. Теплицкий В. , Костюковский Ю. – «Как оценить инвестиционную привлекательность предприятия / Деловая жизнь». 2002. N 9, с. 26–31.
6. Jones R. , «Comparative and absolute advantage», Institute for International Economic Studies, University of Stockholm, 1980, p.
7. Ткаченко И. Ю. Инвестиции: учеб. пособие. – М. : «Издательский центр «Академия» », 2009. – 240 с.
8. Воронцовский А. В. , «Инвестиции и финансирование: методы оценки и обоснования». СПб, 1998, с. 72–80.
9. www.worldbank.org/investmentclimate

1 Воронцовский А. В. , «Инвестиции и финансирование: методы оценки и обоснования». СПб, 1998, с. 72–80.

РОЛЬ ИНВЕСТИЦИОННОЙ СРЕДЫ И ОСОБЕННОСТИ ЕЕ ОЦЕНКИ

АЙК МХИТАРЯН

НАН РА, Институт экономики, аспирант

В последние десятилетия роль международных потоков инвестиционного капитала становится более значительной, чем мировая торговля товарами и услугами. В конечном счете международные потоки капитала способствуют тому, что национальные экономики становятся более зависимыми от них. Таким образом, на нынешнем этапе экономического развития одним из основных задач любого государства является обеспечение необходимых условий для формирования благоприятной инвестиционной среды, так как последняя является важной гарантией для безопасного и устойчивого экономического роста.

THE ROLE OF INVESTMENT ENVIRONMENT AND SPECIFICS OF ITS EVALUATION

HAYK MKHITARYAN

National Academy of Sciences of the RA: Institute of Economics, Postgraduate

In recent decades, the role of international capital flows is more important than global trade in goods and services. The movement of money for investing, trade or business production, whether by a corporation, a government or an individual, is commonly referred to as capital flows.

Ultimately, international capital flows are contributed to the fact that the national economy becomes more dependent on them.

Thus, in the present stage of economic development, one of the main tasks of any state is to ensure the necessary conditions for the formation of a favorable investment environment, as the latter, that, it is an important guarantee for safe and sustainable economic growth.

**ԻՐԱԴՐԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՇՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Ուսումնասիրությունը նվիրված է անգլերենում տնտեսական ոլորտին առնչվող հոդվածների, մասնավորապես՝ տնտեսական իրադարձությունների ընկալման առանձնահատկությունների բացահայտմանը: Տնտեսական իրադարձությունը սահմանվում է որպես մի երևույթ, որն ընդգրկում է այն ամենը, ինչ կատարվում է համաշխարհային, ինչպես նաև առանձին վերցրած երկրների տնտեսություններում և ներառում է տնտեսական անկում և վերելք առաջացնող իրավիճակներ, որոնք հասարակությունն արժևորում է որպես տնտեսական աշխարհում էական, կարևոր փոփոխություններ: Տնտեսական իրադարձություններ արտացոլող հոդվածների ընկալման գործընթացում ընթերցողը կիրառում է մի շարք ռազմավարական հնարներ, որոնցից առանցքային են իրադրային մոդելները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. տնտեսական իրադարձություն, տեղեկատվության մշակում, դիսկուրսի ընկալում, իրադրային մոդելներ:

Դիսկուրսի համապարփակ ընկալումը ենթադրում է գիտելիքի այնպիսի կառույցների կիրառում, ինչպիսիք են՝ իրադրային կամ դրվագային մոդելները: Իրադրային մոդելների հիմքում լեզվակիրների անհատական գիտելիքներն են, նրանց կուտակած նախորդ փորձը, դիրքորոշումները, նպատակները, գզացմունքներն ու հույզերը:

«Մոդել» հասկացությունն արտացոլում է դիսկուրսի ստեղծման և ընկալման գործընթացում մարդկանց գիտելիքն՝ իրական կամ երևակայելի իրադրու-

թյունների մասին: Մոդելները կոչվում են իրադրային կամ դրվագային, քանի որ դրանք գտնվում են դրվագային հիշողության մեջ: Այսպիսով՝ իրադրային մոդելը ներառում է գիտելիք՝ որոշակի իրադրության մասին, ինչպես նաև՝ այն գիտելիքը, որ կուտակել է անհատը տվյալ իրադրության մասին իր նախորդ փորձից: Այս իրադրությանը վերաբերող յուրաքանչյուր նոր տեղեկատվություն, որ մենք ունենք դրվագային հիշողության մեջ, կարող է օգտագործվել մոդելն ընդլայնելու և համալրելու համար: Անհատին առնչվող գործողությունների և իրադարձությունների մոդելները կարող են փոխվել կամ վերափոխվել, միաժամանակ, կարող են լինել մոդելներ՝ առանձնակի իրադարձությունների մասին: Ավելին, դրանք կարող են ներառել իրադրությունների մասին չափազանց անհատական գիտելիքներ, իսկ տեղեկույթի մի մասը կարող է նաև վերաբերել հասարակության որոշակի խմբին, նույնիսկ դրա բոլոր անդամներին:

Դիսկուրսի ապակողավորումն ընթանում է մի շարք ռազմավարական հնարների շնորհիվ: Առաջին հերթին, դա լեզվակրի կողմից, ըստ տեքստային բազայի, դիսկուրսի իմաստային կառուցումն է, որը բաղկացած է տեղային և համընդհանրական մակարդակում կապակցված նախադասությունների շարքից: Այս գործընթացը տեղի է ունենում կարճատև հիշողության մեջ, սակայն վերջինիս սահմանափակ կարողությունների հետևանքով կրում է շրջափուլային բնույթ. այսինքն՝ տեղեկույթը, որը մշակվում է կարճատև հիշողության մեջ, շարունակաբար անցում է կատա-

րում դեպի դրվագային հիշողության շրջափուլ: Տեղային և համընդհանրական մեկնաբանման գործընթացների իրականացման համար անհրաժեշտ է ֆրեյմներով և սցենարներով կանխատեսադրված գիտելիք: Այս բոլոր գործընթացները կառավարում է վերահսկման համակարգը, որտեղ մեկնաբանման ենթակա յուրաքանչյուր հատվածի համար ներկայացված են թեմաներ (մակրոպրոպոզիցիաներ), ընթերցողի նպատակները և սցենարներից արտամոլվող գիտելիք: Ընկալման գործընթացներն ավելի շուտ ռազմավարական, քան կառուցվածքային բնույթի են, որոշակի կանոնների ենթարկվող: Այսինքն՝ ընկալման գործընթացն աստիճանական է ու շարունակական: Հաճախ կիրառվում է ոչ լիարժեք տեղեկույթ, պահանջվում են տվյալներ դիսկուրսի տարբեր մակարդակներից և հաղորդակցման ենթատեքստից: Ի վերջո, ընկալման գործընթացը վերահսկվում է՝ անհատից անհատ տարբերվող նպատակներով և համոզմունքներով:

Ընդամին, ըստ Թ. վան Դեյքի, դիսկուրսի լիարժեք ընկալման համար, այս ամենի հետ մեկտեղ, անհրաժեշտ է նաև իրադրային մոդելի առկայություն (**Dijk van T.A. Episodic models in discourse processing, New York, 1987, pp. 164–165**): Հատկանշական է նրա առաջարկած՝ իրական իրադրությունների և դրանց ձանաչողական ներկայացումների միջև տարբերությունը՝

1. Քանի որ մենք չենք կարող և կարիք չունենք իմանալու աշխարհի մասին բոլոր փաստերը, ուստի ձանաչողական մոդելները կցկտուր են և ոչ լիարժեք:

2. Մոդելները կարող են անորոշ ձևով ներկայացնել իրական իրադրությունները: Այսպես՝ մենք կարող ենք «John made a trip to Portugal» բարդ գործողությունը ներկայացնել մեկ պարզ մոդելով, մինչդեռ իրականում դա բաղկացած է իրադարձությունների, գործողությունների, առարկաների և մարդկանց բավական

բարդ և շարունակական շղթայից, որից միայն մի փոքր հատվածն է արտահայտվում այս մոդելում:

3. Մոդելներն արտացոլում են հասարակությանը համապատասխան իրադրությունների մեկնաբանումներ: Օրինակ՝ մեկ մարդու կողմից առարկայի փոխանցումը մյուսին, որոշակի հասարակական իրադրություններում, կարող է դիտվել որպես «նվերների հանձնում»:

Իրադրությունների մեկնաբանման հասարակական սահմանփակումներով հանդերձ, ձանաչողական մոդելները անհատական և սուբյեկտիվ բնույթի են: Միևնույն իրադրությունը տարբեր մարդիկ կարող են մեկնաբանել տարբեր կերպ՝ ըստ իրենց տեսակետների, նպատակների:

Պետք է նշել նաև, որ մոդելները սուկ մեկուսացած գիտելիքային կառույցներ չեն, որ առկա են մարդկանց դրվագային հիշողության մեջ, այլ համակարգված, փոխկապված կատեգորիաներ, որոնք թույլ են տալիս համատեղել և կապակցել, ինչպես նաև վերհիշել այլ մոդելներ: Այսպես՝ ծննդյան օրվա երեկույթի ընդհանուր իրադրությունում, հնարավոր է, պատահի վիճաբանություն, որը որպես առանձնակի «իրադրություն», կունենա իր կատարման ժամանակը, հանգամանքները, մասնակիցները և իրադարձությունները (**Dijk van T.A. Episodic models in discourse processing, New York, 1987, pp. 171–176**):

Տարբերակվում են անհատական և ընդհանուր մոդելներ: Անհատական մոդելը որոշակի իրադրության (որում մենք ներգրավված ենք կամ որի մասին կարդում կամ լսում ենք) ներկայացումն է: Այն կառուցվում է՝ ըստ հետևյալ տիպի տեղեկատվության՝

1. մեր ունեցած ընդհանուր մոդելների հատվածներ.
2. առկա դիսկուրսից քաղված տեղեկություն.
3. ընդհանուր իմաստային գիտելիքից դուրս բերված հատվածներ:

Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր անհատական մոդել ինքնաբերական կառույց է, գիտելիքի այլ ձևերի միասնություն: Դիսկուրսի մեկնաբանումից հետո այս անհատական մոդելը հազվադեպ է կիրառելի լինում: Այնուամենայնիվ, վերջինիս նոր տարրերն օգտագործվում են մեր ընդհանուր մոդելները լրացնելու նպատակով:

Մոդելների կիրառումը ենթադրում է մի շարք ռազմավարություններ՝ հաղորդակցման ենթատեքստ, նպատակներ և հետաքրքրություններ, վերնագիր, առաջին նախադասություններ (որոնք կիրառվում են ոչ միայն տեքստի մակրոկառուցվածքն ապահովելու, այլև ներգրավված իրադարձությունների վերաբերյալ համապատասխան գիտելիքն ակտիվացնելու համար), նախադասությունների կապակցվածություն, մշտադիտարկում՝ որպես տեղային և համընդհանրական ընկալման գործընթացներ, մոդելների, սցենարների և այլ գիտելիքների ակտիվացում և վերհանում, ինչպես նաև տեքստի և համատեքստի միջև կապի շարունակաբար հսկում վերահսկման մոդելի կողմից, տեղեկացում (ընկալման մոդելը ենթադրում է ճանաչողական մոդելի աստիճանական կառուցում թե՛ նոր, թե՛ հին տեղեկույթի ներգրավմամբ), արժևորում (ցանկության դեպքում կարող ենք արժևորել թե՛ ստացվող տեղեկույթը, թե՛ մոդելի հնարավոր վերափոխումները, որ կարող է ներառել տվյալ տեղեկույթը. Օրինակ՝ արդյո՞ք տեղեկությունը ստույգ է, թե՞ ոչ) (**Dijk van T.A. Episodic models in discourse processing, New York, 1987, pp. 177–179**):

Այսպիսով՝ հիմնվելով Թ. վան Դեյքի մշակած՝ դիսկուրսի մեկնաբանման ռազմավարության վրա՝ փորձենք վերլուծել 2015 թ. նոյեմբերի 28-ին «www.reuters.com» կայքում տեղ գտած մի տնտեսական իրադարձություն: Վերլուծության արդյունքների առավել հավաստիություն ապահովելու համար սույն

իրադարձության մոդելների մշակումը զուգակցել ենք 50 հոգու շրջանում կատարված հարցմամբ՝ վերստուգելով, մշակելով, հավաքագրելով և արձանագրելով առավել հաճախ տրվող պատասխանները: Նշենք նաև, որ տվյալ դիսկուրսի հատվածի ընկալման հարցում ընթերցողների ցուցաբերած տարբեր մոտեցումները բնականոն են՝ պայմանավորված նրանց նպատակներով, մտադրություններով, մտահորիզոնով, աշխարհընկալմամբ, իրազեկության մակարդակով, հասարակական-մշակութային որոշակի առանձնահատկություններով և այլն: Վերլուծության գործընթացը դյուրին դարձնելու նպատակով այն տեղեկույթը, որը ստացվում է ընդհանուր գիտելիքներից, ներկայացվում է շեղատառերով, մինչդեռ անհատական գիտելիքներից արտամղվող տեղեկատվությունը՝ ընդգծված ձևով:

Վերնագիր՝

«Putin, citing national security, signs Turkey sanctions decree»

Մոդել 1. Մասնակիցներ՝

1.1. Պուտին/ 1.2. Ռուսաստանի նախագահ / 1.3. Իշխանություն.

Մոդել 2. Ազգային անվտանգություն/ 2.1. Ռուսաստանը՝ Հայաստանի դաշնակից.

2.2 ներգրավվածության զգացում:

Մոդել 3. Թուրքիա:

Մոդել 4. Պատժամիջոցներ/ 4.1. Ինչպիսի՞:

Մոդել 5. Պատճառ / 5.1. Հնարավոր է՝ օրեր առաջ Թուրքիայի օդային փարածքում ռուսական ինքնաթիռի խցում:

Նախադասություն 1՝

President Vladimir Putin signed a decree imposing a raft of punitive economic sanctions against Turkey on Saturday, underlining the depth of the Kremlin's anger toward Ankara four days after Turkey shot down a Russian warplane.

Մոդել 1. Պատժամիջոցները տնտեսական են. 1.1. Punitive ածականը հաստատում է պատճառի վարկածը:

Մոդել 2. Կրեմլ՝ 2.1. *Ռուսաստանի նախագահի նարավայր*. 2.2. *Անցյալ տարի այցելել են*. 2.3. Կրեմլը խիստ զայրացած է:

Մոդել 3. Անկարա / 3.1. *Թուրքիայի մայրաքաղաք*:

Մոդել 4. Ժամանակ. 4.1. *Ինքնաթիռի խոցումից* 4 օր հետո:

Մոդել 5. *Թուրքիան խոցել է ռուսական ինքնաթիռը* (տեղեկույթ, որ հայտնի է նախորդ նորություններից և արդեն ամբարվել է մեր ընդհանուր գիտելիքների շտեմարանում):

Նախադասություն 2՝

The decree, flights from Russia to Turkey would which entered into force immediately, said charter be banned, that tour firms would be told not to sell any holidays there, and that unspecified Turkish imports would be outlawed, and Turkish firms and nationals have their economic activities halted or curbed.

Մոդել 1. Ժամանակ. 1.1. Հրամանն անմիջապես ուժի մեջ է մտել:

Մոդել 2. Հետևանքներ. 2.1. Ռուսաստան – Թուրքիա թռիչքների արգելք. 2.2. Տուրիստական գործակալությունների՝ դեպի Թուրքիա փաթեթների վաճառքի արգելք. 2.2.1. Ունեն ռուս ընկերներ, որոնք հանգստացել են Թուրքիայում. 2.3. Թուրքական ապրանքների ներկրման արգելք. 2.4. Թուրքական ընկերությունների գործունեության դադարեցում:

Մոդել 3. Հնարավոր հետևանքներ. 3.1. Թուրքիայի տնտեսական վիճակի վատթարացում. կապված այն հանգամանքի հետ, որ տեղի զբոսաշրջային արդյունաբերությունը մեծապես հենվում է ՌԴ քաղաքացիների վրա. 3.2. Կտուժեն Թուրքիայի ոչ միայն տուրիստական, այլև մյուս ոլորտները. 3.3. Թուրքիայի վարկանիշի անկում:

Նախադասություն 3՝

“The circumstances are unprecedented. The gauntlet thrown down to Russia is unprecedented. So naturally the reaction is in line with this threat, ” Dmitry Peskov,

Putin’s spokesman, said hours before the decree was published.

Մոդել 1. Հանգամանքներ. 1.1. Աննախադեպ լարված իրավիճակ. 1.2. Սպասողական վիճակ. 1.3. *Սպառնալիք*:

Մոդել 2. Մասնակիցներ / 2.1. *Դմիտրի Պեսկով*. 2.2. *Պուրինի խոսնակ*:

Մոդել 3. Ժամանակ. 3.1. Հրամանը ստորագրելուց ժամեր առաջ:

Նախադասություն 4՝

But aides to Putin say he is incandescent that Turkish President Tayyip Erdogan has yet to apologize for the Nov. 24 incident near the Syrian–Turkish border in which one Russian pilot was killed along with a Russian marine who tried to rescue the crew of the downed SU–24 jet.

Մոդել 1. Մասնակիցներ. 1.1. Պուտինի օգնականներ:

Մոդել 2. Պուտինի դիրքորոշումը. 2.1. Խիստ զայրացած. 2.3. Ակնկալում է էրդոհանի զղջումը *նոյեմբերի 24-ի պահարի վերաբերյալ*. 2.4. *Էրդոհանը՝ Թուրքիայի նախագահ*:

Նախադասություն 5՝

Senior Russian officials have called the episode, one of the most serious publicly acknowledged clashes between a NATO member country and Russia for half a century, a pre-planned provocation.

Մոդել 1. Մասնակիցներ. 1.1. Ռուսաստանի պաշտոնյաներ:

Մոդել 2. Միջադեպի գնահատական. 2.1. Լրջագույն բախում (the most serious clash). 2.2. Նախօրոք պլանավորված սադրանք:

Մոդել 3. NATO. 3.1. *Միջազգային կառույց*:

Մոդել 4. Ժամանակ. 4.1. Կես դար:

Նախադասություն 6՝

Erdogan has been equally robust. He has said Turkey will not apologize for downing the jet, saying Ankara was fully within its rights to defend its air space. On Saturday, he appeared to soften his rhetoric a little, saying the episode had saddened him.

Մոդել 1. Մասնակիցներ. 1.1. Էրդոհ-

ղանն անդրդվելի է. 1.2. Ներդրություն չի խնդրի ռուսական ինքնաթիռի խոցման համար. 1.3 Արդարանում է, որ Թուրքիան լիիրավ է պաշտպանել իր օդային տարածքը:

Մոդել 2. Ժամանակ. *Այս նորության թողարկման օրը:*

Մոդել 3. Մասնակիցներ. 3.1. Էրդոհանը նշել է, որ այս միջադեպը տխրեցրել է իրեն:

Այսպիսով՝ ընթերցողը հաղորդակցման համատեքստից՝ վերը նշված կայքից, իրազեկվելով տվյալ իրադարձության մասին, վերհանում է նմանատիպ համատեքստերի՝ իր անհատական կամ ընդհանուր մոդելները, որոնց միջոցով էլ ակտիվացնում է քաղաքական և տնտեսական իրադարձությունների հետ կապված իր գիտելիքները: Այս դեպքում ակտիվանում են Ռուսաստանին և Թուրքիային առնչվող քաղաքական, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների մոդելները: Բավական իմաստալից «Putin, citing national security, signs Turkey sanctions decree» վերնագիրն ընթերցողի համար ծառայում է որպես հարթակ՝ ձևուն անցում կատարելու այս երկու պետությունների միջև պատահած՝ ինքնաթիռի խոցման տհաճ միջադեպ: Այստեղ «խաղի» մեջ են ներգրավվում մի շարք ընդհանուր մոդելներ. Ռուսաստանի նախագահ, իշխանություն, Ռուսաստանը՝ Հայաստանի դաշնակից: Հարցվողների մեծամասնության շրջանում առաջանում է անհատական մոտեցում ներգրավվածության առումով: Միաժամանակ, ընթերցողը փնտրում է համապատասխան մոդել՝ կապված պատժամիջոցների պատճառի հետ՝ համադրելով դա օրեր

առաջ Թուրքիայի օդային տարածքում ռուսական ինքնաթիռի խոցման փաստի հետ: Առաջին նախադասության ընթերցումից հետո պատժամիջոցների պատճառի ենթադրությունը հաստատվում է, և ընթերցողը, համադրելով իր ունեցած ընդհանուր մոդելները նոր տեղեկատվության հետ, մշակում է նորերը և ենթադրություններ անում հնարավոր հետագա իրադարձությունների վերաբերյալ. Թուրքիայի տնտեսական վիճակի վատթարացում, որը կանդրադառնա ոչ միայն գրոսաշրջության, այլև մյուս ոլորտների վրա, այդ երկրի վարկանիշի անկում և այլն: Ակտիվանում են նաև մի շարք անհատական գիտելիքներ (անցյալ տարի այցելել եմ Մոսկվա՝ Կրեմլ, ունեմ ռուս ընկերներ, որ հանգստացել են Թուրքիայում):

Այսպիսով՝ ընթերցվող նորության ընկալման շարունակական գործընթացը ենթադրում է մոդելների աստիճանական կառուցում թե՛ ըստ արդեն ունեցած մոդելների տվյալների, թե՛ ըստ նոր տեղեկությունների: Սա թույլ է տալիս ընթերցողին հարմարեցնելու նոր տեղեկատվությունը համապատասխան մոդելներին՝ այս կերպ վերափոխելով և, ի վերջո, կուտակելով դրանք սեփական մոդելների «պահեստում»՝ հետագա կիրառման նպատակով: Ամփոփելով՝ նշենք, որ հոդվածում վերլուծելով ընթերցողի կիրառած ռազմավարությունները տեքստն ընկալելու նպատակով՝ պարզաբանեցինք այն էական իրադրային մոդելները, որոնք կարևոր և անհրաժեշտ դեր ունեն դիսկուրսի, մասնավորապես՝ տնտեսական իրադարձության ընկալման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Dijk van T.A. Episodic models in discourse processing // Horowitz R., Samuels S.J. (eds). Comprehending oral and written language. New York: Academic Press, 1987. – p. 161–196.
2. www.reuters.com

РОЛЬ ЭПИЗОДИЧЕСКИХ МОДЕЛЕЙ В ПРОЦЕССЕ КОНЦЕПТУАЛИЗАЦИИ ЭКОНОМИЧЕСКИХ СОБЫТИЙ

ЛУСИНЕ АРУТЮНЯН

*Армянский государственный экономический университет, доцент кафедры иностранных языков,
кандидат филологических наук, доцент*

В статье анализируется роль ситуационных или эпизодических моделей в процессе концептуализации статей, освещающих экономические события. Экономическим событием является все то, что происходит как в мировой, так и в экономике отдельно взятых стран и включает в себя любую экономическую ситуацию, которая порождает экономический спад или подъем и со стороны общества оценивается как существенное, важное изменение в экономическом мире. Как показал материал исследования, в информационных статьях для полноценного восприятия содержания экономических событий существенную роль играют эпизодические модели, которые, активируясь, обеспечивают доступ к соответствующей информации.

THE ROLE OF EPISODIC MODELS IN THE PROCESS OF THE CONCEPTUALIZATION OF ECONOMIC EVENTS

LUSINE HARUTYUNYAN

*Armenian State University of Economics, Chair of Languages, Candidate of Philological sciences,
Associate Professor*

The article discusses the role of episodic models in the process of the conceptualization of news by highlighting economic events. An economic event may be defined as any occurrence that takes place in the global economy as well as in certain countries' economies, which involves any situation triggering ups and downs of economy and is evaluated by the society as a vital and significant change in the economic world. The analysis illustrates that for the appropriate understanding of economic events it is necessary that certain episodic models should be activated to provide the reader with relevant information.

**ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Բանկային համակարգը, հանդիսանալով ֆինանսական համակարգի առանցքային տարրերից մեկը, կարևոր դերակատարում ունի ֆինանսական միջոցների վերաբաշխման և երկրի տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման գործում: Բազում գիտնականներ և տնտեսագետներ փորձեր են կատարել՝ բացահայտելու ֆինանսական հաստատունության վրա ազդող հիմնական գործոնները և մշակելու դրանց բացասական ազդեցությունը նվազագույնին հասցնելուն միտված մի շարք արդյունավետ միջոցառումներ: Մասնագիտական գրականության մեջ բացակայում է ֆինանսական կայունության սահմանման ու դրա գնահատման եղանակների համընդհանուր ընդունելի մոտեցումը: Բոլոր սահմանումներում այս կամ այն աստիճանով առանձնացվում են ֆինանսական կայունության չափազանց կարևոր բնութագրերը: Սահմանումների մեծ մասին միավորում է այն գաղափարը, որ բանկային հատվածի ֆինանսական հաստատունությունը պետք է պարտադիր իր մեջ ներառի անխափան և նորմալ գործունեության պարտավորությունը՝ անկախ արտաքին ցնցումներից առաջացող բացասական ազդեցություններից:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. բանկային համակարգ, ֆինանսական կայություն, արտաքին միջավայր, ռիսկեր, բացասական ցնցումներ, հուսալիություն, գործոններ, ֆինանսական անկայունության, սահմանումներ, ֆինանսական հաստատունություն, հավասարակշռված վիճակ:

Ցանկացած պետության դրամավարկային քաղաքականության ռազմավարական նպատակներից մեկը մակրոտնտեսական և ֆինանսական կայության ապահովումն է՝ որպես տնտեսական աճի կարևոր նախապայման: Բանկանաբար, ցանկացած տնտեսական ցնցում ազդում է բանկային համակարգերի գործունեության վրա: Հարկ է նշել, որ բանկային համակարգի կայունությունը որոշվում է վերջինիս բաղկացուցիչ տարրերի հաստատունությամբ և դրանց համակարգված փոխազդեցությամբ: Իրենց գործունեության յուրահատկությունից ելնելով՝ բանկերը ենթակա են հավանական մեծաթիվ ռիսկերի: Օրինակ՝ այնպիսին են՝ առավել մեծ կախվածությունը ավանդներից, պասիվների համեմատ՝ ակտիվների ավելի երկարաժամկետ բնույթը, ավելի ցածր իրացվելիությունը և այլն: Բանկերի և դրանց հաճախորդների միջև ինչպես նաև բուն բանկերի միջև, ծագում են բարդ փոխհարաբերություններ, փոխադարձ կախվածություններ, ինչի արդյունքում այն խնդիրները, որոնք սկզբնական փուլում կրում են տեղային բնույթ, կարող են տարածվել ողջ բանկային հատվածում և անցում կատարել ընդհանուր առմամբ տնտեսության վրա: Բանկային համակարգում արձանագրված ձգնաժամերը հանգեցրել են ֆինանսական խոշոր կորուստների, ներդրումային և առևտրական ոլորտների վարկավորման խաթարումների՝ ինչի հաղթահարման համար պետությունը վատնել է հսկայական միջոցներ:

Բանկային համակարգը կարելի է

բնորոշել որպես օրենսդրությամբ սահմանված և հստակ կանոնակարգված յուրահատուկ մասնագիտացված կազմակերպությունների ամբողջություն, որոնք գործում են ֆինանսական և դրամավարկային հարաբերությունների ոլորտում և ունեն բանկային գործունեության իրականացման համար բացառիկ իրավունքներ: Վերջինս ներառում է Կենտրոնական բանկը, առևտրային բանկերը և դրանց մասնաձյուղերն ու ներկայացուցչությունները, արտասահմանյան բանկերի մասնաձյուղերը և ներկայացուցչությունները և վճարահաշվարկային ծառայություններ իրականացնող կազմակերպությունները:

Բանկային համակարգը կարելի է սահմանել նաև որպես դրամական հարաբերությունների գարգացվածությամբ պայմանավորված տարրերի կանոնակարգված համակարգ, որոնք կապված են միմյանց հետ գործունեության միասնական նպատակով և ապահովում են հստակ կապ միմյանց միջև, ինչպես նաև արտաքին միջավայրի հետ: Բացի այդ, «բանկային համակարգ» եզրույթը սահմանում է ոչ միայն բանկերի կազմը, քանի որ ըստ բովանդակության՝ այն ավելի լայն իմաստ ունի և ներառում է՝

- որոշակի տարրերի ամբողջությունը.

- որոշակի ամբողջականություն ստեղծող տարրերի բավականաչափությունը.

- տարրերի փոխազդեցությունները¹:

Ներկայումս համաշխարհային տնտեսության լճացման, ֆինանսական գլոբալացման աճող տեմպերի և աշխարհում ձգնաժամային երևույթների հաճախակի տեղ գտնելու պայմաններում, առավել մեծ ուշադրություն է սկսել հատկացվել ինչպես ընդհանուր առմամբ ֆինանսական համակարգի, այնպես էլ դրա

առանձին բաղադրիչների ֆինանսական կայունության հիմնախնդիրներին: Բանկային համակարգը, հանդիսանալով ֆինանսական համակարգի առանցքային տարրերից մեկը, ինչպես արդեն նշվեց, կարևոր դերակատարում ունի ֆինանսական միջոցների վերաբաշխման և երկրի տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման գործում: Այդ իսկ պատճառով բանկերի ֆինանսական վիճակը, դրանց կայունությունը և հուսալիությունը չափազանց կարևոր դերակատարում ունեն տնտեսության լավագույն կերպով գործելու համար: Բազում գիտնականներ և տնտեսագետներ փորձեր են կատարել բացահայտելու ֆինանսական հաստատունության վրա ազդող հիմնական գործոնները և մշակելու դրանց բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելուն միտված մի շարք արդյունավետ միջոցառումներ, սակայն անհրաժեշտ է նշել, որ չնայած տվյալ թեմայի նկատմամբ աճող հետաքրքրությանը՝ մասնագիտական գրականության մեջ բացակայում է ֆինանսական կայունության սահմանման ու դրա գնահատման եղանակների համընդհանուր ընդունելի մոտեցում:

Արևմտյան երկրների հետազոտողների տնտեսագիտական հետազոտություններում առկա են ֆինանսական կայունության մի շարք սահմանումներ, որոնց վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել դրա վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներ: Մի շարք մասնագետներ ֆինանսական կայունությունը սահմանելիս ելնում են հակառակ տեսակետից, այն է՝ վերագրելով վերջինիս այն ամենը, ինչը չի վերաբերում ֆինանսական անկայունություն հասկացությանը: « ... ֆինանսական կայունությունը սահմանվում է որպես ֆինանսական անկայունության բացակայություն... իրավիճակ, որի դեպքում տնտեսական բարեկեցությունը թուլանում է ֆինանսական ակտիվների գնային տատանումներից, կամ ֆինանսական ինստի-

1 Բելառուսի բանկերը (2010 թվականի փետրվարի 24). մուտքի ռեժիմ՝ www.ibank.by/bankovskaya-sistema-strany-sterzhen-ee-ekonomiki:

տուտները չեն կարող կատարել իրենց պայմանագրային պարտավորությունները...»¹ կամ «... ֆինանսական անկայունությունը համապատասխանում է այնպիսի իրավիճակների (պայմանների) շարքին, որոնցում ֆինանսական շուկաները ազդում կամ ազդեցության սպառնալիքներ են ստեղծում տնտեսական բարեկեցության վրա»²:

Կարծում ենք, որ ֆինանսական անկայունության եզրույթների միջոցով ֆինանսական կայունության վերոշարադրյալ սահմանումները բավականին անորոշ են և չեն արտացոլում այդ կարևոր եզրույթի բուն էությունը: Գնային գործոններից բացի՝ ֆինանսական շուկաներում գոյություն ունեն նաև բազում այլ գործոններ, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական համակարգի կայունության վրա: Բացի այդ՝ գոյություն չունի նաև միանշանակ և միասնական կարծիք, առ այն, թե ի՞նչ է ֆինանսական անկայունությունը, այդ իսկ պատճառով էլ ֆինանսական կայունության սահմանման տվյալ մոտեցումն ուղեկցվում է որոշակի բարդություններով:

Միջազգային արժույթային հիմնադրամի կողմից ֆինանսական կայունության վերաբերյալ տրվում է հետևյալ սահմանումը. «ֆինանսական համակարգը, անկախ վերջինիս չափից կամ կառուցվածքային բարդությունից, կայուն է, երբ այն ունակ է մեծացնել տնտեսական բարեկեցությունը և համահարթեցնել ցանկացած տատանումներ, որոնք կարող են տեղի ունենալ հնարավոր բացասական ցնցումների արդյունքում»³:

Գերմանական դաշնային բանկի կողմ

մից ֆինանսական կայունությունը դիտարկվում է որպես «նույնիսկ սթրեսային իրավիճակներում և կառուցվածքային փոփոխությունների ժամանակահատվածներում ֆինանսական համակարգի կողմից իր մակրոտնտեսական գործառույթների բնականոն կատարման ունակությունը՝ ներառյալ ֆինանսական ռեսուրսների և ռիսկերի արդյունավետ վերաբաշխումը, ինչպես նաև վճարումների և հաշվարկների կատարումը»⁴:

Իր հերթին, Գ.Շինասին, որը տվյալ ուղղությամբ անցկացրել է բավականաչափ մեծաթիվ հետազոտություններ, կարծում էր, որ ֆինանսական կայունությունը տեղ ունի ֆինանսական համակարգի կողմից երեք հիմնական գործառույթների համաժամանակյա կատարման ունակության պայմանով: «Առաջին հերթին՝ ֆինանսական համակարգն արդյունավետ և անդադար նպաստում է տնտեսության մեջ խնայողություններ ունեցողներից դեպի ներդրողները ռեսուրսների միջժամանակային վերաբաշխմանը և ընդհանուր առմամբ տնտեսական ռեսուրսների բաշխմանը: Երկրորդը՝ հեռանկարային ֆինանսական ռիսկերը սահմանվում և գնահատվում են ընդունելի ստույգությամբ, ինչպես նաև դրանք հարաբերականորեն լավ են կառավարվում: Երրորդը՝ ֆինանսական համակարգը գտնվում է այնպիսի իրավիճակում, որ այն առանց լարվածության, եթե ոչ անդադար, կարող է կլանել ֆինանսական և տնտեսական անսպասելի իրադարձությունները և ցնցումները»⁵:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ բոլոր սահմանումներում այս կամ այն աստիճանով առանձնացվում են ֆինանսական կայունության չափազանց կարևոր բնութագիրը՝ ինչպես ընդհանուր առ-

1 Crockett, A. Why is Financial Stability a Goal of Public Policy?, in *Maintaining Financial Stability in a Global Economy*, Symposium Proceedings, Federal Reserve Bank of Kansas City, August 1999, pp. 55–96.

2 Chant, J. Financial Stability as a Policy Goal, in *Essays on Financial Stability*// Technical Report No. 95, Bank of Canada. – 2003.

3 International Monetary Fund. *The Financial stability report 2009*. URL: <http://www.imf.org>

4 Գերմանական ֆեդերատիվ բանկ [Էլեկտրոնային ռեսուրս]. Մուտքի ռեժիմ՝ <http://www.bundesbank.de/finanzsystemstabilitaet/fs.en.php>:

5 Schinasi, G. *Defining Financial Stability*// IMF Working Paper No. WP/04/187, October 2004.

մամբ ֆինանսական համակարգի վրա, այնպես էլ դրա առանձին տարրերի վրա բացասական ազդեցություն գործող տարատեսակ ցնցումներին դիմակայումը և դրանց հարթումը: Հեղինակներն ընդգծում են ֆինանսական համակարգի կողմից իր հիմնական գործառնությունների անխափան կատարման կարևորությունը՝ չնայած արտաքին տատանումներին, քանի որ դա անհրաժեշտ է ամբողջ տնտեսության կայունության պահպանման և ձգնաժամային սցենարների զարգացման կանխարգելման համար:

Եվրոպական Կենտրոնական բանկի սահմանումը նույնպես ունի նմանություններ վերոնշյալ եզրույթների հետ. ֆինանսական կայունությունը մի վիճակ է, որում ֆինանսական համակարգը հարկ եղած կերպով կատարում է իր հիմնարար խնդիրները և պատրաստվում է հետագայում շարունակել իր գործունեությունը: Այսպիսով՝ Եվրոպական Կենտրոնական բանկը հիմնական խնդիրների շարքում տարանջատում է ֆինանսական ռեսուրսների բաշխման, ֆինանսական ռիսկերի բացահայտման և կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև՝ արտաքին բացասական արդյունքների կլանումը¹:

Ինչպես վերևում նշվեց, արևմտյան հրապարակումներում բանկային համակարգի հաստատունությունը հասկացության հետ կապված հարցերը և խնդիրները դիտարկվում են ֆինանսական կայունության ոլորտի հետազոտությունների համատեքստում: Իհարկե, պետք է փաստել, որ ֆինանսական կայունության հասկացությունը բավական ընդարձակ է, քան առանձին վերցված բանկային հատվածի կայունությունը, սակայն, որպես կանոն, բոլոր երկրներում ֆինանսական կայունության ապահովման մեջ առանցքային դերակատարում ունեն հենց առևտրային բանկերը:

Բանկային համակարգի ֆինանսական հաստատունության ուսումնասիրությունը, կարծում ենք, կարևոր դերակատարում ունի ընդհանուր ֆինանսական կայունության վերլուծության մեջ, քանի որ այն առանցքային դիրք է զբաղեցնում ֆինանսական հատվածում՝ ֆինանսական պարտքային գործիքների տարբեր տեսակների թողարկման և ֆինանսական ներդրման տարբեր տեսակների համեմատ, որոնցով զբաղվում են ֆինանսական համակարգի մյուս տարրերը (ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ): Բանկային համակարգն, ինչպես արդեն նշվեց, տնտեսության մեջ հիմնական ֆինանսական միջնորդն է և առանց դրա արդյունավետ և կայուն գործունեության անհնարին է տնտեսության առաջընթաց զարգացումը: Այդ իսկ պատճառով ֆինանսական կայունության վերոնշյալ սահմանումները սկզբունքորեն կարելի է դիտարկել որպես բանկային համակարգի ֆինանսական կայունության սահմանումներ:

Անհրաժեշտ է նաև ուշադրությունը սևեռել այն փաստին, որ բանկային համակարգի ֆինանսական կայունության և հաստատունության ուսումնասիրությունները սկիզբ են առել ոչ այդքան վաղ անցյալում, ուստի ներկայումս գոյություն ունեցող եզրույթաբանությունը բոլորի կողմից ընդունելի և հստակ չէ և դրա վերաբերյալ միանշանակ սահմանումներ դեռևս մշակված և հաստատված չեն: Հարկ է նշել, որ գոյություն ունեն որոշ տարաձայնություններ՝ կապված այն հարցի հետ, թե արդյոք «ֆինանսական կայունություն» և «ֆինանսական հաստատունություն» եզրույթները նույնակա՞ն են: Վերլուծելով արտասահմանյան աղբյուրները՝ կհայտնաբերենք, որ հաստատունությունը և կայունությունը նշվում են անգլերեն մեկ բառով՝ «stability» (կայունություն, հաստատունություն): Այսինքն՝ տվյալ հասկացությունների տարանջատումն արտասահմանյան գրականության մեջ

1 Zapodeanu, D., Cociuba M. (2010). Financial soundness indicators.// Economics – 10(3). – 2010.

բացակայում է:

Ինչը վերաբերում է հետխորհրդային տնտեսագիտական հետազոտություններին, ապա այստեղ բացակայում է միասնական կարծիք ֆինանսական կայունության վերաբերյալ: Մասնավորապես, ռուս հետազոտողներ Օ.Ի.Լավրուշինը և Գ.Գ.Ֆետիսովը այն տեսակետն են հայտնում, որ «հաստատունություն» հասկացությունն ավելի համալիր և կարևոր է համարվում. «...հաստատունությունը հիմնվում է կայունության՝ ներքին և արտաքին ազդեցությանը դիմակայելու ունակության վրա... գործընթացը կարող է հաստատուն լինել միայն այն ժամանակ, երբ կա կայունություն»¹:

Մեկ այլ ռուս հետազոտող՝ Ի. Վ. Լարիոնովան հակված է այլ դիրքորոշման: Ըստ վերջինիս՝ «բանկային համակարգի դեպքում ավելի կիրառելի է «կայունություն» եզրույթը, սակայն դրա հետ մեկտեղ նա հավելում է, որ բանկային համակարգի կայունությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրա բոլոր տարրերը գտնվում են հաստատուն վիճակում²:

Անհրաժեշտ ենք համարում նաև ադրադառնալ «կայունություն» և «հաստատունություն» եզրույթների հարաբերակցության վերաբերյալ Պ. Վ. Կալլաուրի տեսակետին: Ըստ վերջինիս՝ «ֆինանսական կայունությունն» ավելի ընդարձակ հասկացություն է, քան «ֆինանսական հաստատունությունը»: Այդ կապակցությամբ վերջինս նշում է հետևյալը. «ֆինանսական կայունությունն ենթադրում է ֆինանսական համակարգի հավասարակշռություն, իսկ ֆինանսական հաստատունությունը՝ միայն հավասարակշռության ձգտումն

է, իսկ դրան հասնելը հնարավոր է միայն տնտեսության մեջ բացասական ցնցումների բացակայության դեպքում»³: Այսպիսով՝ ակնառու է ֆինանսական կայունության և հաստատունության վերաբերյալ տնտեսագետների շրջանում հակասական կարծիքների առկայությունը և դեռևս նշված հարցի շուրջ միասնական մոտեցման բացակայությունը: Կարծում ենք, որ հետագա վերլուծության և տվյալ եզրույթների կիրառության դեպքում խառնաշփոթից խուսափելու և կոնկրետացման նպատակներից ելնելով, լավագույն տարբերակ է ֆինանսական կայունություն և ֆինանսական հաստատունություն հասկացությունների նույնականացումը, այսինքն՝ արևմտյան եզրույթաբանության տեսակետի ընդունումը:

Ռուսական հրապարակումներում բանկային համակարգի ֆինանսական հաստատունությունը նույնպես բավականաչափ ուսումնասիրված չէ, սակայն վերջին ժամանակներում՝ աշխարհում ճգնաժամների առաջացման ռիսկերի աճի, տնտեսության գլոբալացման և բանկային հատվածի վրա ցնցումների ազդեցության պայմաններում, սկսվեց ավելի շատ ուշադրություն դարձվել տվյալ թեմատիկային: Չնայած ֆինանսական կայունություն եզրույթի բավական ակտիվ կիրառությանը՝ դրա հստակ սահմանումը տրվում է չափազանց հազվադեպ: Ս. Մ. Իլյասովի աշխատանքում, որը նվիրված է բանկային համակարգի հաստատունության ուսումնասիրությանը, տրվում է հետևյալ սահմանումը՝ որոշակի հարաչափի հաստատունության միջոցով. «տնտեսական համակարգը (այդ թվում՝ նաև բանկային) գործում է հաստատուն՝ ըստ որոշակի հարաչափի, եթե տվյալ հարաչափի շեղումը չի գերազանցում թույլատրելի մեծությունը,

1 Лаврушин, О.И., Фетисов, Г.Г. Устойчивость прежде всего. //Национальный банковский журнал. – 2005. – № 1. С. 56—60.

2 Ларионова, И.В. Стабильность банковской системы в условиях переходной экономики: дис. д-ра экон. наук: 08.00.10 /И.В. Ларионова. — Москва, 2001. — 415 с.

3 Каллаур, П.В. Концепт “финансовая стабильность” //Белорусский экономический журнал. – 2007. – № 1. – С. 25—37.

իսկ խոչընդոտները կարող են որոշակի սահմաններում փոխհատուցվել»: Բացի այդ՝ հաստատունությունն ընդհանուր առմամբ հեղինակը դիտարկում է որպես բազմաթիվ հարաչափերի լավագույն արժեքների հարակցությունը. հաստատունության ոլորտը, որից շեղումը նշանակում է համակարգի կողմից անցում անկայուն վիճակի¹:

Գ. Գ. Ֆետիսովի կարծիքով՝ «բանկային համակարգի հաստատունության տակ ենթադրվում է դրան հատուկ գործառույթների և տնտեսության մեջ հասարակության կողմից պահանջված մակարդակով պահանջմունքների բավարարման վերջինիս ունակությունը՝ անկախ դրանց իրագործմանը խոչընդոտող արտաքին և ներքին ուժերի ազդեցությունից»²: Վերոնշյալ երկու սահմանումներում կարելի է առանձնացնել ընդհանրական մի գաղափար, այն է՝ արտաքին ապակայունացնող գործոնների ճնշման և ազդեցության պայմաններում բանկային համակարգի գործունեության հիմնական հարաչափերի ապահովման ունակությունն ու անհրաժեշտությունը:

Հարկ է նշել, որ նմանատիպ սահմանում ներկայացվում է Օ. Ի. Լավրովի աշխատությունում, որտեղ բանկային համակարգի հաստատունությունը դիտարկվում է որպես «համալիր, դրական իրավիճակ, որը բնութագրվում է տնտեսության ոչ ֆինանսական հատվածի շահերի հետ փոխազդեցության մեջ ներքին և արտաքին գործոնների ապակայունացնող ազդեցությանը դիմակայելու ունակությամբ, ընդհանուր առմամբ հատվածի և դրա առանձին կառուցվածքային բաղկացուցիչների

գործունեության քանակական և որակական հարաչափերի զարգացմամբ»³:

Բանկային համակարգի հաստատունությունը վերջինիս զարգացման հատկանիշն է, որը համակարգին թույլ է տալիս կատարել տնտեսության մեջ իր գործառույթները և դերակատարումը՝ անկախ ներքին և արտաքին գործոնների խաթարիչ ազդեցությունների բնույթից և տեսակից, այդ թվում՝ սեփական կառուցվածքի որակական փոփոխության հիման վրա:

Կարելի է ասել, որ երկրի բանկային համակարգը հաստատուն է, եթե գտնվում է հավասարակշռության վիճակում, և չափազանց կարևոր է հասնել այդ հավասարակշռությանը: Հակառակ դեպքում, եթե այդ համակարգը չի գտնվում հավասարակշռության մեջ, ապա վերջինս հաստատուն անվանելը բավական վիճահարույց է, քանի որ դա նշանակում է, որ արտաքին և ներքին արտաքին գործոններն, այնուամենայնիվ, կարողացել են բացասականորեն ազդել այդ համակարգի վրա և այն դուրս բերել բնականոն վիճակից:

Այստեղ ևս հարց է ծագում, թե ինչպիսի՞ հավասարակշռություն պետք է տեղ գտնի բանկային հատվածում՝ անշա՞րժ, թե՞ հարաշարժային: Գ.Գ.Ֆետիսովի սահմանման մեջ, ըստ էության, գերիշխում է անշարժ հավասարակշռության մոտեցումը, որում առաջնահերթ կարևորություն է ներկայացվում ժամանակի ընթացքում հավասարակշիռ դրության անփոփոխությունը: Բանկերի հաստատունության և դրանց հավասարակշռության տեսանկյունից ավելի բազմաթիվ են բուն հարաշարժային մոտեցման կողմնակիցները: Այս պարագայում կարծում ենք, որ տվյալ դիրքորոշումն ավելի իրատեսական է, քանի որ ժամանակի ընթացքում շատ բան

1 Ильясов С.М. Устойчивость банковской системы: механизмы управления, региональные особенности — М.: ЮНИТИ-ДАНА, 2001.

2 Фетисов Г.Г. Устойчивость банковской системы — Автореферат диссертации на соискание уч.степ. д.э.н. (տ.գ.դ. գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության սեղմագիր) — Москва. — 2003.

3 Лаврушин, О.И., Фетисов, Г.Г. Устойчивость прежде всего. //Национальный банковский журнал. — 2005. — № 1. С. 56—60.

կարող է փոփոխվել, այդ թվում՝ նաև բանկային համակարգի գործունեությունը, արտաքին ուժերի ազդեցության բնույթը և ազդեցության աստիճանը: Այս համատեքստում համակարգը հաստատուն է, եթե այն կարող է ինքնուրույն կամ ոչ էական օժանդակությամբ հարմարվել և հասնել հավասարակշռության նոր՝ ավելի բարձր մակարդակի՝ կատարելագործելով որակական և քանակական այն հարաչափերը, որոնք պատասխատու են հաստատունության ապահովման համար: Այսպիսով՝ հարաշարժային հավասարակշռությանը հասնելը ֆինանսական հաստատունության սահմանման համար անհրաժեշտ գործոններից մեկն է:

Հարկ է նշել, որ բանկային համակարգը, ինչպես և ողջ ֆինանսական համակարգը՝ ընդհանուր առմամբ, նույնպես իրենցից ներկայացնում են փոխկապակցված տարրերի և բաղադրիչների բարդ համակարգ, որոնցից յուրաքանչյուրի վիճակը և նրանց միջև փոխկապակցության ամրությունը որոշում են տվյալ համակարգի կայունությունը և բազմապիսի ցնցումների հանդեպ հաստատունությունը: Բանկային համակարգի հաստատունության բնորոշման համար պետք է ուշադրություն դարձնել ժամանակի ընթացքում դրանում կառուցվածքային փոփոխությունների առաջացման հավանականությանը և նոր պայմաններում կամ նոր փոփոխությունները վերացնելու, կամ իր զարգացման նոր մակարդակին անցնելու, նոր հավասարակշռված վիճակին հասնելու նրա ունակությունը: Այդ իսկ պատճառով բանկային համակարգը, ինչպես և ցանկացած այլ համակարգ, պետք է օժտված լինի ինքնակազմավորման հատկանիշով: Բանկային համակարգում տվյալ որակի առկայության կամ բացակայության մեջ համոզվելու նպատակով դիտարկենք համակարգի ինքնակազմավորման համար բավարար մի շարք նախադրյալներ: Առաջին

հերթին՝ այդ համակարգը պետք է լինի բաց, այսինքն՝ ենթադրվում է տնտեսական համակարգի այլ տարրերի հետ վերջինիս փոխադարձ կապ: Բանկերն ակտիվ փոխազդում են ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածի բազմաթիվ ինստիտուտների հետ, մասնակցում են ֆինանսական ռեսուրսների վերաբաշխմանը: Հետևաբար, բանկային համակարգը բաց համակարգ է:

Երկրորդ նախադրյալն այն է, որ բանկային համակարգում բոլոր գործընթացները պետք է անցնեն համաձայնեցված ընթացակարգով: Որպես բանկային համակարգում նմանատիպ գործընթացի օրինակ կարելի է բերել առևտրային բանկերի գործունեության մեջ այնպիսի փոփոխությունները, որոնք ի հայտ են եկել կենտրոնական բանկի պահանջով, բանկերի մասնաձյուղային ցանցերի զարգացումը, միջբանկային ուղղակի հարաբերությունները:

Երրորդը՝ հավասարակշռությունից խախտումները կարող են գերազանցել կրիտիկական արժեքները: Տվյալ հատկանիշն արտահայտվում է, որպես կանոն, տնտեսության մեջ ճգնաժամային իրավիճակների առաջացման ժամանակահատվածներում, երբ բանկային հատվածի որակը և վիճակը բնութագրող ցուցանիշները շեղվում են թույլատրելի նորմայից դեպի վատթարացման կողմը:

Չորրորդը՝ գործընթացները դիտարկվում են հարաչափերի այնպիսի ընդգրկմամբ, երբ վերջիններիս նկարագրության համար անհրաժեշտ են մաթեմատիկական ոչ գծային մեթոդներ: Նկատի ունենալով, որ բանկային համակարգն ունի բարդ և ոչ միանշանակ կառուցվածք, որն ուղեկցվում է արտաքին ուժերի կողմից ազդեցության անկայունությամբ, որոնք գրեթե հնարավոր չէ վերլուծել գծային մեթոդների հիման վրա, ապա այն լիովին համապատասխանում է տվյալ պայմանին:

Այսպիսով՝ դիտարկումները ցույց տվեցին, որ բանկային համակարգն

օժտված է ինքնակազմակերպման ունակությամբ, ինչը շատ կարևոր է վերջինիս ֆինանսական հաստատունության ուսումնասիրության համար: Տվյալ համատեքստում բանկային համակարգի հաստատունությունը կարելի է դիտարկել որպես «կառուցվածքային կայունության առկայության, ինքնակազմավորման երևույթների, համակարգի կազմի մեջ մտնող առևտրային բանկերի կայունության պահպանման, ինչպես նաև՝ կենտրոնական բանկի կողմից կառավարչական ազդեցությունների շնորհիվ վերադարձ դեպի հավասարակշիռ վիճակի՝ չնայած ներքին և արտաքին գոր-

ծոնների խաթարիչ ազդեցությանը¹»:

Այսպիսով՝ ինչպես երևում է, վերը ներկայացված սահմանումների մեծ մասին միավորում է այն գաղափարը, որ բանկային հատվածի ֆինանսական հաստատունությունը պետք է պարտադիր իր մեջ ներառի անխափան և նորմալ գործունեության պարտավորությունը՝ անկախ արտաքին ցնցումներից առաջացող բացասական ազդեցություններից: Վերջինս ենթադրում է առաջացող խնդիրների նվազագույն կորուստերով արագ լուծում, ինչը կարևոր է ինչպես բանկերի, այնպես էլ ընդհանուր առմամբ ողջ տնտեսության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Каллаур, П.В. Концепт “финансовая стабильность” //Белорусский экономический журнал. – 2007. – № 1. – С. 25—37.
2. Ильясов С.М. Устойчивость банковской системы: механизмы управления, региональные особенности — М.: ЮНИТИ-ДАНА, 2001.
3. Лаврушин, О.И., Фетисов, Г.Г. Устойчивость прежде всего. //Национальный банковский журнал. – 2005. – № 1. С. 56—60.
4. Ларионова, И.В. Стабильность банковской системы в условиях переходной экономики: дис. д-ра экон. наук: 08.00.10 /И.В. Ларионова. — Москва, 2001. — 415 с.
5. Фетисов Г.Г. Устойчивость банковской системы — Автореферат диссертации на соискание уч.степ. д.э.н. (տ.գ.դ. գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության սեղմագիր) — Москва. – 2003.
6. Уразова С.А., Устойчивость банковской системы: теоретические и методологические аспекты. – Банковское дело. – 2011. – №12.
7. Crockett, A. Why is Financial Stability a Goal of Public Policy?, in Maintaining Financial Stability in a Global Economy, Symposium Proceedings, Federal Reserve Bank of Kansas City, August 1999, pp. 55–96.
8. Chant, J. Financial Stability as a Policy Goal, in Essays on Financial Stability// Technical Report No. 95, Bank of Canada. – 2003.
9. Schinasi, G. Defining Financial Stability// IMF Working Paper No. WP/04/187, October 2004.
10. Zapodeanu, D., Cociuba M. (2010). Financial soundness indicators.// Economics – 10(3). – 2010.
11. Բելառուսի բանկերը – 2010 թվականի փետրվարի 24: Մուտքի ռեժիմ՝ www.ibank.by/bankovskaya-sistema-strany-sterzhen-ee-ekonomiki
12. Գերմանական ֆեդերատիվ բանկ [Էլեկտրոնային ռեսուրս]. Մուտքի ռեժիմ՝ <http://www.bundesbank.de/finanzsystemstabilitaet/fs.en.php>
13. International Monetary Fund. The Financial stability report 2009. URL: <http://www.imf.org>

1 Уразова С.А., Устойчивость банковской системы: теоретические и методологические аспекты. – Банковское дело. – 2011. – №12.

THE ESSENCE OF FINANCIAL STABILITY OF THE BANKING SYSTEM AND THE MAIN APPROACHES TO THE DEFINITION

RAFIK HARUTYUNYAN

*Research PHD student NAS RA Institute of Economics after M. Kotanyan ARMECONOMBANK OJSC,
Head of Credit Monitoring Division*

The banking system is one of the key elements of the financial system and has an important role in the redistribution of financial resources and financial sector of the economy. Many scientists and economists have tried to identify the main factors affecting financial stability and developing a number of effective measures aimed at minimizing the negative effects. In professional literature there is no definition of financial stability and its estimation methods of generally acceptable approach. All definitions somewhat emphasize the most important characteristic of financial stability. Most of the definitions are united by the idea that the financial soundness of the banking sector must necessarily involve the commitment to the smooth and normal activities, despite the negative impacts of external shocks.

СУЩНОСТЬ ФИНАНСОВОЙ СТАБИЛЬНОСТИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ И ОСНОВНЫЕ ПОДХОДЫ К ЕЕ ОПРЕДЕЛЕНИЮ

РАФИК АРУТЮНЯН

*Соискатель института экономики им. М. Котаняна НАН РА,
ОАО «АРМЭКОНОМБАНК», начальник отдела мониторинга кредитов*

Банковский сектор, являясь одним из ключевых элементов финансовой системы, играет важную роль в перераспределении финансовых средств и финансировании реального сектора экономики страны. Многие ученые и экономисты пытаются выявить основные факторы, оказывающие влияние на финансовую устойчивость, и разработать ряд эффективных мер, способных минимизировать их отрицательное воздействие. В профессиональной литературе отсутствует единый общепринятый подход для определения финансовой устойчивости и способов ее оценки. Все определения в той или иной степени выделяют очень важную характеристику финансовой устойчивости. Большую часть определений объединяет та мысль, что финансовая устойчивость банковского сектора должна обязательно включать в себя обязательство за беспрепятственное и нормальное функционирование независимо от негативных воздействий, возникающих при внешних колебаниях.

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀՀ-ՈՒՄ**

Ներկայումս Հայաստանի տնտեսության համար կարևորագույն խնդիր է դարձել գործարար միջավայրի բարելավումն ու շուկայական մրցակցության խթանումը: Այս համատեքստում կարևոր հիմնախնդիր է հանդիսանում տնտեսության մեջ գործարքային ծախսերի ճշգրիտ գնահատումը և անարդյունավետ ծախսերի նվազեցումը: Հոդվածում գնահատվել են Հայաստանի տնտեսության մակրոմակարդակում գործարքային ծախսերը և դրանց դինամիկան, ինչպես նաև վերլուծվել են տնտեսության ու դրա բազային և գործարքային հատվածների արդյունավետությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. գործարքային և բազային հատված, տնտեսության համախառն թողարկում, գնահատում, ավելացված արժեք, արդյունավետություն:

Գործարքային հատվածի տակ հասկացվում է ինստիտուտների համախումբը, որոնք նպաստում են ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքների փոխանցմանը, վերջիններիս ամրագրմանը և կողմերի ստանձնած պարտավորությունների իրականացման նկատմամբ հետագա հսկողության գծով գործընթացների ինտենսիվացմանը՝ տեղեկատվական ասիմետրիայի, կոնտրագենտների օպորտունիստական վարքագծի և անորոշության բարձր աստիճանի պայմաններում:

Գործարքային հատվածի տակ նեղ իմաստով հասկացվում են բացառապես այն ճյուղերը, որոնց սուբյեկտներն իրականացնում են այնպիսի գործունեություն, որը թույլ է տալիս օպտիմալացնել և ամրագրել տնտեսվարող ընկերու-

թյունների հիմնական գործունեության արդյունքում ակտիվների նյութական վերափոխումների հետ չկապված սեփականության իրավունքների փոխանցումը: Այլ կերպ ասած, գործարքային հատվածի մեջ նեղ իմաստով ներառվում են բացառապես տրանսակցիոն ճյուղերը, մասնավորապես, ֆինանսական ոլորտի, որոնք իրենց գործունեության ընթացքում չեն իրականացնում իրական ակտիվների տրանսֆորմացիա և գործունեն միայն ոչ իրական ակտիվների հետ: Տվյալ դեպքում հաշվի չեն առնվում այն ինստիտուտները, որոնք նպաստում են գործարքային ծախսերի նվազեցմանը՝ մեկ գործարքի հաշվով, ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ առանձին տնտեսվարող սուբյեկտների մակարդակով, սակայն պետք է մոռանալ այն մասին, որ գործարքային ծախսեր և հետևաբար նաև դրանց նվազեցմանն ուղղված համապատասխան ինստիտուտներ առկա են նաև այնպիսի ճյուղերում, որոնց հիմնական գործունեությունը տրանսֆորմացիոն բնույթ ունի: Ավելին, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների գործունեությունն ի վիճակի է էապես նպաստել տնտեսվարող սուբյեկտների գործունեության պայմանները բարելավելու՝ բարեփոխելով տեղեկավորության որոնման կիրառվող մեխանիզմները, պայմանագրերի կնքումը, սեփականության իրավունքների պաշտպանությունը և այլն:

Ներկայումս Հայաստանի տնտեսության համար կարևորագույն խնդիր է դարձել գործարար միջավայրի բարելավումը և շուկայական մրցակցության խթանումը: Այս առումով՝ կարևոր

հիմնախնդիր է հանդիսանում տնտեսության մեջ գործարքային ծախսերի ճշգրիտ գնահատումը և անարդյունավետ ծախսերի նվազեցումը:

Տնտեսական գործընթացների բարդությունը, դրանց հակասականությունը և ոչ միանշանակությունը անցումային տնտեսությունում չափազանց դժվարացնում են տնտեսական քաղաքականության ուղղությունների ընտրությունը: Ժամանակակից տնտեսությունն իրենից ներկայացնում է միմյանց հակասող հարաբերությունների խմբերի համադրություն. շուկայական տնտեսական հարաբերություններ՝ տնտեսության նպատակաուղղված կարգավորում, ակտիվ ձեռնարկատիրություն, որը միտված է կապիտալի և դրա շահութաբերության աճին, սոցիալական ուղղվածության զարգացման անհրաժեշտություն, տնտեսության գլոբալացման միտումներ և ազգային արտադրության պաշտպանություն: Առկա են նաև սուր հակասություններ շուկայական վերափոխումների և ձևավորված ազգային ավանդույթների միջև: Ավելին, Հայաստանի տնտեսության զարգացման արդի փուլը բնորոշվում է շուկայական հարաբերությունների ինստիտուցիոնալ հիմքերի ոչ ամբողջական ավարտվածությամբ: Տնտեսվարող կազմակերպությունները տնտեսության մեջ գործում են պայմանագրային հարաբերությունների ինստիտուտների ոչ լիարժեք զարգացվածության պայմաններում: Տնտեսական հարաբերությունների զարգացումը առաջ է բերել արտադրական և իրացման ռազմավարությունների վերանայման անհրաժեշտություն, ինչն էլ, իր հերթին պահանջում է սեփականության և պայմանագրային իրավունքների պաշտպանության հստակ մեխանիզմների ձևավորում՝ այդ նոր ռազմավարությունների համատեքստում:

ՀՀ տնտեսության մակրոմակադակում գործարքային ծախսերի գնահատման համար կհիմնվենք ամերիկյան

տնտեսագետներ Ջ.Ուոլլիսի և Դ.Նորտի կողմից առաջարկված մոտեցմանը, ըստ որի՝ վերջիններս գնահատել են գործարքային ծախսերը ամերիկյան տնտեսության մասնավոր և պետական հատվածներում:

Ըստ այդ մոտեցման՝ տնտեսության մասնավոր հատվածում գործարքային ճյուղերին են դասվում՝

- մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում.
- ֆինանսական և ապահովագրական գործունեություն.
- անշարժ գույքի հետ կապված գործունեություն.
- վարչարարական և օժանդակ գործունեություն:

Ինչ վերաբերում է պետական հատվածում գործարքային ծախսերին, ապա վերջիններիս կվերագրվեն պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոցիալական ապահովագրության ծախսերը:

Այսպիսով՝ առաջնորվելով վերը նշված մոտեցմամբ՝ ներկայացնենք ՀՀ տնտեսության մեջ գործարքային ծախսերի գնահատումը մակրոմակարդակում՝ 5 տարիների կտրվածքով՝ 2011–2015 թթ. ժամանակահատվածում: Այդ նպատակով կհաշվարկենք ՀՀ տնտեսության համախառն թողարկման մեջ գործարքային ճյուղերի թողարկման ծավալներն ու դրանց դինամիկան, այնուհետ դրանք կհամեմատենք տնտեսության բազային հատվածի համապատասխան ցուցանիշների հետ:

ՀՀ տնտեսության համախառն թողարկումը 2011–2015 թթ. ունեցել է հետևյալ կառուցվածքը (աղյուսակ 1).

1 Wallis, John J. and North, Douglass C (1986), *Measuring the Transaction Sector in the American Economy, 1870–1970*, in *Long-term factors in American Economic Growth*, Stanley Engermann and Robert Gallman (eds.), Chicago: University of Chicago Press, 95–161.

Աղյուսակ 1.

ՀՀ տնտեսության համախառն թողարկման կառուցվածքը՝ 2011–2015թթ.¹, մլն.դ.:

Անվանումը	2011	2012	2013	2014	2015
Բազային հատվածի թողարկում՝ հիմնական գներով	4176128.6	4551575.2	4847774.4	5109539.4	5332796.1
Գործարքային հատվածի թողարկում՝ հիմնական գներով	1309083.9	1608710.8	1715908.1	1851076.2	1907291.1
Համախառն թողարկում՝ հիմնական գներով	5485212.3	5989851.8	6380782.2	6754005.6	7046631.8
Գործարքային հատվածի մասնաբաժինը համախառն թողարկման մեջ՝ %	23.9	26.9	26.9	27.4	27.1

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից՝ գործարքային ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ տնտեսության համախառն թողարկման կառուցվածքում վերջին հինգ տարիների ընթացքում կազմել է միջինում 26.4%՝ ունենալով ցածր, բայց միևնույն ժամանակ դրական դինամիկա՝ բացառությամբ 2015 թվականի: Ըստ վերը ներկայացված դասակարգման՝ ՀՀ տնտեսության մեջ գործարքային ճյուղերի թողարկումը 2011–2015թթ. ունեցել է հետևյալ պատկերը (աղյուսակ 2).

Աղյուսակ 2.

ՀՀ տնտեսության գործարքային հատվածի կառուցվածքը 2011–2015թթ.², մլն. դ.

Ը/Ը	Անվանումը	2011	2012	2013	2014	2015
1	Մեծ. և մանրածախ առևտուր, ավտոմեք. և մոտոցիկլ. նորոգում	671060.7	710833.9	753522.8	789431.7	759919.5
2	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	190841.4	217056.4	230784.2	257731.3	247628.2
3	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	138422.9	392397.1	411851.8	448872.6	496629.2
4	Վարչարարական և օժանդակ գործունեություն	50802.7	57570.0	53440.6	57609.9	62815.0

1 ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն/ <http://armstat.am/file/doc/99499428.pdf>:

2 ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ազգային հաշիվների համակարգ–Տարեգիրք 2016– <http://armstat.am/am/?nid=586&year=2016>:

5	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոց. ապահովագրություն	257956.2	230853.4	266308.7	297430.7	340299.2
6	Ընդամենը գործարքային հատվածի համախառն թողարկում՝ հիմնական գներով	1309083.9	1608710.8	1715908.1	1851076.2	1907291.1
7	ԳՀ միջանկյալ սպառում	399168.5	373762.5	391205.6	421254.6	444160.1
8	ԳՀ ավելացված արժեք	909915.4	1234948.3	1324702.5	1429821.6	1463131.0
9	ԳՀ ավելացված արժեք/ԳՀ հիմնական թողարկում	69.5	76.8	77.2	77.2	76.7

Ինչպես երևում է վերոգրյալից, գործարքային ծախսերի կառուցվածքում դիտարկվող ժամանակահատվածում ամենամեծ տեսակարար կշիռն է ունեցել մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի ծախսերը: 2015 թվականին վերջինիս տեսակարար կշիռը գործարքային հատվածում կազմել է շուրջ 40%: Երկրորդ տեղում անշարժ գույքի հետ կապված գործարքներն են՝ 26%, երրորդ տեղում՝ պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոց. ապահովագրության գծով ծախսերը՝ 18%: Ֆինանսական և ապահովագրական գործունեության գծով ծախսերը կազ-

մել են ամբողջ գործարքային ծախսերի 13%-ը, իսկ վարչարարական և օժանդակ գործունեության գծով ծախսերը՝ 3.3%-ը:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից՝ ՀՀ տնտեսության գործարքային հատվածի ավելացված արժեքի ցուցանիշը դրական դինամիկա է ունեցել վերջին 5 տարիների ընթացքում՝ 69.5% տոկոսից հասնելով մինչև 76.7%-ի: Սա խոսում է այդ հատվածի ճյուղերի արդյունավետության մասին: Եթե նույն ցուցանիշը վերլուծենք ամբողջ տնտեսության և դրա բազային հատվածի համար, ապա կտեսնենք հետևյալ պատկերը:

Աղյուսակ 3.

ՀՀ տնտեսության և վերջինիս բազային հատվածի հարաբերական արդյունավետությունը՝ 2011-2015թթ.¹, մլն. դ.:


Ը/Ը	Անվանումը	2011	2012	2013	2014	2015
1	Համախառն թողարկում	5 485 212.3	5 989 851.8	6 380 782.2	6 754 005.6	7 046 631.8
2	Տնտեսության ավելացված արժեք	3 365 621.8	3 808 226.2	4 049 210.1	4 282 291.4	4 496 393.0
3	Ավելացված արժեք/համախառն թողարկում	61.4	63.6	63.5	63.4	63.8

1 ՀՀ ԱՎԾ-Ազգային հաշիվների համակարգ-<http://armstat.am/file/doc/99499428.pdf>

4	Բազային հատվածի հիմնական թողարկում	4176128.6	4381141.0	4664874.1	4902929.4	5139340.7
5	Բազային հատվածի միջանկյալ սպառում	1720422.0	1807863.1	1940366.5	2050459.6	2106078.7
6	Բազային հատվածի ավելացված արժեք	2455706.6	2573277.9	2724507.6	2852469.8	3033262.0
7	ԲՀ ավելացված արժեք/ԲՀ հիմնական թողարկում	58.8	58.7	58.4	58.1	59.0

Ինչպես տեսնում ենք, ՀՀ տնտեսության բազային հատվածի ավելացված արժեքի տեսակարար կշիռը ավելի ցածր է գործարքային հատվածի համանման ցուցանիշից, ինչպես նաև ցածր է եղել վերջինիս աճի դինամիկան:

Ստորև բերվող գծապատկեր 1-ում ներկայացվում են ՀՀ տնտեսության, վերջինիս գործարքային և բազային հատվածների հարաբերական արդյունավետությունը՝ 2011-2015թթ. ժամանակահատվածում (գծապատկեր 1):



Գծապատկեր 1 Տնտեսության և նրա հատվածների հարաբերական արդյունավետությունը ՀՀ-ում՝ 2011-2015թթ. (%-ով):

Գործարքային հատվածի միջին արդյունավետությունը 2011-2015թթ. կազմել է 75.5%, բազային հատվածինը՝ 58.6%, իսկ ամբողջ տնտեսությանը՝ 63.1%: Այսպիսով՝ դատելով վերը բերված տվյալներից՝ ՀՀ տնտեսության գործարքային հատվածի հարաբերական արդյունավետությունը վերջին հինգ տարիների ավելի բարձ է եղել, քան ամբողջ տն-


տեսության և դրա բազային հատվածի արդյունավետությունը: Ընդ որում, բազային հատվածի արդյունավետությունը մոտ է ընդհանուր տնտեսության արդյունավետությանը՝ զիջելով վերջինիս ընդամենը 3.5%-ով, իսկ գործարքային հատվածին այն զիջում է շուրջ 17%-ով: Նշենք, որ գործարքային հատվածի միջին արդյունավետությունը նշված տա-

րիներին գերազանցել է տնտեսության միջին արդյունավետությունը՝ 12.4%-ով: Այսպիսով՝ ՀՀ տնտեսության բազային հատվածի ավելացված արժեքի տեսակարար կշիռն ավելի ցածր է գործարքային հատվածի համանման ցուցանիշից, ինչպես նաև ցածր է եղել վերջինիս աճի դինամիկան:

Այսպիսով՝ ՀՀ տնտեսության հարաբերական արդյունավետությունը 2012–2015թթ. գրեթե չի փոխվել՝ մնալով 63% մակարդակի վրա, ինչը կարելի է

ասել նաև բազային հատվածի մասին: Նույն ժամանակահատվածում վերջինս գտնվել է մոտ 58% մակարդակի վրա: Ինչ վերաբերում է գործարքային հատվածին, ապա այստեղ տեսնում ենք էական աճ. վերջին 5 տարվա ընթացքում այն աճել է 7.2%-ով:

Ինչ վերաբերվում է ՀՆԱ կազմում գործարքային ծախսերի մասնաբաժնին, ապա դրա հաշվարկման արդյունքում տեսնում ենք հետևյալ պատկերը.



Գծապարկեր 2 . Գործարքային հատվածի և ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում՝ 2011–2015թթ., (%-ով)¹:

Ինչպես երևում է ներկայացված գծապատկերից, 2011–2015թթ. ժամանակահատվածում գործարքային հատվածի մասնաբաժինը ՀՆԱ կազմում հստակ աճի միտում է ունեցել և 2015թ. դրությամբ այդ աճը կազմել է 5%: Նշված ժամանակահատվածում գործարքային հատվածի մասնաբաժինը ՀՆԱ-ում միջին հաշվով կազմել է 28.2%, ինչը 1.8%-ով գերազանցում է համախառն թողարկման մեջ գործարքային հատվածի տեսակարար կշռի միջին ցուցանիշին:

Անդրադառնալով գործարքային հատվածի առանձին ոլորտների արդյունավետությանը՝ կարող ենք նշել,

որ ամենաբարձր հարաբերական արդյունավետություն են ունեցել անշարժ գույքի հետ կապված գործունեության և ֆինանսական ու ապահովագրական գործունեությունների ոլորտները՝ դիտարկվող ժամանակահատվածում միջինում համապատասխանաբար՝ 86.1% և 79.1%: Ամենացածր արդյունավետությունն է ունեցել պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոց. ապահովագրության ենթահատվածը՝ միջինում կազմելով 66.3%: Մանրածախ և մեծածախ առևտրի, ավտոմեքենաների ու մոտոցիկլետների նորոգման և վարչարարական ու օժանդակ գործունեության ոլորտների հարաբերական արդյունավետությունը գործակիցները

1 ՀՀ ԱՎԾ-Ազգային հաշիվների համակարգ-<http://armstat.am/file/doc/99499428.pdf>:

միջին ցուցանիշը գտնվում են նույն մակարդակի վրա՝ 72.2%:

Հարկ է նշել, որ թեև գործարքային հատվածն ունեցել է բարձր հարաբերական արդյունավետություն, վերջինս չի նպաստել ՀՀ տնտեսության արդյունավետության բարձրացմանը և կայուն աճին: Այստեղից հետևում է, որ անհրաժեշտ է հստակ քայլեր ձեռնարկել

այդ հատվածում ծախսերի կրճատման ուղղությամբ (օրինակ՝ պետական կառավարման ոլորտում)՝ դրա հաշվին ավելացնելով տնտեսության բազային հատվածի հեռանկարային ճյուղերի ֆինանսավորումը, ինչը մեր հանրապետությունում կապահովի տնտեսության ավելի բարձր արդյունավետություն ու կայուն աճ:

ՊՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Wallis, John J. and North, Douglass C (1986), Measuring the Transaction Sector in the American Economy, 1870–1970, in Long-term factors in American Economic Growth, Stanley Engermann and Robert Gallman (eds.), Chicago: University of Chicago Press, 95–161.
2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ազգային հաշիվների համակարգ– <http://armstat.am/file/doc/99499428.pdf>
3. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ազգային հաշիվների համակարգ–Տարեգիրք 2016– <http://armstat.am/am/?nid=586&year=2016>
4. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Տարեգիրք 2014– <http://armstat.am/am/?nid=586&year=2014>

THE STRUCTURE OF TRANSACTION SECTOR AND ITS DYNAMICS IN RA

RADIK VERDYAN

Institute of Economics after M.Kotanyan, NAS, RA, Postgraduate

Currently the most important task for Armenia's economy is the improvement of business environment and the promotion of market competition. In this context it is an important issue on accurate assessment of transaction costs in the economy and the reduction of ineffective costs. The paper estimated the transaction costs in macro level of Armenia's economy and their dynamics, as well as analyzed the efficiency of the economy of its basing and transacting sectors.

СТРУКТУРА И ДИНАМИКА ТРАНСАКЦИОННОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ В РА

РАДИК ВЕРДЯН

НАН, РА, Института экономики им. М.Котаняна, аспирант

В настоящее время для экономики Армении наиболее важной задачей является улучшение бизнес-среды и поддержание рыночной конкуренции. В этом контексте важной проблемой является точная оценка трансакционных затрат в экономике и сокращение неэффективных затрат. В данной статье оценены трансакционные расходы на макроэкономическом уровне экономики Армении и их динамика, а также про анализированы эффективность экономики и ее базового и трансакционного сектора.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, սասյիրանսը

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽԵՆ ԴԻԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՁԵՎԱԶԱՓՈՒՄ

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմամբ զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի շրջանակներում էլ ներկայումս ընթանում է բանակցային գործընթացը: Ինչպես հակամարտող կողմերը, այնպես էլ միջազգային ուժերը կարևորում են ԵԱՀԿ ՄԽ-ի շրջանակներում բանակցությունների շարունակականությունը և համանախագահող երկրների ներդրումը այս հարցում: Հակամարտության ողջ ընթացքում ընդգծված ակտիվ գործունեություն է դրսևորում Ռուսաստանի Դաշնությունը, որի միջնորդությունը աստիճանաբար դառնում է ավելի համակարգված: Հակամարտության կարգավորման գործում Ռուսաստանի միջնորդական ջանքերը շարունակվում են հաստատապես և ամենատարբեր ձևաչափերով զարգանալ՝ հիմքում ունենալով այդ երկրի շահերը Հարավկովկասյան տարածաշրջանում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հարավկովկասյան տարածաշրջան, անվտանգություն, դաշնակից, Ղարաբաղյան հիմնախնդիր, բանակցային գործընթաց, միջնորդական առաքելություն:

Ղարաբաղյան հակամարտությունը, ժամանակագրական առումով լինելով առաջինը խորհրդային իրականության մեջ, միաժամանակ, աչքի է ընկնում նաև իր կարգավորման բարդությամբ: Հիմնախնդրի կարգավորման գործընթացը պահանջում է նաև այն գիտահետազոտական վերլուծության ենթարկել բանակցային ձևաչափի հստակեցման

ու դրա ապագա հնարավոր փոփոխությունների համատեքստում:

Հայաստանի, Ադրբեյջանի, Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակումից հետո սկսվում է Ղարաբաղյան հակամարտության առաջին խաղարարար միջնորդությունը: Ղարաբաղյան հակամարտության առաջին տևական գործընթացը կարելի է համարել Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների՝ Բ.Ելցինի և Ն.Նազարբաևի միջնորդական առաքելությունը՝ 1991թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում [1]: Այս ժամանակաշրջանում ընթանում էին նաև Ալմաթա-Բաքու-Անկարա մերձեցման գործընթացներ, հետևապես կարելի է փաստել, որ Ղազախստանն այս ժամանակաշրջանում անուղղակիորեն ներկայացնում էր նաև Թուրքիայի շահերը: Միջնորդական առաքելությունը տեղի ունեցավ Խորհրդային միության փլուզման նախաշեմին և երկրում ստեղծված խառնակ իրավիճակի պայմաններում: Այս երկու պայմաններն էլ, անկասկած, իրենց ազդեցությունը թողեցին, ինչպես գործընթացի, այնպես էլ նրա արդյունքների վրա: Նախագահներ Ելցինն ու Նազարբաևը 1991թ. սեպտեմբերի 22-ին Մոսկվայի ժամանում են Ստեփանակերտ: Նույն օրը Երևանում հանդիպումներից հետո բանակցությունները շարունակվում են Հյուսիսային Կովկասի առողջարանային Ժելեզնովոդսկ քաղաքում:

Սեպտեմբերի 23-ին Ժելեզնովոդս-

կում Ռուսաստանի, Ղազախստանի, Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների մասնակցությամբ ստորագրվեց «ՌԴ նախագահ Բ.Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևի միջնորդական առաքելության մասին համատեղ կոմյունիկեն»։ Այս փաստաթղթի ստորագրմանը մասնակցում էին նաև ԼՂՀ ներկայացուցիչները, սակայն միայն դիտորդի կարգավիճակով։ Կոմյունիկետում դատապարտվում էր իրավիճակը կարգավորելու կենտրոնական իշխանությունների անկարողությունը և նշվում, որ միջնորդական առաքելության նպատակն է բանակցություններ սկսել տարածաշրջանում իրավիճակի կայունացման համար [2]։ Հատուկ ընդգծված էր Հայաստանի և Ադրբեջանի ինքնիշխանության անխախտելիությունը, իսկ հակամարտության կարգավորման ժամկետը նշվում էր 1992թ. հունվարի 1-ը։

Չնայած այն հանգամանքին, որ միջնորդական տվյալ առաքելությունը չհանգեց որևէ կոնկրետ արդյունքի, այնուամենայնիվ, Ելցին-Նազարբաև միջնորդական նախաձեռնությունը ընդունված է դիտարկել որպես Ղարաբաղյան հիմնախնդիրը կարգավորելու առաջին տևական գործընթացներից մեկը։

1992թ. մարտի 24-ին կայացավ Հելսինկիում ԵԱՀԽ Նախարարների խորհրդի արտահերթ նիստը, որի ժամանակ որոշվեց հնարավորինս արագ Մինսկում խորհրդաժողով հրավիրել Ղարաբաղյան հարցի կարգավորման շուրջ, որը հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների հարթակ կտրամադրեր՝ հիմնվելով ԵԱՀԽ սկզբունքների վրա։ 1992թ-ից վեր Ղարաբաղյան հարցի կարգավորման բանակցություններն ընթանում են Մինսկի խորհրդաժողովի ձևաչափով։

1994թ. մայիսից սկսվեց Ղարաբաղյան կոնֆլիկտի խաղաղ բանակցությունների նոր շրջան, որն ընթանում է առ այսօր։ Խաղաղ բանակցություններին անցմանը նպաստեցին հայկական զինուժի

հաղթանակները՝ հակամարտության տարածքներում։ Այդ ժամանակաշրջանում Ադրբեջանի հայտարարությունները հիմնականում այն բովանդակության էին, որ մարտական գործողությունների հետագա շարունակումը կարող էր հանգեցնել տարածքային կորուստների Ադրբեջանի կողմից, որն էլ նպաստելու էր փաստարկների նոր ալիքի առաջացմանը։ Նշված հանգամանքների ուժով էլ Ադրբեջանը ստիպված էր նստել բանակցությունների սեղանի շուրջը։ Հատեցման գործընթացում պետք է ներկայիներ նաև ԼՂՀ-ն։

Կրակի դադարեցումը տարբեր երկրների ու կազմակերպությունների տևական բանակցությունների արդյունք էր, որոնց ընթացքում շատ ակտիվ էր պաշտոնական Մոսկվան։ Ռուսաստանի ակտիվությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հարավկովկասյան տարածաշրջանը վերջինիս համար ունի ռազմավարական նշանկություն, որը կանխում է Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի կամ այլ երկրի ազդեցության ուժեղացումը։ ՌԴ խորհրդարանի խոսնակ Շումեյկոն կազմակերպեց հանդիպում Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում, ուր նրան հաջողվեց նախապատրաստել նախագիծ՝ կրակի դադարեցման մասին։ ՀՀ-ի և ԼՂՀ-ի ղեկավարները հայտարարեցին, որ նրանք պատրաստ են նստել բանակցությունների սեղանի շուրջ, ստորագրել Բիշքեկի արձանագրությունը։ Որոշ ժամանակ անց՝ 1994թ. մայիսի 8-ին ԱՀ-ն հայտարարեց, որ ինքը ևս պատրաստ է, արձանագրության կետերին համապատասխան, կրակը դադարեցնել 1994թ. մայիսի 12-ին [3]։

Մայիսի 16-ին ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովը Մոսկվա հրավիրեց Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարներին, ԼՂՀ ԻՊՈՒ-ի գլխավոր հրամանատարին (Սերժ Սարգսյան, Մամեդաֆի Մամեդիարով և Սամվել Բաբայան)՝ նրանց առաջարկելով մի ծրագիր, որով հաս-

տատվում է հրադադար մայիսի 17-ի 00 ժամից, ըստ որում՝ երկու կողմերի գորքերը ռազմաճակատի ամբողջ երկարությամբ պետք է հետ քաշվեին 5-10կմ, որպեսզի հակամարտող կողմերի միջև երկարությամբ տեղադրվեին «խաղաղարար ուժեր»-(որոնք ռուսական գորքեր էին լինելու): ԼՂՀ գլխավոր հրամանատարը մինչ այդ կատարել էր Բիշքեկի արձանագրությունը և հրամայել էր միակողմանի դադարեցնել կրակը ռազմաճակատի իր կողմի երկարությամբ մայիսի 9-ի ժամը 00-ից [4]: Բիշքեկյան արձանագրությունը պարունակում էր կոնկրետ առաջարկություններ՝ ուղղված հակամարտող բոլոր կողմերին զինված հակամարտության դադարեցման, տարածաշրջանում դիտորդների տեղաբաշման շուրջ, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներում խաղաղարար զինուժի ստեղծման հնարավորությամբ:

Հակամարտության կարգավորման գործում ՌԴ միջնորդական ջանքերը շարունակվեցին տարբեր ձևաչափերով, ներառյալ Մինսկի խմբի շրջանակներում: ԵԱՀԿ իրավասությամբ Ղարաբաղյան հակամարտությունը կարգավորելու ջանքերը շարունակվում են երկու տասնամյակից ավել: Այդ ընթացքում կողմերին են ներկայացվել կարգավորման բազմաթիվ մոդելներ, արտահայտվել են բազմաթիվ մոտեցումներ: Ինչպես նշում են միջնորդները՝ դեռևս շարունակվում են ջանքերը հակամարտող կողմերի տեսակետները մերձեցնելու ուղղությամբ:

Այնուամենայնիվ, անկախ այն հանգամանքից, թե Ռուսաստանն ինչ կերպ է մասնակցում Ղարաբաղյան հիմնահարցի լուծման բանակցային գործընթացին՝ ուղղակի, թե անուղղակի այս կամ այն կազմակերպությունների նախաձեռնությունների մասնակցության ձանապարհով, միանշանակ գերտերության դերն այդ գործում մեծ է: Դրա մասին հարցազրույցներից մեկում խոսել է ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանը. «Մենք

բոլորս, իմ կարծիքով՝ նաև մյուս համանախագահները, լավ ենք հասկանում, որ առանց Ռուսաստանի մասնակցության խոսել հակամարտության իրական կարգավորման մասին հնարավոր չէ, և ինչքան արդյունավետ ու խորը լինի նրաներգրավվածությունը կարգավորման գործընթացին, այնքան շատ հնարավորություններ կունենանք հաջողության հասնելու համար» [5]: Ռուսաստանի դերի կարևորությունն արտահայտվել է նաև ադրբեջանական ղեկավարության հայտարարություններում: Նույն դիրքորոշման են նաև Լեռնային Ղարաբաղի իշխանությունները: Ինչպես նշել է ԼՂՀ նախկին նախագահ Ա. Ղուկասյանը՝ «Ռուսաստանը շատ բան կարող է անել Ղարաբաղի համար՝ և՛ կարգավորման, և՛ ԼՂՀ ժողովրդին օգնություն ցուցաբերելու առումով: Մյուս կողմից՝ Ռուսաստանը միջնորդ է, իսկ միջնորդը պետք է չեզոք դիրքորոշում ունենա: ... Ռուսաստանը պատմական պատասխանատվություն է կրում այն ամենի համար, ինչը տեղի է ունենում հետխորհրդային գոտում» [6]:

Ակնհայտ է, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքականությունը թե՛ ընդհանրապես Հարավկովկասյան ուղղությամբ, թե՛ մասնավորապես՝ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման առումով, բխում է ոչ թե հակամարտ կողմերից որևէ մեկի սպասումներից, այլ հենց Ռուսաստանի սեփական ազգային շահերից: Որոշ ուսումնասիրողների շրջանում կարծիք է ձևավորվել, թե Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական կուրսը երբեք երկարաժամկետ հեռանկարային ծրագրերի համար նախատեսված չի եղել, այլ շատ դեպքերում ուղղված է եղել «վայրկենական» խնդիրների լուծմանը: Այս մոտեցումն ունի իր ռացիոնալ տրամաբանությունը. ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային իրականությունում. Ռուսաստանի արտաքին քաղաքականությունն այժմ

էր ընկնում քաղաքական որոշումների բազմազանությամբ, այդ պատճառով էլ չէին առաջանում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ սեփական սահմանների անվտանգության ապահովման մեթոդների կիրառումը կամ հակամարտությունների մեջ ներգրավված շրջաններում խաղաղություն ու փոխհամաձայնություն հաստատելը [7]:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատմությունը փաստում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության «վայրկենականության» շատ օրինակների մասին: Մասնավորապես՝ ԱՊՀ-ի ինտեգրացիոն ծրագրերում Ադրբեջանին ներգրավելու համար Ռուսաստանը ԱՊՀ համագործակցության փաստաթղթերը ստորագրելու փոխարեն Ադրբեջանին հանձնեց ԽՍՀՄ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 4-րդ բանակի զենքի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի մեծ մասը՝ իր նեկայությունը Ադրբեջանի տարածքում սահմանափակելով Գաբալայում ռադիոտեղորոշիչ կայանի անձնակազմի ծառայությամբ: Հատկանշական է, որ դա արվել է Հայաստանի կողմից իրեն հասանելիք սպառազինությունը համախորհրդային զինանոցից ստանալուց բավականաչափ ժամանակ անց: Վերջին հաշվով, նման գործընթացի իրականությունը պարզ դարձավ Հայաստանի վրա ադրբեջանական Ջինված ուժերի լայնածավալ հարձակումից հետո, սակայն վերջնարդյունքում Ա.Էլչիբեյի կառավարությունն այդպես էլ ցանկություն չհայտնեց անդամակցելու ԱՊՀ-ին:

Մոսկվայի արտաքին քաղաքական կուրսի «վայրկենականության» վառ օրինակ է նաև 1996թ. դեկտեմբերին ԵԱՀԿ համաժողովը Լիսաբոնում, որտեղ Ռուսաստանը փորձեց կանխել կասպիական նավթի արտահանումը արևմտյան ուղիով, իսկ դրա դիմաց պաշտպանեց Ադրբեջանի դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ: Արդյունքում ևս

հիմնական նավթատար ուղին շրջանցեց Ռուսաստանը, ինչպես և ծրագրված էր, իսկ այսպես կոչված «Լիսաբոնյան սկզբունքները» այդ շրջանում բանակցային գործընթացը որոշակիորեն փակուղի մտցրեցին [8]:

ՌԴ նախագահ Վ. Պուտինը ժամանակին հստակորեն մատնանշել է այն ուղին, որով իրենք շարժվում են Հարավկովկասյան տարածաշրջանում խաղաղության պահպանության գործընթացում. «Ռուսաստանը մտադիր է հետագայում էլ ակտիվացնել իր ջանքերը: Բացի այդ՝ մենք եղել ենք ու հիմա էլ ենք Մինսկի խմբի անդամ հանդիսանում և համաձայնեցված քայլերի շրջանակներում մտադիր ենք կոորդինացնել մեր ջանքերը գործընթացին ներգրավված մյուս կողմերի հետ: Մենք ելնում ենք Ադրբեջանի ու Հայաստանի հետ ունեցած մեր առանձնահատուկ հարաբերություններից և պատրաստ ենք օգտագործելու այդ հարաբերությունները հոգուտ տարածաշրջանի բոլոր պետությունների: Անկասկած, այդ առանձնահատուկ հարաբերությունները չենք օգտագործի պայմանավորվող կողմերից որևէ մեկի վրա ճնշում գործադրելու համար: Մենք ելնում ենք այն բանից, որ միայն Հայաստանն ու Ադրբեջանն են ի վիճակի հասնել պայմանավորվածության, իսկ Ռուսաստանը Մինսկի խմբի մյուս անդամների հետ կարող են լինել միջորդներ և ձեռքբերված պայմանավորվածությունների իրագործման երաշխավորներ» [9]: Մոսկվայի այս դիրքորոշումը պարբերաբար հաստատվել է նաև ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ Ռուսաստանի նախագահի հաջորդող մյուս հայտարարություններում ու դիրքորոշումներում:

Պաշտոնական Մոսկվայի նման դիրքորոշումների հիմքում ընկած էին հակամարտության կարգավորման գործնական ու արդյունավետ մեթոդների հարցում Ռուսաստանի իրական և իրա-

տեսական հնարավորությունները: Մյուս կողմից, այդ դիրքորոշումը նաև «վայրկենականության» քաղաքականության հետևանքների գնահատականի, տարածաշրջանային խնդիրներին ավելի ծանրակշիռ վերաբերվելու անհրաժեշտության արդյունք էին:

Ցավոք, քաղաքական որոշ շրջանակներում առ այսօր առկա է մի գաղափար, որը տարածված էր հատկապես 1990-ականների կեսերին. գաղափարն այն մասին, որ «Չեչնիան ռուսական Ղարաբաղն է»: Այս հասկացողության տակ հասկացվում էր, թե Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում հայկական կողմին սատարելը Ռուսաստանում անջատողական շարժումների աճ է առաջացնում [10], սակայն, միջազգային և տարածաշրջանային դեպքերի գարգացումներն ապացուցեցին այդ գաղափարների այդքան էլ իրատեսական չլինելը: Նմանատիպ գաղափարների անհեթեթության վերաբերյալ կարելի է ասել հետևյալը. մարդիկ զգուշանում են չեչնական դեպքերի կրկնությունից, ովքեր շատ հեռու են ինչպես Չեչնիայում տեղի ունեցած, այնպես էլ Ղարաբաղում ընթացող գործընթացների էությունից: Եվ եթե 90-ական թվականների սկզբներին սուբյեկտիվ մոտեցմամբ կարելի էր գուգահեռներ անցկացնել տարածաշրջանային հակամարտությունների ու ռուսական որոշ վարչական միավորների ինքնուրույնության և անկախության ձգտումներին, ապա 20-րդ դարի վերջին արդեն ակնհայտ դարձավ և 21-րդ դարի առաջին տասնամյակում էլ փաստարկվեց, որ Լեռնային Ղարաբաղի ազգային-ազատագրական շարժման և միջազգային ահաբեկչության դեմ պայքարի միջև որևէ ընդհանրության բաղադրիչ հնարավոր չէ դիտարկել:

Հարավկովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի թուլացման և Արևմուտքի ազդեցության գուգահեռ ուժեղացման պայմաններում շատ վերլուծաբաններ բավականին թերահավա-

տությամբ վերաբերվեցին ղարաբաղյան հակամարտությունում ռուսական պետության քաղաքականության հեռահար նպատակներին: Օրինակ՝ Հայաստանի ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոնում (ՀՌԱՀԿ) նշում էին, որ Հարավային Կովկասում ռուսական ազդեցության թուլացման և ամերիկա-եվրոպական ազդեցության ուժեղացման պայմաններում Մոսկվայի համար այդ գործընթացների թուլացման (նամանավանդ ՆԱՏՕ-ի՝ դեպի արևելք ընդլայնվելու) համար միակ լծակը մնում են տարածաշրջանային հակամարտությունները. «Եթե գործարկվի հակամարտությունների սրման մեխանիզմը, ձեռք կբերվի Մոսկվային ձեռնտու անկայունությունը, ինչը կթուլացնի Արևմուտքի տնտեսական, հետևաբար՝ քաղաքական ազդեցությունը տարածաշրջանում... Ինչքան մեծ լինի անկայունությունը, այնքան լավ Ռուսաստանի համար» [11]: Այս կարծիքն էր կիսում նաև «Սպեկտր» ռազմավարական վերլուծությունների կենտրոնի ղեկավար Գ. Նովիկովան: Նա նշում է, որ «...Հարավային Կովկասի գոտում ստեղծված «status quo»-ն, ընդհանուր առմամբ, Ռուսաստանին ձեռնտու է, քանի որ վերջինս հանդիսանում է հակամարտությունների կարգավորման հիմնական մասնակից: Չկարգավորվածության փաստը թույլ է տալիս մանիպուլյացիայի ենթարկել հակամարտության կողմերին և ամրապնդել սեփական տնտեսական դիրքերը այնպիսի գոտում, որտեղ կայունության երաշխիքների բացակայությունը հետ կպահի արևմտյան ներդրողներին» [12]:

Նմանատիպ մեկնաբանությունը դժվարությամբ կարելի է համապատասխանեցնել տարածաշրջանային իրականությանը: Պարզ է, որ Հարավային Կովկասը աշխարհաքաղաքական առումով միասնական շրջան է, իսկ «երկակի խաղերը» ոչ մի կերպ չեն նպաստում տարածաշրջանի կայունությանը, ավելին, իրավիճակի սրումը սպառնում

է նաև Հյուսիսային Կովկասում Ռուսաստանի ազգային անվտանգությանը: «Ռուսաստանն առավելագույնս օգտագործում է իր ազդեցությունը հակամարտող կողմերի վրա ռազմական գործողությունների դադարեցման և իրավիճակին դիվանագիտական լուծում տալու նպատակով...» [13]: Մի կողմից՝ Ռուսաստանը շահագրգռված է Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորման հարցում, ինչը կապված է նաև իր անվտանգության հետ, մյուս կողմից, տարածաշրջանում կոնֆլիկտների առկայությունը Ռուսաստանի դերը բարձր գնահատելի է դարձնում դրանց կարգավորման գործում:

Վերջին շրջանում աշխարհաքաղաքական իրադրության փոփոխություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցին Հարավկովկասյան տարածաշրջանում քաղաքական իրավիճակի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վրա, քանի որ նախորդ մի քանի տարիներին արձանագրվեցին, թերևս, ամենածանր բախումներն ու ամենամեծ կորուստները հայկական և ադրբեջանական ուժերի շփման գծում՝ ներառյալ 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմական իրավիճակը: Ռուսաստան-Արևմուտք դիմակայության զարգացումներն ազդում են ողջ Եվրասիայի, նախկին խորհրդային տարածքի յուրաքանչյուր երկրի վրա, որոնք շատ դեպքերում ստիպված են վերանայել իրենց քաղաքականությունը, իսկ կոնկրետ ԼՂ շարունակվող հակամարտության մեջ այդ փոփոխությունները առանցքային դեր են խաղում շարունակվող հակամարտության կարգավորման գործում, սակայն այդ տեսլականում փորձ է արվում նաև բախվող շահերի համատեքստում գործընթացում արձանագրվող բացասական արդյունքները կապել հակամարտող կողմերի քաղաքական կամքի բացակայության հետ՝ նշելով, որ խաղաղ բանակցությունների անհաջողության վերաբերյալ Մինսկի

խմբի համանախագահներին ուղղված ցանկացած մեղադրանք հանդիսանում է այն հիմնական տարրը, որը խանգարում է խաղաղության գործընթացին [14]: Այս համատեքստում տեղին է նաև մեջբերել փորձագետներից Լ.Շիրինյանի դեռևս 2014թ. արտահայտած տեսակետը, որ «այն գիտակցությունը, որ Ռուսաստանը մեր խնամակալն է, պետք է կողքի դնել»՝ խաղաղության պարտադրման գործում շեշտը դնելով սեփական ուժերի վրա [15]:

Ռուսաստանը, ինչպես և յուրաքանչյուր երկիր, միշտ գործում է առաջին հերթին սեփական շահերից ելնելով, հետո նոր մտածում է իր հարևանների բարօրության մասին: Հայաստանը և Կասպյան տարածաշրջանի ռուսական շրջանը դիտարկվում է որպես այդ ուղղությամբ ՆԱՏՕ-ի ակտիվացման զսպիչ գործոն [16]: Մոսկվայի իրական նպատակները և հետագայում նրա քաղաքականության կուրսի բնույթը Հարավային Կովկասի տարածաշրջանում հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել, թե դեպքերի ընթացքի որ սցենարն է համապատասխանում նրա ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմաքաղաքական շահերին: Եթե ենթադրենք, որ ռազմական գործողությունների վերսկսումը կնպաստի տարածաշրջանում արևտմյան երկրների ազդեցության ուժեղացմանը, ապա ակնհայտ է, որ նոր պատերազմը սկզբունքորեն կտարբերվի նախկինից, որը ուներ բացառապես տեղային բնույթ, իսկ ռազմական գործողությունների աշխարհագրական տարածքի ընդլայնումը ողջ տարածաշրջանի համար ընդհանրապես և Ռուսաստանի համար մասնավորապես կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Դեպքերի այս ընթացքի պարագայում հակամարտող կողմերից ոչ մեկն ի վիճակի չի լինի վճարելու ռուսական զենքի դիմաց այն ծավալով, որով վճարում են Ասիական խաղաղօվկիանոսյան շրջանի պետությունները:

Մյուս գործոնը, որը, ըստ մասնագետների, պետք է Ռուսաստանին հետ պահի տարածաշրջանում անկայունության խորացման սցենարից, կրում է զուտ տնտեսական բնույթ: Սկսած 2000-ական թվականներից՝ արձանագրվում է ռուսական պետական և մասնավոր կապիտալի խոշոր ներհոսք դեպի Հարավային Կովկասի պետություններ: Ճիշտ է, միասնական ծավալով այն գիջում է արևմտյան կապիտալին, սակայն զբաղեցրած ոլորտների (էներգետիկա, կապ, տրանսպորտային հաղորդակցություն) կարևորության առումով չի կարելի ասել, թե ռուսական կապիտալը անհուսալի կերպով հետ է մնում արևմտյանից: Արդյունքում, չնայած անցած 25 տարիների կտրվածքին՝ Ռուսաստանը դեռևս գտնվում է ԽՍՀՄ-ի փլուզումից հետո արդեն ինքնիշխան պետություններում կորսված դիրքերի վերականգնման ձանապարհին: Բացի այդ՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ձգձգումը դրա մասնակիցների մոտ հանգեցնում է նաև Ռուսաստանի՝ գործընթացին օգնելու անկարողության մտքին, ինչն իր հերթին այդ գործընթացի մեջ այլ դերակատարի ակտիվացման նախադրյալ կարող է դառնալ: Դա Ռուսաստանի ամենևին ձեռնադրելի չի և կրեթի տարածաշրջանում վերջինիս դիրքերի նահանջին:

Այդպիսով՝ կարելի է եզրահանգել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գարգացման պատմությունը պարզ ցույց է տալիս, որ Ռուսաստանի՝ որպես միջնորդի գործունեությունը համաչափ է ընթացել կոնֆլիկտի ժամանակային գարգացման հետ: Խորհրդային Միության գոյության դադարեցումից հետո Մոսկվան Հայաստանի և Ադրբեյջանի միջև միակ իրական և գործնական հետևանքներ առաջացնող միջնորդն էր Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Հետագայում այդ առաքելությունը վերջինս զիջեց ԵԱՀԽ/ԵԱՀԿ-ին, ապա ԵԱՀԿ շրջանակներում կարգավորման գործընթացն անցավ համանախագահող կողմերի միջնորդությանը: Ռուսաստանը, չնայած որ մասնակցում է մյուս միջնորդների և ԵԱՀԿ ՄԽ մյուս անդամների հետ համատեղ հաշտարարական գործընթացներին, հանդես է գալիս նաև առանձին միջնորդական նախաձեռնություններով, այդ թվում՝ տարբեր ոչ պաշտոնական հասարակական կազմակերպությունների ու ձևաչափերի միջոցով:

ՊԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռ. Իշխանյան, Ձախողված միջնորդական առաքելություն, 30.07.2013թ., <http://www.artsakhtert.com/arm/politics/item/5345-ձախողված-միջնորդական-առաքելություն>:
2. Ժելեզնովոդսկի հուշագիրը. Արցախյան կարգավորման առաջին փաստաթուղթը, <http://www.aniarc.am/2016/04/20/zheleznowodsk-unique-1991-nk/>:
3. ԼՂ արտաքին գործերի նախարարություն, 1991-1994թթ. պատերազմը, <http://www.nkr.am/hy/the-war-of-19911994/83/>:
4. Հ. Աբրահամյան, Մարտնչող Արցախը, Գիրք Գ, Ստեփանակերտ, 2007, էջ 523:
5. Интервью Президента Республики Армения Р.Кочаряна // Новое время. -2001. 12 сентября. С.2.
6. Интервью Президента НКР А.Гукасяна // Ноев Ковчег. - 2003. №7. С.5.
7. Корчинин И. Прагматизм должен быть долгосрочным // Независимая газета. — 2000. 25 августа, С.3.
8. ԵԱՀԿ նախագահի հայտարարությունը՝ Լիսաբոնի խորհրդաժողովում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման սկզբունքների վերաբերյալ բաղկացած է 3 կետերից. Ադրբեյջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականություն, Լեռնային Ղարաբաղին լայն ինքնավարության տրամադրում Ադրբեյջանի կազմում, Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական ողջ բնակչության անվտանգության երաշխիքների տրամադրում (Տե՛ս ԵԱՀԿ փաստաթղթեր. Volume 2, Number 3-July 1996, <https://wwwnc.cdc.gov/eid/articles/issue/2/3/table-of-contents>):

9. Пресс–конференция Президента Российской Федерации В.В.Путина по итогам заседания Совета Коллективной Безопасности// Дипломатический вестник. –2001. Июнь.
10. Ахундова Э. Чечня – это российский Карабах // Литературная газета. – 1995. 18 января; Выступление М.Г.Делягина / Материалы международной конференции по проблемам Средиземноморско–Черноморского региона / Институт стратегических оценок и анализа // www.isoa.ru
11. Ս. Հովհաննիսյան, Դ. Պետրոսյան, «Հայաստան, Եվրոպա, Ասիա. Միջանցքներ և խաչմերուկներ» Երևան, ԲԱՀԿ, 2001թ. էջ 268:
12. Новикова Г. Некоторые аспекты политики России на Южном Кавказе, Центр стратегического анализа “Спектр”, – 2004. 26 мая.
13. Ս. Հովհաննիսյան, Դ. Պետրոսյան, «Հայաստան, Եվրոպա, Ասիա. Միջանցքներ և խաչմերուկներ» Երևան, ԲԱՀԿ, 2001թ. էջ 269:
14. ՌԴ արտաքին գործերի նախարարություն. Ռուսաստանը որպես միջնորդ օգտագործում է բոլոր մասշտիբ գործիքները ղարաբաղյան կարգավորման համար, 30.12.2016, [http: //www. panarmenian.net/arm/news/203193/](http://www.panarmenian.net/arm/news/203193/):
15. Լևոն Շիրինյան. Այն գիտակցությունը, որ Ռուսաստանը մեր խնամակալն է, պետք է կողքի դնել, 29.09.2014թ., [http: //www.armversion.am/2014/09/29/այն-գիտակցությունը-որ-ռուսաստանը-մեր/](http://www.armversion.am/2014/09/29/այն-գիտակցությունը-որ-ռուսաստանը-մեր/):
16. Корнилов А.А., Региональные приоритеты внешней политики России как отражение нелинейных стратегических подходов / Зарубежное регионоведение: проблемы теории и практики: материалы VII Междунар.науч.конфер.; Под ред. А.А.Корнилова и др., Н.Новгород: ННГУ им. Н.И.Лобачевского, 2015, с. 9.

РОЛЬ РОССИИ В ФОРМАТЕ ПЕРЕГОВОРОВ ПО КАРАБАХСКОМУ КОНФЛИКТУ

АРМЕН АГАБАБЯН

НАН РА, Институт философии, социологии и права, аспирант

Переговоры по урегулированию Карабахского конфликта осуществляются при посредничестве Минской группы ОБСЕ, в рамках которой в настоящее время проводится переговорный процесс. Как стороны конфликта, так и международные силы подчеркивают непрерывность переговоров в рамках Минской группы ОБСЕ и вклад стран–сопредседателей в данном вопросе. На протяжении всего конфликта выраженную инициативу проявляет Российская Федерация, посредничество которой постепенно становится все более структурированным. Посреднические усилия России в деле урегулирования конфликта продолжают решительно и в разных форматах возрастать, имея в основе интересы страны в Южнокавказском регионе.

RUSSIA'S ROLE IN THE FORMAT OF TALKS ON KARABAKH CONFLICT

ARMEN AGHABABYAN

National Academy of Sciences, Institute of Philosophy, Sociology and Law, Postgraduate

Negotiations on the settlement of the Karabakh conflict are carried out with the mediation of the OSCE Minsk Group. The parties of the conflict and the international forces emphasize the continuity of the negotiations within the OSCE Minsk Group and the contribution of the co–chairing countries on this issue. Throughout the conflict, the expression takes the initiative Russian Federation, which mediation is gradually becoming more structured. Mediation efforts of Russia in the settlement of the conflict continue to grow strongly and in different formats, referring to the country’s interests on the basis of the South Caucasus region.

**ՕՐԵՆՍՊԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հոդվածը ներկայացնում է օրենսդիր իշխանության դերը իշխանությունների տարանջատման համակարգում: Բնութագրվում են այն հատկանիշները, որոնք ներկայացնում են իշխանությունների տարանջատման համակարգում օրենսդիր մարմնի՝ ի դեմս պառլամենտի, գործառության քաղաքագիտական դրսևորումները: Օրենսդիր մարմինների դերը հիմնավորվում է սահմանադրական մեխանիզմների զարգացման գործընթացով իշխանությունների տարանջատման համակարգում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. օրենսդիր իշխանություն, տարանջատում, պառլամենտ, գործառություն:

Օրենսդիր իշխանության ձևավորումը, կառուցվածքն ու իշխանության այլ ճյուղերի հետ փոխգործողության ձևերը սերտորեն կապված են իշխանության տարանջատման համակարգի գործարկման հետ: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում պետական կառավարման համակարգում օրենսդրական իշխանության գործառության կենսունակության հարցադրումները, մասնավորապես՝ կարևորվում է իշխանությունների տարանջատման համակարգում օրենսդիր իշխանության իրավաքաղաքական կենսագործունեությունը: Օրենսդիր իշխանությունը, լինելով իրավաքաղաքական իրականության անբաժանելի մասը, աստիճանաբար ամրապնդում է իր դիրքերը և ներկայանում որպես հասարակական ինստիտուտների անբաժանելի տարր: Օրենսդիր մարմինների դերի հիմնավորումն ու խորացումը պայմանավորում են սահմանադրական

մեխանիզմների զարգացումը իշխանությունների տարանջատման ընդհանուր համակարգում: «Օրենսդիր» եզրույթի բառակազմությունը՝ «օրեն» և «դիր» («դնել, սահմանել, հաստատել» իմաստներով) բառարմատների համադրությամբ, գրեթե լիովին բացահայտում է օրենսդիր իշխանության գործառության հիմնական սկզբունքը [7], սակայն, այստեղ ևս ծագում են բազմաթիվ հարցեր՝ կապված նշված սկզբունքի իրագործման եղանակների և ձևերի հետ: Հարց է ծագում, թե ինչ է օրենքը, ով է այն ընդունում և ինչ մեխանիզմներով են ներկայացվում ու քննարկվում օրենքների մշակման և վավերացման համար անհրաժեշտ քաղաքական, հասարակական և իրավական կշիռ ունեցող խնդիրները: Այս հարցադրումների ներքո ամբողջանում է իշխանությունների տարանջատման համակարգում օրենսդիր իշխանության տեղի ու դերի գիտական ներկայացման անհրաժեշտությունն ու գիտակցումը, ուստի պատշաճ կերպով ներկայացնելու համար վերոնշյալ խնդիրը անհրաժեշտ է նախ՝ հակիրճ ներկայացնել օրենսդիր կամ ներկայացուցչական իշխանության հիմնական սկզբունքները, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալները՝

- համակարգվածությունը, որը պայմանավորված է օրենսդիր իշխանության համընդհանուր աղբյուր լինելու հանգամանքով և գործունեության ընդհանուր հիմնարար սկզբունքներով.
- օրենսդիր իշխանության կառուցվածքային տարբերությունը գործադիր իշխանության հիերարխիկ պատկերից.
- օրենսդիր իշխանության ներկայացուցչականությունը և ընտրականու-

թյունը.

– գործառույթների և լիազորությունների այն համախումբը, որը հնարավորություն է տալիս իրականացնելու պետության սահմաններում իշխանությունների տարանջատումը,

– իշխանության ոչ միանձյա, այլ կոլեգիալ իրականացումը [8, c. 42 – 45.]: Իշխանությունների տարանջատման համակարգի բաղկացուցիչ տարրն է օրենսդիր կամ ներկայացուցչական իշխանությունը, որը ներկայանում է օրենսդիր իշխանության առաջնայնության գաղափարի ներքո, քանի որ գործադիր և դատական իշխանության ձյուղերի կենսագործունեությունը հնարավոր է միայն ընդունված օրենքների իրավաբաղաբական միջավայրում:

Իշխանությունների տարանջատման համակարգը հիմնարար սահմանադրական սկզբունք է: Քաղաքագիտական գիտակարգում այն ձանաչում է ստացել և ընկալվում է որպես պետական կառավարման մարմինների համակարգային մի մոդել, որն կիրառվում է ժողովրդավարական պետություններում:

Իշխանությունների տարանջատման համակարգի համատեքստում հռչակվում է մի կողմից՝ օրենսդիր իշխանության գերակայությունը և, մյուս կողմից՝ դատական և գործադիր իշխանությունների ենթաօրինականությունը:

Ընդհանուր առմամբ, ժողովրդավարական պետություններում օրենսդիր իշխանությունը հանդես է գալիս որպես ժողովրդի կամքի իրավաբաղաբական արտահայտություն: Այստեղ ծագում է օրենսդիր իշխանության գործառնության ևս մի կարևոր հարցադրում. արդյո՞ք օրենսդիր մարմինների կողմից վավերացրած օրենքները արտահայտում են պետության բոլոր բնակիչների կամքն ու ցանկությունները: Հետևաբար, իշխանությունների տարանջատման ընդհանուր համակարգում առանձնանում է օրենսդիր իշխանության շատ կարևոր մի սկզբունք, որն ուղղված է

կոնսոլիդացնելու պետության տարբեր սոցիալական և քաղաքական ուժերի հետաքրքրությունները և համընդհանուր հավանության արժանի օրենսդիր լուծումները [3]:

Իշխանությունների տարանջատման համակարգում օրենսդիր իշխանությունը կոչված է սահմանելու վարքագծի որոշակի մեխանիզմներ և իրականացնելու դրանց կատարման վերահսկողությունը: Այդ սկզբունքին համապատասխան ձևավորվում են նաև գործադիր և դատական իշխանությունների գործառնության շրջանակները՝ որպես կատարողական-բաշխիչ գործունեության և այդ գործունեության նկատմամբ վեճերի իրավական հանգուցալուծման մեխանիզմներ:

Պետական իշխանության յուրաքանչյուր ձյուղ ունի ուրույն խնդիրների և գործառույթների շրջանակները, սակայն, այնուամենայնիվ, իշխանությունների տարանջատման համակարգում օրենսդիր իշխանությունը առաջատար դեր է գրավում: Այս տեսանկյունից ելնելով՝ իշխանությունների տարանջատման ընդհանուր համակարգում օրենսդիր իշխանությունը իրավամբ կարող է կոչվել «առաջնային իշխանության ձյուղ»:

Օրենսդիր իշխանությունը, նախ՝ սահմանում է վարքի կանոնները, այդ թվում՝ իշխանության այլ ձյուղերի համար: Երկրորդ՝ սահմանելով գործադիր և դատական իշխանության գործառույթների կազմակերպվածությունը՝ օրենսդիր իշխանությունը ուղղորդող դեր է կատարում, ինչը չի սահմանափակում այդ իշխանությունների ինքնուրույնությունը, այլ, ընդհակառակն, միտված է իշխանության երեք ձյուղերի համագործակցությանը: Երրորդ՝ օրենսդիր իշխանությունը կատարում է վերստուգիչ գործառույթ, որն արտահայտվում է ընդունված օրենքների գործառնության որակի և հասարակայնորեն արժևորված նպատակահարմարության գնահատման մեջ:

Այսպիսով՝ օրենսդիր իշխանության գլխավոր խնդիրը՝ օրենքների ընդունումը, արտահայտում է կարևորագույն հասարակական հարաբերությունները և իրագործվում է պետական իշխանության բոլոր ճյուղերի կողմից իշխանության համապատասխան մակարդակներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է օրենսդիր իշխանությունը բնորոշել որպես պետական իշխանության որոշակիորեն առանձնացված մի ոլորտ, որն ուղղված է օրենսդրական որոշումների ընդունմանը և դրանց կատարման գործընթացի վերահսկողությանը: Պետության սահմանադրական օրինականության որակական կարգավիճակը բնորոշվում է հենց օրենսդրական իշխանության վերը նկարագրված գործառույթներով: Այլ խոսքերով՝ սահմանադրական օրինականությունը ձևավորվում է երկրի Սահմանադրության դրույթների լիակատար իրագործմամբ, իսկ օրենսդիր իշխանությունը ձևավորում է սահմանադրական համապատասխան դրույթներն ու դրանք արտահայտող վարքի կանոնները և ստեղծում է պայմաններ կարգուկանոնի պատշաճ պահպանման համար: Բ. Ս. Էբզելը մատնանշում է օրենսդիր իշխանության՝ որպես ժողովրդական ինքնորոշման երաշխավորի կարգավիճակը, այն ինքնորոշման, որն իրագործվում է սահմանադրական ձևերի միջոցով և պահպանվում սահմանադրական իրավակարգի պաշտպան հանդիսացող դատական մարմինների կողմից [10, c. 139 – 140]: Այստեղ էլ հանգում ենք օրենսդիր իշխանության կողմից օրենքների որակական մշակումների արդյունքում ձեռքբերված հասարակական իրավակարգի արդյունավետ ապահովման գաղափարին: Այդ հասարակական-քաղաքական փոխկապվածությունը շարունակական է և արտահայտվում է օրենսդիր մարմինների իշխանության հետագա գործառույթների կատարման նկատմամբ պատասխանատվության աճին, քանի որ

այդ գործառույթները, ինքնին լինելով շարունակական, ինչպես տեսանք, կարգավորում են պետական կառավարման բոլոր օղակները և իրենց վրա են կրում նախկինում ընդունված օրենքների հասարակական արձագանքը: Այդպիսի շղթայական փոխկապվածությունն էլ հնարավորություն է տալիս քննարկելու, վերանայելու և փոփոխելու արդեն իսկ ընդունված օրենսդրական դրույթները [6, c. 10 – 48]:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է առանձնացնել պետական իշխանության համակարգում օրենսդիր իշխանության փոխգործողության երկու կարևորագույն բնագավառ՝ օրենսդրական և պառլամենտական-վերահսկիչ: Ընդ որում, այդ բնագավառներից առաջինի շնորհիվ ստեղծվում են պետական կառավարման իրավա-քաղաքական հիմքերը, իսկ երկրորդ՝ գործունեության պառլամենտական-վերահսկիչ բնագավառի շնորհիվ ապահովվում է շարունակական փոխադարձ կապը իշխանությունների գործառույթների միջև և, մյուս կողմից՝ պահպանվում է իշխանությունների տարանջատման համակարգային սկզբունքը:

Նշենք նաև, որ չնայած ժամանակակից քաղաքական գիտակարգում առկա օրենսդիր իշխանության սահմանումների բազմազանությանը՝ այնուամենայնիվ, բացակայում է օրենսդիր իշխանության լիարժեք հասկացումը որպես իշխանությունների տարանջատման համակարգի բաղադրատարր: Ի տարբերություն գործադիր և դատական իշխանությունների, օրենսդիր իշխանության գործառույթները իշխանությունների տարանջատման ընդհանուր համակարգում մեր կողմից բնորոշվում է այդ բաղադրատարրի առաջնայնության գաղափարով՝ որպես իշխանության մյուս երկու ճյուղերի գործարկման իրավաքաղաքական հիմքի՝ հատուկ միայն օրենսդիր իշխանությանը:

Օրինաստեղծ կամ ներկայացուցչական

իշխանությունը իրականանում է նախ-
և առաջ համապետական ներկայացուց-
չական մարմնի միջոցով, իսկ ֆեդերա-
տիվ պետություններում՝ ֆեդերացիայի
ինքնավար սուբյեկտների կամ տեղական
օրենսդիր մարմինների միջոցով:

Համապետական ներկայացուցչա-
կան մարմինը կարող է ունենալ տար-
բեր անվանումներ՝ ի դեմս Ազգային կամ
Ժողովրդական ժողովի, Կոնգրեսի և
այլն, սակայն այն հաճախ անվանվում
է «պառլամենտ»: Քաղաքական գիտա-
կարգում պառլամենտը հայտնի է որ-
պես մի եզրույթ, որն արտահայտում
է պետական իշխանության որոշակի
կողմը՝ օրինաստեղծ, ներկայացուցչա-
կան և վերահսկիչ գործառույթներով,
և դրանով էլ հիմնավորում է իշխանու-
թյունների տարանջատման քաղաքա-
գիտական սկզբունքը [7]: Պառլամենտի
կոմպետենտությունը կազմում է գործա-
ռույթների և իրավասությունների հա-
մախումբը: Տարբեր պատմական ժամա-
նակահատվածներում պառլամենտները,
ըստ կառուցվածքի, եղել են մեկ, երկու
կամ երեք ատյաններից բաղկացած: Որ-
պես կանոն, վերին ատյանի անդամնե-
րը նշանակվում են, իսկ ստորին ատյանի
անդամներն՝ ընտրվում: Ռուսաստանում
պառլամենտական տիպի ինստիտուտ-
ները առաջին անգամ հայտնվել են 1906
թ. և գոյություն ունեցել մինչև 1917 թ.
ունենալով սահմանափակ իրավասու-
թյուններ: Խորհրդային իշխանության
օրոք օրենսդիր իշխանությունը գործում
էր կուսակցական ենթակայության, այլ
ոչ թե պառլամենտական սկզբունքով [5,
8]: Օրենսդիր իշխանությունը միանման
չէ նաև բոլոր ժամանակակից երկրնե-
րում և չի սահմանափակվում գուտ ներ-
կայացուցչական մարմնի առկայությամբ:
Մի շարք երկրներում «պառլամենտ» եզ-
րույթն ներառում է ոչ միայն ընտրական,
ներկայացուցչական մարմինը, այլև վե-
րին ատյանը և պետության ղեկավարին,
առանց որի ստորագրության ընդունված
նախագծերը օրենքի ուժ չեն ստանում:

ՀՀ Սահմանադրության կարևորության
ընդունումը և սահմանադրական ար-
ժեքների առաջնայության սկզբունքը
կարևորագույն պայման է պետական
իշխանության բոլոր ճյուղերի էֆեկտիվ
գործառնության համար [2, 3]: Այդ պատ-
ճառով էլ պառլամենտի՝ որպես ժողովր-
դի կամքն արտահայտող ներկայացուց-
չական մարմնի, ինստիտուտի կայացումը
ինքնին բնութագրում է խոսքի ազատու-
թյան և օրենքների ներկայացուցչակա-
նության հասարակական-քաղաքական
ձեռքբերումները պետական կառավար-
ման էվոլյուցիայի ընթացքում: Այլ խոսքե-
րով՝ պառլամենտի ինստիտուտը՝ որպես
օրենսդիր իշխանության ներկայացուց-
չական մարմին, տալիս է իշխանություն-
ների տարանջատման համակարգային
սկզբունքի քաղաքագիտական հիմնա-
վորումը մարդու քաղաքական իրա-
վունքների ներկայացման միջոցով [1]:

Ներկայացնենք օրենսդիր իշխանու-
թյան համար բնութագրական հետևյալ
հատկանիշները: Հենքային եզրույթնե-
րից է օրենսդիր իշխանության համա-
կարգային լինելու հատկանիշը, քանի
որ օրենսդիր իշխանությունը ներկայա-
նում է ներկայացուցչական մարմինների
համակարգի տեսքով, որն ունի կոլե-
գիալ բնույթի ներհամակարգային կա-
պեր, որոնք տարբերվում են գործադիր
իշխանության ներսում նկատվող կա-
տարողական բնույթի համակարգվա-
ծության պատկերից: Ավելին, օրենսդիր
իշխանության համակարգվածությունն
արտահայտվում է իշխանության միաս-
նական աղբյուրի՝ ժողովրդի, առկայու-
թյամբ և գործունեության ընդհանուր
սկզբունքներով: Ֆեդերատիվ պետու-
թյուններում օրենսդիր իշխանության
ներքին համասեռ համակարգվածու-
թյան պատկերը տեսնում ենք համապե-
տական և տեղական օրենսդիր մարմին-
ների փոխհարաբերությունների նույն
կոլեգիալ համակարգի օրինակով, երբ
համապետական ներկայացուցչական
մարմինը իրավասու չէ լուծարելու ֆե-

դերացիայի սուբյեկտների կամ վարչական միավորի ինքնավար ներկայացուցչական մարմինները [5]:

Օրենսդիր մարմնի ընտրական կամ ներկայացուցչական լինելու բնույթը ներկայանում է օրենսդիր իշխանության հաջորդ կարևոր հատկանիշը: Ներկայացուցչական մարմինները տիրապետում են տվյալ երկրում ժողովրդավարության մակարդակից, գոյություն ունեցող փոխադարձ զսպումների ու հակակշիռների համակարգի պատկերից կախված որոշակի լիազորություններով:

Իշխանությունների տարանջատման ընդհանուր համակարգը չի ենթադրում իշխանությունների տարբեր ձյուղերի առանձնացումը, քանի որ այն ներկայանում է որպես պետական իշխանությունը արտահայտող միասնական իրավաքաղաքական ինստիտուտ [9, c. 130]: Պետական իշխանության միասնականությունը, որն ուղեկցվում է իշխանության ձյուղերի գործառնության թափանցանք, հիմք է դրանց փոխգործողության և փոխկապակցվածության համար:

Օրենսդիր իշխանության լիազորությունները կարող են փոխկապված լինել նաև սահմանադրական դատարանների լիազորությունների հետ: Վերջիններս իրավասու են որոշ օրենքներ հայտարարել ոչ սահմանադրական, ինչի արդյունքում օրենքները նույնպես կորցնում են իրավական ուժը:

Եվ ընդհակառակն, պառլամենտը իր հերթին կարող է իրագործել առանձին գործադիր և դատական գործառնություններ: Երբեմն պառլամենտը փոխարինում է գործադիր իշխանությանը և տիրապետում է որոշակի դատական գործառնություններով: Որոշ երկրներում պառլամենտը լիազորված է մեղադրական եզրակացություն ընդունել և բարձրաստիճան պաշտոնյաներին դատարան հանձնել, իսկ երբեմն էլ՝ դատական գործընթացով դիտարկել իմպիչմենտի դեպքերը:

Ժողովրդավարական սահմանադրությունների համաձայն՝ պառլամենտը

տր հանդես է գալիս որպես պետության բարձրագույն օրենսդիր մարմին, սակայն, դիտարկելով տարբեր երկրների փորձը, տեսնում ենք պառլամենտի իրավասությունների տարբեր արտահայտություններ: Տարբեր են նաև պառլամենտների գործունեության հիմնական սկզբունքներն՝ ըստ նրանց կառուցվածքի: Մեկ ատյանից բաղկացած պառլամենտները գործում են հիմնականում մաժորիտար սկզբունքով, այն դեպքում, երբ երկպալատանի պառլամենտների գործունեությունը բնութագրվում է որպես պառլամենտի երկու ատյանների միջև ձեռքբերված կոնսենսուս [4]:

Օրենսդիր իշխանության կոլեգիալ բնութագիրը, այսպիսով, արտահայտվում է ոչ միայն օրենսդիր մարմնի մագմանդամ կարգավիճակով, այլև բուն պառլամենտի երկաստիճան կառուցվածքով:

Իշխանության ներկայացուցչական իշխանության հիմնարար նշանակությունը իշխանությունների տարանջատման համակարգում պառլամենտի առաջատար դերի նորմատիվային իրագործման մեջ է: Իշխանությունների տարանջատման համակարգային սկզբունքը ուղղված է անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովմանը, որոնք կարող են երաշխավորվել միայն այդ ձյուղերի փոխկապակցված գործունեության շնորհիվ: Իշխանությունների տարանջատման սկզբունքը նախատեսում է ոչ թե պետական կառավարման երեք ձյուղերի պարզ բաժանումը մեկը մյուսից, այլև՝ այնպիսի պայմանների ստեղծումը, որոնց պարագայում այդ ձյուղերը հակակշիռների և զսպումների համակարգի շնորհիվ փոխադարձաբար կսահմանափակեն որևէ մի իշխանության տարածումը մյուս երկու իշխանությունների նկատմամբ: Օրինակ՝ օրենսդիր իշխանությունը վերահսկում է գործադիր իշխանությանը վերջինիս համար պարտադիր օրենքների ընդունման միջոցով: Պառլամենտը՝

որպես օրենսդիր իշխանությունը կրող մարմին, մարմնավորում է օրենսդիր իշխանության առաջնայնության սկզբունքը:

Անփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ իշխանությունների տարանջատման համակարգում իշխանության օրենսդիր ձյուղը առաջնային է իր բնույթով և ներ-

կայանում է որպես պետության ընտրական մարմինների կոլեգիալ համակարգ, որը կատարում է օրինաստեղծ, ներկայացուցչական և այլ գործառնություններ՝ ըստ տվյալ երկրի պառլամենտի ինստիտուտի և փոխադարձ զսպումների ու հակակշիռների համակարգի արտահայտությունների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ.Մ. Խաչատրյան, Պառլամենտ և պատգամավոր, Երևան 1994 թ.:
2. Գ. Կոստանյան, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը, Երևան, 2005 թ.:
3. Հ.Հ. Հակոբյան, ՀՀ Ազգային ժողովի գործունեության մի քանի հիմնախնդիրների մասին, Երևան, 2005 թ.:
4. Հ.Հ. Հակոբյան, Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007 թ.:
5. Авакьян С.А., Федеральное Собрание – Парламент России, М., 1998.
6. Безруков А.В., Конституционно–правовые аспекты осуществления законодательной власти по обеспечению правопорядка в России: Монография, М., 2015. с. 10 – 48.
7. Даниленко В.И., Современный политологический словарь, М., 2002.
8. Парламентское право России, отв. ред. О.Н. Булаков, М., 2006.
9. Чиркин В.Е., Конституционное право зарубежных стран, М., 1997. с. 130.
10. Эбзеев Б.С., Конституция, власть и свобода в России: опыт синтетического исследования, М., 2014, с. 139 – 140.

РОЛЬ ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ВЛАСТИ В СИСТЕМЕ РАЗДЕЛЕНИЯ ВЛАСТЕЙ

БАГРАТ БАГРАТЯН

НАН РА, Институт филологии, социологии и права, отдел политологии, соискатель

Статья представляет исследование роли законодательной власти в системе разделения властей. Характеризуются признаки, которые представляют политологические аспекты деятельности парламента в качестве органа законодательной власти в системе разделения властей. Роль законодательных органов обосновывается процессом развития конституционных механизмов в системе разделения властей.

THE ROLE OF THE LEGISLATIVE POWER IN THE SEPARATION OF POWERS

BAGRAT BAGRATYAN

National Academy of Sciences of the RA, Institute of Philosophy, Sociology and Law, Department of Political Science, Applicant

This article presents the investigation of the role of legislative power in the system of separation of powers. Features presenting political aspects of the Parliament as a legislative body in the system of separation of powers are characterized.

The role of legislative power is based on the process of development of constitutional mechanisms in the system of separation of powers.

**ՔԵՄՓ-ԴԵՎԻԴԻ (1979Թ.) ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.
ԻՍՐԱՅԵԼԻ ՀԵՏ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՓՈՐՁԵՐԸ**

Հոդվածի նպատակն է վերլուծել միջարաբական հակասությունները Իսրայելի հետ հարաբերություններում, հատկապես՝ եգիպտա-իսրայելական 1979թ-ի պայմանագրի կնքումից հետո: Եգիպտոսը դարձավ առաջին արաբական երկիրը, որը դեմ գնաց երեք «ոչ»-երի քաղաքականությանը և անհատական խաղաղության պայմանագիր կնքեց Իսրայելի հետ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. միջարաբական հակասություններ, եգիպտա-իսրայելական պայմանագիր, քաղաքականություն, աջակցություն, պատերազմական իրավիճակ:

Դեռևս մինչև եգիպտա-իսրայելական պայմանագիրը՝ արաբական երկրները փորձել են խաղաղություն հաստատել Իսրայելի հետ, սակայն 1979թ-ը շրջադարձային եղավ այդ հարցում: Փորձել ենք հիմնականում Սիրիայի, Հորդանանի ու Լիբանանի օրինակով վերլուծել արաբ-իսրայելական հարաբերությունների հետագա զարգացումը:

Ինչպես նշեցինք, Եգիպտոսը դարձավ առաջին արաբական երկիրը, որը խաղաղություն հաստատեց Իսրայելի հետ: 1977թ. նոյեմբերի 19-ին Սադաթը այցելեց Իսրայել և ելույթ ունեցավ Քնեսետում, որի ընթացքում բարձրացրեց նաև Պաղեստինի արաբների ինքնորոշման հարցը: Մինչև Երուսաղեմ կատարած այցելությունը՝ Սադաթը այցելեց նաև Դամասկոս ու փորձեց ստանալ Ասադի համաձայնությունը: Վերջինս այդպես էլ իր աջակցությունը

չհայտնեց այդ գաղափարին: Երուսաղեմ կատարած այցելությունը դատապարտվեց արաբական երկրների մեծամասնության կողմից, հատկապես՝ Սիրիայի, Իրաքի, Լիբիայի, Ալժիրի, Հարավային Եմենի, ինչպես նաև՝ ՊԱԿ-ի:

Արաբական երկրները, սակայն, միանման դիրքորոշում չորդեգրեցին Սադաթի՝ Երուսաղեմ կատարած այցի վերաբերյալ: Եթե Ալժիրը և Լիբիան Սիրիային տրամադրեցին երկարաժամկետ ֆինանսական օժանդակություն Իսրայելի դեմ պայքարելու համար, ապա Հորդանանի արքա Հուսեյնը նոյեմբերի 22-ին՝ Դամասկոս կատարած այցի ժամանակ, արդարացրեց Սադաթին: Ըստ Ասադի՝ Հորդանանի նման դիրքորոշումը պայմանավորված էր ԱՄՆ ճնշմամբ: ¹ Տեղեկություններ կան այն մասին, որ Իսրայելի արտաքին գործերի նախարար Մոշե Դայանը 1977թ-ի կեսերին փորձել է համոզել Հորդանանի արքա Հուսեյնին (Լոնդոնում տեղի ունեցած գաղտնի հանդիպման ժամանակ)՝ միանալ եգիպտա-իսրայելական խաղաղության պայմանագրին, սակայն Հուսեյնը կտրականապես մերժել է: ²

Օմանը, Մուդանը և Մարոկկոն դրական արձագանքեցին Սադաթի նախաձեռնությանը: Մյուս կողմից՝ Սաուդյան Արաբիան, Լիբանանը, Եմե-

¹ Դուբեն Կարապետյան, Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում /1946-2000թթ/, Կահիրե, 2008թ, 352 էջ, էջ 184:

² Евгений Примаков, Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами, Москва, 2006г. 415стр, стр. 178.

նի Արաբական Հանրապետությունը և Ծոցի արաբական միապետությունները չեզոք դիրք գրավեցին: ¹

Սադաթի արտաքին քաղաքականության նոր ուղղությունը կապված էր ներպետական խնդիրների հետ: Երկրում գերիշխում էր աղքատությունը, որի պայմաններում ազդեցիկ ուժ էին դարձել իսլամիստական շարժումները: Հնչում էին վարչակազմի տապալման կոչեր: 1978թ. սեպտեմբերին ԱՄՆ նախագահ Զիմմի Քարթերը հրավիրեց Սադաթին և Իսրայելի վարչապետ Մենաչեմ Բեգինին Մերիլենդում գտնվող նախագահի առանձնավայր՝ Քեմփ Դեյվիդ: Կազմվեցին երկու համաձայնագրեր, որոնցից մեկը հիմք հանդիսացավ Եգիպտոսի և Իսրայելի միջև խաղաղության հաստատման համար: ² 1979թ-ի մարտի 26-ին ստորագրվեցին քեմփդեյվիդյան համաձայնագրերը: ³ Խաղաղության բանակցություններում Եգիպտոսը Պաղեստինի հարցին անդրադարձավ զուտ մակերեսորեն (Արևմտյան ափի և Հորդանանի միջև գոյություն ունեցող սահմանի վերաբերյալ), նրա համար առաջնային էր Սինայի խնդիրը: ⁴

Արտաքին քաղաքականության նոր ուղղություն մշակելով՝ Սադաթը հետ վերադարձրեց Սինայն ու տնտեսապես ամրապնդեց երկիրը: Հաստատվեցին առևտրային կապեր Իսրայելի ու ԱՄՆ հետ, իսկ Միջազգային Արժույթային Հիմնադրամը սկսեց վարկեր տրամադրել կառավարությանը: ⁵

Քեմփդեյվիդյան համաձայնագրերից հետո արաբական աշխարհում հստակ արտահայտվեց միասնության խնդիրը: Քանի դեռ Սիրիան և ՊԱԿ-ը խիստ միջոցներ էին ձեռնարկում Եգիպտոսի դեմ, Սաուդյան Արաբիան և Ծոցի արաբական միապետությունները շարունակում էին ֆինանսական օգնություն ցուցաբերել վերջինիս: ⁶

Հորդանանի նախկին վարչապետ Զեյդ Ռիֆան 1981թ-ի մարտի 30-ին Ե. Պրիմակովի հետ առանձնազրույցում փորձեց բնորոշել քեմփդեյվիդյան համաձայնագրերից հետո ստեղծված իրավիճակը: Նա հայտարարեց.՝ «Իր տարածքային խնդիրները լուծելուց հետո Սադաթը կհայտարարի արաբներին, որ արդեն պատրաստ է անդրադառնալ այլ հարցերի՝ Գազայի հատվածին կամ Գոլանի բարձունքներին: Եվ արաբները, որոնք շուտ են ամեն ինչ մոռանում, կիրաժարվեն Եգիպտոսի մեկուսացման քաղաքականությունից»: ⁷

Քեմփ-Դեյվիդից հետո Իսրայելի հետ խաղաղության հաստատման հաջորդ լուրջ քայլը ձեռնարկեց Լիբանանը, սակայն, ի տարբերություն եգիպտա-իսրայելական պայմանագրի կնքման, Լիբանանի դեպքում հանգամանքներն այլ էին: Երկրում ընթանում էր քաղաքացիական պատերազմ: Պատերազմին միջամտել էին արտաքին ուժեր՝ այդ թվում Սիրիան ու Իսրայելը: 1983թ-ի մայիսի 17-ին Իսրայելի ու Լիբանանի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով Լիբանանը համաձայնեց վերջ դնել Իսրայելի հետ դեռևս 1948թ-ից գործող պատերազմական իրավիճակին: Դրա դիմաց Լիբանանից պետք է դուրս բերվեին իսրայելական զորքերը: Համաձայնեցվեց Բեյրութում իսրայելական

1 Taylor A.R., The Arab Balance of Power, Syracuse University Press., 1982, p. 124

2 Joel Beinin and Lisa Hajjar, Palestine, Israel and the Arab-Israeli conflict, Middle East research and information project, North Carolina, 2014

3 Eli E. Hertz, Arab-Israeli peace agreements, <http://www.mythsandfacts.org/media/user/PLO-Agreement.pdf>

4 Евгений Примаквов, նշվ. աշխ. սր. 180

5 Steve Smith, Amelia Hadfield, Tim Dunne. Foreign policy: Theories, Actors, Cases. Oxford, 2012, 543pages, էջ 411

6 Валькова Л.В., Саудовская Аравия: Нефть, Ислам, Политика, Москва, 1987г, 252стр, ст. 212

7 Евгений Примаквов, նշվ. աշխ. սր. 184

ներկայացուցչության բացման հարցը: Այնուամենայնիվ, դիվանագիտական հարաբերություններ չհաստատվեցին կողմերի միջև: Լիբանանը նաև պարտավորվեց թույլ չտալ Իսրայելի վրա հարձակումներ իրականացնել իր տարածքից: Փաստացի հաստատվեց խաղաղություն Լիբանանի ու Իսրայելի միջև: Միայն արհեստականորեն չկնքվեց խաղաղության պայմանագիր:

Սիրիան խիստ բացասաբար ընդունեց համաձայնագիրը և հրաժարվեց Իսրայելի հետ զուգահեռաբար դուրս բերել զորքերը Լիբանանից¹: Համաձայնագիրը հակասություններ առաջացրեց ողջ արաբական աշխարհում: Եգիպտոսը դրական գնահատեց այն, իսկ Սիրիան՝ ծայրահեղ բացասական: Սաուդյան Արաբիան պահպանեց չեզոքությունը այն ժամանակ, երբ արաբական երկրները բոյկոտեցին համաձայնագիրը²:

1983թ-ի հունիսի 2-ին Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը ԽՍՀՄ ներկայացուցիչ Պրիմակովի հետ հանդիպման ժամանակ խիստ քննադատեց լիբանանա-իսրայելական համաձայնագիրն ու հայտարարեց, որ այդպիսով իսրայելական զորքերը՝ տեղակայվեցին Դամասկոսից 24կմ, իսկ սիրիական զորքերը Թել Ավիվից 250կմ հեռավորության վրա: Ըստ նրա՝ այդ համաձայնագիրը բացահայտորեն ուղղված էր Սիրիայի դեմ³:

1983թ-ի հոկտեմբերի 31-ին Ժնևում հրավիրվեց «Հաշտեցման կոնֆերանս», որին մասնակցեցին Լիբանանի նախագահ Ամին ժմայելը, նախկին նախագահ Քամիլ Շամունը ու Սուլեյման Ֆրանժիեն: Այդ հանդիպման ժամանակ քննադատվեց համաձայնագիրն ու հայտարարվեց, որ խաղաղություն հնարավոր է միայն դրա չե-

ղարկման դեպքում:

1984թ-ի մարտին լիբանանա-իսրայելական համաձայնագիրը, ի վերջո, չեղյալ հայտարարվեց: Դա կատարվեց հիմնականում Դամասկոսի ճնշման տակ⁴:

Շետագայում ևս եղան Իսրայելի հետ խաղաղության հաստատման փորձեր: 1992թ-ի վերջին Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը հայտարարեց, որ Սիրիան մտահոգված է Երուսաղեմի, Արևմտյան ափի ու Հարավային Լիբանանի ճակատագրով: Հակառակ դեպքում արդեն ստորագրված կլինեին Սիրիա-իսրայելական համաձայնագիրը: Իրականում Սիրիան ուղղակի հետևում էր զուգահեռաբար ընթացող իսրայելա-պաղեստինյան բանակցություններին: Ասադին ձեռնտու չէր պաղեստինա-իսրայելական կամ հորդանանա-իսրայելական համաձայնագիրը՝ նախքան սիրիա-իսրայելական համաձայնագրի կնքումը⁵:

1995թ-ի դեկտեմբերին ԱՄՆ-ում տեղի ունեցան սիրիա-իսրայելական բանակցություններ: Համաձայնեցվեցին հարաբերությունների կարգավորման 11 կետեր, սակայն 1996թ-ի սկզբին Համասը Երուսաղեմում ահաբեկչական գործողություններ իրականացրեց: Դրա հետևանքով Իսրայելի պատվիրակությունը ընդհատեց բանակցությունները և վերադարձավ Թել-Ավիվ⁶: Սիրիան ու Իսրայելը իրենց գոյության ընթացքում այլևս երբեք այդքան մոտ չեղան խաղաղության հաստատմանը:

Հորդանանը 1994թ-ի հոկտեմբերի 26-ին դարձավ երկրորդ արաբական երկիրը, որը խաղաղության պայմանագիր կնքեց Իսրայելի հետ⁷, սակայն նմանատիպ քայլը լուրջ հետք չթողեց

1 Ռուբեն Կարապետյան, նշվ. աշխ. էջ 215:

2 Валькова Л.В., նշվ. աշխ. ս.9

3 Евгений Примаков. նշվ. աշխ. էջ 213

4 Նույն տեղում, էջ 213:

5 Ռուբեն Կարապետյան, նշվ. աշխ. էջ 252:

6 Ռուբեն Կարապետյան, նշվ. աշխ. էջ 264:

7 <http://www.nytimes.com/learning/general/onthisday/big/1026.html>

արաբական աշխարհի հետ Հորդանանի ունեցած հարաբերությունների վրա (ինչպես դա եղավ Եգիպտոսի դեպքում): Հորդանանը չհեռացվեց Արաբական Լիգայից և նույնիսկ համաարաբական պատժամիջոցների (էմբարգո) չարժանացավ, ինչպես դա եղավ Եգիպտոսի դեպքում: Նամանատի պերաբերումները պայմանավորված էր 1993թ-ին կնքված Օսլոյի հռչակագրով: Պաղեստինա-իսրայելական համաձայնության շրջանակներում Հորդանանի և Իսրայելի միջև խաղաղության պայմանագիրը դիտվեց իբրև ավելի ընդարձակ տարածաշրջանային գործընթաց, քանի որ առաջին քայլն արված էր հենց Պաղեստինի կողմից¹: Իսրայելի հետ խաղաղություն հաստատելով Հորդանանը հույս ուներ վերականգնել իր տնտեսությունը, որը ծանր վիճակում էր հայտնվել Իրաքի նկատմամբ կիրառվող միջազգային պատժամիջոցների արդյունքում: Մեծացավ նաև ԱՄՆ-ի կողմից Հորդանանին տրամադրվող վարկերի չափը²:

Հորդանանի արքա Հուսեյնը դեռևս վաղուց էր պատրաստ խաղաղություն հաստատել Իսրայելի հետ, սակայն Հորդանանի թույլ դիրքերը արաբական աշխարհում և երկրի ներպետական դեմոգրաֆիկ խնդիրները³ ետ էին

պահում նրան այդ քայլին դիմելուց:

Չնայած Իսրայելի հետ կնքված խաղաղության պայմանագրին՝ հետագայում Հորդանանն իր աջակցությունը հայտնեց իսրայելական օկուպացման դեմ պաղեստինյան երկրորդ ինթիֆադային և դեմ արտահայտվեց ԱՄՆ ներխուժմանը Իրաք:

Հորդանանա-իսրայելական խաղաղության պայմանագրից հետո՝ 1994 և 1996 թվականներին, Մարոկկոն և Թունիսը «համընդհանուր շախի ոլորտների» մասին պայմանագրեր կնքեցին Իսրայելի հետ: 1994թ-ին Իսրայելական պատվիրակություն ժամանեց Բահրեյն: 1996 և 1998 թվականներին Օմանը և Կատարը փորձեցին առևտրային հարաբերություններ հաստատել Իսրայելի հետ, սակայն որևէ լուրջ առաջընթաց այդպես էլ չգրանցվեց Իսրայելի հետ բանակցություններում: Միայն եգիպտա-իսրայելական ու հորդանանա-իսրայելական պայմանագրերը գոյությունը պահպանեցին երկրորդ ինթիֆադայից հետ⁴:

Ի վերջո պատմությունը ցույց տվեց, որ Իսրայելի հետ հարաբերություններում արաբական երկրների պետական շահերն ավելի բարձր դասվեցին համաարաբական շահերից: Ի հակառակ Իսրայելի դեմ ուղղված ծայրահեղական հռետորաբանության՝ արաբական երկրները պատրաստ էին վերջինիս հետ փոխշահավետ խաղաղություն հաստատել: Առաջին և դժվարագույն քայլն արդեն արված էր Քեմփ-Դևիդում 1979թ-ին:

1 Curtis R. Ryan, "Jordan First": Jordan's inter-Arab relations and foreign policy under King Abdullah 2nd, Institute of Arab studies, 2004, էջ 52/ Andrew W. Terrill. "Saddam's closest ally: Jordan and the Gulf War" Journal of South Asian and Middle Eastern studies 9(2) 1985: էջ 51

2 Eli E. Hertz, Arab-Israeli peace agreements, <http://www.mythsandfacts.org/media/user/PLO-Agreement.pdf>

3 Տարբեր ժամանակահատվածներում երկրի բնակչության 60-80% կազմում էին պաղեստինցիները: Նրանք դեմ էին արտահայտվում Իսրայելի հետ ցանկացած խաղաղության գործընթացին: 1951թ-ին Հորդանանի արքա Աբդուլլահի դեմ նույնիսկ մահափորձ է կատարվում պաղեստինցի ծայրահեղականի կողմից: Տարբեր ժամանակահատվածներում Հորդանանի երկու վարչապետեր սպանվել են Իսրայելի հետ խաղաղության հաստատմանն աջակցելու պատճառով: Eli E. Hertz, Arab-Israeli peace agreements, <http://www.mythsandfacts.org/media/user/PLO-Agreement.pdf>

4 Curtis R. Ryan, նշվ. աշխ. էջ 88

НАСЛЕДСТВО КЭМП–ДЕВИДА (1979г.): ИНДИВИДУАЛЬНЫЕ ПОПЫТКИ
АРАБСКИХ СТРАН ПО ДОСТИЖЕНИЮ МИРА С ИЗРАИЛЕМ

АНДРАНИК АРАКЕЛЯН

НАН РА, Институт востоковедения, аспирант

Египет первым нарушил провозглашенный в 1967 г. в Хартумской декларации принцип «трех нет». Неоднократные попытки политического диалога между Израилем и Сирией, предпринимавшиеся с января 1982 г. по март 2000 г., закончились провалом. Мирное соглашение между Иорданией и Израилем было подписано 26 октября 1994 г. уже после заключения Декларации принципов мирного урегулирования между Израилем и ООП (октябрь 1993 г.).

CAMP–DAVID'S (1979) LEGACY: ARAB COUNTRIES' INDIVIDUAL
PEACE EFFORTS WITH ISRAEL

ANDRANIK ARAKELYAN

National Academy of Sciences of the RA. Institute of Oriental Studies, Postgraduate

There were several peace plans following the 1967 war, but nothing happened until the historic visit to Jerusalem by the Egyptian President, Anwar Sadat, in November 1977. This was the beginning of the first recognition of Israel as a state by a major Arab country. Other efforts were made after by Syria, Lebanon and Jordan. The Israel–Jordan peace treaty was signed in 1994. Jordan was the second Arab country, after Egypt, to sign a peace accord with Israel.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՆԱՏՕ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵ- ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հողվածում ներկայացվում և վերլուծվում է Հայաստանի Հանրապետության և ՆԱՏՕ-ի համագործակցությունը՝ մասնավորապես անդամակցությունը «Անհատական գործընկերության գործողությունների» և «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրերին:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. արտաքին ռազմական քաղաքականություն, Աֆղանստանում անվտանգության աջակցության միջազգային ուժեր, Ադետների արձագանքման եվրատլանտյան համադատող կենտրոն, խաղաղաշինություն, «Անհատական գործընկերության գործողությունների» և «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրեր, Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտի ղեկավարությունը, առաջնորդվելով երկրի արտաքին եվրահնտեզրման սկզբունքով, ձգտում է հնարավորինս ակտիվ և արդյունավետ հարաբերություններ զարգացնել Հյուսիսատլանտյան դաշինքի հետ՝ արդյունավետ համագործակցություն ծավալելով ԵԱԳԽ և ԳՀԽ ծրագրերի շրջանակներում և առավելագույնս օգտվելով անվտանգության ապահովման համար դրանց ընձեռած հնարավորություններից, իսկ ռազմական համագործակցության բնագավառում ձգտում է զարգացնել առավել արդյունավետ ուղղությունները թե՛ ծրագրերի շրջանակներում, թե՛ ՆԱՏՕ-ի անդամ պետու-

թյունների հետ երկողմանի հիմքի վրա:¹

ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները կարելի է բաժանել երեք ժամանակաշրջանի՝ անկախացումից մինչև 1997 թվականը՝ հարաբերությունների կայացման ժամանակահատված, 1998–2002 թվականները՝ համագործակցության ընդլայնման և համակարգման ժամանակահատված, 2002 թվականից սկսած՝ հարաբերությունների վերելքի ժամանակահատված: ՀՀ-ՆԱՏՕ համագործակցության զարգացման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական փուլի՝ պասիվ և ակտիվ: Առաջին փուլը ընդգրկում է 1990-ական թվականները, երբ կողմերը զբաղված էին տարբեր մակարդակներով և ոլորտներում հարաբերությունների հաստատման խնդիրներով: Այս փուլում կողմերի միջև սկզբնավորվում են հարաբերություններ: Հայաստանի Հանրապետությունը 1992 թվականից անդամակցում է Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին (ՀԱԽՀ), 1997 թվականից դրա ժառանգորդ Եվրատլանտյան գործընկերության խորհրդին (ԵԱԳԽ), որոնք Դաշինքի հետ ուղիղ քաղաքական երկխոսության մեջ մտնելու հնարավորություն են տալիս, բացի այդ՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շնորհիվ կողմերը գործնական կապեր են հաստատում տարբեր ոլորտներում՝ այդ թվում ռազմական համագործակցության՝ ընդունելով և

1 Տե՛ս ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ» հատոր# 3 Երևան 2014 էջ 345:

իրականացնելով անհատական գործընկերության մի քանի ծրագրեր: Երկրորդ փուլը ներառում է 2000 թվականից մինչ օրս, երբ հարաբերությունները ընդլայնվում և զարգանում են: ¹

Հայաստանի Հանրապետությունը իր արտաքին ռազմական քաղաքականության մեջ մտադիր է պահպանել ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների ներկայիս զարգացումները և խորացնել համագործակցությունը՝ ուշադրություն սևեռելով «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» (ԱԳԳԾ), «Պլանավորման և վերանայման գործընթացի» (ՊՎԳ), «Պաշտպանության հաստատությունների կառուցման համար Գործընկերության գործողությունների ծրագրի» (ՊՀԿ-ԳԳԾ), «Ահաբեկչության դեմ պայքարի հարցերով Գործընկերության գործողությունների ծրագրի» (ԳԳԾ) վրա: Վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը շոշափելիորեն ընդլայնել է իր մասնակցությունը ԳՀԽ-ի ծրագրում: Համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ դարձել է Հայաստանի Հանրապետությանը արտաքին ռազմական քաղաքականության ամենադինամիկ զարգացող ուղղություններից մեկը: Որդեգրելով իրատեսական քաղաքականություն՝ Հայաստանի մասնակցությունը ԳՀԽ ծրագրում միայն առաջընթաց է ապրում: ²

1990 ական թվականներին Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև հաստատված հարաբերությունները, չնայած զանազան նախաձեռնություններին և հայտարարություններին, այդպես էլ էական բովանդակություն չստացան: Հայաստան-ՆԱՏՕ հարաբերություններում աշխուժացում նկատվեց 2002 թվականից:

³2002թվականի փետրվարին Երևանում կայացավ ԳՀԽ շրջանակում Հայաստանում անցկացվող առաջին խոշոր միջոցառումը՝ «Լավագույն համատեղ ջանք» շարքի գորավարժությունների պլանավորման գլխավոր խորհրդաժողովը: Խորհրդաժողովի ընթացքում հայտարարվեց, որ 2003 թվականին գորավարժությունները տեղի են ունենալու Հայաստանի տարածքում, ինչը որոշ մեկնաբանների կողմից որակավորվեց որպես «փոքրիկ սենսացիա»։ մինչ այդ Հայաստանում անց էին կացվել միայն հայ-ռուսական գորավարժություններ: ⁴ «Լավագույն համատեղ ջանք-2003» գորավարժությունները Հյուսիսատլանտյան դաշինքի պատմության մեջ առաջինն էին, որ անցկացվում էին Հայաստանի տարածքում: Ռուսաստանը առաջին անգամ էր մասնակցում նմանատիպ գորավարժությունների: Զորավարժություններին մասնակցելու նպատակով Հայաստան էին ժամանել նաև թուրք զինվորականներ: ⁵ 2006 թվականին Երևանում կայացան արտակարգ իրավիճակների և աղետների պայմաններում գործողություններին նվիրված «Փրկարար-2006 թվականի վարժանքների» պլանավորանք նվիրված հիմնական և եզրափակիչ համաժողովները: 2007 թվականի գարնանը Երևանում անցկացվեց ԱՄՆ-ի եվրոպական հրամանատարության կողմից կազմակերպված «Համատեղ ջանք-2007» երկշաբաթյա հրամանաշտաբային գորավարժությունները: 2007թվականի գարնանը Հայաստանում անցկացվեց նաև միջուկային և ռադիոակտիվ սպառնալիքների կանխմանը, բացահայտմանը և դիմակայմանը:

1 Տե՛ս Քոչարյան Տիգրան Տոնիկի «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան, 2012, էջ 259:

2 Տե՛ս Քոչարյան Տիգրան Տոնիկի «Ազգային անվտանգության հիմունքների վերաբերյալ դասընթաց», Երևան, 2013, էջ 190:

3 Տե՛ս Քոչարյան Տիգրան Տոնիկի «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան, 2012, էջ 268:

4 Տե՛ս Արա Թաղևոսյան «Հայաստան-ՆԱՏՕ, առաջընթացի տաս տարիներ, 1999-2008», Երևան 2008, էջ 15:

5 Տե՛ս Cooperative Best Effort 2003, NATO update, JUNE 2003 (<http://www.nato.int/docu/update/2003>)

նը նվիրված համաժողով: Արդեն 2008 թվականի աշնանը Հայաստանը ԳՀԽ-ի շրջանակներում հյուրընկալեց Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի կողմից երբևէ անցկացված խոշորագույն գորավարժությունները «Համատեղ աղեղ/Համատեղ նիզակակի 2008»:

2003 թվականին Հայաստանը եվրատլանտյան ինտեգրման գործընթացում կատարեց ևս մեկ կարևոր քայլ և միացավ ԳՀԽ պլանավորման և վերանայման գործընթացին, ինչին Վրաստանը և Ադրբեջանը ավելի վաղ էին միացել: Գործընկերները իրենց հայեցողությամբ էին միանում ՊՎԳ-ին, որը հիմնվում է ՆԱՏՕ-ի՝ պաշտպանության ոլորտում պլանավորում անցկացնելու պատկառելի փորձի վրա և ներառում է ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ տարրեր: Պլանավորման յուրաքանչյուր երկարամյա փուլի շրջանակներում գործընթացին մասնակցելու ցանկություն արտահայտած գործընկերները պարտավորվում են պարբերաբար տեղեկություն տրամադրել ՆԱՏՕ-ին իրենց պաշտպանական քաղաքականության, Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության հետ կապված զարգացումների, ԳՀԽ-ի շրջանակներում իրականացվող համագործակցության շուրջ պետական քաղաքականության, համապատասխան ֆինանսատնտեսական ծրագրերի վերաբերյալ: Ցուրաքանչյուր գործընկերոջ պատասխանի հիման վրա մշակվում է Պլանավորման և վերանայման գնահատման փաստաթուղթ: Ինչպես նաև, նախապատրաստվում են «Գործընկերության նպատակները», որոնցում շարադրվում են բոլոր այն միջոցառումները, որոնք գործընկերները պետք է իրականացնեն՝ սեփական Զինված ուժերը Դաշինքի Զինված ուժերի հետ փոխգործունակ դարձնելու նպատակով: Երկկողմ և բազմակողմ քննարկումներից հետո ՊՎԳ փաստաթուղթը և փոխգործունակության նպատակների փաստաթուղթը միասնաբար հաստատ-

վում են Դաշինքի և համապատասխան գործընկեր պետությունների կողմից: ¹

2005 թվականին Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը Հյուսիսատլանտյան խորհրդին ներկայացրեց առաջին ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործողությունների ծրագիրը (ԱԳԳԾ): 2009 թվականին Հյուսիսատլանտյան խորհրդի նիստում քննարկվեց ՀՀ-ՆԱՏՕ նորոգված ԱԳԳԾ-ն: Փաստաթուղթը սահմանում է առաջնահերթությունները, ներդաշնակեցնում և կազմակերպում Հյուսիսատլանտյան դաշինք-գործընկեր պետություն հարաբերությունների բոլոր կողմերը: Այն գործընկեր պետությանը հնարավորություն է ընձեռնում զարգացնելու ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը այն խնդիրների շուրջ, որոնք մեծ կարևորություն են ներկայացնում գործընկերոջ համար: ² ԱԳԳԾ-երը ընդունվում են երկու տարի ժամկետով և թույլ են տալիս ՆԱՏՕ-ին առավել անհատական մոտեցում ցուցաբերել ԳՀԽ ծրագրում ընդգրկված գործընկերներին, որոնց հիմնական մոտեցումներից մեկը տարիներ շարունակ եղել է այն, որ ԳՀԽ-ն չափազանց նեղ մասնագիտացում ունի և բավարար ռեսուրսներ չի հատկացնում գործընկեր պետությունների համար առաջնայություն ունեցող բարեփոխումների իրականացման գործում:

Հայաստանի ԱԳԳԾ-ն շոշափում է ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների օրակարգում առկա հարցերի լայն շրջանակը և նախանշում է այն բնագավառները, որոնցում բարեփոխումներ իրականացնելու համար Հայաստանը ցանկանում է ստանալ Դաշինքի աջակցությունը: Ըստ ծրագրի՝ Հայաստանը պարտավորվում է բարեփոխումներ իրականացնել չորս հիմնական ուղղություններով՝ քաղա-

1 Տե՛ս NATO Handbook:

2 Տե՛ս “Ministerial Meeting of the North Atlantic Council, Held in Madrid on June 3, 2003: Final Communiqué” NATO Press Release, June 3.

քական և անվտանգությանն առնչվող հարցեր, պաշտպանական և ռազմական խնդիրներ, հասարակության իրազեկման, գիտության, բնապահպանության և քաղաքացիական ճգնաժամների պլանավորմանն առնչվող հարցեր, վարչական բնույթի և ռեսուրսներին առնչվող հարցեր: Ծրագրում շեշտը դրվում է պաշտպանական ոլորտի բարեփոխումների վրա, որոնք վերաբերում են ՀՀ Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողությանը, ազգային անվտանգության քաղաքականությանն առնչվող փաստաթղթերի մշակմանը, ռազմական փոխգործունակությանը, անձնակազմի ուսուցմանը և կառավարմանը, հրամանատարությանը, վերահսկողությանը և թիկունքային ապահովման երկարաժամկետ ծրագրերի մշակմանը, ազգային ռազմարդյունաբերական համալիրի բարելավմանը և սահմանային անվտանգությանը¹: ՆԱՏՕ-ի հետ ԱԳԳԾ-ն, ինչպես նաև Եվրամիության հետ Եվրոպական հարևանության քաղաքականության, գործողությունների ծրագրի իրականացման նպատակով 2008 թվականի սեպտեմբերին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի նախագահությամբ: Հանձնաժողովի խնդիրն է ապահովել Եվրոպական կառույցների հետ Հայաստանի համագործակցությունը, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի ԱԳԳԾ շրջանակներում նախատեսված ընթացիկ աշխատանքների իրականացումը՝ քննարկումների կազմակերպման և դրանց արդյունքների հիման վրա համապատասխան պետական մարմինների աշխատանքների արդյունավետ կատարմանը նպաստելու

միջոցով:²

Դաշինքի հետ համագործակցության կարևոր ոլորտ է նաև փոխգործունակ կարողությունների կատարելագործումը հիմնականում խաղաղապահ բրիգադի զարգացման և ՆԱՏՕ-ի ղեկավարած գործողություններին ՀՀ Զինված ուժերի գորախմբերի մասնակցության շրջանակներում: Գործողություններին մասնակցության ժամանակ ռազմավարական փոխադրումների և նյութատեխնիկական ապահովման հարցերում մեծ օժանդակություն է ստացվում Գերմանիայից և Հունաստանից: Սահմանված գրաֆիկով ընթանում է խաղաղապահ բրիգադի համալրման, անհրաժեշտ կարողությունների ձեռքբերման գործընթացը, որը գտնվում է Պաշտպանության նախարարության և Զինված ուժերի ղեկավարության սևեռուն ուշադրության ներքո՝ մատնանշված լինելով նաև որպես Զինված ուժերի միջնաժամկետ զարգացման պլանի առաջնահերթություններից մեկը: Ներկայումս հանգուցային է համարվում բրիգադի նոր ապահովման կարողությունների զարգացումը՝ 2015 թվականից հետո գործողություններում տեղակայված ստորաբաժանումներում ինքնաբավ ներուժ ունենալու նպատակով և այս հարցում էական նշանակություն ունի Դաշինքի երկրների կողմից երկկողմ օժանդակությունը: ՀՀ-ՆԱՏՕ ռազմական համագործակցությունը ապագայի և ուժերի փոխգործունակության բարելավման ուղղությամբ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ երկու կողմերն էլ արձանագրում են, որ այդ փոխգործակցության համար կենսական նշանակություն ունի ՀՀ Զինված ուժերի խաղաղապահ գործողությունները՝ արդյունքում արժանանալով նաև խաղաղապահ առաքելության հրամանատարության բարձր

1 Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ՆԱՏՕ-ի հետ անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում» փաստաթուղթ (<http://www.armeniaforeignministry.com/fr/nato/paa-armenia.doc>):

2 Տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահի կարգադրությունը միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին, ՆԿ-149-Ս/08.09.2008թ(<http://www.president.am>):

գնահատականին:

Հաշվի առնելով երկրի աշխարհագրական դիրքի, հատկապես՝ դեպի ծով ելքի բացակայությունը, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից պարտադրված շրջափակումը և Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորվման ձգձգումը՝ Հայաստանը չէր կարող լծվել բացառապես եվրատլանտյան ինտեգրման գործին: Այդ իսկ պատճառով Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերությունները եվրաինտեգրման հետ մեկտեղ շարունակում են բարձր տեղ զբաղեցնել Հայաստանի արտաքին ռազմական քաղաքականության օրակարգում: Եվրատլանտյան համայնքի մաս կազմող մյուս պետությունների դավանած նորմերի խումբը մեծ գրավչություն է ներկայացնում Հայաստանի համար, քանի որ այն կարող է որոշ չափով հաստատել գաղափարական հավասարակշռություն և բերել շոշափելի օգուտներ արևմտյան օգուտների տեսքով: Անցած տարիների ընթացքում երկրում տեղի ունեցած ինստիտուցիոնալ և իրավական փոփոխությունների համար ուղեցույց են եղել եվրատլանտյան հանրության մաս կազմող կազմակերպությունների, մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի սահմանած պայմանները: Թերևս Հայաստանի և եվրատլանտյան կազմակերպությունների միջև կապերի ամրապնդմանը նպաստում է նաև Հայաստանի և Եվրոպայի մշակութային ժառանգությունների որոշակի միատարրությունը:

Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի և ՀԱՊԿ-ի հետ մնում են ՀՀ անվտանգության հիմքը, իսկ ՆԱՏՕ-ի և դրա անդամ պետություններից մի քանիսի, հատկապես՝ ԱՄՆ-ի, Հունաստանի և Ֆրանսիայի հետ հարաբերությունները ամրացնում են այդ հիմքը: Հայաստանը ոչ միայն ամրացնում է ՆԱՏՕ-ի հետ քաղաքական կապերը, այլև ՆԱՏՕ-ի օգնությամբ ջանում է շարունակել աշխատանքները ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումնե-

րի ուղղությամբ՝ նպատակ ունենալով ստեղծելու այնպիսի քաղաքացիական վերահսկման և պաշտպանական ծրագրավորման և կառավարման համակարգ, որը հիմնված է ժողովրդավարական սկզբունքների վրա, համապատասխանում է ժամանակակից աշխարհի պահանջներին և ի գործ է արդյունավետ ապահովելու Հայաստանի ռազմական անվտանգությունն ու պաշտպանելու ազգային հիմնարար արժեքները թվարկված ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինում: ¹

Հայաստանի անդամակցությունը ԳԽՀ-ին հայկական Ձինված ուժերի ներկայացուցիչներին հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու Արևմտյան պետությունների Ձինված ուժերի մարտավարությունը, ուսուցման մեթոդները և ընթացակարգերը, որոնք նորմերի տարածման հիշյալ գործընթացի մասն են կազմում: Հայաստանը 2004թ. խաղաղապահ գումարտակ ուղարկեց Կոսովո, որը ծառայում էր ամերիկացիների ղեկավարած բազմազգ ուժերի (KFOR) շրջանակներում՝ Հունաստանի Ձինված ուժերի գումարտակի կազմում՝ 2004թ.: Հայաստանը որոշեց ակտիվացնել իր մասնակցությունը միջազգային խաղաղապահ ասպարեզում և բժիշկներից, սակրավորներից, վարորդներից բաղկացած խումբ ուղարկեց Իրաք: 2008թ. KFOR-ում ծառայող հայկական զորախմբի թվաքանակը կրկնապատկվեց, 2010թ-ին հայ խաղաղապահները միացան Աֆղանստանում ՆԱՏՕ-ի Միջազգային անվտանգության օժանդակության ուժերին (ISAF)՝ գերմանական հրամանատարության ներքո:

Դաշինքի հետ համագործակցության մյուս կարևոր ոլորտը փոխգործունակ կարողությունների կատարելագործումն

1 Տես Քոչարյան Տիգրան Տոնիկի «Ազգային անվտանգության հիմունքների վերաբերյալ դասընթաց», Երևան, 2013, էջ 2013:

էր՝ հիմնական խաղաղապահ բրիգադի զարգացման և ՆԱՏՕ-ի ղեկավարած գործողություններին ՀՀ Զինված ուժերի զորախմբերի մասնակցության շրջանակներում: Գործողություններին մասնակցության ժամանակ ռազմավարական փոխադրումների և նյութատեխնիկական ապահովման հարցերում մեծ օժանդակություն է ստացվում Գերմանիայից և Հունաստանից: ¹

Զարգանում է նաև ռազմական կրթության և ուսման բնագավառները, որոնցում զգալի դեր է կատարում ԱՄՆ-ի, Իտալիայի և մյուս երկրների հետ համագործակցությունը: ԱՄՆ-ի և Մեծ Բիրտանիայի փորձագետների օգնությամբ աշխատանքներ են տարվում պրոֆեսիոնալ սերժանտական կազմի զարգացման ռազմավարության մշակման ուղղությամբ՝ այդ գործընթացը դիտարկելով որպես սպաների գիտելիքների և սերժանտների փորձի համադրման շնորհիվ ստորաբաժանումների օպերատիվ արդյունավետության և Զինված ուժերում կարգապահության բարձրացման միջոց:

Ե՛վ Երևանը, և՛ Բրյուսելը պաշտոնական հարաբերությունների մակարդակով գոհ են երկկողմ համագործակցությունից: 2008 թ. նոյեմբերին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ՆԱՏՕ-ի կենտրոնակայան կատարած այցի ընթացքում նախագահը և ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը բարձր են գնահատել ՀՀ-ՆԱՏՕ փոխգործակցության մակարդակը և գոհունակություն հայտնել ԱԳԳԾ-ի իրականացման ընթացքի կապակցությամբ: ²

ՀՀ-ՆԱՏՕ ռազմական համագործակ-

ցությունը վերջին շրջանում հարուստ է կարևոր իրադարձություններով: 2010թ-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով գտնվում էր ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, նույն տարում ՀՀ-ում՝ Կոտայքի մարզում անցկացվեցին «Աղետների արձագանքման եվրատլանտյան համադասող կենտրոն»-ի քաղաքացիական արագ արձագանքման զորավարությունները: 2011 թ-ին ՀՀ և ՆԱՏՕ-ն կնքեցին 3-րդ ԱԳԳԾ: 2012թ-ի մայիսին ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը Չիկագոյում մասնակցում էր Աֆղանստանում խաղաղապահ առաքելությանը նվիրված ՆԱՏՕ-ի գործընկեր պետությունների բարձրաստիճան ներկայացուցիչների զագաթնաժողովին: 2012 թ-ի սեպտեմբերին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը պաշտոնական այցով ժամանել էր Երևան: 2013թ-ի սեպտեմբերին հանրային դիվանագիտության հարցերով ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի խորհրդական Կոլինդա Գրաբար-Կիտարովիչը Երևանում մասնակցում էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի երդման պաշտոնական արարողությանը: 2014թ-ի մարտին Երևան էր ժամանել ՆԱՏՕ-ի Խորհրդարանական Ասամբլեայի քաղաքական կոմիտեի՝ համագործակցության գլխավոր կոմիտեի պատվիրակությունը: Մայիսին Բրյուսելում կայացած ՀՀ-ՆԱՏՕ հանդիպմանը մասնակցեցին ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը և պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ պատվիրակությունը հանդիպեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հետ:

2014 թ-ի մայիսի 23-ին Հայատանի Հանրապետությունը և ՆԱՏՕ-ն համաձայության եկան 2014-2016 թթ 4-րդ ԱԳԳԾ-ի շուրջ: Նույն տարվա սեպտեմբերի 4-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց միջազգային անվտանգության օժանդակության ուժերի շուրջ հրավիրված ՆԱՏՕ-ի անդամ և

1 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի այցը Բրյուսել՝ մասնակցելու «28+Հայաստան» ձևաչափով ՆԱՏՕ-ի քաղաքական և գործընկերության կոմիտեի նիստին (<http://www.mediamax.am/am-news-104-1425.html>, June 17.2011):

2 Տե՛ս նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը գերմանական «Frankfurter Allgemeine Zeitung» թերթին 2008թ նոյեմբերի 11 (<http://www.president.am/event.Vrjess/arm>):

գործընկեր պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթնաժողովին: Նախագահը հանդես եկավ ելույթով: Նոյեմբերին Հայաստանում կազմակերպվեց 8-րդ «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումները: Դեկտեմբերի 2-ին ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը Բրուսելում մասնակցեց ՆԱՏՕ-ի Արտաքին գործերի նախարարների հանդիպմանը: 2015թ-ի ընթացքում հայկական խաղաղապահ ուժերը շարունակում էին ՆԱՏՕ-ի շրջանակներում գործունեություն ծավալել Աֆղանստանում: 2015 թ-ի հունվարի 14-16-ին պաշտոնական այցով Հայաստան էր ժամանել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի Կովկասյան և Կենտրոնական Ասիայի հարցերով հատուկ ներկայացուցիչը: 2016 թ-ի հուլիսի 8-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը և պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը Վարշավայում մասնակցեցին ՆԱՏՕ-ի գագաթնաժողովին: Այսպիսով՝ ամփոփելով ՀՀ-ՆԱՏՕ հա-

մագործակցության՝ անցած տարիների դինամիկան՝ կարող ենք արձանագրել, որ այդ տարիների ընթացքում Հյուսիսատլանտյան դաշինքը և Հայաստանը կարողացել են օգտվել ստեղծված հնարավորությունից և նոր թափ հաղորդել դարավերջին հաստատված երկխոսությանը՝ նախադրյալներ ստեղծելով կապերի հետագա ամրապնդման համար: Ռուսաստանի Դաշնությունից հետո Հայաստանի Հանրապետությունը ՀԱՊԿ-ի այն անդամ պետություններից է, որը վերջին տարիներին հարաբերությունների բավականին լայն շրջանակ է զարգացրել ՆԱՏՕ-ի հետ: Լինելով Հավաքական անվտանգության մեկ այլ կազմակերպության անդամ՝ Հայաստանը շարունակում է խորացնել կապերը Հյուսիսատլանտյան դաշինքի հետ՝ փորձելով նուրբ հավասարակշռության պահպանման միջոցով իր համար ստեղծել անվտանգության բազմաշերտ համակարգ, որը թույլ կտա սեփական անվտանգության ապահովման համար հենվել ոչ թե մեկ, այլ մի քանի ուժերի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արա Թադևոսյան, «Հայաստան-ՆԱՏՕ, առաջընթացի տաս տարիներ, 1999-2008» Երևան 2008:
2. «Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ՆԱՏՕ-ի հետ անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում» փաստաթուղթ (<http://www.armeniaforeignministry.com/fr/nato/paa-armenia.doc>):
3. Հայաստանի Հանրապետության նախագահի կարգադրությունը միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին, ՆԿ-149-Ա/08.09.2008թ(<http://www.president.am>):
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի այցը Բրյուսել՝ մասնակցելու «28+Հայաստան» ձևաչափով ՆԱՏՕ-ի քաղաքական և գործընկերության կոմիտեի նիստին(<http://www.mediamax.am/am-news-104-1425.html>, June 17.2011):
5. ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», հատոր# 3, Երևան, 2014:
6. Նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը գերմանական «Frankfurter Allgemeine Zeitung» թերթին 2008թ նոյեմբերի 11 (<http://www.president.am/event.Vrjess/arm>):
7. Տիգրան Տոնիկի Քոչարյան, «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան, 2012:
8. Տիգրան Տոնիկի Քոչարյան, «Ազգային անվտանգության հիմունքների վերաբերյալ դասընթաց», Երևան, 2013:
9. Cooperative Best Effort 2003, NATO update, JUNE 2003 (<http://www.nato.int/docu/update/2003>).
10. NATO Handbook.

АРМЕНИЯ–НАТО: КРАТКИЙ АНАЛИЗ ВОЕННЫХ ОТНОШЕНИЙ

АНЖЕЛА МНАЦАКАНЯН

*Младший специалист управления кадров и военного образования МоРА ,
младший служащий 1-ого ранга*

В статье анализируется сотрудничество между Республикой Армения и НАТО, в частности, план индивидуального партнерства и партнерства ради мира.

ARMENIA–NATO: A BRIEF ANALYSIS OF MILITARY RELATIONS

ANZHELA MNATSAKANYAN

*Ministry of Defence of the Republic of Armenia,
First class junior specialist of Personnel Management and Military Education Department*

The article presents and analyses cooperation between the Republic of Armenia and NATO, particularly the membership in the Individual Partnership Action Plan and the Partnership for Peace.

**ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՈՒՐՋ
ՄԱԴՐԻԴՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՎԵՐԱՊԵՐՈՒՄԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐԸ**

Հողվածում ներկայացված վերլուծությունը փաստում է, որ Ղարաքաղյան հակամարտությունը, իր մեջ ամբողջացնելով էթնոպատմական, աշխարհաքաղաքական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային խնդիրներ, այսօր վերածվել է տարածաշրջանային և միջազգային անվտանգության ապահովման կարևորագույն հիմնահարցերից մեկի, որն իր չլուծվածության հանգամանքով կարող է վտանգել տարածաշրջանային խաղաղության ապագան: «Մադրիդյան սկզբունքները» ԼՂ հակամարտության կարգավորման Հիմնարար սկզբունքների պայմանական անվանումն է, որի հիմքում ընկած է խնդրի կարգավորման 3 սկզբունք՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունք, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում և տարածքային ամբողջականություն:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. Ղարաքաղյան հակամարտություն, Մինսկի խումբ, գործընթաց, կողմ, բանակցություն, խաղաղություն, միջնորդական առաքելություն, համաձայնագրահ:

Լեռնային Ղարաքաղի քաղաքական-իրավական կարգավիճակի հետ կապված հարցի կարգավորման գործընթացը կարելի է բաժանել մի քանի փուլերի, որոնց ընթացքում փոփոխվել է բանակցությունների թե՛ ձևաչափը, թե՛ բնույթը, ինչպես նաև՝ քննարկումների բովանդակությունը: Բանակցությունների գործընթացը կարելի է բաժանել չորս շրջանի. առաջինը սկսվեց ԵԱՀԿ Բուդապեշտի գազաթաժողովով և ավարտվեց ԵԱՀԿ Լիսաբոնի գազաթաժողովին, երկրորդ շրջանը ներառեց հետ-լիսաբոնյան տա-

րիները մինչև Հայաստանում 1998թ. իշխանափոխությունը, երրորդ շրջանը ձգվեց մինչև հայր Ալիևի մահը (2003 թ.), չորրորդ շրջանն այն է, որն սկսվեց Ադրբեյջանում վարչակազմի փոփոխությամբ:

ԵԱՀԿ շրջանակներում, Ղարաքաղյան հակամարտության կարգավորման ներկա զարգացումների համատեքստում, կարելի է փաստել, որ ի սկզբանե այդ կառույցի կողմից հակամարտության բանակցային գործընթացի հիմնարար սկզբունքներից են սահմանների անխախտելիությունը և պետությունների տարածքային ամբողջականությունը, որոնցում արտացոլվում են ինչպես Վարշավյան պայմանագրի կազմակերպության անդամ երկրների, այնպես էլ արևմտյան երկրների տրամադրություններն ու ցանկությունները:

1988թ-ից ակտիվության տեսլական ստացած Լեռնային Ղարաքաղի հարցը ակտիվ հակամարտության վերածվեց այն շրջանում, երբ, ի պատասխան խաղաղ ցույցերի, Ադրբեյջանը ուժ կիրառեց, ինչն, ի վերջո, հանգեցրեց ռազմական գործողությունների: Այդ տարիներին նախկին խորհրդային տարածքում տարաբնույթ, երբեմն իրարամերժ ու չհամակարգված, ցաքուցրիվ ու պատահական միջնորդական ջանքեր գործադրվեցին, որոնք այդպես էլ չհանգեցրին որևէ հետևողական գործընթացի, և դրանց արդյունքում չծնվեց կարգավորման որևէ փաստաթուղթ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրի՝ ՌԴ, ԱՄՆ և Ֆրանսիայի կողմից Հայաստանի և Ադրբեյջանի իշխանություններին 1997թ. ներկայացվեց «փաթեթային տարբերակ» անվանումը ստացած

«Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիրը» [1]՝ բաղկացած նախաբանից, «Զինված հակամարտության դադարեցում» անվանակոչված թիվ 1 համաձայնագրից, «Կարգավիճակ» վերնագրված թիվ 2 համաձայնագրից, «Հակամարտող կողմերի վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ» բաժնից, Հավելված 1-ից (գորքերի դուրսբերման իրականացում և տեղահանված անձանց վերադարձ. աշխարհագրական չափորոշիչներ, ժամանակացույցեր և անվտանգության դիտանկյուններ) և Հավելված 2-ից (ուժերի դուրսբերման ու վերադասավորման տակ ընկնող տարածքների կազմավորում՝ որպես բուֆերային և բաժանարար գոտի):

ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի համանախագահները 2007թ. Մադրիդ քաղաքում Հայաստանին ու Ադրբեջանին ներկայացրին կարգավորման հիմնարար սկզբունքների նախնական տարբերակ [2]: Հիմնարար սկզբունքները, որոնք ստացան «մադրիդյան սկզբունքներ» անվանումը, հիմնված են ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների վրա (վերջիններս ամրագրված են Հելսինկյան եզրափակիչ ակտում [3]):

Դեռևս 2007թ. Միջազգային ձգնաժամային խմբի «Լեռնային Ղարաբաղ. պատերազմի ռիսկ» զեկույցում խոսվում էր Մադրիդում Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների միջև համաձայնեցված բանակցային հիմնարար սկզբունքների մասին: Գրեթե դրա կրկնությամբ հրապարակվել են լրամշակված «մադրիդյան սկզբունքները» որոնք հետևյալն են՝

–Լեռնային Ղարաբաղի շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողությանը.

–Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ՝ նրա անվտանգության և ինքնակառավարման երաշխիքների տրամադրումով.

–Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող միջանցք (սակայն այն փորձագետների կողմից գնահատվեց որպես «ոտի տակի» ձանապարհ. միջանցքը վերածվելու է պարանոցի ու խեղդելու է Հայաստանն ու Արցախը [4]).

–Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա սահմանում իրավականորեն պարտադիր կամարտահայտության միջոցով.

–ներքին տեղահանված անձանց և փախստականների՝ իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալու իրավունք, անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն խաղաղապահ գործողություն [5]:

2009 թվականից հաճախակի հիշատակվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման պլան՝ «ձանապարհային քարտեզի» ձևով: Դրանից մի քանի տարի առաջ նույն փորձը կիրառվեց պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման համար: Ղարաբաղյան կարգավորման հնարավոր «ձանապարհային քարտեզի» գլխավոր նպատակներից մեկը, որի հետ արտաքին ուժերը կապում էին գործընթացում առաջընթացի ապահովումը, կարող էր լինել այն, որ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման «ձանապարհային քարտեզը», ինքնըստինքյան, կարող է դառնալ որոշակի «փոխզիջում» կարգավորման երկու՝ «փաթեթային» և «փուլային» մոտեցումների միջև, ինչն ավանդաբար գլխավոր հակասություններից է եղել հայկական և ադրբեջանական կողմերի մոտեցումներում:

Դրանով իսկ պետք է փաստել, որ «մադրիդյան սկզբունքները» կարծես փաթեթային ու փուլային տարբերակների միաձուլումը լինեն: Կարգավորման մեխանիզմի բովանդակությունը փուլային տրամաբանությամբ է, բայց ենթադրում է միանվագ համաձայնություն՝ բոլոր մնացած կետերի վերաբերյալ:

2008թ. նոյեմբերի 2-ին Մոսկվայի մերձակայքում գտնվող «Մայենդորֆ»

ընդունելությունների տանը Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի նախագահները ստորագրեցին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հռչակագիրը, որտեղ կողմերը հավաստում էին հակամարտությունը խաղաղ բանակցությունների և ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահների միջնորդությամբ լուծելու իրենց պատրաստակամությունը [6]: Մոսկվայում ստորագրված փաստաթղթում կողմերը կրկին կարևորում են համանախագահների առաջարկած վերոհիշյալ մադրիդյան դրույթները:

Այդուհանդերձ, Մայենդորֆյան այդ հռչակագրի առանձնահատկությունը հայտարարությունների մեջ չէ: Այն ստորագրվել է տարածաշրջանում լարվածության խորացման ժամանակաշրջանում, երբ Հարավային Կովկասի քաղաքական վերաձևումը թևակոխել էր կարևոր փուլ:

Հետագայում Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի համանախագահների այցերը տարածաշրջան նպատակ ունեին պարզելու պաշտոնական Երևանի և Բաքվի մոտեցումը ներկայացված փաստաթղթի հիմնական դրույթներին:

Այն, որ ներկայումս «մադրիդյան սկզբունքները» Լեռնային Ղարաբաղի համար նախատեսում են Ադրբեջանից անկախ քաղաքական կարգավիճակ, ենթադրելու հիմք է տալիս հիմնարար սկզբունքներում ամրագրված այն կետը, որը սահմանում է Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա սահմանում իրավականորեն պարտադիր կամարտահայտության միջոցով: Մադրիդում առաջարկված փաստաթղթում ամրագրված սկզբունքների զգալի մասը շարունակում էր անհայտ մնալ հասարակայնությանը, սակայն 2016 թվականի ապրիլյան «քառօրյա պատերազմից» հետո հանրային իրազեկման ներկայացվեց այդ փաստաթղթի ամբողջական տեքստը [7]:

Միաժամանակ, «քառօրյա պատերազմի» վերլուծությունների արդյունքում հայկական կողմը սկսեց նաև այլ մոտեցում ևս քննարկել, մասնավորապես՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ.Քոչարյանի մեկնաբանմամբ՝ ապրիլյան դեպքերից հետո անհրաժեշտություն է առաջացել լրջորեն վերանայելու այն փոխզիջումները, որոնք տեղ էին գտել «մադրիդյան սկզբունքներում»: «Այնտեղ կար Արցախում հետաձգված հանրաքվե անցկացնելու մասին դրույթ: Դրա նպատակն այն էր, որ այդ ժամանակահատվածում Բաքուն պետք է նախապատրաստի իր հասարակությանը այն մտքին, որ Լեռնային Ղարաբաղը չի լինելու Ադրբեջանի կազմում, բայց այդ ժամանակը նա օգտագործեց ապրիլին այլ նպատակով» [8]:

Ամեն դեպքում, ձևակերպումների համապարփակ վերլուծությունը հուշում է, որ. «հակամարտության խաղաղ կարգավորման արդար և հավասարակշռված սկզբունքները» կամ այլ խոսքերով՝ «մադրիդյան սկզբունքները» հիմնվում են հետևյալի վրա՝

Առաջին քայլը համարվում է հայկական Ձինված ուժերի դուրս բերումն այն դիրքերից, որոնք նրանք ներկայումս զբաղեցնում են՝ Լեռնային Ղարաբաղից: Այլ խոսքերով՝ առաջարկվում է Ղարաբաղի հայկական ուժերը դուրս բերել նախկին ադրբեջանական շրջաններից՝ Ադդամից, Ֆիզուլիից, Ջեբրայիլից, Ղուբաթլիից ու Ջանգելանից, մասամբ՝ Լաչինից, հնարավոր է, մասամբ՝ Քելբաջարից: Այս շրջանների տարածքը մոտ 8810 քառակուսի կիլոմետր է, ինչը մի քիչ ավելի է նախկին Խորհրդային Ադրբեջանի տարածքի (86.600 քառակուսի կիլոմետր) 10 տոկոսից: Հարկ է նշել, որ ԼՂՀ պաշտպանական ուժերը միայն մասամբ են վերահսկում Ադդամն ու Ֆիզուլին:

Այս գործընթացը, հավանաբար, ենթադրում է միջազգային խաղաղարար ուժերի տեղակայում շփման գծի երկայնքով՝ որպես անվտանգության

երաշխավոր: Նման զիջման դիմաց
Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը,
ըստ երևույթին, կստանա հանրաքվե
անցկացնելու հնարավորություն: Ըստ
երևույթին, Մադրիդյան փաստաթղթի
կարևորագույն դրույթներից է ադրբեյ-
ջանցիների վերադարձը և անկախու-
թյան հանրաքվեի անցկացումը ոչ միայն
Լեռնային Ղարաբաղի, այլև հարակից
շրջանների տարածքում:

Մադրիդյան փաստաթղթի մեկ այլ
դրույթ է կոմունիկացիաների շրջափակ-
ման վերացումը Ադրբեյջանի և, հնա-
րավոր է, Թուրքիայի կողմից: Ամենայն
հավանականությամբ, ներկայացված
փաստաթուղթը կողմնորոշված է լու-
ծելու վերոհիշյալ խնդիրները՝ առանց
Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի
հստակ սահմանման: Համենայն դեպս,
դրա մասին են վկայում վերջին տարի-
ների իրադարձությունների տրամաբա-
նությունն ու առանձին դիվանագետների
հայտարարությունների հատվածները:

Ակնհայտ է, որ Լեռնային Ղարաբաղի
այս կամ այն քաղաքական կարգավի-
ճակի ամրագրումը փաստաթղթում հղի
է առանց այն էլ դանդաղ բանակցային
գործընթացի դադարեցման սպառնալի-
քով, քանի որ դա հենց այն հարցն է, որի
շուրջ կողմերը ընդհանուր հայտարա-
րի չեն գալիս: Հենց այդ պատճառով էլ
ավելի են հաճախանում գնահատական-
ները Ադրբեյջանի կողմից ակտիվ ռազ-
մական գործողությունները վերսկսելու
հեռանկարի մասին, ինչը դրսևորվեց
2016թ. ապրիլյան պատերազմի արձա-
նագրմամբ:

Լեռնային Ղարաբաղում իրավիճա-
կի սրմանն արձագանքեցին աշխար-
հի բազմաթիվ երկրների, մասնավոր-
ապես՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդ
պետությունների ղեկավարները (Ռու-
սաստանի և Ֆրանսիայի նախագահներ
Վլադիմիր Պուտինն ու Ֆրանսուա Օլան-
դը, ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին,
ԵԱՀԿ գործող նախագահ, Գերմանիայի
արտգործնախարար Ֆրանկ-Վալտեր

Շթայնմայերը, Մինսկի խմբի համանա-
խագահների եռյակը), որոնք ափսոսանք
են հայտնել լայնամասշտաբ ռազմական
գործողությունների կապակցությամբ և
հակամարտության կողմերին կոչ արել
անհապաղ դադարեցնել կրակն ու զսպ-
վածություն ցուցաբերել [9]:

Հարկ է նշել, որ ապրիլյան պա-
տերազմի առաջին երկու օրերին մի-
ջազգային մամուլում տեղ գտած ան-
դրադարձներում հաճախ կարելի էր
հանդիպել կտրուկ գնահատականնե-
րի, օրինակ՝ «հայ անջատողականներ»,
«օկուպացված տարածքներ» ձևակեր-
պումներ: Մասնավորապես, ամերիկյան
հեղինակավոր լրատվամիջոցի՝ «The
Wall Street Journal»-ի ապրիլի 2-ի «Տաս-
նյակ մարդիկ են զոհվել հայ անջատո-
ղականների պայքարում» վերնագի-
րը կրող հրապարակման մեջ նշվում է.
«Հայաստանն ու Ադրբեյջանը հայտնում
են անջատողական Լեռնային Ղարա-
բաղի շուրջ ծանր մարտերի մասին ան-
հանգստություն՝ հայտնելով, որ երկու
երկրների միջև երկարատև հակամար-
տությունը կարող է սրվել», և մեջ է բեր-
վում Իլիամ Ալիևի հայտարարությունն
առ այն, որ հակամարտությունը պետք
է կարգավորվի ՄԱԿ-ի Անվտանգու-
թյան խորհրդի բանաձևերի և Տարած-
քային ամբողջականության սկզբունքի
հիման վրա [10]: Ապրիլի 2-ին մեկ այլ
այսպիսի հրապարակում տեղ գտավ
«New York Times»-ում, որտեղ ասվում
էր. «Լեռնային Ղարաբաղի անջատո-
ղական կառավարությունը, որի սկզ-
բունքային աջակիցները Հայաստանն ու
Կալիֆոռնիայում և շատ այլ վայրերում
գտնվող հայկական սփյուռքն են, ովքեր
այս բախումների մասին հայտնում են,
որ սա 1994թ-ի վեր առաջին անգամն
էր, երբ ծանր զինատեսակի բոլոր մի-
ջոցներն օգտագործվում են առաջնագ-
ծում» [11]: Ավելի ուշ՝ ապրիլի 8-ին, «New
Eastern Europe» ամսագրում «Քանի դեռ
շատ ուշ չէ» վերնագրով հոդված լույս
տեսավ, որի հեղինակը Էդուարդո Լո-

րենց Օչոան էր, ով Հայաստանի եվրոպացի բարեկամներ հասարակական կազմակերպության նախագահն է: Հոդվածում նշվում էր. «Մենք (եվրոպացիներս) երբևէ քննադատորեն դիտարկել ենք մեր «պիտակները», ինչպիսին են «անջատողակաները»: Մեզանից որևէ մեկը հասկանում է, որ «անջատված» պետությունը կարող է կայուն և շատ ավելի ժողովրդավար լինել, քան իր նախորդ, մետրոպոլ ուժը»՝ ներկայացնելով նաև «Freedom House»-ի հետազոտության արդյունքները, որտեղ Ղարաբաղը գնահատվում է որպես «մասնակի ազատ», իսկ Ադրբեյջանը՝ «ոչ ազատ» պետություն [12]: Հարկ է նշել, որ Ղարաբաղի առավել ժողովրդավար պետություն լինելու փաստը բավական ուժեղ կովան է միջազգային ասպարեզում ներկայանալու և հատկապես արևմտյան «տեղեկատվական շուկայում» ազդեցություն գործելու տեսանկյունից:

Ապրիլյան պատերազմի 3-րդ և 4-րդ օրերին միջազգային հանրության կողմից արձագանքներն անհամեմատ չեզոք դարձան, որոշ դեպքերում արտասահմանյան մամուլում նույնիսկ հայկական կողմից հակամարտության շուրջ պարզաբանումներ սկսեցին ներկայացվել ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնատար անձինք: Գրեթե բոլոր հրապարակումներում կարելի էր գտնել հետևյալ միտքը, որ հակամարտության կողմերից յուրաքանչյուրը մեղադրում է մյուսին ռազմական գործողություններ սանձազերծելու մեջ: Արաբական հեղինակավոր «Al Jazeera» հեռուստաընկերության անգլալեզու կայքում տեղադրված հոդվածում ասվում էր, որ Հայաստանի և Ադրբեյջանի պաշտոնյաներն իրար են մեղադրում այն բանից հետո, երբ կռիվների ընթացքում 30 զինվոր է զոհվել [13]: Մեկ այլ հեղինակավոր լրատվամիջոց՝ Միացյալ Թագավորության «Reuters» գործակալությունը «Հայաստանը զգուշացնում է, որ Լեռ-

նային Ղարաբաղի բախումները կարող են լայնածավալ պատերազմի վերածվել» վերնագրով հոդվածում գրում էր, որ չնայած միջնորդների կոչերին՝ կողմերը շարունակում են ռազմական գործողությունները և մեղադրում են մեկը մյուսին դրանք սանձազերծելու համար [14]: Այդուհանդերձ, քառօրյա պատերազմի ընթացքում ձախողվելով սեփական արկածախնդրության մեջ՝ ադրբեյջանական կողմը ստիպված համաձայնեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային այցելությանը: Արդյունքում Իգոր Պոպովը (ՌԴ), Պիեռ Անդրիոն (Ֆրանսիա), Ջեյմս Ուորլիքը (ԱՄՆ) և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջել Կասպրչիկը քառօրյա պատերազմին հաջորդող օրերին եղան Բաքվում, Ստեփանակերտում և Երևանում [15]:

Այսպիսով՝ կարելի է ընդհանրացնել, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցային գործընթացում մինչ օրս տարբեր ակտիվացումներով հանդերձ չեն արձանագրվել հիմնարար արդյունքներ, չեն ընդունվել և ձևակերպվել կարգավորման ընդունելի չափորոշիչները: Այսօր էլ լարված է մնում Արցախ – Ադրբեյջան սահմանը, անգամ ենթադրելի է պատերազմի վերսկսումը, սակայն ավելի լայնածավալ տարբերակով: Այս ամենը խնդրի լուծում չի կարող լինել: Հակամարտության համակողմանի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ դրա լուծումը, ինչպես պատճառների, այնպես էլ հետևանքների առումով, մոտ ժամանակահատվածում իրականություն դառնալ չի կարող, այն կարող է հանդիսանալ շարունակական գործընթացի արդյունք: Վերջնական կարգավորման տարբերակին հասնելու համար անհրաժեշտ է երկկողմանի քաղաքական կամք ու վճռականություն, թեև և՛ Հայաստանում, և՛ Ադրբեյջանում հիմնահարցի հետագա զարգացումները կարող են նաև քաղաքական ռեժիմների փոփոխության հանգեցնել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Փուլային տարբերակ. Լեռնային Ղարաբաղի գինված հակամարտության դադարեցման համաձայնագիր (Նախագիծ), ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահություն, 2 դեկտեմբեր, 1997թ., <http://theanalyticon.com/?p=7890>:
2. OSCE and Nagorno Karabakh conflict, http://www.academia.edu/18371334/OSCE_and_Nagorno_Karabakh_conflict
3. ԵԱՀԿ առաջին գազաթնաժողովի եզրափակիչ ակտ՝ պետության կամ կառավարության ղեկավարների մասնակցությամբ, Հելսինկի, 1 օգոստոսի 1975թ., <http://www.osce.org/hy/mc/39507>:
4. Լ. Շիրինյան, Սկզբունքների 6 կետերի մեջ որևէ հայանպաստ բան չկա, 23.07.2009թ., <http://www.aysor.am/am/news/2009/07/23/shirinyan/44227>:
5. Данилов Д., Южный Кавказ и миссия Европы // «Стратегия России», № 1, январь 2011, http://sr.fondedin.ru/new/fullnews_arch_to.php?subaction=showfull&id=1296316105&archive=1296316573&start_from=&ucat=14&
6. Ինչ կարող է նշանակել Մոսկվայի հանդիպումը. ռոն է եռակողմ հանդիպման արդյունքը, 07.11.2008թ., <https://www.armenianow.com/node/9183>:
7. «Մադրիդյան սկզբունքների» այս տարբերակը, պայմանականորեն, անվանվում է «Մայր Մադրիդյան», որը մերժել է Ադրբեջանը: Փաստաթղթի նորացված տարբերակում կամ տարբերակներում, հանրաքվեի կամ պլեբիսցիտի մասին կետը առաջինից տարվել է հետ, կատարվել են որոշ այլ փոփոխություններ, որոնք արդեն անընդունելի են եղել հայկական կողմի համար: Ավելի մանրամասն տես Մադրիդյան սկզբունքներ – ամբողջական տեքստ, 13.04.2016թ., <http://www.aniarc.am/2016/04/13/madrid-principals-armenian-text/>:
8. Շ. Քոչարյան, Մադրիդյան սկզբունքները պետք է վերանայվեն, 15.09.2016թ., <http://asekose.am/news/8/230822-madridyan-skzbonqnere-petq-e-veranayven-savars-qocaryan.html>:
9. Հ. Փաշայան, Արցախի Հանրապետությունը և քառօրյա պատերազմը (ապրիլ, 2016թ.), 31.05.2016թ., http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14725:
10. A Dozen Die in Armenian Separatist Fighting, The Wall Street Journal, 02.04.2016, <http://www.wsj.com/articles/heavy-fighting-reported-in-nagorno-karabakh-1459597114>
11. Fighting Between Azerbaijan and Armenia Flares Up in Nagorno-Karabakh, New York Times, 02.04.2016, http://www.nytimes.com/2016/04/03/world/europe/nagorno-karabakh-fighting-azerbaijan-armenia.html?_r=0
12. Before it is too late, New Eastern Europe, Eduardo Lorenzo Ochoa, 08.04.2016, <http://neweasterneurope.eu/articles-and-commentary/1946-before-it-s-too-late>
13. Dozens killed in Nagorno-Karabakh clashes, Al Jazeera, 03.04.2016, <http://www.aljazeera.com/news/2016/04/heavy-fighting-erupts-armenian-azeri-border-160402084508361.html>
14. Armenia warns Nagorno-Karabakh clashes could turn into all-out war, Reuters, 04.04.2016, <http://uk.reuters.com/article/uk-nagorno-karabakh-fighting-idUKKCN0X10M9>
15. Հանդիպում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ, 07.04.2016թ., <http://karabakh-open.info/hy/politicsam/16356-am101977>:

ОСНОВНЫЕ ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ МАДРИДСКИХ ПРИНЦИПОВ ПО УРЕГУЛИРОВАНИЮ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

ГАЙК ГУЛЯН

НАН РА, Институт философии, социологии и права, аспирант

Представленный в статье анализ показывает, что Карабахский конфликт, охватывающий этноисторические, геополитические, политические, социально-экономические, культурные вопросы, стал одним из наиболее важных вопросов региональной и международной безопасности, в силу своей нерешенности ставящий под угрозу будущее регионального мира. «Мадридские принципы» – это условное название основных принципов урегулирования Нагорно-карабахского конфликта, который основан на трех принципах: право народов на самоопределение, неприменение силы или угрозы силы и территориальная целостность.

KEY PREREQUISITES OF MADRID PRINCIPLES FORMATION ON KARABAKH CONFLICT SETTLEMENT

HAYK GHOULYAN

National Academy of Sciences of the RA, Institute of Philosophy, Sociology and Law, Postgraduate

The analysis which is presented in article shows that the Karabakh conflict, covering ethnohistorical, geopolitical, political, socio-economic, cultural issues, has become one of the most important issues of regional and international security, due to its suspense became a threat to the future of regional peace.

«Madrid principles» – is the code name of the Basic Principles of the Nagorno-Karabakh conflict, which is based on 3 principles of conflict settlement: the right of self-determination of peoples non-use of force or threat of force and territorial integrity.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՀՄԱՆ ԲԱՀԱԳՐՈՐԻ

ԵՊՀ-ի աշխարհագրության ֆակուլտետ, ասպիրանտ

ԱՀՎԱԶ ՔԱՂԱՔԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ՝ ԸՍՏ ԱՐ- ԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՆԿԱՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Վերջին տասնամյակներում Իրանի Ահ-վազ քաղաքի անկանոն ընդարձակումը և նրա էկոլոգիական պատկերի փոփոխությունները կառուցվածքային հակադրություններ են ստեղծել Ահվազի բնական և քաղաքային արտաքինում, ինչպես օրինակ՝ կանաչ տարածքների մանրացումը, բաց և կանաչ գոտիների միջև կապի բացակայությունը, քաղաքային կանաչ և ազատ տարածքների, հանգստավայրերի ու տեսահորիզոնների սահմանափակումը, որոնց պատճառով խախտվել է քաղաքի էկոլոգիական հավասարակշռությունը: Քաղաքային նախագծման որակի գլխավոր բաղադրիչներն են՝ գործառնական որակը, փորձարարական-գեղագիտական որակը և կենսոլորտի որակը: Հաշվի առնելով էկոլոգիական ժամանակակից ձգնաժամերը՝ ռեսուրսների անխնա օգտագործումը, օդի և հողային ու ջրային աղբյուրների աղտոտվածությունը, գլոբալ տաքացումը և այլն, առանձնակի կարևորություն է ստացել շրջակա միջավայրի որակը: Հետազոտության մեթոդը բուսական ծածկույթի ուսումնասիրությունն է լանդսեյթ արբանյակային նկարների միջոցով՝ 1973, 1990, 2005 և 2013 թթ.: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Ահվազի կենտրոնական հատվածի և մյուս շրջանների միջև ներդաշնակություն ստեղծելու համար անհրաժեշտ է պահպանել քաղաքի մերձակայքի և Քարուն գետի ափամերձ շրջանների կանաչ գոտիները, նաև ներքաղաքային այգիներն ու կանաչապատ տարածքները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կենսոլորտի որակ, էկոլոգիական ժամանակակից ձգնաժամեր, օդի և հողային ու ջրային աղբյուրների աղտոտվածություն, շրջակա միջավայր, կանաչ գոտիներ:

Վերջին տարիներին քաղաքների միջև խիստ մրցակցություն է գնում՝ զարգացման հնարավորությունների ձեռք բերման և սոցիալ-տնտեսական ներդրումների ներգրավման ուղղությամբ: Գլոբալ այս մրցակցության մեջ քաղաքային տարածքների որակը և քաղաքային նախագծումը հանգուցային չափանիշ են քաղաքների գնահատման համար: Քաղաքային նախագծման ու պլանավորման որակի գնահատման համար հաշվի են առնում երեք բաղադրիչ՝ գործառնական որակը, փորձարարական-գեղագիտական որակը և շրջակա միջավայրի որակը: Հաշվի առնելով էկոլոգիական ժամանակակից ձգնաժամերը, ինչպես օրինակ՝ ռեսուրսների անխնա օգտագործումը, օդի և հողային ու ջրային աղբյուրների աղտոտվածությունը, գլոբալ տաքացումը և այլն, ներկայումս առանձնակի կարևորություն է ստացել երրորդ բաղադրիչը, այսինքն՝ շրջակա միջավայրի որակը: Այս բաղադրիչը փոքր մասշտաբով ուսումնասիրում է քաղաքային փոքր տարածքների կլիմայի հարցերը (արև, օդային հոսանքներ, ստվերների ապահովում և այլն), իսկ խոշոր մասշտաբի վրա քննում է կենսոլորտի պահպանման հիմնահարցերը՝ փորձելով քաղաքային ծրագրերով ու նախագծե-

րով կարգավորել քաղաքի շրջակա միջավայրի վիճակը և բնական ռեսուրսների ճիշտ օգտագործումը: Մեր հետազոտության մեջ մենք, ուսումնասիրելով էկոլոգիկ քաղաքաշինության հիմունքներն ու սկզբունքները, առաջադրել ենք քաղաքի էկոլոգիկ զարգացման տարբեր կողմերը: Մույն հոդվածը կարող է օգտակար լինել քաղաքային էկոլոգիայի հիմնախնդիրների և քաղաքային նախագծերի մշակման ոլորտում աշխատող հետազոտողների համար:

Քաղաքային էկոլոգիան քաղաքացիների կյանքի համար նպաստավոր միջավայրի ձևավորման նախադրյալն է: Տեխնոլոգիական զարգացումները միայն էկոլոգիական խնդիրների կարգավորման պայմաններում կարող են օգտակար լինել քաղաքին (Հաշենփուր, 2002թ.): 1890–1925 թվականներին Պատրիկ Գեյդարը բարձրացրեց քաղաքային էկոլոգիայի հարցը և այս կապակցությամբ առաջադրեց մի շարք հասկացություններ ու դրույթներ: Նրա գործը շարունակեցին մի շարք հայտնի տեսաբաններ՝ Մարկ Զեֆրսոնը, Պատրիկ Էբերկրոմբին և Լուիզ Մամֆորդը, որոնք նոր տեսահորիզոններ բացեցին քաղաքային և էկոլոգիական հարցերի ուսումնասիրության համար: Հետագայում 1971 թվականին ՄԱԿ-ն առաջին անգամ առաջադրեց «էկո-քաղաք» հասկացությունը: Ռիչարդ Ռեջիստերն առաջին հետազոտողներից էր, ով իր աշխատության մեջ սահմանեց «էկո-քաղաք» հասկացությունը (Ռեջիստեր, 2008թ.): Ռ. Ռեջիստերը հետևյալ ձևով է սահմանում էկո-քաղաքը. էկո-քաղաքն այնպիսի քաղաք է, որը նախագծվում է՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի ազդեցությունները: Քաղաքի բնակիչներն աշխատում են նվազագույնի հասցնել կենցաղային կարիքների համար օգտագործվող էներգիան, օդի աղտոտվածությունը (ածխածին, մեթան) և ջրի աղտոտվածությունը, ջերմության արտազատման հետևանքները: Ըստ Ռեջեստերի՝ կայուն զարգացում ունեցող քաղաքը ինքն իրեն սնում է շրջակա միջավայրից

ունեցած նվազագույն կախվածությամբ և կիրառում է հիմնականում վերականգնվող էներգիաներ (Ռեջիստեր, 2008թ.): Այս սահմանումից պարզ է դառնում, որ «էկոլոգիական ոտնահետքերի» (Ecological footprint¹) կրճատման նպատակն է նվազագույնի հասցնել աղտոտվածության և հողօգտագործման չափերը, կիրառել հողօգտագործման արդյունավետ գործառույթներ, թափոններից ու ավելորդ նյութերից ստանալ վերամշակված նյութեր կամ պարարտանյութ, գործի դնել «Թափոնից էներգիա» (West to energy) ծրագիրը: Այսպիսի քայլերով ու միջոցներով կարելի է նվազագույնի հասցնել քաղաքի կամ տարածաշրջանի և նրա բնակչության ազդեցությունները կլիմայական փոփոխությունների վրա:

Ահվազ քաղաքը Իրանի Խուզստան նահանգի կենտրոնն է և նահանգի ամենամեծ քաղաքը, որի մակերեսը կազմում է 222 քառ.կմ, սպասարկող տարածքները՝ 300 քառ կմ, իսկ պահպանվող տարածքները՝ 895 քառ.կմ: Քաղաքի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսային լայնությունը՝ 31⁰ աստիճան և 20', իսկ արևելյան երկայնությունը՝ 40⁰ ու 40' րոպե. այն գտնվում է ծովի մակերևութից 18 մետր բարձրությամբ հովտում: Ահվազ քաղաքը հյուսիսից հարևան է Շեյբան, Վեյս, Մոլասանի Շուշթար, Դեգֆուլ և Շուշ քաղաքներին, արևելքից՝ Ռամհորմոզին, արևմուտքից՝ Համիդե քաղաքին ու Ազադեգան դաշտավայրին, իսկ հարավից՝ Շադեգան, Մահշահիր, Խորամշահիր և Աբահան քաղաքներին: Ահվազը բաժանված է 8 վարչատարածքների, որոնք ներառում են երեքից չորս համայնքներ: Ստորև բերված նկարում ներկայացված են Խուզստան նահանգի տեղն ու դիրքը Իրանի քարտեզի վրա, Ահվազի ագրոմերացիան, Ահվազ քաղաքը և նրա շրջակայքը:

1 The impact of a person or community on the environment, expressed as the amount of land required to sustain their use of natural resources.



Նկար 1. Ահվազ քաղաքի աշխարհագրական դիրքը Խուզստան նահանգում և Իրանում:

Հետազոտության մեթոդը՝ NDMI¹

Քաղաքային կենսոլորտի և շրջակա միջավայրի պահպանման կարևոր չափանիշներից մեկը բուսական ծածկույթն է, որն արտահայտվում է NDMI չափանիշով կամ ցուցիչով: Հետազոտության մեջ մենք դիտարկել և ուսումնասիրել ենք 1973, 1990, 2005 և 2013 թվականներին ստացված արբանյակային նկարները, որոնք ներկայացված են 2-ից 5 նկարներ:

Աղյուսակ 1.


Ահվազ քաղաքի բուսական ծածկույթի NDMI ցուցանիշի տվյալները (1973թ.)

NDMI ¹ տարածքի կանաչապատվածության աստիճան	Մակերես (հեկտար)
Լավ և խիտ բուսական ծածկույթով	28
Նոսր բուսական ծածկույթով	2118
Առանց բուսական ծածկույթի	348

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, 1973-ին Ահվազ քաղաքում բուսական ծածկույթի ամենաբարձր ցուցանիշը (2117.6982 հեկտար) վերաբերում է թեթևակի կամ նոսր ծածկույթով տարածքներին, իսկ առանց բուսածածկույթի տարածքների մակերեսը կազմել է 347.9679 հեկտար, բուսական լավ և խիտ ծածկույթ ունեցող գոտիների մակերեսը կազմել է 27.9414 հեկտար:

1 Բուսական ծածկույթի տարբերությունների միջինացված ցուցիչ, որով ներկայացվում է տվյալ տարածաշրջանի բուսական ծածկույթի ներկա և երկարաժամկետ վիճակը:

րում: Այս քարտեզներում ներկայացված են բուսական ծածկույթի երեք գոտիներ, դրանք են՝ առանց բուսական ծածկույթի տարածքները, նոսր բուսական ծածկույթով տարածքները, խիտ բուսական ծածկույթով տարածքները:



Նկար 2. NDMI բուսական ծածկույթի ցուցանիշը՝ ըստ MSS չափագրող լանդսեթ արբանյակային նկարի (1973 թվական (հեղինակային))

Վերլուծելով նկար 2-ի տվյալները՝ տեսնում ենք, որ 1973 թվականին Ահվազ քաղաքի բուսական ծածկույթի տարբեր գոտիներն ունեցել են հետևյալ մեծությունը.



Նկար 3. Ահվազ քաղաքի բուսական ծածկույթը 1990 թվականին:

Վերը բերված քարտեզի վյալները ցույց են տալիս, որ 1990 թվականին նվազ բուսական ծածկույթով գոտիները ամենամեծ տոկոսն են կազմում՝ 77%, իսկ առանց բուսական ծածկույթի գոտիները փոքր են՝ ընդամենը 5%: Խիտ բուսականություն ունեցող տարածքները կազմում են քաղաքի ընդհանուր մակերեսի 18%-ը: Նկար 4-ը ներկայացնում է քաղաքի բուսական ծածկույթի վիճակը 2005 թվականին:



Նկար 4. Ահվազ քաղաքի բուսական ծածկույթի ցուցանիշի (NDVI) քարտեզը՝ Լանդսեթ ETM չափագրող արբանյակի նկարի հիման վրա 2005 թ. (հեղինակ):

Վերլուծելով նկար 4-ի տվյալները՝ տեսնում ենք, որ 2005 թվականին Ահվազ քաղաքի բուսական ծածկույթի տարբեր գոտիներն ունեցել են հետևյալ մեծությունը.

Աղյուսակ 2.

Ահվազ քաղաքի NDVI ցուցանիշի տվյալները 2005 թ. (հեղինակային):

NDVI՝ տարածքի կանաչապատվածության աստիճան	Մակերես (հեկտար)
Խիտ բուսական ծածկույթով շրջաններ	334.54
Նոսր բուսական ծածկույթով շրջաններ	1040.31
Առանց բուսական ծածկույթի շրջաններ	115.02

Ահվազ քաղաքի բուսական ծածկույթի ցուցանիշը (NDVI) 2013 թվականին:

Ահվազ քաղաքի բուսական ծածկույթի տարբեր գոտիների պատկերն արտացոլված է ստորև բերված քարտեզում:



Նկար 5. Ահվազ քաղաքի բուսական ծածկույթի ցուցանիշի (NDVI) քարտեզը՝ Լանդսեթ չափագրող ETM արբանյակի նկարի հիման վրա (2013 թ. (հեղինակ)):

Ուսումնասիրելով վերը բերված պատկերը՝ կարող ենք արձանագրել բուսական ծածկույթի տարբեր գոտիների տվյալները, որոնք ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.

Ահվազ քաղաքի բուսական ծածկույթի (NDVI) ցուցանիշի տվյալները (2013թ.):

NDVI՝ տարածքի կանաչապատվածության աստիճան	Մակերես (հեկտար)
Խիտ բուսական ծածկույթով	1091.97
Նոսր բուսական ծածկույթով	5066.1
Առանց բուսական ծածկույթի	21076.38

1973–ից 2013 թթ. բուսական տարբեր ծածկույթներով գոտիների ուսումնասիրության ամփոփում

Ուսումնասիրելով գրանցված տվյալները՝ տեսնում ենք, որ 1973–ից 1990 թթ. ժամանակահատվածում, ինչը պայմանավորված է այդ տարիների ջրային առատ ռեսուրսներով: Այնուհետև 1990–2005 թթ. ժամանակահատվածում կանաչ գոտիների մակերեսը խիստ նվազել են, ինչը կարող ենք կապել այդ տարիների երաշտների հետ, նաև այն հանգամանքի հետ, որ արբանյակային նկարը վերցվել է ամռան եղանակին: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1973–2013թթ.) նոսր բուսականությամբ գոտիները ևս ընդլայնվել են և դրանց փոփոխությունների դինամիկան վերընթաց է: Նույն ժամանակահատվածում Ահվազի առանց բուսականության գոտիների մակերեսը սկզբում աճ է գրանցել է (1973–1990 թթ.), այնուհետև 1990–2005 թթ. արձանագրել է նվազող միտում: Ահվազ քաղաքում հոսող Քարուն գետի գործառնության դաշտը 1955–ին և 2013–ին մնացել է անփոփոխ, այսինքն՝ 224.97 հեկտար: Իհարկե, գետի մերձակա տարածքները որոշ փոփոխություններ են կրել, հատկապես, այգիներն ու կանաչ գոտիները հիմնականում վերածվել են բնակելի շրջանների:

Կանաչ գոտիների մակերեսն Ահվազ քաղաքում մեծացել է: Եթե 1955–ին այն կազմել է 32.21 հեկտար, ապա 2013–ին այն հասել է 775.62 հեկտարի: Ներկայումս քաղաքային տարբեր վարչատարածքներում բուսական ծածկույթով

գոտիները կազմում են Ահվազի ընդհանուր մակերեսի 15 տոկոսը:

Այսպիսով՝ ամփոփելով հողվածք պետք է նշենք, որ կանաչ գոտիները յուրաքանչյուր քաղաքի էկոլոգիայի կարևոր բաղադրիչն են, որոնք մեծ նշանակություն ունեն նաև Ահվազ քաղաքի էկոլոգիայի համար: Էկոլոգիական ներդաշնակության ստեղծման և ապագա կանաչ գոտիների ձևավորման համար անհրաժեշտ է ընդարձակել ու զարգացնել կանաչ գոտիները: Ահվազի կանաչ գոտիների նախագծման ու ստեղծման աշխատանքը առավել արդյունավետ կարելի է կազմակերպել աշխարհագրական ինֆորմացիոն բազայի և արբանյակային-օդային նկարների հիման վրա՝ նաև գնահատելով կանաչ գոտիների քանակությունը (էկոլոգիական գործոնի շեմի մեթոդով) և կիրառելով երկրամասի դինամիկ էկոլոգիական սկզբունքը: Էկոլոգիական այս վերլուծությունների արդյունքները փաստում են, որ քաղաքի կենտրոնում և այլ հատվածներում հավասարակշռություն ստեղծելու համար պետք է պահպանել քաղաքի շրջակայքում և Քարուն գետի մերձակայքում առկա կանաչ հատվածները, քաղաքային այգիներն ու կանաչապատ վայրերը: Ահվազ քաղաքի ութ վարչատարածքներից ամենից շատ կանաչ տարածքներ ունեն 3–րդ, 8–րդ, 5–րդ և 2–րդ շրջանները:

Քաղաքային այս կամ այն տարածքում ջերմային կոլոյակների կապվելը ուղղակի հարաբերակցվում է տվյալ տարածքի գործառնության տիպի հետ: Ջերմային ամենաբարձր ցուցանիշնե-

ընդ գրանցվում են արդյունաբերական շրջաններում, այդ թվում՝ Քարուն գետի մոտակայքում, Խուզստանի պողպատաձուլարանային հատվածում և «Գուլստան» մայրուղու մոտակայքում խողովակաշինության գործարանի շրջափակում: Համեմատելով տարբեր գործառույթներով գոտիների ջերմային միջին ցուցանիշները՝ նկատում ենք, որ ջրային և կանաչ գոտիները հերթականությամբ 27.5 և 33.3 աստիճան ջերմությանը ամենացածր ցուցանիշն ունեն, իսկ արդյունաբերական, կոմունիկացիոն և անմշակ հողերի գոտիները ամենաբարձր մակերևութային ջերմաստիճանն ունեն հերթականությամբ՝ 43.2, 41.1 և 40.2 աստիճան: Քարուն գետի էկոլոգիական աղքատության պատճառներից են. Կենցաղային և արդյունաբերական թափոնների արտանետումը գետի ջրերում, կենդանական և բուսական էկոհամակարգի անտեսում, ջրի որակի և ջուրօտագործման հանդեպ անուշադրություն, միջամտություն՝ Քարուն գետի ափի և հունի բնական և օրգանիկ վիճակում, անկանոն կառուցապատումն

այդ տարածքներում, խոշոր սելավներից հետո Քարուն գետի բնակլիմայական վիճակի անտեսում, վերահսկողական մեխանիզմների բացակայություն, Քարուն գետի հունի և պատերի տիղմերի չմաքրելը և աղտոտվածությունը, գետի հունում ինքն իրեն աճող անտառների գոյացում, բնակլիմայական փոփոխությունները վերջին տարիներին և տեղումների քանակի նվազումը:

Անցած տասնամյակներում Ահվազ քաղաքի անկանոն մեծացումն ու ընդլայնումը փոխել են նրա երկրամասային դիմագծի էկոլոգիական կառուցվածքը և բնական դիմագիծը: Օրինակ կանաչ տարածքները մանրացվել ու տարանջատվել են, կրճատվել է կանաչ և բաց տարածքների միջև կապը, փոքրացել են քաղաքային կանաչ ու բաց տարածքները, զբոսավայրերն ու տեսադաշտերը: Այս բաղադրիչները յուրաքանչյուր քաղաքի բնակլիմայական առավելություններն են համարվում և դրանց կրճատումը փոխել է տարբեր գործառույթները և խախտել քաղաքի էկոլոգիական բալանսը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թորգոթո և Մոբին Սադեղ, Իրանի բուսական քարտեզի ուղեցույց՝ F.A.O. միջազգային կազմակերպության մեկենսաությամբ, Թեհրանի համալսարանի հանդես, թիվ 14, Թեհրան, 1970թ.:
2. Զինված ուժերի աշխարհագրության կազմակերպություն, տոպոգրաֆիական քարտեզ, Ահվազ:
3. Մ. Լաջավարդի, Երկրագնդի և նրա էրոզիայի ուսումնասիրությունը օդային նկարների մեկնաբանությամբ, Աշխարհագրական հետազոտությունների հանդես, 3-րդ տարի, թիվ 9, էջ 81-99, Թեհրան, 1998թ.:
4. Lemke. K., .Ritter. M., .Heywood .N.(2009): physical Geography, by John wiley sons , Inc p225, 186
5. Head, Peter, 2008. Entering an Ecological Age, Arup, London, pp. 34.
6. Kearns, A., Barnett, G., Nolan, A., An Ecological Design Strategy for the planning and Urban Development, BDP
7. Mostafavi, Mohsen. Ecological Urbanism, Harvard University Graduate School of Design , Lars Muller Publishers, 2010.
8. Register, Richard, and others, Eco-City Summit Report, San Francisco, 2008.
9. Suzuki, Hiroaki et al, Eco Cities, Ecological Cities as Economic Cities, The World Bank Report, 2010.
10. Forman, Richard T. T., Urban Ecology: Science of Cities, Cambridge University Press, 2014.

ОЦЕНКА ЭКОЛОГИЧЕСКОГО СОСТОЯНИЯ ГОРОДА АЙВАЗ ПО ДАННЫМ СПУТНИКОВЫХ И ВОЗДУШНЫХ СНИМКОВ

БАХМАН БАХАДОРИ

ЕГУ, факультета географии, аспирант

С учетом современных экологических кризисов, безусловного использования ресурсов, загрязнения воздуха, земли и водных источников, а также глобального потепления особое значение приобрело качество окружающей среды. Зеленые пояса являются важным компонентом экологии города. Они имеют большое значение и для экологии города Айваз. Метод исследования изучение растительного покрова по спутниковым снимкам Ландсет (Landsat) 1973, 1990, 2005 и 2013 гг. Результаты исследования показывают, что для создания гармонии между центральной частью Айваза и другими районами необходимо охранять прибрежные зеленые пояса района Айваз и реки Карун, а также внутригородские сады и парки.

ENVIRONMENTAL ASSESSMENT OF THE STATE OF THE CITY OF AHVAZ , ACCORDING TO DATA RECEIVED FROM SATELLITE AND AIR IMAGES

BAHMAN BAHADORI

YSU, Faculty of Geography and Geology, Postgraduate student

Taking into consideration the current environmental crisis, resource use, pollution of air, land and water sources, as well as global warming, environmental quality has acquired special importance

Green areas are important components of urban ecology. They are also very important for the ecology of Ahvaz city. The method of research is the study of vegetation through satellite imagery Landset (Landsat) of 1973, 1990, 2005 and 2013. The research results show that in order to achieve harmony between the central part of Ahvaz city and other areas, it is necessary to protect the coastal green areas of Ahvaz city and the river Karun, as well as intracity gardens and parks.

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ԱՀՎԱԶ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ահվազը Խուզստան նահանգի կենտրոնն է և Իրանի կարևոր քաղաքներից մեկը, որն ունի ուրբանիզացման վաղեմի անցյալ և մեծ փորձ: Քաղաքի աշխարհագրական կորդինատներն են՝ հյուսիսային լայնության 31 աստիճան և 20 րոպե, արևելյան երկայնության 48 աստիճան, 40 րոպե: Քաղաքը գտնվում է Խուզստանի հովտում, Քարուն գետի ափերին՝ ծովի մակերևույթից 18 մետր բարձրության վրա: Քաղաքի կարևորությունը ժամանակակից փուլում պայմանավորված է նրա խիտ բնակչությամբ, նահանգի հովտային ու լեռնային գոտիների և բնակչության կենտրոնների հետ արդյունավետ կապով, քաղաքամերձ գոտիներում նավթային ավազանների առկայությամբ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. մարդկային աշխարհագրություն, ուրբանիզացիա, կենսոլորտ, հովիտ, խիտ բնակչություն, հովտային ու լեռնային գոտիներ:

Ահվազի կենսոլորտը և շրջակա միջավայրը տարբեր հնարավորություններ են ընձեռում մարդկանց ապրուստի ու գոյատևման և ուրբանիզացիայի զարգացման համար: Շրջակա միջավայրի դրական կողմերից են՝ Քարուն ջրառատ գետին մոտ գտնվելը, նավթային հարուստ պաշարները, տարածքի հարթավայր լինելը և քաղաքի մերձակայքում գյուղատնտեսական բերրի հողերի առկայությունը, որոնց շնորհիվ քաղաքացիների համար ստեղծվում է գործունեության, զբաղվածության և ակտիվ կյանքի լայն հնարավորություններ: Քարունն Իրանի ամենաջրառատ գետն է, որն, անցնելով Ահվազի միջով, քաղաքը բաժանում է արևելյան և արևմտյան հատվածների՝ առանձնահատուկ գեղեցկություն տալով քաղաքին:

Ահվազ քաղաքի և նրա մերձակա տարածաշրջանի բնակչությունը բաղկացած է տարբեր էթնիկ շերտերից և տարբեր քաղաքներից եկած խմբերից՝ արաբներից, բախտիարներից, դեգֆուլցիներից, ռամհորմոզիներից, շուշտարիներից և այլն: Ահվազ քաղաքն ունի 8135.9 քառ.կմ մակերես և Ահվազ տարածաշրջանի ամենամեծ քաղաքն է, այն զբաղեցնում է նահանգի մակերեսի 12.78 տոկոսը: Այս քաղաքի բնակչության թիվն է 1381126 մարդ, այսինքն՝ Խուզստան նահանգի բնակչության ընդհանուր թվի 31 տոկոսը:

1991–2001 թթ. Ահվազ քաղաքն ընդունել է ավելի քան 177 հազար գաղթականներ: Այս թիվը կազմում է Խուզստան նահանգ ներգաղթած և տեղաշարժվածների 30 տոկոսը:

Խուզստան նահանգ ապստանած ներգաղթյալները, որոնք բոլորն էլ այս կամ այն կերպ առնչվում և մուտք են գործում Ահվազ քաղաք, բազմաթիվ դժվարություններ են առաջացնում Ահվազի համար: Անհրաժեշտ է մասնագիտական ուսումնասիրություններ կատարել, վերհանել դժվարություններն ու խնդիրները, որպեսզի քաղաքային պլաններում նպատակահարմար միջոցներ ձեռնարկվեն դրանց լուծման և գաղթականների անկանոն հոսքերի կանխման համար:

Իրան–Իրաք ութամյա պատերազմի տարիներին, նահանգի մյուս շրջանների ու քաղաքների համեմատությամբ, Ահվազ քաղաքի անվտանգությունն ու ապահովությունն ավելի բարձր էր, այդ իսկ պատճառով դեպի քաղաք էին ուղղված միգրացիոն հոսքերը: Տարբեր տարիներին իրականացված մարդահամարների վիճակագրական տվյալների համաձայն՝ Ահվազ քաղաքը գաղթականների ներգ-

րավման ամենաբարձր ցուցանիշներն ունի Խուզստան նահանգում: 1981-ից հետո Ահվազ քաղաքը ժողովրդագրական լայնածավալ փոփոխություններ կրած քաղաքներից է Իրանում: Քաղաքի վիճակագրական հետազոտությունները ցույց են տալիս, որ 1976-ին նրա բնակչության թիվը կազմում էր 579,826 մարդ, 1986-ին այդ թիվը հասավ 579, 826-ի՝ գրանցելով 241, 222 աճ, որից 166, 956-ը (69.2%-ը) կազմում են գաղթականները և միայն 30.8%-ն է բնական աճի արդյունք:

1996-ի վիճակագրության համաձայն՝ Ահվազ քաղաքի բնակչության թիվը կազմում է 804, 980 մարդ, այսինքն՝ 1986-ի համեմատությամբ 225, 154-ով ավելացել է այդ թիվը, որից 153, 490-ը (68.2%-ը) գաղթի հետևանքով է, իսկ 31.8%-ը՝ բնական աճի արդյունք:

1976-1986 թթ. Ահվազի բնակչության թիվը ամբողջ նահանգի քաղաքային բնակչության հարաբերակցությամբ կազմել է 16.5%, այսինքն՝ ամեն տարի նահանգում գրանցել է 1.5% աճ, մինչդեռ նշված ժամանակահատվածում Ահվազի քաղաքային բնակչության աճը կազմել է 73%, այսինքն՝ տարեկան 5.7 % աճ: Ահվազ տարածաշրջանի 5.7 % աճը, երբ համեմատում ենք նահանգի 1.5% աճի հետ, տեսնում ենք, որ նահանգի տարբեր վայրերից ու շրջաններից մեծ հոսքեր են եղել դեպի Ահվազ քաղաք: Նկատի առնելով այդ ժամանակահատվածում տեղի ունեցած համապետական նշանակությամբ դեպքերն ու իրադարձությունները, այսինքն՝ Իսլամական հեղափոխությունը և 1980-ին Իրանին պարտադրված 8-ամյա պատերազմը՝ որոշ չափով տրամաբանական են ժողովրդագրական այդ տեղաշարժերը:

Ահվազ քաղաքին և նրա մերձակա տարածքներին բնորոշ է մեկ այլ հատկանիշ՝ քաղաքամերձ արվարձանների ու գոտիների ձևավորումը տարիների ընթացքում:

1973 թվականին առաջին անգամ Թեհրանի համալսարանի սոցիալական հետազոտությունների և ուսումնասիրություն-

ների մասնագետներն ուսումնասիրեցին Ահվազ քաղաքի եզրերում և մերձակա շրջաններում գոյացած բնակության ձևերը, որոնք Իրանում հայտնի են «եզրային բնակություն» անվամբ: Ահվազի հարևանությամբ և նրա եզրերում բնակություն հաստատելու պատմությունը հասնում է մինչև 1940-ականներ և դեռ ավելի վաղ տարիներ, որն առավել ընդլայնվեց 1950-ականներին, իսկ այնուհետև 1960-ականներին հողային ռեֆորմների հետևանքով, երբ բազմաթիվ սակավահող կամ հողչունեցող գյուղացիներ տեղաշարժվեցին դեպի մեծ քաղաքներ, գյուղից քաղաք արտագաղթը նոր թափ ստացավ:

1962-ին հողային ռեֆորմները պատմական, սոցիալ-տնտեսական և քաղաքական խոր փոփոխություններ առաջացրին Խուզստան նահանգում: Հենց այդ տարիներին էր, երբ նահանգի և Ահվազ քաղաքի մերձակայքում հայտնաբերվեցին նավթային պաշարներ, այնուհետև 1974-ին համաշխարհային շուկաներում բարձրացան նավթի գները, որոնց արդյունքում խթանվեցին քաղաքի բնակչության աճը և տարածական զարգացումը: Հողային ռեֆորմներից հետո շատ գյուղացիներ կորցրին իրենց հողամասերը և տեղափոխվեցին քաղաքներ, իսկ Ահվազն իր արդյունաբերական գործունեության և խոշոր գործարանների պատճառով ամենագրավիչ վայրերից էր նման գյուղացիների համար: Նավթային պաշարների հայտնաբերումը Ահվազ քաղաքի մոտակայքում, նավթի խողովակաշարի կառուցումը Ահվազում, երկրի մյուս նահանգներին նավթի մատակարարումը պահանջում էին հմուտ բանվորներ ու աշխատողներ և մասնագետ ինժեներատեխնիկ կադրեր: Իմիգրացիոն հոսքերի մի մասը պայմանավորված էր հմուտ աշխատուժի կարիքով և աշխատատեղերի առկայությամբ: Արդյունքում 1956-ին Խուզստան նահանգը իմիգրացիոն հոսքեր ընդունող բևեռներից մեկն էր Իրանում:

Իրան-Իրաք ութամյա պատերազմի

ընթացքում (1980–1988 թթ.) Իրանի հարավային քաղաքների՝ Խորամշահի և Աբադանի ավերածությունը և այդ շրջանների նավթարդյունաբերական հսկայական կենտրոնների կործանումը ավելի խթանեցին դեպի Ահվազ քաղաք բնակչության հոսքերը, քանի որ Ահվազը համեմատաբար ավելի անվտանգ պայմաններում էր գտնվում: Պատերազմական տարիներին Ահվազ քաղաքի մոտակայքում գտնվող գյուղերը ևս ընդունեցին որոշակի թվով գաղթականներ և պատերազմական փախստականներ:

Խոշոր քաղաքների եզրերում և շրջակայքում մեծ թվով փախստականների և գաղթականների բնակություն հաստատելը, տարբեր մշակույթներով ու կարգավիճակով մարդկանց և խմբերի կուտակումները, նրանց սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակը, կյանքի անկայուն պայմանները, գործազրկությունը և այլ նման գործոններն ու դժվարությունները ստեղծեցին յուրահատուկ միջավայր և իրավիճակ: Քաղաքային սոցիոլոգիայի հետազոտությունները վկայում են, որ քաղաքների մերձակայքում և եզրերում ձևավորված նման թաղամասերը վերածվում են հանցագործությունների կենտրոնների: Տնտեսական առումով ևս ոչ-մասնագետ փախստականների ու գաղթականների հոսքերը մեծացնում են թաքնված գործազրկության ցուցանիշները և հանգեցնում սպասարկման ոլորտի անտեղի ուռձացման:

Գծապատկեր 1. Դեպի Ահվազ քաղաք խմբագրյալ հոսքի գործոնները:

Խոշոր քաղաքներում ապրուստի բարձր գները, շքեղ կյանքը, սոցիալական խավերի ու խմբերի միջև կարգավիճակների մեծ ձեղքը պատճառ են դառնում, որ ոչ-մասնագետ գաղթականներն իրենց ապրուստը հայթհայթելու համար ցանկացած միջոցի դիմեն, թեկուզ ապօրինի գործունեության: Եզրային թաղամասերում մեծ տարածում են գտնում հակասոցիալական տարբեր վարքագծերը՝ գողությունը, մարմնավաճառությունը,

թմրամոլությունը, ապրանքների ապօրինի առուվաճառքը և այլն: Գաղթականները մշտապես մի շարք խնդիրներ ունեն կապված բնակության վայրի և զբաղվածության հետ, այդ իսկ պատճառով պատերազմի տարիներին գաղթականների կարիքների բավարարման հետևանքով Ահվազ քաղաքը տարածական ընդլայնում ունեցավ:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Ահվազ քաղաքի բնակչությունը 1966–1996 թթ. 120098–ի սահմանից հասավ 800000–ի մակարդակին, իսկ նրա տարածքի մակերեսը 2500 հեկտարից հասավ՝ 20615 հեկտարի: Տարիների ընթացքին գաղթածների թվի աճով և քաղաքի տարբեր վայրերում նրանց կուտակումներին զուգընթաց եզրային հատվածները ներառվեցին քաղաքում: Գաղթականները սովորաբար քաղաքի ամենաաղքատ խավերն են կազմում, նրանց բնակության տարածքները սովորաբար տարբեր կենցաղային դժվարություններ ունեն կապված առողջապահության, առողջության և ֆիզիկական պայմաններին: Նրանց տեղաշարժերը բարձացնում են տրանսպորտի գները, իսկ քաղաքի կենսամակարդակն ու չափորոշիչները իջեցնում: Սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները տարբեր բացասական հետևանքներ և անցանկալի ցարգացումներ են արձանագրում քաղաքային կյանքում:

Քաղաքի եզրային տարածքներն ու թաղամասերն ունեն ֆիզիկական, անվտանգության և միջավայրի լուրջ խնդիրներ: Օրինակ՝ Մալաշիա շրջանում չկան կոյուղու խողովակագծեր, կենցաղային կեղտաջրերը բաց առուների միջոցով են հեռացվում՝ թափվելով կոյուղու ջրերի համար նախատեսված ջրափոսում: Այս վիճակը գարշահոտի հետ միասին չափազանց վտանգավոր է առողջության համար և աղտոտում է շրջակա միջավայրը: Վնասներն ավելի մեծ են, հատկապես՝ ամռան եղանակին, երբ անտանելի պայմաններ են ստեղծվում այդ տարածքի բնակիչների համար: Նման

պայմաններում այդ տարածքը մեկուսացվում է հասարակությունից և սոցիալապես մերժվում, որով և նպաստավոր պայմաններ են ստեղծվում հակասոցիալական ու հանցագործ տարբեր երևույթների, տարրերի ու վարքագծերի համար:

Ահվազի քաղաքային զարգացման և սոցիալ-տնտեսական բարգավաճման պլաններում պետք է հատուկ ուշադրու-

թյուն դարձնել մարդկային աշխարհագրության ներկա հիմնախնդիրներին ու մարտահրավերներին, այսինքն միջոցներ ձեռնարկել իմիգրացիոն անկառավարելի հոսքերը կարգավորելու, նաև մերձքաղաքային գոտիներում բնակչության անկանոն կուտակումները և տարատեսակ արվարձանների ու գոտիների ձևավորումը կանխելու ուղղությամբ:

ՔՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ահվազի «Շահիդ Չամրան» համալսարան, Հետազոտական վարչություն, Թաղամասերի կարողունակության բարձրացման և ոչ պաշտոնական բնակության մասին ուսումնասիրություններ, Ա. փուլ, Ահվազ, 2006թ.:
2. Իրանի Խուզստանի նահանգապետարան, Տեղեկատվության և վիճակագրության գրքենյակ, Վիճակագրական տարեգիրք, Ահվազ, 2010թ.:
3. Իրանի Հանքարդյունաբերության նախարարություն, Իրանի երկրաբանական գիտությունների տվյալների ազգային բազա, Թեհրան, 2007թ.:
4. Ա. Թաղինեժադ, Քաղաքային զարգացման մոդելավորումը՝ GIS-ի կիրառմամբ, Ահվազի «Շահիդ Չամրան» համալսարան, Երկրաբանության ֆակուլտետ, Ահվազ, 2009:
5. Ք. Փուրքազեմ, Խուզստանի պատմական աշխարհագրություն, «Այաթ» մշակութային հիմնարկի հրատարակություն, Ահվազ, 1994թ.:

НАБЛЮДЕНИЯ О ГЕОГРАФИИ ЧЕЛОВЕКА В ИРАНСКОМ ГОРОДЕ АЙВАЗ

АБДУЛЛА ЯРАХМАДИ

ЕГУ, кафедра географии, аспирант

Айваз является центром провинции Хузстан и одним из важнейших городов Ирана. Он имеет глубокое прошлое и богатый опыт урбанизации. В планах городского развития и социально-экономического процветания необходимо уделять особое внимание актуальным проблемам и вызовам в области географии человека, то есть росту населения, неконтролируемым миграционным потокам из других регионов, аномальным скоплениям населения в пригородных районах, а также стихийному формированию различных типов пригородов.

OBSERVATIONS ON HUMAN GEOGRAPHY OF AHVAZ CITY OF IRAN

ABDOLLAH YARAHMADI

YSU, Faculty of Geography and Geology, Postgraduate

Ahvaz is the center of Khuzstan province and one of the most important cities of Iran. It has long-standing urbanization past and great experience. In Ahvaz plans of urban development and socio-economic prosperity it is necessary to pay special attention to current issues and challenges of human geography, i.e. population growth, uncontrolled immigration flows from other regions, suburban areas and the spontaneous formation of abnormal accumulations of different types of suburbs.

ЭНЕРГЕТИЧЕСКИЙ СЕКТОР АРМЕНИИ И КОНЦЕПЦИЯ «УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ»

На развитие человеческой цивилизации существенное влияние оказывала и оказывает энергетика. Энергетический сектор является одним из важных индикаторов социально–экономического развития общества. С другой стороны, используемые сейчас энергоресурсы конечны и оказывают значительное негативное влияние на природную среду. Статья посвящена системному анализу энергетического сектора РА в контексте «устойчивого развития». Предложены ряд мер, направленных на разработку стратегий устойчивого развития энергетического сектора Армении.

Ключевые слова: устойчивое развитие, системный анализ, энергетическая система, ВИЭ.

Начиная с 1980–х в области экономики, экологии, социологии глобалистики широкое распространение получила концепция устойчивого развития. Она обозначает социальное, экономическое и экологическое развитие, направленное на удовлетворение потребностей людей при одновременном улучшении качества жизни живущих сейчас и будущих поколений, на бережное использование ресурсов планеты и сохранение природной среды. Большая часть используемых в настоящее время энергоресурсов, основанных на ограниченных ресурсах ископаемых видов топлива, считается экологически неустойчивой. Все виды производства энергии значительно влияют на природную среду и это влияние уже приняло глобальный характер.

Перспективы развития человеческой цивилизации в контексте климат–энер-

гетика—общество в последние годы определялась двумя событиями:

- Саммит ООН в области устойчивого развития в штаб–квартире ООН, Нью–Йорк, 2015. На этом саммите было одобрены 17 целей устойчивого развития, которые заменили принятые в 2000 г. цели развития тысячелетия

- Конференция ООН в области изменения климата, состоявшаяся в 2015 в Париже. Во время конференции было принято соглашение, определившее в глобальном масштабе для всех стран условия в области сокращения выбросов парниковых газов и адаптации к изменением климата с расчетом на стабилизацию глобальной температуры к 2100 году на уровне не более 2 градусов выше доиндустриального уровня.

По результатам этих двух событий были определены примерные рамки пути развития мировой энергетики. Была отмечена особая роль альтернативной энергетики, включающей в себя повышение роли энергоэффективных технологий и возобновляющих источников энергии (ВИЭ).

В целом процесс глобального перехода к ВИЭ обеспечен высоким уровнем аналитической поддержки и проработки квалифицированными специалистами в области науки в данной области, в том числе учеными и специалистами Международного энергетического агентства, группы Всемирного банка и так далее.

Во многих развитых странах существуют национальные программы развития ВИЭ. Благодаря этим программам решаются научно–технические, энергетичес-

кие, экологические, социальные и многие другие задачи. Поставленные задачи достигаются с помощью решения задач энергетической и экологической политики. Инструментами для решения таких задач являются льготное кредитование, налоговые льготы, создание информационной сети, системы специального образования, создание рабочих мест и т.д.

Помимо диверсификации источников производства энергии, в рамках которого растет доля ВИЭ, к мировым трендам в сфере энергетики относится отход от нынешней энергетической модели. Сейчас данная модель основана на эксплуатаций 100 крупнейших месторождений ископаемого топлива, больших мощностях и крупных технологиях производства, централизованных способах передачи энергии. В новой, будущей энергетической модели будут маленькие и средние производители энергий, обеспечивающий локальную и распределенную генерацию и передачу энергии с помощью умных технологий и сетей на основе ВИЭ.

Такая модель предполагает качественные и количественные изменения в использовании природных ресурсов на локальном уровне, а так же человеческого капитала–трудовых ресурсов и интеллектуального капитала.

Для лиц, принимающих решение, важно учитывать экономические, социальные и экологические последствия при выборе производства, доставки и использования энергии. Разработчикам стратегий нужны методы измерения и оценки нынешнего и будущего влияния использования энергии на здоровье человека, общество, воздух и воду. Они должны определить, является ли нынешнее потребление энергии устойчивым, и если нет, то как изменить его так, чтобы оно стало таковым.

Республика Армения официально заявила, что движется по пути устойчивого развития. В 2002 был создан националь-

ный совет по устойчивому развитию и разработана программа устойчивого развития страны.

Энергетический сектор Армении вышел из серьезного кризиса, который начался после развала СССР, и перешел к более стабильному состоянию. Сейчас лица, принимающие решения, вместо того, чтобы спасти энергетическую систему от тотального коллапса, могут сфокусироваться на проблемах, которые характерны для развитых стран – обеспечение доступного, надежного и экологически чистого энергоснабжения. Соответствие энергетического сектора Армении данным критериям и будет залогом успеха устойчивого развития страны. Для анализа энергетического сектора Армении по критериям устойчивого развития (экономическим, экологическим и социальным) в данном исследовании методологическими инструментами были выбраны системный анализ и теория систем, поскольку энергетический сектор Армении является сложной, открытой системой. Такой инструмент позволяет увидеть все обратные связи между подсистемами и элементами, выявить критические участки и оптимальные точки влияния на объект исследования[1].

Сложная система — составной объект, части которого можно рассматривать как системы, закономерно объединенные в единое целое в соответствии с определенными принципами или связанные между собой заданными отношениями [1].

Энергетическую систему Армении, учитывая концепцию устойчивого развития, можно расчленить на конечное число частей, называемое подсистемами:

- социальная подсистема;
- экономическая подсистема;
- экологическая подсистема;
- государственная или институциональная подсистема.

Каждую такую подсистему (высшего уровня) можно, в свою очередь, расчле-

нить на конечное число более мелких подсистем, вплоть до получения подсистем первого уровня, т. е. элементов сложной системы, которые либо объективно не подлежат расчленению на части, либо нецелесообразно их расчленять в связи с масштабами исследования или ее целей. Например, элементами экономической подсистемы энергетической системы являются объекты инфраструктуры, например, генерирующие мощности, и их дальнейшее раздробление не имеет смысла.

Подсистема, таким образом, с одной стороны, сама является сложной системой из нескольких элементов (подсистем низшего уровня), а с другой стороны — элементом системы высшего уровня.

Энергетическая система Армении, являющаяся открытой системой, взаимодействует с внешней средой (другими системами). Под внешней средой понимается совокупность объектов, не являющихся элементами данной сложной системы, но взаимодействие с которыми учитывается при ее изучении.

Окружающую среду для энергетической системы мы представим в виде надсистемы, включающей себя соседние страны и не только.

Элементы сложной системы функционируют не изолированно друг от друга, а во взаимодействии. Свойства сложной системы в целом определяются не только свойствами элементов, но и характером взаимодействия между ними.

Между надсистемой, экологической подсистемой, социальной подсистемой, экономической подсистемой, государственной подсистемой осуществляется циркуляция потоков энергии, вещества, информации (ЭВИ) [1].

Данные подсистемы и ее элементы тесно взаимодействуют друг с другом, поэтому целесообразно исследовать такие объекты вместе, а не отдельно.

Целью такого анализа является комп-

лексный анализ состояния систем, оценка происходящих в них процессов, выявление критических участков. Это инструмент для разработки прогнозов и многовариантных сценариев отклика системы на природные явления и управленческие решения.

С помощью данного анализа можно выявить наиболее критические участки нашей системы, которые нуждаются в изменениях для устойчивого развития энергетической системы страны с помощью управляющих воздействий.

Выделим главные проблемы и задачи энергетического сектора Армении:

- энергетическая безопасность;
- технологическая безопасность;
- экологическая безопасность.

Энергетическая безопасность является частью национальной безопасности Армении и имеет огромное значение для республики. Ярким примером этого является энергетический кризис 90-х, когда была парализована вся инфраструктура страны. Тогда причиной энергетического кризиса было совокупное возмущающее воздействие нескольких факторов: отключение АЭС из-за землетрясения, прекращение поставок сырья для ТЭЦ из-за геополитической ситуации. Кризис в энергосистеме оказал сильное негативное воздействие на все подсистемы. Достаточно сказать, что лесные площади в республике резко сократились, потому что люди начали вырубать леса для получения энергии.

Для решение данной задачи рекомендуются следующие меры:

• Увеличение производство собственной первичной энергии. Поскольку у Армении нет ресурсов углеводородного топлива, то нужно делать акцент на возобновляемую энергетику, увеличив производства энергии с таких источников. Увеличивая производство с таких источников, давая им системную роль в общем производстве энергии, со време-

нем потребность импортировать сырье для производства энергии уменьшится. Тогда энергосистема не будет зависима от негативных возмущающих воздействий из надсистем, или хотя бы уменьшит такое влияние.

- Энергосбережение тоже является одним из пунктов обеспечения энергетической безопасности страны. Меры по энергосбережению гораздо дешевле, чем производство энергии, не оказывают никакого влияния на природную среду и дают ряд конкурентных преимуществ экономике страны. Стоит только отметить, что согласно оценке Международного Банка, Армения, инвестировав в энергосбережение, может сохранить природный газ, потратив около 40 % стоимости от такого же количества импортируемого газа, и сохранить электроэнергию, потратив 30 % от стоимости новой энергогенерирующей установки для производства такого же количества электроэнергии[2].

- Диверсификация энергопоставок тоже имеет важное значение для обеспечения энергетической безопасности. Сейчас государство импортирует энергоносители из Ирана и России. Энергоносителями являются природный газ, нефтепродукты, уран(твэлы). Недавно построенный газопровод Иран–Россия существенно повысил энергетическую безопасность страны. В случае необходимости поставки газа из Ирана могут обеспечить внутреннюю потребность страны. Нефтепродукты ввозятся из России через Грузию, и пока этому пути нет альтернативы. В последнее время идут разговоры о строительстве прохода нефтепродуктов из Ирана, однако этот проект пока экономически неэффективен. Поскольку геополитическая ситуация в регионе сложная, то импорт энергии из других стран(Азербайджан) пока невозможен[3].

- Отдельно нужно поговорить об АЭС, касаясь энергетической безопасности. Сырье для АЭС импортируется из Рос-

сии. У Армении есть некоторые урановые месторождения, но в любом случае ее нужно переработать в России. Энергетический кризис 1990–х показал, что АЭС имел ключевую роль при преодолении кризиса. Преимущество АЭС с точки зрения энергетической безопасности заключается в том, что ее нужно заправлять раз в год, и в течении года станция будет производить фиксированное количество электроэнергии.

- Увеличение хранилищ для газа и нефтепродуктов тоже может способствовать стабильности энергосистемы. Абовянское газохранилище сейчас может обеспечить газом страну около месяца при определенных негативных обстоятельствах.

- Модернизация и энергоэффективность энергогенерирующих мощностей. При такой модернизации существенно можно увеличить производство энергий, не увеличивая изъятие ресурсов из экологической подсистемы и или импорт энергоресурсов.

- Доступ к энергии: энергетическая безопасность и устойчивое развитие предполагает доступную энергию с приемлемой ценой для населения. Сейчас цены на энергию в Армении относительно низкие. Причиной тому является импорт природного газа из России ниже рыночных цен (как стратегическому партнеру), дешевая себестоимость электроэнергии, вырабатываемый АЭС, поскольку станция была построена во время СССР и не стоит вопроса о возврате инвестиций. Ситуация с этой точки зрения поменяется, поскольку в скором времени нужно замещать устаревшие установки на новые, включая АЭС. Армения имеет высокую степень газификации и электрификации на данный момент.

Энергетическая система Армении является одним из самых важных секторов экономики, если не самым важным. И конечно, она оказывает значительное влияние на окружающую среду и насе-

ление, на социальную и экологическую подсистему, и даже на надсистему. Такое воздействие оказывается в результате строительства и эксплуатации элементов экономической подсистемы, а именно АЭС, ТЭЦ, ГЭС.

В результате строительства Севан–Разданского каскада забор воды из озера Севан оказался чрезмерным. В результате нарушилась экосистема озера Севан, единственного крупного источника пресной воды в стране и в регионе и его парка.

Падение уровня озера в совокупности с увеличением выбросов сточных вод отрицательно сказалось на биохимическом обороте веществ, привело к нарушению нормальной деятельности экосистем, что в конечном итоге повлекло за собой процесс эвтрофикации — увеличение накопления органических веществ в воде. Качественно поменялась биота экосистемы от лососевых к карповым. Данная проблема коснулась так же социальной подсистемы – многие сельские жители, которые занимались рыбной ловлей, лишились источника заработка (многие сельские жители находятся за чертой бедности).

Недавно был закончен гидротехнический туннель Арпа– Севан, через которую из реки Арпа перебрасывают воду в Севан. В результате уровень воды в озере вновь начался подниматься.

Данный каскад уже построен и огромной вред окружающей среде нанесен. Сейчас нужно рационально воспользоваться этим ресурсом и максимизировать выработку энергии с данных электростанций, инвестируя в их модернизацию.

В последнее время некоторые экологи говорят о некоторых проблемах с МГЭС. В результате развития ВЭ на одной реке работает по несколько ГЭС, что оказывает некоторое влияние на окружающую среду. В этом вопросе нужно быть осторожными.

Сейчас наблюдается рост строительст-

ва ГЭС, и в особенности МГЭС. Это положительное явление, поскольку такие станции оказывают гораздо меньшее влияние на окружающую среду, чем другие станции.

Самые большие выбросы из энергетической системы Армении наблюдаются из ТЭС. Кроме основных компонентов, образующихся в результате сжигания органического топлива (углекислого газа и воды), выбросы ТЭС содержат пылевые частицы различного состава, оксиды серы, оксиды азота, фтористые соединения, оксиды металлов, газообразные продукты неполного сгорания топлива. Деятельность ТЭЦ негативно влияет и на экологическую подсистему, и на социальную подсистему. Уменьшение негативного воздействия данных источников может быть решено с помощью модернизации ТЭЦ, с одновременным повышением их энергоэффективности. Первые шаги были сделаны еще 1990–х годах, когда ТЭЦ от мазута перешли на экологические более чистый природный газ. Недавняя модернизация и строительство новых энергоблоков на Ереванской и Разданской ТЭЦ позволили существенно уменьшить выбросы в окружающую среду. Так, при работе нового энергоблока на Ереванской ТЭЦ, на тех же мощностях, что и другие электростанции, ее выбросы будут значительно ниже: оксиды азота — в девять раз меньше, углекислый газ — в два раза меньше, углеродный оксид — в 38 раз меньше, использование воды — 3,6 раза меньше [4].

Вдобавок новая электростанция на выработку 1 кВт/ч электроэнергии потратит в 2–2,3 раза меньше топлива (природный газ), чем другие электростанции страны. Такая эффективность позволит поставлять энергию населению по приемлемым тарифам (вопрос энергетической безопасности) [4].

Другим элементом экономической подсистемы, влияющим на окружающую

среду, на экологические и экономические подсистемы, является АЭС. АЭС в Армении состоит из двух энергоблоков с реакторами типа ВВЭР-440. Установленная тепловая мощность одного блока составляет 1375 МВт, электрическая мощность — 440 МВт. Действует только один реактор.

Главными источниками воздействия атомной электростанции на окружающую среду являются:

- Радиационный (через образующиеся в процессе работы АЭС жидкие, газообразные, аэрозольные и твердые радиоактивные отходы);
- Тепловой (при сбросе в водохранилище используемой для охлаждения ТВЭЛ-ов воды);
- Химический (жидкие отходы с токсичными веществами, образующимися при технологических операциях).

Но с другой стороны, АЭС обладает рядом экологических преимуществ. Наверное, главным из преимуществ является то, что АЭС не выбрасывает парниковых газов.

Отдельно нужно отметить отработанное ядерное топливо. Помимо электроэнергии атомные станции производят высокорadioактивные, среднерadioактивные и слаборadioактивные отходы, которые к тому же очень ядовиты. Их необходимо захоронить в безопасном месте на очень долгий срок. Для многих стран это проблема не решена, а для Армении с такой маленькой территорией это проблема особо актуальна. Строительство могильника в самой стране тоже очень сложно из-за сопротивления местного населения и трудностей поиска подходящей территории.

Для устойчивого развития энергетики нужно обеспечить адекватный уровень технологической безопасности производства энергии.

Принцип работы атомной электростанции очень прост – это обычное пре-

образование тепловой энергии в электрическую, однако та опасность, которую несет этот процесс, по масштабам ущерба в случае катастрофы, может мало чем сравниться.

Учитывая расположение АЭС в Армении – ее территориальную близость от столицы, малые размеры страны, сейсмоопасность территории и технологическую сложность самой станции, АЭС в Армении вызывает самую большую опасность с точки зрения технологической безопасности по сравнению с другими станциями. Так, в Армении нет ГЭС с платиной, разрушение которых представляют собой самый большой риск, а тепловые станции являются относительно безопасными, так как даже при самой крупной и тяжелой аварии на ТЭС ее масштабы ограничиваются частью территории самой станции. Как показали недавние события в Японии, человек еще не может справиться с энергией атома в полной мере.

Совершенно новый масштаб опасности стал очевиден после террористических атак 11 сентября 2001 года в Нью-Йорке и Вашингтоне. Поэтому мы вынуждены очень серьезно отнестись к включению возможных террористических атак в число факторов риска АЭС. Вероятность таких атак значительно возросла после 11 сентября 2001 года.

В заключении можно сказать, что поскольку правительство приняло решение продлить сроки эксплуатации действующей АЭС, то необходимы меры и инвестиции по повышению мер безопасности эксплуатации АЭС.

А намерения строить новую АЭС для обеспечения потребностей страны в энергии после закрытия АЭС нужно подвергнуть тщательному анализу. Альтернативами могут служить замена элемента экономической АЭС другими элементами, или со временем (до срока закрытия АЭС) увеличить производство возобновляемой энергии в достаточной мере, принять

меры по энергосбережению (уменьшить энергоемкость ВВП), модернизировать и повысить энергоэффективность действующих элементов экономической подсистемы. Комбинируя такие шаги, можно придумать стратегию устойчивого развития энергетической системы Армении. Такие комбинации осуществляются через управляющие меры. Такие меры включают экономические, институциональные, юридические и другие меры. Управляющие потоки позволяют менять (увеличивать, уменьшать) потоки ЭВИ, определять их направление, менять структуру энергосистемы. Совокупность таких управляющих воздействий, в зависимости от их сочетания, дает определенные стратегии.

До закрытия атомной станции нужно наращивать генерирующие мощности, чтобы заменить Мецаморскую АЭС. Сейчас энергосистема Армении может удовлетворить внутренние потребности страны без АЭС, останавливая экспорт. Это происходит во время плановых ремонтных работ АЭС. Схема работы энергосистемы такая же, как в стратегии устойчивого развития энергетики – ТЭЦ работают как базовые источники энергии, а возобновляемая энергетика является балансирующим источником.

Но для повышения энергетической безопасности страны, удовлетворения роста энергопотребления, сохранения экспорта и гибкости энергосистемы нужно наращивать генерирующие мощности экологически и техногенно безопасным путем. Возобновляемые источники энергии удовлетворяют всем этим критериям. Не тратя огромные деньги на АЭС и концентрируя их на развитие возобновляемой энергетики, нужно увеличивать производство энергии с этих источников. Они экологически и техногенно безопасны и позволяют производить первичную энергию внутри энергосистемы и меньше зависеть от импорта энергоресурсов вне

энергосистемы.

Очень важна инфраструктура энергосистемы. С развитием возобновляемой энергетики, с децентрализацией энергосистемы потребители будут иметь возможность самим производить энергию и передавать их в общую сеть. Такая практика уже используется в некоторых странах, и в частности, в Германии. К такому механизму, в первую очередь, относятся технологии солнечной энергетики. Она сейчас является самой дорогой, но ее стоимость неуклонно уменьшается, а эффективность растет (эффект обучаемости). Инфраструктура с АЭС будет определена на 60 лет, и ее не менять [5].

К этому времени технологии солнечной энергетики в гораздо большей степени будут доступны для населения. Армения имеет большие возможности в этой сфере. Потенциал солнечной энергетики в Армении очень большой. Годовой показатель поступления солнечной энергии на 1 кв.м плоской поверхности в Армении составляет 1720 кВт.ч/кв.м, в то время как средневропейский показатель – 1000 кВт.ч/кв.м [6].

Существует также научно-технический потенциал для этого и несколько предприятий уже производят такие батареи (правда не массово). В Армении также существуют большие ресурсы кремния соответствующей чистоты для производство солнечных батарей. То есть существует возможность создания нового сектора промышленности с полной цепочкой производства.

Стратегия устойчивого развития энергетики должна решить основные задачи, стоящие перед энергетическим сектором страны. Основные принципы такой стратегии совпадают с принципами устойчивого развития. Энергия должна производиться путем экологически чистым, технически безопасным и социально доступным для населения.

ЛИТЕРАТУРА

1. Аполов О.Г. Теория систем и системный анализ. 2012, с. 77–107.
2. World Bank Working Paper № 74. From Crisis to Stability in the Armenian Power Sector, 2006.
3. Вестник Нижегородского университета. Сотрудничество Республики Армения и Исламской Республики Иран в энергетической сфере, №4 , с. 347, 2012.
4. World Bank Working Paper № 74. From Crisis to Stability in the Armenian Power Sector, 2006.
5. Mark Cooper. The economics of nuclear reactors: Renaissance or relapse?, 2009.
6. USAID. Overview on Solar Electric Power in Buildings with Applications in Armenia, 2011.

ENERGY SECTOR OF ARMENIA AND THE CONCEPT OF SUSTAINABLE DEVELOPMENT

GRIGOR ZAKHARYAN

*Saint Petersburg State University, Institute of Earth Sciences
Department of environmental safety and sustainable development of regions, PHD student*

Energy has always had a significant impact on the development of human civilization. The energy sector is one of the important indicators of the socio-economic development of society. On the other hand, energy resources , which are used now have significant negative impact on the natural environment. The article focuses on the system analysis of the energy sector of RA in the context of sustainable development concept and presents a number of approaches aimed to develop the strategy of sustainable development of Armenia.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏԸ «ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԶԱԽԱՐՅԱՆ

*Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան, Երկրի մասին գիտությունների ինստիտուտ,
Շրջակա միջավայրի անվտանգության և տարածքների կայուն զարգացման ամբիոն, ապիրանտ*

Էներգետիկան միշտ ունեցել է զգալի ազդեցություն մարդկային քաղաքակրթության զարգացման վրա: Էներգետիկ ոլորտը նաև կարևոր ցուցանիշ է հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման համար: Մյուս կողմից՝ էներգետիկ ռեսուրսները, որոնք օգտագործվում են հիմա, ունեն զգալի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Հոդվածը վերաբերում է ՀՀ էներգետիկ ոլորտի սիստեմատիկ վերլուծությանը «Կայուն զարգացում» հասկացության համատեքստում և ներկայացնում է մի շարք մոտեցումներ, որոնց նպատակն է զարգացնել Հայաստանի կայուն զարգացման ռազմավարությունը:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՀԱՎՈՒՅՄԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, դեկան, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԻԼԻԹ ԻԱԶՏԱՐՅԱՆ

Հոգեբան «Շվեդական Ապալեն» բժշկական սառցաղցի

ԾՆՈՂ-ԴԵՌՄԱՏԱ ՓՈԽՎՈՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆՑՄԱՆ ԴԵՍՏՐՈԿՑԻԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՌՄԱՏԱՆԵՐԻ ՄՈՏ:

Հոգվածում ներկայացված են սեռադերային նույնականացման համար կարևորագույն սեռային սոցիալիզացիայի աղբյուր ծնողական փոխհարաբերությունների դերն ու նշանակությունը: Ներկայացված են նաև սեռադերային նույնականացման դետրոնկցիաների դեպքում դեռահասների և ծնողների փոխհարաբերությունների ձևերն ու դրսևորումները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սեռադերային, նույնականացում, դետրոնկցիա, սոցիալիզացիա, ընտանեկան, փոխհարաբերություններ, դեռահասություն:

Սեռադերային նույնականացման դետրոնկցիաները ի հայտ են գալիս անբավարար սեռադերային սոցիալիզացիայի պայմաններում և կարևորագույն սոցիալիզացիայի աղբյուր համարվում է ընտանեկան փոխհարաբերությունները, ծնողական կերպարի նկատմամբ ունեցած հուզական հարաբերությունները, հեղինակության գործոնը և հարաբերության ձևը ինչպես ծնողների այնպես էլ ծնողների և երեխաների միջև:

Ն. Ն. Օբոզովը գտնում է, որ դեռահասների սոցիալիզացիան բարդացել է, որը կապված է սոցիալիզացիայի հիմնական ինստիտուտ ընտանիքի հետ: Նա գտնում է, որ փոքրացել է ընտանիքի կայունությունը և հոր ավանդական դերը, փոխվել է կնոջ աշխատանքային զբաղվածությունը, ներընտանեկան հարաբերությունների ոճը

[62, էջ 8]:

Ավանդաբար կինը և տղամարդը տարբեր չափանիշներով են գնահատվել: Մեր օրերում պարտականությունների բաշխումը կախված է ոչ թե սեռից, որքան զույգերի անհատական առանձնահատկություններից, որը երբեմն կոնֆլիկտի առաջացման նախապայման է դառնում: Նա գտնում է, որ մեր ժամանակներում հատկապես հոր դերն է դարձել պրոբլեմային [62, էջ 9]:

Խ.Ռեմշմիդտը փորձում է ներկայացնել դեռահասության փուլում առաջացող դժվարությունները կոնֆլիկտի տեսանկյունից:

Նա գտնում է, որ հասունացումը կոնֆլիկտով է պայմանավորված, ինչը հաճախ շեղվող վարք է առաջացնում: Կոնֆլիկտի առաջացման կարևոր շրջանակը ծնողական տունն է, ռեֆերենտ խումբը [72, էջ 184]:

Պ. Մասենը և այլք գտնում են, որ ծնողների հետ ունեցած փոխհարաբերության ձևով որոշվում է, թե որքան հեշտ է դեռահասը ձեռք բերում ինքնուրույնություն, ինքնավստահություն իր ուժերում, տարբեր հմտություններ, ինչպես նաև դրական ինքնագնահատական [56, էջ 148]:

Ի.Ս. Կոնը մեծ նշանակություն է տալիս սոցիալիզացիայի կարևոր ինստիտուտ ընտանիքին, որի ձևերը ժամանակի ընթացքում փոփոխվում են, սակայն նրա ազդեցության նկատմամբ երեխան ամենաշատն է ընկալունակ [37, էջ 107]: Նա անդրա-

դառնում է մի քանի հարաբերական ինքնավար հոգեբանական մեխանիզմների, որոնց միջոցով ծնողները ներգործում են իրենց երեխաների վրա:

Առաջինը կոչվում է «ամրացում», երբ մեծահասակները երեխայի վարքը համարում են ձիշտ, խրախուսում են և պատժում են, երբ համարում են վարքը սխալ:

Երկրորդ մեխանիզմը «նույնականացումն» է. երեխան նմանվում է ծնողին, կողմնորոշվում է նրա օրինակով, ձգտում է նմանվել նրան:

Երրորդ մեխանիզմը «հասկացումն» է, երբ ծնողները, իմանալով նրա ներքին աշխարհը, փորձում են դուրս հանել պրոբլեմային իրավիճակից, ձևավորում են նրա ինքնագիտակցությունը և հաղորդակցական որակը [37, էջ 108]:

Նա կարևորում է նաև ընտանեկան փոխհարաբերություններում հուզական տոնը, ինչպես նաև հսկողության և վերահսկողության ընտանեկան տիպը:

Դաստիարակության առաջին միջոցը համարվում է ուշադրությունը և խրախուսանքը, երկրորդ միջոցը՝ խստությունը և պատիժը: Հետազոտությունները ցույց են տվել առաջինի առավելությունը: Երեխան, որը զրկված է ուժեղ ծնողական սիրուց, ինքնահարգանքի քիչ հնարավորություն ունի, այլ մարդկանց հետ ջերմ և ընկերական հարաբերություններ չի կարողանում կազմել: Երեխաները, ովքեր ներքին, հոգեֆիզիոլոգիական և հոգետոմատիկ խանգարումներ ունեն դժվար են շփվում, դժվարություններ ունեն մտավոր գործունեության կամ ուսուցման մեջ, որը ծնողական ուշադրության և ջերմության ոչ բավարար մակարդակով է պայմանավորված [37, էջ 108]:

Ի.Ս.Կոնը գտնում է, որ անբարյացակամ վերաբերմունքը կամ անուշադրությունը ծնողների կողմից երեխաների մեջ կարող է առաջացնել թշնամանքի ռեակցիա: Ընտանեկան դաստիարակության հուզական տիպը կապված է որոշակի տեսակի հսկողության և վերահսկողության հետ: Սա վերաբերում է ներընտանեկան հա-

ղորդակցման ձևին, որով մի կողմից՝ հարաբերություններում գերակայությունը, բացառիկությունը տրվում է ծնողին, մյուս դեպքում տրվում է երեխային:

Այս մոտեցումներում քննարկված են սոցիալիզացիայի ինստիտուտի՝ ընտանիքի դերի կարևորությունը, որը նպաստում է ընտանիքում մեծացող դեռահասի հոգեբանական հարմարմանը: Հատկապես հոգեբանական ինքնավար մեխանիզմների, հուզական կապի և վերահսկողության ձևերին է մեծ կարևորություն տրվում, որի հետ համաձայն ենք նաև մենք: Նա անդրադարձել է նաև դաստիարակության ոճերին և բացասական արդյունքներ տվող դաստիարակության ոճ է ավտորիտար կամ լիբերալ «ամենաթողության» տիպը: Ավտորիտար ոճը առաջացնում է օտարացում, երեխան իրեն զգում է անկարևոր և անցանկալի:

Ամենաթողության դաստիարակության դեպքում դեռահասների մոտ առաջանում է զգացողություն, որ ծնողները իրենցով հետաքրքրված չեն: Բացի դրանից՝ այս դեպքում ծնողները ընդօրինակման աղբյուր չեն դառնում: Դպրոցը, հասակակիցները և ս ընդօրինակման աղբյուր չեն այս դեպքում, և երեխան մնում է առանց կողմնորոշիչի [37, էջ 110]:

Վ. Գ. Կազանսկայան և ս անդրադառնում է ընտանիքին, որը համարում է անբարենպաստ դեռահասների ձևավորման հիմնական աղբյուրը: Անբարենպաստ դեռահասները ունենում են ոչ կոմֆորտություն, լարվածություն, դժգոհություն իրենից և իր շրջապատից: Հուզական լարվածությունը, կոնֆլիկտայնությունը, գերինամքը, կամ թերինամքը, ավտորիտար ոճը, դեռահասի նկատմամբ ոչ համապատասխան մակարդակով պահանջը, անբավարար սոցիալ հոգեբանական մթնոլորտը, նյութական վիճակը դեռահասի սոցիալիզացիան որոշող պայմաններն են: Բարենպաստ սոցիալիզացիան տեղի է ունենում դեռահասների և ծնողների միջև վստահության և աջակցման պայմաններում, ինչպես նաև հոգեբանական շփման

և ստեղծագործական զարգացման հեռանկարի առկայությամբ, ինքնադրսևորման հնարավորությամբ, անձի թույլ կողմերի փոխակերպումներով, նյութական ապահովվածությամբ, ուսուցման հնարավորությամբ [33]: Այս մեկնաբանության մեջ ևս հարմարման գործոնը ընտանիքի դերով է բացատրվում:

Այս մոտեցումներում քննարկվում է ընտանիքի կարևորությունը բարենպաստ սոցիալիզացիան ապահովվելու համար, ինչպես նաև հոգեբանական հարմարման կարևորագույն գործընթացը կարգավորելու համար:

Նույնականացման մեխանիզմը սովորաբար բացատրվում է ընտանիքում երկու սեռի ծնողական կերպարների հետ ունեցած հարաբերության ձևից և գերակայող դիրքերից:

Հոգեվերլուծությունը նույնականացումը դիտարկում է որպես վաղ շրջանում ձևավորված հուզական կապ այլ մարդու հետ: Փոքրիկ տղան հատուկ հետաքրքրություն ունի իր հոր նկատմամբ, ուզում է դառնալ նրա նման, քանի որ հայրը դառնում է նրա իդեալը: Այս նույնականացման հետ մեկտեղ տղան սկսում է մորը որպես հենարան ընկալել: Առաջանում է 2 հոգեբանական տարբեր կապեր՝ մորը վերաբերվում է որպես սեքսուալ օբյեկտ, հորը կերպար, որին նմանակում է: Հոգեբանական կապերի արդյունքում առաջանում է էդիպյան բարդույթը: Տղան նկատում է, որ մորը հասնելու ճանապարհին հայրը խանգարում է, և նմանակելու գործընթացը թշնամական բնույթ է ստանում, որը դրսևորվում է հորը փոխարինելու ձգտումով [9, էջ 488]:

Ն. Թոդորոն նույնականացման մեխանիզմը փորձում է մեկնաբանել ընտանիքում մոր գերակայող դիրքերից: Համաձայն նրա՝ նույնականացումը տղայի և աղջկա համար տարբեր ձևով է տեղի ունենում, քանի որ առաջին խնամքը կատարում է կինը [10, էջ 206]:

Երկու սեռերի երեխաներն էլ սկզբում նույնականացվում են մորը, քանի որ մոր

դերը տղամարդու համեմատ ավելի տեսանելի է: Այստեղ տղամարդու զարգացումը ավելի բարդ է, քան կնոջ դերը: Տղան պետք է կատարի նույնականացման փոփոխություն: Տղան, որպեսզի իրեն զգա տղամարդ, պետք է իրեն տարանջատի մորից, որը աղջկա համար կարևոր չէ: Ավելի շատ ինչով հաստատվում է տղամարդկայնությունը, հակառակն է կանացիության: Այսինքն՝ տղան այս ճանապարհը անցնում է կանացիության մերժումով:

Աղջկա համար տեղի է ունենում անձնային նույնականացում մորը, որովհետև մոր հետ կա անձնային հարաբերություն, որը վաղ առաջնային կապում է առաջացել, այսինքն՝ նա գիտի՝ ինչ է նշանակում լինել կանացի [10, էջ 207 – 209]:

Այս մոտեցումներում առաջ են քաշվում երեխայի համար կարևոր անձի հատկապես ծննդների հանդեպ ունեցած հարաբերությունները, հուզական կապը, ընդօրինակումը, ինչպես նաև, գիտակցական վերաբերմունքը իր վարքի մոդելավորման և կրկնօրինակման նկատմամբ: Սեռադերային նույնականացումը սկսվում է վաղ տարիքից և այն սոցիալական գործընթաց է, այսինքն կարևոր է նույնականացման օբյեկտի առկայությունը, նրա նկատմամբ ունեցած վերաբերմունքը և հուզականությունը:

Հասարակական պահանջների ոչ բավարար պայմանները, մոտեցումները, հարաբերությունների խաթարումները կարող են նպաստել սեռադերային վարքի և կարծրատիպերի փոխակերպումներին և խաթարումներին, որը նույնպես տարիքային տարբեր փուլերում ունենում է իր զարգացման և դրևորման առանձնահատկությունները: Հետևաբար նույնականացման օբյեկտ հանդիսացող ծնողական կերպարի նկատմամբ բացասական վերաբերմունքը, հուզական կապի խաթարվածությունը կամ ընդհանրապես օբյեկտի բացակայությունը հանգեցնում են նույնականացման գործընթացի դեստրուկցիաների, որոնք տարակերպ դրսևորումներ են ունենում, ուստի արտաքին հոգեբանական

գործոնները ունեն առաջնային և կարևորագույն նշանակություն նույնականացման գործընթացը մեկնաբանելու և կանխորոշելու համար: Կարող ենք ասել՝ եթե անբավարար են սեռային սոցիալիզացիայի պայմանները, ի հայտ են գալիս արդեն իսկ սեռադերային դեստրուկտիվ վարք, փոխակերպված դերեր և կարծրատիպեր, որի արդյունքում արական սեռի ներկայացուցիչներին բնորոշ են դառնում իգական սեռին համարժեք վարքային ձևեր, դերեր, պատկերացումներ և հակառակը՝ իգական սեռի ներկայացուցիչներին բնորոշ է դառնում արական սեռին համարժեք վարքային ձևեր, դերեր, պատկերացումներ, որը դեռահասության փուլում ունենում է իր յուրատիպ դրսևորումները:

Սեռային նույնականության խանգարումը կամ դեստրուկցիան հակառակ սեռի հետ ուժեղ և կայուն նույնականացման ձգտումն է, որն ուղեկցվում է սեփական սեռի նկատմամբ անհարմարվողականության զգացողությամբ [11 էջ 493]:

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև Գ. Մ. Վասիլչենկոյի հոգեսեռական զարգացման խանգարումների ուսումնասիրմանը, որտեղ նա քննարկում է սեռադերային վարքի փոխակերպում հասկացությունը, համաձայն որի, թեև պահպանված է սեռային ինքնագիտակցությունը, սակայն ձևավորվում է սեռադերային վարք, որը հատուկ է հակառակ սեռին:

Սեռադերային վարքի փոխակերպման ժամանակ սեռային ինքնագիտակցության խանգարումը լիտոգեն գործոնի համար միայն ֆոն է դառնում: Հիմնականում այն հիմնավորում է ծնողների դաստիարակության աղավաղումով, երբ երեխային վերաբերվում են որպես հակառակ սեռի ներկայացուցիչ, ինչպես նաև ընտանիքում առկա սեռական դերերի խանգարումով (հեղինակություն և գերակայություն վայելող մայր, ենթարկվող հայր, անլիարժեք ընտանիքներ, որտեղ մայրը տղային մեծացնում է կանացի սկզբունքներով, իսկ աղջիկների դեպքում, երբ բացակայում է մայրական սերը, որի արդյունքում առա-

ջանում է կնոջը ոչ հատուկ ագրեսիվություն, կոպտություն):

Այսինքն նա սեռադերային վարքի փոխակերպումը բացատրում է հոգեբանական խանգարումներով և փորձում է համեմատել տրանսեքսուալության հետ: Հիմնական տարբերակիչ հատկանիշը առանձնացնում է այլ սեռին պատկանելիության զգացողությունը, որը բնորոշ է տրանսեքսուալությանը:

Նա գտնում է, որ սեռադերային խանգարումը սկսվում է դերային խաղերում, երբ աղջիկը խաղում է ավտոմեքենաբերով, կռվում է տղաների հետ, վերցնում է հոր, ամուսնու կամ եղբոր դեր: Տղաները ավելի փափուկ, կանացի դերեր են ընտրում, խուսափում են կոնֆլիկտներից:

Նա գտնում է, որ սեռադերային խանգարումների ժամանակ ձգտում են հակառակ սեռի հազուստների, սրանով արտահայտվում է ձգտումը հակառակ սեռին, չնայած ինքնանույնացումը պահպանված է և առկա չէ սեքսուալ գունավորում [8]:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ մեր կատարված հետազոտության մեջ ներգրավվել ենք արդեն իսկ ընտրված որպես սեռադերային դեստրուկցիաներ ունեցող թվով 51 ուշ դեռահասության փուլի 13-15 տարեկան ներկայացուցիչների, որից՝ 28 աղջիկ և 23 տղա: Հետազոտությունն իրականացվել է Առողջության և կրթության հայկական կենտրոնի հոգեբանական ծառայության բաժնի, երևանի, Գյումրու, Վանաձորի այլընտրանքային վերականգնողական կենտրոնների, ՀՕՖ-ի, Օրբանի, ՍՈՍ մանկական գյուղերի, Երևան և Աբովյան քաղաքների 106, 134, 164, 10, 4 դպրոցների դեռահասաների շրջանում:

Հետազոտության իրականացման համար կիրառվել է Զ. Փարքերի կողմից մշակված երեխա-ծնող հարաբերությունների բացահայտման մեթոդիկա, որի նպատակը եղել է բացահայտելու սեռադերային նույնականացման դեստրուկցիաներ ունեցող դեռահասաների և ծնողների փոխհարաբերությունների ձևը:

Հետազոտության արդյունքներից եր-

ևում է, որ արական սեռի ներկայացուցիչների մոտ հոր հետ ունեցած հարաբերություններում ցածր (17%) է արտահայտվել ընդունման սանդղակի ցուցանիշը ի տարբերություն մոր հետ ունեցած հարաբերության ցուցանիշի (29): Սա մենք բացատրում ենք, որ սեռադերային նույնականացման դեստրուկցիաների դեպքում հոր կողմից հաստատված հուզական կապի ձևավորվածությունը խախտված է, դեռահասը նույն սեռի ներկայացուցիչ հանդիսացող ծնողի կողմից համապատասխան հոգատարության, սիրո և ուշադրության չի արժանանում, ինչը այլ բնույթ ունի մոր հետ կառուցած փոխհարաբերություններում: Կոնֆլիկտայնությունը բարձր է մոր (80%) և հոր (75%) հետ ունեցած հարաբերությունում: Բարձր են ստացվել մոր հսկողության (36%) և մոնիթորինգի (30%) ցուցանիշները՝ ի տարբերություն հոր հսկողության (29%) և մոնիթորինգի (22%) ցուցանիշների: Այս փաստը մենք բացատրում ենք այն հանգամանքով, որ սեռադերային նույնականության դեստրուկցիա ունեցող արական սեռի ներկայացուցիչների դաստիարակությամբ զբաղվում և սեփական կյանքի նկատմամբ հետաքրքրություն ու հսկողություն ցուցաբերում են ավելի շատ մայրերը և քիչ հայրերը: Հեղինակության սանդղակում բարձր են ստացվել մոր ցուցանիշները (70%)՝ ի տարբերություն հոր հեղինակության ցուցանիշների (35%):

Այս արդյունքներից կարող ենք դուրս բերել այն օրինաչափությունը, որ արական սեռի ներկայացուցիչների սեռադերային նույնականացման ձևավորման համար կարևոր է հոր հետ կառուցած հուզական կապի և փոխհարաբերությունների ինչպես նաև սոցիալական փորձի փոխանցման ձևերը: Սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դեպքում, կարևոր նույնականացման օբյեկտ հանդիսացող հայրական կերպարի կողմից առկա է լինում ոչ բավարար սեր, ուշադրություն և խաթարված հուզական կապի ձևավորվածություն, որի արդյունքում նույնականացման օբյեկտը դառնում է հակառակ

սեռ հանդիսացող ծնողական կերպարը: Սեռադերային նույնականացման դեստրուկցիաներ ունեցող արական սեռի ներկայացուցիչների կյանքի ձևերի, հետաքրքրությունների նկատմամբ միջամտություն և հսկողություն իրականացնում է ավելի շատ հակառակ սեռ հանդիսացող ծնողական կերպարը: Արտաքին ազդեցությունների խառնաշփոթը և աններդաշնակությունը, որպես օրինաչափություն, նպաստում է երկու սեռերի ծնողների հետ բարձրացված ներքին և արտաքին կոնֆլիկտայնության առաջացմանը:

Իգական սեռի ներկայացուցիչների մոտ բարձր ցուցանիշներով արտահայտվեց հոր հեղինակությունը (68%)՝ ի տարբերություն մոր հեղինակության (37%): Բարձր ցուցանիշներով արտահայտվել մոր խրախուսանքը (71%) ի տարբերության հոր (48%): Ցածր ցուցանիշներով են արտահայտվել ընդհանուր բավարարվածություն մոր և հոր հետ ունեցած հարաբերությունից (20%): Հոր հսկողության և մոնիթորինգի սանդղակը ցածր ցուցանիշներով է արտահայտվել (32%) և (30%)՝ ի տարբերություն մոր (40%) և (69%) : Անուսինների՝ մինչև նկատմամբ թշնամանքը նույնպես բարձր է, մայր (71%) և հայր (53%): Այս արդյունքներից կարող ենք դուրս բերել այն օրինաչափությունը, որ իգական սեռի ներկայացուցիչների մոտ, թեև պահպանված են մոր կողմից հսկողության, խրախուսանքի, կյանքի ձևերին միջամտության սահմանները, սակայն որպես նույնականացման օբյեկտ դառնում է իր համար հակառակ սեռի ծնողը: Ի տարբերություն արական սեռի ներկայացուցիչների՝ հակառակ սեռի ծնողը դառնում է նույնականացման օբյեկտ այլ ձանապարհով: Իգական սեռի ներկայացուցիչը նախընտրում է նույնականացվել հոր կերպարին, երբ նույնպես առկա է բացասական զգացողություններ հոր կերպարի նկատմամբ կամ երբ հակառակ սեռ հանդիսացող կերպարը դառնում է հեղինակություն իր համար և անտեսվում է նույնականացման օբյեկտ հանդիսացող մայրական կերպար

ըը:

Հետազոտության ընդհանուր արդյունքներից էլնելով՝ սեռադերային նույնականացման դետարուկցիաները կանխարգելելու նպատակով կարևոր ենք

համարում ներընտանեկան փոխհարաբերությունների շտկման և կարգավորման ուղղությամբ իրականացվող հոգեբանական աշխատանքների դերն ու նշանակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Обозова Н.Н. Возрастная психология: Юность-изрелость. ЛНПП 'облик' 2002, – 113 с
2. Ремшмидт Х. – Подростковый и юношеский возраст: Проблемы становления личности: Пер. с нем. – М.: Мир, 1994. – 320 с
3. Мессен П., Конджер Д., Каган Дж., Хьюстон А., Развитие личности ребенка, – М., Прогресс, 1987
4. Кон И. С. – Психология ранней юности. М., “Просвещение”, 1989, – 255 с
5. Казанская В.Г.– Подросток. Трудности взросления. / 2 – е издание, дополненное./ Питер. СПб: 2008
6. Формирование личности в переходный период: от подросткового к юношескому возрасту/ Под ред. Дубровиной. М.: Педагогика, 1987. – 184 с
7. Сексопатология: справочник/ под ред. Г.С.Василченко/. 1990. – М., Медицина с.576
8. Фрейд З. Индентификация. В.кн.психология самосознания./Под ред.Д.Я.Райгородского. Самара, БАХРАМ–М, 2000, с.488 – 493
9. Чодороу Н. Воспроизводство материнства: Психоанализ и социология гендера/ М–РОССПЭН, 2006 – 496с
10. American Psychiatric Assosiation. 2005. Diagnostic and Statistical Manual of mental Disorders. Washington, DC: Am. Psychiatr. Assoc. 4th ed., text. Rev

ДЕТСКО–РОДИТЕЛЬСКИЕ ВЗАИМООТНОШЕНИЯ У ПОДРОСТКОВ, ИМЕЮЩИХ ДЕСТРУКЦИЮ СЕКСУАЛЬНО–РОЛЕВОЙ ИДЕНТИФИКАЦИИ

НАИРА АКОПЯН

*Международный научно–образовательный центр НАН РА, декан,
доктор психологических наук, профессор*

ЛИЛИТ ХАЧАТРЯН

Психолог, Ассоциация Врачей «Шведская Апавен»

В статье представлены роль и значение родительских взаимоотношений для подростково–ролевой идентификации как источник важнейшей половой социализации. Так же представлены формы и проявления детско–родительских взаимоотношений при деструкции сексуально–ролевой идентификации.

PARENT–CHILD RELATIONSHIPS OF TEENAGERS HAVING DESTRUCTION OF SEXUAL IDENTIFICATION

NAIRA HAKOBYAN

*Dean of the International Scientific–Educational Center of NAS RA
Doctor of Psychological Sciences, Professor*

LILIT KHACHATRYAN

Psychologist _ “Swedish Support” Medical Association

The article presents the role and value of parental relationship as an important source of socialization and sexual identification. There are presented forms and manifestations of relationships of teenagers and parents during sexual identity destruction.

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՀՈՒԶԱԿԱՆ
ԻՆՏԵԼԵԿՏԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Շատ երկրներում հուզական ինտելեկտի կիրառությունը տարբեր ոլորտներում (աշխատանքի ընտրություն, կրթության ոլորտի ընտրություն, ամուսնություն, կառավարման բարելավում, արդյունավետ, ամուր և առողջ հարաբերությունների ստեղծում և պահպանում) գնալով աճում է: Այս գործընթացը նկատելի է նաև մեր երկրի՝ Իրանի պարագայում, սակայն պետք է նշել, որ այստեղ պատշաճ ուշադրություն չի դարձվել հուզական ինտելեկտի ձևավորման հիմնախնդրին և որպես հետևանք՝ դրա արդյունավետությանը, հատկապես՝ ուսումնական առաջադիմության առումով:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ուսանող, անձնային հատկանիշներ, հուզական ինտելեկտ, հարաբերակցություն:

Հուզական ինտելեկտը ձեռքբերովի հատկություն ունի և այն հնարավոր է ձևավորել: Այս փաստը չափազանց կարևոր է, քանի որ նպատակաուղղված ուսումնական ծրագրերի պլանավորման և իրականացման հնարավորություն է ընձեռում: Հուզական ինտելեկտի ձևավորումը կյանքի տարբեր ոլորտներում դիմակայելու և գործունեությունը բարելավելու հնարավորություն է ստեղծում: Մեր հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Իրանի պաշտոնական կրթական համակարգում հուզական ինտելեկտը կամ անձնային գծերը զարգացնող դասընթացներ գոյություն չունեն:

«Հուզական ինտելեկտ» հասկացությանը տրվել են բազմաթիվ սահմանումներ ու բացատրություններ: «Ինտելեկտ» հասկացությանը տրվել են տարբեր սահմանումներ ու մեկնաբանություններ,

բայց հնարավոր չէ տալ ավարտուն և միանշանակ ձևակերպում: Բազմաթիվ սահմանումներից կարող ենք նշել Փինթերինը (1921թ.), ով ինտելեկտը համարել է կյանքի նոր իրավիճակներին լիարժեք հարմարվելու ընդունակություն: Նրա կարծիքով, հարմարումը հիմնականում կապ ունի ներվային համակարգի փոփոխվելիության հետ:

Հուզական ինտելեկտը միջավայրին հարմարվելու կարողություն է համարվում, ուրեմն ինտելեկտը մարդուն անհատականության և անձնավորության մաս է կազմում, այսինքն՝ ինտելեկտի այն մասը, որ արտահայտվում է միջանձնային և սոցիալական փոխհարաբերություններում կոչվում է հուզական ինտելեկտ: Հուզական ինտելեկտը որպես հոգեբանական նոր հասկացություն առաջացել է էմոցիոնալ և ճանաչողական կողմերի փոխկապացվածությունից: Հուզական ինտելեկտը բանականության և էմոցիաների փոխադարձ կապն է: Մարդիկ մեծ մասամբ սոսկ բանական էակ չեն և ոչ էլ սոսկ էմոցիոնալ էակ. այլ այդ երկուսի համադրությունը, հետևաբար անձի կարողությունը միջավայրի հետ հարմարվելու և կյանքի դժվարություններին համակերպվելու համար կախված է անձի հուզական ու բանական ունակությունների համադրված գործառնությունից:

Իրանի Իսլամական Հանրապետությունում հուզական ինտելեկտի և անձնային առանձնահատկությունների ոլորտում կատարված հետազոտություններ քիչ կան: Թեմային առնչվող գրականության ուսումնասիրությունը մեզ վստահեցրեց, որ հուզական ինտելեկտի, անձնային գծերի և ուսումնական

առաջադիմության հիմնախնդիրների վերաբերյալ տեսական նյութը համալրման և մշակման կարիք ունի:

Իրանի Բսլամական Հանրապետությունում հուզական ինտելեկտի և անձնային առանձնահատկությունների ոլորտում կարատված հետազոտություններ քիչ կան: Թեմային առնչվող գրականության ուսումնասիրությունը մեզ վստահեցրեց, որ հուզական ինտելեկտի, անձնային գծերի և ուսումնական առաջադիմության հիմնախնդիրների վերաբերյալ տեսական նյութը համալրման և մշակման կարիք ունի:

Ուսանողների անձնային հատկանիշների և նրանց հուզական ինտելեկտի փոխառնչություններն ու հարաբերակցությունը քննելու նպատակով սույն հետազոտության շրջանակում ներառել ենք Իրանի տեխնիկական և հումանիտար ֆակուլտետներից 400 ուսանողներ (201 ուսանող իգական սեռից և 199 ուսանող արական սեռից, որոնցից 235-ը ստովորում են տեխնիկական գիտաճյուղերում, իսկ 165-ը հումանիտար գիտություններում): Ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 31716 հոգի, որոնք և հետազոտության բազան են հանդիսանում:

Հետազոտության մեթոդը կորելացիոն տիպի է, որի համար Իրանի Ալբորզ և Ղազվին նահանգների պետական համալսարանների բակալավրիատում սովորող ուսանողների միջից (2011–2012 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում) կլաստերային նմուշառման և պարզ պատահականության սկզբունքով ընտրվել են 400 մասնակիցները, որոնք և համարվում են այս հետազոտության ընտրանքը:

Տվյալների հավաքագրման գործիքները հետևյալն են՝

1- Անձնային հինգ մեծ գործոնների գնահատման հարցարանը («NEO personality questionnaire»-ի կարճ տարբերակը՝ կազմված 60 կետերից), որով չափվում ու գնահատվում են անձային հինգ գլխավոր գործոններ՝ ներքոտիզմ,

էստրավերսիա, հարմարում, ձկունություն (փորձերի դիմաց բաց լինել) և բարեխղճություն: Հարցարանում ընդգրկված 60 հարցերի պատասխանները տրված են հինգ տարբերակով՝ «Ամբողջովին համաձայն եմ»-ից մինչև «Ամբողջովին հակառակ եմ» միջակայքում: Ամբողջ հարցարանի համար Քրոնբախի ալֆայի գործակիցը կազմել է 70, իսկ նրա ենթասանդղակների համար հերթականությամբ հետևյալ կարգով՝ բարեխղճություն՝ 0.83, ձկունություն՝ 0.57, հարմարում՝ 0.71, էստրավերսիա՝ 0.71 և ներքոտիզմ՝ 0.81:

2-Բար-Օնի հուզական ինտելեկտի գնահատման թեստը, որը կազմվել է 1980 թվականին Բար-Օնի կողմից և ունի 15 ենթասանդղակ: Պատասխանները տրված են Լիքերթի հնգաստիճան տարբերակներով՝ «Ամբողջովին համաձայն եմ»-ից մինչև «Ամբողջովին հակառակ եմ» միջակայքում: Բար-Օնի հուզական ինտելեկտի գնահատման հարցարանի ենթասանդղակներն են՝ 1. հուզական ինքնաձանաչում, 2. ինքնաարտահայտում (ինքնավստահություն), 3. ինքնագնահատում (հարգանք սեփական անձի նկատմամբ), 4. ինքաիրացում և ինքնադրսևորում, 5. անկախություն, 6. ապրումակցում, 7. բարեխղճություն և պատասխանատվության զգացում, 8. միջանձնային հարաբերություններ, 9. իրատեսություն և իրականության ընկալում, 10. ձկունություն, 11. պրոբլեմների լուծում, 12. սթրեսների դիմագրավում, 13. ինպուլսների կառավարում և վերահսկում, 14. լավատեսություն, 15. ուրախություն և երջանկություն:

Հուզական ինտելեկտի հարցարանի համար Քրոնբախի ալֆան գրանցվել է 0.93: Յուրաքանչյուր ենթասանդղակի համար գրանցված ցուցանիշի և հուզական ինտելեկտի թեստի ընդհանուր ցուցանիշի միջև համահարաբերակցությունը ցույց է տալիս, որ թեստում ներառված բոլոր ենթասանդղակները դրական հարաբերակություն ունեն հուզական ինտելեկտի հետ:

Ստացված տվյալների վերլուծությունը կատարվել է Պիրսոնի համահարաբերակցության (կորելացիոն) գործակցի և T թեստի միջոցով:

Ուսումնասիրվող փոփոխականների նկարագրական տվյալները (միջինը և ստանդարտ շեղումը) ներկայացված են աղյուսակ 1-ում:

Փոփոխականներ		Միջին	Ստանդարտ շեղում
Հուզական ինտելեկտ		3.61	0.43
Անձնային հատկանիշների ենթասանդղակներ	Էքստրավերսիա	41.07	4.96
	Ներոտիզմ	31.62	7.60
	Բարեխղճություն	46.42	7.67
	Հարմարում	42.56	6.20
	Ճկունություն	37.93	5.06

Մարդկանց անձնային հատկանիշների թույլ և ուժեղ կողմերի բացահայտումը և նրանց հուզական ինտելեկտի մակարդակի որոշարկումը կարող են նպաստել կյանքի խնդիրներին ու դժվարություններին արդյունավետ կերպով հարմարվելու և դիմագրավելու գործին, քանի որ անձնային թույլ կողմերը շտկելով և հուզական ինտելեկտի

խթանմամբ մեծանում է անձի կարողությունը կյանքի դժվարություններին հաղթահարելու համար:

Հուզական ինտելեկտի և անձնային հինգ գործոնների միջև հարաբերակցական կապը քննելու համար կիրառվել է Պիրսոնի կորելացիոն գործակիցը, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Ուսանողների հուզական ինտելեկտի և անձնային հինգ գործոնների միջև համահարաբերակցության գործակիցը:

Հինգ գործոններ	Էքստրավերսիա	Ներոտիզմ	Բարեխղճություն	Հարմարում	Ճկունություն
Հուզական ինտելեկտ	0.486*	-0.661*	0.533*	0.502*	0.097*

$P < 0.01^*$

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հուզական ինտելեկտը դրական նշանակալից հարաբերակցություն ունի էքստրավերսիայի ($r=0.486$), հարմարման ($r=0.502$), բարեխղճության ($r=0.533$) հետ, բայց ներոտիզմի հետ առկա է նշանակալից չափով բացասական հարաբերակցություն ($r=-0.661$), իսկ հուզական ինտելեկտի և ձկունության (փորձի հանդեպ բաց լինելու) միջև չի գրանցվել նշանակալից հարաբերակցություն ($r=0.097$):

Ինչպես նշվեց արդեն, հուզական ինտելեկտը ձեռքբերովի հատկություն ունի

և կյանքի ընթացքում կարող է զարգանալ ու ընդլայնվել, այլ խոսքով հուզական ինտելեկտը ճանաչողական ինտելեկտի համեմատությամբ ավելի ձկուն է, հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրել տարբեր գործոնների (օրինակ՝ կրթության ոլորտի և սեռի) ազդեցությունը հուզական ինտելեկտի խթանման կամ սահմանափակման վրա: Այս գործոնների ճանաչումն ու գնահատումը մեծապես կարող են նպաստել կյանքի խնդիրների հանդեպ անձի խոցելիության կամ արդյունավետության որոշարկմանը:

Աղյուսակ 3.

Ուսանողների հուզական ինտելեկտի մակարդակը՝ ըստ սեռի և կրթության ճյուղի:

Խմբեր	Քանակ	Միջին	Ստանդարտ շեղում	Ազատության աստիճան	T
Արական	199	3.58	0.41	398	-1.09*
Իգական	201	3.63	0.46		
Տեխնիկական գիտություններ	235	3.57	0.45	398 -1.87*	
Հումանիտար գիտություններ	165	3.66	0.41		

P < 0.01*

Աղյուսակ 3-ի տվյալները ցույց են տալիս, որ նշանակալից տարբերություն չի գրանցվել տեխնիկական և հումանիտար ոլորտներում սովորող ուսանողների հուզական ինտելեկտի միջև, նաև նշանակալից տարբերություն չի գրանցվել արական և իգական սեռերի միջև հուզական ինտելեկտի առումով:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հուզական ինտելեկտի մակարդակը հարաբերակցվում է անձնային հատկանիշների ու գծերի հետ թե՛ իգական և թե՛ արական սեռի ուսանողների մոտ: Դա նշանակում է, որ սեռը դերակատար չէ

հուզական ինտելեկտի և անձնային գծերի հարաբերակցական հարցում, ուստի հետազոտության արդյունքները կարելի է կիրառել երկու սեռերի համար:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ հուզական ինտելեկտի և անձնային հատկանիշների միջև հարաբերակցական կապը նշանակալից է: Հուզական ինտելեկտը անձի կառուցվածքի մի մասն է կազմում, անձը հուզական ինտելեկտի դրսևորման ու արտահայտման ենթահողն է, ուստի հուզական ինտելեկտը պետք է ուսումնասիրվի և դիտարկվի որպես անձի առավել լայն համակարգի մի բաղադրիչ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ն. Աքբարզադե, Հուզական ինտելեկտ, Սելյուեյի և այլոց տեսակետները, Ֆարաբի, Թեհրան, 2004:
2. Ս. Բեհրուզյան, Թեհրանի նահանգներում Ֆենիկետոնուրիայով հիվանդների անձնային առանձնահատկությունների, հուզական ինտելեկտի և հոգեկան առողջության հարաբերակցությունը, Մագիստրոսական աշխատանք, Փայամե Նուր համալսարան, 2008:
3. Մ. Փաշմ Ֆորուշ, Ինտրովերտ և էքստրավերտ անձանց հուզական ինտելեկտի գնահատումը և համեմատությունը անձնային առանձնահատկությունների հետ, Իսլամական Ազադ համալսարանի կենտրոնական մասնաճյուղ, Թեհրան, 2005:
4. Ս. Հեյն, Հուզական ինտելեկտը բոլորի համար (հուզական ինտելեկտի գործնական ձեռնարկ), պարսկերեն թարգմանությունը՝ Քուչաբզադե Է. Ռ., Մուսավի Շուշթարի Մ., Թաջաստմ Ախլաղ հրատ., Թեհրան, 2004:
5. Դ. Գոովման, Հուզական ինտելեկտ, հուզական ինքնագիտակցություն, ինքնավերահսկում, ապրումակցում և օժանդակում, պարսկերեն թարգմանությունը՝ Պարսա Ն., Ռոշդ հրատ., Թեհրան, 2003:
6. Դ. Շուլց, Ս. Ա. Շուլց, Անձի տեսություններ, պարսկերեն թարգմանությունը՝ Յ. Քարիմի, Արասթարան հրատարակչություն, 5-րդ տպագրություն, Թեհրան, 2005:
7. Ջ. Սիարոջի, Ջ. Փ. Ֆորգաս, Ջ. Դ. Մայեր, Հուզական ինտելեկտն առօրյա կյանքում, գիտական հետազոտություն, պարսկերեն քարգմանությունը՝ Նաջաֆի Ջանդի, Սոխան հրատ., Թեհրան, 2004:
8. Mayer J.D., Salloway P., Caruso D., Emotional intelligence meets traditional standards for intelligence, Intelligence, 27, 1999, pp. 267-298.

ИССЛЕДОВАНИЕ СООТНОШЕНИЯ ИНДИВИДУАЛЬНЫХ КАЧЕСТВ И ЭМОЦИОНАЛЬНОГО ИНТЕЛЛЕКТА СТУДЕНТОВ

АБДОЛМАДЖИД НЕГАРЕШНЕЖАД

ЕГУ, аспирант

Базу исследования составляют студенты бакалавриата государственных университетов провинций Ирана Альборз и Хазвин, из которых кластерным методом и по принципу случайности были выбраны 400 студентов (201 женского пола и 199 мужского, из которых 235 учились на технических факультетах, а 165 – на гуманитарных). Для оценки уровня эмоционального интеллекта мы использовали вопросник, а для оценки пяти основных личностных качеств – вопросник индивида (Neopersonality questionnaire). Полученные результаты были подвергнуты статистическим корреляционным тестам Пирсона и Т. Результаты показывают, что эмоциональный интеллект имеет значительную положительную взаимосвязь с экстраверсией, Agreeableness и чувством ответственности, значительную отрицательную связь с невротизмом, а с гибкостью и открытостью не имеют ничего общего.

RESULTS OF SURVEY CONCERNING THE STUDENTS' INDIVIDUAL PECULIARITIES AND EMOTIONAL INTELLECT RATIO

ABDOLMAJID NEGARESHNEJAD

YSU, Postgraduate

The study base comprises undergraduate students of state universities of Iran Alborz and Ghazvin provinces among which 400 students, who are randomly selected (201 female and 199 male, 235 of students are enrolled in technical branches, and 165 – in humanities) by cluster method. To assess the level of emotional intelligence, we used a questionnaire and for the evaluation, of five main personality traits – an individual questionnaire – (Neopersonality questionnaire).

The obtained data were subjected to Pearson's coefficient of correlation and T statistical tests. The results show that Emotional intelligence has substantial positive correlation with Extraversion, Agreeableness and Responsibility. Significant negative correlation with Neuroticism. But there is no correlation with flexibility and Openness.

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԴԳՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆ ԴԻՐԸ**

Հոգվածում ներկայացված են ընտանեկան միջավայրի առանձնահատկությունների ու կրտսեր դպրոցականի անձի ձևավորման հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները:

Ներկայացված են մի շարք ուսումնասիրություններ առկա հիմնախնդիրների վերաբերյալ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կրտսեր դպրոցական, միջավայր, ընտանեկան դաստիարակություն, վստահության մթնոլորտ, անհատական առանձնահատկություններ:

Կրտսեր դպրոցական տարիքի կենտրոնական նորագոյացություններն են՝ կամածին մտածողության, ուշադրության, հիշողության կայացումը, վարքի և գործունեության կամածին կարգավորման զարգացման որակապես նոր մակարդակը, ռեֆլեքսիան, վերլուծությունը, գործողությունների ներքին պլանը, իրականության նկատմամբ նոր ճանաչողական վերաբերմունքի զարգացումը, դդապատճառների, ինքնագնահատականի և ինքնավերահսկողության, դդապատճառների կայուն համակարգի ձևավորումը, կողմնորոշումը դեպի հասակակիցների խումբ: Կրտսեր դպրոցական տարիքը պահանջում է հատուկ վերաբերմունք՝ նշանակալի մեծահասակների՝ ուսուցիչների և ծնողների կողմից, որոնցից կախված է կրտսեր դպրոցականի հոգեկան առողջությունը: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները բնութագրվում են բարոյական, ինտելեկտուալ, հուզական, ֆիզիկական, գեղագիտական հատկությունների զարգացման շրջափուլով, ինչը կրտսեր

դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացման հիմքն են:

Ուսումնական հաստատությունների կրթական միջավայրի ժամանակակից ուսումնասիրություններում աճում է ընտանիքի կրթական միջավայրի նշանակությունը: Աճում է ծնող-երեխա հարաբերությունների, ընտանիքում դաստիարակության մեթոդների և ոճերի, կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացման մեջ ծնողական դերերի և վարքի դերը: Հետազոտողները հաշվի են առնում միջավայրի բոլոր տեսակները, ներկայացնում են դրա բնութագրիչները՝ ելնելով կառուցվածքի չափանիշներից և սուբյեկտների առաջատար գործունեությունից:

Ընտանիքի դաստիարակչական միջավայրի տիպերի դասակարգումը ներկայացրել է Յա.Կորչակը իր «Ինչպես սիրել կրտսեր դպրոցականին» մանկավարժական աշխատանքում: Նա առաջադրել է «դաստիարակող միջավայրի» չորս տիպերի՝ «դոգմատիկ», «գաղափարային», «անհոգ պահանջատիրական», «արտաքին փայլի և կարիերայի», բնութագրերը: Ըստ Յա.Կորչակի՝ դոգմատիկ միջավայրը նպաստում է կախյալ և պասիվ կրտսեր դպրոցականի ձևավորմանը, գաղափարայինը՝ ազատ և ակտիվ, անհոգ պահանջատիրականը՝ ազատ, բայց պասիվ, կարիերային միջավայրը՝ ակտիվ, բայց կախյալ [1, 2,]: Յա.Կորչակի՝ դարասկզբում կատարած բացահայտումներն այսօր էլ արդիական են թե՛ հոգեբանության և թե՛ մանկա-

վարժության համար: Տարիներ շարունակ Յա.Կորչակի տեսությունը հոգեբանության բնագավառում ընտանեկան դաստիարակության ոլորտի ուսումնասիրությունների հիմք էր, որն արտացոլում էր «դաստիարակող միջավայրի» հիմնական սկզբունքները, դաստիարակության մեթոդներն և ոճերը, ծնողական վարքի տիպերը, ծնող-երեխա հարաբերությունների բնորոշումը:

Ընտանեկան միջավայրի առավել ամբողջական տիպոլոգիան ուսումնասիրվել է արտասահմանյան հոգեբանության մեջ: Մ.Չերնոուշեկը ընտանեկան միջավայրը բնորոշել է իբրև «տարածության ֆիզիկական և բնակարանային հարթություն, միաժամանակ նաև մարդկանց միջև փոխհարաբերություններ, որտեղ աճում և զարգանում է երեխան»: Նա առանձնացրել է միջավայրի մի շարք բնութագրիչներ՝ «դպրոցական միջավայր», «հուզական միջավայր», և «շրջակա միջավայր»՝ «հասակակիցների, մշակութային, ազգային, գաղափարական, տեղեկատվական, աշխարհագրական միջավայր» [3]: Կրթական միջավայրի բնութագրման մեջ սոցիալական բաղադրիչի հուզական երանգավորումը նշվում է որպես այդ միջավայրի բոլոր սուբյեկտների միջև «հուզական բարենպաստություն»: «Հուզական բարենպաստությունը» կարևոր գործոն է նաև ընտանեկան կրթական միջավայրում հաշվի առնելով այդ միջավայրի մասնակիցների փոխահարաբերությունները: Այսպիսով, ըստ Մ.Չերնոուշեկի, միջավայրի հուզական բաղադրիչը առաջացող սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների կարևոր բնութագրիչ է:

Չեխ հետազոտող Բ.Կրաուսը առաջարկում է ընտանեկան միջավայրի իր տարատեսակները: «Հուզական անհատական միջավայրի» հետ մեկտեղ նա առանձնացնում է այնպիսի տարատեսակներ, ինչպիսիք են՝ սոցիալ-մշակութային միջավայրը (ծնողների կրթական մակարդակը և սոցիալական ստատու-

սը), տեխնիկական-հիգիենիկ միջավայրը, սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական միջավայրը (ընտանիքի կառուցվածքը, գույքային հարաբերությունները, ծնողների զբաղվածությունը), ինչպես նաև դաստիարակչական և դպրոցական հիմնակների միջավայրը և լոկալ միջավայրը (ենթաշրջան, ավան) [4]:

20-րդ դարի երկրորդ կեսում և 21-րդ դարի սկզբին ընտանեկան միջավայրի հիմնախնդրի հետազոտությունները շարունակվեցին տարբեր ուղղություններով՝ վեր հանելով ընտանիքների տեսակները, ծնողների վարքը, դաստիարակության ոճերը, ընտանեկան միջավայրի կազմակերպման մակարդակները, ծնող-երեխա փոխհարաբերությունները:

Օրինակ՝ Տ.Վ.Սենկոյի հետազոտություններում ընտանեկան միջավայրի ուսումնասիրման հիմնական հարցերից են.

- ընտանեկան միջավայրի ընդհանուր կառուցվածքը,

- ընտանիքի անդամների համախմբվածությունը,

- երեխաների դաստիարակության գործում ծնողական ղեկավարման առանձնահատկությունները,

- կրտսեր դպրոցականի համար համապատասխան միջավայրի ստեղծման մեթոդները,

- ընտանիքի ներսում անկախության և պատասխանատվության սահմանափակումները,

- ծնողական ոգևորությունը և օգնությունը,

- փոխազդեցության ոճերը ընտանեկան սոցիումում,

- երեխաների ասոցիալ վարքը և դրանց պատճառները,

- ծնողներն իբրև դերային մոդել,

- ծնող-երեխա փոխազդեցության շտկման ձևերն ու մեթոդները ընտանեկան միջավայրի շրջանակներում [5]:

Հետաքրքիր է այն, որ Տ.Վ.Սենկոն

առանձնացնում է ընտանեկան միջավայրի ձևավորման մակարդակները՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Այն ընդգծում է հենց սոցիալական միջավայրի ձևավորման կարևորությունը անձի համար, որը «ազդում է անձնավորության զարգացման և գործունեության վրա նրա գոյության բոլոր մակարդակների վրա՝ մշակույթից, օրենքներից և ավանդույթներից մինչև սովորություններ, նորմեր և կանոններ» [5]:

Է.Հարությունյանի աշխատանքներում դիտարկվել է ընտանիքների հոգեբանական տիպաբանությունը՝ տարբերակելով ավանդականի, երեխայակենտրոնի և ամուսնականի [6]: Ծնողների հետ փոխազդեցության ընթացքում կրտսեր դպրոցականի դրական հուզական վերապրումները ընտանիքում ստեղծում են փոխադարձ վստահության մթնոլորտ, որը պակաս կարևոր չէ կրտսեր դպրոցականի անձնային հատկությունների զարգացման համար: Առավել ևս ապացուցված է, որ մանկական սոցիալական միջավայրի կառուցման մեջ որոշիչ դերը ընտանեկան միջավայրին է: Երեխա-ծնող ոչ արդյունավետ հարաբերություններում հուզական բաղադրիչի խանգարումներից են ծնողների տագնապայնությունը և տարբեր ֆորմաները, ծնողական զգացմունքների պակաս զարգացվածությունը, երեխաների նկատմամբ քնքրության, հոգատարության բացակայությունը: «Հուզական բարենպաստությունը» այն հիմքն է, որի վրա պետք է կառուցվի երեխաների հետ ուսուցիչների և ծնողների շփումը:

Կրթական միջավայրը կառուցվում է՝ հաշվի առնելով սովորողների անհատական ընդունակությունները և հնարավորությունները: Իսկ ընտանեկան կրթական միջավայրը ներառում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի անհատական տվյալների հաշվառումը: Ժամանակակից տեսությունները ընտանեկան միջավայրի դերը դիտարկում են որպես տեղեկատվության աղբյուր:

Ծնողների, եղբայրների և քույրերի, տատիկների և պապիկների հետ շփման ընթացքում երեխան ստանում է օգտակար տեղեկատվություն, որը հանգեցնում է նրա հետագա զարգացմանը: Դրա հետ մեկտեղ ընտանիքի հուզական մթնոլորտը հիմք է հանդիսանում շրջապատող միջավայրում ստացած տեղեկատվության օգտագործման առումով կրտսեր դպրոցականի ինքնուրույնության և ակտիվության հետագա զարգացմանը: Վստահելի շփման, փոխադարձ հարգանքի, ցանկացած նոր գործի մեջ ծնողների փոխըմբռնման և բարեհամբուրության վրա հիմնված ծնող-երեխա փոխհարաբերությունները կրտսեր դպրոցականի գործողություններին վստահություն են ներշնչում, ինչը հանգեցնում է ոչ միայն իմացական որակների զարգացմանը, այլև այլ մադկանց հետ շփման մեջ հոգեկան բարեհարմարությանը:

Բազմամյա հետազոտությունների հիման վրա Լ.Ի.Բոժովիչը բացահայտել է, որ «կրտսեր դպրոցականի անձի ձևավորումը որոշվում է նրան հասանելի մարդկային հարաբերությունների համակարգում զբաղեցրած տեղի և նախկին փորձի արդյունքում ձևավորված հոգեբանական առանձնահատկությունների հարաբերակցությամբ» [7]:

Այսպիսով՝ երեխաների նկատմամբ ծնողների վերաբերմունքը մեծ նշանակություն ունի ընտանիքի կրթական միջավայրում կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունների զարգացման գործում և այդ պատճառով պետք է կառուցվի վստահության, սիրո, սեփական կրտսեր դպրոցականին ճանաչելու և, կախված տարիքային առանձնահատկություններից, դաստիարակության ընդհանուր մոտեցումները վերակառուցելու ունակության հենքի վրա:

Իր հետազոտություններում Ա.Ն.Լեոնտևն ընդգծում էր երեխաների հոգեկան զարգացման յուրահատկությունը՝ պայմանավորված այն հարաբերություն-

ներով, որոնք առաջանում են այդ գործընթացում: «Դա կրտսեր դպրոցականի այն իրական դիրքն է, որի միջոցով նրա առջև բացահայտվում է մարդկային հարաբերությունների աշխարհն, որով պայմանավորված է այդ հարաբերություններում նրա զբաղեցրած օբյեկտիվ դիրքը»: «Այն, ինչն անմիջականորեն որոշում է կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացումը, նրա կյանքն է, կրտսեր դպրոցականի գործունեության զարգացումը ինչպես արտաքին, այնպես էլ ներքին, իսկ նրա զարգացումը, իր հերթին, կախված է առկա պայմաններից» [8]: Կրտսեր դպրոցականի «առկա պայմանները», ըստ Ա.Ն.Լեոնտևի, «ընտանիքն ու դպրոցն են»:

Այսպիսով՝ դպրոցական և ընտանեկան կրթական միջավայրների միջև առնչման կետեր կան, որոնք հաշվի են առնում դրանցում փոխազդեցության յուրահատկությունը, որոնցից են շփումը, իրազեկվածությունը և «հուզական բարենպաստությունը» (ըստ Վ.Ա.Յասվիհի):

Կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացման մեջ ընտանեկան կրթական միջավայրի ուսումնասիրությունները առաջացրին երեխա-ծնող հարաբերությունների, ծնողական դիրքորոշումների առանձնացման և կրտսեր դպրոցականի ներքին դիրքորոշումը հաշվի առնելու անհրաժեշտություն: Միջավայրը կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացման կարևոր պայման է, բայց ինքնին քիչ ազդեցություն է գործում: Միջավայրի բեկմամբ առաջացող երեխա-ծնող հարաբերությունների պայմանները և դրանց արտացոլումը կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների վրա հարկ է դիտարկել առանձին: Կան երեխա-ծնող հարաբերությունների բազմաթիվ բնորոշումներ: Մ.Վ.Սապորովսկայան (2003)

առաջարկում է հետևյալ բնորոշումը. «Երեխա-ծնող հարաբերությունը ընտանեկան կապերի անհատական ընտրողական արտացոլման գործընթացն է և արդյունքը, որոնք միջնորդավորում են ներքին և արտաքին ակտիվությունը, ինչպես նաև ծնողների և երեխաների վերապրումներն են համատեղ գործունեության մեջ» [9]:

Յա. Ա.Կոմենսկու, Մ. Լյուտերի, Ի. Գ. Պեստալոցու, Ժ. Ժ. Ռուսոյի, Ֆ. Ֆրեբելի և այլոց հետազոտությունները վկայում են այն մասին, թե ինչ կարևոր դեր է միշտ հատկացվել ծնողներին երեխաների դաստիարակության հարցում:

Ծնողների և երեխաների փոխհարաբերությունների հիմնախնդիրներով զբաղվել են բազմաթիվ հոգեբաններ և մանկավարժներ՝ Ա. Ա. Բոդայով, Լ. Ի. Բոժովիչ, Բ. Ս. Վոլկով, Լ. Ս. Վիգոտսկի, Ա. Վ. Դոբրովիչ, Ա. Գ. Կովալով, Ի. Կոն, Վ. Լեվի, Ա. Ս. Սալիվակովսկայա, Վ. Յա. Տիտորենկո, Դ. Բ. Էլկոնին, Ա. Դելա Տորե, Յա. Կորչակ, Կ. Ռոսս, Վ. Սատիր, Դ. Սպոկ, Է. Շեֆֆեր և այլք:

Դեռևս 20-րդ դարի սկզբում Ա.Ադլերը իր «Ծնողների դաստիարակությունը» հոդվածում (1912) շարադրեց մտավոր առողջ կրտսեր դպրոցականի դաստիարակության հիմնադրույթը:

Ծնողների ադլերյան դաստիարակության հիմնական հասկացություններն են «հավասարությունը», «համագործակցությունը» և «բնական արդյունքները»: Դրանց հետ են կապված դաստիարակության երկու կենտրոնական սկզբունքները՝ հրաժարում իշխանության համար պայքարից և կրտսեր դպրոցականի պահանջմունքների հաշվառում: Ա.Ադլերը ընդգծում էր ծնողների և երեխաների միջև հավասարությունը, ինչպես իրավունքներում, այնպես էլ պատասխանատվության առումով, հավասարությունը, բայց ոչ նույնականությունը: Անհրաժեշտ է սովորեցնել ծնողներին հարգել երեխաների յուրօրինակությունը, անհատականությունը

և անձեռնմխելիությունը վաղ տարիքից: Ըստ Ադլերի՝ ընտանեկան դաստիարակության հիմնական սկզբունքը ընտանիքի անդամների փոխադարձ հարգանքն է և սերը կրտսեր դպրոցականի նկատմամբ: Երեխայի ինքնագիտակցությունը նա ուղիղ կախվածության մեջ է դնում նրանից, թե ինչքան են կրտսեր դպրոցականին սիրում և հարգում ընտանիքում [10]:

Արտասահմանյան հոգեբանները և մանկավարժները առանձնացրել են ծնողական վարքի որոշ չափորոշիչներ և հատուկ ընդգծել են ծնողի անձը, որը արտացոլվում է երեխա-ծնող հարաբերություններում վարքի այս կամ այն տիպի ընտրության մեջ:

Ե.Ս.Շենֆելդը (1959) ծնողական վարքի բնորոշման համար առաջարկել է հետևյալ չափորոշիչները՝ «անկախություն-վերահսկողություն» (կրտսեր դպրոցականին տրվող ազատության աստիճանը), «սեր-ատելություն» (կրտսեր դպրոցականի նկատմամբ հուզական վերաբերմունքը): Շատ հոգեբաններ իրենց աշխատանքներում պնդում են, որ կրտսեր դպրոցականի նկատմամբ ծնողի վերաբերմունքը «վերահսկողության կամ իշխանության» և «հույզերի և զգացմունքների» հիման վրա որոշում է նրա հոգեբանական զարգացման առանձնահատկությունները: Կրայզը (2001) ծնողական վերահսկողության հիման վրա առանձնացրել է ծնողական վարքի չորս պարամետրեր՝ ծնողական վերահսկողություն, ծնողական պահանջներ, երեխաների հետ շփման միջոցներ դաստիարակչական ազդեցությունների ընթացքում, հուզական օգնություն [11]:

Արտասահմանյան հոգեբանության մեջ նշվում է, որ տարբեր կոնֆլիկտային իրավիճակներում՝ կապված երեխաների ինքնահաստատման հետ, ծնողներն իրենց պահում են նման ձևով: Դրա հետ մեկտեղ առանձնացնում են ծնողների վարքի երեք տիպ՝

1. Փոխհատուցող ամենաթողություն, երբ ծնողներն իրենց երեխաներին տալիս են այն ամենը, ինչից իրենք զրկված են եղել, և մեծ բավականություն են ստանում դրանից: Մեր պրակտիկայում նման ընտանիքներ քիչ չեն հանդիպել, և միայն հոգեբանի գրույցն է օգնել բացահայտել իրավիճակը ծնողների համար:

2. Պայմանական ամենաթողություն, որտեղ երեխաները ստանում են ամեն ինչ, ինչ ուզում են, քանի դեռ դա համապատասխանում է ծնողների հնարավորություններին:

3. Անտարբեր ամենաթողություն, որտեղ ծնողները նյութական նվերներ են տալիս՝ դրանով իսկ ազատվելով նրանց հետ հուզական շփումից (Stewart & Zaenglin-Senger, 1982): Ընտանիքում նման վերաբերմունքին սովորելը հետագայում ստեղծում է կոնֆլիկտային իրավիճակներ դպրոցում «երեխա-ուսուցիչ» փոխհարաբերություններում: Որոշ ժամանակակից ընտանիքներ գերադասում են փոխհատուցող և անտարբեր ամենաթողության համադրությունը կրտսեր դպրոցականի դաստիարակության մեջ:

Ատկինսոնը (Atkinson, 1989) օգտագործել է կապվածության հիմնադրույթը ծնող-երեխա փոխհարաբերությունների և նրանց վարքի ուսումնասիրման հարցում. «Երեխաներն անընդհատ ինքնահաստատվում են ծնողների հետ փոխհարաբերություններում, հաճախ արտացոլում են ծնողական բնութագրիչները սեփական վարքում և ջանք են գործադրում սեփական ծնողներին նմանվելու համար: Ծնողների և երեխաների փոխադարձ ազդեցության պատճառներից մեկը միմյանց մասին տեղեկատվության երկկողմանի ստացման անհրաժեշտությունն է»: Զ.Բոուլբին առանձնացնում էր խաչաձև կապերը և նույնականությունը երեխա-ծնող փոխհարաբերություններում:

Երեխայի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացումը պահանջում է երեխա-

ծնող հարաբերությունների որոշակի պայմաններ. դրա հետ կապված Հ.Ջայնոտը (1992) առաջարկել է ծնողների վարքի հետևյալ մի քանի սկզբունքները՝

– «Բոլոր իրավիճակներում ծնողները պետք է ձգտեն պահպանել կրտսեր դպրոցականի մեջ «Ես» դրական պատկերը:

– Պետք է խոսել իրավիճակի, կրտսեր դպրոցականի արարքի մասին՝ խուսափելով անձնային բացասական գնահատողական դատողություններից: Մեծահասակի արտահայտությունները չպետք է պարունակեն կրտսեր դպրոցականի հետագա ճակատագրի կանխատեսումներ և ավտորոշումներ:

– Շփման մեջ մեծահասակը միշտ պետք է համագործակցության առաջարկի նախաձեռնողը լինի: Այդ առաջարկը չպետք է սպառվի գործողության համապատասխան միջոցի ուղիղ նշումով, այլ պետք է կրտսեր դպրոցականի առաջ բացահայտի պրոբլեմային իրադրության ինքնուրույն լուծման հնարավորությունները: Դպրոցի զարգացնող ուսուցման սկզբունքներից մեկը երեխաներին՝ պրոբլեմային իրադրության մեջ լուծումն

ինքնուրույն գտնելու սովորեցնելու մեջ է:

– Ուշադիր լսել կրտսեր դպրոցականին: Երեխայի ուշադիր լսող ծնողները ցույց են տալիս, որ լսում են նրա կարծիքը, գնահատում են այն, ամրապնդում են իր նկատմամբ կրտսեր դպրոցականի հարգանքը:

– Խուսափել և թույլ չտալ այնպիսի գործողություններ և բառեր, որոնք կարող են վիրավորել կրտսեր դպրոցականին կամ նրա մեջ չարություն առաջացնել:

– Դրսևորել մտքերն ու զգացմունքներն առանց ագեսիվության. ծնողները պետք է անկեղծ խոսեն այն մասին, ինչ զգում են, և սեփական զգացմունքների դրսևորման ժամանակ հարգեն կրտսեր դպրոցականի անձը» [12]:

Այսպիսով՝ ծնողների վարքը հետագայում արտացոլվում է երեխաների վարքում, նրանց հոգեբանական առանձնահատկություններում, անձնային հատկությունների զարգացման մեջ, հասակակիցների հետ հարաբերություններում, սոցիալական շրջապատում ադեկվատ վարք դրսևորելու ունակության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Корчак Я. Как любить ребенка // Педагогическое наследие. – М., 1990. С. 19–174.
2. Корчак Я. Право ребенка на уважение // Педагогическое наследие. – М., 1990С. 175–194.
3. Чудновский В.Э. Становление личности и проблема смысла жизни: Избранные труды / В.Э. Чудновский. – М., Издательство Московского психолого–социального института ; Воронеж: Издательство НПО «Модэк», 2006, с. 707–708.
4. Краус Б. Ребенок и его среда // «дети а ми», 1983, № 4.
5. Сенько Т.В. Психология взаимодействия : Часть третья: личность в семейном социуме: – Мн.: Карандашев, 2000, С13.
6. Арнаутова Е.П. Повторный брак матери и эмоциональная связь ее с ребенком, Как помочь ребенку войти в современный мир?/ Под ред. Т. В. Антоновой.– М.: Педагогика , 1995.
7. Блонский П.П. Психология младшего школьника./ Под редакцией А. И. Липкиной и Т. Д. Марцинковской. – М.: Изд–во «Институт практической психологии», Воронеж: НПО «МОДЭК», 1997.С. 75–297.
8. Коротынова Г.С. Психологические особенности внутрисемейных отношений и их влияние на проявления школьной дезадаптации: Дис... канд. психол. наук, – Иркутск, 1998.
9. Семья в психологической консультации. / Под ред. Бодалева А.А., Столина в. В. ., – М., 1989.
10. Словарь психолога–практика. /Сост. С.Ю. Головин. – Мн.: Харвест, 2005
11. Крайг Г. Психология развития.СПб.: Питер, 2003.
12. Джайнотт Х.Д. Родители и дети: [Перевод]. – М.: ПИА МП «Арбат», 1992, с. 53.

СЕМЕЙНАЯ СРЕДА И ПРОБЛЕМА ФОРМИРОВАНИЯ ЛИЧНОСТИ
МЛАДШЕГО ШКОЛЬНОГО ВОЗРАСТА

ГАЯНЭ ГРИГОРЯН

АГПУ, кафедра теории и истории психологии, доцент

В статье представлены особенности семейной среды и формирования личности младшего школьного возраста. Проанализированы исследования, касающиеся существующих проблем.

FAMILY ENVIRONMENT AND THE PROBLEM OF FORMATION OF
PERSONALITY OF PRIMARY SCHOOL AGE

GAYANE GRIGORYAN

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Chair of Psychology
Theory and History*

The article presents the features of the family environment and the formation of the personality of primary school age. Studies related to the existing problems, which are analyzed.

ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՆՈՋ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոդվածում փորձ է արվել ուսումնասիրելու ընտանեկան և մասնագիտական ոլորտների փոխկապակցվածությունը և նրա ազդեցությունը կնոջ մասնագիտական ինքնիրացման գործընթացում: Ուսումնասիրության առարկա են դարձել մի շարք տեսական մոտեցումներ, ինչպես նաև անց է կացվել հետազոտություն նշված թեմայով:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ինքնիրացում, մասնագիտական գործունեություն, ընտանիք, սեռադերային կարծրատիպեր, կին:

Դեռևս պատրիարքալ (հայր իշխանություն) ժամանակաշրջանից ձևավորվել է սեռադերային մի կարծրատիպ, համաձայն որի՝ ընտանիքը կանացի ոլորտ է, իսկ աշխատանքը՝ տղամարդկային: Եվ եթե նախկինում կինը բավարվում էր տնային տնտեսուհու կարգավիճակով, ապա այսօր որքան էլ որ նա նվիրված լինի ընտանիքին, ընտանեկան կյանքը նրան հաճույք ու երջանիկ հոգեվիճակներ պարզևի, միևնույն է, իր շփումների սահմաններն ընդարձակելու, բացի ընտանիքից, նաև այլ սոցիալական խմբերի անդամ դառնալու, կրթվելու, իր մտավոր ունակությունները ու մասնագիտական կարողությունները դրսևորելու, ինքնիրացվելու մեծ ձգտում ունի [1, էջ 98], իսկ մասնագիտական գործունեությունը հանդիսանում է ինքնիրացման, ինքնաբացահայտման կարևորագույն ոլորտ: Յուրաքանչյուր կին կյանքի որոշակի ժամանակահատվածում կանգնում է ընտրության առաջ. ձգտել մասնագիտական բարձունքների, թե՞ թողնել այն և նվիրվել ընտանիքին:

Մինչ այսօր հստակ պատասխան չի տրվել այն հարցին, թե ընտանիքը և աշ-

խատանքը՝ կնոջ կենսագործունեության այս երկու կարևորագույն ոլորտները, իրարամե՞րժ են, թե՞ փոխլրացնող:

Մեր հոդվածի նպատակն է ուսումնասիրել աշխատանքի և ընտանիքի փոխկապակցվածությունը և դրա ազդեցությունը կնոջ ինքնիրացման գործընթացի վրա:

Վարկած. Կնոջ մասնագիտական և ընտանեկան ինքնիրացման միջև գոյություն ունի ամուր կապ: Կանանց մասնագիտական ինքնիրացման համար հիմք են ծառայում ընտանեկան բարենպաստ մթնոլորտն և ամուսնու աջակցությունը:

Համաձայն ռուս հոգեբան Լ.Ա.Կոռոստիլյովայի՝ անձի ինքնիրացումը «Ես»-ի հնարավոր զարգացումն է՝ ի հաշիվ սեփական ջանքերի, հնարավորությունների և ակտիվության [3, էջ 11-12]: Հումանիստական հոգեբանության ներկայացուցիչ Ա.Մալոուն նշում է, որ անձի ինքնիրացումը ընդգրկում է մադու կենսագործունեության բոլոր ոլորտները, և անձի ինքնիրացումը հնարավոր է նաև տնային տնտեսություն վարելու գործընթացում: Լ.Յասպերսը կապում է ինքնիրացումն այն գործի հետ, որն անում է մարդը: Ի.Ս.Կոնը ասում է, որ ինքնիրացումը դրսևորվում է աշխատանքի և շփման միջոցով [5, էջ 78-80] :

Հետազոտությունները ցույց են տվել, որ կյանքի նկատմամբ բավարարվածությունը, ներառյալ սեփական կյանքի արժեքավորությունը և ինքնագնահատականը աշխատող կանանց մոտ ավելի բարձր է, քան տնային տնտեսուհիների մոտ: Աշխատանքը օգուտ է կնոջը զգալ սեփական անկախությունը և ինչ-որ բան ինքնուրույն անելու կարողությունը [2]:

Արտասահմանյան հոգեբանության

բնագավառում կանանց մասնագիտական գործունեության ուսումնասիրությունը սկսվել է XX դարի 70-ական թվականներին և կապված է աշխատաշուկայում կանանց հավասարության համար հասարակական շարժման զարգացման հետ: Հենց այս ժամանակահատվածում էր, որ արևմտյան հասարակության մեջ փոփոխություններ եղան կանանց ընկալման կարծրատիպերի մեջ:

Ժամանակի ընթացքում ձևավորցեին երկու իրարամերժ կարծիքներ կապված կնոջ մասնագիտական և ընտանեկան ոլորտների ինքնիրացման հետ:

Լ. Կովալենկոն կարևորում էր կնոջ վերադարձը ընտանիք: Այս տեսակետին դուրս եկավ Պանկրատովան, ով կնոջ վերադարձը ընտանիք անհեթեթություն էր համարում: Ըստ նրա՝ աշխատող կանայք ինքնուրույն են, բավականին հեշտ են որոշումներ կայացնում [4, էջ 50–57]: Գ. Վ. Տուրեցկայան կանանց բաժանեց երկու խմբի՝ կանայք, ովքեր ուղղված են դեպի ընանիքը, և կանայք, ովքեր ուղղված են դեպի մասնագիտական գործունեությունը: Ըստ նրա հետազոտությունների՝ մասնագիտական աճ ունեցող կանայք ունեն մեղքի զգացում իրենց երեխաների, ամուսնու և հարազատների հանդեպ, քանի որ երկար ժամանակ չեն կարող հատկացնել նրանց, իսկ այն կանայք, ովքեր ուղղված էին դեպի ընտանիքը, աշխատանքը դարձել է նրանց համար բեռ [6, էջ 37–46]:

Հիմք ընդունելով տեսական որոշ մոտեցումներ՝ մեր կողմից անց է կացվել հետազոտություն: Հետազոտություններն իրականացվել են 2013–2016 թվականներին, Երևանում, Շիրակի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերում և Արցախի հանրապետությունում:

Հետազոտությանը մասնակցել են 35–45 տարեկան 130 կանայք, ովքեր ամուսնացած էին, ունեին 2 կամ ավելի երեխա: Ընտրակազմին մասնակցող կանանցից 65-ը (հիմնականում մանկավարժներ և

բժիշկներ) աշխատում էին, ունեին առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ 65-ը ներկայումս գտնվում էին գործազրկության կարգավիճակում, սակայն նրանցից շատերը նախկինում աշխատել էին:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել մասնագիտական գործունեության և ընտանիքի փոխկապակցվածությունը և ազդեցությունը կնոջ ինքնիրացման գործընթացում: Հետազոտության իրականացման համար կիրառվել է մեր կողմից մշակված հարցաթերթիկը և ինքնաարդիականացման թեստ (ՍԱԹ) է. Շոստրոմ, ադապտացված Լ. Յա. Գոզմանովի կողմից:

Հարցաթերթիկի կիրառումը նպատակ ուներ ստանալու հետազոտվող կանանց սոցիալ-հոգեբանական բնութագիրը: Ինքնիրացման վերաբերյալ մեթոդիկաների սղության պատճառով նպատակահարմար եղավ կիրառել Շոստրոմի ինքնաարդիականացման մեթոդիկան: Այս հարցարանը նախատեսված է ավտորոշելու հետազոտվող կանանց ինքնահրականացման մակարդակը:

Մինչ արդյունքներին անրադառնալը նշենք, որ համաձայն մեր երկրի վիճակագրական տվյալների բարձրագույն կրթություն ստանում են կանանց 57%-ը, և տղամարդկանց 38%-ը: Կրթություն ստացած կանանց 54% (7303284 կին) աշխատունակ է, սակայն նրանցից միայն 40%-ն (540984 կին) է աշխատում կամ աշխատանք փնտրում: Նման ցուցանիշը հիմք է տալիս ենթադրելու, որ դեռ գոյություն ունի այն կարծիքը որ կին ու աշխատանքը անհամատեղելի են[7]:

Իրականացված հետազոտության արդյունքում ստացած տվյալները հետևյալն են:

Համաձայն հարցաթերթիկից ստացված տվյալների՝ (դիագրամա 1, 2) կարելի է ենթադրել, որ կնոջ աշխատելու և մասնագիտական ինքնիրացման հնարավորությունները շատ դեպքերում պայմանավորված են հասարակության


մենթալիտետի ազդեցությամբ: Հասարակության մեջ գերակշռող գենդերային դիրքորոշումները և դերային ակնկալիքները պայմանավորում են, թե կինը ինչպես է իրեն տեսնում մասնագիտական գործունեության բնագավառում: Հետազոտությանը մասնակցած աշխատող կանանց 43.07(28կին)%-ը և գործազուրկ կանանց 73.84%-ը (47 կին) նշում էին, որ կնոջ առաջնային պարտականությունը՝ ընտանիքով և երեխաներով զբաղվելն է:

Համաձայն աշխատող կանանց ընտրակազմի 48%(31կին)-ի՝ մասնագիտական աճի և ինքնիրացման համար հիմք են հանդիսանում ընտանեկան առողջ փոխհարաբերությունները:


Ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ ներկայումս հայ կինն իր մասնագիտական գործունեության մեջ իր առջև դնում է հավակնությունների այն մակարդակը, որը չի խանգարի

ինքնիրացնել իրեն, առաջին հերթին, որպես ընտանիքի կին և մայր: Աշխատող կանանց 58.46%-ի (38 կին) և գործազուրկ կանանց 73.84%(48 կին) այն համոզմանն են, որ մասնագիտական բարձր հավակնություններ ունենալը իր հերթին բերում է նոր պատասխանատվությունների առաջացմանը, բարդացնում է կնոջ աշխատանքային գործունեությունը: Աշխատող կանանց 75.38%-ը (49) «աշխատանք թե՛ն ընտանիք» դիլեմայի ընտրության մեջ նախընտրել է ընտանիքը: Հետազոտությանը մասնակից աշխատող կանանց 49.23%-ի (32 կին) և գործազուրկ կանանց 17%-ի (11 կին) ամուսինները դրական դիրքորոշում ունեն կնոջ աշխատանքի նկատմամբ: Կյանքի նկատմամբ բավարարվածության զգացում ունեն աշխատող կանանց 78, 46%-ը (51 կին) և գործազուրկ կանանց 36.92%-ը (24 կին):

(դիագրամա 1)



(դիագրամա 2)




Հարցաթերթիկից պարզ է դառնում նաև, որ կանանց մասնագիտական ինքնիրացումը կախված է ընտանիքի մոտեցումից: Շատ կանայք նշում էին, որ եթե ընտանիքը աջակցում է, ապա կինը կարող է հասնել հաջողության և ցանկանալ

շարունակել իր մասնագիտական աճը: Հիմնվելով հարցաթերթիկից ստացված արդյունքների վերլուծությունների վրա՝ կարելի է եզրակացնել, որ կանանց մասնագիտական ինքնիրացումը որոշակի սահմանից հետո պայմանավորված է

ոչ այնքան կնոջ ինքնուրույն որոշումով, որքան ընտանիքի և հասարակության պատկերացումներով:

«Ինքնաիրականացման» թեստի կիրառումը, ինչպես արդեն նշեցինք, նպա-

(Դիագրամա 3)



Հետազոտությանը մասնակցող աշխատող կանանց մոտ ինքնիրացման դիապազոնին համապատասխանում է աջակցություն, ինքնաբերականություն և հաղորդակցում սանդղակները:

Ստատիստիկ նորմատիվային չափանիշներին համապատասխանում է արժեքային կողմնորոշումներ, ձկունություն, սենզիտիվություն, ագրեսիայի ընդունում, ճանաչողական պահանջմունքները, ինքնաընդունում, ինքնահարգանք, հայացք մարդու էությանն ու ստեղծարարություն սանդղակները:

Գործազուրկ կանանց մոտ պատկերն այլ է:

Ստատիստիկ նորմատիվային չափանիշներին համապատասխանում է ժամանակի կողմնորոշում, աջակցություն, ձկունություն, ինքնահարգանք, հայացք մարդու էությանն ու սպոնտանություն սանդղակները:

Ցածր ցուցանիշում են գտնվում սպոնտանություն, սենզիտիվություն և ինքնաընդունում սանդղակները:

Ընդհանրացնելով ստացված արդյունքները՝ կարող ենք ասել, որ աշխատող կանայք ապրում են ներկայով և տեսնում են իրենց կյանքը իր ամբողջության մեջ: Նրանք հետևում են իրենց

տակ ուներ ուսումնասիրելու հետազոտվող կանանց ինքնաիրականացման մակարդակը:

Ստացված արդյունքները հետևյալն են՝

սեփական համոզմունքներին, սկզբունքներին: Էմոցիոնալ առումով ավելի կայուն են, գնահատում են սեփական հնարավորությունները: Ինքնուրույն են որոշումներ կայացնում, վստահում են սեփական ուժերին, աչքի են ընկնում բարձր մոտիվացիայով և ադեկվատ ինքնագնահատականով:

Եթե աշխատող կանայք ապրում էին ներկայով, ապա գործազուրկ կանայք կամ ապրում են անցյալով, կամ ապագայով: Կողմնորոշում ժամանակում սանդղակի ցածր բալերը խոսում են ներդրողներն ծանրաբեռնված մարդկանց մասին, ովքեր կասկածամիտ են և անվստահ իրենց հնարավորությունների վրա: Սպոնտանության, սենզիտիվության և ինքնաընդունման ցածր մակարդակը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ գործազուրկ կանանց բնորոշ է տագնապայնությունը, անվստահությունը մարդկանց նկատմամբ:

Մասնագիտական գործունեությունը կնոջը հնարավորություն է տալիս ինքնադրսևորվելու որպես սոցիալական էակի, արժևորելու սեփական անձնու կատարած աշխատանքը, ունենալու բավարարվածության զգացում կյանքի հանդեպ, ինչպես նաև՝ հանգելու այն

կարծիքին, որ կնոջ մասնագիտական գործունեությունն ու ձեռքբերումները արմատական փոփոխության են ենթարկում նաև ընտանիքի միկրոկլիման, բարձրանում է կնոջ հեղինակությունը ընտանիքում որպես մայր և կին: Մոր աշխատանքային հաջողությունները սոցիալական նշանակություն է ունենում երեխաների համար: Նրանք սովորում են ընդունել անհատին որպես ստեղծագործ, ազատ ընտրության իրավունք

ունեցող էակի՝ անկախ նրա սեռային պատկանելիությունից:

Ընդհանրացնելով աշխատանքի տեսական և հետազոտական մասը՝ կարող ենք ասել, որ մեր վարկածը հաստատվեց. կնոջ մասնագիտական և ընտանեկան ինքնիրացման միջև գոյություն ունի ամուր կապ: Կանանց մասնագիտական ինքնիրացման համար հիմք են ծառայում ընտանեկան բարենպաստ մթնոլորտն և ամուսնու աջակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կ. Նալչաջյան «Ընտանեկան կյանքի փակ էջերը» Երևան 2003թ, էջ 98:
2. Губанова В. И. « Барьеры самореализации женщины в профессиональной среде» Вестник Санкт-Петербургского университета Сер. 12. 2009. Вып. 1. Ч. I
3. Коростылева, Л. А. Психология самореализации личности: брачно– семейные отношения [Текст] / Л. А. Коростылева СПб.: Изд-во СПб-ун-та, 2000. Ст 11–12
4. Панкратова М. Г. Русская женщина сегодня // Женщины России, Россия 1994, ст–50–57
5. Пряжников Н.С. Психологический смысл труда. М.: Ин-т практ. психологии; Воронеж: МОДЭК, 1997, ст 78–80
6. Турецкая г.в. страх успеха психологическое исследование феномена/психологический журнал СПб 1998. Т.19, N 1, ст. 37–46
7. <http://armstat.am/am/>

РОЛЬ И ВЛИЯНИЕ СЕМЬИ НА ПРОЦЕСС ПРОФЕССИОНАЛЬНОЙ САМОРЕАЛИЗАЦИИ ЖЕНЩИН

ԱԿՈՒ ԱՐՄԵՆԻԱ

*Российско-Армянский (Славянский) университет,
кафедра психологии, соискатель*

В статье предпринята попытка исследовать взаимосвязь между профессиональными и семейными сферами и их влияние на процесс профессиональной самореализации женщин. Предметом исследования являются различные теоретические подходы, а также проведенное нами исследование по данной теме.

THE ROLE AND INFLUENCE OF THE FAMILY ON THE PROCESS OF THE PROFESSIONAL SELF-REALIZATION OF WOMEN

HAYKUMI HARUTYUNYAN

*Russian – Armenian Slavonic University,
Department of Psychology, Applicant*

The article attempts to examine the relationship between professional and family spheres and their influence on the process of professional self-realization of women. Different theoretical approaches, as well as our research on the topic have become the subject of the study.

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորվող 16A-5a08 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հոդվածում ներկայացված են սոցիալական կարծրատիպերի տեսական մոտեցումները, ինչպես նաև՝ տեսական և մեթոդոլոգիական խնդիրների շարք, որոնք անհրաժեշտ են սոցիալական կարծրատիպերի ուսումնասիրության համար սոցիալ-հոգեբանական գիտության մեջ: Սոցիալական կարծրատիպերի հիմնախնդիրները առանձին-առանձին ուսումնասիրվել են փիլիսոփայության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության, հոգեբանության շրջանակներում, սակայն մեր ուշադրության կենտրոնում են հոգեբանական հետազոտությունների հիմնական առանձնահատկությունները: Անդրադարձել ենք այնպիսի հեղինակների տեսակետներին, ինչպիսիք են՝ Ու. Լիպմանը, Տ. Շիբուտանին, Ռ. Թադջուրին, Հ. Թեջֆելը և այլք:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սոցիալական կարծրատիպ, հոգեբանական ազդեցություն, ընկալում, հիմնական հայեցակարգեր:

Սոցիալական կարծրատիպ ասելով՝ սովորաբար հասկանում ենք որևէ սոցիալական խմբի կամ համայնքի՝ հեշտացված, հուզականորեն արտահայտված և չափից կայուն կերպար, որը շատ հեշտությամբ տարածվում է նրա բոլոր ներկայացուցիչների վրա: Սոցիալական կարծրատիպերի որոշման հարցում հաճախ ընդգծում են նրա ամբողջականությունը, ուժեղ արտահայտված արժեքային պատկերը, ինչպես նաև՝ նրա

դինամիկ բնութագրիչները՝ *դիմացկունությունը, ռիզիկոությունը, պահպանողականությունը*, որոնք վկայում են նրա ունակության մասին դիմադրելու յուրաքանչյուր ինֆորմացիայի, որը ուղղված է նրա փոփոխությանը: Սոցիալական կարծրատիպերի և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ շատ կարևոր ներդրում ունեն *Ու. Լիպմանի, Գ. Օլպորտի* նախապաշարմունքի, *Հ. Թեջֆելի* սոցիալական նույնականացման տեսությունները, ինչպես նաև մի շարք ռուս գիտնականների հետազոտությունները, ինչպիսիք են՝ *Կ. Կ. Պլապոնովը, Ռ. Ս. Նեմովը, Ա. Գ. Շմելյովը* և այլք: Սոցիալական կարծրատիպերի և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ շատ կարևոր են նաև *Ո. Լ. Արպենովի, Ե. Վ. Օրլովայի* մեկնությունները և տեսակետները:

Հոդվածի նպատակն է ոչ թե ամբողջությամբ տալ սպառնիչ պատկերացում սոցիալական կարծրատիպերի տեսական մոտեցումների մասին, այլ ներկայացնել և քննարկել, տեսական և մեթոդոլոգիական խնդիրների շարք, որոնք անհրաժեշտ են սոցիալական կարծրատիպերի ուսումնասիրության համար սոցիալ-հոգեբանական գիտության մեջ: Այդ պատճառով մենք կանդրադառնանք մի քանի հեղինակների մեկնություններին և տեսակետներին:

Ընդհանուր գիտության մեջ, առաջին անգամ «կարծրատիպ» հասկացությունը կիրառվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում, երբ առաջացավ մասսայական գիտակցության գործունեության օրենքների ուսումնասիրության և բացատրության անհրաժեշտությունը:

Կարծրատիպային մտածելակերպի և վարքի կոնցեպցիայի հիմնադիրը դարձավ ամերիկացի գիտնական **Ուոլտեր Լիպմանը (Walter Lippman)**: Համաձայն Ու. Լիպմանի «Հասարակական կարծիք» (1922թվ.) աշխատության՝ կարծրատիպերը՝ կարգավորված, սխեմատիկ, դետերմինացված «պատկերներ» են մարդու «գլխում», որոնք խնայում են նրա ջանքերը բարդ սոցիալական օբյեկտների ընկալման հարցում և պաշտպանում են նրա արժեքները, դիրքերը և իրավունքները: [4]Գոյություն ունեն կարծրատիպերի տարբեր տեսություններ, ինչպիսիք են՝ *սոցիալ-բիհեյվիորիստական* (Ու. Լիպման, Ռ.Օ. Հարա), *սիմվոլիկ-ինստրակցիոնիստական* (Տ. Շիրուտանի, Դ.Կ. Դևիս), *ֆենոմենոլոգիական* (Է. Ու. Վայնեկի) և այլն:

Ռ. Թադջուրին, սոցիալական կարծրատիպ ասելով, հասկանում է «ընկալող սուբյեկտի միտումը, շատ հեշտ և արագ ներառել ընկալվող սուբյեկտին համապատասխան կատեգորիաներում, ինչը կախված է նրա տարիքից, սեռից, էթնիկ պատկանելիությունից, մասնագիտությունից, ազգությունից, և այդպես վերագրել նրան հատկություններ, որոնք համարվում են բնորոշ տվյալ կատեգորիայի մարդկանց համար»: [8]

Տ. Շիրուտանին բնորոշում է սոցիալական կարծրատիպը՝ որպես «հանրահայտ հայեցակարգ, որը նշանակում է որոշակի մարդկանց խումբ, որևէ հեշտ տարբերվող նշանով, ինչը կախված է տվյալ մարդկանց հատկությունների համատարած ընկալումից»: [6]

Անգլիացի հոգեբան **Հ. Թեդջֆելը** (H. Tajfel) առանձնացրել է սոցիալական կարծրատիպերի հետազոտության հիմնական եզրակացությունները՝

➤ Մարդիկ պատրաստ են հեշտությամբ բնութագրեր տալ չտարբերվող, կոպիտ և կողմնակալ նշաններով հսկայական մարդկային խմբերին (կամ սոցիալական կատեգորիաներին):

➤ Նման դասակարգումը տարբեր-

վում է երկարատև, ամուր կայունությամբ:

➤ Սոցիալական կարծրատիպերը որոշ չափով կարող են փոփոխվել, կախված սոցիալական, քաղաքական կամ տնտեսական փոփոխություններից, սակայն այդ գործընթացը չափազանց դանդաղ է ընթանում:

➤ Սոցիալական կարծրատիպերը դառնում են ավելի հստակ («արտասանելի»), երբ խմբերի միջև առաջանում է սոցիալական լարվածություն:

➤ Սոցիալական կարծրատիպերը յուրացվում են դեռևս վաղ տարիքում, և օգտագործվում են երեխաների կողմից շատ ավելի շուտ, քան նրանք պատկերացում են կազմում այն խմբերի մասին, որին պատկանում են:

➤ Սոցիալական կարծրատիպերը մեծ խնդիր չեն ներկայացնում, երբ խմբերի միջև թշնամանք չկա, սակայն դժվար է փոփոխել և կառավարել նրանց, երբ կա լարվածություն և կոնֆլիկտ [9.10]:

Ինչպես արդեն նշել էինք, գոյություն ունեն մի շարք տեսական և մեթոդոլոգիական խնդիրներ, որոնց խորը ուսումնասիրությունը անհրաժեշտ է սոցիալական կարծրատիպերի ուսումնասիրության համար: Այդ խնդիրներից մեկն այն է, թե ի՞նչ տարբերություններ կան սոցիալական կարծրատիպերի հոգեբանական և սոցիալական ֆունկցիաների միջև: Հաջորդ խնդիրը այն է, թե որո՞նք են այդ երևույթի տարածման սահմանները, կամ «կարծրատիպայնացման» գործընթացը ո՞ր միջխմբային մակարդակներում է գործում:

Անդրադառնալով առաջին խնդրին՝ պետք է նշել, որ կարծրատիպ հասկացությունը սոցիոլոգների ուշադրության կենտրոնում հայտնվել է ավելի շուտ, քան հոգեբանների: Սոցիալական կարծրատիպերի սոցիալական և հոգեբանական ֆունկցիաների մասին պատկերացումը պայմանավորված է գիտական վերլուծության մակարդակի՝ իրար խառնվելով, որը հանգեցնում է սոցի-

ալական կարծրատիպերի միանշանակ բացասական գնահատականի և՛ որպես հոգեբանական, և՛ որպես սոցիալական երևույթ: Անհրաժեշտ է հասկանալ այն պատճառները, որոնք առաջացնում են կյանքում այս կամ այն երևույթը, ակտիվացնում այն այս կամ այն իրավիճակում, նկարագրել բոլոր ֆունկցիաները, նաև դրական, որոնք էլ առաջացնում և դարձնում են այդ երևույթը անհրաժեշտություն:

Երկրորդ խնդրին անդրադարձ կատարելով՝ կարող ենք ասել, չնայած այն հանգամանքին, որ շատ հեղինակներ հակված են նրան, որ «կարծրատիպայնացման» գործընթացը գործում է սոցիալական փոխհարաբերությունների տարբեր մակարդակներում, սակայն «սոցիալական կարծրատիպ» հասկացությունը ասոցացվում է այդ մակարդակներից մի քանիսի հետ, առաջին հերթին՝ էթնիկ և ռասայական մակարդակների հետ, ամավել քիչ տարիքային և մասնագիտական: Սոցիալական կարծրատիպերի հիմնական աշխատությունները հիմնված են էթնիկ և ռասայական կարծրատիպերի ուսումնասիրությունների վրա:

Շատ հեղինակներ հաճախ նախընտ-

րում են որքան հնարավոր է քիչ օգտագործել այդ հասկացությունը, երբ խոսքը գնում է էթնիկ կարծրատիպերի հետազոտությունների, կամ արդիական միջէթնիկական հարաբերությունների մասին: Հավանաբար, դա պայմանավորված է այն համոզմամբ, որ «կարծրատիպը վատ է», սակայն վերջին ժամանակներում իրավիճակը սկսել է փոխվել: Ռուս հեղինակներից շատերը այն համոզման են, որ սոցիալական կարծրատիպերը կարող են և կառուցողական դեր ունենալ:

Ամփոփելով հոդվածը՝ կարող ենք ասել, որ սոցիալական կարծրատիպերի և սոցիալականացման վերաբերյալ հոգեբանական հետազոտությունները ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք հնարավորություն են տալիս ավելի լավ հասկանալու և բացատրել այդ երևույթները: Շատ կարևոր է նշել նաև, որ կարծրատիպային մտածելակերպը ո՛չ լավ է և ո՛չ էլ վատ. այն կատարում է անհրաժեշտ ֆունկցիա՝ թույլ տալով արագ և հուսալի դասակարգել, պարզեցնել անհատի սոցիալական շրջապատը: Ըստ իս՝ սոցիալական կարծրատիպերի դիտարկումը միայն բացասական տեսանկյունից, այդքան էլ օրբեկտիվ չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреева Г.М. Социальная психология, М., 2007.
2. Белинская Е.П., Тихомадрицкая О.А., Социальная психология: Хрестоматия, 2003 г.– 471 с.
3. Дейкер Х., Фрейда Н. Национальный характер в национальные стереотипы // Современная зарубежная этнопсихология. М., 1979. С. 23—44.
4. Липпман У. Общественное мнение /пер. с англ. Т.В. Барчунова, под ред. К.А. Левинсон, К.В. Петренко. М.: Институт Фонда «Общественное мнение», 2004. — 68 с.
5. Ноэль-Нойман Э., Общественное мнение. Открытие спирали молчания. Пер. с нем./Общ. ред. и предисл. Мансурова Н.С. — М.: Прогресс-Академия, Весь Мир, 1996. — 352 с.
6. Шибутани Т. Социальная психология. М., 1989. — 534 с.
7. Allport G. W. The nature of prejudice. Cambridge: Addison-Welsey, 1954.— 438 p.
8. Taguiri R. Person perception // Lindzey J., Aronson E. (eds.) The Handbook of social psychology. V. 3. N. Y., 1969.
9. Tajfel H. Intergroup behavior // Tajfel H., Fraser C. (eds.) Introducing social psychology. N. Y.: Penguin Books, 1978. P. 401—466.
10. Tajfel H. Social stereotypes and social groups. – Intergroup behaviour / Ed. by J.C. Turner, H. Giles. Oxford, «Basil Blackwell», 1981

ОСНОВНЫЕ ОСОБЕННОСТИ ПСИХОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ СОЦИАЛЬНЫХ СТЕРЕОТИПОВ

*Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета
по науке МОН РА в рамках научного проекта № «16А–5а08»*

ЖОЗЕФИНА ЕСАЯН

*НАН РА, Международный научно–образовательный центр,
кафедры психологии, аспирант*

В статье представлены теоретические подходы к социальным стереотипам и вопросам социализации, а также теоретические и методологические проблемы, которые необходимы для изучения социальных стереотипов в психосоциальной науке. Проблемы социальных стереотипов изучались в рамках философии, социологии, экономики и психологии, а мы сосредоточились на основных особенностях психологических исследований. Мы ссылаемся на мнения таких авторов, как У. Липман, Т. Шибутани, Р. Таджири, Г. Тэджфел и другие.

MAIN FEATURES OF PSYCHOLOGICAL RESEARCH ON SOCIAL STEREOTYPES

*This work was supported by the RA MES State Committee of Science
in the frames of project № ‘16A–5a08’.*

JOZEFINA YESAYAN

*International Scientific–Educational Center of NAS RA,
Department of Psychology, Postgraduate*

The article presents theoretical approaches to social stereotypes and socialization, as well as theoretical and methodological problems, which are necessary for the study of social stereotypes in psychosocial science. Issues of social stereotypes were individually studied in the frames of philosophy, sociology, economy and psychology, but we focus on the main features of psychological research. We referred to the viewpoints of such authors as W. Lippman, T. Shibutani, R. Taguiri, H. Tajfel and others.

ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐՆ ԸՍՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԵՐԵՐԻ

Կառավարչական գործունեության կարևորագույն գործոն է յուրահատուկ կառավարչական ունակությունների համակարգը: Ոչ միայն կառավարման արդյունավետությունը, այլ նաև ընդհանրապես, կառավարչական գործունեություն իրականացնելու հնարավորությունը կախված է նրանից, թե արդյո՞ք անձն ունի համապատասխան ընդունակություններ, թե՞ ոչ: Ինչպես բոլոր գործընթացները, այնպես էլ կառավարման գործընթացը կարող է բնութագրվել իր որակական հատկանիշների տարբերմակարգակներով և իրականացվել շատ կամ քիչ արդյունավետությամբ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կառավարչական ընդունակություններ, դոմինանտություն, հուզական կայունություն, անձնային դինամիկ զարգացում, կոլեկտիվ, հմտություն:

Ընդունակությունները անձի հոգեբանական յուրահատկություններն են, որոնք հիմք են ծառայում որևէ գործողության իրականացման համար և բացահայտում են անձի համար անհրաժեշտ հմտությունների ու գիտելիքների ձեռք բերման տարբեր ընթացքներ: Ընդունակությունները մնացյալ բոլոր հոգեբանական երևույթներից տարբերվում են հետևյալ հիմնական հատկանիշներով՝

- Ընդունակությունները անհատական հոգեբանական յուրահատկություններ են, որոնցով մարդիկ տարբերվում են իրարից: Դրանք այն յուրահատկություններն են, որոնք կապված են գործունեության կամ մի քանի գործունեու-

թյունների հաջող կատարման հետ:

- Ընդունակությունները չեն համարվում գիտելիքների, ունակությունների և հմտությունների արդյունք, որոնք արդեն գոյություն ունեն մարդու մոտ, որոնք որ պայմանավորում են դրանց հեշտ և արագ ձեռքբերումը:

- Ընդունակությունները բնութագրվում են երկու հիմնական հատկանիշներով՝ որակական և քանակական: Ըստ ընդունակությունների որակական հատկությունների՝ դրանք մարդու հոգեբանական հատկությունների բարդ համադրությունն են, որոնք ապահովում են գործունեության արդյունավետությունը: Քանակական բնույթը ենթադրում է դրանց արտահայտվածության, զարգացվածության՝ ընդունակության մակարդակի որոշակի չափ (Шикун А. Ф., Филинова И., 2002: 114-115):

Ընդունակությունների կառուցվածքում ընդունված է առանձնացնել երկու հիմնական տեսակներ՝ ընդհանուր և հատուկ: Ընդհանուր ընդունակություններից է կախված ոչ թե մեկ, այլ մի քանի գործողությունների հաջող իրականացումը, որոնցից է օրինակ ինտելեկտը: Հատուկ ընդունակություններն ապահովում են որևէ կոնկրետ տեսակի գործունեության արդյունավետությունը: Ընդունակությունները մարդու նախնական տվյալների, ձիրքի հիման վրա ձևավորվում, զարգանում են գործունեության ընթացքում: Ձիրքը նյարդային համակարգի և ողջ օրգանիզմի կառուցվածքային ու ֆունկցիոնալ առանձնահատկությունների ամբողջու-

թյունն է, որը նախապայման է բնական, կենսաբանորեն հիմնավորված ընդունակությունների զարգացման համար: Ընդունակությունների զարգացումն անբաժան է ամբողջական անձի զարգացումից: Դրանք ազդելով անձնային որակների ձևավորման վրա՝ ազդեցության են ենթարկվում ձևավորված անձի կողմից [Карпов А. В. 2004: 526]:

Կարծում ենք՝ ընդունակությունների մեջ են մտնում նաև կառավարման առանձնահատկությունները: Վերջինները հանդիսանում են անձի այն հատկությունները, որոնք որպես ընդունակությունների գործառույթ են ծառայում: Անձի կառավարչական առանձնահատկությունների ազդեցությունը հաջողված կառավարչական գործունեություն իրականացնելու և անձի կողմից կոնկրետ մասնագիտական ուղղվածություն ընտրելու վրա, բավականին մեծ է:

Հիմնական կառավարչական առանձնահատկությունները հետևյալն են. տարիքը, սեռը, կրթվածության մակարդակը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը և այլն: Ընդունակությունների գործառույթների մեջ են մտնում ու արդյունավետ կառավարում ապահովում ղեկավարի անձնային հետևյալ որակները. դոմինանտությունը, ինքնավստահությունը, հուզական կայունությունը, սթրեսակայությունը, կրեատիվությունը, նպատակներին հասնելու ձգտումը, նախաձեռնողականությունը, պատասխանատվությունը, առաջադրանք կատարելու վստահությունը, մտքի անկախությունը և շփվողականությունը.

Դոմինանտությունը ավտորիտար ոճի կառավարման նախապայմանն է: Փորձառու ղեկավարները, որոնք ունեն արտահայտված դոմինանտություն, ձգտում են ավտորիտար մեթոդները համադրել դեմոկրատականի հետ, ինչը խթանում է ենթակաների, «աշխատանքային պոտենցիալի» ավելի մեծ ներգրավումը: **Ինքնավարահությունը** կառավարման գործունեության վրա

որակյան ազդեցություն է ունենում երկու հիմնական ուղղություններով. այն ղեկավարի անհատական գործունեության, սեփական ջանքերի կայունարարն է, նրան տալիս է ներքին ուժ, որը խոչնդոտում է արտաքին հակազդեցություններին: Ինքնավստահության բացակայությունը հանգեցնում է ղեկավարի փոփոխամիտ վարքի առաջացմանը, կորցնում է նրա վարքի ինքնուրույնությունը: Այս ամենը տեղի ունենում, երբ ղեկավարը վստահ չէ իր ուժերին և իր ճշմարտացի լինելուն [Карпов А. В. 2004: 532]:

Երկրորդ ուղղությունը կապված է ենթակաների հետ: Ենթակաները շատ լավ են զգում ղեկավարի վիճակը: Նույնականացման, էմպատիայի, փոխանցման շնորհիվ նրանք վերարտադրում են ղեկավարի վարքային կողմնորոշումները: Եթե այն բացասական է, ապա ենթակաների մոտ առաջանում է լարվածություն, անինքնավստահություն, որն էլ ազդում է կառավարչական գործունեության արդյունավետության վրա:

Հուզական կայունությունը անհրաժեշտ է ոչ միայն ղեկավարի հուսալի անհատական գործունեության համար: Հոգեբանության մեջ գոյություն ունի վիճակի արտացոլման մեխանիզմ, երբ խմբի անդամներից մեկի վիճակը, հիմնականում լիդերի, փոխանցվում է մյուս անդամների վրա, ինչպես գիտակցաբար, այնպես էլ անգիտակցաբար: Հետևաբար, ղեկավարի մոտ առաջացած բացասական վիճակը (հուզական անկայունությունը) կարող է ազդել ենթակաների վրա՝ ինչը կարող է խմբի միասնական գործունեության արդյունավետության նվազման նախադրյալ դառնալ: **Նպաստակին հասնելու ձգպումը** և նախաձեռնողականությունը ունեն պատճառահետևանքային սերտ կապ: Նման ղեկավարն ունակ է իր առջև դնել կշռադատված, չափավոր նպատակներ ու ձգտում է, որ ռիսկը լինի կանխատեսելի ու կառավարելի: Նա չի խուսա-

փում ռիսկից, հստակ պատկերացնելով, որ այն հաջողության անհրաժեշտ պայմանն է: Այդպիսի ղեկավարները ձգտում են այնպիսի իրավիճակների, երբ հաղթահարման պատասխանատվությունը դրված է իրենց վրա, ու հաջողությունը հիմնականում կախված է սեփական ջանքերից և ընդունակություններից: Այլ կերպ ասած, նրանք նախընտրում են այնպիսի իրավիճակներ, երբ իրենք են իրենց վարքի, տերը: Նրանք չեն խուսափում իրենց վարքի արդյունքների մասին տեղեկացնող հետադարձ կապից, այլ ընդհակառակը՝ շատ դրական են վերաբերվում դրան և ձգտում են որքան հնարավոր է ամբողջական և օբյեկտիվ տեղեկություն ստանալ իրենց վարքի արդյունքների մասին: Այդ իրազեկությունը նրանք դիտարկում են որպես միջոց, որի հիման վրա կարելի է և պետք է շտկել սեփական վարքը, որպեսզի այն դարձնեն ավելի արդյունավետ [Розанова В. А., Москва 2003: 279]:

Առաջադրանքներ կատարելու պատասխանատվությունն ու վստահելիությունը ուսումնասիրված աշխատություններում նույնպես փոխկապակցված են: Վստահելիությունը հիմնականում, խոսքը պահելու և ունակությունն է, գործունեության այնպիսի արդյունքների հասնելու և այնպես կառուցելու, որպեսզի ապահովի իր վրա վերցրած պարտականությունների իրականացումը: Առանց վստահելիության կառավարչական գործունեությունն անհնար է, իսկ ղեկավարի հանդեպ վերաբերմունքը, անգամ եթե այն եղել է դրական, արագ փոխվում է ինչպես ենթակաների, այնպես էլ այլ ղեկավարների կողմից: Գոյություն ունեն պատասխանատվությունն իրենց վրա վերցնելու անհատական տարբերություններ: Ավելի տարածված է պատասխանատվությունից խուսափելու սուբյեկտիվ միտումը, սակայն պատասխանատվությունը կարող է ընկալվել որպես սուբյեկտիվ նախընտրելի երևույթ, որի դեպքում

դիտվում է պատասխանատվության յուրատիպ պահանջմունքը: Պատասխանատվությունը սերտորեն կապված է նպատակներին հասնելու մոտիվացիայի աստիճանից: Ղեկավարի դերը կառավարման ոլորտում պարտադրում է այս պահանջմունքների բարձր աստիճանի զարգացվածություն, որն էլ վերը նշված անձնային որակները տվյալ կազմակերպության համար դարձնում է նշանակալի [Розанова В. А., Москва 2003: 280, Мангутов И. С. Уманский Л. И. 1975]:

Կառավարման ընթացքում տեղի են ունենում մտքերի, կարծիքների, անհատական հետաքրքրությունների, դիրքերի բախում և բացի այդ, ղեկավարն անընդհատ, «ձնշվում է վերևից»՝ վերահաս մարմինների կողմից: Եթե նա չունի բավարար կայուն և ուժեղ ներքին պաշար դիմակայելու վերևից ու ներքևից եկող ճնշումներին, ապա կառավարումը վերածվում է քառսի, իսկ կառավարման ոճը՝ լիբերալի:

Սկզբնական շրջանում, երբ ղեկավարը «ջերմ» հարաբերություններ է ունենում ենթակաների հետ և լավ հեղինակություն է ձեռք բերում վերադաս մարմինների մոտ, նման դիրքորոշումը բացասական ազդեցություն է թողնում հեռանկարային գործունեությունում: Ընդհակառակը հենց անկախ, այսպես կոչված «անհարմար» ղեկավարները կարող են սկզբնական շրջանում դժվար ընդունվել կոլեկտիվի կողմից և կոնֆլիկտներ ունենալ վերադաս մարմիններ հետ, սակայն արդյունքում նրանք հասնում են բավականին մեծ արդյունքների:

Շփողականությունը ինքնին շատ կարևոր հատկություն է յուրաքանչյուր մարդու և հատկապես ղեկավարի համար: Դա միջանձնային հարաբերություններ կառուցելու ունակություն է, ինչպես նաև լայն սոցիալական կապեր հաստատելու պահանջմունքը: Ղեկավարի համար այս ընդունակության կարևորությունը կայանում է նրանում, որ այն ընկած է կոմունիկատիվ և կազմակերպ-

չական գործառույթների հիմքում, որոնք հիմնականն են ողջ կառավարչական գործունեության կառուցվածքում [Шихун А. Ф., Филинова И.М., М. 2002: 114–115]:

Կարծում ենք՝ կառավարչական գործունեությունը արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ վերը նշված հատկանիշներն ու անձնային որակները վերջնական և ամբողջական չեն: Կառավարման տեսության մեջ ներառված են նման անձնային որակների բազմաթիվ թվարկումներ, որոնք անհրաժեշտ են ղեկավարի գործունեությունն արդյունավետ դարձնելու համար:

Հետազոտություններից մեկում բերվում է հետևյալ դասակարգումը՝

Ա. Կոնցեպտուալ ընդունակություններ և ստանդարտ վարք.

1.լայն հայացքի առկայություն, գլոբալ մտեցում,

2.երկարաժամկետ կանխատեսում և ձկունություն,

3.աշխուժություն, նախաձեռնողականություն, վճռականություն,

4.համառ աշխատանք և անդադար ուսուցում:

Բ. Անձնային որակներ.

1.նպատակները հստակ ձևակերպելու կարողություն,

2.ուրիշների կարծիքը լսելու պատրաստականություն,

3.անկողմնակալություն, անշահախնդրություն և օրինապահություն,

4.ենթականների կարողություններն ամբողջությամբ օգտագործելու կարողություն՝ կատարելով աշխատանքի ձիշտ բաժանում,

5.անձնական հմայք,

6.կոլեկտիվ և ներդաշնակ մթնոլորտ ստեղծելու կարողություն,

7.առողջություն [Карпов А. В. 2004: 535–536]:

Մեծ Բրիտանիայում ղեկավարի նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

• կարողանալ հասկանալ կառավարչական գործընթացի բնույթը, տի-

րապետել կառավարման արդյունավետությունն ապահովող և մեծացնող տարբեր միջոցների.

• կարողանալ հասկանալ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և կոմունիկացիոն միջոցների հետ աշխատանքը, որոնք անհրաժեշտ են կառավարչական գործընթացի համար.

• հռետորական ընդունակություններ և սեփական մտքերն արտահայտելու կարողություն.

• տիրապետել մարդկանց կառավարելու արվեստին, կադրերի ընտրության և պարտրաստման ընդունակություն, ենթակաների միջև հարաբերությունների կանոնակարգման կարողություն.

• կարողանալ կառավարել կազմակերպության ռեսուրսները, պլանավորել և կանխորոշել նրանց գործունեությունը.

• սեփական գործունեության ինքնագնահատականի ընդունակություն, կարողանալ ձիշտ հետևություններ անել և բարձրացնել սեփական որակավորումը.

• կարողանալ գնահատել և զարգացնել ոչ միայն սեփական գիտելիքները, այլ նաև պրակտիկ հմտությունները (http://www.hanadeeva.ru/biblioteka/kingiekonomika/Sergeev/trebovania_krukovoditelu/index.html):

ԱՄՆ-ում կառավարման համակարգում կառավարչի անհրաժեշտ ընդունակություններն են՝

• ինքնակառավարման ընդունակություն.

• պարզ և հստակ նպատակներ առաջադրելու կարողություն.

• դինամիկ անձնային զարգացում.

• որոշումներ ընդունելու ունակություն.

• աշխատանքի մեջ ստեղծագործականություն.

• սեփական ուժերի նկատմամբ վստահություն.

• մարդկանց վրա ազդելու ընդունակություն.

- կառավարման աշխատանքի յուրահատկությունը հասկանալու կարողություն.

- առողջ մտածելակերպի առկայություն.

- կազմակերպչական ունակություններ.

- սովորեցնելու ընդունակություն.

- կոլեկտիվ ձևավորելու և այն զարգացնելու կարողություն (<http://revolution.allbest.ru/management/oo/1596.html/>):

ՌԴ-ում առանձնացնում են կառավարչական հետևյալ ընդունակություններն ու հմտությունները՝

1. Վարչական հմտություններ.

- պլանավորում և կազմակերպում,
- անձնակազմի կառավարում,
- ենթակաների զարգացման խթանում,

- լիդերություն:

2. Մոտիվացիոն հմտություններ.

- նախաձեռնողականություն,
- կողմնորոշվածություն դեպի որակ,

- նպատակաուղղվածություն,

- ինքնազարգացում:

3. Որոշումներ ընդունելու հմտություն,

- խնդրի վերլուծություն,
- տեղեկատվության հավաքում և մշակում,

- մտածողության համակարգվածություն:

4. Անձնային որակներ.

- Սթրեսակայունություն,
- հարմարվելու ընդունակություն,
- պատասխանատվություն,

- դրական մտածողություն:

5. Միջանձնային հմտություններ.

- խմբային աշխատանք,
- համոզիչ հաղորդակցում,

- փոխհարաբերությունների կառուցում:

6. Ղեկավարի կազմակերպական, ընդհանուր, սոցիալական և ստեղծագործական ընդունակություններ.

- շփվելու ունակություն,

- կոլեկտիվում դրական փոխհարաբերությունները,

- բարենպաստ միջանձնային հարաբերություններ կառուցելու ունակությունները (<http://www.perfecting.ru/finance163-organizatorskie-sposobnosti-sovremennogo.html/>):

Ելնելով մշակված գրականության տեսական հիմքերից՝ կարող ենք եզրակացնել, որ ընդունակությունները ձևավորվում են կյանքի ընթացքում, սակայն դրանց զարգացման նախահակվածությունը տարբեր մարդկանց մոտ տարբեր է:

Դրանք դրսևորվում են ոչ թե գիտելիքներում, հմտություններում և ունակություններում, այլ վերջիններիս ձեռք բերման որոշակի գործունեության՝ յուրացնելու գործընթացում [Кишкель Е. Н., Москва, «Высшая школа» 2002: »58]:

Կառավարման գործընթացում ենթակաների վրա ազդեցություն գործելու կարևորագույն գործիք է խոսքը: Ղեկավարի խոսքը կարող է ենթակաների մոտ առաջացնել ինչպես դրական, այնպես էլ բացասական հույզեր, որի արդյունքում փոխվում է տրամադրությունը, կոլեկտիվում տիրող հոգեբանական մթնոլորտը, ենթակաների աշխատունակությունը, որն ուղղակի կերպով ազդում է կոլեկտիվի գործունեության արդյունավետության վրա: Խոսքային հաղորդակցման ընդունակությունը շատ կարևոր է ղեկավարի համար՝ լինի դա հանրային ելույթ, խորհրդատվություն, ժողով, ընկերական կամ դաստիարակչական զրույց, սխալների վերլուծություն, հեռախոսային խոսակցություն, գործնական բանակցություններ և այլն: Ղեկավարի համար կարևոր է իմանակ մարդկանց հետ փոխհարաբերություններ կառուցելու ձիշտ և արդյունավետ ուղիները, սակայն այդ միջոցները պետք է պրակտիկ փորձի արդյունքում բռնած ղեկավարի գործունեության անբաժան մի մասը:

Կոլեկտիվի աշխատանքում բարձր

արդյունքների հասնելու համար, ժամանակակից ղեկավարին անհրաժեշտ են կազմակերպական ընդունակություններ, որոնք միավորվում են երեք խմբերում.

1. Կազմակերպական խորաթափանցությունը, որը ներառում է՝

- հոգեբանական ընտրողականություն, փոխհարաբերությունների մանրութներին ուշադրություն դարձնելու կարողություն, ղեկավարի ու ենթակայի էմոցիոնալ վիճակի համաժամանակացում, իրեն ուրիշի տեղը դնելու ընդունակություն.

- ինտելեկտի պրակտիկ ուղղվածություն. ղեկավարը պտակտիկ առաջադրանքները կատարելու համար պետք է ունենա կոլեկտիվի հոգեբանական վիճակի մասին տվյալներն օգտագործելու կողմնորոշվածություն.

- հոգեբանական նրբագագություն՝ իր հոգեբանական ընտրողականության և պրագմատիկ կողմնորոշվածության մեջ չափի զգացումը պահպանելու ընդունակությունը:

2. Կամային էմոցիոնալ արդյունավետություն՝ հույզերով և կամքի ուժով այլ անձանց վրա ազդելու կարողություն, որը կազմված է հետևյալ գործոններից՝

- աշխուժություն.

- ենթակաների գործունեությունը սեփական ցանկություններին համապատասխան ուղղորդելու կարողություն.

- ենթակաների մեջ ձգտում առաջացնելու կարողություն.

- նպատակներին հասնելու հավատ և դրական տրամադրվածություն.

- սեփական առաջադրանքների կատարման նկատմամբ պահանջկոտություն և ենթականերին ուղղված պահանջների իրականացման կարողություն.

- սեփական գործունեությունը քննադատաբար գնահատելու ընդունակություն:

3. Կազմակերպական գործունեության հակվածություն (Карпов А. В. 2004: 530–531):

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ ստեղծագործական ընդունակությունը սովորական և ամենօրյա իրադարձությունների և առաջադրանքների նկատմամբ մարդկային յուրահատուկ հայացք, մոտեցումներ գտնելու ունակությունն է: Յուրաքանչյուր անձ ունի ստեղծագործական որոշակի նախադրյալներ, որոնք, սակայն, միանգամից ի հայտ չեն գալիս: Դրանք պետք է զարգացնել: Ստեղծագործական գործընթացը որոշումների շղթա է, որոնք ի հայտ են գալիս խորհելու կամ քննարկումների ընթացքում: Այլ կերպ ասած, հայտնագործություններն ու բացահայտումները նպատակաուղղված մտավոր գործունեության արդյունք են, իսկ ընդհանուր ընդունակությունները, որոնք նշանակալիորեն ազդում են կառավարման գործունեության արդյունավետության վրա, հիմնականում հետևյալն են՝ ինտելեկտը, կրեատիվությունը, ռեֆլեքսիվությունը, ակտիվությունը և ինքնակառավարումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Карпов А. В., Психология менеджмента, Москва, «Гардарики» 2004г., 576 стр.
2. Кишкель Е. Н., Управленческая психология, Москва. «Высшая школа» 2002г., 270стр.
3. Мангутов И. С. Уманский Л. И., «Организатор и организаторская деятельность, Ленинград, 1975г.
4. Розанова В. А., Журнал управления персоналом, Москва 2003г.
5. Шикун А. Ф., Филинова И. М., «Управленческая психология», М. 2002, Аспект–Пресс, 331стр.
6. http://www.hanadeeva.ru/biblioteka/kingiekonomika/Sergeev/trebovania_k_rukovoditelu/index.html
7. <http://revolution.allbest.ru/management/oo/1596.html/>
8. <http://www.perfecting.ru/finance163-organizatorskie-sposobnosti-sovremennogo.html/>

КОМПЛЕКС УПРАВЛЕНЧЕСКИХ КАЧЕСТВ РУКОВОДИТЕЛЯ В СООТВЕТСТВИИ
С ОСУЩЕСТВЛЯЕМЫМИ РОЛЯМИ

ЛУСИНЕ ЧИЛИНГАРЯН

*Университета «Урарту»,
кафедра прикладной психологии и социологии, соискатель,
АНАУ, кафедра политологии и юриспруденции, ассистент*

Комплекс специфических управленческих навыков является одним из важнейших факторов управленческой деятельности. Не только эффективность управления, но и возможность ведения управленческой деятельности зависят от того, обладает ли данное лицо соответствующими способностями. Как и любой другой процесс управленческая деятельность может характеризоваться различными уровнями качественных показателей и может осуществляться с большей или меньшей эффективностью.

SET OF LEADERSHIP COMPETENCIES ACCORDING TO THE ROLES ENACTED

LUSINE CHILINGARYAN

*Urartu University, Department of Applied Psychology and Sociology, Applicant
The Armenian National Agrarian University, Department of Political Science and Jurisprudence,
Assistant*

The complex of specific management skills is one of the most important factors of administrative activity. Not only management efficiency but also the ability to perform administrative activities in general depend on whether or not the person has the appropriate skills. Like any other process, management activities can be defined in different levels of their qualitative characteristics and can be more or less efficient.

**ԻՆՏԵԼԵԿՏԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Այս հոդվածում քննարկվում է «ինտելեկտ» հասկացությունը և դրա դերը գիտության մեջ: Ինտելեկտի հիմնախնդիրն ուսումնասիրել են բազմաթիվ հեղինակներ, ինչպես՝ Ֆ. Գալտոնը, Ժ. Պիաժեն, Լ. Տերստոունը, Հ. Այզենկը, նաև Խ. Գարդները, Մ. Անդերսոնը և այլք: Հոդվածում ներկայացված են նաև ինտելեկտի ուսումնասիրությանը վերաբերող հիմնական տեսությունները՝ 2. Սպիրմենի «Ինտելեկտի երկֆակտոր տեսությունը», Մ.Անդերսոնի «Ինտելեկտի և ճանաչողության զարգացման տեսությունը», Խ. Գարդների «Ֆազմակի ինտելեկտի տեսությունը» և այլն:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ինտելեկտ, ինտելեկտուալ կարողություն, մտածողություն:

Աշխատանքը նվիրված է «ինտելեկտ» հասկացության ուսումնասիրմանը, քանի որ այն գիտության մեջ վիճահարույց է: Գաղտնիք չէ, որ մեր օրերում ամենուր, պատեհ և ոչ պատեհ առիթներով արծարծվում է «ինտելեկտ» հասկացությունը: Խոշոր գործատուներն աշխատանքի ընդունելիս կարևորում են աշխատողի ինտելեկտուալ կարողությունները, շատ կրթական օջախներ ևս կարևորում են բարձր ինտելեկտուալ կարողություններով սովորողների ընդունելությունը, իսկ ինչպե՞ս են այն սահմանում, ի՞նչ տեսություններ են առաջադրվել և ո՞ր գիտնականների կողմից: Ահա այստեղից էլ բխում է «ինտելեկտի» հիմնախնդրի ուսումնասիրության անհրաժեշտությունը: «Ինտելեկտ» բառը լատիներեն ծագում ունի, ծագել է

«intelleqtus» բառից, որը նշանակում է իմացություն [1, էջ 29]: Մարդու ընդունակությունների հիերարխիական ամբողջությունը, որով բնութագրվում է նրա մտածողության պրոցեսների մակարդակը, նոր իրադրությունները ճիշտ ըմբռնելու և ինքնուրույնաբար խնդիրներ լուծելու, ընկալած ինֆորմացիայի տարբեր բաժինների միջև կապեր հաստատելու հնարավորությունն է: Ինտելեկտը դրսևորվում է բոլոր իմացական պրոցեսներում և չի հանգեցնում դրանցից որևէ մեկին, թեև մտքի հիմնական որակները (խորությունը, լայնությունը և այլն) նաև բանականության հիմնական որակներն են: Ինտելեկտի բարձր մակարդակը թույլ է տալիս հաջողությամբ իրագործել գործունեության զանազան տեսակներ և ճիշտ արտացոլել ու ձևափոխել իրականությունը [1, էջ 29]:

Ինտելեկտի հիմնախնդիրն անդրադարձել են բազմաթիվ ռուսական և արտասահմանյան հեղինակներ: Ինտելեկտի ուսումնասիրության հարցում մեծ ավանդ ունեն Ֆ. Գալտոնը [4], Ժ. Պիաժեն [7], Լ. Տերստոունը [4, էջ 29], Հ. Այզենկը [3], հետագայում նաև Խ. Գարդները, Մ. Անդերսոնը և այլք: Ինտելեկտի արդյունքների կոմպոնենտների ուսումնասիրման փորձեր են արել գեշտալտ հոգեբաններ՝ Մ. Վերտհայմերը, Վ. Կյոլերը, 20-րդ դարի ֆրանսիացի հոգեբաններ Ա. Բինեն և Տ. Սիմոնը, ովքեր առաջարկեցին մտավոր օժտվածության աստիճանի ստուգման սոցիալական թեստերը [4, էջ 119]:

Հայտնի անգլիացի հոգեբան Հանս

Յուրզեն Այզենկն [3] ինտելեկտի վերաբերյալ գրել է, որ այն գիտական հասկացություն է, այնպես ինչպես ծանրության ուժն է, քիմիական կապերը, էլեկտրաէներգիան: Ինտելեկտ հասկացությունը մարդիկ հայտնաբերել են, որպեսզի կարգի բերեն և համակարգեն գիտական գիտելիքները [3, էջ 111]: Նա նշում է նաև, մինչ ինտելեկտի սահմանումը տալը պետք է հստակեցնել նրա երեք բաղկացուցիչները՝ կենսաբանական ինտելեկտը, հոգեչափական ինտելեկտը և սոցիալական ինտելեկտը: Առանց այդ երեք կետերի հստակեցմանը, տարբերակմանը մենք չենք կարող բացահայտել ինտելեկտ հասկացությունը: Հ. Այզենկը կարևորեց սոցիալական ինտելեկտի դերը, որը ներառում է կրթությունը, առողջությունը, մշակութային ներգործությունը: Հոգեչափական կողմը դաստիարակությունն է ընտանիքում, կրթությունը, իսկ կենսաբանական ինտելեկտը ֆիզիոլոգիական և գենետիկ կողմն է ներառում: Այստեղից էլ սահմանեց՝ ինտելեկտը կենսաբանական, հոգեչափական և սոցիալական կոնցեպցիաների միասնությունն է [3, էջ 112]:

Հայտնի հոգեբան Ժ. Պիաժեն (1951թ.) ինտելեկտը նկարագրում է որպես զարգացման կարողություն և գիտելիքների վերարտադրություն: Նա հետևյալ օրինակն ու համեմտությունն է առաջարկել՝ ինտելեկտը նման է տան կառուցումանը: Նա կարծում էր տան կառուցումը կախված է ոչ միայն կառուցողի հնարավորություններից, այլ նաև այն նյութերից, որոնցից նա օգտվում է: Նույնը ինտելեկտի դեպքում է, մարդը կարող է ունենալ բարձր ինտելեկտուալ կարողություններ, բայց կարևորն այն է, թե նոր ստացած գիտելիքներից ինչպես է օգտվում: Այստեղից էլ նա եզրակացրեց՝ որքան ուժեղ է անհատի պահանջմունքների բավարարման ստիմուլը, այնքան ուժեղ է նրա հակազդումն այդ պահանջմունքի նկատմամբ [6, էջ 32]: Այստեղ հարց է ծագում, թե որտեղից

է սկիզբ առնում այդ պահանջմունքների բավարարման ստիմուլը, որը նպատակում է ինտելեկտի զարգացմանը: Այդ մասին, արդեն Անաստազին, գրում է, որ շրջապատը, որը առաջարկում է անհատին համապատասխան ստիմուլ, գրգռում է փոխազդեցությունը շրջապատող աշխարհի նկատմամբ, ազդում է մարդու հնարավորությունների վրա և աշխատեցնում գիտելիքներն ու հենց դրանով զարգացնում նրա ինտելեկտը: Անաստազին (1976թ.) բացահայտեց նաև, որ շրջապատի փոփոխությունները, օրինակ՝ ընտանեկան համակարգում (նոր երեխայի ծնունդ, առավել օժտված քույր կամ եղբայր, ծնողների բաժանում, հիվանդություն, մոտ մարդկանցից որևէ մեկի կորուստ) բացասական ձևով է ազդում երեխայի ինտելեկտի զարգացման վրա: Նման իրավիճակներում շատ հաճախ լուծումը կայանում է նրանում, որ պետք է ինտելեկտի գործակիցը բարձրացնել պոզիտիվ ինտերվենցիայի հիմքի վրա: Օրինակ՝ թերապիայի միջոցով, որը կայունացնում է երեխայի անհատականությունը: Նաև գոյություն ունի ներքին կապ ծնողների և ուսուցիչների հարաբերությունների՝ երեխայի նկատմամբ և նրա ինտելեկտի թեստավորման արդյունքների միջև [6, էջ 45]:

Ինտելեկտի սահմանում է տվել նաև անգլիացի հոգեբան 2. Սպիրմենը [2, էջ 26]: Նա կարծում է, որ ինտելեկտը մի ընդհանուր կարողություն է, որի աշխատանքը պայմանավորված է այն գործոնով, որը առանձնահատուկ է կոնկրետ տվյալ գործունեության համար: Եվ հետագայում նա առաջ քաշեց ինտելեկտի երկֆակտոր տեսությունը: Այդ ֆակտորներն են նա նշանակեց G և S ֆակտորներ [2, էջ 27]: Սա ինտելեկտի ուսումնասիրության միակ տեսությունը չէ: Ինտելեկտի ուսումնասիրության բազմաթիվ տեսություններ կան, դրանցից են՝ Լ. Տերստունի «Ինտելեկտի բազմագործոն մատրիցների կորելյացիայի տեսությունը» [2, էջ 29], Խ. Գարդների

«Բազմակի ինտելեկտի տեսություն» [5, էջ 421], Մ. Անդերսոնի «Ինտելեկտի և ճանաչողության զարգացման տեսություն» [5, էջ 423] և այլն: Անդրադարձ կատարենք այդ տեսություններից մի քանիսին ևս:

Խ. Գարդներն [5, էջ 421] ինտելեկտը դիտարկում էր իբրև խնդիրներ, հարցեր լուծելու կարողություն: Ըստ նրա՝ ինտելեկտը մի քանի տեսակ ունի, որն էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ խնդիրները տարբեր լուծումներ կարող են ստանալ՝ վերբալ, երաժշտական-ձայնային, ներանձնային և այլն: Իր առաջարկած տեսությունը կոչեց «Բազմակի ինտելեկտի տեսություն»: Ինտելեկտուալ կարողություններն ըստ Խ. Գարդների յոթն են՝ վերբալ ինտելեկտ, երաժշտական ինտելեկտ, մաթեմատիկական-տրամաբանական, տարածական ինտելեկտ, մարմնական-կինեսթետիկ ինտելեկտ, ներանձնային ինտելեկտ, միջանձնային ինտելեկտ [5, էջ 421]:

Սակայն, Խ. Գարդների առաջարկած տեսության նկատմամբ հետազայում առարկություններ ներկայացրեց հոգեբան Մայք Անդերսոնը [5]: Մասնավորապես նա գտնում էր, որ Խ. Գարդները հստակ չի բաժանել բազմակի ինտելեկտուալ կարողության բնույթը: Անդերսոնը գտնում էր, որ Խ. Գարդները մեկ վարքի ձևի տեսանկյունից է բաժանել ինտելեկտը, մեկ կոգնիտիվ պրոցեսների տեսանկյունից, մեկ ուղեղի կառուցվածքի տեսանկյունից: Այս անորոշությունից դուրս գալու և ընդհանուր ինտելեկտը սահմանելու համար նա հետևեց Տերստոունին: Դրա հիման վրա առաջադրեց իր տեսությունը և կոչեց «Ինտելեկտի և ճանաչողության զարգացման տեսություն» [5, էջ 423]: Համաձայն Անդերսոնի, ինտելեկտը ներառում է երկու «յուրահատուկ կարողություն»: Դրանցից մեկը կապված է լեզվամաթեմատիկական արտահայտման հետ, մյուսը՝ տարածական տեսողական գործառնության հետ [5, էջ 424]:

Ի տարբերություն Անդերսոնի առաջարկած տեսության, Ստերնբեռզը առաջարկեց իր եռաստիճան տեսությունը, որը դիտարկում է անհատական փորձի, ինչպես նաև ինֆորմացիայի մշակման հիմնական մեխանիզմները [5, էջ 425]: : Նրա տեսությունը բաղկացած է հետևյալ երեք բաժիններից կամ սուբտեսություններից՝ բաղկացուցային սուբտեսություն, փորձարարական (էքսպերիմենտալ) սուբտեսություն, կոնտեքստային սուբտեսություն: Ըստ Ստերնբեռզի, սրանցից առավել մշակվածն ու կիրառելի բաղկացուցային սուբտեսությունն է, որը վերաբերվում է մտածողության գործընթացին, սակայն միայն բաղկացուցային սուբտեսությունով հնարավոր չէ ամբողջապես մեկնաբանել մարդկանց միջև անհատական առանձնահատկություններն ու տարբերությունները ինտելեկտուալ ոլորտում, քանի որ ինտելեկտի մեկնաբանման ոլորտում կարևոր է նաև անհատի վրա մշակութային ազդեցությունը և անհատական փորձը [5, էջ 425]:

Այսպիսով՝ ինտելեկտը մարդու մտածողության պրոցեսի բաղկացուցիչն է, որը խիստ անհատական է: Այստեղ մենք հակված ենք կրկին անդրադառնալու Հ. Այզենկի առաջարկած այն մտքին, որ մարդու ինտելեկտի զարգացման վրա ազդում են ոչ միայն ժառանգականությունը, այլև արտաքին սոցիալական միջավայրը՝ դաստիարակությունը, կրթությունը, մշակույթը, անհատի սոցիալական ստատուսը: Կարծում ենք, որ ինտելեկտը բազմակողմանի է և գործունեության տարբեր ոլորտներում դրսևորվում է յուրովի: Այստեղ էլ հանգում ենք Խ. Գարդներնի ինտելեկտի վերաբերյալ սահմանմանը, համաձայն որի, ինտելեկտը խնդիրների լուծման կարողությունն է [5]: Ինտելեկտի վերաբերյալ մեր ուսումնասիրությունները շարունակվում են և հետազոտության արդյունքները կներկայացնենք մեր հետագա աշխատանքներում:

ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Ա. Նալչազյան, Հոգեբանական բառարան, Երևան, 1984թ.:
2. Дружинин В. Н, “Психология общих способностей”, 3-е издание 2007 г..
3. Айзенк Г.Ю “Іонүтие и определение интеллекта”// Вопросы психологии, 1995. – № 1. – С. 111–131.
4. «Краткий психологический словарь», Под общей редакцией А.В. Петровского и М.Т. Ярошевского, Москва 1985г.
5. Аткинсон Р.Л., Аткинсон Р.С., Э.Е. Смит, Д.Дж. Бем, С. Нолен–Хозксема.. «Введение в психологию». 15-е международное издание, Под общей редакцией В.П. Зинченко Санкт–Петербург, Прайм–Еврознак, 2007
6. Разжитие и диагностика способности//отв. Ред. Дружинин В. Н, Шадриков В. Д, Москва 1991 г.
7. Пиаже Ж. “Психология интеллекта” перев. А. М. Пятигорского. СПб., 2003.– 192 с.

ՕՊՐԵԴԵԼԵՄԵ ՆՏԵԼԼԵԿՏԱ Վ ՆԱՒԱԿ Ի ԱՆԱԼԻԶ ԹԵՈՐԻՅ

ՄԱՐԻԱՆԱ ԱՎԵՏԻՏՅԱՆ

ԱԳՄԱ, կաբեդրա քրիկադնայ քսիկոլոգիա, կանդիատ քսիկոլոգիկեսկիս նաւկ, ձոցենտ

ԿԱՏԵՎ ԱՎԵՏԻՏՅԱՆ

ԱԳՄԱ, կաբեդրա քրիկադնայ քսիկոլոգիա, սոսկատել

Վ ձանոյ սադե բասադրաւաթաթա քոնաթա ինտելլեկա ի եոյ մեթո Վ քսիկոլոգիկեսկոյ նաւկե. Քրոբլեմա ինտելլեկա եթա իսսլեձոձաձա սլեձոյոյոսկիս աձորաթա: Փ. Գալտոն, Զ. Քիաձե, Լ. Կերստոյն, Գ. Այզենկ ա թաձե Խ. Գարձներ, Մ. Անդերսոն ի ձրոյոյե. Քրեձաձաձա Օսոձաձա թեորիա ինտելլեկա: Չ. Տիրմեն– “Եւոյխֆադորնայ թեորիա ինտելլեկա”, Մ. Անդերսոն – “Կեորիա ինտելլեկա ի կոգնիտիձոնոյ ձաձաթա”, Խ. Գարձներ – “Կեորիա մոյոթեձաձաձոնոյ ինտելլեկա” ի թ ձ.

DEFINITION OF INTELLECT IN THE SCIENCE AND ANALYSIS OF THEORIES

MARIANA AVETISYAN

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
Department of Applied Psychology,
Candidate of Psychological Sciences*

TATEV AVETISYAN

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
Department of Applied Psychology, applicant*

This article discusses the concept of intelligence and its place in psychological science. The problem of intelligence was investigated by the following authors: F. Galton, Piaget, L. Thurstone, Eysenck, H. Gardner, M. Anderson and others.

The basic theories of intelligence such as Ch. Spearman–”Two–factor theory of intelligence”, M. Anderson – “The development of cognitive intelligence”, H. Gardner – “The theory of multiple intelligences” and so on are being discussed.

**ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Հողվածում ուսումնասիրվում է աշխատավայրում կիրառվող հոգեբանական ճնշման՝ մոբբինգի երևույթը: Ներկայացվում են մոբբինգի առաջացման պատճառները, տարատեսակները, հիմնական դրսևորումները և հետևանքները: Բացահայտվում են աշխատակցի և ղեկավարի նկատմամբ իրականացվող մոբբինգի հայտանիշները: Տրվում են մի շարք հանձնարարականներ, որոնք նպաստում են մոբբինգային իրավիճակները հաղթահարելուն:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. մոբբինգ, բուլլինգ, բարոյական խախտում, զոհ, հորիզոնական և ուղղահայաց մոբբինգ, սենդվիչ-մոբբինգ:

Մեր բառապաշարում հազվադեպ է օգտագործվում «մոբբինգ» եզրը: Իրականում երևույթը նոր չէ. աշխատավայրում պաշտոնակիցների հարձակումներն ու բանսարկությունները հայտնի փաստ են, սակայն որպես հոգեբանական հիմնահարց՝ մոբբինգը սկսեց քննարկվել XX դարի երկրորդ կեսին: Առաջին հետազոտություններն անց են կացվել Շվեյցարիայում և Գերմանիայում: Երևույթը շատերին հետաքրքրեց այն բանից հետո, երբ բացահայտվեցին մոբբինգի հետևանքները: Դրանք են՝

•նշանակալի տնտեսական վնասներ ձեռնարկությանը՝ արտադրության կտրուկ նվազման տեսքով.

•մոբբինգի զոհ դարձած աշխատակիցների մոտ մարմնական և հոգեկան հիվանդությունների մի ամբողջ «փնջի» առկայություն:

Տարբերակում են անձնակազմի «մոբբինգ» և «բուլլինգ» հասկացու-

թյունները [5]: Մոբբինգը (անգլ.՝ **mob** – հավաքվել, խմբվել) բնորոշվում է որպես գործատուի և այլ աշխատակիցների կողմից որևէ աշխատակցի նկատմամբ հոգեբանական ճնշման գործադրում, որի մեջ ներառվում են մշտական բացասական կարծիքները, քննադատությունները, աշխատակցի մասին սխալ տեղեկատվության տարածումը, կազմակերպության ներսում նրա սոցիալական մեկուսացումը: Բուլլինգը (անգլ.՝ **bully** – կռիվ սարքել, սպառնալ) ագրեսիվ վարքագիծ է, որը դրսևորվում է աշխատակցի նկատմամբ դաժանության, չարամիտ հետապնդման, ստորացման, նրա հեղինակությանը վնասելու փորձերի տեսքով: Բուլլինգը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով՝ վիրավորանքներ, գոռգոռոցներ, ուրիշի տեսակետի չընդունում, շրջապատողներին սեփական տեսակետի պարտադրում, քննարկման բացակայություն, լիազորությունների կենտրոնացում մեկ մարդու ձեռքերում, աշխատակցի մշտական քննադատություն, ծառայողական անհամապատասխանության և անձեռնհասության մատնանշում:

Անշուշտ, նշված երկու եզրերը մոտ են, ուստիև մոբբինգը դիտարկվում է որպես կազմակերպչական փոխհարաբերությունների մի ամբողջություն, որը դրսևորվում է հոգեբանական ճնշման տարաբնույթ ձևերով:

Մի քանի տասնամյակ է, ինչ եվրոպական երկրներում բազմաթիվ կազմակերպություններ հետազոտություններ են իրականացնում աշխատանքային հարաբերությունների ուսումնասիրման ոլորտում: Հիմնահարցի արդիականու-

թյունը հաստատվում է վիճակագրական տվյալներով:

Արդյունքները փաստում են, որ աշխատանքի վարձվողների 3-4%-ը հայտնվում է ուղղակի կամ անուղղակի հոգեբանական ճնշման իրավիճակում: Եվ դա կատարվում է դեռևս աշխատանքի ընդունվելու պահին: Երկար ժամանակահատվածի ընթացքում աշխատողների տվյալները ևս մխիթարիչ չեն՝ մոբբինգի գոհ է դառնում 30-50%-ը [2]:

Մոբբինգ իրականացնող անձի գործողությունները սովորաբար իրավաբանորեն պատժելի չեն և համարվում են բարոյական խախտումներ, վատագույն դեպքում կարող են որակվել որպես կարգուկանոնի խանգարում, սակայն երբեմն մարդիկ, մոլեգին կերպով տարվելով հալածանքներով, խախտում են օրենքը կամ էլ մոբբինգի գոհին հրահրում են կատարել գործողություններ, որոնք իրավաբանորեն պատժելի են:

Մոբբինգում առկա են երկու կողմեր՝ հարձակվողներ և պաշտպանվողներ: Հաճախ հարձակվողների թվաքանակն արագ աճում է, և պաշտպանությունը գնալով թուլանում է: Արդյունքում մոբբինգի գոհը զգում է միայնակություն, օտարում, հայտնվում է «մեկը բոլորի դեմ» իրավիճակում:

Հարձակվողի, այսինքն՝ մոբբինգի կազմակերպիչի դերում, կարող է հայտնվել ցանկացած մարդ: Եվ պարտադիր չէ, որ դա լինի ղեկավարը: Մոբբինգի կազմակերպիչը հաճախ առաջնորդվում է հետևյալ սկզբունքով. «Այն մարդը, ով ինձ դուր չի գալիս, պետք է հեռանա»:

Մոբբինգի պատճառները բազմազան են. օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով մարդը կարող է զգալ վախ, նախանձ, անհանգստություն, կասկած: Ընդ որում, զոհը կարող է ընդհանրապես չիմանալ դրանց մասին կամ իմանալ արդեն աշխատանքից ազատվելուց հետո:

Այն իրավիճակում, երբ աշխատակիցների մեջ «հնարնակների» մեծ մասը կազմում են ավագ սերնդի ներկայացուցիչները, իսկ նորեկը երիտասարդ, նոր գիտելիքներով և կարողություններով անձնավորություն է, մոբբինգի պատճառը հնարնակների՝ աշխատատեղը պահպանելու վախն է:

Կարող է լինել այլ իրավիճակ՝ հնարնակներն ուրույն կարծիքներ, համոզմունքներ ունեն, իսկ նորեկն այլ կերպ է մտածում: Սկսում է գործել հետևյալ սկզբունքը. «Նա այնպիսին չէ, ինչպես բոլորը»: Եվ դա առաջացնում է անհանդուրժողականություն նոր աշխատակցի նկատմամբ:

Մեկ ուրիշ իրավիճակում նոր աշխատակիցը փորձում է ցույց տալ, թե ինքն ինչերի է ընդունակ, այսինքն՝ աշխատում է շատ, արագ, ինտենսիվ՝ ուրիշների մոտ առաջացնելով կտրուկ դժգոհություն: Մարդիկ չեն ցանկանում, որ աշխատանքի հաստատուն ռեժիմը (անգամ եթե այն արդյունավետ չէ) խախտվի որևէ մեկի կողմից:

Մոբբինգի պատճառ կարող է դառնալ «հին» աշխատակցի տարրական նախանձը, ով պլանավորել էր ստանալ տվյալ պաշտոնը, իսկ նորեկն իր ճանապարհը «կտրեց»:

Մոբբինգ առաջանում է նաև «անպատասխան սիրո» պատճառով, երբ ենթական կամ պաշտոնակիցը մշտապես ենթարկվում է սեռական ոտնձգությունների: Աշխատանքից հեռացվելու շատ դեպքեր տեղի են ունենում այս հողի վրա:

Հաճախ կազմակերպության աշխատանքային մթնոլորտն է մարդկանց մղում վնասել ուրիշներին: Մարդիկ խարդավանքներ են հյուսում, որպեսզի իրենց դիրքն «ամուր» պահեն:

Մոբբինգի առիթ կարող է հանդիսանալ հենց ինքը՝ զոհը, ով, օրինակ, ցուցադրի իր առավելությունն ուրիշների նկատմամբ, իրեն պահի ամբարտա-

վան, գոռոզ, պաշտոնակիցների հետ հարաբերություններում հեռավորություն պահպանի:

Մոբբինգային իրադրության դրսևորումները կարող են գոհին հուշել, որպեսզի նա անհրաժեշտ քայլեր ձեռնարկի, զգուշանա չնտածված արարքներ կատարելուց: Մոբբինգի հիմնական դրսևորումներն են՝

- գոհին կամ չեն հաղորդում անհրաժեշտ տեղեկությունները, կամ ներկայացնում են այնպիսի հաշվարկով, որ նա ոչինչ չկարողանա փոխել.

- եթե անգամ տեղեկատվությունը ներկայացվում է, ապա՝ խեղաթյուրված տեսքով.

- գոհի աշխատանքային սեղանից փաստաթղթերը պարբերաբար կորչում են կամ դրվում են այլ տեղում.

- մոբբինգում ներքաշված աշխատակիցներն անում են ամեն ինչ, որպեսզի անելանելիության տպավորություն ստեղծվի (գործերի ընթացքը մշտապես ներկայացնում են վատագույն ձևով).

- գոհի հետ խոսակցություններ չեն վարում աշխատանքին չվերաբերող թեմաներով (արձակուրդ, ծննդյան տարեդարձ, վերջին իրադարձություններ).

- եթե գոհը մտնում է այն տարածքը, որտեղ գտնվում են իր դեմ դավեր նյութող աշխատակիցները, խոսակցությունը ցուցադրաբար ընդհատվում է, ողջույնին ոչ ոք չի պատասխանում. մարդը հասկանում է, որ իր հետ հաղորդակցումը սահմանափակված է և հանգում է միայն խիստ անհրաժեշտին.

- մոբբինգի ցանկացած իրավիճակ կապված է գոհի մասին տարբեր ասեկոսներին տարածման հետ, որոնք հաճախ անհերթեթ թնույթ են կրում, սակայն գոհի բացատրությունները ոչ ոք չի ցանկանում լսել կամ ընդունել.

- գոհին մշտապես կատակով ծաղրում են, օրինակ՝ կարող է սուրճ լցվել այն փաստաթղթի վրա, որը նրա համար կարևոր է, կորչեն նրա անձնական իրերը [4]:

Առաջին հայացքից վերոնշյալ գործողությունները կարող են անվնաս թվալ, սակայն երբ դրանք պարբերական թնույթ են կրում, գոհին կարող են հասցնել մոլեգնության: Զոհը դառնում է ագրեսիվ և սկսում է բացահայտ կերպով վրեժխնդիր լինել, ընդ որում, պարտադիր չէ, որ վրեժխնդրության օբյեկտ դառնա հենց մոբբինգի կազմակերպիչը: Վրեժխնդրությունը կարող է ընդունել այնպիսի ձևեր, որ արդյունքում գոհը հայտնվի դատապարտյալի աթոռին:

Մշտապես «գոնավորման» ենթարկվող մարդը սկսում է անփույթ վերաբերվել իր արտաքին տեսքին, թույլ է տալիս իրեն ոչ թնութագրական սխալներ, հիմնականում վատ տրամադրություն է ունենում: Մոբբինգային իրավիճակը կարող է այնքան ուժեղ ներգործել մարդու հոգեկանի վրա, որ նա լրջորեն հիվանդանա: Մոբբինգի ծանր հետևանքներից մեկը հետտրավմատիկ սթրեսային խանգարումն է, որի հաղթահարումը պահանջում է հոգեբանի աջակցություն:

Մոբբինգը լինում է «հորիզոնական» (նույն մակարդակի աշխատակիցների միջև) և «ուղղահայաց» (տարբեր մակարդակի աշխատակիցների միջև): Հորիզոնական մոբբինգ հաճախ իրականացնում են հին աշխատակիցները նորեկների նկատմամբ: Այն կարող է դրսևորվել «բոյկոտի» ձևով, ոչ ճիշտ տեղեկատվություն տրամադրելով, խնդրանքն անտեսելով, բամբասանքներ տարածելով: Սովորաբար նման իրավիճակ ստեղծվում է, եթե նորեկին մրցակից են համարում կամ նա կոլեկտիվից խիստ առանձնանում է իր յուրահատուկ լինելով: Հաճախ պատճառը նախանձն է ավելի երիտասարդ և հաջողակ պաշտոնակցի նկատմամբ:

Բացահայտվել է, որ «գոնավորման» կազմակերպիչները մեծ մասամբ տարեց աշխատակիցներն են, ովքեր տեղը կորցնելու մտավայություն ունեն: Եր-

բեմն էլ ճնշումը ժամանակավոր բնույթ է կրում և նորեկին կոլեկտիվի անդամ «ձեռնադրելու» յուրահատուկ արարողություն է դառնում [1]:

«Ուղղահայաց» մոբբինգ հաճախ ծագում է այնտեղ, որտեղ ծառայության մեջ առաջ գնալու համար «տեղ ազատելու», մրցակցին վերացնելու կամ նրա նկատմամբ վրեժխնդիր լինելու կարիք կա: Երբեմն ղեկավարն այս կամ այն պատճառով ցանկանում է ազատվել աշխատակցից, սակայն դա չի կարող անել օրինական ճանապարհով: Օրինակ՝ նոր ղեկավարն ուզում է այլ թիմ հավաքել: Համաձայն օրենքի՝ առանց լուրջ հիմքերի ենթակային հնարավոր չէ ազատել: Շատ ավելի հեշտ է աշխատակցին մշտապես մեղադրել անձեռնհասության, անկարգապահության մեջ, նրա առջև անիրականանալի առաջադրանքներ դնել և, վերջիվերջո, հարկադրել նրան՝ հեռանալ սեփական կամքով:

Միջին օղակի ղեկավարը, որպես կանոն, ունենում է օգնականներ, ովքեր երազում են զբաղեցնել նրա տեղը: Բացի այդ, մեկ աստիճան վերևում գտնվող ղեկավարը նույնպես մտավախություն է ունենում, որ կարող են իրեն «դարանակալել»: Երկու կողմերից գտնվելով ճնշման տակ՝ միջին օղակի ղեկավարն իր մաշկի վրա զգում է «սենդվիչ-մոբբինգի» բոլոր անհարմարությունները:

Կառավարման բարձրագույն մակարդակում կարիերային աճի հարցերը չափազանց սուր են դրված, հետևաբար, ուղղահայաց մոբբինգում կիրառվում են առանձնահատուկ նենգ, դավադիր մեթոդներ: Եթե շարքային աշխատակիցը հեշտությամբ զգում է կոլեկտիվում իր նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը, ապա ղեկավարի նկատմամբ մոբբինգի հայտանիշներն այլ տեսք ունեն՝

- նրան չեն փոխանցում ավելի բարձր ղեկավարության կարգադրությունները:

- եթե նախկինում ղեկավարին հրավիրում էին բարձրագույն ղեկավարության բոլոր խորհրդակցություններին, ապա այժմ նա դրանց մասին իմանում է ուշացումով:

- ավելի բարձր կանգնած ղեկավարը բացասական տեղեկատվություն է ստանում տվյալ ստորաբաժանման աշխատանքի մասին:

- տարածվում են անհավանական պատմություններ, որտեղ ղեկավարը հիմնական «հերոսն» է:

- ղեկավարը շրջապատված է ենթականների վատատեսությամբ:

- ենթականները գաղտնի կամ բացահայտ նենգադուրում են ղեկավարի կարգադրությունների կատարումը [3]:

Գոյություն ունեն մոբբինգային իրավիճակից դուրս գալուն նպաստող մի շարք հանձնարարականներ:

Առաջին հերթին, պետք է ընդունել, որ տեղի ունեցողը իրականություն է, այլ ոչ թե երևակայության արգասիք: Եվ դա տեղի է ունենում ոչ այն պատճառով, որ տվյալ անձը յուրահատուկ է կամ նման իրավիճակում միայն ինքն է հայտնվում, այլ համանման դեպքեր կարող են պատահել բոլոր նորեկների հետ: Առաջին նախանշանները հաճախ ակնառու չեն լինում, և մարդը միանգամից չի հասկանում, որ մոբբինգի հերթական թիրախ է դարձել:

Անհրաժեշտ է չկորցնել հավատը սեփական ուժերի հանդեպ: Մոբբինգն ուղղված է մարդուն հավասարակշռությունից հանելուն, ուստի նման բավականություն չպետք է պաճառել հրահրիչներին: Յուրաքանչյուր մարդ պետք է հիշի, թե ինչ հաջողությունների է հասել, ինչ դժվար իրավիճակներ է հաղթահարել: Նա չպետք է կարծի, թե ինքն աշխարհում բոլորովին մենակ է մնացել: Շատերը վստահում են իրեն՝ ընտանիքը, հին ընկերները, նախկին պաշտոնակիցները: Անհրաժեշտ է բարձրացնել ինքնագնահատականը:

Չի կարելի շուտափույթ որոշումներ

կայացնել, նույնիսկ եթե թվում է, թե հանգամանքները դա են պահանջում: Մարդը պետք է սառը դատողությամբ մտածի:

Չպետք է ամեն ինչ սեփական ձևով վերափոխելու փորձեր կատարել: Անգամ տիրապետելով աշխատանքի առավել կատարյալ մեթոդների՝ սկզբում պետք է ուշադրություն դարձնել պաշտոնակիցների հետ վստահելի հարաբերություններ կառուցելուն, հետո միայն՝ կատարել առաջարկություններ և նորամուծություններ:

Անհրաժեշտ է պարզել՝ կուլեկտիվում ինչ ավանդույթներ կան (օրինակ՝ միմյանց հետ վերաբերվելու ընդունված կարգը, ղեկավարությանը դիմելու ձևը) և պատշաճության սահմաններում հետևել այդ ավանդույթներին:

Հարկ է դրսևորել դիտողականություն և հետևել իրադարձություններին՝ ով ում հետ է շփվում, ում է օգնության

դիմում, խորհուրդ հարցնում, ուշացումների դեպքում ինչ կերպ են իրենց պահում աշխատակիցները [6]:

Անհրաժեշտ է գիտակցել, որ ոչ բոլոր կտրուկ դիտողություններն ու սխալների մատնանշումներն են նշանակում, որ տվյալ մարդու դեմ պատերազմ է սկսվել:

Այսպիսով՝ մոբբինգը բարդ հոգեբանական գործընթաց է, որի հաղթահարումը մեծ ջանքեր է պահանջում: Աշխատակիցը, տեղեկացված լինելով մոբբինգի պատճառների մասին, կարող է կանխարգելել այն՝ խուսափելով մոբբինգային իրավիճակներից: Եթե արդեն առկա են մոբբինգի դրսևորումներ, ապա հողվածում ներկայացված հանձնարարականները հնարավորություն կընձեռեն մանրակրկիտ վերլուծելու ինչպես հակառակորդի, այնպես էլ սեփական վարքագիծը և կշռադատված, ադեկվատ որոշումներ կայացնել:

ՊՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Батурина О. Моббинг как причина конфликтов на рабочем месте //Кадровый менеджмент. 2004. N4. <http://www.ippnou.ru/print/001385/>. 23.11.2016
2. Бумаженко Н. И. Виктимология: учеб.–метод. пособие: [для студентов]. – Витебск: ВГУ, 2010. – 115с.
3. Ваниорек Л., Ваниорек А. Моббинг, когда работа становится адом: Пер. с нем. – М.: Нолидж, 1996. – 168с.
4. Малкина–Пых И. Г. Психология поведения жертвы. – М.: Изд–во Эксмо, 2006. – 1008с.
5. Скавитин А. Моббинг персонала, опыт зарубежных исследований //Управление персоналом. 2004, N 9. С. 16–18
6. Христенко В. Е. Психология поведения жертвы. Ростов–н/Д.: Феникс, 2004. – 416с.

ПРОЯВЛЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОГО НАСИЛИЯ В ОТНОШЕНИИ РАБОТНИКОВ

МАРИНЕ МИКАЕЛЯН

АПГУ, преподаватель кафедры психологии, кандидат психологических наук

В статье изучается явление психологического притеснения работников – моббинг. Рассматриваются основные причины, разновидности, проявления и следствия моббинга. Выявляются признаки моббинга работника и руководителя. Даются рекомендации, которые способствуют преодолению моббинговой ситуации.

THE MANIFESTATIONS OF PSYCHOLOGICAL VIOLENCE OF WORKERS

MARINE MIKAELIAN

ASPU, Department of Psychology, Candidate of Psychological Sciences, lecturer

This article examines the phenomenon of psychological harassment of workers – mobbing. It considers the main reasons, types, manifestations and consequences of mobbing. It also identifies signs of mobbing employee and head of the organization. Some recommendations that contribute to overcoming mobbing situations are being introduced.

ԿԻՆ ՄԱՐԳԱՍՊԱՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանանց հանցավորությունը հոգեբանական գիտությունների տեսանկյունից դիտարկելով՝ շատ ժամանակակից հետազոտողներ նշում են, որ կանայք առանձնանում են այնպիսի հատկություններով, ինչպիսիք են՝ բարձր զգայունակությունը, տպավորվողականությունը, նյարդային համակարգի լաբիլությունը, որոնք ազդեցություն են ունեն քրեական մոտիվացիայի ձևավորման վրա: Այն կրում է վառ ընդգծված հուզական երանգ, իսկ կանանց քրեական վարքագիծը բնութագրվում է ագրեսիվությամբ, իմպուլսիվությամբ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կանանց հանցավորություն, տրավմաներ, կին մարդասպան, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, հոգեբանական առանձնահատկություններ:

Հոգեբանական տրավմաները՝ կապված մասնագիտական կամ ընտանեկան կոնֆլիկտների հետ, նրանց մոտ կարող են կրել երկարատև և խորը բնույթ: Կանայք հաճախ կենսական իրադրությունները գնահատում են որպես սպառնալիք իրենց կամ իրենց հարազատների համար: Հետևաբար, ապօրինի գործողություններ հաճախ կրում են պաշտպանական բնույթ և միտված են պաշտպանելու իրենց կամ ընտանիքին անախորժություններից [5]:

Ուսումնասիրելով հանցագործություններ կատարած կանանց հոգեբանական առանձնահատկությունները՝ հետազոտողները նշում են, որ բռնի հանցագործությունների մոտիվացիան տարբերվում է շահադիտական հանցագործության մոտիվացիայից:

Ե. Սերեդան նշում է, որ առավել

հաճախ բռնի հանցագործությունների շարժառիթ է հանդիսանում զոհից ազատվելու ցանկությունը կամ նրանից վրեժխնդիր լինել ցանկությունը: Մոտավորապես հավասար չափով առկա են այնպիսի շարժառիթները, ինչպիսիք են վախը և խանդը: Այս կատեգորիայի կանայք հակված են գործելու տվյալ պահին գերիշխող հույզերի ազդեցության տակ՝ առանց գիտակելու իրավիճակը, ինչը հանգեցնում է չմտածված, հաճախ ագրեսիվ գործողությունների: Ծանր բռնի հանցագործությունների համար առաջին անգամ դատապարտված կանայք, ըստ Սերեդայի ունեն այնպիսի անձնային գծեր ինչպիսիք են համընդհանուր նորմերի անտեսումը, բարձր ինքնագնահատականը, էգոիզմը, ինքնահաստատման ձգտումը: Հեղինակը նշում է, որ նշված կատեգորիայի դատապարտված կանանց բնորոշ են սոցիալ-դեմոգրաֆիական, քրեագիտական և բարոյա-հոգեբանական բնույթի առանձնահատկություններ: Այդ առանձնահատկություններն էլ պայմանավորում են նրանց կողմից հանցագործությունների կատարումը [6]:

Լ. Մելիքիշվիլի իրականացրած ուսումնասիրություններում նշվում է, որ հանցագործ կանանց անձնային առանձնահատկությունները նպաստում են վարքային տարբեր դրդապատճառների ձևավորմանը, որոնք առավել հաճախ գործում են անգիտակցակ Ըստ հիմնական հոգեբանական բնութագրերի և առաջատար դրդապատճառների, առանձնացվում է բռնի հանցագործություններ կատարած կանանց անձնային երկու տիպ: Առաջին տիպը՝ պաշտպանական, որը բնութագրվում է նրանով,

որ սպանության և ծանր մարմնական վնասներ հասցնելու ամենատարածված դրդապատճառներից է պաշտպանությունը հնարավոր, հաճախ գոյություն չունեցող ագրեսիայի դեմ: Երկրորդ տիպը՝ կախյալ: Նրա ներկայացուցիչներին բնորոշ է ցածր ինքնագնահատականը, անվստահությունը, ուժեղ սոցիալ-հոգեբանական կախվածությունը տղամարդկանցից:

Յու. Աստոնյանը նշել է, որ կանանց ձգտումը պաշտպանելու իրենց և իրենց ընտանիքներին ֆիզիկական սպառնալիքներից պայմանավորում են բռնի հանցագործությունների կատարումը:

Յու. Աստոնյանը նշել է, որ կանանց շրջանում դատապարտյալների մեծամասնությունը ունեն ներոտիկ խանգարումներ: Տարածված են տագնապային-դեպրեսիվ վիճակները, որի ժամանակ ապագան նրանց համար երևում է շատ մռայլ լույսի ներքո: Իհարկե, սա պայմանավորվում է նաև ազատագրկման վայրում գտնվելու հանգամանքով [1] :

Տ. Վոլկովան նշում է, որ կանանց բռնի հանցագործությունների մոտիվացիան շատ դեպքերում զարգանում է ընտանեկան-կենցաղային կոնֆլիկտների ֆոնի վրա, իսկ դրդապատճառ են հանդիսանում զայրույթը, շահը, խանդը և ավելի:

Կանանց կողմից կատարված հանցագործությունների հետաքննության արդյունավետությունը հիմնականում կախված է նրանց անձնային առանձնահատկությունների և որակների դասակարգմամբ: Հարկ է առանձնացնել բռնի հանցագործություններ կատարած կանանց անձի հոգեբանական առանձնահատկությունների որոշակի համակարգ: Այս հանգամանքները պահանջում դրդում են կին իրավախախտների տիպաբանության ձևավորմանը, որը կարող է օգտագործվել նրանց կողմից կատարված հանցագործությունների հետաքննությունների ժամանակ: Տիպաբանության տակ հասկացվում է տար-

բեր տեսակի օբյեկտների և երևույթների միջև հարաբերակցության դասակարգումը:

Իր «Типология личности преступника и мотивация преступного поведения» (1974) գրքում Կ. Իգոշևը արդարացիորեն նշում է, որ տիպաբանությունը ֆիքսում է այն կարևորը, առանց որի չի կարող լինել հանցագործի անձը, ինչպես նաև բացահայտում է էական հատկանիշների միջև առկա ներքին կայուն կապերը և դրանով իսկ նպաստում է հանցագործի՝ որպես տիպի բնորոշ օրինակաբանությունների բացահայտմանը [4, էջ 55]:

Ժամանակակից քրեագիտության, իրավաբանական հոգեբանության մեջ փորձեր են արվում առանձնացնելու կին-հանցագործների տարբեր տիպեր:

Յու. Աստոնյանը, Լ. Մելիկաշվիլին առանձնացնում էին շահադիտական մոտիվներով կին հանցագործների հետևյալ տիպերը. «Հաստատվող» («ինքնահաստատվող»), «ընտանեկան», «կախյալ», «ակոհոլային», «խաղային», «վրեժխնդիր» [2, էջ 48]:

Վ. Շիյանը լրացնում է հետևյալ դասակարգումը «թմրամոլ» տիպի շահադիտական հանցագործներով: Կին-հանցագործների նշված տիպերն ունեն կարևոր քրեաբանական նշանակություն: Սպանություններ կատարած կանանց անձնային առանձնահատկությունների ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին առանձնացնելու վարքային հետևյալ վեց տիպերը. «մազոխիստական», «ակնհայտ թշնամական բռնի տիպ», «թաքնված թշնամական բռնի տիպ», «ոչ աղեկվատ տիպ», «փսիխոտիկ տիպ», «անբարոյական տիպ» [3, էջ 36]:

1. Մազոխիստական տիպ: Այս տիպի կանայք իրենց ամուսինների սպանությունը կատարել են նրանց կողմից երկարամյա վիրավորանքներից հետո: Սպանությունները հաճախ կատարվել են աֆեկտի ֆոնի վրա՝ կնոջը անմիջականորեն ծեծի ենթարկելու ժամա-

նակ: Հանցագործության իրականացման եղանակը նախապես չի մտածվել կնոջ կողմից:

2. Ակնհայտ թշնամական բռնի տիպ: Նման կանայք բնութագրվում են որպես ագրեսիվ, էնոցիոնալ անկայուն, անցյալում բռնի գործողություններ կատարած: Այս խմբի ներկայացուցիչներին բնորոշ է ցածր ինտելեկտը, մշտապես ակոհոլային խմիչքների չարաշահումը և այդ գործոնների ազդեցության տակ սպանություն կատարելը:

3. Թաքնված թշնամական բռնի տիպ: Այս տիպի կանանց բնորոշ է բավականին դաժան հանցագործությունների կատարումը: Առավել հաճախ՝ երեխաների սպանությունը:

4. Ոչ ադեկվատ տիպ: Այս հանցագործ կանայք առանձնանում են ցածր ինտելեկտով, գործում են իրենց վրա մեծ ազդեցություն ունեցող մարդու հրամանով:

5. Փսիխոտիկ տիպ: Այս խմբի ներ-

կայացուցիչները, որպես կանոն, ունեն տարբեր հոգեբուժական ախտորոշումներ, ինչպիսիք են օրինակ շիզոֆրենիան և այլն: Նրանց կողմից սպանությունները կատարվել են փսիխոպատիկ վիճակի ժամանակ կամ անդիմադրելի ազդեցության տակ:

6. Անբարոյական տիպ: Այսպիսի կանայք նախապես ծրագրավորել են սպանության կատարումը, որոնք, ընդ որում, ոչ հազվադեպ իրականացվել են շահադիտական նպատակներով: Այս կանայք տարբերվում են ինտելեկտի առավել բարձր մակարդակով: Նրանք նախապես պլանավորում են իրենց հանցագործությունների իրականացման եղանակները՝ փորձելով թաքցնել իրենց ներգրավվածությունը:

Կին իրավախախտների անձնային նշված տիպերը և ենթատիպերը հանդիպում են ոչ միայն «մաքուր» ձևով, այլև տարբեր համակցության տարբերակներով:

ՓՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Антонян Ю. М. Изучение личности преступника. – М., 1982.
2. Антонян, Ю. М. Личность корыстного преступника / Ю. М. Антонян, В. П. Голубев, Ю. Н. Кудряков. – Томск: Юрид. лит., 1989.
3. Дмитриева Т.Б., Иммерман К.Л., Качаева М.А., Ромасенко Л.В. Криминальная агрессия женщин с психическими расстройствами. – М.: Госюриздат, 1998.
4. Игошев К. Е. Типология личности преступника и мотивация преступного поведения. – Горький : Изд-во ГВШ МВД СССР, 1974.
5. Кудрявцев В.Н. Причинность в криминологии, М., 1961.
6. Малков В.Д. Криминология: Учебник. – М; 2004.

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЖЕНЩИН– УБИЙЦ

РУЗАННА МАРКАРЯՆ

ԱՊՄՍ, քաղաքի քրեական և փոստալիկ փոխգնորդի, ռեզիստանտի

Рассматривая преступность среди женщин с точки зрения психологической науки, многие современные исследователи отмечают, что женщины выделяются такими качествами, как высокая восприимчивость, впечатлительность, лабильность нервной системы, которые влияют на формирование криминальной мотивации. Она несет в себе ярко выраженный эмоциональный нюанс, а криминальное поведение характеризуется агрессивностью, импульсивностью.

PSYCHOLOGICAL PECULIARITIES OF WOMEN– KILLERS

RUZANNA MAKARYAN

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

Department of Applied Psychology, applicant

Considering the crime rate among women in terms of psychological science, many contemporary researchers note that women are distinguished by such qualities as high sensitivity susceptibility, the lability of the nervous system that affects the formation of a criminal nuance and criminal behavior characterized by aggressiveness and impulsiveness.

ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

*Համառուսաստանյան հոգեթերապևտիկ լիգայի իսկական անդամ,
սերտիֆիկացված խորհրդարարու և խմբավար
Սանկր – Պերտերբուրգի Բալինոյան ասոցիացիայի անդամ,
Սանկր – Պերտերբուրգյան Բալինոյան ասոցիացիայի կողմից
հավաստարանագրված Բալինոյան խմբավար,*

*Ռուսաստանի Դաշնության մասնագիտական հոգեթերապևտիկ լիգայի կողմից
հավաստարանագրված խորհրդարարու և դասընթացավար, հոգեբան, հոգեթերապևտ*

ԱՆԺԵԼԻԿԱ ԱՅՎԱԶՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնի դասախոս,
հոգեբանական գիտությունների թեկնածու, հոգեբան, խմբավար, հոգեթերապևտ*

ԳԵՆ ԴԵՐԱՅԻՆ ԴԵՐԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ներկայումս գենդերի խնդրին անդրադառնում են բազմաթիվ գիտնականներ՝ փորձելով հասկանալ դրա հիմնախնդիրը տարբեր դիսցիպլինների տեսանկյունից և դիտարկելով այն տարբեր ասպեկտներից: Հոդվածում այն քննարկվել է՝ հոգեբանության գիտության շրջանակներում և փորձ է արվել դուրս բերելու գենդերային առանձնահատկությունները, դրանց նկատմամբ առկա վերաբերմունքը՝ դիտարկումների կիզակետում պահելով հայ հասարակությունն ու հայկական մշակույթը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. գենդեր, սեռ, մասկուլինություն, ֆեմինիություն, գենդերային վերահսկողություն, կարծրատիպեր, մշակույթ, հասարակություն, սոցիալիզացիա:

Ժամանակակից գիտությունը տարբերակում է «սեռ» և «գենդեր» հասկացությունները: «Գենդեր» հասկացությունը գործածվել է անձի արժեքը մատնանշելու և ընդգծելու համար՝ անկախ նրա սեռային պատկանելիությունից: Սեռը կնոջ և տղամարդու միջև առկա ունիվերսալ տարբերություններից է և իրենից ներկայացնում է ֆիզիոլոգիական և անատոմիական հատկանիշների ամբողջություն, այսինքն՝ այն կենսաբանական հատկանիշների, որոնք հնարավորություն են

տալիս անհատին դասելու համպատասխան կենսաբանական սեռին՝ արական կամ իգական:

Այսպիսով՝ սեռը կենսաբանորեն պայմանավորված առանձնահատկությունների ամբողջությունն է, իսկ գենդերը՝ սոցիալականորեն և հոգեբանորեն պայմանավորված առանձնահատկությունների ամբողջությունը:

Հոգեբանության և սոցիոլոգիայի մեջ գենդերը կիրառվում է լայն իմաստով՝ ենթադրելով ցանկացած հոգեկան և վարքային հատկություններ, որոնք ասոցացվում են մասկուլինության կամ ֆեմինիության հետ և տարբերակում կանանց և տղամարդկանց:

Այս կամ այն սեռի ներկայացուցչի ընկալման տարբերությունները առաջացել են ոչ թե անատոմիական տարբերությունների պատճառով, այլ մշակութային տարրերի միջոցով դրանց սոցիալական ուսուցման արդյունք են:

Սեռի հետ կապ չունեցող մի շարք հասկացություններ մեր առօրյա կյանքում նույնականանում են «տղամարդկային» կամ «կանացի» հետ, այսինքն՝ ձեռք են բերում յուրահատուկ «սեռային», կամ որ ավելի ճիշտ է գենդերային երանգավորում: Այս դեպքերում կիրառվում են «ֆեմինի» (իգական սեռին բնորոշ) և «մասկուլին»

(արական սեռին բնորոշ) հասկացությունները:

Գենդերը սահմանվում է որպես այս կամ այն մշակույթի շրջանակներում ընդունված պատկերացումներին համապատասխան վարքի ձևերի, արժեքների, դիրքորոշումների, սոցիալական ատրիբուտների (օրինակ՝ հագուստ և այլն) ամբողջություն: Այս բոլորը բնութագրեր են, որոնք շատ հաճախ խստորեն վերագրվում են յուրաքանչյուր անհատին՝ իր անատոմիական հատկություններին համապատասխան:

Ցանկացած հասարակությունում «տղամարդկանց» և «կանանց» աշխարհների տարաբաժանումը տեղի է ունենում տարբեր սեռերի ներկայացուցիչների սոցիալիզացիայի տարբեր մեխանիզմների շնորհիվ: Արդյունքում նրանք կյանքից ունենում են տարբեր սպասելիքներ, հուզական և ինտելեկտուալ զարգացման տարբեր ճանապարհներ:

Գենդերային դերերը, ըստ էության, նորմավորված բնութագրեր են, որոնք մատնանշում են, թե ինչպես պետք է պահեն և ինչ պետք է զգան տարբեր գենդերային կարգավիճակ կրողները: Դերերն ամրապնդվում են մյուս անհատների սպասումներով ամենօրյա սոցիալական փոխազդեցությունների ընթացքում:

Տղամարդկանց և կանանց սոցիալապես պայմանավորված և խիստ ուրվագծված դերերը անձի ինքնարտահայտման ձևերի հետ հաճախ հակասության մեջ են լինում և հիմք են դառնում ներքին և միջանձնային կոնֆլիկտների: Կանանց և տղամարդկանց սոցիալական դերերի հակամարտությունը և բևեռացումը պայմանավորված են զուտ մշակութորեն: Դեռ մանուկ հասակից մատնանշվում է գենդերային դերերի իրականացման որոշակի նախատրամադրվածություն և նույնիսկ պարտադրանք: Օրինակ՝ նորածին երեխաները, որոնք անգամ դեռ չեն անցել սոցիալիզացիայի որոշակի փուլ, տարբերվում են սեռին համապատասխանող գույնի հագուստի և մնացած բոլոր պա-

րագաների առկայությամբ, աղջիկներինը՝ վարդագույն, իսկ տղաներինը՝ կապույտ: Կամ ավելի մեծ տարիքում առկա կարծրատիպերից մեկը, որը հաճախ շրջանավում և կիրառվում է հայ հասարակության կողմից՝ «դու տղաս ես, տղան լաց չի լինում, լալիս են միայն աղջիկները»: Այսպիսով՝ երեխաների մոտ դեռ փոքր տարիքից սկսած ակամայից ձևավորվում է գենդերային դերերի որոշակի հստակ սահմանազատում, թե ինչ կարելի անել և զգալ կոնկրետ գենդերի պոտանելիության դեպքում, և ինչ չի կարելի:

Հարկ է նշել, որ բացի կենսաբանական և սոցիալական ասպեկտներից գենդերի վրա մեծապես ազդում է նաև մշակույթը: Ամենալայն իմաստով մշակույթն այն է, ինչ ստեղծվել է մարդու կողմից՝ աշխարհի ճանաչման և դրա արդյունքում իր գիտելիքների համակարգման ընթացքում: Այն ներառում է լեզուն, սովորությունները, վարքային նորմերը, համոզմունքները, գիտելիքները, արժեքներն ու աշխարհի սիմվոլիկ ընկալումն արվեստում: Հաճախ մարդկանց մենթալիտետում առկա է կանանց և տղամարդկանց սիմվոլիկ բնութագրերի հետևյալ շարքը՝

•տղամարդ – ռացիոնալ– հոգևոր– աստվածային–...– մշակութային.

•կին – հուզական– մարմնական –...– բնական:

Հայ հասարակությունը, լինելով խիստ պահպանողական, առավել կարևորում է առկա կարծրատիպերն ու պատկերացումները գենդերային կոնկրետ դերերի վերաբերյալ և փորձում է հնարավորինս վերահսկել դրանք: Յուրաքանչյուր մարդ, ով փորձում է խախտել գենդերային դերերին բնորոշ բնութագրերն ու դրսևորել տարբերակվող վարք, բացասական արձագանք է ստանում:

Աշխատանքի գենդերային բաժանումը տարբեր գենդերային կարգավիճակներին, այս կամ այն աշխատանքային ոլորտի վերագրումն է: Ինչքան բարձր է գենդերային կարգավիճակը, այնքան հարգված և գնահատելի է կատարվող

աշխատանքը, ինչքան ավելի հարգված և եկամտաբեր է դառնում աշխատանքային գործունեության ձևը, այնքան ավելի շատ են դրա մեջ ներգրավվում արտոնյալ սոցիալական սեռի ներկայացուցիչները: Աշխատանքի ձևերի բաշխման միջոցով տեղի է ունենում իշխանության հանգուցային դիրքերի բաշխումը:

Հայ իրականության մեջ շատ ավելի են ղեկավար պաշտոններ զբաղեցնող տղամարդիկ, քան կանայք, ինչը պայմանավորված է պատմականորեն եկող քարացած մտածելակերպով, որ «հայ կինը պետք է նվիրվի ընտանիքին և զբաղվի երեխաների դաստիարակությամբ և տնային գործերով»:

Գենդերային վերահսկողությունը սոցիալական վերահսկողության մի ձև է, որն իրենից ներկայացնում է գենդերային այս կամ այն դերը խրախուսող կամ չխրախուսող պատկերացումների ամբողջություն: Գենդերային վերահսկողության պրոցեսում մեծ դեր է խաղում հասարակական կարծիքի ճնշումը:

Որքան խիստ է գենդերային վերահսկողությունը այս կամ այն հասարակությունում, այքան ցայտուն են արտահայտվում գենդերային հակասությունները:

Լեզուն և տեղեկատվության մատուցման ոճն ընդունելի՝ լեզվտիմ է դարձնում և հաստատում գենդերային կարգավիճակը: Տեղեկատվության մատուցման ժամանակ առկա է այս կամ այն գենդեր կրողի նկատմամբ որոշակի սոցիալական ենթատեքստ: Մինևույն բնութագրերի տարբերակները, որոնք օգտագործվում են հակառակ գենդերի նկատմամբ կարող են դիտարկվել ինչպես դրական, այնպես էլ բացասական կերպով. դա կախված է տվյալ բնութագրերը կրող գենդերի գերիշխանության աստիճանից: Օրինակ՝ «տղամարդ կին է» արտահայտությունը կնոջ նակատմամբ սոցիալական խրախուսման երանգ ունի, իսկ տղամարդու համար օգտագործվող «կանացի տղամարդ է» արտահայտությունն ընկալվում է որպես վիրավորանք:

Առկա է 4 ասպեկտ, որոնցով միանում են այլ ցուցանիշներով տարբեր մշակույթները՝

1. աշխատանքի բաժանում՝ սեռային չափորոշիչներից ելնելով.

2. կանանց և տղամարդկանց տարբերությունների հետ կապված համոզմունքներ և կարծրատիպեր.

3. աղջիկների և տղաների դիֆերենցիալ տարբերակված սոցիալիզացիա.

4. կանանց ավելի քիչ իշխանություն և ցածր ստատուս:

Պատմականորեն ստացվել է այնպես, որ համարյա թե ցանկացած մշակույթում կանայք և տղամարդիկ կատարում են տարբեր աշխատանքներ, սակայն միշտ չէ, որ աշխատանքի կոնկրետ տեսակների կատարումը տարբեր սեռերի կողմից համընկնում է: Օրինակ՝ Կենտրոնական Աֆրիկայում հողագործության հետ կապված աշխատանքները կատարում են հիմնականում կանայք, իսկ Լատինական Ամերիկայում՝ տղամարդիկ:

Յուրաքանչյուր երկրում առկա է կանանց և տղամարդկանց կարծրատիպերի նախընտրություն: Այստեղ մեծ ազդեցություն ունի կրոնը: Կանացի կարծրատիպերը առավել ընդունված են այն երկրներում, որտեղ ավանդույթները ներառում են իգական սեռին աստվածացնելու երևույթը և որտեղ կանանց թույլ է տրվում մասնակցել կրոնական ծիսակատարություններին:

Արևմտյան մշակույթը բնութագրվում է որպես ինդիվիդուալիստական հասարակություն: Նման հասարակություններում մարդիկ ավելի են հետաքրքրված կարիերայով, անձնային իրավունքներով և ազատությամբ: Կոլեկտիվիստական հասարակությունները, ինչպիսին է Ճապոնիան, մեծ նշանակություն են տալիս անհատական նպատակների ծառայմանը կոլեկտիվիստականին, ինչը նկատվում է շրջապատի հանդեպ բարձր հոգածությամբ: Այնպիսի մշակույթները, որտեղ խրախուսվում է մեծահասակներին ենթարկվելու երևույթը, կարող են տար-

բերվել սոցիալական փոփոխությունների հանդեպ բարձր ռեզիստենտությամբ, քանի որ մարդիկ տարիքի մեծացմանը զուգընթաց ավելի դժվար են հարմարվում փոփոխություններին: Ուստի այստեղ գենդերային դերերին բնորոշ կարծրատիպերը շատ դժվարությամբ կենթարկվեն փոփոխության:

Գենդերային հավասարության հասնելու ճանապարհները ունեն տարբեր առանձնահատկություններ՝ կախված կոնկրետ մշակույթից, և գործոնները, որոնք փոփոխություններ են առաջացնում մի երկրում, կարող են տարբերվել մեկ այլ երկրում փոփոխություններ առաջացնող գործոններից:

Յուրաքանչյուր երկրի մշակույթը առանձնահատուկ է և ինդիվիդուալ, նրանում առկա են թե նմանություններ, և թե տարբերություններ այլ մշակույթների հետ, սակայն յուրաքանչյուր երկիր ունի իր մշակութային սովորույթները:

Վերոնշյալից կարող ենք եզրակացնել, որ գենդերային տարբերություններն այնքան էլ մեծ չեն, որքան կարծում ենք, սակայն ունեն իրենց հստակ ազդեցությունները մարդկանց վարքի, փոխհարաբերությունների վրա:

Առկա են բազմաթիվ սահմանափակումներ և տարբերություններ կանանց և տղամարդկանց դերերի միջև: Կանացի խնդիրների շարքին կարելի է դասել ցածր ստատուսը, ավելի քիչ իշխանական հնարավորությունները, ինչպես նաև տնային գործերով ծանրաբեռնվածությունը: Տղամարդկանց խնդիրների շարքին կարելի է դասել հարաբերությունների բովանդակային կողմի բացակայությունը, անբա-

վարար սոցիալական աջակցությունը, ռիսկային վարքով պայմանավորված և աշխատանքային ծանրաբեռնվածության հետևանքով առաջացած ֆիզիկական խնդիրները:

Այս ամենը ենթադրում է, որ դերերը պետք է փոխվեն: Իհարկե անիմաստ է ձգտել բացարձակ գենդերային հավասարության, որոշակի իրավիճակներում, բնականաբար, նպատակահարմար է և ցանակալի տղամարդկանց կողմից տղամարդկային, ուժեղի դերի իրականացումը, իսկ կանացի կողմից՝ կանացիի, նուրբի և թույլի: Պարզապես անհրաժեշտ է քչացնել բացասական հետևանքները, որոնք առաջանում են մեր գենդերային դերերի հետևանքով:

Մենք չենք կարող վստահորեն ասել, որ գենդերային տարբերությունները պայմանավորված և հիմնավորված են կենսաբանորեն: Մեր գենդերային դերերի վրա ազդում են մի շարք արտաքին գործոններ՝ սկսած ծննդյան պահից: Մենք տեսնում ենք մեր ծնողների և այլ մեծահասակների վարքը՝ փորձելով նամանակել մեր գենդերի մարդկանց, խաղում ենք դրանց համապատասխան խաղեր: Զանգվածային լրատվական միջոցները մեր կյանքում և հասարակության մեջ ձևավորում են կանացիության և տղամարդկության կարծրատիպեր, որոնք մենք չեն կարող անուշադրության մատնել: Մենք մեծանում ենք՝ փորձելով մեծապես համապատասխանել մեր դերին՝ լինելով «իսկական» կին կամ տղամարդ, հաճախ չհամաձայնելով այն ամենի հետ, ինչ այդ դերին վերագրում է հասարակությունը:

ԳՐԱԿԱՆՈՅՈՒՆ

1. Ն. Խաչատրյան, Գենդերի սոցիալական հոգեբանություն: Եր., 2006 թ.:
2. Հ. Է. Գևորգյան, Գենդեր. խնդիրներ և լուծման ուղիներ, Հ. Խառատյանի և Ա. Հարությունյանի խմբագրությամբ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2001, 150 էջ:
3. Алешина Ю. Е., Воловин А. С. – Проблемы усвоения ролей мужчины и женщины // Вопросы психологии – 1991– 234с.
4. <http://rudocs.exdat.com/docs/index-515814.html?page=8>.

ОСОБЕННОСТИ ГЕНДЕРНЫХ РОЛЕЙ И РАЗЛИЧИЯ В ОТНОШЕНИИ К НИМ, СФОРМИРОВАВШИЕСЯ В АРМЯНСКОМ ОБЩЕСТВЕ.

АНАИТ САРГСЯН

*Консультативный член Общероссийской профессиональной психотерапевтической лиги,
сертифицированный консультант и тренер ОППЛ,
аккредитованный руководитель балинтовских групп
Санкт-петербургской балинтовской ассоциации,
аккредитованный консультант и официальный преподаватель ОППЛ РФ,
психолог, психотерапевт*

АНЖЕЛИКА АЙВАЗЯН

*НАН РА, Международный научно-образовательный центр, кафедра психологии,
кандидат психологических наук, преподаватель, психотерапевт*

В настоящее время к проблеме гендера обращаются многие ученые, пытаясь понять проблему с точки зрения различных дисциплин и рассматривая ее с разных сторон. В статье проблема рассмотрена в рамках психологической науки и сделана попытка выделить гендерные особенности, существующее к ним отношение с точки зрения армянского общества и армянской культуры.

Социокультурный характер гендера доказан в результате многочисленных исследований, а потому данный анализ проведен с учетом культурных особенностей армян.

FEATURES OF GENDER ROLES AND DIFFERENCES IN ATTITUDES FORMED TOWARDS THEM IN ARMENIAN SOCIETY

ANAHIT SARGSYAN

*Psychologist, Psychotherapist
Consultative member of the Russian Professional Psychotherapeutic League;
Certified counsellor and trainer of the Russian Professional Psychotherapeutic League
Member of Saint-Petersburg's Balint Association
Accredited Balint Group Leader at Saint-Petersburg's Balint Association
Accredited Counselor and a Trainer at the Professional Psychotherapeutic League of the
Russian Federation*

ANZHELIKA AYVAZYAN

*International Scientific-Educational Center of NAS RA
Candidate of Psychological Sciences, Lecturer
Psychologist, trainer, psychotherapist*

Nowadays many scientists refer to the issue of gender attempting to perceive its from the viewpoint of different disciplines and examining from different aspects. The article discusses the issue of gender in the frames of psychology and seeks to outline gender characteristics and existing attitude towards it focusing on the Armenian society and Armenian culture.

The sociocultural nature of gender has been proved as a result of numerous studies, so the analysis of this work has been carried out taking into consideration the cultural features of the Armenians.

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՄԱԳՐՈՒՄԸ

Հիմք ընդունելով այն փաստը, որ դեռահասներն առավել զգայուն են տարբեր բնական և սոցիալական գործոնների ազդեցության նկատմամբ՝ սույն աշխատանքում ուսումնասիրել ենք մարտական գործողությունների վերսկսման սպառնալիքով պայմանավորված տևական սթրեսային վիճակների ազդեցությունը սահմանամերձ գոտում բնակվող դեռահասների հոգեբանական կայունության վրա: Դեռահասների հոգեբանական կայունության հարցն արտացոլում է ժամանակակից հասարակության նորահաս խնդիրները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սահմանամերձ գոտի, հոգեբանական կայունություն, սթրես, ֆրոստրացիա, դեռահասներ, մարտական գործողություններ:

21-րդ դարի բնորոշ առանձնահատկություններից մեկը մարդու հոգեկանի վրա անբարենպաստ գործոնների ազդեցությամբ առաջացած ճնշումների բարձրացումն է, որն ունի ինչպես սոցիալ-կենցաղային և ռազմաքաղաքական նախադրյալներ, այնպես էլ պայմանավորված է մեծ թվով բնական ու տեխնածին աղետների և ահաբեկչությունների ընթացքում առաջացող սթրեսորների առկայությամբ: Անկախ ձևից ու ծագման աղբյուրից՝ նշված իրադարձություններից յուրաքանչյուրն արտակարգ պայմանների ձևավորման ու սթրեսի առաջացման պատճառ կարող է հանդիսանալ:

Այս գործոնների ազդեցության արդյունքում հավանական է դառնում այնպիսի միջավայրի ձևավորումն ու զարգացումը, որում մարդն անզոր է պահպանելու կենսագործունեության

բնականոն ընթացքը, որովհետև այդ ամենը տեղի է ունենում հոգեկան առողջության վատթարացման հանրանկարում, որը պայմանավորված է հոգեբանական կայունության մակարդակի նվազմամբ:

Մի շարք գիտնականներ իրենց աշխատանքներում ապացուցել են, որ սահմանամերձ գոտու ազգաբնակչության մոտ նկատվում են հոգեբանական կառուցվածքային փոփոխություններ, որոնք արտահայտվում են բնավորության շեշտվածությամբ, նյարդահոգեկան լարվածությամբ, զգայության շեմերի, արժեքային կողմնորոշիչների փոփոխությամբ և այլն: Մ.Պ.Մկրտումյանը հակված է այն տեսակետին, որ, եթե խոսքը վերաբերում է նյութական, մշակութային արժեքների կորուստներին, ապա ինչ-որ տեղ մարդը համակերպվում է դրան, սակայն այն ամենը, ինչ վերաբերում է մարդկային կյանքի կորուստներին, սպառնալիքներին, բարեկամների և հարազատների առողջությանը, մարդը պատրաստ չէ դրանց: Մարդու համար ամենաթանկը իր և իր հարազատների կյանքն է: Ուստի մարդկային կորուստների հետ կապված անձը երկար ժամանակ ապրում է խոր վիշտ, հայտնվում դժվարին հոգեբանական ճգնաժամի մեջ[1]:

Գիտականորեն հիմնավորված այն փաստը, որ դեռահասները առավել զգայուն են տարբեր բնական և սոցիալական գործոնների ազդեցության նկատմամբ, թույլ է տալիս եզրակացնելու, որ սահմանամերձ գոտում բնակվող դեռահասների ձևավորվող ինքնագիտակցության «ես-հայեցակարգի» վրա ազդեցություն ունեցող պայմանների

շարքին է դասվում այնպիսի դիսթրետորային (բացասական սթրես) գործոն, ինչպիսին է՝ պատերազմի վերսկսման սպառնալիքը:

Ներկայումս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել սահմանամերձ գոտում բնակվող և սահմանում տիրող լարված իրավիճակից տուժող դեռահասների ֆիզիկական և հոգեկան առողջության վրա, քանի որ դեռահասների հոգեբանական կայունության հարցն արտացոլում է ժամանակակից հասարակության նորահաս խնդիրները և կարող է բնակչության շարքերում հոռետեսության պատճառ հանդիսանալ:

«Սահմանային գոտի» հասկացությունը. «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանագծից Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը մինչև 5 կմ լայնությամբ ծավալվող տարածքն է: Իսկ սահմանային գոտու մի մասը, որը հարում է պետական սահմանին մինչև 1 կմ լայնությամբ, կոչվում է սահմանային շերտ[2]:

«Սահմանամերձ գոտի» տերմինն օրենքում անրագրված չէ, սակայն լայն կիրառություն ունի:

Սույն աշխատանքում ուսումնասիրել ենք մարտական գործողությունների վերսկսման սպառնալիքով պայմանավորված տևական սթրեսային վիճակների ազդեցությունը սահմանամերձ գոտում բնակվող դեռահասների հոգեբանական կայունության վրա:

Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ մարդիկ որքան մեծ ինֆորմացիայի հոսք են ստանում, տվյալ դեպքում՝ պատերազմական իրավիճակի մասին (թշնամու կողմից հարձակումներ, խափանարար-հետախուզական փորձեր և այլն), այնքան նրանց մոտ սթրեսի առաջացումն անխուսափելի է դառնում: Ձևավորված իրավիճակում սահմանա-

մերձ գոտու երեխաները հաճախ են ենթարկվում չնախատեսված բացասական ազդեցությունների[3]:

Արտակարգ պայմանները բնութագրող հիմնական սթրեսային գործոններն են.

- բռնության ու սպանության ակնատես լինելը,
- ռմբակոծությունները, կրակոցները,
- դպրոցի, բնակության վայրի հարկադրված փոփոխությունը,
- նկուղում, ապաստարանում գտնվելը:

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ դժվար իրավիճակներում գտնվող երեխաների հոգեբանական կայունության ձևավորման համար նպաստավոր կարող է լինել դրական ինֆորմացիայի հոսքը:

Վ.Ի.Մեդվեդևը գտնում է, որ կայունության մեխանիզմների ձևավորման գործընթացում մեծանում է նաև հոգեկան գործոնների դերը, որոնք կարգավորում են սոցիալական և կենսաբանական պրոցեսների փոխհարաբերակցությունը[4]:

Հոգեբանության մի շարք բնագավառներում անձի վրա դժվար իրավիճակների ներգործության պրոբլեմի վերլուծությունը գլխավորապես իրականացվում է ֆրոյստրացիայի հետևանքների ուսումնասիրության հայեցակետից:

Ֆրոյստրատիվ իրավիճակների վրա անձի հակազդումները կարելի է տարբերակել դրականի և բացասականի: Դրական հակազդումներն ուղեկցվում են դժվար իրավիճակների հաղթահարման կառուցողական մոտեցմամբ: Նպաստավոր արդյունքն ապահովվում է խնդրի հանգուցալուծմանն ուղղված մեծ ձիգերի գործադրման շնորհիվ: Ըստ այդմ մի շարք գիտական հայտնագործությունների, տեխնիկական և մշակութային նվաճումների համար խթան էին հանդիսանում մարդկանց կյանքում երևան եկած ֆրոյստրատիվ երևույթ-

ները: Ֆրուստրացիայի բացասական հակազդումների շարքին են դասվում ազդեցիկ, ռեզրեսիան, ռեպրեսիան, ժխտողականությունը և մերժողականությունը: Վերջինիս վառ արտահայտման դեպքում երևան է գալիս իրավիճակի նկատմամբ անտարբերությունը, անհատի մոտ զարգանում է սեփական անձին վերաբերող պրոբլեմների և դժվարությունների հաղթահարմանը չնասնակցելու միտումը [5]:

Ռեպրեսիվ հակազդումների պարագայում մարդը փորձում է արգելափակել և հեռացնել գիտակցության ոլորտից սթրեսորների և ֆրուստրատորների թողած տհաճ տպավորությունները: Այստեղ գործում է «Պրոբլեմը անհետանում է, եթե նրա մասին չես մտածում» ցնորական սկզբունքը:

Հոգեբանական և սոցիալ-հոգեբանական ֆրուստրատիվ գործոնների տևական և լարված ներազդումը կարող է հանգեցնել հոգեբանական սթրեսի զարգացմանը:

Սթրեսը՝ օրգանիզմի և նրա հոգեկանի լարվածությունն է, որն առաջանում է ներքին և արտաքին գործոնների՝ սթրեսորների ազդեցության տակ: «Սթրես» (ճնշում, լարվածություն) բառը շրջանառության մեջ է մտել 19-րդ դարում: Այս եզրը առաջին անգամ գործածել է Ու. Քենոնը, իսկ նրա սկզբունքները մշակել և զարգացրել է կանադացի բնագետ Հանս Սելյեն: Ըստ Սելյեի, հաճելի պարումների հետ կապված սթրեսը էվսթրես է, տհաճ ապրումների հետ կապվածը՝ դիսթրես: Սրանց միջև տարբերությունն այն է, որ առաջինի դեպքում մարդը՝ սուբյեկտիվորեն գնահատելով իրավիճակը և համեմատելով այն իր ուժերի հետ, համարում է, որ այն հաղթահարելի է, իսկ երկրորդ դեպքում՝ իրավիճակը դուրս է գալիս վերահսկողությունից և դիտարկվում ինչպես անհաղթահարելի: Դա պայմանավորված է ոչ միայն ներգործող սթրեսոգեն գործոնի ուժգնությամբ, այլ նաև մարդու պաշտպանա-

կան և դիմադրողական մեխանիզմների աշխատանքից, որոնց նպատակը սթրեսորներից և ֆրուստրատորներից նրա ես-ի պաշտպանումն է: Պաշտպանական մեխանիզմներին կարելի է վերագրել՝ ռացիոնալիզացիան, ատրիբուցիան, պրոյեկցիան, ռեզրեսիան և արտամղումը: Ներկայումս առաջնային պլանում է ժամանակակից մարդու հոգեբանական կայունության ձևավորման ու զարգացման հիմնախնդիրը: Դժվար իրավիճակներում գտնվող մարդկանց հոգեֆիզիոլոգիական վիճակի մոդելավորմանն իրենց աշխատանքներում անդրադարձել են Ռոբերտ Յերկսը և Ջոն Դոդսոնը: Նրանք ապացուցել են, որ աշխատանքի արդյունավետության կախվածությունը հուզական գրգռվածությունից ունի որոշակի սահման, որից հետո շարժառիթավորման բարձր աստիճանը հանգեցնում է անցանկալի հուզական հակազդումների (լարվածություն, անհանգստություն, սթրես), արդյունքում գրանցվում է գործունեության վատթարացում [5]:

Նույն տեսակետին է հակված նաև Ե.Պ.Իլյինը: Նա նշել է, որ միջին հուզական լարվածության պայմաններում գործունեության արդյունավետությունը բոլոր մարդկանց մոտ բարձրանում է, անկախ այն հանգամանքից, թե նա ինչպիսի անհատական առաձնահատկություններով է օժտված, սակայն մեծ լարվածության դեպքում թույլ նյարդային համակարգ ունեցող անձանց մոտ գործունեության արդյունավետությունն իջնում է, իսկ ուժեղ նյարդային համակարգ ունեցողները մեծ կայունություն են ցուցաբերում նշանակալից հուզական լարվածությանը, այն դեպքում, երբ միջին սթրեսների առկայության պայմաններում ցուցաբերում են գործունեության բարձր արդյունավետություն[6]:

Հետևաբար աշխատունակությունից և առողջության հետ կապված մի շարք գործոններից բացի, սթրեսային իրավիճակների առաջացման նկատմամբ մեծ դեր է խաղում հոգեբանական կայունու-

թյունը: Սթրեսների նկատմամբ բարձր հոգեկան կայունությունը անձի առողջության պահպանման, զարգացման և ամրապնդման գրավականն է:

Մարդն իր կյանքի ընթացքում հաճախ է հայտնվում տարբեր բնույթի դժվար իրավիճակներում, սակայն դրանցից ոչ բոլորն են թողնում քայքայիչ ազդեցություն նրա հոգեկանի վրա: Ներքին ներդաշնակության պահպանումն իրականացվում է անձի հոգեբանական կայունության շնորհիվ:

Բնութագրելով «կայունությունը» որպես հոգեբանական երևույթ (Ֆենոմեն)՝ գիտնականները կիրառում են տարբեր եզրույթներ՝ «անձի կայունություն» (Բ.Ս.Բասարով, Ա.Ն.Լեոնտև, Կ.Կ.Պլատոնով), «կայունություն սթրեսի նկատմամբ» (Բ.Վ.Կուլագին), «հուզական կայունություն» (Լ.Մ.Աբրոխին, Ե.Ա.Միլերյան), «հոգեկան կայունություն» (Մ.Ա. Մատովա, Մ.Ֆ.Սեկաչ), «հոգեբանական կայունություն» (Ի.Ն.Գրբզովա, Վ.Կ.Կալին):

Ա. Ռեբերի բառարանում կայունությունը հասկացվում է որպես անձի բնութագիր, որը ոչ ստանդարտ իրավիճակներում համեմատաբար հուսալի և կայուն ցուցանիշներ ունի: Տվյալ բառարանում կայունությունը բնութագրվում է որպես առավել հուզական փոփոխությունների բացակայություն: Այս դեպքում հաճախ օգտագործվում է հուզական կայունություն ձշտող, շտկող հասկացությունը:

Հոգեբանական կայունությունը դժվար իրավիճակներում, ֆրուստրատիվ ու սթրեստրային գործոնների ազդեցության պայմաններում անձի արդյունավետ հոգեկան գործունեության պահպանման որակն է: Այն չի հանդիսանում անձի բնածին հատկություն, այլ ձևավորվում է նրա զարգացման ընթացքում ու կախված է մարդու նյարդային համակարգի առանձնահատկությունից, փորձից, մասնագիտական պատրաստվածությունից և անձի ճանաչողական պրոցեսների զարգացման մակարդա-

կից:

Հոգեբանական կայունության կարևորագույն կողմերը ներկայացնում են հոգեբանական երեք հիմնական առանձնահատկություններ՝

- Կայունություն, հաստատունակություն՝ ֆրուստրատիվ իրավիճակներում դժվարություններին դիմակայելու, ինքնավստահության ու տրամադրության համեմատաբար բարձր մակարդակի պահպանման որակ:

- Հավասարակշռվածություն, միաչափություն՝ հակազդման ուժի համաչափությունը, ներգործող ազդակի ուժին ու նշանակությանը:

- Դիմադրողականություն՝ կարողությունն է դիմակայելու այն ամենին, ինչը կարող է սահմանափակել առանձին որոշումների ընդունման, ինչպես նաև արժեքների, նորմերի, աշխարհահայացքի և ապրելակերպի ընտրության անձի ազատությունը:

Հոգեբանական կայունությունն է թույլ տալիս անձին դիմակայելու կյանքի դժվարություններին, ժխտողական ճնշման պայմաններին ու սթրեսներին: Այն անձի շատ բարդ ու տարողունակ որակ է, որում միավորվում են մի շարք համալիր ընդունակություններ, տարբեր մակարդակների նյարդահոգեբանական բարդ երևույթներ:

Այսպիսով՝ հոգեբանական կայունությունն անձնային որակ է, որի առանձին կողմերն են՝ հաստատունությունը, հավասարակշռությունը, դիմադրողականությունը:

Հոգեբանական հետազոտությունները ցույց են տվել, որ կայունության ձևավորումն օստոգենեզում անցնում է մի քանի փուլ:

Սթրեսակայունություն. ձևավորվում է մանկության հասակում հոգեֆիզիոլոգիական, հուզական, ճանաչողական, վարքագծային ասպեկտում:

Հոգեբանական կայունություն. ձևավորվում է դեռահասության տարիքում, երբ հոգեֆիզիոլոգիական, հուզական,

ձանաչողական, վարքագծային ասպեկտից բացի արմատավորվում է մասնագիտական գործունեության մոդելի կայուն բնավորություն:

Հոգեբանական անվտանգություն. ձևավորվում է պատանեկան հասակում: Հոգեֆիզիոլոգիական, հուզական, ձանաչողական, վարքագծային ասպեկտից ինչպես նաև մասնագիտական գործունեության մոդելից բացի, ձևավորվում է կայունության՝ շփման և աջակցության եղանակը:

Հոգեբանական մշակույթ. ձևավորվում է հասուն տարիքում: Այն հոգեֆիզիոլոգիական, հուզական, ձանաչողական, վարքագծային ասպեկտից, մասնագիտական գործունեության մոդելից, կայունության՝ շփման և աջակցության եղանակից բացի, իր արտացոլանքն է գտնում կայուն բնավորության ձևավորման մեջ[7]:

Անձի հոգեբանական կայունությունը կարելի է դիտարկել որպես բարդ կառուցվածք, որի դրսևորումը կախված է բազում գործոններից: Հոգեբանական կայունությանն օժանդակում են անձի ներքին պահեստային հնարավորությունները և արտաքին (միջանձնային, սոցիալական ազդեցության) գործոնները:

Սոցիալական միջավայրի բացասական ազդեցությունների նկատմամբ անձի կայունության ձևավորման գործում առանձնահատուկ նշանակություն ունի դեռահասության և վաղ պատանեկության շրջանը:

Այն Բ.Ս. Կոնը անվանել է «երրորդ աշխարհ», որը գոյություն ունի մանկության և հասունության միջև[7]:

Ըստ Ու.Լ. Խասմագումեդովնայի, որն ուսումնասիրել է արտակարգ պայմաններում գտնվող դեռահասների ապրումներն ու պորբլեմները՝ դեռահասության տարիքի կարևոր կազմավորումներից մեկը հանդիսանում է «Ես-հայեցակարգի» ձևավորումը: Այս տարիքում նկատվում է գիտակցության արագացված աճ, մեծանում է անձի բարոյահոգեբա-

նական հատկանիշների վերլուծության հետաքրքրությունը, տեղի է ունենում մյուսների նկատմամբ գնահատողական վերաբերմունքի փոփոխություն[8]:

Ձևավորված «Ես-հայեցակարգը» գործում է ինչպես ներքին «գտիչ», որը սահմանում է դեռահասի կողմից ընկալված ցանկացած իրավիճակի բնույթը: «Զտիչի» միջով անցնելով ցանկացած իրավիճակ իմաստավորվում է և ստանում այնպիսի նշանակություն, որը համապատասխանում է իր իսկ մասին մարդու պատկերացումներին: Սոցիալական միջավայրում դեռահասի վարքը պայմանավորող չափազանց կարևոր գործոն է հանդիսանում ինքնագնահատականը, որն ենթադրում է գոհունակություն, ինքնաարժեքավորում և դրական վերաբերմունք սեփական անձի նկատմամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցածր ինքնագնահատականը դրականորեն փոխկապակցված է դեվիանտ վարքի գրեթե բոլոր տեսակներին[7]:

Ա.Բ. Այամեդովը, որն ուսումնասիրել է մարտական գործողությունների շրջանում բնակվող դեռահասների ինքնագիտակցության հոգեբանական առանձնահատկությունները, եկել է այն եզրակացության, որ նրանց «Ես-հայեցակարգը» բնութագրվում է շրջապատող աշխարհը սպառնալիք ընկալելու, իսկ սեփական դերը նրանում որպես պաշտպանվողի, մեռնողի, վրեժ լուծողի ըմբռնելու միտումով: Տվյալ խմբի դեռահասներին բնորոշ է արագացված սոցիալական հասունացման երևույթը (ցայտուն հասունության զգացում), ապագայի հոռետեսական ընկալման հակումը [9]:

Հոգեբանական կայունության ցածր մակարդակը նրանց մոտ ֆրուստրացիայի առաջացման հիմք է հանդիսանում, որն արտահայտվում է այնպիսի զգացումներում ինչպիսիք են հիասթափությունը, անհանգստությունը և զայրույթը: Վերոնշյալածից նույնպես կարելի է եզ-

րակացնել, որ դժվար իրավիճակների ազդեցության աստիճանի բարձրացման պարագայում հոգեբանական կայունության մակարդակը դեռահասների մոտ նվազում է:

Իլգա Ֆլինկը, որն ուսումնասիրել է մարտական գործողությունների վերսկսման պատճառով արտագաղթած երեխաների և չտեղահանված երեխաների հոգեկան առողջության հետ կապված ընդհանուր խնդիրների միջին ցուցանիշը, որը կազմել է առաջին խմբի մոտ 49,5%, իսկ երկրորդ խմբի մոտ՝ 41,1%, նույնպես հակված է այն տեսակետին, որ պատերազմներն ու դրանց վերսկսման սպառնալիքը սահմանամերձ գոտում բնակվող երեխաների հոգեբանական կայունության վրա էական ազդեցություն ունեցող գործոններից են: Բելգիայի Գենտ համալսարանի պրոֆեսոր Իլգա Դյոլայնն ուսումնասիրելով սթրեսային գործոնների ճնշման տակ ու կայուն սոցիալական միջավայրում գտնվող երեխաների մոտ անհանգստության ախտանիշների, հետտրավմատիկ սթրեսի և դեպրեսիայի առկայությունը, առաջին խմբում ընդդրված երեխաների մոտ, որոնք գտնվում են տևական սթրեսային վիճակների ազդեցության տակ, հոգեբանական խնդիրների վառ արտահայտված աճ չի արձանագրել [10]:

Դա կարող է պայմանավորված լինել տարիքային հոգեբանական առանձնահատկություններով:

Յա. Ռեյկովսկին իր հերթին գտնում է, որ որոշակի անձանց հատուկ է սթրեսկայունության բարձր մակարդակ՝ ցածր հուզական զգայունության պատճառով: Հետևաբար, Յա.Ռեյկովսկին «սթրեսկայունություն» հասկացության բնորոշման մեջ ներառում է հուզականության չափանիշները հուզածին գրգռիչների նկատմամբ [11]:

ԼՂՀ սահմանամերձ գոտում (Մարտակերտ, Թալիշ) բնակվող (25) երեխաների հոգեբանական կայունության մակարդակը որոշելու նպատակով մեր

կողմից անցկացված ուսումնասիրությունները և թեստավորման արդյունքում ստացած տվյալները, նույնպես թույլ են տալիս հակվել այն տեսակետին, որ մարտական գործողությունների վերսկսման սպառնալիքով պայմանավորված տևական սթրեսային վիճակների ազդեցությունները, սահմանամերձ գոտում բնակվող դեռահասների հոգեբանական կայունության վրա, միանման չեն:

Դեռահասության տարիքում երեխաների համար տաղտկալի է դառնում կախվածությունը մեծերից և նրանք փորձում են կերպարանափոխել մեծերի մշակած շփման բանաձևը, ձգտելով ունենալ հավասար իրավունքներ: Դեռահասները հաճախ են հայտնվում ինքնուրույնության հաստատման և որոշումների կայացման ազատության խնդիրների առջև, քանզի շատ դեպքերում նրանց փոխարեն որոշումները կայացնում են ծնողները, որը պայմանավորված է վերջիններիս ավտորիտար դիրքով:

Դեռահասները, հայտնվելով բարդ իրավիճակներում, ինքնըստինքյան որոշումների կայացման իրավունքը զիջում են մեծերին, միաժամանակ նրանց վրա բարդելով նաև սեփական անձի անվտանգության պահպանման պատասխանատվությունը:

Ուսումնասիրելով մարտական գործողությունների վերսկսման սպառնալիքով պայմանավորված տևական սթրեսային վիճակների ազդեցությունը սահմանամերձ գոտում բնակվող դեռահասների հոգեբանական կայունության վրա՝ եկել ենք այն եզրակացության, որ տևական սթրեսորային և ֆրոստրատիվ գործոնները տարբեր ազդեցություններ կարող են թողնել սահմանամերձ գոտում բնակվող դեռահասների հոգեբանական կայունության վրա, որը կարող է պայմանավորված լինել սոցիալական միջավայրի ազդեցությամբ, տարիքային հոգեբանական առանձնահատկություններով և ազգային պատկանելիությամբ:

ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ.Պ. Մկրտումյան: Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները: Ուս. ձեռնարկ.–Եր.: Զանգակ–97, 2008թ. 320էջ:
2. <http://www.sns.am/>:
3. «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու: «Սիմ տպագրատուն», 2015թ. էջ 146, 156:
4. Медведев В.И. Психологические реакции человека в экстремальных условиях/ Экологическая физиология человека. Адаптация человека к экстремальным условиям среды. М., 1979С.66–67.
5. Короленко Ц.П. Психофизиология человека в экстремальных условиях.–Л., 1978.–272стр.
6. Ильин Е.П. Дифференциальная психофизиология. Челябинск, 1999,
7. С.П. Иванова. Психологическая устойчивость личности как фактор противодействия негативным влияниям социальной среды в ранней юности и молодости. Вестник Псковского государственного университета. №9/2009.
8. У.Л. Хасмагамедовна. Проблемы и переживания подростков, находящихся в экстремальных условиях: Диссертация кандидата психологических наук: Санкт–Петербург, 1997, стр.4–5.
9. А.Б.Ахмедов/Вопросы психологии.–2010.№5/Особенности Я–концепции подростков, живущих в экстремальных условиях–стр, 33–40.
10. Б.А.Дашиева, В.Ф.Лебедева, В.Я.Семке/ Проблемы психического здоровья детей и подростков/ Обзор материалов 3–ого всемирного конгресса по культуральной психологии.
11. Рейковский Я. Экспериментальная психология эмоций.М.: Прогресс. 1979

ХАРАКТЕРИСТИКА ПСИХОЛОГИЧЕСКОЙ УСТОЙЧИВОСТИ ПОДРОСТКОВ, ПРОЖИВАЮЩИХ В ПРИГРАНИЧНОЙ ЗОНЕ

ԱՐԱԿ ՖԻՐՅԱՆ

Соискатель АГПУ, преподаватель кафедры физического воспитания АргУ

Исходя из того, что подростки более чувствительны к воздействию различных природных и социальных факторов, в работе мы изучили воздействие длительных стрессовых состояний на психологическую устойчивость подростков, проживающих в приграничных зонах. Психологическая устойчивость подростков отражает новейшие проблемы современного общества.

PSYCHOLOGICAL STABILITY CHARACTERISTICS OF THE TEENAGERS LIVING ON THE BORDERLINE

ARAYIK FIRYAN

Lecturer of the Chair of Physical Upbringing, ASPU, Applicant

Based on the fact that teenagers are more sensitive towards different natural and social factors, so in the given work we've studied the influence of lasting stress, caused by the threat of the resumption of military actions, on the psychological stability of the teenagers living near the borderline. The issue of the psychological stability of teenagers reflects the new problems in modern society.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Հողվածում արծածվում է տնտեսական գործունեության մեջ ներգրավված հասարակության յուրաքանչյուր անդամի անհատական հոգեբանական առանձնահատկությունների դերի կարևորման խնդիրը: Շեշտադրվում է այն հանգամանքը, որ տնտեսությունը արդյունավետ կազմակերպելու և կառավարելու համար անհրաժեշտ է, որ տնտեսական գործընթացի մասնակիցները դիտվեն ոչ միայն որպես տնտեսական հարաբերությունների օբյեկտներ, այլև որպես հասարակության տնտեսական վարքագիծ ձևավորող սուբյեկտներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. տնտեսական գործունեություն, սոցիոլոգիական հետազոտություն, տնտեսական վարքագիծ, հոգեբանական գործոններ, նպատակ, դրդապատճառ, հետաքրքրություններ, ընկալում, տնտեսության արդյունավետ կառավարում:

Տնտեսագիտության տեսության մեջ տնտեսական գործունեությունը դիտվում է որպես նյութական ու հոգևոր բարիքների արտադրության, փոխանակման, բաշխման և սպառման գործընթացների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների (առանձին անհատներ, մարդկանց խմբեր, ֆիրմաներ, կազմակերպություններ, էթնոսներ) փոխհարաբերությունների հարաբերականորեն ինքնուրույն համակարգ [1], [2]: Նման ելակետով սոցիոլոգիական հետազոտություններ կատարելիս մարդու տնտեսական գործունեությունը վերացարկվում է նրա կենսագործունեության այլ ոլորտներից, իսկ տնտեսական վարքագիծը և փոխհարաբերությունները՝ վարքագծի և փոխհարաբերությունների այլ տեսակներից:

Ոչ տնտեսական հասարակական երևույթները դիտվում են կամ որպես տնտեսական երևույթներով պայմանավորված և նրանցից ածանցված, կամ որպես տնտեսական վարքագծի և փոխհարաբերությունների վրա ազդող գործոններ, հոգեբանական երևույթները՝ որպես տնտեսական երևույթները սուբյեկտիվորեն արտացոլող երևույթներ [3]: Միջանձնային հարաբերություններում հասարակության անդամների դրսևորած սոցիալական վարքագիծը համարվում է զուտ տնտեսական գործոններով պայմանավորված և տնտեսական վարքագծից ածանցված հետևանքային բնութագրիչ, իսկ տնտեսական երևույթները համարվում են մարդու ընդհանուր կենսագործունեությունը և սոցիալական միջավայրը պայմանավորող ներքին գործոններ: Անհատը կամ հասարակական խմբերը հանդես են գալիս տնտեսական հարաբերությունների ազդեցությունը կրող օբյեկտների դերում, ինչով պայմանավորված էլ տնտեսագիտական հոգեբանության հետազոտության խնդիր է դառնում այն, թե ինչպես են արտադրական հարաբերություններն արտացոլվում հասարակության յուրաքանչյուր անդամի գիտակցության մեջ: Մասնավորապես, ուսումնասիրվում են տնտեսական հարցերում մարդու ինքնազգացողության և վարքագծի վրա սոցիալ-տնտեսական միջավայրի թողած ազդեցության հետևանքները, հասարակության անդամների կողմից նախապատվություններ տալու և նախընտրելի որոշումներ կայացնելու գործընթացները պայմանավորող գործոնները, փոփոխվող տնտեսական գործոնների ազդեցությամբ պայմանա-

վորված հոգեբանական այն ներթափույց մեխանիզմները, որոնք կարող են ի հայտ գալ ընտրության հետևանքների, աշխատանքի վարձատրության, եկամուտների ձևավորման և բաշխման, սպառման, սեփականության, վարկավորման և այլ հարաբերություններում [4], [5]:

Որքան էլ որ գործունեության այլ ձևերում և հարաբերություններում առանձին անհատների ծավալած տնտեսական գործունեությունը անհատականության դրսևորման և ինքնաիրացման նախադրյալ ու բնութագրիչ հանդիսանա, այնուամենայնիվ տնտեսությունը կազմակերպելու և այն արդյունավետ կառավարելու համար անհրաժեշտ է, որ տնտեսական գործընթացներում առանձին անհատները և խմբերը դիտվեն ոչ միայն որպես տնտեսական հարաբերությունների օբյեկտներ, այլև որպես հասարակության տնտեսական վարքագիծ ձևավորող սուբյեկտներ: Այսինքն՝ սոցիալ-տնտեսագիտական հետազոտություններ կատարելիս խնդիրները պետք է դիտարկել ոչ միայն տնտեսագիտական, այլ նաև հոգեբանական տեսանկյունից: Այս դեպքում, գոյաբանական իմաստ ձեռք բերելով, տնտեսությունը՝ որպես մարդկանց կենսագործունեության մի ոլորտ, ինքն է դառնում հոգեբանական հետազոտությունների օբյեկտ: Արդյունքում, հոգեբանական երևույթները դիտվում են ոչ միայն որպես հետևանքներ, այլև պատճառներ և, անհրաժեշտություն է առաջանում պարզելու, թե ինչպես են հասարակության յուրաքանչյուր անդամի անհատական հոգեբանական առանձնահատկությունները (ընկալումները, զգացումները, հույզերը, խառնվածքը, բնավորությունը, երևակայությունը, կամային որակները, մտածողությունը, դիրքորոշումները, կարծրատիպերը) և տվյալ հանրության բնորոշ էթնոմշակութային և ժողովրդագրական գործոններն ազդում ողջ հասարակության տնտեսական գործունեության և վարքագծի վրա, որոնցով,

ինչ խոսք, պայմանավորվում է ցանկացած երկրում տնտեսական այս կամ այն քաղաքականության իրականացումը, արտադրության արդյունավետ կազմակերպումն ու կառավարումը:

Սոցիոլոգիական գրականության մեջ տնտեսական վարքագիծը սահմանվում է որպես սոցիալական վարքագծի մի այնպիսի տեսակ, որն արտացոլում է հասարակության տնտեսական կյանքին անհատի մասնակցությունը տնտեսական գործունեության այնպիսի ձևերով, որոնք պայմանավորված են նրա հասարակական հետաքրքրություններով և նյութական հնարավորություններով: Տնտեսագիտության մեջ տնտեսական գործունեությունը դիտվում է որպես տնտեսվարման տարբեր մակարդակներում իրականացվող այնպիսի գործողությունների համախումբ, որոնց արդյունքում մարդիկ բավարարում են իրենց կարիքները՝ նյութական բարիքների ու ծառայությունների փոխանակման միջոցով: Տնտեսական վարքագիծը կապվում է տնտեսական այն այլընտրանքների հետ, որոնց դեպքում ծախսերը նվազագույնն են, իսկ եկամուտները՝ առավելագույնը [6], [7]:

Հոգեբանության տեսանկյունից տնտեսական գործունեությունը հասարակական գործունեության այնպիսի մի առանձնահատուկ տարատեսակ է, որը ծնվում է անհատի տնտեսական բարեկեցության հասնելու պահանջունքից և բնութագրվում է նրա նպատակներով, դրդապատճառներով, գործողության ձևերով և արդյունքներով: Յուրաքանչյուր անհատի տնտեսական գործունեության նպատակը իր հակումներին և ձգտումներին համապատասխան եկամուտների ստացումն է: Տնտեսական դրդապատճառները ֆիզիկական և հասարակական պահանջունքների բավարարմանը միտված մղումներն են:

Գործունեությունը, որպես հոգեբանական եզրույթ, մարդու ակտիվության դրսևորման այն գործընթացն է, որի

նպատակը բնության և հասարակության զարգացման օրինաչափությունների ճանաչման և վերափոխման ճանապարհով անձնական կենսագործունեության պայմանների ապահովումն է: Գործունեության մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ մարդու ակտիվության հիմքում կա գիտակցական նպատակ: Գործունեություններն իրարից կարող են տարբերվել ձևով, իրականացման եղանակներով, հուզական լարվածությամբ, ֆիզիոլոգիական մեխանիզմներով: Մի գործունեությունը նյութից տարբերող գլխավոր գործոնը գործունեության առարկան է, որը գործունեության իրական դրդապատճառն է [8]– [11]: Գործունեության առարկան «կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ իդեալական. գոյություն ունենալ ընկալումներում, երևակայության մեջ, մտքում: Գլխավորն այն է, որ նրա ետևում միշտ կանգնած է պահանջմունքը» [10, էջ 102]: Գործունեության դրդապատճառը անձի կողմից կարող է չգիտակցվել կամ թերի գիտակցվել, սակայն նպատակի գիտակցումը պարտադիր է: Յուրաքանչյուր գործունեություն ունի ուրույն կառուցվածք, որի բաղադրիչներն են գիտակցված նպատակի (կամ նպատակների) իրագործման համար իրականացվող գործողությունները: Դրդապատճառները մարդուն սնունդ են գործունեության, իսկ նպատակը գործողությունների միջոցով ուղղորդում է նրան: Տնտեսական գործունեություն ծավալող ցանկացած սուբյեկտ կարող է ունենալ ոչ միայն բացահայտ դրդապատճառներ (օրինակ՝ եկամտի կամ շահույթի ստացում, հասարակական պարտքի կատարում, հոգևոր և բարոյական բավարարվածություն), այլև անհատական հետաքրքրություններով և արժեքային համակարգով պայմանավորված թաքնված դրդապատճառներ (օրինակ՝ հասարակության մեջ անձնական կարգավիճակի բարձրացում, ազդեցության ոլորտների ընդլայնում, հավելյալ իշխանության ձեռքբերում), որոնք, ըստ նրա, ևս օրինական են և ընդունելի հասարակու-

թյան կողմից: Առանց տնտեսական գործունեության նպատակի ետևում առկա թաքնված դրդապատճառների հաշվառման և դրանց հոգեբանական վերլուծության հնարավոր չէ հասկանալ տնտեսվարող սուբյեկտի կողմից դրսևորվող այս կամ այն տնտեսական վարքագիծը և դրանով պայմանավորված կանխորոշել նրա՝ որպես քաղաքացու, հասարակական հավանական վարքագիծը:

Անհատի տնտեսական վարքագիծը պայմանավորվում է նրա ընկալումներով: «Ընկալումը զգայարանների միջոցով արտացոլվող առանձին հատկանիշների միավորումն է առարկաների, իրադրությունների և իրադարձությունների ամբողջական պատկերների մեջ: Ընկալում ասելով պետք է հասկանալ և՛ առարկաների (երևույթների, իրադրությունների և իրադարձությունների) ամբողջական արտացոլման հոգեկան գործընթացը, և՛ այդ գործընթացի արդյունքը՝ հոգեկան պատկերի ձևով» [11, էջ 147]: Ընկալման գործընթացի (ուստի նրա արդյունքի) վրա կարող են ազդել մարդու կենսափորձը, համոզմունքները, սոցիալական դիրքորոշումները և կարծրատիպերը, տարբեր հոգեվիճակները, գիտելիքները, խառնվածքը, աշխատանքը և անձնային այլ առանձնահատկություններ: Այնքանով, որ թվարկված առանձնահատկությունները խիստ անհատական են, կարելի է եզրակացնել, որ միևնույն երևույթը տարբեր մարդկանց մեջ կարող է առաջացնել տարբեր՝ ընդհուպ երկույթի բովանդակությանը ոչ համարժեք ընկալումներ: «Այսօր արդեն ակնհայտ է, որ առանձին անհատը ոչ միայն իռացիոնալ է մտածում, այլև շատ դեպքերում շրջապատող աշխարհը ոչ ադեկվատ է ընկալում: Նրա զգայությունները, ընկալումները, ուշադրությունը, հիշողությունը, զգացմունքները, երևակայությունը և հոգեկան այլ գործընթացները, ինչպես նաև հոգեբանական առանձնահատկություններն ու հոգեկան իրավիճակները լի են սխալներով, պատրանքներով,

հակասությունների և անհամարժեքությունների օրինակներով» [12, էջ 58]: Հատկապես դինամիկ տնտեսական հարաբերություններում, երբ տնտեսվարող սուբյեկտը (անհատը կամ անհատների խումբը) հաճախակի է հայտնվում իր համար ոչ նպաստավոր հոգեկան իրավիճակներում, կարող է ոչ համարժեք ձևով հակազդել այդ փոփոխություններին, ինչը կարող է հանգեցնել հասարակության համար անցանկալի տնտեսական անհավասարակշիռ իրավիճակների, որն իր բացասական ազդեցությունը կարող է ունենալ ողջ երկրի տնտեսության վրա: Անսպասելի փոփոխվող տնտեսական իրադարձությունները խախտելով տնտեսվարող սուբյեկտների հոգեկան հավասարակշռությունը հանգեցնում են փոփոխությունների բովանդակությանն ու նպատակին անհամարժեք հասարակական կարծրատիպերի և դիրքորոշումների ձևավորման, առաջացնում են հասարակության անդամների մտավոր գործունեության կառուցվածքային ճշտումների անհրաժեշտություն: Ձգտելով հակազդել անսպասելի տնտեսական իրավիճակներին և հասնել հոգեկան հավասարակշռության՝ տնտեսվարող սուբյեկտը կարող է դիմել պատահական (հաճախ ոչ ռացիոնալ) այլընտրանքների, նախապատվությունների, ինչը կարող է հանգեցնել նրա տնտեսական վարքագծի անկանխատեսելի փոփոխության, տնտեսության կառավարման գործող մեխանիզմի խաթարման: Հետևաբար տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեությունը և տնտեսական վարքագծի հավանականային դրսևորումները հետազոտելիս պետք է հաշվի առնել նաև փոփոխվող և անսպասելի իրադրությունների պատճառով առաջացող հոգեբանական գործոնների հնարավոր ազդեցությունները ևս: Այս հանգամանքը հաշվի չառնելը կարող է հանգեցնել տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության և վարքագծի ոչ ճիշտ մեկնաբանման և արտադրական

գործընթացների ոչ արդյունավետ կազմակերպման ու պլանավորման:

Մարդն ի գորու չէ հավասարապես ներգրավվել հասարակական բոլոր հարաբերություններում: Առաջնորդվելով թե՛ իրադրական (առօրեական) և թե՛ հեռահար նպատակներով՝ յուրաքանչյուր ոք ընտրողաբար մտնում է որոշակի հասարակական հարաբերությունների մեջ, որոնց համապատասխան էլ հայտնվում է որոշակի սոցիալական միջավայրում: Սոցիալական միջավայրը՝ որպես մարդկանց կենսագործունեության նյութական, տնտեսական, քաղաքական, հոգևոր և մշակութային պայմանների միասնական ընդհանրական համակարգ, ազդում է հասարակության յուրաքանչյուր անդամի ոչ միայն ձևավորման, այլև զարգացման գործընթացների վրա: Տնտեսվարող սուբյեկտների գործունեությանն ու վարքագծին առնչվող խնդիրներն ուսումնասիրելիս չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ նրանցից յուրաքանչյուրն ի վերջո մի որոշակի սոցիալական միավորի (հանրույթի) ներկայացուցիչ է, և որ ամեն մի հանրույթ ունի իրեն բնորոշ արժեքային համակարգ ու դրանով պայմանավորված հոգեբանական առանձնահատկություններ: Նույն կերպ էլ, ամեն մի հասարակություն (պետություն)՝ որպես տարբեր հանրույթների միավորում, ունի իր պատմական զարգացման ընթացքով պայմանավորված և իրեն հատուկ սոցիալ-տնտեսական և մշակութային առանձնահատկություններ, որոնք հետևանք են նրան բնութագրող էթնոհոգեբանական գործոնների: Ուստիև, անհատ տնտեսվարող սուբյեկտի տնտեսական գործունեության մեխանիզմները և տնտեսական վարքագիծը պայմանավորվում են ոչ միայն նրա անհատական հոգեբանական առանձնահատկություններով, այլև սոցիալական միջավայրով, այդ միջավայրում նրա կենսապայմաններով, ողջ հանրության պատմական զարգացման և մշակութային ու էթնոհոգեբանական առանձնահատկություններով:

1. Курс экономической теории: Общие основы экономической теории. Микроэкономика. Макроэкономика. Основы национальной экономики: учеб. пособие для студентов вузов /рук. авт. коллектива и науч. ред . А. В. Сидорович/, М., «Дело и Сервис», 2007.
2. Курс экономической теории, /учебник для вузов под ред. Чепурина М. Н./, Киров, «АСА», 2005.
3. Позняков В.П., Экономическая психология в России 21 века. Теоретические проблемы и эмпирические исследования / Экономическая психология: Актуальные исследования и инновационные тенденции / Под общ. ред. А.Д. Карнышева. Иркутск, БГУЭП, 2009. с. 41–68.
4. Китов А. И., Экономическая психология., М., Политиздат, 1987.
5. Пасыпанова О.С., Экономическая психология: психологические аспекты поведения потребителей, Монография.–Калуга: Изд–во КГУ им. К.Э. Циалковского, 2012.
6. Кураков Л. П., Кураков В. Л., Кураков А. Л., Экономика и право: словарь–справочник., М., Вуз и школа, 2004.
7. Райзберг Б. А., Лозовский Л.Ш., Стародубцев Е. Б., Современный экономический словарь., М., ИНФРА–М, 2011.
8. Немов Р. С., Психология, том 1, М., ВЛАДОС, 2004.
9. Маклаков А. Г., Общая психология, СПб.: Питер, 2005.
10. Леонтьев А.Н., Деятельность. Сознание. Личность., М., 1975.
11. Նախագրյալն Ա. Ա., Հոգեբանության հիմունքներ, «Հոգեբան» հրատ., Երևան, 1997:
12. Веригин А.Н., Теория психического отражения и экономическая психология, Экономическая психология в современном мире: сборник научных статей, М. 2012. с. 57–68.

ЗНАЧИМОСТЬ РОЛИ ПСИХОЛОГИЧЕСКИХ ЯВЛЕНИЙ В ЭКОНОМИЧЕСКИХ ПРОЦЕССАХ

КАРЛЕН ВОСКАНЯՆ

*ЕГУ, факультет математики и механики,
отделение актуарной и финансовой математики, студент*

Во многих экономических теориях экономическая деятельность субъектов общества рассматривается как доминирующая деятельность в сфере жизнедеятельности всего общества, а психологические особенности каждого члена общества рассматриваются как следствия субъективного отражения экономических отношений. Члены общества, занимающиеся экономической деятельностью, рассматриваются всего лишь как объекты экономических взаимоотношений. В статье рассматривается важность учета роли психологических особенностей каждого индивида в экономической деятельности общества. Акцентируется тот факт, что в экономических отношениях члены общества выступают не только в качестве объекта, но и в качестве субъекта экономической деятельности, что имеет немаловажное значение для продуктивного хозяйствования.

IMPORTANCE OF THE ROLE OF PSYCHOLOGICAL PHENOMENA IN ECONOMIC PROCESSES

KARLEN VOSKANYAN

*Yerevan State University, Faculty of Mathematics and Mechanics,
Department of Actuarial and Financial Mathematics, Student*

According to many theories the economic activity of the members of society is regarded as a dominant activity, whereas the psychological characteristics of each member of society are regarded as a consequence of the subjective reflection of economic relations, i.e. members of society are engaged in economic activity and are considered more objects in economic relations.

The article discusses the significance of considering the role of psychological characteristics of each individual in the economic activity of society. The article also emphasizes the fact that economic relations between the members of society are not only the object, but also the subject of economic activity, which is extremely important for productive economic management.

**ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՔՍՏԸ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ
ՀԻՄՆԱԽՆ ԴԻՐԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Մեր այս աշխատանքում ներկայացվում է կրտսեր դպրոցականի կողմից տեքստը հասկանալու հիմնախնդիրը հոգեբանության մեջ: Ակզբում պարզաբանվում է, թե ինչ է ուսուցումը, ապա անդրադարձ է կատարվում ուսումնական գործունեության կառուցվածքին, հետո անցում է կատարվում կրտսեր դպրոցականի ուսումնասիրման ոլորտ, ներկայացվում է վերջինիս ուսումնական գործունեության կառուցվածքը, նրա անձնավորության հոգեկան հիմնական առանձնահատկությունները և վերջում՝ հոգեբանության մեջ նրա կողմից տեքստը հասկանալու հիմնախնդիրը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ուսուցում, ուսումնական գործունեություն, կրտսեր դպրոցական, տեքստ, հասկանալու հիմնախնդիր, կրտսեր դպրոցականի հոգեկան հիմնական առանձնահատկությունները:

Հանրահայտ ձմարտություն է, որ մարդն իր ողջ կյանքում սովորում է, ուստի կարող ենք ընդունել, որ սովորելու, կրթվելու գործընթացը կրում է շարունակական բնույթ: Անկախ նրանից, թե մարդ ինչ է սովորելու, վերջինս իրականացնում է ուսումնական գործունեություն: Ուսումնական գործունեությունը ինքնին շատ կարևոր է, որի հիմքում բնորոշված է առաջնային բնորոշել այն դիրքորոշումը, որ ուսումնական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ կարողությունների հիմքերը դրվում են հենց կրտսեր դպրոցում:

Վերջին ժամանակներում մանկավարժներին և հոգեբաններին առավել շատ է անհանգստացնում այն փաստը,

որ ժամանակակից երեխաները քիչ և մակերեսային են կարդում, դժվարությունների են հանգում կարդացածը հասկանալու և հիշելու հետ կապված: Միևնույն ժամանակ հետևությունները ցույց են տալիս, որ ուսուցիչների մեծամասնությունը աշակերտների ուսուցումը՝ տեքստը հասկանալու եղանակներով, չի դիտում որպես առանձնահատուկ հոգեբանաուսուցողական խնդիր:

Երկար կարելի է վիճել այն հարցի շուրջ, թե ինչ և ինչպես ուսուցանել, բայց առանց **հասկանալու** խնդիրը լուծելու դժվար է անցում կատարել ուսուցման մյուս խնդիրների լուծմանը, որովհետև յուրաքանչյուր ոք առանց կարդալու և կարդացածը հասկանալու կարողության չի կարող ձանաչել շրջապատող աշխարհը:

Ներկայացվող հիմնախնդիրը դիտարկելու համար նախ և առաջ հասկանանք, թե ինչ է ուսուցումը: Այս հարցին սովորաբար տրվում է այսպիսի պատասխան. «ուսուցումը որոշակի գիտելիքների, կարողությունների և հմտությունների հաղորդումն է աշակերտին»: Այս սահմանումը առաջին հայացքից ճիշտ է արտացոլում ուսուցման ցանկացած պրոցեսի բնույթը: Իսկապես, մինչև ուսուցումը մարդը չունեի այս կամ այն գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Ուսուցման հետևանքով դրանք ի հայտ եկան: Բայց ո՞րն է դրանց աղբյուրը: Այդ աղբյուրը ուսուցիչն է, որն իր ունեցած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները փոխանցում է իր աշակերտներին: Հենց փոխանցման կամ հաղորդման այդ

պրոցեսն էլ ուսուցումն է, բայց գիտելիքներն ու հմտությունները, ինչպես և ընկալումները, մտապատկերները, հասկացություններն ու մտածողությունը ֆիզիկական առարկաներ չեն, որոնք ձեռքից ձեռք են փոխանցվում կամ մի գլխից «լցվում» են մյուսը: Գիտելիքները, կարողություններն ու հմտությունները մարդու հոգեկանի արտացոլող ու կարգավորիչ պրոցեսների ձևեր ու արդյունքներ են: Սա նշանակում է, որ մարդու գլխում դրանք կարող են ծագել միայն նրա սեփական գործունեության հետևանքով և մեխանիկորեն ուրիշից ստացվել չեն կարող: Դրանք պետք է ստացվեն սովորողի հոգեկան ակտիվության հետևանքով, բայց միաժամանակ հանդիսանում են այդ ակտիվության որոշակի ձևեր: Եթե սովորողը ակտիվություն հանդես չի բերում, ապա նրանում գիտելիքներ ու հմտություններ չեն կարող հայտնվել: Այս հանգամանքը հայտնի է ամեն մի փորձված մանկավարժի, թեև այն միշտ չէ, որ ճիշտ է գիտակցվում: Սա է պատճառը, որ «հանդիպական հոգեկան ակտիվության բացակայություն» արտահայտության փոխարեն հաճախ օգտագործում են «անուշադրություն», «ծուլություն», «անընդունակություն» և այլ արժեքավորող հասկացություններ:

Հետևաբար, ուսուցման պրոցեսում առաջացող «ուսուցիչ-աշակերտ» հարաբերությունը ոչ մի կերպ չի կարելի հանգեցնել «հաղորդող-ընդունող» տիպի հարաբերության: Այդ կապի մեջ անհրաժեշտ է պրոցեսի երկու մասնակիցների ակտիվությունն էլ: Այս կարգի հարաբերությունը անվանում են *փոխներգործություն*: Սրա հիման վրա ուսուցումը ավելի ճշգրիտ կարելի է սահմանել որպես ուսուցանողի և սովորողի միջև հաստատվող փոխներգործության այնպիսի պրոցես, որի հետևանքով սովորողի մոտ որոշակի գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ են ձևավորվում: Վերջինները ձևավորվում են միայն այն դեպքում, երբ ուսուցչի

ներգործությունները առաջ են բերում աշակերտի ֆիզիկական ու հոգեկան որոշակի ակտիվություն:

Օրգանիզմի որոշակի ակտիվություն առաջ բերող արտաքին ներգործությունները անվանում են խթանում (ստիմուլյացիա), իսկ այն արտաքին ազդեցությունները, որոնց շնորհիվ ձեռք է բերվում նախապես առաջադրված նպատակը, անվանում են *կառավարում*: Հետևաբար, ուսուցումը կարելի է սահմանել *որպես աշակերտի ներքին ու արտաքին ակտիվության խթանման և կառավարման այնպիսի պրոցես, որի հետևանքով նրանում որոշակի գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ են ձևավորվում*:

Ուսուցումը այդպիսի ակտիվության համար կարող է անհրաժեշտ պայմաններ ստեղծել: Ուսուցանելիս, օրինակ, պետք է կազմակերպել աշակերտի ուսումնական գործունեությունը, ուղղություն տալ դրան, վերահսկել, անհրաժեշտ միջոցներ ու տեղեկություններ տրամադրել, բայց մարդու գիտելիքների, հմտությունների ու կարողությունների, հասկացությունների, մտածողության, գործողությունների ու վարքի ձևավորումը հնարավոր է միայն նրա սեփական գործունեության շնորհիվ:

Աշակերտի ինչպիսի՞ ակտիվություն պետք է առաջ բերել և ինչպիսի՞ ուղղություն պետք է հաղորդել դրան, որպեսզի հնարավոր դառնա գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձևավորումը, ի՞նչ սկզբունքների վրա պետք է հենվի այդ ձևավորող միջոցների օգտագործումը, ինչպե՞ս պետք է կազմակերպել ուսուցումը այն առավել արդյունավետ դարձնելու համար: Այս հարցերին տրվող պատասխանների բնույթը կախնած է այն հանգամանքից, թե նախապես ինչպես է լուծվում հետևյալ հիմնական խնդիրը, սովորողի ներքին և արտաքին ինչպիսի ակտիվությունն է արտացոլվում նրա գիտելիքներում, հմտություններում ու կարողու-

թյուններում և ծնում, առաջ բերում այդ արդյունքները [1, էջ 229–231]:

Ուսումնական գործունեությունը գործունեության յուրահատուկ ձև է և առավել գերազանց է, քան աշխատանքային գործունեությունը: Նյութը փոխելով, աշխատելով վերջինիս վրա՝ աշխատանքային գործունեության ընթացքում մարդը ստեղծում է նոր արդյունք: Աշխատանքային գործունեության էությունը հենց արդյունքի ստեղծումն է: Ուսուցչի ղեկավարությամբ աշակերտը սկսում է ծանոթանալ գիտական հասկացություններին [2, էջ 84]:

Անձի այն յուրահատուկ գործունեությունը, որը ուսուցում են անվանում, կազմված է որոշակի *օպերացիաներից*: Սրանց բնույթը կախված է այն տեղից, որ սովորողը գրավում է մանկավարժական ուժերի ու ներգործությունների ոլորտում, այսինքն՝ մանկավարժական իրադրության մեջ նրա կատարած գործառնություններից: Այդ գործառնությունները կարող են հետևյալները լինել.

- պասիվ ընկալում և դրսից մատուցվող ինֆորմացիայի յուրացում,

- ինֆորմացիայի ակտիվ ու ինքնուրույն որոնում, հայտնաբերում և օգտագործում,

- դրսից պարտադրվող և ուղղություն ստացվող որոնում, ինֆորմացիայի հայտնաբերում և օգտագործում:

Առաջին դեպքում սովորողը դիտվում է լոկ որպես մակավարժի՝ ձևավորող ներգործությունների օբյեկտ: Ուսուցումն իրագործվում է սովորողին պատրաստ ինֆորմացիա *հաղորդելու* և նրան որոշակի ուսումնական գործողությունների կատարում պարտադրելու եղանակով: Երկրորդ դեպքում սովորողը դիտվում է որպես *սուբյեկտ*, որը ձևավորվում է իր իսկ զարգացող հակումների և նպատակների ազդեցության տակ: Այս ուսուցման հիմքում դրվում է *ինքնաշարժումը*, այսինքն՝ սովորողի կողմից

այնպիսի տեղեկությունների և գործողությունների որոնումն ու ընտրությունը, որոնք համապատասխանում են նրա պահանջմունքներին և արժեքներին: Երրորդ դեպքում սովորողը հանդես է գալիս և որպես մանկավարժական ներգործությունների *օբյեկտ*, և որպես իմացական գործունեության *սուբյեկտ*: Մանկավարժը վարքի արտաքին աղբյուրները (պահանջները, սպասումներն ու հնարավորությունները) այնպես է կազմակերպում, որ դրանք սովորողի մեջ անհրաժեշտ հակումներ և արժեքային կողմնորոշումներ են ձևավորում, իսկ սրանք իրենց հերթին կանխորոշում են աշակերտի կողմից անհրաժեշտ ինֆորմացիայի ակտիվ ընտրությունն ու օգտագործումը: Այս դեպքում ուսուցման հիմքում ընկած է անհատի գործունեության աղբյուրներին այնպիսի ուղղվածության հաղորդումը, որը պայմաններ է ստեղծում պահանջվող ինֆորմացիայի ու գործողությունների ընտրության, վերամշակման և օգտագործման համար [1, էջ 243–244]:

«Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է աշակերտի լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին, նախնական հաղորդակցմանը» [3]:

Այսօր անառարկելիորեն ընդունվում է այն դիրքորոշումը, որ կրտսեր դպրոցը միայն գիտելիքների օղակ չէ. գիտելիքն ուսուցման այս փուլում դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց: Այսինքն՝ կրտսեր դպրոցում պիտի կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղորդումը, այլ դրանց՝ երեխաների կողմից յուրացման ձևերը, գործածման արդյունավետությունը, հետագա ուսումնական գործունեության ծավալման և երեխաների բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանելիությունը: Այս խնդիրների իրականացումը

պահանջում է, որ ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները համապատասխանեցվեն կրտսեր դպրոցականների՝ ստեղծագործական, մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին [4, էջ 5]:

Ուսումնական գործունեությունը իրականացվում է դպրոցում երեխային ուսուցանելու ողջ ընթացքում, բայց «իր առաջատար գործառույթը այս կամ այն գործունեությունը, – ինչպես նշում է Դ.Բ. Էլկոնինը, – իրականացնում է լիարժեք առաջընթաց, երբ այն դասավորվում, ձևավորվում է: Կրտսեր դպրոցականի տարիքը ուսումնական գործունեության հենց ամենաինտենսիվ ձևավորման առաջընթացն է [5, էջ 18]:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացումը կատարվում է հարազատների և հասակակիցների հետ շփվելիս, խաղալիս և գրքեր կարդալիս: Մարդը իր փորձի զգալի մասը ձեռք է բերում աշխատանքի պրոցեսում: Ո՞րն է բուն ուսումնական գործունեության ընթացքում կատարվող յուրացման առանձնահատկությունը: Ամենից առաջ պետք է հիշել, որ գիտելիքների այդպիսի յուրացում իրագործելու համար պայմաններ ստեղծվում են միայն դպրոցում, որտեղ երեխաներին դասավանդում են գիտությունների հիմունքները և ձևավորվում է նրանց գիտական աշխարհայացքը: Ուսումնական գործունեության բովանդակությունը ունի մի յուրահատկություն, նրա հիմնական մասն են կազմում *գիտական հասկացողությունները, գիտության օրենքները* և գործնական խնդիրների լուծման *ընդհանուր եղանակները*, որոնք հիմնված են դրանց վրա:

Գործունեության այլ ձևերում յուրացումը հանդես է գալիս որպես կողմնակի արդյունք: Օրինակ՝ խաղալիս երեխան ձգտում է լավ կատարել իր վրա վերցրած այս կամ այն դերը: Այստեղ վարքի կանոնների յուրացումը միայն

ուղեկցում է հիմնական ձգտման բավարարմանը: Աշխատանքի հիմնական նպատակը իրերի արտադրությունն է: Հմտությունների զարգացումը այստեղ հանդես է գալիս որպես աշխատանքի կարևոր, բայց կողմնակի, լրացուցիչ արդյունք: Եվ միայն ուսումնական գործունեության ընթացքում է գիտական գիտելիքների և դրանց համապատասխանող հմտությունների յուրացումը հանդես գալիս որպես գործունեության *հիմնական նպատակ և գլխավոր արդյունք*:

Ուսումնական գործունեությունը ունի որոշակի կառուցվածք: Նրա բաղադրամասերն են.

1. ուսումնական իրադրությունները (կամ խնդիրները),
2. ուսումնական գործողությունները,
3. վերահսկողությունը,
4. գնահատումը [1, էջ 93–94]:

Դ.Բ. Էլկոնինը և Վ.Վ. Դավիդովը նույնպես առանձնացնում են ուսումնական գործունեության վերոնշյալ բաղադրամասերը [5, էջ 45]:

Ուսումնական գործունեությունը կրտսեր դպրոցականի առաջատար գործունեությունն է: Սովետական մանկական հոգեբանության առաջատար գործունեությունը հասկացվում էր որպես այնպիսի գործունեություն, որի ընթացքում տեղի է ունենում անձի հիմնական հոգեբանական գործընթացների և հատկությունների ձևավորումը, ի հայտ են գալիս տարիքի կարևոր նորագոյացությունները (ինքնակամություն, ռեֆլեքսիա, ինքնակառավարում, գործողությունների ներքին պլան) [6, էջ 86]:

Տարրական դասարաններում ուսուցանելու և դաստիարակելու համար արտակարգ նախադրյալ է ուսուցչի հեղինակությունը: Նրանից ճիշտ օգտվելու դեպքում փորձառու ուսուցիչը իր աշակերտների մոտ շատ հաջող ձևավորում է կազմակերպվածություն, աշխատասիրություն, դրական վերաբերմունք ուսումնական պարապմունքների նկատմամբ, սեփական վարքը և ուշա-

դրությունը ղեկավարելու կարողություն: Եվ այդ հեղինակության խախտումը, աշակերտների ներկայությամբ ուսուցչին վարկաբեկելը, նրանց ներկայությամբ ուսուցչին քննադատելը անընդունելի է [7, էջ 50]:

Տարիքային առանձնահատկությունների մեջ յուրահատուկ նշանակություն ունեն հոգեկան հատկանիշները, որոնց բացահայտումը պրակտիկայում և տեսության մեջ որոշակի դժվարությունների հետ է կապված, որովհետև իրենց բնույթով նրանք սերտորեն կապված են միմյանց հետ, չափազանց փոփոխական են ու բարդ:

Չնայած որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեբանությունը համեմատաբար ավելի պարզ է և մատչելի ուսուցիչների ու ծնողների համար, քան ավելի բարձր տարիքի երեխաների հոգեկան կերտվածքը, այնուամենայնիվ, պրակտիկայում հաճախ դժվար է լինում ձիշտ բացահայտել ու գնահատել նաև կրտսեր դպրոցականի բնավորության և հոգեկան պրոցեսների բնորոշ գծերը:

Այդ դժվարության պատճառներից մեկն այն է, որ կան ուսուցիչներ, որոնք իրենց աշխատանքում հաճախ սուբյեկտիվ մոտեցում են ցուցաբերում երեխայի հոգեբանությունը ձանաչելիս, այսինքն՝ իրենց «ակնոցներով» են նայում երեխային, ելակետ են ունենում իրենց մտածողությանը, բնավորությանը, զգացմունքներին հատուկ գծերը: Նրանք կրտսեր դպրոցականին սխալմամբ համարում են «մինյատուրային մեծահասակ», նրան վերագրելով հոգեպես ձևավորված չափահաս մարդու հատկությունները: Այսպիսով՝ կրտսեր դպրոցականների հոգեբանությունը չհասկանալով, մեծահասակներից ոմանք նրանց մեծացնում են՝ տարիքային անհամապատասխան, ավելի բարձր որակի հատկանիշներ վերագրելով նրանց:

Տարիքային առանձնահատկության այս թյուրըմբռնման հիմնական

հետևանքներից մեկն այն է, որ արհեստականորեն, այսինքն՝ իրենց գիտակցության մեջ մեծացնելով կրտսեր դպրոցականին, այդպիսի ուսուցիչները գերծանրաբեռնում են նրա միտքը: Այս նկատի ուներ մանկավարժ Ն. Ջորայանը, երբ դեռ անցյալ դարի կեսերին խոսելով ուսուցման և դաստիարակության սխալաստիկ ձևերի և երեխաների տարիքային առանձնահատկությունների թերագնահատման մասին, գրում էր. «Անանկ մատաղ հասակի մը մեջ անոր իր կարողութենն վեր ձիգ ընել տալը՝ ընելիք առաջադիմությունը ուշացունել է» [8]:

Կան և այնպիսի ուսուցիչներ և ծնողներ, որոնք ընդհակառակն, արհեստականորեն ավելի են փոքրացնում կրտսեր դպրոցականներին և առհասարակ՝ երեխաներին: Նրանք մոռանում են, որ երեխաները աճում ու զարգանում են, հետզհետե թողնում իրենց բնավորության և մտածողության թերություններից շատերը և ձեռք բերում որակապես ավելի բարձր հոգեկան հատկանիշներ: Կրտսեր դպրոցականների հոգեկան զարգացման պրոցեսը հաճախ ավելի արագ է կատարվում, քան ծնողների և ուսուցիչների կողմից այդ քանակական և որակական փոփոխությունների ըմբռնումը: Այդ պատճառով էլ մեծացող, հոգեպես զարգացող երեխան այդպիսիների աչքում «միշտ փոքր» է երևում: Այս ոչ ձիշտ պատկերացումից էլ բխում է նրանց ոչ ռեալիստական և հակամանկավարժական մոտեցումը նրա օրավոր զարգացող հոգեկան կերտվածքի, նրա վարքի և ուսումնական գործունեության նկատմամբ:

Հատկապես ծնողների մոտ երբեմն նկատվում է իրենց երեխաների մտավոր զարգացման և բնավորության տարիքային առանձնահատկությունների ոչ ձիշտ գնահատման հետևանքով առաջացող անհիմն ոգևորություն: Այս ոգևորության արտահայտություններից մեկն այն է, որ ծնողները, գրույցների ընթաց-

քում լսելով երեխաների այս կամ այն պատասխանը, նրանց գործածած բառերը և արտահայտած մտքերը, շտապ դատողություններ են անում նրանց խոսքի և մտածողության զարգացման «բարձր աստիճանի» հասած լինելու մասին:

Կրտսեր դպրոցականների տարիքի «փոքրացման» արտահայտություններից է այն, որ ծնողները հաճախ կաշկանդում են նրանց ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը՝ պատճառաբանելով՝ նրանք դեռևս փոքր են, ի վիճակի չեն կատարելու այս կամ այն հանձնարարությունը [9, էջ 71–73]:

Ա. Վ. Պետրովսկու կարծիքով՝ կրտսեր դպրոցական տարիքի երեխայի հոգեբանական հիմնական նորագոյացություններն են. գործողությունների կամաձիխությունը, դրանց ներքին բնույթը (ներքին պլանի առկայությունը) և ռեֆլեքսիան: Այս ձեռքբերումների շնորհիվ կրտսեր դպրոցականի հոգեկանը հասնում է զարգացման այնպիսի մակարդակի, որն անհրաժեշտ է միջնակարգ դպրոցում առաջիկայում ևս սովորելու, նորմալ կերպով դեռահասի տարիքին անցնելու համար, որն ունի իր առանձնահատուկ հնարավորություններն ու պահանջները: Միջին դասարաններում սովորելու համար որոշ կրտսեր դպրոցականների անպատրաստ լինելը ամենից հաճախ կապված է անձի այդ ընդհանուր որակների և ընդունակությունների բավարար չափով ձևավորված չլինելու հետ: Բայց այդ որակներն ու ընդունակություններն են որոշում հոգեկան պրոցեսների և ուսումնական գործունեության մակարդակը [1, էջ 108]:

Ժամանակակից հոգեբանության առաջնություններից մեկն էլ համարվում է մարդու հոգեմշակութային կազմավորումը վերջինիս անհատական անձնային և սուբյեկտային զարգացման ճանապարհին: Դա օրինաչափորեն ուսումնասիրողներին բերում է հասկանալու խնդիրին. չէ՞ որ հասկանալը իր մեջ պարունակում է հասկացող սուբյեկտի

հոգեբանական զարգացման ներուժը, նրա ինքնիրացումները, կայունացումը, աշխարհում ինքն իր հաստատումը (Վ.Վ. Ջնակով): Հասկանալու հնարավորությունը դիտվում է որպես մարդու կարևորագույն բնութագիր, ինչպես նաև հասկանալու ցանկությունը և հասկացվելը հոգևոր պահանջմունքների կառուցվածքում ամենաուժեղներից են:

Հոգին (և՛ սեփական, և՛ ուրիշի), Մ. Մ. Բախտինի խոսքերով, չի կարող տրված լինել որպես առարկա, այլ միայն սեփական անձի և կամ ուրիշի համար տեքստերում իրացման, հնչյունային արտահայտության մեջ, ուստի հոգեբանամանկավարժական գրականության մեջ առավել հաճախակի քննարկվող «հասկացող մարդու» ձևավորման հարցերը շատ անգամ կապվում են տեքստը հասկանալու կարողության մշակման հետ:

Ակնհայտ է, որ տեքստը հասկանալու կարողության ձևավորմանը անհրաժեշտ է հատուկ ուշադրության արժանացնել դպրոցական ուսուցման սկզբնական փուլում, չէ՞ որ գրքի հետ շփումը կարելի է համարել կրտսեր դպրոցականի անհատականության հանրայնացման կարևոր աղբյուրներից մեկը: Գեղարվեստական գրականության ընթերցանության մեջ պահանջմունքի բացակայությունը աղքատացնում է երեխայի հոգևոր աշխարհը, զրկում է նրան շատ «հոգու ուրախություններից»՝ խթանելով սերնդեսերունդ հաղորդվող բարոյական փորձի ուղին՝ խոչընդոտելով վեհ զգացմունքների ձևավորմանը: Այստեղից էլ հետագայում շատ դեռահասների մոտ ձևավորվում են բարոյական «գիտակցության մթագնում» և խնդիրները հաղթահարելու կարողության անկում՝ սեփական անձի ներսում եղած:

Կրտսեր դպրոցական տարիքում տեղի է ունենում երեխայի՝ որպես ուսումնական գործունեության սուբյեկտի կազմավորումը, որի հիմքում ընկած են ինքնուրույն սովորելու ընդունակությունն ու պատրաստվածությունը:

Կրտսեր դպրոցականի մոտ մտավոր պաշարում տեքստը հասկանալու եղանակների բացակայությունը հանգեցնում է ուսումնական գործունեության տիրապետման մեջ մի շարք դժվարությունների, տրամաբանական մտածողության և երևակայության զարգացման խնդիրներին, գործողությունների ներքին պլանի չձևավորմանը, և, առհասարակ, ճանաչողական գործունեության նկատմամբ հետաքրքրության կորստին:

Տարրական դպրոցում սկսելով Կ. Գ. Ուշինսկիից, ով խոսում էր գիտակցական ընթերցանության կարևորության մասին, աշխատանք է տարվում տեքստը հասկանալու ուղղությամբ, բայց և այնպես, չնայած ուսուցման մեթոդիկայի կողմից կուտակված երկարամյա փորձին՝ ակնհայտ է դառնում, որ տեքստը հասկանալու կարողության ձևավորման նկատմամբ ավանդական մոտեցումը չի բարարարում ժամանակակից պահանջմունքները: Մանկավարժներին և հոգեբաններին առավել շատ անհանգստացնում է այն փաստը, որ ժամանակակից երեխաները քիչ և մակերեսային են կարդում, դժվարությունների են հանգում կարդացածը հասկանալու և հիշելու հետ կապված: Միևնույն ժամանակ հետևությունները ցույց են տալիս, որ ուսուցիչների մեծամասնությունը աշակերտների ուսուցումը տեքստը հասկանալու եղանակներով չի դիտում որպես առանձնահատուկ հոգեբանաուսուցողական խնդիր: Դրա հետ կապված երկրորդ սերնդի ամբողջական կրթության հանրապետական պետական չափանիշի մեջ նշվում է. «ժամանակակից դպրոցի նշանաբանը դառնում է «սովորեցնել երեխային կարդալ» պահանջը՝ կարդալ նպատակադրված, հասկանալով, ստեղծագործաբար», իսկ կարդացածը հասկանալու եղանակներին տիրապետելը դիտվում է որպես ընթերցողական հեղինակավորության (կոմպետենտություն) կարևորագույն բաղադրամաս՝ տարրական դասարաններում ձևավոր-

ված: Դա նշանակում է, որ ուսուցման սկզբնական փուլում տեքստը հասկանալու արդիական և իմաստալից խնդիրը իր որոշման համար պահանջում է ժամանակակից գիտական մոտեցումներ, որոնք ունեն անմիջական ելք դեպի կրթական պրակտիկա: Այդ թվում կարող է օգտագործված լինել հոգեբանաուսուցողական մոտեցում, ինչպես որ հասկանալու խնդիրը կոմպլեքսային է, և նրա արդյունավետ որոշումը հնարավոր է այն «շրջանում, որը նպատակաւետ է անվանել հոգեբանաուսուցողական՝ միջկարգապահական խնդիրներ մշակող» (Դավիդով Վ. Վ.):

Հոգեբանական գիտությունը զբաղեցնում է կարևոր բարձունքներ տեքստը հասկանալու հետազոտման շրջանում, չնայած որ գոյություն ունի տարածություն (այսպես ասած «մկրատների» խնդիրը) մասսայական մանկավարժական պրակտիկայում հասկանալու բազում գիտական հետազոտությունների և ստացված նոր գիտելիքների ներդրման միջև:

Ներկա ժամանակում տեքստը հասկանալու կարողության ձևավորման խնդիրը որոշվում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կրթության առկա համակարգերի շրջանակներում: Հեղինակները (Գ.Ն. Կուրդիսա, Զ.Ն. Նովյանսկայա, Վ.Ա. Լեվին, Է.Է. Կաց, Օ.Վ. Կուբատովա, Վ.Ա. Լազարեվա, ՄԻ. Օմորոկովա, Զ.Ի. Ռոմանովսկայա, Ն.Ն. Մվետլովսկայա, Լ.Ի. Մաքասկինա, Լ.Ե. Մորելցովա, Տ.Մ. Տրոիցկայա և այլք) տեքստը հասկանալը համարում են կարևորագույն խնդիր, չնայած որ իրենց հայացքներում նրանք վերանայում են տվյալ խնդիրը ուրիշների կողքին, որոնք լուծում է ստեղծագործական գրականության ուսուցումը: Միևնույն ժամանակ տեքստը կարդալու կարողության ձևավորման կարևորությունը թելադրում է խնդրի առանձնացման անհրաժեշտությունը՝ որպես ինքնուրույնի: Բացի դրանից՝ նշված հայացքներում

որպես կանոն ներկայացված են աշխատանքի հոգեբանական (Գ.Ն. Կուդրինսա, Զ.Ն. Նովյանսկայա, Վ.Ա. Լեվին) և մեթոդական (Լ.Ա. Եֆրոսինինա, Է.Է. Կաց, Օ.Վ. Կուբատովա, Վ.Ա. Լազարեվա, Ե.Ի. Մատվեեվա, ՄԻ. Օմրոկովա, Զ.Ի. Ռոմանովսկայա, Տ.Ս. Տրոիցկայա և այլք) տեսանկյունները տեքստը հասկանալու ուղղությամբ՝ չհենվելով ինքնին բուն հասկանալու գործընթացի հոգեբանական վերլուծության վրա:

Նշված իրադրությունում հոգեբանաուսուցողական մոտեցման կիրառումը կարող է հանգեցնել հոգեբանական, ուսուցողական, մեթոդական և առարկայական գիտելիքների ամբողջացմանը (ինտեգրացմանը)՝ ուղղված նոր որակական արտադրանքի ստեղծմանը՝ նոր կրթական տեխնոլոգիայի և դրա հիմքի վրա մշակված նոր տեսակի դասագրքի՝ թույլ տալով նպատակաուղղված և արդյունավետ որոշելու տեքստը հասկանալու կարողության ձևավորման խնդիրը կրտսեր դպրոցականների մոտ:

Հասկանալու խնդիրը միջկարգապահական բնույթ ունի: Նրա հետազոտություններով զբաղվում են փիլիսոփայությունը, հոգեբանությունը, լեզվաբանությունը, գրականագիտությունը, դասավանդման մեթոդիկան: Վերջին ժամանակներում գիտությանը հետևելու արդյունքում հասկանալու խնդրի շուրջ ցայտք չի եղել: Շատ անգամ այն սահմանվում է աշխարհը վերափոխող գլոբալ գործընթացներով և այս աշխարհի գոյության հետ մարդու պատասխանատվության աճով, որովհետև յուրաքանչյուր չհասկացված բան ազդեցիկ է ծնում: Հասկանալը՝ որպես գիտական հիմնախնդիր, քննվել է դասական մեկնաբանների (Ֆ.Շլեյերմախեր, Վ. Դիլտեյ) և նրանց հաջորդների (Մ. Խայդեգեր, Է. Բետտի, Գ.Գ. Գադամեր, Պ. Բիկյոր, Է. Կորեա, Ա.Ի. Ուայտխեդ և այլք) կողմից:

Հասկանալու էության տեսական ներկայացումների փիլիսոփայական հիմքը

արտացոլված է նաև Մ.Մ. Բախտինի, Վ.Ս. Բիբլերի, ՄԿ. Մամարդաշվիլիի, Վ.Վ. Նալիմովայի, Վ.Պ. Ռուդնեվայի և ուրիշների աշխատություններում:

Հասկանալու հիմնախնդրի հոգեբանական հիմքերը արտացոլված են Վ.Ա Արտյոմովայի, ԴԺ. Բրուներայի, Ա.Ա. Բրուդնովոյի, Լ.Մ. Վեկկերայի, Լ.Ս. Վիգոտսկիի, Լ.Լ. Գուրովոյի, Վ.Վ. Զնակովայի, Ի.Ա. Զիմնեի, Ն.Ի. Ժինկինայի, Զ.Ի. Կփչնիկովայի, Գ.Ս. Կոստյուկի, Ա.Ռ. Լուրիի, Ա.Ա. Սմիրնովայի, Ա.Ն. Սոկոլովայի, Բ.Մ. Տեպլովայի և ուրիշների աշխատություններում:

Տեքստը հասկանալու գործընթացի ուսումնասիրման մեջ նշանակալի ներդրում են արել հոգելեզվաբանությունը (Գ.Ի. Գոբին, Ա.Ա. Զալեվսկայա, Ա.Ա. Լեոնտև, Ն.Վ. Ռաֆիկովա և ուրիշներ), մատենագրական հոգեբանությունը (Ն.Ա. Ռուբակին, Օ.Լ. Կաբաչեկ, Ի.Ի. Տիխոմիրովա և ուրիշներ), դիդակտիկական և մեթոդիկական (Ե.Ս. Անտոնովա, Բ.Ս. Մուչնիկ, Գ.Յա. Սոզլանիկ և ուրիշներ): Մանկավարժական հոգեբանության մեջ տվյալ հիմնախնդիրը քննվել է Լ.Պ Դոբլանեվի, Զ.Ի. Կալմիկովայի, Ե.Ա. Կորսունսկիի, Մ. Կոլյունի, Ի.Գ. Ռուբոյի, Ի.Վ. Ոսաչեվայի, Բ.Ի. Խոդոսի և ուրիշների, ինչպես նաև կոնկրետ ուսուցման սկզբնական փուլում՝ Ա.Վ. Բեխտերևի, Ե.Լ. Գոնչարովայի, Գ.Ն. Կուդինայի, Զ.Ն. Նովյանսկայայի, Վ.Ա. Լեվինայի, Ն.Պ. Լոկալովայի, Ս.Ա. Տաբատովայի և ուրիշների կողմից: Տեքստը հասկանալու կարողության ձևավորումը հոգեբանաուսուցողական տեսանկյունից ներկայացված է Գ.Գ. Գրանիկի, Ս.Մ. Բոնդարենկոյի, Ն.Ա. Բորիսենկոյի, Լ.Ա. Կոնցեվայի, Ա.Ն. Սամոնովայի, Ս.Ա. Շապովալի և ուրիշների աշխատություններում:

Ընդհանրացնելով գեղարվեստական կրթության համակարգերում արտացոլված կրտսեր դպրոցականների կողմից տեքստը հասկանալու կարողության հիմնախնդրի գործնական լուծման գաղափարները՝ հնարավոր է դառնում

առանձնացնել երկու հիմնադրույթային մոտեցումներ:

Առաջինը տեքստի *բնութագրական նպատակային ընկալումն* է, որը ապահովում է տեքստի զգացմունքային ազդեցությունը: Տեքստի վերլուծությունը սկսվում է տեքստի զգացմունքային վերլուծությունից: Տեքստի վերլուծությունը սկսվում է նրա վերընթերցումից: Տվյալ դեպքում օգտագործվում են այդ վերլուծության սահմանված ձևեր՝ կարգավով տեղեկանալու տարբեր միջոցներ, հարցերի համակարգ, տեքստերի համեմատություն, ժանրի յուրահատկությունների վերլուծություն և այլն: Հեղինակներից ոմանք մեծ ուշադրություն են դարձնում երեխաների ստեղծագործական գործունեության վրա՝ գտնելով, որ ստեղծագործությունը հասկանալու ճանապարհներից մեկը սեփական տեքստը ստեղծելն է: Դասի ժամանակ գործունեությունը բաշխվում է ուսուցչի, աշակերտի և ուրիշ աշակերտների միջև: Այս դեպքում առաջնորդի դերը տվյալ փոխհարաբերության մեջ տրվում է ուսուցչին: Դրանից ելնելով՝ տվյալ մոտեցման իրականացումը շատ դեպքերում կախված է ուսուցչի վարպետությունից, որը հենց իր՝ մանկավարժի՝ տեքստը վերլուծելու կարողությունն է, և հետո միայն դասի ընթացքում կոլեկտիվ-բաշխողական գործունեության կազմակերպումը:

Երկրորդ մոտեցումը հիմնվում է այն բանի վրա, որ տեքստը հասկանալն ուսուցանելու դեպքում անհրաժեշտ է արդեն տեքստը ըմբռնելու առաջին իսկ քայլին *գերակրիվացնել երեխայի աշխատանքը*: Այս դրությունը հիմնվում է արդեն կազմավորված ընթերցողների գործողությունների վերլուծության վրա, ինչը և վկայում է նրանց ներքին ակտիվության մասին՝ առաջնային ընթերցանության գործընթացում սահմանված ձևերի օգտագործման դեպքում: Սկսնակ ընթերցողի մոտ նշված ձևերի բացակայությունը հաճախ հանգում է նրան, որ առաջնային ըմբռնումը ավարտվում է

նվազ հասկանալով կամ նրա բացակայությամբ: Տեքստի առաջնային ըմբռնումն ակտիվացնելու համար առաջարկվում է ուսումնական գործունեությունը սահմանել ոչ միայն ուսուցչի և աշակերտների, այլև ուսուցչի, աշակերտների և հատուկ ստեղծված աշակերտի (ուսումնական գրքի) միջև: Այս մոտեցման տեսանկյունից և՛ դասին կոլեկտիվ-տարածական գործունեությունը, և՛ ընթերցանության հետ կապված ինքնուրույն աշխատանքը աշակերտի մոտ ուղղորդում և կազմակերպում է հենց դասագիրքը: Դա թուլացնում է ուսուցչի մանկավարժական վարպետությունից բխող գործընթացի կախվածությունը: Միևնույն ժամանակ ուսուցչի ղեկավար դերը չի նվազում, այլ փոխվում է նրա գործունեության բովանդակությունը: Դասին աշխատանքը պլանավորելու ժամանակ մանկավարժի մոտ հնարավորություն է ստեղծվում նկատի առնելու տվյալ դասարանի և առանձին աշակերտների յուրահատկությունները և օգտագործելու սեփական ստեղծագործական ներուժը [10, էջ 3-6]:

Ուսումնասիրելով մեզ առաջադրված խնդիրը՝ կարող ենք անել մի շարք եզրակացություններ՝

v Ուսուցչի կողմից աշակերտներին իր ունեցած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների փոխանցման կամ հաղորդման պրոցեսը հենց ուսուցումն է:

v Ուսումնական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ կարողությունների հիմքերը դրվում են հենց կրտսեր դպրոցում:

v Տարրական դասարաններում ուսուցանելու և դաստիարակելու համար շատ կարևոր նախապայման է ուսուցչի հեղինակությունը: Նրանից ճիշտ օգտվելու դեպքում միայն փորձառու ուսուցիչը իր աշակերտների մոտ շատ հաջող կձևավորի կազմակերպվածություն, աշխատասիրություն, դրական վերաբերմունք ուսումնական պարապմունքների նկատմամբ, սեփական վարքը և ուշադ-

րությունը ղեկավարելու կարողություն:

v Կրտսեր դպրոցականի հոգեբանությունը չհասկանալով՝ չի կարելի նրանց մեծացնել՝ տարիքային անհամապատասխան՝ ավելի բարձր որակի հատկանիշներ վերագրելով նրանց. չի կարելի գերծանրաբեռնել նրա միտքը: Չի ընդունվում նաև այն պատկերացումը, որ մեծացող, հոգեպես զարգացող երեխան ծնողների և ուսուցիչների աչքում «միշտ փոքր» է երևում, որովհետև կրտսեր դպրոցականների հոգեկան զարգացման պրոցեսը հաճախ ավելի արագ է կատարվում, քան ծնողների և ուսուցիչների կողմից այդ քանակական և որակական

փոփոխությունների ըմբռնումը:

v Տեքստը հասկանալու բարդ գործընթացում որպես առաջնային քայլ պետք է ընդունել տեքստի բնութագրական նպատակային ընկալումը: Տվյալ դեպքում կարևորվում են կարդալով տեղեկանալու տարբեր միջոցները, հարցերի համակարգը, տեքստերի համեմատությունը, ժանրի յուրահատկությունների վերլուծությունը և այլն: Որպես երկրորդ քայլի՝ տեքստը հասկանալու համար ուսուցանելու դեպքում արդեն տեքստը ըմբռնելու առաջին իսկ քայլը դիտվում է երեխայի աշխատանքի գերակտիվացումը:

Պ Բ Ա Ն Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ա. Վ. Պետրովսկի, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1977:
2. Гамезо М.В., Матюхина М.В, Михальчик Т.С. Возрастная и педагогическая психология, Москва, 1984.
3. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999, կետ 18:
4. Զ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2009:
5. Эльконин Д.Б. Психология обучения младшего школьника., М., 1974 (<Педагогика у психология, N 10).
6. Петровский А.В. Возрастная и педагогическая психология/2-е изд., М., 1979.
7. Крутецкий В.А. Основы педагогической психологии, Москва, 1972.
8. Ն. Զորայան, Վարժություն ընթերցանության, Էջ ԵԳ, Կ. Պոլիս, 1851:
9. Հ. Մ. Թութունջյան, Կրտսեր դպրոցականի հոգեբանական հիմնական առանձնահատկությունները, Երևան, 1962:
10. Соболева О. В. Психодидактическая концепция понимания текста школьниками на начальном этапе обучения, Куцск, 2010

ПРОБЛЕМА ПОНИМАНИЯ ТЕКСТА МЛАДШИМИ ШКОЛЬНИКАМИ В ПСИХОЛОГИИ

ОФЕЛЯ АВАГЯН

Специалист армянского азыка и литературы школы и учебного центра „Глобал Бридж“, НАН РА, Международный научно-образовательный центр, кафедры психологии, магистр

В работе представлена проблема осмысления текста младшими школьниками. Вначале объясняется, что из себя представляет обучение, затем делается переход к структуре обучения и к познавательной деятельности младших школьников, представляется структура учебного процесса, психические индивидуальные способности младших школьников и, в конечном итоге, усвоение текста младшими школьниками с точки зрения психологии.

THE ISSUE OF TEXT COMPREHENSION BY JUNIOR PUPILS IN PSYCHOLOGY

OFELYA AVAGYAN

*Teacher of the Armenian Language and Literature,
“Global Bridge” school and educational centre MA in Psychology,
RA National Science Academy International Scientific– Educational Centre*

This paper presents the issue of text comprehension by junior pupils in Psychology.

First it explains ‘what teaching is’, then a transition is made to teaching structure

Then we move on to the sphere of studying junior pupils; the structure of their educational activity, the main psychological peculiarities of their personalities, and, finally, the issue of text comprehension by junior pupils in Psychology are introduced.

**ԿԵՆՍԱԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ
ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԲՆԱԳԱՎԱՌ**

Հողվածում ընդհանուր անդրադարձ է կատարվել կենսաբարոյագիտության կայացման հիմնախնդիրներին:

Հանգուցային բաներ և արտահայտություններ. միջառարկայական գիտելիք, միջառարկայական հետազոտությունների բնագավառ, առողջության մարդաբանություն, կենսաբարոյագիտությունը՝ որպես գիտական գիտելիքի նոր ձև:

Ժամանակակից հետդասական գիտական գիտելիքը ձևավորվում և զարգանում է միջառարկայական, ինտեգրատիվ հետազոտությունների ընդհանուր տարածքում: Ի հայտ են եկել բազմաթիվ «համակարգային», «ինտեգրատիվ», «միջառարկայական» նոր գիտություններ: Դրանցից մեկը կենսաբարոյագիտությունն է, որը ձևավորվել է 20-րդ դարի երկրորդ կեսին՝ բջջային կենսաբանության, գենետիկայի նոր ճյուղի՝ գենոմիկայի և պրոտոմիայի, ինչպես նաև իմունաբանության, փոխպատվաստաբանության, անեսթեզիոլոգիայի, ռեանիմատոլոգիայի, գենային դեղաբանության, բժշկական նոր տեխնոլոգիայի ոլորտներում տարվող հետազոտությունների արդյունքների փիլիսոփայական-բարոյագիտական իմաստավորման հիմքերի վրա: Ահա թե ինչու փիլիսոփայական հետաքրքրությունների ծանրության կենտրոնը փոխադրվել է իմացաբանությունից և գիտական հետազոտության տրամաբանությունից դեպի մարդու, նրա կյանքի և առողջության պահպանման, գիտության և բժշկության հումանիստական զար-

գացման հիմնախնդիրները: ¹

«Կենսաբարոյագիտություն» եզրույթը շրջանառության մեջ է դրել ամերիկացի ուռուցքաբան Վան Ռենսելեր Պոտտերը՝ իր «Կենսաբարոյագիտություն՝ կամուրջ դեպի ապագան» Bioethics Bridge to the Future 1969թ. գրքով: Պոտտերի կարծիքով՝ կենսաբարոյագիտությունը կոչված է կենսաբանական գիտելիքը միավորելու համամարդկային արժեքների բազմադարյան փորձի հետ: Այստեղից պարզ է, որ կենսաբարոյագիտության որպես միջառարկայական գիտելիքների նոր բնագավառի կազմավորումը կապված է համամարդկային արժեքների քննադատական, փիլիսոփայական վերախմբավորման հետ: Այդ արժեքները դիտարկվում են որպես հումանիզմի տարբեր փիլիսոփայական հարացույցների բարոյաէթիկական սկզբունքներ: Կենսաբարոյագիտությունը Պոտտերն անվանել է «գոյատևման գիտություն» («Bioethics the Science of Survival»): Ի դեպ, հենց այդպես է կոչվում գրքի առաջին գլխի վերնագիրը:

Ամերիկացի հետազոտող Անդրե Հելլեգերսը կենսաբարոյագիտությունը փոխկապակցել է բժշկական բարոյագիտական հիմնախնդիրների, մասնավորապես հիվանդի իրավունքների և արժանապատվության պաշտպանության հիմնահարցերի հետ: Նա կարողացել է կենսաբարոյագիտությունը բերել կառուցվածքային տեսքի՝ ըստ ակադեմիական գիտության չափանիշների: Հելլեգերսյան մեկնաբանությունը լայնորեն

1 Апресян Р.Г. Материалы “Круглого стола”: Мы и биоэтика. – Человек, 1990, N6, с.98–100.

տարածված է Միացյալ Նահանգների համալսարանական միջավայրում: Կենսաբարոյագիտության ամերիկյան դոկտրինան ձևակերպվել է Տ.Լ.Բոշամի և Ջ.Ֆ.Չայդրեսի՝ «Կենսաբժշկության բարոյագիտություն» գրքում (ԱՄՆ, 1994):

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում իտալացի գիտնականներ Է.Սգրեչչայի և Վ.Տամբոնեի հետազոտությունները: Նրանք, ի դեպ, կենսաբարոյագիտության գծով առաջին հիմնարար աշխատության հեղինակներն են (թարգմանվել է ռուսերեն լեզվով, «Биоэтика», 2001):² Գրքում զարգացված գաղափարներն ու եզրակացությունները հիմք են ծառայել կենսաբարոյագիտության, փիլիսոփայության, կենսաբանության, սոցիոլոգիայի և իրավագիտության կապերի հետազատման, դրանց վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի մշակման համար:

Վերջիններիս թվում են առաջին հերթին հիշատակության արժանի է առաջին հերթին Հելսինկիի հռչակագիրը (1964): Նրա մեջ հստակ ձևակերպված է մարդու վրա գիտական հետազոտությունների բարոյագիտական չափորոշիչը: Այնուհետև՝ Մարդու գենոմի և մարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագիրը (ՅՈՒՆԵՍԿՕ, 1997), Կենսաբարոյագիտության և մարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագիրը (ՅՈՒՆԵՍԿՕ, 2005), Մարդու կլոնավորման մասին հռչակագիրը (ՄԱԿ, 2005), Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին համաձայնագիրը (Եվրոպայի Խորհուրդ, 1997) և նրան կից լրացուցիչ արձանագրությունները, որոնք վերաբերում են մարդու կլոնավորման արգելքի, փոխպատվաստաբանության ոլորտում տարվող

կենսաբժշկական հետազոտությունների իրավական հիմքերի ապահովման հարցերին:

Կենսաբարոյագիտության որպես միջառարկայական գիտելիքների նոր բնագավառի համար կարևորագույն իրավական փաստաթուղթը, այսպես կոչված, Էրիչեի փաստաթուղթն է: Այն ընդունվել է 1994թ. փետրվարին միջազգային համաժողովում, որտեղ հստակ ձևակերպվել է կենսաբարոյագիտության նպատակը և նրա կառուցվածքը:

Կենսաբարոյագիտության բնագավառում առաջատար կազմակերպությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ն (United Nations Educational, Scientific and Cultural Organization) է: Նրա շրջանակներում մշակվել է կենսաբարոյագիտության զարգացման հատուկ ռազմավարական ծրագիր, որի շրջանակներում պարբերաբար կազմակերպվում և անցկացվում են միջազգային սեմինարներ և կոնֆերանսներ, մշակվում իրավական նոր գործիքներ և չափորոշիչներ: 1993թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից ստեղծվել է Կենսաբարոյագիտության գծով միջազգային կոմիտե, որի կազմի մեջ մտնում են 36 անկախ փորձագետներ: Նրանք հետևում են, որպեսզի մարդու վրա գիտական հետազոտություններ անցկացնելիս պահպանվեն յուրաքանչյուր անհատի արժանապատվության նկատմամբ հարգանքի սկզբունքը և նրա իրավունքները: Կոմիտեն չի առաջարկում պատրաստի որոշումներ և հրահանգներ՝ կենսաբարոյագիտական հիմնախնդիրներն ինքնուրույնաբար մշակելու իրավունքը վերապահվել է կոնկրետ երկրի օրենսդիր մարմիններին: Կոմիտեն յուրօրինակ համաշխարհային բանավիճային հրապարակ է, որտեղ բարձրացվում և քննարկվում են նաև կենսաբարոյագիտական փիլիսոփայական հիմնախնդիրները: Դեռևս հանձարեղ Ի.Կանտն է նկատել, որ փիլիսոփայությունը մարդկանց հարկավոր է այն բանի համար, որպեսզի պատասխանի «ինչպե՞ս ապրել», այսինքն՝ «ապ-

1 Биоэтический словарь (сост.В.И.Киселев, 2-ое изд., исп. и доп.). – Екатеринбург: УГМА, 2006, с.123-124.

2 Сгречча Э., Тамбоне В. Пер.с ит. – М., 2001.

րել երկար՝ չհիվանդանալով» հարցին: Միննույն ժամանակ «ինչպե՞ս ապրել» կանտյան հարցը այսօր փոխակերպվել է «ինչպե՞ս պաշտպանել կյանքը» հարցի: ¹ Ահա թե որն է կանտյան հարցադրումների արդիականությունը: Դրանք կարող են մեթոդաբանական հիմք ծառայել գիտության էթիկայի և կենսաբարոյագիտության սերտացող կապերի խոր վերլուծության համար:

Գիտության էթիկայի համեմատությամբ կենսաբարոյագիտությունը ուշադրությունը կենտրոնացնում է գիտության և պրակտիկ գործունեության այն կողմերի վրա, որոնք հավակնում են կառավարել կյանքի բոլոր գործընթացները: Ըստ էության, կենսաբարոյագիտությունը՝ բնագիտության և բժշկական տեխնոլոգիաների զարգացման նոր փուլում վերաժմեականացնում է մարդու կյանքի և առողջության պահպանման փիլիսոփայական խնդրաշարը: Այսօր որակապես փոխվում է բժշկական տեխնոլոգիաների հնարավորությունների ոլորտը, այն ձեռք է բերում «կյանք տալու», «կյանքը կառավարելու», «մահը վերահսկելու», այսինքն՝ մարդկային կյանքի ծնունդի, ընթացքի և ավարտի գործընթացների վրա ձեռնածուական ակտիվ ներգործություններ իրականացնելու հնարավորություններ:

Ներառնելով իր մեջ կեցության բոլոր՝ մոլեկուլայինից մինչև հասկացական և գնահատիչ մակարդակները ժամանակակից մարդը ներկայացնում է միաձույլ և անբաժան մի ամբողջականություն: ² Կարո՞ղ ենք պնդել, թե ժամանակակից գիտությունը բավականաչափ գիտելիքներ են կուտակել մարդու ամբողջական հայեցակարգի ձևակերպման համար: Եթե «այո», ապա դրա համար կպահանջվեն ինտեգրատիվ, բոլոր գիտու-

թյուններից քաղված գիտելիքներ, որոնք այսպես թե այնպես առնչվում են մարդու ուսումնասիրության խնդրաշարին: Կենսաբարոյագիտության միջառարկայականությունը, ինտեգրատիվությունը բնավ չի նշանակում տարաբնույթ գիտելիքներից ստեղծված ինչ-որ կարծեցյալ ընդհանրություն: ³ Խոսքն ավելի շուտ բնագիտական և հումանիտար գիտությունների միջև փոխգործակցության ձևուն կապերի և նոր մեխանիզմների ստեղծման մասին է: ⁴

Հայտնի ռուս փիլիսոփա Բ.Գ.Յուդինը կենսաբարոյագիտությունը դիտում է որպես կենսաբժշկական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացմամբ հարուցված բարոյական, սոցիալական և իրավական հիմնախնդիրների միջառարկայական հետազոտությունների բնագավառ: ⁵

Անմտություն կլիներ բարոյական խրատաբանությամբ ներխուժել գիտական և նորագույն բժշկական տեխնոլոգիաների հետազոտությունների ոլորտ՝ անտեսելով տարբեր բնագավառներում կուտակված բնագիտական ու հումանիտար գիտելիքների առանձնահատկությունները: Բնագիտության մեջ բարոյական արժեքները ոչ միայն ունեն որոշակի էթիկական բովանդակություն, այլև կատարում են իրավիճակային հանգամանքներից բխող կոնկրետ, գործիքային գործառնություններ: Բնագիտական հայտնագործություններով հարուցված վտանգներից մարդու կյանքի և առողջության պաշտպանու-

3 Токарева С.Б. Методологические проблемы биоэтики как междисциплинарной области исследования. – Тезисы докладов и выступлений IV Российского философского конгресса. Т.2, М.: “Современные тетради”, 2005, с.688.

4 Фролов И.Т. Жизнь и познание. О диалектике в современной биологии. – М.: Книжный дом “Либроком”, 2009, с.24–25.

5 Юдин Б.Г. Человек в научном познании: методология и ценности (Человек в единстве социальных и биологических качеств). – М.: ЛИБРОКОМ, 2012, с.204.

1 Кант И. О способности духа силою только воли побеждать болезненные ощущения. – Трактаты и письма. – М.: Наука, 1980, с.298–317.

2 Марков В. Философская антропология. – СПб. Питер, 2008, с.11–12.

թյան խնդիրը բնավ չպետք է հանգեցնել գիտատեխնիկական առաջադիմության հախուռն թերագնահատմանը: Գիտատեխնոլոգիական առաջընթացի դրական և բացասական հետևանքների համարժեք սոցիալ-բարոյական գնահատականն անպայման պետք է հիմնվի բնագիտական գիտելիքների վրա, սակայն մեզ անհրաժեշտ է նաև յուրօրինակ փիլիսոփայական «ալրամաղ», որը գիտատեխնիկական առաջընթացի դրական և բացասական հետևանքների վերաբերյալ կշռադատված բարոյական դատողություններն ու հետևությունները կգատի ցանկացած բարոյախրատական պատրանքներից և չհիմնավորված մեղադրանքներից:

Թեև բժշկությունը միանշակաճանաչում է չի կարելի մտցնել բնագիտական գիտակարգերի մեջ, այնուամենայնիվ այն միշտ եղել ու մնում է այն ոլորտը, որտեղ մարդու առողջացման գործընթացը որոշվում է որպես բուժման մեթոդներից և միջոցներից ակնկալվող օգուտի և հնարավոր վնասի միջև ինչ-որ «ուկե միջին» ուղու ընտրության արդյունք: Ապաքինման-առողջացման այդ յուրօրինակ չափի, հավասարակշռված մոտեցման որոնումը ընդհանուր է և՛ բժշկության, և՛ կենսաբարոյագիտության համար: Կենսաբարոյագիտության համար առանձնապես կարևորվում են բժշկական բարոյագիտության էմպիրիկ տվյալները:¹

Ինչ վերաբերում է իրավագիտությանը, ապա այն կոչված է ապահովելու մարդու կյանքի, առողջության, մարդկային արժանապատվության և ազատ ընտրության իրավունքի իրավաբանական հիմնավորումը: Իրավագիտության ոլորտից կենսաբարոյագիտությունը քաղում է գիտելիքներ հասարակական կյանքի այն տարածքի սահմանների մա-

սին, որտեղ այս կամ այն բարոյական դիրքավորումները ամրապնդվում են օրենքի հեղինակությամբ: Մեր կարծիքով, եթե բարոյագիտությունը վկայակոչում է անհատական խղճին և հասարակական կարծիքին, ապա օրենքը՝ «հայցի ուժին», որն ապահովվում է պետության, նրա ինստիտուտների կողմից:²

Ինչպես երբեք, այսօր Հայաստանում հրատապ է կենսաբարոյագիտության սկզբունքների ամրագրումը ընթացիկ օրենսդրության մեջ և իրավակիրառական պրակտիկայում: Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր իրավաբանական անգրագիտությունը, այդ թվում՝ կյանքի և առողջության պահպանման հարցերում, խիստ այժմեական է դարձնում կենսաբարոյագիտության հիմնախնդիրների իրավական կարգավորմանը նվիրված համալիր հետազոտությունները:³ Շարքային հայերի սոցիալական ինքնազգացողության վրա այսօր մեծապես ազդում է առողջապահության ոլորտում ստեղծված տագնապալի իրավիճակի վրա ինչ-որ ձևով ներգործելու անհնարինության զգացումը, որը ներսից քայքայում է մարդկանց հոգեկան և ֆիզիկական առողջությունը: Խոսքը կենսաապահովման ոլորտի կառուցվածքի խոր անարդարության մասին է, որը տարեցտարի վերարտադրվում է: Հետևաբար, կյանքի և առողջության պահպանման մեթոդա պահանջը՝ դա հայ հասարակության «սոցիալական խղճի տրոփումն» է: Մինևույն ժամանակ, մարդկանց կյանքի և առողջության պահպանման խնդիրների լուծման համար հայրենական սոցիոլոգիան և սպետք է գիտակցի իր տեղը կառավարման համակարգում:

Ոչ դասական սոցիոլոգիայի այնպիսի ուղղությունն, ինչպիսին է վիտալիս-

1 Гребенщиков Е.Г. Биоэтика – вариант “постэтики”. – Философские науки, 2009, N1, с.90-96.

2 Лыкин С.С. Философско-правовые аспекты становления биоэтики. – Политика. Власть. Право. – СПб., 2000, Вып. 4(2), с.63-71.

3 Седова Н.Н. Правовые основы биоэтики. – М.: Триумф, 2004, с.222-223.

տական սոցիոլոգիան (սոցիոլոգիական վիտալիզմը), կենսաբարոյագիտության հետ ունի բազմաթիվ ընդհանուր հիմնախնդիրներ և հարցեր: Այդ երկու գիտությունների շահերը տրամախաչվում են «կենսորակ», «սոցիալական անվտանգություն», «սոցիալական ռիսկեր», «մարդու կենսական ուժեր», «սոցիալական անումիա» և այլ հասկացությունների մեջ: Մարդկանց առողջությունը և հիվանդությունը պետք է դառնան սոցիոլոգիական հետազոտությունների առարկա: Սոցիոլոգիական գիտելիքների լայն օգտագործումը ոչ միայն կարող է հարստացնել կենսաբարոյագիտության հասկացական ապարատը, այլև էապես ընդլայնել կենսաբարոյագիտական հետազոտությունների սոցիալական ենթատեքստը: ¹

Կենսաբարոյագիտական հիմնախնդիրների հետագա մշակումները նշանակալի չափով կապված է սոցիալական էկոլոգիայի հետ: Սոցիալական էկոլոգիան, ինչպես և կենսաբարոյագիտությունը, առաջացել է բնագիտական (կենսաբանություն, աշխարհագրություն, ֆիզիկա, աստղագիտություն, քիմիա) և հումանիտար (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, հոգեբանություն, մշակութաբանություն, պատմություն) գիտելիքների հատման կետում: Սոցիալական էկոլոգիան ուսումնասիրում է հասարակության և բնության կապը: Մարդու սոցիալական կեցության բնական միջավայրի պահպանումն անմիջականորեն կապված է մարդու և հասարակության արժեքային ընտրության, այն է՝ բնության նկատմամբ շահագործողական կամ ռեսուրսապահպանողական վերաբերմունքի մշակման հետ: Բարենպաստ էկոլոգիական իրադրությունը և էկոլոգիական մշակույթը՝ մարդու կյանքի,

առողջության և բարօրության պահպանման վճռորոշ գործոններից են:

Կենսաբարոյագիտության որպես առանձնահատուկ գիտակարգի կայացման մեջ անգնահատելի է սոցիոմշակութային և փիլիսոփայական մարդաբանության մեջ կուտակված գիտելիքների դերն ու նշանակությունը: Կարևորվում է նաև բժշկական մարդաբանությունը, կամ, որ նույնն է, առողջության մարդաբանության դերը: Այն ծագել է Արևմուտքում՝ 20-րդ դարի 60-80 թվականներին: Նրա երևան գալը կապված է հիվանդության և ապաքինման սոցիոմշակութային գործոնների նկատմամբ հետաքրքրության աննախադեպ աճով: Բժշկական մարդաբանության զարգացումը նշանակալի չափով ազդակել է հիվանդության և բուժման հիմնահարցերի փիլիսոփայական վերլուծության մեթոդաբանական հիմքերի մշակմանը: Առանձնապես դա վերաբերում է բժշկական մարդաբանության քննադատական ուղղությանը, որը պարզել է, թե սոցիալական, տնտեսական և քաղաքական գործոնները ինչպես են ազդում մարդկանց առողջության և առողջապահության համակարգի փոխակերպման բարդ և հակասական գործընթացների վրա, սակայն այս հարցերը ավելի խոր ուսումնասիրության կարիք ունեն, քանի որ դրանք կապված են այս կամ այն ժողովրդի կեցության ազգային, կրոնադավանաբանական, մշակութային, կրթական, սոցիալ-տնտեսական, իրավական առանձնահատկությունների, ամբողջությամբ վերցրած ազգային հոգեկերտվածքի հետ: Այդ նպատակով հարկավոր է Հայաստանում մշակել կենսաբարոյագիտության ազգային մոդելը, որ պետք է ամբողջովին կողմնորոշված լինի դեպի հայ ժողովրդի գոյատևման, նրա կյանքի որակի բարձրացման արժեքները, մատնանշի դրանց իրականացման գործում ազգային պետության բացառիկ դերակատարությունը:

Հայտնի է, որ գեղարվեստական

1 Эрцлиш К. Болезнь и здоровье как объекты социологии. – Журнал социологии и социальной антропологии, 1999, т.2, Спецвыпуск, с.191; Петрова В.И., Седова Н.Н. Проблема качества жизни в биоэтике. – Волгоград, Издатель, 2001, с.15–26.

գրականությունը բովանդակում է իր մեջ վիթխարի մարդասիրական, ազգակերտող ներուժ: Այստեղ կարելի է հայտնաբերել մարդկային կյանքի արժեքանական բացարձականացման հրաշալի գեղարվեստական մարմնավորումներ, որոնք համապատասխանում են այս կամ այն ժողովրդի ներկայացուցիչների պատմականորեն կայունացած բարոյահոգևոր դիրքորոշումներին: Բժշկի բարոյական սխրագործությունը, գիտնականների պատասխանատվությունը՝ իրենց հետազոտությունների արդյունքների համար՝ այս և այլ թեմաները, որոնք ունեն կենսաբարոյագիտական բնույթ, բազմիցս ոգեշնչել են ռուս գրողներին (Ա.Ի. Կուպրին, Մ.Ա. Բուլգակով, Ստրուգացկի եղբայրներ, Բ.Լ. Պաստերնակ և ուրիշներ): Հայ գրողները ևս արժարժել են ազգային կյանքի բժշկական թեմաներ:

Պատմությունը ցույց է տալիս, թե մարդու կյանքի և առողջության նկատմամբ արժեքային վերաբերմունքի ինչպիսի ազգային մոդելներ են եղել պատմության տարբեր շրջափուլերում և թե ինչպես են դրանք փոխվել՝ կապված քաղաքական, մշակութային փոփոխություններից, տնտեսական իրադրությունից և այլնից: Պատմությունը մեզ ներկայացնում է այն բանի պատկերը, թե ինչպիսին է ազգային կյանքում առողջության տեղը մեր հոգևոր արժեքների համակարգում: Կենսաբարոյագիտության համար առանձնապես կարևորվում է բժշկության և բժշկական մտքի պատմությունը, որը մեզ տեղեկություններ է հաղորդում նաև գիտության և բժշկության զարգացման ազգային առանձնահատկությունների մասին:

Կենսաբարոյագիտության՝ որպես գիտական գիտելիքի նոր ձևի կայացման մեջ առանձնահատուկ դերակատարություն են ունեցել նաև փիլիսոփայական և կրոնական գաղափարները: Կրոնաբարոյական տեսանկյունից՝ կյանքը բարձրագույն աստվածային շնորհ և

բարիք է: Անդրադարձը աստվածաբանական գիտելիքին պատճառաբանվում է կյանքի իմաստը և կյանքի մարդկային իրավունքի կրոնական խորքային հիմքերը պարզելու նպատակով: Աստվածաբանական գիտելիքները մեզ օգնում են հասկանալու գիտական և փիլիսոփայական իմացության քրիստոնեական հիմքերը: Կենսաբարոյագիտությունը ոչ միայն շատ բան է փոխառել փիլիսոփայությունից, այլև այն հարստացրել է: Թեև պետք է խոստովանել, որ դասական փիլիսոփայության տեսադաշտից դուրս են մնացել մարդկային կեցության բազմաթիվ ասպեկտները՝ կապված ֆիզիոլոգիական առողջության, մարմնականության, սեռականության, առօրեականության փաստերի և իրադարձությունների հետ:

Կենսաբարոյագիտությունը, ինչոր իմաստով, նաև մարդկային կյանքի և առողջության փիլիսոփայական հիմնախնդիրների ճանաչողությունն է՝ առօրեականության տեսանկյունից: Կյանքի փիլիսոփայությունը՝ նախևառաջ պահանջում է առօրեական կյանքի ճանաչողություն, քանի որ ավելի լավ մենք յուրացնում ենք այն, ինչի հետ անմիջականորեն առնչվել ենք և ինչը վերաբերում է մեզ անձնապես: Իսկ ինչն է մեզ ավելի մոտ ու հարազատ, եթե ոչ մեր ամենօրյա կյանքն ու առողջությունը: ¹ Իսկն ասած, հենց այսպես էլ կազմավորվել է կենսաբարոյագիտական հետազոտության տեսությունը, նրա տրամաբանությունը՝ որպես կյանքի և առողջության ամենօրյա հիմնախնդիրների վերլուծության և լուծման գիտական մեթոդ: Մարդու կյանքն ու առողջությունը բարձրագույն բարոյական արժեքներ են, մարդուն մատչելի բոլոր արժեքներից ամենաիրականը: Հենց կյանքի և առողջության որակի բարձրա-

1 Смирнов И.Н. Философские измерения биоэтики. – “Вопросы философии”, 1987, N12, с.83–97.

ցումն է բնագիտական և հումանիտար գիտելիքների վճռորոշ սոցիալական չափանիշը, մարդկային հասարակության պատմական առաջադիմության և կատարելագործման վճռորոշ չափանիշը: Հետևաբար, կենսաբարոյագիտությունն ունի ոչ միայն գիտական, այլև արժեքանական հնչողություն, որն այսօր թափանցել է նաև ժամանակակից հետազատական գիտության մեջ:

Կենսաբարոյագիտական գիտելիքներն այսօր մեթոդաբանական, արժեքանական և փիլիսոփայական լրացուցիչ մշակման կարիքն ունեն: ՌԻ ԳԱԱ ակադեմիկոս, ճանաչված ռուս փիլիսոփա Վ.Ս.Սոյոպինը նշում է. «Այսօր գիտնականների կողմից իմաստավորվում է ոչ միայն գոյաբանական կանխադրությունների, այլև բուն իմացության իդեալների և նորմերի պատմական փոփոխականությունը: Արժեքների դիտարկման պահանջը ոչ միայն չի հակասում աշխարհի մասին օբյեկտիվ-ճշմարիտ գիտելիքներ ստանալու ավանդական դիրքորոշմանն, այլև հանդիսանում է այդպիսի մոտեցման մարդկային նախադրյալը»:¹

Մարդկային գործունեությունը նպատակաուղղված և գիտակցված գործունեություն է, որն անխուսափելիորեն ձեռք է բերում նաև խոր բարոյաէթիկական, արժեքային բովանդակություն:² Հետևաբար, այսօր բնավ համոզիչ չէ գիտության և նրա փաստարկների բարոյագիտական չեզոքության գաղափարը: Նոր բժշկական տեխնոլոգիաները (արհեստական բեղմնավորումը, կլոնավորումը, օրգանների փոխպատվաստումը և այլն), անշուշտ, կազմում են գիտության ոլորտի մի մասը, եթե խոսքն այստեղ գլխավորապես տեխնիկական ասպեկտների մասին է, սակայն ժամա-

նակակից բժշկական տեխնոլոգիաների կիրառումը՝ արդեն բարոյական ընտրության ոլորտ է, և չպետք է այստեղ սահմանափակվել զուտ տեխնոլոգիական որոշումներով: Մարդկության ինտելեկտուալ զարգացումը՝ բնագիտական և տեխնիկական նվաճումների ուղղագիծ շարժում չէ, այն նաև մարդու և հասարակության բարոյական թռիչքների և անկումների դժվարին ուղի է:³

Ամբողջությամբ վերցրած, բնագիտության, բժշկության, փիլիսոփայության, իրավագիտության, մարդաբանության, սոցիոլոգիայի, սոցիալական էկոլոգիայի, գրականության, աստվածաբանության և պատմության միագումարման կենտրոնակետը այսօր ավելի ու ավելի դառնում է կենսաբարոյագիտությունը: Այն իր մեջ միատեղում է բնագիտական և հումանիտար գիտությունների զարգացման շահերը, հետևաբար կենսաբարոյագիտության խնդրաշարն իր լուծումը կարող է գտնել միայն և միմիայն միջառարկայական փոխգործակցության միասնական դաշտում: Իսկ դրա կենտրոնում՝ մարդու կյանքի և առողջության արժեքանական հիմնավորման պրոբլեմն է, կամ որ նույնն է, հասարակական գիտակցության մեջ կյանքի նոր արժեքանության ձևավորման հիմնախնդիրը: Քաղաքակրթության գերագույն արժեքը եղել ու կա մարդու կյանքն ու առողջությունը, դրանցից ածանցված մյուս բոլոր արժեքների միասնական համակարգը, որն արտացոլված է կենսաբարոյագիտության առարկայի, հիմնական կատեգորիաների և սկզբունքների մեջ:⁴

3 Юдин Б.Г. Принципы биоэтики (введение в биоэтику, под общ.ред. Б.Г. Юдина). – М.: Прогресс-Традиция, 1998, с.21–53.

4 Огурцов А.П. Этика жизни или биоэтика. Аксиологические альтернативы. – Вопросы философии, 1994, №3, с. 49–61; Трунёв С.И. Жизнь как ценность: проблемы и противоречия. – Философия и общество, №4, октябрь–декабрь, 2008, с.118–125.

1 Степин В.С. Становление идеалов и норм постнеклассической науки. – Проблемы методологии постнеклассической науки. – М.: ИФ РАН, 1992, с.48.

2 Фролов И.Т., Юдин Б.Г. Этика науки: проблемы и дискуссии. – М.: книжный дом “Либроком”, 2009, с.41.

БИОЭТИКА КАК НОВАЯ ОБЛАСТЬ МЕЖДИСЦИПЛИНАРНЫХ И
АКСИОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

СОНА ДАВТЯН

Соискатель отдела социальной философии Института философии, социологии и права НАН РА

В статье рассмотрены проблемы разработки целостной концепции биоэтики как системы знаний, формирующейся на стыке социального и биологического познания человека.

BIOETHICS AS A NEW FIELD OF INTERDISCIPLINARY AND VALUE RESEARCH

SONA DAVTYAN

Researcher at the Department of Social Philosophy, Institute of Philosophy, Sociology and Law, NAS, RA

The article considers problems of development of the holistic concept of bioethics as a system of knowledge emerging at the intersection of social and biological human cognition. The author investigates the origin of bioethics as a science. She comes to conclusion that bioethics is a new field of interdisciplinary and value research.

ՄԻՋԱՆԶԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հոգվածում ներկայացված է միջանձնային հարաբերությունների ընդհանուր նկարագրիրը՝ սկսած անտիկ փիլիսոփայական պատկերացումներից մինչև ժամանակակից հոգեբանական մեկնաբանություններ: Խոսվում է նաև միջանձնային հարաբերությունների հիմնական տեսությունների մասին, որոնք են՝ կապվածության տեսությունը (ներառյալ՝ «մայր-նորածին» կապվածության տեսությունն ու միջանձնային հարաբերությունների ներդրվենսաբանությունը), սոցիալական ներթափանցման տեսությունը, անորոշության նվազեցման տեսությունը, հարաբերությունների դիալեկտիկայի տեսությունը, հիմնարար կողմնորոշման տեսությունը և Ջորջ Լեվինգերի հինգ փուլանոց մոդելը: Հոգվածում դիտարկվում են նաև միջանձնային հարաբերությունները՝ հասարակական հարաբերությունների, հաղորդակցման, շփման և գործունեության համատեքստերում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. միջանձնային հարաբերություններ, հասարակական հարաբերություններ, հաղորդակցում, շփում, գործունեություն:

Կենդանի բնության երևույթների ուսումնասիրության մեթոդական սկզբունքն է՝ ուսումնասիրել օբյեկտները միջավայրի հետ փոխհարաբերությունների գործընթացում: Բնականաբար, մարդը և նրա առանձնահատկությունները նույնպես հասու են ուսումնասիրության, ճանաչելի են դառնում՝ շրջակա միջավայրի հետ ունեցած իր հարաբերություններում [17, էջ 13–15]։ այդ հարաբերություններից մեկն էլ միջանձնային հարաբերություն-

ներն են:

Միջանձնային հարաբերությունները մի շարք գիտությունների (հոգեբանություն, փիլիսոփայություն, սոցիոլոգիա, բժշկություն, մարդաբանություն, լեզվաբանություն, նշանագիտություն/սեմիոտիկա) կենտրոնական հիմնախնդիրներից է: Միջանձնային հարաբերություններն ուսումնասիրող գիտությունների համակարգը երբեմն անվանում են նաև «Հարաբերությունների գիտություն» (*Relationship Science*) [32]:

Միջանձնային հարաբերություններին, ուղիղ թե միջնորդավորված, անդրադարձել են դեռ հին մտածողները սկսած Կոնֆուցիոսից, Արիստոտելից մինչև Հոբբս և Սպինոզա: Միջանձնային հարաբերությունները առավել դիտարկվել են «գործնական փիլիսոփայության»՝ էթիկայի շրջանակներում, ընդ որում ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել միջանձնային հաղորդակցումը, շփումը, որում էլ հենց բացահայտվում և իրականացվում են միջանձնային հարաբերությունները [3, էջ 88–90]:

Դեռևս չինական փիլիսոփայության հիմնադիրներից Կոնֆուցիոսը (մ.թ.ա. VI–V դդ.), անդրադառնալով մարդկային հարաբերություններին, նշում է, որ վերջիններս կարող են կարգավորվել կամ ըստ վարչական օրենքների կամ էլ ըստ բարոյական օրենքների: Մարդկային հարաբերությունների կարգավորումը վարչական օրենքներով կամ բռնությամբ, ըստ Կոնֆուցիոսի, հնարավոր չէ քանի որ հակառակ է բարոյական օրենքներին: Այնինչ բարոյական օրենքներով կառավարվող մարդկային հարաբերու-

թյունները հասարակության մեջ խաղաղության և արդարության պահպանման երաշխիքն են [1, էջ 15]: Կեցության գերագույն սկզբունքի՝ Դաո-ի մասին քարոզող Լաո Ցզիի (մ.թ.ա. V-IV դդ.) «անգործության» կամ «բնության օրենքներին ներդաշնակ գործելու» սկզբունքը տարածվում է նաև միջանձնային հարաբերությունների վրա. միջանձնային հարաբերություններում մարդիկ պետք է առաջնորդվեն այն սկզբունքներով, որոնք բնական են և ներդաշնակ են իրենց բնությանը, քանի որ «հետևել Դաոյին, նշանակում է ձեռք բերել դե՛ առաքինություններ, և ապրել բնության օրենքներով» [1, էջ 18]: Այս տեսանկյունից և դաոյի ուսմունքը և կոնֆուցիականությունը նպաստում են միջանձնային հարաբերությունների այնպիսի մոդելի զարգացմանը, որը միտված է հասարակական հոմեոստազի պահպանմանը՝ մեկ ընդհանուր պատկերացումների համակարգի, իմաստաբանական համակարգի պահպանմամբ և տարածմամբ:

Հին Հնդկաստանում միջանձնային հարաբերությունները մարդկանց միջև որպես այդպիսին չեն զբաղեցրել մտածողներին. առավել կարևոր է եղել շփման հիմնախնդիրը, որը դիտարկվում էր կրոնական աշխարհայացքի շրջանակներում և հանգում էր Բրահմանի և Ատմանի կրոնա-փիլիսոփայական գիտակցմանը:

Ընդհանուր առմամբ անտիկ շրջանի փիլիսոփայությունն ավելի շատ կենտրոնացած էր բնության և ճանաչողության հիմնախնդիրների վրա, սակայն որոշ մտածողների մոտ առկա են միջանձնային հարաբերություններին վերաբերվող գաղափարներ: Օրինակ՝ Դեմոկրիտը հասկանում էր փիլիսոփայությունը որպես շփման, հարաբերվելու և ապրելու արվեստ: Սոկրատեսը միջանձնային հարաբերությունների հիմնական սկզբունքն է համարում հավասարությունը՝ դիտարկելով շփումը որպես համահավասար երկխոսություն,

փոխադարձ զրույց: Պլատոնը միջանձնային հարաբերությունները դիտարկում է որպես առաջին հերթին պետական պահանջների իրագործմանն ուղղված ու շահերին համապատասխան որոշակի ծիսակարգված շփման գործընթաց [20, էջ 5-12]: Արիստոտելն ուսումնասիրել է միջանձնային հարաբերությունները շփման, հաղորդակցման մակարդակում: Միջանձնային հարաբերություններում նա տեսնում էր ինչպես տանջանքի այնպես էլ հաճույքի աղբյուր: Բացի այդ՝ մարդկային հարաբերությունների կառուցման, մասնավորապես՝ ընկերության ստեղծումը, ընկերանալը անհնար էր համարում առանց բավականություն պատճառով հարաբերությունների: Շփումը Արիստոտելը համարում է որպես բարիք, որին անհրաժեշտ է ձգտել: Հենց շփման պահանջմունքն է հիմքը լեզվի, արվեստի և մշակույթի առաջացման [4]:

Միջանձնային հարաբերությունները անմիջական և կենտրոնական ուսումնասիրության և փիլիսոփայական վերլուծության օբյեկտ չդարձան նաև միջնադարում: Այս ժամանակաշրջանում ճանաչողությունը որպես հիմնախնդիր մի փոքր իր դիրքերը զիջեց Աստծո, աստվածայինի, ինչպես նաև մարդ-Աստված հարաբերություններին:

Միջանձնային հարաբերությունները և շփումը որպես այդպիսին սկսեցին հետաքրքրել փիլիսոփաներին սկսած վերածննդի ժամանակաշրջանից, երբ ուսումնասիրության օբյեկտը Աստծուց և նրա հետ մարդու ունեցած հարաբերություններից տեղափոխվեց դեպի մարդը և նրա ունեցած հարաբերություններն իր նմանների հետ: Դ.Հյունը շփումը տեսնում էր որպես աշխատանքային գործընթացի մի մաս [25, հ. 2, էջ 11-15]: Վերջինիս համոզմամբ շփման կարողությունը, բանականության և գործունեության հետ մեկտեղ, կազմում է մարդու էությունը: Զ.Լոկկն առանձնացնում էր հաղորդակցմամբ իրականացվող միջանձնային հարաբերությունների դաս-

տիարակչական գործառույթը [15, էջ 460–461]: Թ.Հոբբսի պնդմամբ՝ շփումը հասարակության մեջ արհեստածին երևույթ է և ձևավորվում է հասարակական դաշինքի ազդեցության արդյունքում [8]: Բ.Սպինոզայի բանական էգոիզմի տեսության մեջ շփումը հասկացվում է ձգողականության և վանման հակասական գործընթաց և որպես նպատակների իրագործման միջոց [22, էջ 538]:

Հիմնախնդրի հետագա զարգացումներն ընթացել են գերմանական դասական փիլիսոփայության ներքում: Ի.Կանտն ու Հեգելը մշակելով հասարակության և այլ մարդկանց մեջ մարդու կեցության, սուբյեկտ–սուբյեկտային և սուբյեկտ–օբյեկտային հարաբերությունների հիմնախնդրի փիլիսոփայական և բարոյագիտական ասպեկտները [18], այդպիսով իսկ միջանձնային հարաբերությունների հիմնախնդիրը բարձրացրեցին մեկ այլ մակարդակի վրա: Միջանձնային հարաբերությունների հիմնախնդրի փիլիսոփայական զարգացման գործում լուրջ ներդրում ունի նաև Լ.Ֆոյերբախը, որը մարդու կեցության ձևավորման, ինքնագիտակցության կայացման գործում առաջատար դերերից մեկն էր համարում մարդկանց միջև հաստատվող հարաբերությունները: Նրա խորին համոզմամբ մարդն իր էությանը կարող է դրսևորվել, տեսանելի լինել միայն ուրիշների հետ ունեցած իր հարաբերություններում [23, էջ 203]: Ֆ.Նիցշեն և Ա.Շոպենհաուերը կանգնած էին այն գործընթացի ակունքներում, որը XX դարում փիլիսոփայությունը վերափոխեց «գիտակցության փիլիսոփայությունից» դեպի «հաղորդակցման փիլիսոփայություն» [Ситниченко, էջ 3]: Այդ շրջադարձը պայմանավորված էր նաև Է.Հուսերլի կողմից միջսուբյեկտիվության ուսմունքի [9, էջ 433–515.], Մ.Շելերի «համակրանքի ֆենոմենոլոգիայի», Մ.Բուրերի «դիալոգիկայի», Կ.Յասպերսի «էկզիստենցիալ հաղորդակցման» և Յ.Հաբերմասի «հաղորդակցվող բանա-

կանության» [20, էջ 17–20] և «հաղորդակցվող գործողության» մասին ուսմունքի մշակմամբ [24]:

Հասկացություն՝ միջանձնային հարաբերությունների մասին

Ինչպես արդեն նշվել էր, մարդը և նրա առանձնահատկությունները, ինչպես կենդանի բնության երևույթները, հասու են ուսումնասիրության, ճանաչելի են դառնում՝ շրջակա միջավայրի հետ ունեցած իր հարաբերություններում [17, էջ 13–15]: Այդ հարաբերություններից մեկն էլ միջանձնային հարաբերություններն են, որոնք հետաքրքրություն են ներկայացնում մի շարք գիտությունների (համար, ինչպիսիք են օրինակ՝ հոգեբանությունը, փիլիսոփայությունը, սոցիոլոգիան, բժշկությունը, մարդաբանությունը, լեզվաբանությունը, նշանագիտությունը/սեմիոտիկան և այն:

Միջանձնային հարաբերությունները կարելի է սահմանել, որպես՝ մարդկանց միմյանց նկատմամբ առկա սուբյեկտիվ վերաբերմունքի իրացում (Realisation) [10]: Միջանձնային հարաբերությունները երկու կամ ավելի հարաբերվող մարդկանց միջև զգացողությունների և դիրքորոշումների արտահայտման ձև է [45]: Մեկ այլ բնորոշմամբ միջանձնային հարաբերությունները առաջանում են սոցիալական խմբի անդամների փոխադարձ ընկալման ու հաղորդակցության արդյունքում [2]: Երբեմն «միջանձնային հարաբերություններ»–ի փոխարեն կիրառվում է «փոխհարաբերություններ» եզրույթը, որն առաջարկել է Յ.Լ.Կոլոմինսկին [12]: Միջանձնային հարաբերությունները կարող են լինել ընկերական, ռոմանտիկ, ընտանեկան և մասնագիտական [54]: Միջանձնային հարաբերությունները կարող են դրսևորվել մարդկանց փոխհարաբերություններում ագրեսիայի, թշնամության, ատելության, կոնֆլիկտի, սիրո, հարգանքի, մտերմության, մանիպուլյացիայի, վերահսկման և այլ ձևերով [27]:

Այս գլխում ներկայացված տեսու-

թյունները, դրույթներն ու գաղափարները անմիջականորեն չեն հանդիսանում հետազոտության տեսա-մեթոդաբանական հիմքը, սակայն վերջինիս հետ մեկտեղ (տես՝ Հետազոտության տեսական հիմքերը, Հետազոտության մեթոդաբանական հիմքերը) կազմում են այն հայեցակարգային համակարգը, որն ապահովում է սույն աշխատանքի շրջանակներում ներկայացվող միջանձնային հարաբերությունների հոգեփմաստաբանական տեսության տեսամեթոդաբանական ամբողջությունը:

Միջանձնային հարաբերությունների տեսություններ և մոտեցումներ

Միջանձնային հարաբերություններին վերաբերվող տեսությունները քիչ չեն, սակայն դրանցից առավել նշանակալիներն ու փորձարարական տվյալներով հիմնավորվածները ներկայացված են ստորև: Դրանք են՝ կապվածության տեսությունը, սոցիալական ներթափանցման տեսությունը, անորոշության նվազեցման տեսությունը, հարաբերությունների դիալեկտիկայի տեսությունը, հիմնարար կողմնորոշման տեսությունը և Լեվինգերի տեսությունը:

Միջանձնային հարաբերությունների նեյրոկենսաբանությունը

Միջանձնային հարաբերությունները, դրանց իրականացման հոգեբանական, սոցիալական և այլ տեսակի առանձնահատկություններն ու գործընթացներն իրենց հիմքում ունեն կենսաբանական և նյարդաբանական կառույցներ և գործընթացներ: Որոշ դեպքերում նեյրոկենսաբանական գործոններն ու դետերմինանտները առավել մեծ մասնաբաժին են ունենում միջանձնային հարաբերություններում քան մնացած բոլոր տեսակի գործոնները (հոգեբանական, սոցիալական և այլն): Այդ իսկ պատճառով չափազանց կարևորվում է միջանձնային հարաբերությունների նեյրոկենսաբանական մեկնաբանությունը:

Միջանձնային հարաբերությունների նեյրոկենսաբանական մեկնաբա-

նությունը հենվում է կապվածության (Attachment) գաղափարի վրա, որի հոգեկենսաբանական մոդելը մշակել է Զ.Բոուլբիին [34]: Համաձայն կապվածությունը բացատրող նեյրոկենսաբանական տեսության, մարդկանց միջև կապերը, միջանձնային հարաբերությունները ստեղծվում և զարգանում են նեյրոկենսաբանական պատտերնի հիման վրա, որը ձևավորվում է նորածնության շրջանում՝ նորածնի և մոր միջև (The Mother-Infant Attachment Theory) [56]: Ֆենոմենոլոգիական մակարդակում դա ներկայացվում է որպես երեխայի և մոր միջև առաջացող ընդհանուր հուզական դաշտ, տրամադրություն [51] կամ գիտակցության դիալեկտիկ վիճակ [56]: Մինևույն ժամանակ մորից երեխայի բաժանման տագնապը հետևանք է կապվածության նեյրոկենսաբանական մեխանիզմների խաթարման [44]:

Կապվածության տեսությունն իր հերթին հենվում է նեյրոնային անդրադարձման համակարգի (Neural Mirroring System), այսինքն հայելային նեյրոնների աշխատանքի վրա, որն էլ և ապահովում է հասկացումը, ապրումակցումը և ոչ-վերբալ հաղորդակցումը [36; 47]:

Մոր և նորածնի միջև կապվածության առաջացման նեյրոկենսաբանական մեխանիզմները իրականացվում են միշտ բացառաբանական համակարգերի միջոցով, որոնցից ամենկարևորներն են օքսիտոցիներգիկ և դոպամիներգիկ համակարգերը.

• Օքսիտոցիներգիկ համակարգ (Oxytocinergic System): Օքսիտոցինը պեպտիդային հորմոն է, որն արտազատվում է հիպոթալամուսում և հիպոֆիզի ետին բաժնով փոխանցվում է արյան մեջ: Օքսիտոցինը ազդում է կաթնագեղձերի և արգանդի վրա, որպեսզի խթանի կաթի արտազատումը և արգանդի կծկումները ծննդաբերության ժամանակ: Փորձերը ցույց են տվել որ մոր օրգանիզմում օքսիտոցինի քանակը չափազանց կարևոր դերակատարում ունի երեխայի

նկատմամբ մոր վարքային դրսևորումներում: Այսպես օրինակ, օքսիտոցինի քանակի կտրուկ նվազեցումը (օրինակ անտագոնիստի ներարկման միջոցով) կարող է մոր մոտ անտարբերություն և խուսափողական վարք առաջացնել երեխայի նկատմամբ [52]:

• Դոպամիներգիկ համակարգ (*Dopaminergic System*): Դոպամինը ներթմեղիատոր է, որն էականորեն ազդում է մարդու վարքի և տրամադրության վրա: Այն ներքին ամրապնդման քիմիական կարևորագույն գործոններից է և գլխուղեղի խրախուսման համակարգի կարևորագույն բաղադրիչն է, քանի որ առաջացնում է հաճույքի և բավարարվածության զգացումը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման և մոտիվացիայի վրա [28; 57]: Դոպամինի քանակը մոր գլխուղեղում անմիջականորեն կարող է անդրադառնալ նորածնի նկատմամբ վերջինիս հուզական վերաբերմունքի և խնամքի վրա և հետևաբար ազդել կապվածության պատտերնի ձևավորման գործընթացի վրա [52]:

Կապվածությունը անպայմանորեն ենթադրում է տեղեկատվության սենսորային և կոգնիտիվ մշակում՝ շարժողական բարդ հակազդումների համար, այլ կերպ ասած կոնկրետ վարքատեսակների դրսևորման համար [55]:

Սոցիալական ներթափանցման տեսության հիմնական գաղափարները

Սոցիալական ներթափանցման տեսությունը (*Social penetration theory*) մշակել են հոգեբաններ Ի.Ալտմանն ու Դ.Թեյլորը 1973 թվականին՝ երկու անձանց միջև մտերմության մեխանիզմները բացատրելու համար: Տեսության համաձայն միջանձնային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց խորանում է նաև միջանձնային հաղորդակցումը [38]: Միջանձնային հարաբերությունների զարգացման գործընթացում կարևորագույն դերակատարում ունի կողմերի ինքնաբացահայտումը՝

կիսվելը ինտիմ, նեղ անձնական տեղեկատվությամբ և հույզերով: Ընդ որում որպես միջանձնային հարաբերությունների զարգացման հիմնավոր պայման կարևորվում է այդ ինքնաբացահայտման փուլայնությունը, որոշ ժամանակահատվածի մեջ ձգված լինելը [26]: Մասնակից կողմերի փոխադարձ ինքնաբացահայտումը, որպես միջանձնային հարաբերությունների զարգացման, ամրապնդման և վստահության մթնոլորտիս տեղծման նախապայման կարևորվում է հատկապես հոգեթերապիայում [58, էջ 116–118], որպես միջանձնային հարաբերությունների յուրահատուկ ձև:

Ինքնաբացահայտումը, այսինքն սեփական անձի բացահայտումը մեկ ուրիշին, կողմերի մոտ առաջացնում է խոցելիության զգացում, որն էլ ըստ Ալտմանի և Թեյլորի՝ հարաբերությունների զարգացման, խորացման երաշխիքն է [26]:

Անորոշության նվազեցման տեսության հիմնական դրույթները

Անորոշության նվազեցման տեսությունը (*Uncertainty reduction theory*) մշակել են 2.Բերգերն ու Ռ.Քալաբրիսը 1975 թվականին: Այս տեսության հիմնական դրույթն այն է, որ միջանձնային հարաբերություններում մարդիկ կարիք են ունենում հարաբերվող մյուս կողմի վերաբերյալ տեղեկատվության, որի արդյունքում կարողանում են նվազեցնել անորոշության մակարդակը: Ստանալով անհրաժեշտ տեղեկատվությունը՝ կողմերը կարողանում են ինչ-որ չափով նաև կանխատեսել միմյանց վարքը և հարակից երևույթները: Բերգերի և Քալաբրիսի պնդմամբ անորոշության մակարդակի նվազեցման անհրաժեշտությամբ պայմանավորված տեղեկատվության պահանջը կարևորագույն դերակատարում ունի միջանձնային հարաբերությունների զարգացման և հետագա ընթացքի վրա: միջանձնային հարաբերություններում առաջացող անորոշությունը հնարավոր է նվազեցնել միմիայն միջանձնային հաղորդակց-

ման միջոցով [30]:

Տեսության հիմնադիրների կողմից միջանձնային հարաբերություններում անորոշության նվազեցման կարևորությունը տեսնելը զարմանալի չէ, քանի որ արդեն 1960-ականներին անորոշությունը համարվում էր որպես տագնապի և անձնային տագնապայնության հիմնական պատճառ [40; 49], իսկ կապը անորոշության և տագնապի, տագնապային խանգարումների, օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարումների, դեպրեսիվ խանգարումների միջև փաստում են շատ հետազոտություններ [33; 35; 37; 39]:

Բերգերն ու Քալաբրիսը առաջ են քաշում 7 դրույթ՝

1. միջանձնային հարաբերություններում մարդիկ ապրում են անորոշության զգացումներ.

2. անորոշությունը ոչ ցանկալի հոգեվիճակ է որն առաջացնում է կոգնիտիվ սթրես.

3. անձանոթ մարդիկ հանդիպելիս առաջին հերթին ջանում են նվազեցնել անորոշությունը՝ կանխատեսելիությունը բարձրացնելու համար.

4. միջանձնային հաղորդակցումը զարգացող և փուլային գործընթաց է.

5. միջանձնային հաղորդակցումը անորոշության նվազեցման առաջնային միջոցն է.

6. տեղեկատվության քանակն ու բնույթը, որը մարդիկ կիսում են միմյանց հետ, ժամանակի ընթացքում փոփոխվում են.

7. մարդկանց վարքը հնարավոր է կանխատեսել որոշ օրինաչափությունների շրջանակներում [30]:

Անորոշության կենտրոնական գաղափարի և միջանձնային հարաբերությունների զարգացման վերոնշյալ յոթը դրույթների հետ կապը հեղինակները բացատրում են մի շարք աբսիոմների միջոցով [42, էջ 176-183]:

Բերգերն ու Քալաբրիսն առանձնացնում են անորոշության երկու տեսակ՝ կոգնիտիվ և վարքային, ինչպես նաև

միջանձնային հարաբերություններում տեղեկատվության որոնման երեք ռազմավարություն՝ ակտիվ, պասիվ և ինտերակտիվ: Ընդ որում գոյություն ունի անորոշության նվազեցման երկու հիմնական գործընթաց՝ կանխատեսում և բացատրություն: Կանխատեսումը միջանձնային հարաբերություններում ներգրավված անձանց կոնկրետ վարքատեսակների կանխատեսումն է, իսկ բացատրությունը՝ այդ իսկ վարքատեսակների իմաստն ու նշանակությունը մեկնաբանելու կարողությունը [31]:

Հարաբերությունների դիալեկտիկայի հակիրճ նկարագրությունը

Հարաբերությունների դիալեկտիկան սահմանվում է որպես՝ միջանձնային հարաբերություններում հակասությունների կամ հակասող և հակընդեմ միտումների անդադար փոխազդեցությունների հանգույց [38]: Հարաբերությունների դիալեկտիկայի (Relational dialectics) տեսությունը առաջին անգամ ներկայացրել են Լ.Բաքստերը [29] և Ու.Ռոուլինսը [46] 1988թ-ին, սահմանելով հարաբերվող կողմերի միջև եղած հաղորդակցման պատերնները որպես ներքին դիալեկտիկական ձևումների և լարվածության արդյունք:

Լ.Բաքստերը և Մ.Մոնտգոմերին նշում են, որ հարաբերությունների դիալեկտիկայի տեսության բնույթը կարելի է փոխանցել՝ «հակադրությունները ձգում են միմյանց», «ձկնորսը ձկնորսին հեռվից է տեսնում», «երկու հոգին ընկերախումբ է, երեքը՝ բազմություն» սակայն «որքան շատ այնքան լավ» ասացվածքներով [29]: Նրանց կարծիքով միջանձնային հարաբերությունները լավագույնս նկարագրվում են հենց նմանատիպ հակասություններ պարունակող, ասույթներով: Դա բացատրվում է նրանով, որ որ մարդուն հատուկ է միևնույն երևույթի վերաբերյալ ունենալ միքանի, երբեմն իրարամերժ, իրար հակասող, տեսակետ: Հետևաբար բնական է որ այդ հոգեկան հասկությունը ևս դրսևորվում է

միջանձնային հարաբերություններում:

Հարաբերությունների դիալեկտիկան Մ.Բախտինի այն դրույթի հետագա զարգացումն է համաձայն որի կյանքը բաց մենախոսություն է և մարդիկ միջանձնային հարաբերությունների ներսում ունենում են հակադիր ցանկությունների և պահանջմունքների բախման ապրումներ [29]

Գոյություն ունեն 4 հիմնական դրույթներ, որոք կազմում են հարաբերությունների դիալեկտիկայի հենքը՝ հակասություն, ամբողջություն, գործընթաց և պրակտիս:

1. Հակասությունները հարաբերությունների դիալեկտիկայի հիմնական դրույթն են: Այն միավորված հակադրությունների ակտիվ փոխազդեցությունն է: Հակասությունը կարող է սահմանվել, որպես երկու իրարամերժ միտումների կամ ուժերի փոխկապակցվածություն [42]: Որպես օրինակ կարելի է նշել կողմերի մտերմանալու և հեռավորություն պահելու միաժամանակյա ցանկությունը միջանձնային հարաբերություններում:

2. Ամբողջությունը մատնանշում է այն փաստը, որ միջանձնային հարաբերություններում հակասությունները հանդես են գալիս մեկ միասնությամբ և չեն կարող հասկացվել առանձին-առանձին: Օրինակ, կախվածության և փոխկախվածության միջև գոյություն ունեցող լարվածությունը չի կարելի առանձնացնել հրապարակայնության և գաղտնիության միջև եղած լարվածությունից. երկուս էլ ազդում են մեկը մյուսի վրա և պայմանավորում մեկը մյուսին:

3. Գործընթաց: Հարաբերությունների դիալեկտիկան անհրաժեշտ է դիտարկել սոցիալական գործընթացների ենթատեքստում: Միջանձնային հարաբերություններում գործողությունները և փոփոխությունը ֆունկցիոնալ հատկություններ են, որոնք պայմանավորված են սոցիալական գործոններով. անձը կարող է ժամանակի ընթացքում տատանվել և փոփոխել իր պահվածքը

միջանձնային հարաբերություններում՝ հրապարակայնությունից դեպի ավելի գաղտնիություն և հակառակը [46]:

4. Պրաքսիսը փիլիսոփայական դրույթ է որը վերաբերվում է գործելու փորձառությունը: Պրակսիսի ընթացքում դիալեկտիկական ճնշումները ստեղծվում և վերստեղծվում են ակտիվ ներգրավվածության և փոխազդեցության միջոցով: Այլ կերպ ասած, անձը միջանձնային հարաբերություններում իր իրական ներգրավվածության շնորհիվ է որ բախվում է այլ մարդկանց պահանջմունքների և արժեքների հետ: Պրաքսիսի ընթացքում անձը կատարում է ընտրություն հակադիր պահանջմունքների և արժեքների միջև (դիալեկտիկական ճնշումների): Միևնույն ժամանակ ընտրված պահանջմունքներն ու արժեքները ստեղծում, վերստեղծում, փոփոխում են միջանձնային հարաբերությունների բնույթը:

Հիմնարար կողմնորոշման փեսության առանցքային գաղափարները

Միջանձնային հարաբերությունների հիմնարար կողմնորոշման (Fundamental Interpersonal Relations Orientation – FIRO) տեսության հիմնադիր Ու.Շուտցը գտնում է, որ ամեն անհատ ունի այլ մարդկանց նկատմամբ յուրահատուկ սոցիալական կողմնորոշում, որն էլ և պայմանավորում է վերջինիս միջանձնային վարքը: Շուտցը անհատի միջանձնային վարքը փորձում է բացատրել երեք պահանջմունքների՝ ներգրավվածության, վերահսկողության և աֆֆեկտի միջոցով: Այդ պահանջմունքները զարգանում են դեռ մանկական տարիքում՝ մեծահասակների հետ փոխազդեցություններում: Օրինակ, ներգրավվածության պահանջմունքի զարգացումը մեծապես կախված է նրանից թե որքանով էր երեխան ներգրավված ընտանիքում, ներընտանեկան միջանձնային հարաբերությունների համակարգում: Վերահսկողության պահանջմունքը կախված է նրանից թե ծնող-երեխա հարաբերություններում

շեշտը դրված է եղել ազատության թե վերահսկողության վրա: Իսկ աֆֆեկտի պահանջումնքը կախված է շրջապատի կողմից երեխայի ընդունված կամ մերժված լինելու մակարդակով: Եթե մանկական տարիքում այս պահանջումնքները չեն բավարարվում՝ անհատն իրեն զգում է ուրիշների սիրուն և հարգանքին անարժան [50]: Վ.Ն.Մյասիշևը առավել կարևորում է միջաձնային հարաբերությունների կարևոր բաղադրիչներից վերաբերմունքը: Մյասիշևի հիմնական դրույթն այն է, որ անձը, հոգեկանն ու գիտակցությունը իրենցից ներկայացնում են օբյեկտիվ իրականության արտացոլման և դրա նկատմամբ մարդու վերաբերմունքի միասնություն: Միջանձնային հարաբերությունները Մյասիշևի տեսության մեջ հանդես են գալիս որպես մարդու վերաբերմունքների ամբողջական համակարգի բաղադրիչներից մեկի, այլ մարդկանց հետ սուբյեկտի գիտակցական կապերի, իրականացման ձև [17]:

Այսպիսով, «միջանձնային հարաբերությունների» հասկացման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում «վերաբերմունքը»:

Միջանձնային հարաբերությունների կարևոր բնութագրիչներից են նաև ներդաշնակությունն ու աններդաշնակությունը [10], միջանձնային համատեղելիությունը [43; 50]:

Միջանձնային հարաբերությունների հինգ փուլանոց մոդելի հիմնական գաղափարը և փուլային նկարագրությունը

Միջանձնային հարաբերությունների զարգացման ամենատարածված մոդելներից մեկի հեղինակը Զ.Լեվինգերն է [41]: Ի սկզբանե այդ մոդելը ձևակերպվել էր չափահաս հետերոսեքսուալ մարդկանց միջև ռոմանտիկ հարաբերությունների զարգացման ընթացքը նկարագրելու համար, սակայն ժամանակի ընթացքում այն ապացուցեց իր կիրառելիությունը նաև մնացյալ տիպի միջանձնային հարաբերություններում:

Համաձայն Լեվինգերի մոդելի, միջանձնային հարաբերությունները զարգանում են հինգ փուլով.

1.Ծանոթություն (*Acquaintance*): Ծանոթությունը հիմնվում է նախնական հարաբերությունների, ֆիզիկական նմանության, առաջին տպավորության և այլ գործոնների վրա: Եթե երկու մարդ հավանում են մեկմեկու ապա նրանց հարաբերություններն անցնում են հաջորդ փուլ, սակայն ծանոթության փուլը կարող է զարգանալ նաև այլ ճանապարհով (օրինակ՝ մասնագիտական միություն և այլն):

2.Ամրապնդում (*Buildup*): Այս փուլի ընթացքում հարաբերվող կողմերը սկսում են վստահել միմյանց և դրսևորել միմյանց նկատմամբ հոգատարություն կամ հետաքրքրվածություն: Այս փուլից անցում է կատարվում հաջորդ փուլ, եթե կողմերը համատեղելի են լինում, դրսևորում են մտերմանալու ցանկություն և այլն:

3.Խորացում (*Continuation*): Այս փուլում հարաբերությունները խորանում են: Կողմերը դառնում են մտերիմ. կարող է առաջանալ երկարատև ընկերություն, ռոմանտիկ հարաբերություններ և ամուսնություն: Այնուամենայնիվ հարաբերությունները կարող են խորանալ և զարգանալ նաև այս փուլում: Միջանձնային հարաբերությունների խորացման փուլը համեմատաբար ավելի երկար է տևում քան նախորդ երկու փուլերը:

4.Վատթարացում (*Deterioration*): Ոչ բոլոր հարաբերություններն են որ ընթացքում վատթարանում են, սակայն վատթարացման տարաբնույթ, թեկուզ չնչին թվացող նշանները կարող են հետագայում հանգեցնել դրան: Հարաբերություններում դժգոհությունների, գայրույթի ու ձանձրույթի արդյունքում կողմերը կարող են սկսել քիչ շփվել միմյանց հետ, սահմանափակել այն և խուսափել մեկը մյուսից: Իսկ վստահության պակասը կարող է ի վերջո հանգեցնել հարաբերությունների ավարտին, եթե

իհարկե կողմերը ձեռնամուխ չլինեն իրենց հարաբերություններում առաջացած խնդիրների լուծմանը:

5. Ավարտ (*Termination*): Հարաբերությունների վերջին փուլը դրանց ավարտն է, որը կարող է պայմանավորված լինել կողմերից մեկի մահով, ժամանակի և տարածության մեջ նրանց հեռավորությամբ, բոլոր տեսակի կապերի խզմամբ և այլն [41]:

Միջանձնային հարաբերությունները շփման եվ հասարակական հարաբերությունների համատեքստում

Միջանձնային հարաբերությունները, կախված հետազոտողների մեթոդաբանական ուղղվածությունից, դիտարկվել և դիտարկվում են տարբեր հարակից երևույթների, ինչպիսիք են՝ շփումն ու հասարակական հարաբերությունները, շրջանակներում և համատեքստում: Միջանձնային հարաբերությունների էությունը, բնույթն և տեղը մարդու հարաբերությունների համակարգում հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել այն այդ իսկ համակարգի բաղադրիչների համատեքստում:

Միջանձնային հարաբերությունները հասարակական հարաբերությունների համալեզուում

Վ.Ն.Մյասիշևը ձևակերպել է հոգեբանության կարևորագույն սկզբունքներից մեկը, համաձայն որի հասարակական հարաբերությունների համակարգը, որում զարգանում է անձնավորությունը, ձևավորում է վերջինիս սուբյեկտիվ վերաբերմունքը իրականության բոլոր երևույթների նկատմամբ: Մյասիշևի պնդմամբ, հարաբերությունների այդ համակարգը շրջապատող աշխարհի և սեփական անձի նկատմամբ՝ անձի ամենաբնորոշ հատկանիշն է. առավել բնորոշ քան ասենք խառնվածքն ու ընդունակությունները [6, էջ 5-7]:

Միջանձնային հարաբերությունների տեղի և դերի վերաբերյալ հոգեբանության մեջ գոյություն ունեն տարբեր մտտեցումներ: Երբեմն դրանք դիտարկվում

են հասարակական հարաբերությունների հետ միևնույն հարթության վրա, իսկ երբեմն էլ՝ որպես հասարակական հարաբերություններից վեր գտնվող համակարգ [13, էջ 146]: Կ.Պլատոնովն, օրինակ, միջանձնային հարաբերությունները հասկանում է որպես գիտացության մեջ՝ հասարակական հարաբերությունների արտացոլանք [19, էջ 30]: Գ.Անդրեևան, հակառակը, նշում է, որ միջանձնային հարաբերությունների էությունը հնարավոր է ճիշտ հասկանալ միայն այն դեպքում եթե դրանք չդրվեն հասարակական հարաբերությունների հետ միևնույն հարթության վրա: Նրա պնդմամբ, միջանձնային հարաբերություններն անհրաժեշտ է դիտարկել որպես յուրաքանչյուր տեսակի հասարակական հարաբերությունների ներսում առաջացող յուրահատուկ տիպի հարաբերություններ [3, 84-87]: Միջանձնային հարաբերությունները էապես տարբերվում են հասարակական հարաբերություններից, քանի որ դրանք բնութագրող հիմնական առաձևահատկությունը՝ հուզականությունն է: Միջանձնային հարաբերությունների հուզականությունը ենթադրում է այն, որ դրանք առաջանում և կազմավորվում են մեկը մյուսի հետ հարաբերվող մարդկանց մոտ ծնվող որոշակի հույզերի և զգացմունքների հիման վրա [3, էջ 84-87]:

Հասարակական հարաբերությունները երբեմն ավելի են կապվում «շփում» հասկացության հետ քան «միջանձնային հարաբերություններ» հասկացության հետ: Օրինակ Բ.Լոնովը գտնում է, որ հենց մարդկանց ամենօրյա շփման և գործունեության մեջ է որ առաջանում և զարգանում են հասարակական հարաբերությունները [16, էջ 242-271]: Լ.Բուեվան նշում է որ շփումը անմիջականորեն դիտարկվող և ապրվող իրականություն է, ինչպես նաև հասարակական հարաբերությունների կոնկրետացումն ու անհատականացումը: Եվ ինչպես հասարակությունը չի կարող գոյություն ունենալ

որպես առանձին «դեմք», այնպես էլ հասարակական հարաբերությունները չեն կարող գոյություն ունենալ մարդկանց շփումից և կենսագործունեությունից դուրս [7, էջ 116]:

Ա.Բողալևը նույնպես շփումը բնութագրում է որպես միջանձնային կապերի և փոխազդեցությունների, հետևաբար և միջանձնային հարաբերությունների, ստեղծման գործընթաց, որը պայմանավորում են հասարակական հարաբերությունները [5, էջ 6]: Բուեվայի հասկացմամբ հասարակական հարաբերությունների սոցիալ-հոգեբանական յուրատիպությունը կայանում է նրանում, որ վերջինս առաջանում է օբյեկտիվ սոցիալական երևույթների, իրավիճակների, կապերի, գործունեության ձևերի նկատմամբ առանձին անձանց սուբյեկտիվ վերաբերմունքից [7, էջ 116–117]: Եվ Բուեվան [7, էջ 110–117] և Լոմովը պնդում են որ շփման մեջ, ի տարբերություն այլ տեսակի փոխազդեցությունների, դրսևորվում են մարդկանց հոգեկան որակները [16, էջ 300]: Այս տեսանկյունից ըստ Բուեվայի հասարակական հարաբերությունները և շփումը այնուամենայնիվ միասին կազմում են մեկ գործընթաց, որի բովանդակությունը կազմում են հասարակական հարաբերությունները, իսկ շփումը՝ գործընթացի անհատականացված ձևերը: Այսինքն խոսելով օրինակ տնտեսական հարաբերությունների, որպես հասարակական հարաբերությունների տեսակի, մասին հնարավոր է միայն գիտական վերացարկման մակարդակում, այնինչ իրականում դրանք անքակտելիորեն կապված են շփման հետ, քանի որ իրականացվում (տնտեսական հարաբերությունները) են մարդկանց միջոցով: [7, էջ 118] Կազանը առաջ է քաշում մի գաղափար, համաձայն որի հասարակական հարաբերությունները ծնվում են մարդկանց միջև շփման արդյունքում, սակայն ժամանակի ընթացքում ձեռք են բերում անկախություն և շարունակում են իրեց գոյությունը ան-

հատների գիտակցությունից անկախ և որ նույնիսկ տեղի է ունենում հակառակը. այդ հարաբերությունները սկսում են ազդել մարդկանց միջև իրականացվող շփման վրա [11, էջ 134–136]:

Հասարակական հարաբերությունները դրանք հարաբերություններն են հասարակության կառուցվածքային տարրերի միջև: Դրանց յուրահատկություններն ու տարբերությունները առաջին հերթին բխում են հենց հասարակության առանձնահատկություններից. տնտեսական կառուցվածքից, գործունեության պայմաններից, սեփականության ձևերից և այլն [7, էջ 120]:

Ի վերջո, կարելի է ընհանրացնելով ասել, որ հասարակական հարաբերությունները ընդհանուր առմամբ ներկայացվում են որպես անդեմ [7, էջ 121], միջնորդավորված և վերանձնային [11, էջ 136–137] հարաբերություններ, որոնցում բացվում են մարդկանց կենսագործունեության ոլորտների, աշխատանքի տեսակների և հանրույթների միջև գոյություն ունեցող սոցիալական կապերը:

Միջանձնային հարաբերությունները շփման համարեքսպում

Հասարակական հարաբերությունների և միջանձնային հարաբերությունների միջև եղած կապի վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու շփման տեղն ու դերը արտաքին աշխարհի հետ մարդու կապերի բարդ համակարգի մեջ:

Հարաբերությունների հոգեբանության մեջ կարևոր խնդիրներից է «շփում» հասկացության ճիշտ մեկնաբանությունը: Վերջինս հաճախ օգտագործվում է որպես «հաղորդակցման» (*Communication*) հոմանիշ: Ընդհանուր առմամբ դա այդպես էլ կա, սակայն վերջինս մի փոքր այլ իմաստային երանգավորում է ստանում գործունեության տեսության շրջանակներում:

Համաձայն գործունեության տեսության՝ և՛ հասարակական, և՛ միջանձնային հարաբերությունները բացա-

հայտվում և իրականացվում են հենց շփման մեջ: Այսինքն շփման հիմքերը հենց մարդկային նյութական կենսագործունեության մեջ են: Ա.Ն.Լեոնտևի բնորոշմամբ մարդու վերաբերմունքը իրեն շրջապատող առարկայական աշխարհի նկատմամբ միշտ միջնորդավորված է այլ մարդկանց, հասարակության նմատմամբ իր վերաբերմունքով [14, էջ 289]: Միջանձնային հարաբերությունները լինելով հարաբերությունների յուրահատուկ ձև այնուամենայնիվ իրականացվում են կոնկրետ հասարակական համակարգի ներսում՝ փոխազդելով վերջինիս հետ: Այդ փոխազդեցության արդյունքում վերջիններս անընդհատ փոխակերպում են միմյանց հարաբերվելով մեկը մյուսի հետ ֆիզիկական, նյութական, հուզական, վարքային և իմաստային մակարդակներում:

Անդրևան նշում է, որ առանց շփման հնարավոր չէ պատկերացնել մարդկային հասարակությունը, քանի որ հենց շփումն է որ կապում և միավորում է մարդկային անհատներին մեկ համակարգի մեջ: Այս առումով շփումը ընկալվում է և՛ որպես հասարակական հարաբերությունների, և՛ որպես միջանձնային հարաբերությունների իրականացում, ռեալիզացիա [3, էջ 88–90]: Այստեղից հետևում է որ միջանձնային հարաբերությունները և հասարակական հարաբերությունները որպես հարթություններ հատվում են «շփման» ժամանակ-տարածության մեջ:

Սակայն շփման մեջ տարբեր կերպ են իրագործվում միջանձնային և հասարակական հարաբերությունները: Այդ իսկ պատճառով այդ վերջիններիս իրագործման գործընթացները ուսումնասիրվում են տարբեր գիտությունների շրջանակներում: Օրինակ էթե շփումը որպես միջանձնային հարաբերությունների իրագործում ուսումնասիրվում է հոգեբանության, սոցիալական հոգեբանության մեջ, ապա խմբերի միջև եղած հարաբերություններն առավել

շատ սոցիոլոգիայի ուսումնասիրության օբյեկտն են:

Շփումը պարտադրված է մարդկանց համակեցության փաստով, այդ պատճառով այն անխուսափելիորեն իրագործվում է ամենատարբեր միջանձնային հարաբերություններում՝ շփվողների միմյանց նկատմամբ և դրական և բացասական վերաբերմունքի առկայության դեպքում [3, էջ 88–90]: Միանշանակ դա ազդում է հարաբերությունների որակի, ընթացքի և արդյունքի վրա, սակայն այդ նույնը գործում է նաև մակրոմակարդակի վրա, երբ շփվող կողմերը ոչ թե առանձին անձիք են այլ [3, էջ 90–91]: Ընդ որում պարտադրված շփման երևույթը անտագոնիստական խմբերի կամ այդ խմբերի ներկայացուցիչների միջև ավելի հաճախ հանդիպող երևույթ է քան պարտադրված շփումը միջանձնային հարաբերություններում [3, էջ 88–91]:

Միջանձնային հարաբերությունները հաղորդակցման, շփման եվ գործունեության համատեքստում

Միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունների մեկ այլ խումբ էլ կարելի է դիտարկել ուսումնասիրելով վերջինս հաղորդակցման, շփման և գործունեության համատեքստերում: Եթե շփման և գործունեության համատեքստում միջանձնային հարաբերությունները հանդես են գալիս ավելի որպես անձի և հասարակության զարգացման անհրաժեշտ պայման, ապա հաղորդակցման համատեքստում առավել ուշադրություն է դարձվում միջանձնային հարաբերությունների կոմունիկատիվ և իմաստաբանական կողմերի վրա:

Քանի որ շփումը, այսպես ասած, «պարտադրված» է մարդկային համակեցությամբ, ապա հարաբերությունների առարկան միշտ գործունեությունն է: Ընդ որում հարաբերությունների առարկան կարող են լինել գործունեության ամենատարբեր ձևերը [17, էջ 24–26]

Շփումն ու գործունեությունը ինչպես

անձի, այնպես էլ հասարակության զարգացման անհրաժեշտ և համընդհանուր պայման է: Ցանկացած գործունեություն ենթադրում է մարդու ներգրավումը որոշակի հասարակական հարաբերությունների մեջ [7, էջ 110]: Շփման ընթացքում կողմերի միջև իրականացվում է գործունեությունների միջոցների և արդյունքների փոխադարձ փոխանակում [16, էջ 242–271]: Լոմովի հավաստմամբ, չի կարելի շփումն ու գործունեությունը դիտարկել միայնցից անջատ որպես անկախ և զուգահեռ զարգացող գործընթացներ: Այլ ընդհակառակը, շփումն ու գործունեությունը մեկ գործընթացի երկու կողմեր են որոնց միջև գոյություն ունեն շատ անցումներ և փոխակերպումներ [16, էջ 242–271]:

Շփումը ոչ միայն հոգևոր, այլև նյութական, սոցիալական գործընթաց է որում տեղի են ունենում փորձի, ընդունակությունների, կարողությունների, հմտությունների, գործունեությունների արդյունքների փոխանակում: Եվ քանի որ շփումը սերտաճած է մարդկանց պրակտիկ գործունեության հետ՝ այն կարող է իրագործել իր գործառույթները միմիայն գործունեության հետ մեկտեղ և գործունեության մեջ [16, էջ 242–271]: Ընդ որում շփման իրական միջնորդներ կարող են հանդիսանալ ինչպես հոգևոր գործունեության արդյունքները (գաղափարներ, կարծիքներ և այլն), այնպես էլ սոցիալական արժեքները և մարդկային փորձը կրող նյութական իրերն ու օբյեկտները [7, էջ 110]:

Բուեվան դիտարկում է շփումը նաև որպես սուբյեկտի ակտիվության ինքնուրույն և յուրահատուկ տեսակ, որի արդյունքը ոչ թե նյութական կամ իդեալական առարկան է, այլ միջանձնային հարաբերությունները [7, էջ 110]: Այսպիսով, միջանձնային հարաբերությունները ոչ միայն բացահայտվում և իրագործվում են շփման մեջ [3, էջ 88–90], այլև հանդիսանում են վերջինիս արդյունքը:

Շփման ոլորտը, միջոցներն ու շար-


ժընթացը պայմանավորված են շփվող կողմերի սոցիալական գործառույթներով և հասարակական հարաբերությունների համակարգում իրենց գրաված դիրքով [7, էջ 120–125]:

Շփման ընթացքում տեղի է ունենում անհատների ռացիոնալ և հուզական փոխազդեցություններ, ինչպես նաև կամային փոխգործակցություն: Շփման ընթացքում բացահայտվում և ձևավորվում են կողմերի տրամադրությունները, մտքերը, հայացքները: Տեղի է ունենում սովորությունների, վարքատեսակների, հայացքների փոխանցում և փոխակերպում [7, էջ 111]: Շփման ընթացքում տեղի է ունենում նաև անձնային իմաստների, իմաստային կառույցների փոխանցում, կոնկրետ երևույթների իմաստավորում, վերաիմաստավորում և իմաստային ներկայացվածության փոխակերպում:

Շփումը հանդես է գալիս նաև գործունեության և ընդհանրապես վարքի սոցիալական դետերմինանտ [7, էջ 112]: Միջանձնային հարաբերություններն իրենց հերթին պարբերաբար հստակեցվում, փոխակերպվում և հղկվում են, զարգանում են շփման ընթացքում և միջոցով:

Գործունեության տեսությունից դուրս և ընդհանուր գիտական մակարդակում շփումը դիտարկելիս ընդունված է գործածել «հաղորդակցում» եզրույթը:

Ընդհանուր առմամբ, հաղորդակցումը գործընթաց է որի ժամանակ իրավիճակը, իրադրությունը մի վայրից փոխանցվում է դեպի մեկ այլ վայր՝ սիմվոլների միջոցով [48]: Միջանձնային հաղորդակցման էությունն ու կառուցվածքը բացահայտող մոդելներից ամենատարածվածը Շենոն–Ուիվերի մոդելն է (Shannon–Weaver’s Model of Communication):



Գծապատկեր 1. Հաղորդակցման Շենոն–Ուիվերի մոդելը:

Շենոն–Ուիվերի մոդելը ներառում է 8 հիմնական բաղադրիչ, որոնք են՝ աղբյուրը կամ ուղարկողը (*Source/Sender*), ծածկագրողը (*Encoder*), հաղորդագրությունը (*Message*), ալիքը (*Channel*), աղմուկը (*Noise*), ապածածկագրողը (*Decoder*), ստացողը (*Receiver*) և հետադարձ կապը (*Feedback*):

- **Աղբյուրը կամ ուղարկողը** հաղորդակցման նախաձեռնող կողմն է, որը նպատակ ունի փոխանցել կոնկրետ տեղեկույթ կամ կոնցեպտ և այդ իսկ պատճառով էլ կարիք ունի հաղորդակցման գործընթացի:

- **Ծածկագրողը:** Հաղորդակցման գործընթացը սկսելու որոշումից հետո անհրաժեշտություն է առաջանում փոխանցման ենթակա տեղեկույթը կամ կոնցեպտը որևէ ձևաչափով ծածկագրման:

- **Հաղորդագրությունը** այն տեղեկույթն է կամ կոնցեպտը որը պետք է փոխանցվի մի կետից մյուսը:

- **Ալիքն** այն ճանապարհն է որով պետք է անցի հաղորդագրությունը (բանավոր, գրավոր կամ այլ տեսակի):

- **Աղմուկը** այն խաթարումն է որի արդյունքում փոփոխվում է սկզբնական հաղորդագրությունը: Աղմուկ կարող է հանդիսանալ ցանկացած բան, որն աղավաղում է հաղորդագրությունը: Այն կարող է լինել ֆիզիկական կամ իմաս-

տաբանական:

- **Ապածածկագրողը:** Մինչ տեղեկույթը կհասնի հասցեատիրոջը՝ այն պետք ապածածկագրվի, որպեսզի ներկայացվի ստացողի համար հասկանալի իմաստաբանական ձևաչափով:

- **Ստացողը** կամ **ընդունողը** հաղորդակցման մոդելի այն բաղադրիչն է որի համար էլ նախատեսված է կոնկրետ տեղեկույթը կամ կոնցեպտը:

- **Հետադարձ կապը:** Իմաստավորված հաղորդակցման համար անհրաժեշտ է, որպեսզի ստացողը ապահովի ուղարկողին կամ աղբյուրին հետադարձ կապով: Հետադարձ կապը հնարավորություն է տալիս աղբյուրին իմանալ՝ արդյոք հաջող էր հաղորդակցումը թե ոչ [48]:

Այսպիսով՝ միջանձնային հարաբերությունների իրագործումը հաղորդակցման միջոցով ներկայացվում է որպես որևէ աղբյուրից՝ կոնկրետ ստացողին տեղեկույթի փոխանցման գործընթաց: Վերջինս կարելի է ներկայացնել հետևյալ մոդելով՝ ո՞վ – ի՞նչ ասվեց – ի՞նչ ալիքի միջոցով – ու՞մ – ինչպիսի՞ արդյունքով [53]: Միջանձնային հարաբերություններում, այս տեսանկյունից, առաջնային նշանակություն է ձեռք բերում այն թե որքան ճշգրիտ և համարժեք են տեղեկույթի կամ կոնցեպտի մեկնաբանությունները ստացողի կողմից. կոգնիտիվ

հոգեբանության մեջ նման դեպքերում խոսվում է ընկալումների համարժեքության մասին: Հաղորդակցման որոշ տեսաբանների կարծիքով հաղորդակցման էությունը կայանում է ոչ թե տեղեկատվության փոխանակման այլ մեկնաբանությունների կիսման (անզլերեն Share

բառի իմաստով) մեջ [53]:

Միջանձնային հաղորդակցմանը նույնպես, ինչպես և շփմանը գործունեության տեսության շրջանակներում, վերագրվում են մարդկանց վարքի ուղղորդման, համակարգման և ներագման գործառույթներ [53]:

Պ Բ Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ա.Ա. Զարարյան, Փրկխոսփայության պատմություն / Պատ. խմբ.՝ պրոֆ. Հ.Ղ.Միրզյան. Եր.: Նաիրի, 2000: – 336 էջ:
2. Ա.Ա. Նալչաթյան, Հոգեբանական բառարան, Եր.: Լոյս, 1984 թ.: – 240 էջ:
3. Андреева Г.М. Социальная психология: Учебник. – 3-е изд. –М.: Наука, 1994. –325с.
4. Аристотель. Сочинения: В 4-х т. Т. 4. – М.: Мысль, 1983. – 830 с.
5. Бодалев А. А. Восприятие и понимание человека человеком. — М.: Изд-во Моск. ун-та, 1982. – 200 с.
6. Бодалев А.А. // Мясичев В.Н. Психология отношений: Под редакцией А.А.Бодалева / Вступительная статья А. А. Бодалева. – М.: Издательство «Институт практической психологии», Воронеж: НПО «МОД ЭК», 1995. – 356 с.
7. Буева Л.П. Человек: деятельность и общение. М.: «Мысль», 1987. – 216 с.
8. Гоббс Т. Сочинения в 2-х т. Т. 2. – М.: Мысль, 1991. – 731 с.
9. Гуссерль Э. Логические исследования. Картезианские размышления. Кризис европейских наук и трансцендентальная феноменология. Кризис европейского человечества и философии. Философия как строгая наука. – Мн.: Харвест, М.: АСТ, 2000. – 752 с.
10. Духновский С.В. Субъективная оценка межличностных отношений. Руководство по применению. СПб.: ООО Издательство «Речь», 2006. – 54 с.
11. Каган М. С. Мир общения: Проблема межсубъектных отношений.— М.: Политиздат, 1988. – 319 с.
12. Коломинский Я.Л. Психология взаимоотношений в малых группах (общие и возрастные особенности): Учеб. пособие. – Минск: ТетраСистемс, 2000. – 432 с.
13. Кузьмин Е.С. Основы социальной психологии. Л., ЛГУ, 1967. – 174 с.
14. Леонтьев А.Н. Деятельность. Сознание. Личность. – М.: Политиздат, 1975. – 304 с.
15. Локк Дж. Сочинения: В 3 т. Т. 3. – М.: Мысль, 1988. – 668 с.
16. Ломов Б. Ф. Методологические и теоретические проблемы психологии. – М.: Наука, 1984. – 444 с.
17. Мясичев В.Н. Психология отношений: Под редакцией А.А.Бодалева / Вступительная статья А. А. Бодалева. – М.: Издательство «Институт практической психологии», Воронеж: НПО «МОД ЭК», 1995. – 356 с.
18. Ойзерман Т.И. История диалектики. Немецкая классическая философия. М.: Мысль, 1978. – 365 с.
19. Платонов К.К. О системе психологии. М.: Мысль, 1974. – 216 с.
20. Сафьянов В.И. Этика общения: Учебное пособие. М.: Изд-во МГУП «Мир книги», 1998. – 164 с.
21. Ситниченко Л.А. Человеческое общение в интерпретациях современной западной философии. – Киев: Наукова думка, 1990. – 112 с
22. Спиноза Б. Избранные произведения. М.: Политиздат, 1957. – 164 с.
23. Фейербах Л. Избранные философские произведения: в 2-х т. М.: Госполитиздат, 1955. Т. 2. – 943 с.
24. Хабермас Ю. Познание и интерес // Философские науки, 1990, № 1.; – с. 91–96.
25. Юм Д. Сочинения. В 2-х т.: Пер. с англ. – М.: Мысль, 1965. Т. 1 – 847 с., т. 2 – 927 с.
26. Altman, I. & Taylor, D. (1973). Social penetration: The development of interpersonal relationships. New York: Holt.
27. Argyle M. (1991). Psychologia stosunków mi dzyludzkich. Warszawa.
28. Arias-Carrión O, Pöppel E (2007). Dopamine, learning and reward-seeking behavior. Acta Neurobiologiae Experimentalis 67 (4): 481–488.

29. Baxter, L. A. (2004). A tale of two voices: relational dialectics theory. *The Journal of Family Communication*, 4(3&4): 182–192.
30. Berger, C. R., Calabrese, R. J. (1975). Some Exploration in Initial Interaction and Beyond: Toward a Developmental Theory of Communication. *Human Communication Research*, 1: 99–112.
31. Berger, C.R. & Bradac, J. J. (1982). Language and social knowledge: Uncertainty in interpersonal relations. E. Arnold.
32. Berscheid, E. (1999). The greening of relationship science. *American Psychologist*, 4 54 (4): 260–266.
33. Boelen, P.A. & Carleton, R.N. (2012). Intolerance of uncertainty, hypochondriacal concerns, obsessive–compulsive symptoms, and worry. *The Journal of Nervous and Mental Disease*, 200(3): 208–13.
34. Bowlby, J. (1982). Attachment and loss. Vol I: Attachment. New York: Basic Books.
35. Carleton, R.N., Mulvogue, M.K., Thibodeau, M.A., McCabe, R.E., Antony, M.M. & Asmundson, G.J. (2012). Increasingly certain about uncertainty: Intolerance of uncertainty across anxiety and depression. *Journal of Anxiety Disorders*, 26(3): 468–79.
36. Gallese, V. (2006). The roots of empathy: the shared manifold hypothesis and the neural basis of intersubjectivity. *Psychopathology* 2003, 36: 171–180.
37. Gentes, E.L. & Ruscio, A.M. (2011). A meta-analysis of the relation of intolerance of uncertainty to symptoms of generalized anxiety disorder, major depressive disorder, and obsessive–compulsive disorder. *Clinical Psychology Review* 2011 Aug; 31(6): 923–33.
38. Griffin, E. (2011). A first look at communication theory. (8th edition). New York: McGraw–Hill.
39. Grupe, D.W. & Nitschke, J.B. (2013). Uncertainty and anticipation in anxiety: an integrated neurobiological and psychological perspective. *Nature Reviews Neuroscience* 2013 Jul; 14(7): 488–501.
40. Lanfeld, E.S. & Saunders, D.R. (1961). Anxiety as «effect of uncertainty»: an experiment illuminating the OA subtest of the WAIS. *Journal of Clinical Psychology* 1961 Jul;17: 238–41.
41. Levinger, G. (1983). Development and change. In H.H. Kelley, et al. (Eds.), *Close relationships*. (pp. 315–359). New York: W.H. Freeman and Company.
42. Miller, K. (2005). *Communication theories: Perspective, processes and contexts* (2nd ed). NY: McGraw Hill, 176–183.
43. Myers, I.B. (1980). *Gifts Differing: Understanding Personality Type*. Davies–Black Publishing.
44. Myron, H. (2006). Psychobiological Roots of Early Attachment. *Current Directions in Psychological Science* 15: 84–88.
45. Nęcki Z. (1996). *Komunikacja międzyludzka*. Kraków.
46. Rawlins, W. K. (1989). A dialectical analysis of the tensions, functions, and strategic challenges of communication in young adult friendships. In J.A. Anderson (Ed.), *Communication Yearbook 12* (pp. 157–189). Newbury Park, CA: Sage.
47. Rizzolatti G, Fadiga, L, Gallese V, Fogassi L. (1996). Premotor cortex and the recognition of motor actions. *Brain Research: Cognitive Brain Research* 3: 131–141.
48. Shannon, C.E. & Weaver, W. (1963). *The Mathematical Theory of Communication*. Urbana, IL: University of Illinois Press.
49. Shimkunas, A.M. (1970). Anxiety and expectancy change: the effects of failure and uncertainty. *Journal of Personality and Social Psychology* 1970 May;15(1): 34–42.
50. Schutz, W.C. (1958). *FIRO: A Three-Dimensional Theory of Interpersonal Behavior*. New York, NY: Rinehart
51. Stern, D. (1985). *The interpersonal world of the infant*. New York: Basic Books.
52. Strathearn, L. (2011). Maternal Neglect: Oxytocin, Dopamine and the Neurobiology of Attachment. *Journal of Neuroendocrinology* 23: 1054–1065.
53. Tedeschi, J.T. (1996). Interpersonal communication. Corsini, R. & Auerbach, A. (Eds.) *Concise Encyclopedia of Psychology*. New York: Wiley.
54. The Interpersonal Web at Northern Virginia Community College. Types of Interpersonal Relationships <http://novaonline.nvcc.edu/eli/spd110td/interper/reasons/reasons.html>
55. Thomas, I. (2001). The neurobiology of attachment. *Nature Reviews Neuroscience* 2: 129–136.
56. Tronick, E.Z. (2003). Things still to be done on the still–face effect. *Infancy* 2003, 4: 475–482.
57. Wise, R.A. (1996). Addictive drugs and brain stimulation reward. *Annual Review of Neuroscience* 19: 319–40.
58. Yalom, I.D. (2008). *Patrząc w słońce: Jak przezwyciężyć grozę śmierci*. Warszawa: Instytut Psychologii Zdrowia PTP.

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА МЕЖЛИЧНОСТНЫХ ОТНОШЕНИЙ

АРМАН БЕГОЯН

*АГПУ им. Х.Абовяна, г. Ереван, РА, аспирант
Главный специалист, Психологическая служба "Хильфманн",*

В статье представлено общее описание межличностных отношений, начиная от античных представлений и заканчивая современными психологическими интерпретациями. В статье также представлены основные теории межличностных отношений, такие как теория привязанности (в том числе теория привязанности матери и младенца и нейробиология межличностных отношений), теория социального проникновения, теория редукации неопределенности, диалектика отношений, теория фундаментальной ориентации межличностных отношений, и пятиэтапная модель Джорджа Левингера.

GENERAL CHARACTERISTICS OF INTERPERSONAL RELATIONS

ARMAN BEGOYAN

*PHD student, The Armenian State Pedagogical University after Kh.Abovyan,
Yerevan, Republic of Armenia
Chief Specialist, Hilfmann Psychological Services, Yerevan, Republic of Armenia*

In the article were given an overview of interpersonal relations, starting from ancient philosophical views to modern psychological interpretations. The main theories of interpersonal relations, like the Attachment theory (including Mother-infant attachment theory, and neurobiology of interpersonal relations), the Social penetration theory, the Uncertainty reduction theory, Relational dialectics, the Fundamental Interpersonal Relations Orientation (FIRO), George Levinger's 5-stage model, were also presented. In the article also discussed interpersonal relations in the context of public relations, communication, contact, and activity.

ԱՆԱՀԻՏ ԶԻՋՅԱՆ

Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ –ի սոցիոլոգիայի և սոցիալական աշխարհային ամբիոնի սահարենոր, փիսիսիայական գիտությունների թեկնածու

ՌՈՍԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ

Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ –ի սոցիոլոգիայի և սոցիալական աշխարհային ամբիոնի սահարենոր, փիսիսիայական գիտությունների թեկնածու

ՆԵՐՍԵՍ ՔՈՉԱՐՅԱՆ

Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ –ի սոցիոլոգիայի և սոցիալական աշխարհային ամբիոնի սասյիրանոր

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵՆՍԱԿԵՐՊԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆՏԱՆԻՔԻ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Հասարակության ներկա վիճակը վերլուծվում, հիմնավորվում ու բացատրվում է ելնելով տնտեսական, դեմոկրատական և այլ զարգացողական տեսություններից: Հեղինակների խորին համոզմամբ՝ հայոց կյանքում թե՛ հասարակության, թե՛ նրա առանձին անդամների, թե՛ ընտանիքների ծանր վիճակում հայտնվելու պատճառները բարոյական լքվածության, մարդկային հոգու և հենց հոգևոր կյանքի նկատմամբ անտարբերության խնդիրների ամբողջության մեջ են, և այդ խնդիրների հաղթահարման ուղին քրիստոնեական ակունքներին վերադառնալու անհրաժեշտության գիտակցման արթնությունն է: Հետազոտության հիմքում ընկած է հասարակական սեկտորի շրջանակներում իրականացված խիստ անապահով ընտանիքների բարոյահոգեբանական մթնոլորտի և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման ուղղված սոցիալական ծրագրի արդյունքների վերլուծությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ընտանիք, բարոյականություն, քրիստոնեական կենսակերպ, սոցիալականորեն նշանակալի կարիք

Ընտանիքի նկատմամբ պետության կողմից իրականացվող քաղաքականությունը երկարաժամկետ հեռանկարային ներդրում է՝ անձանց, խմբի, հանրային, ազգի ու հասարակության բուն մարդկային ինքնության, փոխվերաբերմուն-

քի, փոխհարաբերությունների ու փոխգործունեության սոցիալականորեն նշանակալի կարիքային խնդրակարգում հասարակության բարոյա-հոգևոր ներկրթության ու վերընթացի և այդպե՛ս՝ քաղաքակրթական կայացման ու ձեռքբերումների ակնկալիքով, քանզի կայուն և լիարժեք գործառնող ընտանիքն է ամենայն այդ համախմբությունների ու ողջ մարդկության կայուն զարգացման և բարգավաճման հիմքը: Վերջին տարիների ընթացքում Հայաստանում տեղի ունեցող սոցիալական, տնտեսական փոխակերպումները դրականի հետ մեկտեղ ունեցել են նաև բացասական անդրադարձ հասարակության կյանքում, առաջ բերելով այնպիսի երևույթներ, ինչպիսին են՝ զանգվածային աղքատությունն ու գործազրկությունը [1, էջ 183–197], մարդկանց բարոյալքությունն ու արժեքանորմային համակարգի խարխալումը, անկառավարելի միգրացիոն գործընթացները: Խորհրդային տարիներին ձևավորված և զարգացած ինստիտուցիոնալ ցանցը, որը բազմաձյուղ մասնագիտացված ծառայություններ էր մատուցում հասարակության խոցելի խմբերին և հատկապես ընտանիքներին, նույնպես հայտնվեց դժվարին իրավիճակում: Լրացուցիչ ու առավել խորհրդածությունների մեջ է սուգում միտքը նշանակալի այն իրողությունը, որ փոփոխությունների այս

բոլորապատույտում հայ ընտանիքը, որը դարեր շարունակ հանդիսացել է հասարակությունը, նրա արժեքային կողմնորոշումն ու համակարգը կայունացնող կարևորագույն գործոն, նույնպես հայտնվեց ճգնաժամի մեջ:

Տարբեր մասնագետներ հասարակության ներկա վիճակը վերլուծում, բացատրում ու հիմնավորում են, ելնելով տնտեսական, դեմոկրատական և այլ զարգացողական տեսություններից: Հեղինակների խորին համոզմամբ՝ մարդկանց ազգերի ու կոնկրետորեն նաև հայոց կյանքում՝ թե՛ հասարակության, թե՛ նրա առանձին անդամների, թե՛ ընտանիքների ծանր վիճակում հայտնվելու պատճառները բարոյական լքվածության, մարդկային հոգու և հենց հոգևոր կյանքի նկատմամբ անտարբերության խնդիրների ամբողջության մեջ են, և այդ խնդիրների հաղթահարման ուղին քրիստոնեական ակունքներին վերադառնալու անհրաժեշտության գիտակցման արթնությունն է, մարդկության՝ սոցիալական-ազգային-անհատական միահյուս բաղադրիչներով հանդերձ, **աստվածաբար և հոգևոր ու մշակութային ընդհանուր ինքնության** ճանաչողությունը, այսուհետ և՛ ապրելու, գործելու հոգևոր ու առիներող իրական նպատակի ճշգրտումը:

Այսօր Հայաստանի զարգացմանն ուղղված կառավարության ողջ ռազմավարությունը կառուցված է տնտեսական զարգացման հայեցակարգի վրա, որի տեսական մշակումների մերձավոր ու հեռանկարային հնարավորություններում և իրագործումներում դեռ նկատելի չեն կայուն վերընթացություն ու միանշանակորեն արդյունավետություն: Ըստ այդ հայեցակարգերի, որպես առաջնային նպատակ է դիտարկվում հասարակության տնտեսական աճը, կարծողական՝ խաբուսիկ ու պատրանքային բնույթի այն մտայնությամբ, թե՛ տնտեսությունը որպես հետևանք կհանգեցնի ընդհանուր զարգացման ասպհովմանը՝ կր-

թական, առջապահական, վերջին հաշվով նաև բարոյական, սակայն, ինչպես ցույց է տալիս նմանատիպ մոտեցումների վրա հիմնված և զարգացած երկրների փորձը, արդյունքում ստեղծվում է լոկալ նյութական որոշակի «բարեկեցություն», որոշ չափով՝ առջապահական, կրթական, մշակութային ծառայություններից օգտվելու հնարավորություն: Տնտեսական զարգացման հայեցակարգի շրջագծում՝ մտային տեսադաշտում ու հեռանկարում, թեև կարևորվում է մարդու կրթություն ստանալու, առողջ ապրելու ու զարգանալու հնարավորությունների աճը, սակայն կյանքի կազմակերպման տեսակետից՝ կյանքի գերագույն նպատակն է դառնում, ոչ թե մարդու անձի ձևավորումը՝ մարդկային իր ինքնության կոչմանն ու ներքին ունակություններին համապատասխան, այլ՝ տնտեսության համար բարձր արդյունավետություն ունեցող աշխատուժի ձևավորումը: Մարդը դիտվում է ոչ որպես գերագույն արժեք և բուն նպատակ, այլ՝ գուտ միջոց և հենց սպասարկու ու կատարող՝ տնտեսության ու տնտեսահիմն քաղաքական գործընթացների, ըստ էության, ի համեմատ ու նաև ի հաշիվ այլոց՝ նյութական պոտենցիայի հարածուն առավելության միայն ձգտող իդեանների, դրանց դիտավորության (մտովի տեսանության) և ըստ այդմ՝ նախաձեռնությունների ու գործունեության կերպարանման ու կատարումի: **Մեփական պեպոլոթյան** որպես այդպիսին գոյության ու գործառնության համար **հիմնորոշ**՝ իր քաղաքացիների նկատմամբ **պարզքի ու պարզականության** [2, էջ 230]՝ **նրանց մարդկային ինքնությամբ կենալու անհրաժեշտ ու նախընտրելի կերպը հնարավորելու ու նաև ասպհովելու** [3, էջ 125, 126, 130], և ուրեմն՝ սոցիալականորեն նշանակալի կարիքավորության խնդրակարգի լուծմանն ուղղված «հետաքրքրությունների» շրջանակներից և նպատակաւետ հոգացության բուն նշանակետից

դուրս են մնում և, որպես հետևանք, ռեսուրսների բաշխման և գործընթացների իրականացման միայն մնացորդային մասնաբաժնում «տեղ» գտնում անձի ձևավորման, սոցիալականացման համար հիմնորոշ բարոյահոգևոր, գիտամշակութային արժեքները: Արդյունքում պետական և հաճախ նաև հասարակական կառույցների **հետաքրքրության ու հոգացության** տեսադաշտից դուրս են մնում կամ մնացորդային ուշադրության արժանանում **մարդկային ինքնության, առանձնակեցության ու համակեցության և մշակույթի բարեկարգության** ստեղծագործաբար՝ տեսական ու գործնական իմաստությամբ միայն հնարավոր քաղաքակրթական ձեռքբերումների ողջ խնդրակարգը:

Հարկ է ամրագրել, որ տնտեսականը՝ հասարակության կյանքի **«մարմինը»**, հանրույթի, ազգի ու ողջ մարդկության քաղաքակրթական, որում և՛ բարոյահոգևոր, գիտամշակութային, սոցիալական, բովանդակ զարգացման խնդրակարգում որպես առաջնահիմն գործոն դիտարկող մտայնությունը, որը սոցիալական ուսմունքների պատմության մեջ ամենևին էլ նոր չէ, ըստ էության, կարելի է բնորոշել որպես **կանխադատություն**, ինչը անհրաժեշտ ու նաև նախընտրելի պիտոյականությամբ հարկ է հաղթահարել: **Անձանց, խմբերի, հանրույթի, ազգի ու հասարակության կյանքի «մարմինը»՝ փնտրեսությունը, չի կարող սրեղծել այդ կյանքի «հոգին»՝ իմաստությունը:** Ընդհակառակը, միայն «հոգին» և որպես այդպիսին՝ մարդկային ինքնության ու կյանքի (ներքինի ու արտաքինի) իմաստությունը կարող է ստեղծել բարեկարգ տնտեսավարող կենսակերպ: **Իմաստությունն է ստեղծում տնտեսությունն, այլ ոչ թե տնտեսությունը՝ իմաստություն:**

Հայ ընտանիքը դարեր շարունակ գործառնում էր որպես սոցիալականացման առաջնային ազենատ՝ կրթության ու դաստիարակության խնդրակարգում իր

երազանքով և ըստ այդմ՝ դիտավորության ու կատարումի դրական բաժնեչափով սերմանելով ու արմատավորելով իր զավակների և անդամների ներաշխարհում ու կենսակերպում՝ ներքինում ու արտաքինում, առողջ բարոյահոգեբանական արժեքների համակարգ, որի արդյունքում անձը կարողունակ լինի ազատ և պատասխանատու ընտրություն կատարել կյանքում իր հետագա կայացման ու գործառնության ընթացքում: «Հասարակությունը, որը չի կարողանում կազմակերպել ընտանիքի բնական և արդյունավետ աջակցությունը, չորացնում է իր սեփական գոյության աղբյուր» [4, էջ 20]:

Մեր խորին համոզմամբ՝ հասարակության և յուրաքանչյուր հայ ընտանիքի սոցիալական, նյութական, կենցաղային ծանր վիճակի գլխավոր պատճառներից մեկը հոգևոր-բարոյական կյանքի կամ դրա որևոր բաղադրիչի նվազումն ու անհրաժեշտության գիտակցման բացակայությունն է անձանց, խմբերի, համայնքության կենսակերպում: Ըստ է. Դյուրկհեյմի, հենց բարոյականությունն է առանձին անհատներին միասնական սոցիալական օրգանիզմի մեջ ինտեգրող հիմնական ու անմիջական ուժը, գրում է է. Տիրիակյանը, և սոցիալական կյանքը վտանգող ու ապակայունացնող գործոնները ճշմարտապես պատկերացնելու, կանխելու ու չեզոքացնելու ուղիները նշմարելու համար հարկավոր է նկատի ունենալ բարոյականության՝ սոցիումն ինտեգրող այդ գորությունը՝ դերն ու նշանակությունը: Երբ թուլանում է հասարակության, ընտանիքի բարոյական հիմքը, վտանգի տակ է հայտնվում նրա կառուցվածքային կայունությունը: Եվ ձգնաժամը, որն ընդգրկում է հասարակության կյանքի քաղաքական, տնտեսական, սոցիալական, ու այլ ոլորտները, իր հիմքում հենց բարոյականության ձգնաժամն է [5]:

Որո՞նք են ընտանեկան բարոյականության ձգնաժամի հայտանիշները:

Անդրադառնանք որոշ վիճակագրական տվյալների մեկնաբանական վերլուծությանը, որպես ընտանիքի բարոյահոգեբանական ճգնաժամի գնահատման չափորոշիչներ վերցնելով ամուսնալուծությունների, միայն մայրերի դիմումների հիման վրա գրանցված երեխաների և ընտանեկան բռնության թվային տվյալները: ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2004թ-ին ամուսնությունների թիվը կազմել է 16 975, իսկ ամուսնալուծությունների թիվը՝ 19 668, 2012թ. գրանցված 19063 ամուսնություններին համապատասխանել է 3250 ամուսնալուծություն: Ի համեմատ դրան՝ 2013թ-ին գրանցված ամուսնությունների թիվը նվազել է 18363, իսկ ամուսնալուծությունների թիվը աճել է՝ հասնելով 3756-ի, 2014թ. 18912 նորից աճել է, համապատասխանաբար աճել է նաև ամուսնալուծությունների թիվը հասնելով 4496 [6]: Այսպիսով՝ նկատվում է ամուսնալուծությունների թվի կայուն աճ, որը տաս տարվա ընթացքում քառապատկվել է: Հարկ է սակայն հիշել, որ վիճակագրական տվյալները վերաբերվում են գրանցված ամուսնություններին և համապատասխանաբար՝ դատարանի կամ քաղաքացիական ակտերի գրանցման բաժիններում նրանց դադարեցմանը: Հետևաբար պատկերը ամբողջական համարել չենք կարող: Անդրադառնալով առանց ամուսնության գրանցման միայն մայրերի (միայնակ մայրեր) կամ երկու ծնողների (հայրության ճանաչմամբ) համատեղ դիմումների հիման վրա գրանցված երեխաների թվային տվյալները վերլուծությանը՝ նկատում ենք, որ 2004թ. 4288 միայն մայրերի կողմից գրանցված և 9 383 հայրությունը ճանաչաց երեխա, ընդհանուր ծնված երեխաների թիվը 37 520, իսկ 2014թ. ընդհանուր ծնունդների թիվը կազմել է 43 031, որոնցից ամուսնությունը չգրանցված կանանց երեխաների թիվը կազմում է 14600 երեխա՝ համապատասխանաբար միայն մայրերի կողմից գրանցված 3 549

և հայրությունը ճանաչած՝ 10 951: Այսպիսով՝ 2014թ. ամբողջ ծնվածների 33, 9 % ամուսնությունը չգրանցված կանանց ընտանիքներում են մեծանում [13] : Ինչ վերաբերում է ընտանեկան բռնության տվյալներին, ապա՝ ըստ ոստիկանության տվյալների, 2012թ. գրանցվել է 766 դեպք, 5 կին մահացել է՝ թողնելով 12 մանկահասակ երեխա, արդեն 2014թ.-ին գրանցվել է 1500 դեպք, որոնցից մահվան ելքով՝ 11 [7]: Հայաստանում ընտանեկան բռնությունը հաճախ դիտվում է որպես ընտանիքի ներքին խնդիր, որին հասարակությունն իրավունք չունի միջամտել: Հասարակական կազմակերպությունների վիճակագրական տվյալներն այլ են. Կանանց իրավունքների կենտրոնի Ազգային Թեժ Գծին 2011թ-ին գրանցվել է 2032 զանգ, ընդ որում, 1678-ը վերաբերում էր ընտանեկան բռնությանը (537-ը՝ առաջնային, 1141-ը՝ կրկնվող): Զանգերի և այցերի անհամեմատելի աճի պատճառով 2012թ. ընթացքում գրանցվել է 2832 զանգ, որից 1845-ը եղել է ընտանեկան բռնության զանգ (656 -ը եղել է առաջնային և 1189-ը՝ կրկնվող) [8], 2014թ. կանանց իրավունքների պաշտպանության տարաբնույթ կենտրոնները ստացել են արդեն 4500 ահազանգ [9, էջ 62-65]: Այսպիսով՝ նկատվում է առաջարկված չափանիշների՝ «ամուսնալուծությունների», «միայնակ մայրերի» և «ընտանեկան բռնության» դեպքերի աճի միտում: Այդ ամենը ապացույց է հանդիսանում նման ընտանիքներում բազմաթիվ պրոբլեմների առաջացմանը՝ տնտեսական անկայուն վիճակը, ցածր եկեմուտների, երեխաների հետագա սոցիալականացման դժվարությունների, հասարակության մեջ պատասխանատվության անկման և այլն:

Ընտանիքների՝ աղքատության ու սոցիալական կյանքի լուսանցքում հայտնվելու պատճառների վերաբերյալ հետազոտություններում կրկնորոշվում ու բավականաչափ մեծ տոկոս է կազմում եզրահանգումն, ըստ որի՝ աղքատու-

թյան մեջ հայտնվելը և մնալը կապված է ոչ միայն և ոչ այնքան օբյեկտիվ՝ հասարակության տնտեսական կարգի փոփոխության, գործազրկության և այլ արտաքին գործոնների հետ, այլ՝ առավելապես սուբյեկտիվ՝ անձնական հատկանիշների և նրանց արտահայտման ձևերի հետ [10]:

Ընտանիքն է ապահովում անհատի զրագացումը նրա բոլոր ասպեկտների՝ հոգևոր, բարոյական, ինտելեկտուալ, ֆիզիկական ամբողջության մեջ և հիմք է ստեղծում մարդուն ձևավորող մյուս ինստիտուտների գործունեության համար: Ընտանիքում է կատարվում երեխայի մուտքը աշխարհ, նրա հետ առաջնային փոխհարաբերությունների և փոխազդեցության հաստատումը: Եվ հենց ընտանիքն է այն օբյեկտը, որը պետք է առավել չափով, քան մնացած սոցիալական ինստիտուտները, կրի աջակցողական ներգործություն և ընթանա առողջացման, բարեփոխման և զարգացման ուղիով՝ այդպիսով առողջացնելով, բարեփոխելով և զարգացնելով ողջ հասարակությունը [12, էջ 122]: Ուստի նրա բարոյա-հոգեբանական մթնոլորտի անկայունությունը, ներքին լարվածությունը, սիրո, փոխադարձ հոգացության, պաշտպանվածության և հասկացված լինելու անկումը կամ բացակայությունը, հիմնական գործառույթների պատշաճ իրականացման անկարողությունը հանգեցնում են մշտական կոնֆլիկտների և որպես արդյունք՝ մարդկային կոտրված ճակատագրերի:

Ընտանիքի առողջ գոյատևման, գործառնության և զարգացման համար առաջնային անհրաժեշտ պայմանների խախտման պարագայում առաջացող ամենակարևոր խնդիրներից են՝ ամուսնալուծությունները, որդեծնության արհեստական ընդհատումը, ամուսնական անհավատարմությունը, ընտանեկան բռնության աճը, ծնողավարման հմտությունների անկումը, սիրո և հոգացության, փոխհասկացման և փոխըմբռն-

ման անկումը:

Ընտանեկան այս խնդիրների պատճառներն ունեն երկակի բնույթ՝

- **սոցիալական՝** աղքատության ընդհանուր մակարդակի կտրուկ աճ, գործազրկություն, որպես հնարավոր լուծման եղանակ անվերահսկելի արտագաղթ, պետական աջակցողական քաղաքականության անարդյունավետություն և այլն,

- **հոգևոր-բարոյական՝** հեռացում քրիստոնեական, բարոյական, ազգային ավանդություններից ու արժեքներից, օտարամոլություն, կրթության նկատմամբ «ձևական» վերաբերմունք և այլն:

Ընտանիքի քրիստոնեական կառույցն ամուր պահելու համար անհրաժեշտ է հետևել Սուրբ Գրքի խորհուրդներին ու պատգամներին: Եթե ուշադիր քննենք այսօրվա մեր հասարակության մեջ եղած ընտանեկան խնդիրները, ապա՝ հնարավոր է նկատել, որ դրանք ծնվում են աստվածաշնչյան պատգամներից հեռանալու հետևանքով [12, էջ 17-18]:

Այժմեական սոցիալական կյանքի իրողությունների **ճշմարտությունը հասկանալ և մեկնողաբար բացորոշող՝ տեսական** և դրա հետ մեկտեղ՝ **բարեկարգության դիպավորության, նախաձեռնության ու կարարումի՝ գործնական** բնույթի գիտական խորհրդածություններում, արդարև, որպես առաջնահերթ խնդիր, հարկ է նշել կյանքի ամենայն բաղադրատարրեր ներթափանցած ճգնաժամից հայ ընտանիքի դուրս գալու և հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին կայուն, գիտակցված ինքնությամբ լիարժեք մասնակից դառնալու՝ սոցիալականորեն նշանակալի կարիքը և ապա՝ մշակել հոգածու ու սատարագետ աջակցության հնարավոր, անհրաժեշտ ու նախընտրելի ուղիները: Եվ պետք է ասել, որ Հայաստանում սոցիալական այս հիմնախնդրի լուծմանն էականորեն նպաստում է բարեգործական հիմքով գործող և սոցիալական աշխատանքի

մասնագիտացված կառույց իրենցում ներընդգրկող՝ քրիստոնեական կենսակերպի արմատավորման դիտավորությանն ու կատարումին հետամուտ հասարակական կազմակերպությունների բազմաբովանդակ գործունեությունը:

Այդպիսի կազմակերպությունների առաջնել էր Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի «Մենք Պարտավոր ենք ապրել» (ՄՊԱ) ծրագիրը՝ «քրիստոնեական կենսակերպի արմատավորման» իր դիտավորությամբ ու կատարումով, որն ըստ մեր համոզման, սկզբունքորեն նախընտրելի կերպօրինակ է նմանատիպ կազմակերպությունների գործունեության համար: Ծրագրի նպատակային հիմնախնդիրն էր դիտվում՝ վերհանել խիստ անապահով ընտանիքներում առկա առաջնային կարիքները, ծանր վիճակում նրանց հայտնվելու պատճառները, ի հայտ բերել մարդկանց ունակություններն ու կարողությունները, կազմակերպել համապատասխան ուսուցումներ և խորհրդատվություններ: Սոցիալական աշխատանքն առնչվում էր կարիքային բազմաբովանդակ խնդրակարգի, որում առանձնանում ու համալիր փոխկապակցվածությամբ բացահայտվում էին ամուսինների, ծնող-երեխա, դպրոցահասակ երեխաների ու երիտասարդների ներընտանեկան ու նաև այլ անձանց, կյանքի ու մշակույթի իրողությունների նկատմամբ վերաբերմունքի, հարաբերության ու գործունեության, դրա հետ մեկտեղ՝ աշխատանքային, ուսման, հաղորդակցության... այլևայլ հիմնախնդիրներ: Այդ ընտանիքների նկատմամբ ՄՊԱ ծրագրի շրջանակներում իրականացվող սոցիալական աշխատանքի դիտավորությունն էր՝ հոգևոր սերմնացանությամբ, ինքնությամբ ու կենսակերպի բարոյահոգևոր և հենց առաքինի կարգավորությամբ ու նաև կրթության արժևորմամբ՝ ապահովել, ըստ իր հնարավորությունների, ընտանիքի անդամների ներքին կարողությունների աճ, ունակությունների՝ որպես հմտություն, ներհմտություն, ար-

վեստավորություն ու գիտելիք ներկրթություն և դաստիարակել ժամանակակից սոցիալական կյանքին ակտիվորեն մասնակցությամբ քրիստոնավայել կյանքով ապրող անձանց: Ծրագրի դիտավորությանն ու ըստ այդմ՝ կատարումի ենթախնդիրներից էին՝ սոցիալական դաշտում լիարժեք քաղաքացիական կյանքի համար անհրաժեշտ՝ ընտանիքի ներքին հնարավորությունների աճի ու արտաքին պայմաններին համապատասխան դարձնելու խնդիրը և բարոյահոգեբանական, մասնագիտական աջակցության իրականացումն իր այլևայլ քաղաքացիներով՝ հոգևոր-կրթական, իրավական, բժշկական, աշխատանքային և այլն: Քրիստոնեական կենսակերպի մեջ կայացման, ներկրթության և դաստիարակության արժևորման բարձրացման նպատակային խնդրի շուրջ Ծրագրի շրջանակներում գործող Ս. Սահակ-Մեսրոպ Կրթադաստիարակչական Կենտրոնում և տունայցերով՝ նաև ընտանիքներում ծավալվող սոցիալական աշխատանքի, հոգևորականների ու հոգեբանների հետ հանդիպումների արդյունքում ծնողները դառնում էին ավելի բաց, մասնագետի ու նաև միմյանց հետ կիսվում իրենց կյանքում առաջացած հիմնախնդիրների վերաբերյալ, համատեղ քննարկումների ընթացքում փնտրում ուղիներ բարդ իրավիճակներից դուրս գալու նպատակով: Այդ կերպ կայանում էր նաև ինքնօգնության խումբ՝ «ծնողական ակումբը», որի գործունեությունն այլևս կախված չէր միայն Կենտրոնի գործունեության հետ: ՄՊԱ ծրագիրը, ըստ Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետության և իր չափավոր ռեսուրսների ու կարողության, խիստ անապահով ընտանիքների հետ իր գործունեության վայրերում՝ Երևան, Մեծամոր, Վանաձոր, իրականացնում էր՝

ա) քրիստոնեական հավատի վերստին նորոգման ու մկրտության.

բ) ողորմության ու բարեգործության նյութական ու հոգևոր կարիքների խնդիրներում օգնության.

գ) շահառու անձանց, ընտանիքների, դպրոցահասակ երեխաների ու երիտասարդների հոգեկրթության.

դ) հոգևոր խնամքի ու հոգածության.

ե) աղոթքի ուսուցման և աղոթական կյանքի մեջ հաստատման.

զ) աստվածաբանական գիտելիքների ուսուցանության և այս բոլորով՝ իրագործում քրիստոնեական առաքինասեր ու փրկությունասեր, կոնկրետորեն՝ ներընտանեկան և ընդհանրապես՝ սոցիալական կյանքում գործունորեն ներընդգրկված կյանքի նպատակամետ աջակցություն:

Ընտանիքի գործառնության համար հիմնայինը ոչ թե ինչ-որ պահի և մարդկային տկարությամբ որևոր նկատառումներով ընտրված կարգն է, այլ, ըստ էության, աստվածասիրությունից ծնունդ առնող և աստվածասիրության իսկ տանող մարդասիրության և աջակից հոգածության կենարար սկզբունքները: Ո՞րն է պատշաճ մարդու ինքնությանը, ընտանիքին և նրանց կոչմանը. մարդկանց հետ գործ ունենալով, ավելացնել արդյոք նրանց բեռը, թե՞ ընդհակառակը՝ թեթևացնել և սկզբունքորեն ընտրել՝ աստվածասիրությունն ու մարդասիրությունն իր ներանձնականում, ընտանիքում կենդանի պահող հոգածությունն ու խնամքը և այդկերպ միայն՝ ընտանիքի անդամներին և ավելին՝ ամենայն մարդկանց առնչվող գործունեության տնօրինության «ինչն» ու «ինչպեսը»: Յուրաքանչյուրի համար է պիտոյական և ամենքին է վերաբերում այն, որ չի կարելի աստվածայինը պատվիրանը, մարդասիրությունը, արդարությունը, ողորմածությունը..., ըստ էության, միմյանց Աստծով սիրելը գոհել հանուն մարդկային, ընտանեկան և նույնիսկ քաղաքացիական կյանքի բոլոր ոլորտների այն կարգի, որպիսին այս կամ այն շահագրգիռ հետաքրքրությամբ ու կողմնորոշմամբ տեսանելի ու ըմբռնելի է դարձել տվյալ անձին,

անկախ նրանից՝ ընտանիքի տեր, կամ անհատ՝ ոչ այլոց ղեկավար անձ, կամ պետական կառույցի, թե՛ հասարակական կազմակերպության ղեկավար է, թե՛ միայն: Սոցիալական կյանքի քրիստոնեական դոկտրինայի հիմքում ընկած աստվածային պատվիրաններն ու քրիստոնեական առաքինուսույց վարդապետությունը, սիրո ու հոգածության, համբերության, հանդուրժողականության ու ներելու, կարեկցելու և օգնելու խնդիրներին պատրաստականորեն արձագանքելու գաղափարները հնարավորություն են տալիս անձին ու ընտանիքին՝ դժվարություններով հանդերձ, հաղթահարելու կյանքի ընթացքում առաջացող խնդիրները միմյանց կարծիքների և մոտեցումների տարբերության պարագայում, պահելու ներքին խաղաղությունը և ընտանեկան բարոյահոգեբանական բարեկարգ մթնոլորտը:

Հերմենևտիկական մեթոդաբանությամբ՝ ՄՊԱ ծրագրի բազմաբովանդակ փորձառության իսկության բացորոշումից ուսյալ, որպես հայ ընտանիքի ժամանակակից բարոյահոգեբանական ճգնաժամի հաղթահարման ռազմավարություն, հեղինակների կողմից առաջարկվում է «քրիստոնեական կենսակերպի արմատավորման» մոդելը: «Քրիստոնեական կենսակերպի արմատավորում» ասելով, մտքի այս բանաձևում արդեն իսկ նկատի է առնվում «կյանքի» որոշակի մոդել, «հաղորդակցականության» որոշակի կերպ, «վարքային» որոշակի կազմակերպվածություն, ընտանիքների «կառուցվածքային» ներկազմակերպվածություն, և այդ ամենի առնչությամբ՝ քրիստոնեական հայեցակարգում կարող է լինել ու հենց կա և՛ «համընդհանուրը», և՛ սոցիալական խմբի ու նրա կարիքավորության առանձնահատկությամբ (երեխաներ, երիտասարդներ, ամուսիններ, տարեցներ...) պայմանավորված՝ «հատուկը» կամ «լոկալը» [3, էջ 247–251]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Погосян Г. А., Современное армянское общество: особенности трансформации, М., 2005
2. Джиджян А., Самостояние интеллектуальной элиты, Ինքնություն, Եր., 1995, էջ 224–232:
3. Ջիջյան Ա., Քնչարյան Ռ. Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատավորումը», «ԴԱԼԼ», Եր., 2009:
4. Гаспарян Ю.А., Институт семьи: Проблемы обновления и развития, Спб, 1997.
5. Tiryakian E., Sociologism and Existentialism. Two Perspectives on the Individual and Society, Englewood Cliffs, N-Y., Prentice Hall, 1962.
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, <http://www.armstat.am>
7. <http://iravaban.net/36296.html>
8. <http://www.wrcorg.am/am/activities.htm>
9. Мкртчян А. Е., Оганян А. Г. Явление насилия в отношении женщин трансформационном обществе Армении – Образование личности: стандарты и ценности. Сборник научно–методических материалов международных научно–практических конференции «Теория и практика поликультурного воспитания в образовательной среде», «Актуальные вопросы социализации личности в современных условиях» / Сост. и науч. ред. Н.Ю. Синягина, Е.Г. Артамонова. — М.: АНО «ЦНПРО», 2015.
10. Муздыбаев К.. Переживание бедности как социальной неудачи: атрибуция ответственности, стратегии совладения и индикаторы депривации, роблемы обновления и развития, Спб, 1997, <http://www.nir.ru/sj/sj/sji-a/muz.html>
11. Գասպարյան Յու. Ա., Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում, Եր., 2003:
12. «Եկեղեցի և ընտանեկան արժեքներ» թեմայով քննարկման նյութեր, Ս. Էջմիածին, 2013:
13. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2015, http://www.armstat.am/file/article/demog_2015_3.pdf

УКОРЕНЕНИЕ ХРИСТИАНСКОГО ОБРАЗА ЖИЗНИ КАК ФАКТОР УЛУЧШЕНИЯ НРАВСТВЕННО–ПСИХОЛОГИЧЕСКОГО СОСТОЯНИЯ СЕМЬИ

АНАИТ ДЖИДЖЯН

АГПУ им. Х.Абовяна,

РОМИК КОЧАРЯН

асистенты кафедры социологии и социальной работы, к.ф.н.

НЕРСЕС КОЧАРЯН

АГПУ им. Х.Абовяна

аспирант кафедры социологии и социальной работы

Современное состояние общества в данной статье анализируется, обосновывается и объясняется исходя из экономических, демократических и других развивающих теорий. По глубокому убеждению авторов, причины того, что в жизни народов и наций, и конкретно в жизни Армении как общества, так и отдельные личности и семьи оказываются в тяжёлом состоянии заключаются в проблеме моральной заброшенности и безразличия по отношению к человеческой душе и особенно к духовной жизни, и путем преодоления этих проблем является осознание необходимости возврата к христианским истокам. В основе исследования лежит анализ результатов осуществлённой в общественном секторе социальной программы, направленной на улучшение морально–психической атмосферы и социально–экономического положения крайне необеспеченных семей.

ENROOTING OF CHRISTIAN LIFE MODE AS FACTOR FOR IMPROVING THE FAMILY
MORAL–PSYCHIC ATMOSPHERE

ANAHIT JIJYAN

*ASPU after Ch. Abovyan
Chair of Sociology and Social work, PHD, Assistants*

ROMIK KOCHARYAN

*ASPU after Ch. Abovyan
Chair of Sociology and Social work, PHD, Assistants*

NERSES KOCHARYAN

*ASPU after Ch. Abovyan
Chair of sociology and social work, PHD student*

The condition of the modern society is being analyzed, justified and explained on the basis of economical, democratic and other developing theories. The authors are convinced that in the life of peoples, nations, and specifically in the life of Armenia both society, individuals and families are in serious conditions because of moral abandonment and indifference in regard of human soul and just of spiritual life, and the way for overcoming these problems is the waking consciousness of the necessity of returning to Christian roots. In the basis of this investigation lays the analysis of the results of the implementation in the public sector of the program aimed at improving the moral and psychological atmosphere and socio–economic status of extremely needy families.

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՄԻՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ

*ԵՊՀ Սոցիալական աշխարհաբանության և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ,
սոցիոլոգիական գիտությունների թեկնածու*

ԱՂՔԱՏ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոդվածն անդրադառնում է ընտանիքների աղքատությունը հաղթահարելու համար կիրարկվող սոցիալական ներկա տեխնոլոգիաների անկատարությունը, հիմնավորում դրանց վերափնաստավորման անհրաժեշտությունը սոցիալական աշխատանքի մոտեցումների համատեքստում: Նման վերափնաստավորումը հնարավորություն կստեղծի բարեգործությունից և պետական՝ ընդհանրական տիպի, առանց անհատական մոտեցումների կիրառման սոցիալական տեխնոլոգիաներից անցում կատարելու մարդկանց ակտիվացումը խթանող տեխնոլոգիաների:

Հանդուցային բառեր և արտահայտություններ. սոցիալական տեխնոլոգիա, սոցիալական հիմնախնդիր, աղքատություն, հասցեականություն, անհատականացված մոտեցում:

Հետխորհրդային Հայաստանում հասարակական կյանքի զարգացումները հանգեցրին նոր, մինչ այդ անծանոթ սոցիալական գործընթացների, որոնց ճանաչումը, սահմանումը և հետագա միտումների կանխատեսումները քառորդ դար անց դեռևս տեղի չեն ունեցել: Ավելին, ի հայտ եկած սոցիալական հիմնախնդիրներն այսօր էլ շարունակում են մնալ խիստ արդիական: Մասնավորապես, դա վերաբերում է երկրում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության ոչ արդյունավետ կառավարման, սոցիալական պաշտ-

պանության ոլորտում հայեցակարգված մոտեցումների բացակայության, իշխանության կենտրոնացման և այլնի ազդեցությամբ ձևավորված այնպիսի հիմնախնդիրների, ինչպիսիք են՝ աղքատության անընդհատ շրջապտույտը և դրա արդյունքում ձևավորվող աղքատության մշակույթը, հասարակության սոցիալական և տնտեսական բևեռացումը, տնտեսական ու սոցիալական ճգնաժամերը:

Արդիականացման այս վերջին քառորդարյա ժամանակաշրջանն իր հետ բերեց հասարակական կյանքի ավանդական հիմքերի փոփոխություններ, սակայն անցման շրջանի ձգձգումը և նոր սկզբունքների ձևակերպման ուշացումը բերեցին նրան, որ հասարակությունը մնաց յուրատեսակ մարգինալության վիճակում՝ նախորդ պատեռնալիստական մոտեցումների և դեռևս «չձևակերպված նորի» միջև: Այս իրավիճակը, մարտահրավերներ առաջադրելով հասարակական ողջ համակարգին, խորը ճգնաժամ առաջ բերեց նաև սոցիալական պաշտպանության ոլորտում: Պատճառն այն է, որ չնայած նախկին մոտեցումները հասկանալի ու փորձարկված են, աստիճանաբար դրանք դուրս են մղվում պրակտիկայից: Մինևույն ժամանակ, նոր մոտեցումների հստակեցման համար պահանջվող ժամանակահատվածն անորոշ տևողությամբ ձգձգվում է: Նման պայմաններում բնակչության

սոցիալական պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու համար գործուն և փորձարկված սոցիալական տեխնոլոգիաներ են անհրաժեշտ, որոնք թույլ կտան կանոնակարգել սոցիալական ոլորտում առկա հախուռն զարգացումները: Այսինքն՝ կարիք կա գնալու սոցիալական պաշտպանության ոլորտում առկա մոտեցումների կիրառվող մեթոդների տեխնոլոգիականացման ճանապարհով:

Տեխնոլոգիական գործընթաց ասելով՝ այս համատեքստում նկատի ունենք սոցիալական կյանքի, հասարակությունում անհատի կենսագործունեության տեխնոլոգիական ընկալումը, ըստ այդմ՝ միջամտության տեխնոլոգիականացումն այնպես, որ մի կողմից տեխնոլոգիականացման հորձանուտում չկորչի անհատականությունն ու անհատական մոտեցումների սկզբունքը, մյուս կողմից՝ միջամտության քայլերի յուրացված հետագծով շարժվելով՝ հնարավոր լինի աջակցել ավելի մեծ թվով ընտանիքների, որոնք գտնվում են աղքատության ճիրաններում: Սոցիալական տեխնոլոգիաների մասին խոսելիս նպատակահարմար է նշել, որ սրանք տեխնոլոգիական գործընթացի՝ կարծես թե միակ տիպն են, որոնց դեպքում խոսքը ոչ թե օբյեկտ-սուբյեկտ, այլ սուբյեկտ-սուբյեկտ փոխազդեցության մասին է:

Ընդհանուր առմամբ, տեխնոլոգիական գործընթացը ենթադրում է երեք բաղադրիչ՝ 1) գործողությունների ալգորիթմ, այսինքն՝ գործողությունների հստակ մշակված շարք, որոնք փոփոխում են օբյեկտը և այն հասցնում ցանկալի վիճակի, 2) ընդհանուր նպատակի իրականացմանն ուղղված պարզ գործողություններ, 3) գործիքակազմ, որն ապահովում է նպատակի իրականացումը:¹

Տեխնոլոգիական գործընթացների,

ինչպես նաև առանձին սոցիալական տեխնոլոգիաների կիրառման մեկնաբանությունը նպատակահարմար է դիտարկել տեխնոլոգիական գործընթացին բնորոշ վերոնշյալ երեք բաղադրիչների և գործընթացի իրականացման փուլային հետևյալ հաջորդականության համատեքստում. 1) տեղեկատվության հավաքագրման և հիմնախնդրի սահմանման հիման վրա նպատակի ձևակերպում, 2) ազդեցության միջոցների ընտրություն և մշակում, 3) ընտրված միջոցների կիրառում(ազդեցություն օբյեկտի վրա), 4) ազդեցության գնահատում և վերլուծություն:² Այսպիսով՝ սոցիալական տեխնոլոգիայի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ նրա կիրառման հիմքում կա որևէ խնդրահարույց իրավիճակ (օրինակ՝ ընտանիքների աղքատությունը), որի հաղթահարման հիմքով էլ մշակվում և ներդրվում են տեխնոլոգիաներ՝ սոցիալական օբյեկտի վիճակի բարելավման երաշխավորման համար (աղքատության հաղթահարում կամ նվազեցում), իսկ սոցիալական տեխնոլոգիայի ընկալման հիմքում նրա միջոցով ստացված արդյունքն է, որն, ըստ էության, գործունեություն է, որի միջոցով կամ կիրառմամբ հնարավոր է հասնել սահմանված նպատակին, և որն իր հերթին հանդիսանում է հիմք՝ գործունեության օբյեկտի չափման համար:³ Օրինակ՝ որքանո՞վ է ընտանիքներին ուղղված նպաստների գործող համակարգը նպաստում ընտանիքներում աղքատության մակարդակի նվազմանը:

Միևնույն ժամանակ, սոցիալական տեխնոլոգիան ընկալվում է որպես կառավարման մեխանիզմի տարր, որի *միջոցով* գիտության վերացական լեզուն թարգմանվում է նպատակների ձեռք բերման համար անհրաժեշտ կոնկրետ

1 Տե՛ս Павлинок П.Д., Руднева М.Я., Технологии социальной работы с различными группами населения: Учебное пособие / Под ред. проф. П.Д. Павлинка.—М.: ИНФРА-М, 2009, էջ7:

2 Տե՛ս նույն տեղում:

3 Տե՛ս Стефанов Н., Общественные науки и социальная технология: Пер. с болг. —М., 1976, էջ 182:

գործողությունների: ¹ Այս տեսակետից ընտանիքների աղքատության նվազեցմանն ուղղված տեխնոլոգիաները մշտապես փոփոխվել, կատարելագործվել են, օգտվել գիտության նվաճումներից և արդիականացվել, սակայն տեխնոլոգիայի ընկալումը որպես արդյունքի հասնելու կամ բարելավված կառավարման միջոց, չի արտացոլում նրա դրական իմաստով «մանիպուլյատիվ» կարողությունը՝ բացահայտելու սոցիալական համակարգի թաքնված ներուժը, հետևաբար նաև այդ ներուժը օգտագործելուն ուղղված մեթոդների նորարարական համակարգը: ² Այսպիսով՝ «սոցիալական տեխնոլոգիա» հասկացության արդի ըմբռնումը վերաբերում է ոչ թե որոշակի գործողությունների կանոնակարգված շարքի պարզ գոյությանը (որոնք ենթադրվում է, որ պետք է բերեն արդյունքի), այլ որոշակի գործընթացի, որի միջոցով սուբյեկտները փոխազդելով առաջ են բերում օբյեկտի վիճակի կայուն փոփոխություններ:

Այս տեսանկյունից ՀՀ սոցիալական պաշտպանության պետական համակարգի 25-ամյա պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա ձևավորման հիմքում անկախացման առաջին տարիներին՝ երկրաշարժի, պատերազմի, տնտեսական շրջափակման հետևանքով առաջ եկած սոցիալական հիմնախնդիրների լուծման ցանկությունն էր՝ «այստեղ և հիմա» մոտեցման շրջանակներում: Այդ շրջանում, մասնավորապես 1990-1995թթ., սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող գործընթացները մի քանի հիմնական ուղղություններ ունեին՝ օրենսդրական փոփոխություններ, համակարգի կառավարման արդիականացում, մարդկային ռեսուրսների հավաքագրում, մարդասիրական օգնության

բաշխման կազմակերպում: Միևնույն ժամանակ, մի համակարգից մյուսին անցում կատարելու ընթացքում պետությունը կարիք ուներ պատասխանելու որոշակի հարցերի. սոցիալական ոլորտում հենվել սպոնտանորեն ձևավորվող և ինքնակառավարվող համակարգերի՝ վրա, թե՞ ստեղծել հատուկ համակարգեր, անցումային ժամանակահատվածում ուշադրությունը հրավիրել միայն տնտեսական համակարգերում տեղի ունեցող փոփոխություններին, թե՞ հաշվի առնել ընդհանուր առմամբ սոցիալական կյանքի փոփոխությունները, սոցիալական աջակցության տրամադրման հիմքում թիրախավորման ինչպիսի՞ մեխանիզմներ կիրառել, և ամենակարևորը՝ սոցիալական ոլորտում ներդրվող միջոցները դիտարկել որպես ուղղակի ծախսեր, թե՞ ներդրումներ ապագայի համար:

Այս հարցերն իրենց պատասխանը պետք է ստանային այն դեպքում, եթե հստակեցվեր սոցիալական քաղաքականության մոդելի, գաղափարախոսության հարցը, սակայն համակարգը գնաց միայն առկա սոցիալական խնդիրներին անմիջապես արձագանքելու ճանապարհով՝ մոռանալով վերոնշյալ հստակեցման մասին: Արդյունքում այս շրջանը բնութագրվեց ողջ հանրապետությունում սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների և զբաղվածության տարածքային մարմինների ստեղծումով՝ ի լրումն խորհրդային ժամանակահատվածից ժառանգություն մնացած սոցիալական ապահովության բաժինների: Արդյունքում ստեղծված կառավարող և կառավարվող ենթահամակարգերը, չնայած ենթադրվող փոխկապվածությանը, միևնույն ժամանակ սկսեցին գործել միմյանցից «մեկուսի»՝ բաց թողնելով միջուկորտային հիմնախնդիրների լուծումը: Ընդ որում, նորաստեղծ սոցիալական ծառայությունների գործառույթները սկսվում և ավարտվում էին մարդասիրական օգնության բաշխ-

1 Стн Афанасьев В. С. Человек в управлении обществом. — М., 1977, էջ 235:

2 Стн Иванов В.А. Социальные технологии в современном мире. — М.—Н.-Новгород, 1996, էջ 4:

մամբ: Ընդհանուր առմամբ, այս շրջանում պետության կողմից սոցիալական ոլորտում իրականացվող գործողությունները ավելի նման էին բարեգործության, քան բուն սոցիալական պաշտպանության իրականացման:

Բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում առկա ռեսուրսների ռացիոնալ բաշխման, թիրախավորման մեխանիզմների կիրառման, տարբեր խմբերին տարբերակված մոտեցում ցուցաբերելու խնդիրն ավելի արդիական դարձավ արդեն 90-ական թվականների վերջերին, երբ երկրի իրավիճակը բնութագրվում էր որոշակի կայունությամբ: Այս շրջանում կարևորագույն փոփոխությունները վերաբերում էին «ներդրում ապագայի համար» խնդրի լուծման համար նախապատրաստումներին: Այսպես ներմուծվեց ընտանիքների անապահովության գնահատման համակարգը, ավելացան սոցիալական ոլորտին պետության կողմից հատկացվող միջոցները, ակտիվացավ պետության և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը, առաջնային համարվեցին նաև մասնագիտական ու մարդկային ռեսուրսների կատարելագործման խնդիրները, սկիզբ դրվեց կենսաթոշակային համակարգի վերափոխման հնարավորությունների քննարկումներին և այլն:

Այս ընթացքում արդեն սոցիալական ոլորտի առկա պրակտիկական մատնանշում էր, որ բնակչությանը անհրաժեշտ էին իրական սոցիալական ծառայություններ, որոնք ոչ մի դեպքում չպետք է սահմանափակվեին ֆինանսական միջոցների բաշխմամբ, որովհետև այդ դադարել էր արդյունավետ լինել: Զաղաքացու ազատությունների և իրավունքների լիարժեք իրացումը, նրանց սոցիալական հիմնախնդիրների երկարաժամկետ լուծումները պահանջում էին տրամադրվող ֆինանսական միջոցներին գուզահեռ նաև որոշակի ար-

տոնությունների տրամադրում՝ ի դեմս անվճար բուժօգնության, կրթության համակարգում զեղչերի, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական ծառայությունների հասանելիության ապահովման: Սոցիալական պաշտպանության ոլորտում առկա պրակտիկական թեև դեռևս փոքր էր, սակայն արդեն մատնանշում էր, որ հիմնախնդիրների լուծումն անհնար է, եթե դրանք դիտարկվում են առանձին-առանձին: Այսպիսով՝ չնայած որոշակի զարգացումներին՝ օգնող բուն ենթահամակարգերի և գործող ծրագրերի «վերևից ներքև» տարաբաժանման պատճառով կիրառվող սոցիալական տեխնոլոգիաների նշված կատարելագործումներն էական փոփոխություններ առաջ չէին բերում:

Ընդհանուր առմամբ, 2000-ական թվականներին գրանցված տնտեսական աճի տեմպերը, միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացումը համակարգին թույլ տվեցին բավականին ընդլայնել իրականացվող սոցիալական ծրագրերը բոլոր ոլորտներում՝ սոցիալական աջակցություն, զբաղվածություն, երեխաների պաշտպանություն, հաշմանդամություն, տարեցության հիմնախնդիրներ և այլն: Այս ժամանակաշրջանը հատկապես բնութագրվում է նոր մոտեցումների ներդրմամբ, որոնք հիմնականում պայմանավորված են միջազգային փաստաթղթերի, մասնավորապես, Եվրոպական սոցիալական խարտիայի վավերացմամբ: Մասնավորապես, զբաղվածության ոլորտում սկսեցին գնալ զբաղվածության ակտիվ ծրագրերի, սոցիալական աջակցության բնագավառում՝ «կարիքի գնահատման» տեխնոլոգիայի ներդրման, իսկ կենսաթոշակների համակարգում՝ ապահովագրության համակարգի ակտիվացման ճանապարհներով:

Այս շրջանում ձեռք բերված արդյունքները, որոնք բնորոշվում էին աղքատու-

թյան, գործազրկության մակարդակի կրճատմամբ և այլն, 2008–2009թթ. տնտեսական ճգնաժամով պայմանավորված, ի չիք դարձան: Սոցիալական հիմնախնդիրները նորից գլուխ բարձրացրին: Սոցիալական պաշտպանության համակարգի համար կրկին հրատապ դարձավ աղքատության, գործազրկության, ինչպես նաև արտագաղթի խնդիրների լուծումը: Նման իրավիճակը պայմանավորող պատճառներից մեկն այն էր, որ մինչ տնտեսական ճգնաժամն ընկած ժամանակահատվածում տնտեսական աճն այդպես էլ չէր ուղեկցվել սոցիալական պաշտպանության ոլորտում կիրառվող սոցիալական տեխնոլոգիաների արդիականացմամբ և իրավիճակին համարժեք լուծումներ տալու նախաձեռնողականությամբ, իսկ իրականացված փոփոխություններն ընդամենը «կոսմետիկ» բնույթ էին կրել (օրինակ՝ փոփոխություններն ընտանիքների անապահովության գնահատման բանաձևում): Ահա թե ինչու սոցիալական պաշտպանության համակարգը չկարողացավ համարժեքորեն արձագանքել տնտեսական ճգնաժամի հետևանքով նոր թափ ստացած սոցիալական հիմնախնդիրներին (համաձայն ՀՀ ԱՎԺ տվյալների՝ աղքատության ցուցանիշը դեռևս զիջում էր մինչճգնաժամային ցուցանիշին (2007թ.՝ 26.4%, 2015թ.՝ 29.8%)):

2012–2015 թվականներն ավելի շատ բնութագրվում են որպես բարեփոխումների իրականացման փուլ: Զբաղվածության ոլորտում այս շրջանում մեկ տասնյակից ավելի ծրագրեր ներդրվեցին, օրինակ՝ «Գյուղացիական տնտեսությունների համար սեզոնային զբաղվածության խթանման ծրագիրը»¹: Ոլորտի պատասխանատուների համոզմամբ,

այս տեխնոլոգիան լիովին արդարացված էր հողից օտարացած գյուղացուն հողին կապելու, սեփական ջանքերով աղքատությունը հաղթահարելու տեսակետից: Կենսաթոշակային ապահովության համակարգում սկսել է գործել կուտակային կենսաթոշակների համակարգը: Այնուամենայնիվ, ընտանիքների աղքատության հաղթահարման տեխնոլոգիան դեռևս այնքան չի բարելավվել, որպեսզի ի վիճակի լինի բացահայտելու մարդկանց ներուժը և ակտիվացնելու այն:

Սոցիալական աջակցության տրամադրման կատարելագործումը ենթադրում է արդյունավետ գործող սոցիալական ծառայություններ, որոնք համակարգի պատկերացումների շրջանակներում հանդես են գալիս համալիր սոցիալական ծառայությունների ձևաչափով: Համաձայն վերջինիս, սոցիալական ծառայությունների ինտեգրումը և դեպքի վարման մեթոդաբանության ներդրումը պետք է ի վիճակի լինեն հանգեցնելու սոցիալական հիմնախնդիրների լուծման արդյունավետության բարձրացմանը: Ըստ այդմ, 2010 թվականից սկսած՝ պատասխանատու նախարարությունը փորձում է ստեղծել սոցիալական ծառայությունների մասնագիտացման և սոցիալական աշխատողի ինստիտուտի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալները: Վերջին երկու տարիների ներդրումն անհրաժեշտություն է այս շրջանում զուգահեռ ընթացող բարեփոխումները սպասարկելու համար՝ երեխաների խնամքի հաստատությունների վերակազմակերպում, ընտանիքների ամրապնդում, այլընտրանքային ընտանիքահեն խնամքի մոդելների զարգացում, «մարդ–ծառայություններ–

1 Պետությունը գյուղացուն գումար է տալիս, որ նա կամ նրա ընտանիքի անդամներն աշխատեն իրենց սեփականությունը հանդիսացող կամ վարձակալած հողի վրա, միաժամանակ, եթե լրացուցիչաշխատուժ է ներգրավվում, պետությունը փոխհատուցում է նաև ներգրավված աշխատողների աշխատավարձի 50%-ը:

րի»¹ զարգացում:

Արդյունավետության ձգտելով՝ ընտանիքներին ուղղված աջակցության մեթոդների և տեխնոլոգիաների հեղինակները փորձում են անընդհատ կատարելագործել այն բանաձևերը, որոնք ավելի շուտ ֆիլտրում/նվազեցնում են մուտքը դեպի սոցիալական աջակցության համակարգ, քան ապահովում հասցեականությունը: Աղքատության ընտանեկան նպաստի համակարգի ներդրման սկզբնական փուլում զսպման բանաձևերի բացահայտումներն իրենց բնույթով նորարարական էին և լուծում էին այդ փուլի համար շատ կարևոր՝ համակարգում ընդգրկման շեմի սահմանափակման խնդիրը՝ մուտքի չափանիշների հասարակայնորեն ընդունելի մոտեցումների կիրառմամբ (խոցելիության մակարդակ) և չափումների հիմքում դնելով օբյեկտիվ այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ընտանիքի անդամների թիվը, ընտանիքում խոցելի խմբերին պատկանող անձանց թիվը, ընտանիքի եկամուտի չափը և այլն:

Դրանց ներմուծումը և համատարած կիրառումը թույլ տվեցին գրեթե տարերայնորեն գործող համակարգում որոշակի կանոնակարգումներ կատարել: Համակարգի, դրանում գործող տեխնոլոգիաների հետագա կատարելագործումները հիմնականում վերաբերում էին ընտանիքի խոցելիությունը բնութագրող և չափելի փոփոխականների թվի ավելացմանը և ստացվող տեղեկատվության հուսալիության մեծացմանը: Պետք է նշել, որ նման կատարելագործումների շարաունակականության արդյունքում ընտանիքների անապահո-

վության գնահատման բանաձևն ավելի հղկվեց, սակայն երկու տասնամյակ անց հատակորեն նշմարվում են որոշակի խնդիրներ, որոնք իրենց հերթին տեխնոլոգիացված լուծումների պահանջ են դնում:

Ինքնակատարելագործվելով՝ ընտանիքների աղքատության նվազեցմանն ուղղված համակարգն, այնուամենայնիվ, չի կարողանում լուծել խնդիրը ցանկալի մակարդակում. այն թույլ է տալիս ներգրավված ընտանիքներին լուծել գոյատևման խնդիր՝ ընդամենը 44%² հասցեականության պայմաններում: ³

Ընտանիքներին ուղղված այս օգնության ո՛չ չափը և ո՛չ էլ առավել ևս հասցեականությունը բավարար չեն ակտիվացնելու մարդկանց, նրանց ուղղելու դեպի աշխատաշուկա: Ընդհակառակը՝ պետական աջակցության այս ծրագրում ընդգրկված ընտանիքների մեծ մասի համար առաջ է եկել համակարգից քրոնիկ բնույթի կախվածության հիմնախնդիր:

Նպաստ ստացող աղքատ ընտանիքները, չկարողանալով լքել աղքատության փակ շրջանը, մշտապես գտնվում են ծայրահեղ աղքատության մեջ հայտնվելու ռիսկի ներքո: Նույն հետազոտության տվյալների համաձայն՝ աղքատ ընտանիքների մինչև 20 տոկոսը ամեն տարի կարող է հայտնվել ծայրահեղ աղքատների խմբում: Ստացվում է, որ աղքատության ընտանեկան նպաստ ստացող ծայրահեղ աղքատների և աղ-

2 Տե՛ս Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ բյուջետային ծրագրի գնահատում, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն, 2016թ.:

3 Դա նշանակում է, որ աղքատության ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների միայն 44%-ն է, որ, համաձայն չափանիշների, ճիշտ է ընտրված: Բացի դրանից նշանակում է, որ աղքատությունից տուժող մեծ թվով ընտանիքներ, որոնք օգնության կարոտ են՝ համակարգից դուրս են հայտնվում և մարզինիլացվում-օտարանում հասարակությունից:

1 «Մարդ-ծառայություն» գաղափարը համեմատաբար նոր է արևմտյան սոցիալական աշխատանքում: Այն նշանակում է սոցիալական աշխատողի՝ որպես մասնագետի, գոյությունն իսկ որպես ծառայություն՝ հաշվի առնելով բոլոր այն դերերն ու գործառնությունները, որ կարող է անել առանձին վերցրած մեկ սոցիալական աշխատողը:

քատների խմբերը մշտապես շրջանա-
վում են, փոխատեղվում՝ ստեղծելով
փակ շրջան:

Արդեն իրականացված և ընթացքի
մեջ գտնվող փոփոխությունների գն-
նումը ցույց է տալիս, որ սոցիալական
պաշտպանության համակարգը գնացել
է ինքնարուխ գործընթացներից դեպի
սոցիալական հիմնախնդիրների լուծ-
ման համակարգային տեխնոլոգիաների
մշակման և կիրառման ճանապարհով,
ինչը բնական է՝ հաշվի առնելով սոցի-
ալական պաշտպանության համակարգի
զարգացմանն ուղեկցող ժամանակաշր-
ջանն ու իրադարձությունները, սակայն
չնայած այդ զարգացումներին՝ կիրառ-
վող սոցիալական տեխնոլոգիաների և
առկա սոցիալական հիմնախնդիրների
համապատասխանությունն ու համար-
ժեքությունը շարունակում են արդիա-
կան խնդիրներ մնալ: Ի լրումն կոնկրետ
սոցիալական հիմնախնդիրներին հա-
մալիր լուծումներ տալու անկարողու-
թյանը՝ կիրառվող սոցիալական տեխ-
նոլոգիաներին չի հաջողվում բացառել
բարեգործական, պետական և մասնա-
վոր սեկտորների կողմից իրականաց-
վող ծրագրերում վերածածկերը, լուծել
սոցիալական ծառայությունների մաս-
նագիտացման և մարդկանց կյանքում
միջամտությունների ընտրված մոտե-
ցումների ընդունելի լինել-չլինելու խն-
դիրները:

Մարդկանց ակտիվացման հիմնա-
կան հենասյունը՝ անհատական մո-
տեցումը, թեև գիտակցված է, սակայն
դեռևս չի ներմուծվել ընտանիքների
աջակցության համակարգ: Անհատական
մոտեցմամբ ենթադրվող աշխատանքը,
դեպք վարող-սոցիալական աշխատող-
ների միջոցով դեռևս չի ինստիտուցիո-
նալացվել, քանի որ՝

- ընկալելի չեն նրանց նոր դերա-
կատարումները.

- չկան անհատական մոտեցման
կիրառման համար անհրաժեշտ ֆունկ-
ցիոնալ աշխատանքային միջավայրեր.

- առկա է անսովորություն սոցի-
ալական ոլորտի այլ դերակատարների
հետ հորիզոնական հարաբերություննե-
րի առումով (վարչահրամայական սովոր
գործառման համատեքստում).

- դեպք վարողներն ունեն ցածր
մոտիվացիա և կատարելագործման
հնարավորությունների սահմանափա-
կություն:

Մարդու՝ որպես հասարակական
էակի նկատմամբ վերաբերմունքի
փոփոխությունը, որտեղ մարդը հա-
մարվում է մեծագույն արժեք, անհրա-
ժեշտաբար առաջ է բերում պահանջ՝
հասարակական կյանքի կազմակերպ-
ման գործընթացը դարձնել արդյու-
նավետ, իսկ սոցիալական պաշտպա-
նության համակարգը՝ ձկուն և ունակ,
նվազեցնելու հնարավոր սոցիալական
ռիսկերը: Իսկ սոցիալական ոլորտի
տեխնոլոգիական մոտեցումը ենթադ-
րում է փոփոխությունների դիտար-
կում էինչպես հասարակության՝ որպես
ամբողջի, այնպես էլ նրա առանձին
տարրերի նկատմամբ: Սա պայմա-
նավորված է այն հանգամանքով, որ
անհատի, ընտանիքի կամ ցանկացած
սոցիալական խմբի կյանքում տեղի ու-
նեցող փոփոխություններն անպայման
այս կամ այն կերպ ազդեցություն են
գործում մեկ ուրիշի կենսագործունե-
ության վրա:

Սոցիալական ոլորտում փոփոխու-
թյունները, զարգացումները, որոնք
ենթադրվում են տեխնոլոգիական
գործընթացի արդյունքում, հնարավոր
են միայն այն դեպքում, երբ գործըն-
թացի օբյեկտը, որն այս դեպքում նաև
սուբյեկտ է, հանդես գա որպես հա-
մագործակցող և ակտիվորեն գործող
կողմ: Սոցիալական ոլորտի պրակտի-
կան ցույց է տալիս, որ անհատի, ըն-
տանիքի կյանքում մասնագիտական
միջամտության արդյունքում ցանկա-
լի փոփոխությունները հնարավոր են
միայն այն դեպքում, երբ դրանք իրա-
կանացվում են վերոնշյալների համա-

ձայնությամբ և մասնակցությամբ: Սա է պատճառը, որ սոցիալական տեխնոլոգիաների ընտրությունը և կիրառումը պետք է հիմնվեն հասարակության և նրա առանձին կառուցվածքային տարրերի խորքային վերլուծության վրա: Հետևաբար, ընտանիքների աղքատությունը և սոցիալական տարբեր հիմնախնդիրները հաղթահարելու ներկա սոցիալական տեխնոլոգիաները վերաիմաստավորման կարիք ունեն, ինչպես Ա. Բուդուդյանը կասեր՝ «անհետևողական և անպատասխանատու բարեգործությունից»¹ մարդկանց ակտիվացնելու փիլիսոփայությանն անցնելու, ինքնօգնության և փոխօգնության տեխնոլոգիաները փոխառնելու նպատակով:

ПРОБЛЕМА ПЕРЕОСМЫСЛЕНИЯ СОЦИАЛЬНЫХ ТЕХНОЛОГИЙ СОЦИАЛЬНОГО СОДЕЙСТВИЯ БЕДНЫМ СЕМЬЯМ В ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ

МИРА АНТОНЯН

*Ереванский государственный университет, кафедра социальной работы и
социальных технологий, кандидат социологических наук, доцент*

Смены в общественной жизни в постсоветской Армении привели к новым, возможно, в какой-то степени к незнакомым социальным процессам, распознавание, определение, технологизирование интервенций, а также прогнозирование дальнейших развитий которых все еще не были сделаны. Статья рассматривает несовершенство нынешних социальных технологий по преодолению бедности семей, и в дополнение, обосновывает необходимость применения новейших методов в рамках социальной работы. Такой подход даст возможность перейти от благотворительности и общих типов государственных социальных технологий без применения индивидуального подхода к технологиям содействия и активизации людей.

THE ISSUE OF RECONSIDERING CURRENT SOCIAL TECHNOLOGIES OF SUPPORT OF POOR FAMILIES IN POST SOVIET ARMENIA

MIRA ANTONYAN

Yerevan State University, Department of Social Work and Social Technologies PHD, Dozent

The changing developments of social life in post-soviet Armenia led to new, perhaps unfamiliar social processes, the recognition and definition of which as well as technologization of intervention and further developments have not yet occurred. The article focuses on the imperfection of current social technology to overcome poverty of families and justify the necessity of its reconsideration and application of new approaches in the context of social work. This approach will make it possible to switch from charity and general type of state social technology without an application of individualized approach towards promoting activation of people.

1 Ա. Բուդուդյան, Կարիք և բարեգործություն, ՆորՆախիջևան, եղբ. Հ. ևՍ. Ափգարյաններ, 1901թ.:

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԸՆԿԱԼՄԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ
ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ**

Ուսումնասիրվող հիմնախնդրի տեսական հիմքերի վերլուծությունը և էմպիրիկ հետազոտությունների արդյունքների քննումը ցույց են տալիս, որ նշանակալից դրական փոխկապակցվածություն գոյություն ունի սոցիալական անվտանգության ընկալման և սոցիալական վստահության ու նրա տարբեր դրսևորումների միջև: Իրանի Մազանդարան նահանգում իրականացրած մեր հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ մարդկանց մոտ ինչքան բարձր լինի սոցիալական անվտանգության մակարդակի ընկալումը, այդքան բարձր կլինի նաև սոցիալական վստահության մակարդակը: Այս արդյունքները համընկնում են իրանցի մի շարք հետազոտողների ուսումնասիրությունների եզրահանգումներին և Ռոզստինի, Ստոլի, Գիդդենսի մոտեցումներին: Անվտանգության զգացողությունը քաղաքացիների մոտ բարձրացնելու նպատակով պետք է խթանել հանրության սոցիալական վստահությունը, իսկ դրա համար անհրաժեշտ է բարելավել քաղաքացիների սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ապահովել նրանց հոգեկան առողջությանը նպաստող պայմանները: Հատկապես կարևոր է հոգատար վերաբերմունք երիտասարդների խնդիրներին, Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ մարդիկ ամենաբարձր մտահոգությունն ու անապահովության զգացողությունն են հայտնել իրենց և երեխաների ապագայի հանդեպ: Պետք է կարգավորվեն երիտասարդների զբաղվածության և անգործության հարցերը, բարձրագույն կրթության, ընտանիք կազմելու, ապա-

գայի հանդեպ հույս ու հավատ ունենալու և այլ բազմաթիվ խնդիրները: Իրանի պետությունը և հասարակական կյանքի պատասխանատուները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն միջանձնային վստահության, հասարակական տարբեր ինստիտուտների հանդեպ վստահության վրա: Սոցիալական վստահության տարածումը հասարակության տարբեր մակարդակներում պահանջում է լուրջ ներդրումներ կատարել կրթադաստիարակության, մշակութային և հասարակական բնագավառներում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սոցիալական կապիտալ, սոցիալական անվտանգություն, սոցիալ-տնտեսական կարգավիճակ, երիտասարդների խնդիրներ, սոցիալական վստահություն:

Սոցիալական վստահությունը՝ որպես սոցիալական կապիտալի ամենակարևոր բաղկացուցիչ, վաղուց ի վեր հետաքրքրել է դասական սոցիոլոգիայի տեսաբաններին, սակայն այն առավել լուրջ ուշադրության արժանացավ, հատկապես, վերջին տասնամյակում՝ սոցիալական գործընթացների զարգացման և սոցիալական իրականության կերպափոխման ու տեղաշարժերի արդյունքում:

Մարդկային փոխհարաբերությունների, ինստիտուտների ու կազմակերպությունների ընդլայնման և հասարակության կառուցվածքի առավել բարդացման հետևանքով, նաև մարդկանց մոտ եսակենտրոնության մակարդակի բարձրացման պայմաններում՝ առավել արդիական ու հրատապ է դարձել սոցիալական վստահության

հիմնահարցը: Ժամանակակից արդիականացված հասարակության համար է՛լ ավելի անհրաժեշտ է սոցիալական վստահության մակարդակի խթանումը՝ հավաքական կյանքի հարատման, գործընթացների սահունացման և հասարակական կարգուկանոնի հաստատման համար: Անվտանգությունն ու ապահովությունը մարդկային հասարակության զարգացման և խաղաղ կյանքի կարևոր նախադրյալներից են: Հանցագործությունների ու ոճիրների, բարոյական շեղումների, մարդու իրավունքների դեմ ոտնձգության, արժեքների ու նորմերի խախտման ցածր մակարդակը վկայում է սոցիալական անվտանգության և կարգ ու կանոնի առկայության մասին:

Ա.Մալուոյի՝ պահանջմունքների հիերարխիայի տեսության համաձայն՝ մարդկային պահանջմունքներից մեկն էլ անվտանգության ու ապահովության կարիքն է, որն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմեր, այսինքն ներառում է թե՛ ֆիզիկական ապահովությունն ու հարմարավետությունը և թե՛ հոգեկան ու հոգեբանական հանգստությունն ու հանդարտությունը: ¹ Հասարակության մեջ առկա անվտանգությունը պետք է տարբերակել՝ դրա ընկալումից ու պատկերացումից հասարակության անդամների մոտ: Այս երկու հասկացությունները թեև սերտորեն փոխառնչվում են իրար, բայց նույնական չեն և կարող են լինել համարժեք կամ էլ ոչ համարժեք: Հասարակական անվտանգության ընկալումը այդ հասարակության անդամների մոտ ձևավորված պատկերացումը, զգացողությունն ու ընկալումն է հասարակական անվտանգության մակարդակից: Մարդկանց գնահատականն ու ընկալումը կարող է լինել ձձմարտացի, օբյեկտիվ և ռեալ, սակայն կարող է լինել նաև

սուբյեկտիվ, իրականությանը չհամապատասխանող: Ինչպիսի պատճառներով էլ կազմված լինի այդ սուբյեկտիվ կարծիքն ու ընկալումը, պետք է հաշվի առնել այն և քննել դրա արմատներն ու դրդապատճառները: Անվտանգության ընկալումն առաջանում է անհատական ու հասարակական մի շարք գործոնների փոխազդեցությամբ ու գուգակցմամբ, իսկ դրա բացակայությունը կամ նվազումը պայմանավորված են բազմաթիվ պատճառներով ու պայմաններով: Հասարակական անվտանգության մակարդակի ընկալումը հասարակության անդամների մոտ կարևոր գործոններից մեկն է սոցիալական վստահության ձևավորման համար:

Է. Գիդդենսը, մերժելով ամեն տեսակի մինիմալիստական մոտեցումը սոցիալական վստահության հարցին, շեշտում է մանր ու խոշոր երևույթների փոխկապակցվածությունը, նրանց համալիր ու համադրված դիտարկման անհրաժեշտությունը: ² Անդրադառնալով արստրակտ համակարգերի հանդեպ վստահությանը և ընդհանրացված վստահությանը՝ Գիդդենսն այն կարծիքն է հայտնում, որ վստահության վրա հիմնված փոխհարաբերությունները խիստ անհրաժեշտ են հենց մոդերն հասարակությանը, քանի որ այստեղ ժամանակային ու տարածական միջակայքը չափազանց լայն է, ուստի սոցիալական կապերի հաստատման համար առավել անհրաժեշտ է վստահության առկայությունը: ³ Մոդերն հասարակությունում մեծ դեր ունեն համակարգերի և ինստիտուտների հանդեպ վստահությունը, հավատ այնպիսի գիտելիքի ու ինֆորմացիայի հանդեպ, որոնք հիմն-

1 Շ. Սարլաքզադեհ, Ազատության և անվտանգության փոխառնչությունները Իմամ Խոմեյնիի տեսանկյունից, Քաղաքական գիտությունների հանդես, 9-րդ տարի, 34-րդ համար, Թեհրան, 2006, էջ 136:

2 Ս. Օջաղու և Մ. Չահեդի, Սոցիալական վստահությունը և նրա վրա ազդող գործոնները Չանջան քաղաքի բնակիչների շրջանում, Իրանի հասարակագիտության հանդես, 6-րդ շրջան, 4-րդ համար, Թեհրան, 2005, էջ 100:

3 Է. Գիդդենս, Մոդերնիզմի հետևանքները, թարգմանիչ Սալաի Մ., «Մարքազ» հրատարակչություն, Թեհրան, 1998, էջ 119:

ված չեն մարդու անձնական փորձի վրա: Գիդդենսը նաև առաջ է քաշում «անվստահություն» եզրույթը, որը կարող է տարածվել մարդկանց և աբստրակտ համակարգերի վրա: ¹

Շվեդացի քաղաքագետ Բ. Ռոզեստինը և կանադացի հետազոտող Դ. Ստոլը նշում են, որ սոցիալական կառույցների քաղաքական արդարության ու արդյունավետության ընկալումը կարող է դրական ազդեցություն թողնել ընդհանրազված վստահության ձևավորման վրա: Օրինապահ մարմինների ու համակարգերի պարտականությունն է հայտնաբերել ու պատժել օրինախախտ անձանց (հանցագործներ, ոճրագործներ, գողեր և այլն), ովքեր մեծապես վնասում են ընդհանուր սոցիալական վստահությանը: Եթե քաղաքացիները տեսնեն, որ իրավապահ մարմինները և պետական ինստիտուտները գործում են թափանցիկ, արդարացի և արդյունավետ, ապա կարող են ընդունել այն գաղափարը, համաձայն որի օրինախախտ մարդկանց հնարավորությունը փոքր է օրենքից փախուստ տալու առումով: Այսպիսի միջավայրում մարդիկ կենթադրեն, որ ուրիշները դժվար թե դեվիանտ վարքագիծ կցուցաբերեն, քանի որ կպատժվեն, հետևաբար սոցիալական վստահության մակարդակը այդպիսի միջավայրում աճում է: ²

Ռոբաստինի ու Ստոլի համոզմամբ՝ սոցիալական վստահության ձևավորման համար առավել կարևոր է իրավապահ ինստիտուտների արդարությունն ու արդյունավետությունը: Ընդհանուր առմամբ, եթե քաղաքացիները վստահեն դատական և ոստիկանական համակարգերին, ավելի հեշտ կվստահեն ուրիշ մարդկանց և սոցիալական կառույցներին: Մի խոսքով, ինստիտուտների հան-

դեպ անվստահությունը, կաշառակերության ու կոռուպցիայի առկայությունը և ուրիշների հանդեպ վտանգի ու անապահովության ընկալումները բացասաբար են ազդում սոցիալական վստահության ձևավորման վրա: ³

Անդրադառնալով իրանական հասարակությանը նշենք, որ Իրանում վերջին տարիներին կատարվել են մի շարք հետազոտություններ իրանական հասարակության մեջ սոցիալական վստահության դրսևորումների գնահատման նպատակով: Մի շարք հետազոտություններ քննել են անվտանգության վերաբերյալ ընկալումների գործոնի ազդեցության չափն ու մակարդակը:

Սալման Սաֆդարին սոցիալական անվտանգության ընկալումների վրա ազդող գործոնները ճանաչելու նպատակով իր հետազոտության մեջ մի շարք բնութագրիչներ ու ցուցիչներ է առաջարկել սոցիալական վստահության գնահատման համար: Նա իր աշխատանքում սոցիալական վստահության մակարդակը գնահատել է հետևյալ չափանիշներով կամ սանդղակներով՝ ուրիշների հանդեպ հոգատարության մասին ընկալումը, ապօրինի արարքների հաճախականության մասին ընկալումը, ընկերներին վստահելու մակարդակը և ուրիշների հետ փոխհարաբերությունն ծավալելիս կասկածամտության չափն ու մակարդակը: ⁴

Քիաբաշուրին և Աֆրասիաբին (2012 թ.) Շիրազ քաղաքի պետական և Փայամ նուր համալսարանների ուսանողության շրջանում կատարած հետազոտության մեջ մի շարք եզրահանգումների հասան. սոցիալական վստահության մակարդակը ուսանողների շրջանում միջինից ավելի բարձր է: Վարկածների

1 Նույն տեղը էջ 119:

2 Rothstein, B., and D. Stolle.(2008). "The State and Social Capital: A Theory of Generalized Trust". Comparative Politics., Vol. 40, No. 4, July , 2008, pp. 1-16.

3 Նույն տեղը, էջ 1-16:

4 Սաֆդարի Ս., Սոցիալական բավարարվածությունը և նրա գործոնները, Թեհրանի Շահիդ Բեհեշթի անվան համալսարան, Հասարակական գիտությունների հետազոտությունների մագիստրոսական թեզ, Թեհրան, 1995:

ստուգումը ցույց տվեց, որ սոցիալական վստահությունը նշանակալիորեն կապված է մի շարք փոփոխականների հետ՝ հասարակական անվտանգության մակարդակի ընկալման, ուսումնական առաջադիմության, ուսումնական անցյալի, սոցիալական ընդգրկվածության և շեղումների հետ: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքներն ապացուցեցին, որ հասարակական անվտանգության մակարդակի ընկալման և կրոնական հավատարմության փոփոխականներն ամենից շատ էին փոխկապակցված ուսանողների սոցիալական վստահության մակարդակին և 38 տոկոսով պայմանավորում էին ուսանողների շրջանում սոցիալական վստահության մակարդակի տատանումները: ¹

Մահմուդ Քեթաբին, Մեհդի Ադիբի Սադեն, Վահիդ Ղասեմին և Մաթթար Սադեդի Դահչեշմեն (2010թ.) սոցիալական վստահության դրսևորումներն ուսումնասիրեցին Իրանի Չահարմահալ և Բախտիարի նահանգում: Նշանակալից կապ է գրանցվել հասարակական անվտանգության մակարդակի ընկալման, կրոնական հավատալիքների և այլ մարկանց կրոնական ինտելու մասին համոզվածության միջև: ²

Մանսուր Վոսուդին և Հաշեմ Արամը (2000թ.) հետազոտություն անցկացրին Խալիսալ քաղաքում: Մտացված արդյունքներն ապացուցում էին, որ տարիքը, հասարակական անվտանգության մակարդակի ընկալումը, կյանքից բավարարվածությունը և միասնական արժեքները նշանակալիորեն կապված են սոցիալական վստահության հետ: ³

Սաիդ Մոհիֆառը և Փարվիզ Ջա-

հանգիրին (2000թ.) Ուրմիա քաղաքում ուսումնասիրեցին սոցիալական ընդհանրացված վստահության վրա ազդող հասարակական գործոնները: Արդյունքներն ապացուցեցին, որ սոցիալական վստահության մակարդակը ցածր է այս քաղաքում: Հասարակական անվտանգության մակարդակի ընկալումը, սոցիալական հեղինակությունը, սոցիալական պատասխանատվությունը, հաղորդակցական կապերը և համագործակցությունները նշանակալից փոխկապակցություն են գրանցել սոցիալական վստահության հետ: ⁴

Քաղաքացիների մոտ հասարակական անվտանգության մակարդակի ընկալումների ուսումնասիրությունը կարևոր է և անհրաժեշտ, հատկապես, իրանական հասարակության համար, որը գտնվում է ավանդականից դեպի արդյունաբերական հասարակություն անցումային փուլում: Երբեմն սոցիալական վստահությունը կորցնում է իր միավորման ու մոբիլիզացման գործառույթը, այդ դեպքում իջնում է սոցիալական վստահության ու անվտանգության մակարդակը հասարակության մեջ և բարձրանում միջանձնային կապածամտությունը, ինչի հետևանքով խաթարվում է սոցիալական անվտանգությունը, որը սոցիալական վստահության, հատկապես վերացական և ընդհանրացված վստահության հիմքն է կազմում:

Մեր հետազոտության մեջ մենք քննել ենք մի շարք գործոնների, այդ թվում հասարակական անվտանգության մակարդակի ընկալման ազդեցությունն ու նշանակությունը սոցիալական վստահության ձևավորման հարցում: Մենք առաջադրել ենք այն կանխավարկածը, որ նշանակալից հարաբերակցություն գոյություն ունի հասարակության

1 Քիաբաջուրի և Աֆրասիաբի, Տնտեսական սոցիոլոգիայի և գարգացման հանդես, 2-րդ համար, Թեհրան, 1912, էջ 143-165:

2 Մ. Քեթաբի, Մ. Ադիբի Սադեհ, Վ. Ղասեմի և Ս. Սադեդի, Կիրառական հոգեբանություն, 21-րդ տարի, 4 (40), Թեհրան, 2010, էջ 97-122:

3 Մ. Վոսուդի, Հ. Արամ, Սոցիալական գիտությունների հանդես, 3-րդ տարի, 3-րդ համար, Թեհրան, 2009, էջ 133-153:

4 Ս. Մոհիֆառ և Փ. Ջահանգիրի, Հասարակական գիտությունների հանդես, 1-ին շրջան, 1-ին համար, Թեհրան, 2009, էջ 47-67:

անդամների մոտ հասարակական անվտանգության մակարդակի ընկալման և նրանց սոցիալական վստահության մակարդակի միջև:

Սույն հետազոտության գլխավոր համախմբությունն է Իրանի Մազանդարան նահանգում ապրող 18-ից 65 տարեկան քաղաքացիները, որոնց ընդհանուր թիվը կազմում է 2 միլիոն 100 հազար մարդ: Ընտրանքի ծավալը կազմել է 384 միավոր Քուրբանի բանաձևի համաձայն 5 տոկոս սահմանային սխալի և 0.95 վստահության հավանականության համար: Առավել ճշգրտության ու նաև հավանական դժվարություններից ու անվավեր

պատասխաններից խուսափելու համար՝ ընտրանքի ծավալը մեծացրել և ընդգրկել ենք 440 մարդ: Վավեր և լիարժեք է ճանաչվել 400 թերթիկ, որոնք և կազմել են սոցիոլոգիական հարցման վերլուծության հիմքը:

Իրականացվել է շերտավորված քլաստերային ընտրանք, որտեղ ներկայացվել են քաղաքական և գյուղական բնակչությունը և Մազանդարան նահանգի 3 տարածաշրջանները: Ստորև ներկայացված է սոցիալական վստահության և հասարակական անվտանգության ընկալման վերաբերյալ տվյալների միաչափ բաշխումը:

Աղյուսակ 1.

Հարցվողների հաճախականությունը՝ ըստ ապահովության և հասարակական անվտանգության ընկալման վերաբերյալ տրված պատասխանների:

Թիվ	Հարցեր	Շատ քիչ	Քիչ	Որոշ չափով	Շատ	Բավականին շատ	Միջին
1	Մութն ընկնելուց հետո փողոցում քայլելիս ինչքանով եք Ձեզ ապահով ու անվտանգ զգում:	13.5	10.0	48.8	22.5	5.3	2.96
2	Տանը ինչքանով եք ապահով զգում Ձեզ՝ գողության և հանցագործության դեմ:	13.5	2.5	48.5	31.0	4.5	3.11
3	Ձեր բնակավայրն ինչ չափով ապահովություն և անվտանգություն ունի:	6.0	12.0	54.5	25.3	2.3	3.06
4	Կարծում եք ներկայումս կարելի է առանց մտավախության բանկից մեծ գումար դուրս բերել և փոխադրել փողոցում:	34.8	30.8	25.8	8.0	0.8	2.09
5	Ինչքանով հնարավոր է հասարակության մեջ արտահայտել սեփական կարծիքներն ու համոզմունքները:	26.3	26.0	39.5	6.8	1.5	2.31
6	Փողոցում ավտոմեքենան կանգնեցնելու ժամանակ ինչքանով եք մտահոգվում ավտոն գողանալու հավանականության համար:	7.5	9.3	32.5	20.0	30.8	3.57
7	Ինչքանով եք մտահոգվում Ձեր և Ձեր զավակների ապագայի համար:	3.8	2.3	23.5	27.8	42.8	4.04

Ինչպես արտացոլված է աղյուսակ 1-ում՝ առաջադրված հարցերից ամենաբարձր միավորը գրանցվել է «Ինչքանով եք մտահոգվում Ձեր և Ձեր երեխաների ապագայի համար» տարբերակի դեպքում, ինչը խոսում է ապագայի հանդեպ քաղաքացիների մտահոգության բարձր մակարդակի մասին: Ամենացածր միավորը գրանցվել է ի պատասխան «Ներ-

կայուն կարելի՞ է առանց մտավախության բանկից մեծ գումար դուրս բերել և փողոցում փոխադրել» հարցադրման: Այս արդյունքը պայմանավորված է Իրանի խոշոր քաղաքներում բանկային գործարքների ժամանակ դրամական առձեռն տեղափոխումների բարձր ռիսկայնությամբ և վտանգներով:

Աղյուսակ 2.

Հարցվողների հաճախականությունը՝ ըստ հասարակական անվտանգության մակարդակի ընկալման:

Հասարակական անվտանգության մակարդակի ընկալում	Հաճախականություն	Տոկոս
Ցածր	155	38.8%
Միջին	215	53.8%
Բարձր	30	7.5%
Ընդամենը	400	100%
Ընդհանուր միջին	17.92	
Հնգաստիճան գնահատմամբ միջին	2.56	

Այսպիսով, ըստ աղյուսակ 2-ի տվյալների՝ հարցվողների 53.8 տոկոսը դրսևորում է հասարակական անվտանգության միջին մակարդակի ընկալում, 38.8 տոկոսը՝ ցածր մակարդակ, իսկ հասարակական անվտանգության

բարձր մակարդակը դրսևորել է 7.5 տոկոսը: Ապահովության զգացողության ընդհանուր միջինը կազմում է 17.92, իսկ հնգաստիճան գնահատմամբ միջինը կազմում է 2.56, որը ցածր է համարվում:

Աղյուսակ 3.

Հասարակական անվտանգության մակարդակի ընկալման և սոցիալական վստահության միջև Սպիրմանի կորելացիայի թեստ:

Անկախ փոփոխական	Կախյալ փոփոխական	Ընտրանք	Կորելացիա	P
Հասարակական անվտանգության ընկալում	Բազային վստահություն	400	0.157	0.002
	Արստրակտ վստահություն	400	0.398	0.000
	Ընդհանրացված վստահություն	400	0.160	0.001
	Սոցիալական վստահություն	400	0.345	0.000

Աղյուսակ 3-ը ներկայացնում է հասարակական անվտանգության մակարդակի ընկալման և սոցիալական վստահության միջև կորելացիոն վերլուծությունը Սպիրմանի գործակցի օգ-

նությամբ: Ստացված արդյունքների համաձայն և հաշվի առնելով կորելացիայի գործակիցն ու P-ի մեծությունը (99 աստիճան վստահությամբ)՝ նշանակալից կապ է գրանցվել հասարակական ան-

վտանգության ընկալման և սոցիալական վստահության միջև: Կորեկացիայի ուղղությունը ցույց է տալիս, որ ինչքան մարդիկ բարձր են համարում և ընկալում հասարակական անվտանգության մակարդակը, այդքան ավելի բարձրանում է նաև նրանց սոցիալական վստահության մակարդակը:

Է. Գիդենսի կարծիքով՝ սոցիալական վստահության մի շարք կողմեր ուղղակիորեն փոխկապակցված են հասարակական անվտանգության մակարդակի ընկալման հետ: Ռեզիստենի և Սոուլի կարծիքով՝ սոցիալական անվտանգության բարձրացման միջոցով կարելի է ներգործել սոցիալական վստահության վրա: Քամալին (2004թ.) իր ուսումնասիրության մեջ արձանագրեց, որ ընդհանրացված վստահությունը և բազային վստահությունն ամենասերտ փոխկապակցվածություն ունեն հասարակական անվտանգության մակարդակի ընկալման հետ, այսինքն ընդհանրացված վստահության և բազային վստահության բարձրացմամբ՝ խորանում է հասարակական անվտանգության մակարդակի ընկալումները:

Նկատի առնելով սոցիալական վստահության նշանակությունն ու կարևորությունը հասարակական կյանքում՝ անհրաժեշտ է փնտրել ուղիներ ու միջոցներ այն բարձրացնելու և խորացնելու համար:

Հասարակության զարգացման ու բարգավաճման ուղղությամբ քաղաքացիների համագործակցության ու մասնակցության ընդլայնման նպատակով անհրաժեշտ է ստեղծել միջնորդ խմբեր կամ քաղաքացիական կազմակերպություններ (կուսակցություններ, արհմիություններ, կոոպերատիվներ, կամավորական խմբեր և այլն): Միջնորդ խմբերի ամենագլխավոր գործառույթն այն է, որ սոցիալական տարբեր ցանցերում ընդլայնում ու ընդարձակում են մարդկանց հաղորդակցական և արտահայտման փոխշփումները, նրանց սոցիալական

կապիտալը և ռեսուրսները: ՀԿ-ները, կամավորական սկզբունքով աշխատանքները, քաղաքացիական միջոցառումները կարող են խթանել մարդկանց քաղաքացիական ներգրավվածությունը, նրանց հասարակական ակտիվությունն ու մասնակցությունը սեփական միջավայրում տեղի ունեցող իրադարձություններում և գործընթացներում:

Անհրաժեշտ է կառուցել և գործի դնել հանրային վայրեր (զբոսայգիներ, գրադարաններ, հավաքատեղիներ ու սրահներ, ցուցահանդեսներ, միություններ, մարզասրահներ և այլն ...), որտեղ քաղաքացիները կարողանան հավաքվել իրար շուրջ, ընդլայնել իրենց սոցիալական կապերն ու համագործակցությունները, կազմակերպել միասնական աշխատանքներ ու նախագծեր: Այս վայրերը պետք է լինեն ապահով և ջերմ միջավայրով, հատկապես, երեխաների, պատանիների և կանանց համար, որպեսզի քաղաքացիներն ու ընտանիքներն իրենց անկաշկանդ ու պաշտպանված զգան և բարձրանա նրանց հասարակական անվտանգության մակարդակի ընկալումը:

Իշխանությունները միշտ էլ անվտանգության հաստատումը և հասարակության մեջ անվտանգության զգացողության ձևավորումը համարել են իրենց գլխավոր պարտականություններից մեկը: Հեղինակավոր և ուժեղ է այն իշխանությունը, որտեղ մարդիկ զգան ֆինանսական, հոգեկան, ֆիզիկական և բարոյական անվտանգություն, պաշտպանված լինեն ամեն տիպի ոտնձգությունից և չվախենան սեփական իրավունքների ու օրինական ազատությունների համար: Այսպիսի հասարակարգում խթանվում է սոցիալական վստահությունը, ինչն իր հերթին դրական ազդեցություն է թողնում հասարակության մոբիլիզացման, երկրի զարգացման և պետության առավել ամրապնդման վրա:

ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Է. Գիդդենս, Մոդերնիզացիայի հետևանքները, թարգմանիչ Սալասի Մ., «Մարքազ» հրատարակչություն, Թեհրան, 1998թ.:
2. Ս. Մոհիֆառ և Փ. Զահանգիրի, Հասարակական գիտությունների հանդես, 1-ին շրջան, 1-ին համար, Թեհրան, 2009, էջ 47-67:
3. Շ. Սարլաքզադեհ, Ազատության և անվտանգության փոխառնչություններն Իմամ Խոմեյնիի տեսանկյունից, Քաղաքական գիտությունների հանդես, 9-րդ տարի, թիվ 34, Թեհրան, 2006թ.:
4. Ս. Սաֆդարի, Սոցիալական բավարարվածությունը և նրա գործոնները, Թեհրանի Շահիդ Բեհեշթի անվան համալսարան, Հասարակական գիտությունների հետազոտությունների մագիստրոսական թեզ, Թեհրան, 1995:
5. Մ. Վոսուդի, Հ. Արամ, Սոցիալական գիտությունների հանդես, 3-րդ տարի, 3-րդ համար, Թեհրան, 2009, էջ 133-153:
6. Քիաբաջուրի և Աֆրասիաբի, Տնտեսական սոցիոլոգիայի և զարգացման հանդես, 2-րդ համար, Թեհրան, 1912, էջ 143-165:
7. Մ. Քեթաբի և Մ. Ադիբի Սադեհ, Վ. Ղասեմի և Ա. Սադեդի, Կիրառական հոգեբանություն, 21-րդ տարի, 4 (40), Թեհրան, 2010, էջ 97-122:
8. Ս. Օջաղլու և Մ. Զահեդի, Սոցիալական վստահությունը և նրա վրա ազդող գործոնները Զանջան քաղաքի բնակիչների շրջանում, Իրանի հասարակագիտության հանդես, 6-րդ շրջան, 4-րդ համար, Թեհրան, 2005, էջ 100:
9. Rothstein B. & D. Stolle, «The State and Social Capital: A Theory of Generalized Trust». Comparative Politics., Vol. 40, No. 4, July 2008.

ВЛИЯНИЕ ВОСПРИЯТИЯ УРОВНЯ ОБЩЕСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ НА ФОРМИРОВАНИЕ СОЦИАЛЬНОГО ДОВЕРИЯ

РАДЖАБАЛИ АЛЛАХЯРАХМАДИ

ЕГУ, факультет социологии, аспирант

Между восприятием социального обеспечения, социального доверия и его различными проявлениями существует значительная положительная корреляция. Данные наших исследований, осуществленных в провинции Ирана Мазандаран, показывают, что чем выше восприятие уровня социального обеспечения, тем выше уровень социального доверия. Эти результаты совпадают с заключениями ряда иранских исследователей, а также с подходами Розстина, Столи, Гидденса. С целью повышения у граждан чувства обеспечения необходимо поощрять социальное доверие, а для этого необходимо улучшить социально-экономическое положение граждан, обеспечить условия, способствующие их психическому здоровью.

INFLUENCE OF PERCEPTION OF THE LEVEL OF PUBLIC SAFETY ON THE FORMATION OF SOCIAL CONFIDENCE

RAJABALI ALLAHYARAHMADI

YSU, Department of Sociology, Postgraduate

There is a significant positive correlation between the perception of social support, social trust and its various manifestations. The findings of our research carried out in the Iranian province of Mazandaran, show that the higher the perception of the level of social security, the higher the level of trust and social confidence. These results are consistent with the findings of a number of Iranian scholars, as well as approaches Rothstein, Stolle, Giddens. In order to increase the citizens' sense of ensure, it is necessary to promote social trust, and for this it is necessary to improve the socio-economic situation of citizens, to ensure an environment conducive to their mental health.

MARGARITA PETROSYAN

*Yerevan State University, the Faculty of Romance and Germanic Philology,
Chair English Philology, Applicant*

THE PROBLEM OF MEDIA COMPETENCY AMONG STUDENTS

The article is devoted to the issue of forming students' media competence. In recent years, in native and foreign methodology, the problem of forming the abilities of media competence is being actively developed. Nowadays we have to give new literacy to our students, to make them ready for new challenges, to prepare them for a new citizenship in digital society.

Political, economic, scientific and everyday discourses agree that media have become increasingly significant. In fact, media and especially visuals have always been relevant to processes of human communication – no matter where you start in history.

Today, it is generally yielded that media play a perceptible part in the processes of growing up, the development of identities, values and everyday aesthetics, or the shaping of references to the self and the world. In short, it is largely beyond doubt that media are involved in the creation of realities and the formation of communicative processes, and that they have to be considered an agent of socialization. In this general sense they are granted quite constructive traits, also and especially when the influences and effects of media are judged as destructive.

Key words: media competency, media education, formation of media competency, media communication.

Traditionally, technologies and media have been used in education as “teaching resources”.

This reductionist approach must change,

expanding to other perspectives: the media as a way of teaching content, and the media as communication; considering both the constructivist model, which puts the emphasis on learning rather than on teaching, and on students constructing their own knowledge from what we give them, being able to acquire information within the chaos.

Today modern life points out to the Teachers the necessity of forming media competence. The analysis of the school and university experience to implement media education to pupils and students gives grounds for the conclusion that the majority of Teachers do not take into consideration the fact that the most significant and important changes are taking place in the information sphere and that, due to the wide spread of media, the pupil is constantly under the influence of multiple streams of information. And the impact of those flows, as a rule, controlled, neither by teachers nor by parents and is not predicted and practically not considered.

The theoretical basis for the use of media education in the educational process was the Grunwald Declaration of 1982, which pointed out the importance of literacy in the industry of mass media pointing attention to the influence of media on education. One of the general tendencies of the world development is the integration to the information society. In this regard, the Council of Europe defined the most significant (key) competences associated with the life in the information society, and include the knowledge of new technologies of searching and processing

information, understanding the importance of their use, the ability to evaluate and criticize information in mass media, the ability to persist the negative influence of mass media. In Pedagogics in the 60–70 years of the last century and at present, media education has developed together with global educational issues as the theory of media education (V Baranov, A. Fedorov, I. Graschenkova, I. Levshina, V. Monastyrsky, A. Nechaev, G. Pacco, S. Penzin, Y. Rabinovich, V. Speed, I. Weisfield, I. Zadorozhna etc.).

According to the definition adopted in the 1989 international conference organized by the Association for Media Literacy of Canada, media literacy is the ability to decode, analyze, evaluate and communicate in a variety of ways.

One must ensure that children and young people develop these skills and attitudes that are based on multiple forms of communication as part of their daily lives. Working with the visual language enriches our aesthetic perception (sensitivity to sound, image and text), but there is also a need to develop critical thinking, analysis and understanding of the media in connection with their audience, and a need to teach students to express themselves using that medium. They will be audiovisual literates when they are able to decode a series of signs, and also to produce or to encode them.

Media competence has three main aspects or areas to teach, and inside each on them we may include several dimensions: knowledge (media industry, technology, language, processes of production, access to information), understanding (ideology and values) and expression (communication, creation, citizen participation). It would be better to consider media education as an educational practice, rather than a line of research, so in this case we need to create a series of practical activities, experiences that aim to train learners in active and critical interpretation of the mass media (film, radio, television, and printed media, among other

new media). As it was mentioned above, it is more a pedagogical activism than a theoretical development. Knowing the discourse structure of news or announcements allows students to maintain focus on the ideological part; but this will only happen after a learning period in which they are taught the basic codes that are used, the visual semiotics. The student has to internalize this analysis; he or she has to know that there is a misinformation, a manipulation of that media.

Media education, as indicated by R. Aparici et al. (2010: 49), must always consider six dimensions: Language, Technology, Production processes, Ideology and values, Aesthetic, Interaction. To read and create media messages, students must go through three phases. The approach, when our students have to become aware of the peculiarities of media. A second phase, of deeper knowledge, involves analysis of the technological characteristics or specific language of the media, where they will be able to be thoughtful and critical readers. It is about knowing the visual codes and analyzing resources. A third phase implies that students construct their own messages.

Today there is a gap between the learning styles used by formal schooling and those that are characteristic of children's after-school experiences, for instance, video games and social networks, which assign them an active role. Moreover, they spend much of their lives watching television, and not only programs and advertising designed for children, but also the ones for adults. Therefore, we have to connect with their motivations and forms of relating and obtaining information, otherwise, the "formal" teaching experiences will remain as a marginal experience in their lives. We also must help them to develop critical thinking.

We should expand the educational scenario from a formal education to an informal and even fortuitous one (as Cobo and Moravec indicated in his book on invisible education, 2011).

LITERATURE

1. Aparici, R., Campuzano, A., Ferrés, J., and Matilla, A. G. (2010). “La educación mediática en la escuela 2.0.” Available at http://www.airecomun.com/sites/all/files/materiales/educacion_mediatica_e20_julio20010.Pdf
2. George Siemens: “Connectivism: A Learning Theory for the Digital Age”, 2004, http://www.ingedward.net/papers/connectivism/2005_siemens_ALearningTheoryForTheDigitalAge.pdf. “Behaviorism, cognitivism, and constructivism are the three broad learning theories most often utilized in the creation of instructional environments. These theories, however, were developed in a time when learning was not impacted through technology. Over the last twenty years, technology has reorganized how we live, how we communicate, and how we learn. Learning needs and theories that describe learning principles and processes, should be reflective of underlying social environments.”
3. Brown, J. (1998). Media Literacy Perspectives. Journal of Communication. Volume: 48. Issue
4. Worsnop, C. (1994). Screening Images: Ideas for Media Education. Mississauga, Ontario: Wright Communications.
5. Zadorozhna, IT & Kuznetsova, TV (2008). Медіаосвіта/Енциклопедія освіти/Акад. педнаук України/Гол. ред. В. Г. Кремень –К.: Юрінком Інтер. Media Education//Encyclopedia Education/Acad. Pedagogical Sciences of Ukraine/Gl. Ed. VG Kremen –K. Yurinkom Inter
6. Федоров, А.В. (2003). Медиаобразование в зарубежных стр/ Mediaobrazovanie in Foreign countries. Таганрог: Изд-во Кучма.
7. Teresa Fern`andez-Ulloa. Teaching Media Competence in The Classroom: Television, Advertising and Films. International Journal of Arts and Science CD–Rom. ISSN: 1944–6934, 2013
8. Svetlana Ryabushko, The Formation of the First–1year Students` Mediacompetence Vol.6, No1/2016

ՄԵԴԻԱԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարան, ռուսաձերմանական ֆակուլտետ,
անգլերեն լեզվի և գրականության ամբիոն, հայցորդ*

Հոդվածում ներկայացված է մեդիաիրազեկության ձևավորումն ուսանողների դասավանդման գործընթացում: Այստեղ մեդիա կրթությունը ներկայացված է, որպես կրթական փորձ, որը միտված է ուսուցանողներին ուղղորդելու մաս մեդիայի հնարավորություններից հնարավորինս արդյունավետ օգտվելուն: Ժամանակակից աշխարհն ու ինֆորմացիոն դաշտն անընդմեջ փոփոխվում են, հետևաբար ուսանողների մոտ մեդիաիրազեկության ձևավորումն դառնում է անհրաժեշտություն:

ФОРМИРОВАНИЕ МЕДИАКОМПЕТЕНЦИИ У СТУДЕНТОВ

МАРГАРИТА ПЕТРОСЯН

*Ереванский государственный университет, романо–германский факультет,
кафедра английского языка и литературы, соискатель*

В статье представлено формирования медиа–компетенции студентов в процессе преподавания. Медиа–образование рассматривается как образовательный опыт, помогающий студентам в выборе направленности, эффективном использовании возможностей масс–медиа.

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԻԴԱԴԱՏՃԱՌՆԵՐ. ՏԵՍԱԿՆԵՐՆ
ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոգվածում ներկայացվում են ուսումնական դրդապատճառների տեսակներն ու առանձնահատկությունները՝ վերջիններիս ձևավորումը համարելով ժամանակակից դպրոցի առաջնակարգ խնդիրներից մեկը: Ուսումնական դրդապատճառները դիտարկելով իբրև կրթական գործունեության արդյունավետության ցուցանիշ՝ հոգվածում դասակարգվում են դրդապատճառները, տրվում մեկնաբանություններ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. դրդապատճառ, դպրոց, տրամադրվածություն, գործունեություն, գնահատում:

Դրդապատճառը ընդհանրապես ցանկացած մարդու գործունեության աղբյուրն է: Եթե չկան ներքին մղումներ և շարժիչ ուժ, ապա ցանկացած գործ դատապարտված է դառնալու ձանձրալի ու տաղտկալի սովորույթի: Հին իմաստությունն ասում է՝ կարելի է ձիուն բերել ջրի մոտ, բայց չի կարելի նրան ստիպել խմել: Անշուշտ, կարելի է երեխաներին նստեցնել դպրոցական նստարաններին և հասնել անթերի կարգապահության, սակայն առանց ուսման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու և ներքին շարժառիթի ուսուցում և յուրացում տեղի չեն ունենում: Ուսումնական գործունեությունն այս դեպքում ձևական բնույթ է կրում, իսկ ինչպես դպրոցականների մեջ «գիտելիքների աղբյուրից ջուր խմելու» ցանկություն առաջացնել: Այս խնդրի իրականացման ուղղությամբ է, որ համառորեն պետք է աշխատենք բոլորս: Երեխային որևէ գործունեություն պարտադրելու փոխարեն հարկավոր է հետաքրքրություն արթնացնել նրա մեջ

[4, 56–57]: Պետք է հոգ տանել հայտնաբերելու, որ նա պատրաստ է և տիրապետում է այդ գործունեության համար անհրաժեշտ բոլոր ուժերին: Առանց շարժառիթի՝ արագ, դրական արդյունք չի լինի: Եթե անտեսվում է երեխայի ներքին տրամադրվածությունը, ապա, ըստ էության, որպես հիմնական միջոց ընտրվում է բռնությունը: Եթե մանկավարժն իր գործունեության մեջ հենվում է բռնության վրա, ապա բախվում է բացասական, ժխտող դրդապատճառի: Նման դեպքերում երեխայի մեջ ձևավորվում է դասից խուսափելու ուժեղ և կայուն միտում: Ուսումնական գործունեությունն ու արդյունքները լինում են աննշան, իսկ դասից շեղվածությունը՝ ուժեղ: Առաջանում է «ձնշում գործադրելու» իրավիճակ: Նման դեպքերում երեխաները հոգնած են և ընկձված: Նրանք ունենում են անբավարարվածության զգացում, նկատվում է մտածելու անհրաժեշտություն [5, 65]:

Դպրոցական կյանքի բովանդակության մեջ առանց իմաստի ու արժեքավորման հիմքի չի կարող գոյություն ունենալ գործունեություն: Հարկավոր է հստակ ձևավորել, զարգացնել և խթանել սովորելու դրդապատճառներ:

Այսօր կրթությանն ու դաստիարակությանն առնչվող առավելապես սուր խնդիրները կապված են կամ դպրոցականի վարքագծի բացասական դրդապատճառի, կամ դրդապատճառների բացակայության (վերջինս հանդիպում է մեծ մասի մոտ), հետևաբար նաև կրթությանն ու դաստիարակության հիմնական ցուցանիշների իջեցման հետ:

Դրական դրդապատճառները հոգե-

բանական, բարոյական և ֆիզիկական առողջության պահպանման ու զարգացման ուժեղ գործոններ են:

Դրդապատճառը բնութագրում է գործողության ուղղությունը, ամբողջական գործունեության կազմակերպվածությունն ու կայունությունը, որոշակի նպատակի հասնելու ձգտումը: Սովորողների մոտ ուսումնական մոտիվացիայի ձևավորումը առանց չափազանցեցման կարելի է անվանել ժամանակակից դպրոցի կենտրոնական խնդիրներից մեկը:

Նրա արդիականությունը հիմնվում է կրթության բովանդակության թարմացմամբ, դպրոցականների մոտ գիտելիքների ձեռքբերման, ինքնուրույն հնարների և կյանքի ակտիվ դիրքի զարգացման առաջադրանքների դրվածքով [8, 241]: Քանի որ կրթության և դաստիարակության առավել սուր խնդիրները կապված են սովորողների հիմնական մասի մոտ կրթություն ստանալու դրդապատճառի բացակայության հետ, որի հետևանք է համարվում բոլոր հաստատությունների ուսանողների կրթվածության և դաստիարակվածության հիմնական ցուցանիշների իջեցումը, ապա նշված ցուցանիշները դառնում են ակնհայտ: Ուսումնական գործունեությունը տարբեր դպրոցականների համար տարբեր իմաստ ունի: Դպրոցականի համար սովորելու իմաստի և ուսումնական դրդապատճառի բնութագրի վերհանումը ուսուցչի համար մանկավարժ-ներագրման յուրաքանչյուր առանձին դեպքում խաղում է որոշիչ դեր:

Անձի դրդապատճառային կազմվածքը բավականին բազմաբնույթ է: Այնպիսի համակարգված բնութագրման ուսումնասիրության համար, ինչպիսին դրդապատճառն է և նրա ախտորոշման մեթոդիկայի կառուցվածքը կարևոր է համարվում բաղադրիչային բլոկերի առանձնացումը, որոնք կարտացոլեն ուսուցման դրդապատճառի առավել էական բաղադրատարրեր [6, 45]: Դպրոցականների ուսումնական դրդապատճառի

ուսումնասիրման մեթոդիկան պետք է կոմպակտ լինի և էքսպրես-ախտորոշման համար հնարավոր լինի օգտագործել: Թվարկենք այդպիսի բլոկներ.

Դրդապատճառների ձևերը.

Ուսումնական դրդապատճառը դիտարկելով որպես կրթական հասարակության գործունեության արդյունավետության ցուցանիշ, մենք կհիմնվենք դրդապատճառներ խմբերի բնութագրված երեք մոտեցումների վրա:

Դասակարգման առաջին տարբերակը ենթադրում է երկու մեծ դրդապատճառների խմբերի դիտարկում:

Իմացական դրդապատճառներ:

Սրանք կապված են ուսումնական գործունեության, բովանդակության և նրա իրականացման գործընթացի հետ: Այս դրդապատճառները վկայում են դպրոցականների մոտ գիտելիքների ձեռքբերման կողմնորոշման մասին, ուսումնական հմտությունների, որոշում են նոր կարևոր փաստերի, երևույթների դրանց էական հատկությունների, առաջին դեղուկտիվ եզրահանգումների, օրինաչափությունների և տենդենցների տեսական սկզբունքների, հիմնային գաղափարների և այլնի նկատմամբ գիտելիքների հետաքրքրության խորությունը:

Այս խմբի մեջ են մտնում նաև դպրոցականների գիտելիքներ ձեռք բերելու, հնարներին տիրապետելու կողմնորոշման մասին վկայող մոտիվները: Հետաքրքրությունը ինքնուրույն գիտելիք ստանալու փորձեր, գիտական իմացության մեթոդների, ուսումնական, աշխատանքի ինքնակառավարման ձևերի, սեփական ուսումնական աշխատանքի ռացիոնալ կազմակերպմանը: Ճանաչողական դրդապատճառները արտացոլում են դպրոցականի ինքնակրթության ձգտումը, գիտելիքների ձեռքբերման ինքնուրույն կատարելագործման ձևերի ուղղվածությունը [9, 147]:

Սոցիալական դրդապատճառներ:

Սրանք կապված են դպրոցականի այլ մարդկանց հետ սոցիալական փոխազ-

դեցույթյան տարբեր ձևերի հետ: Օրինակ՝ գիտելիքներ ստանալու ձգտումը, որպեսզի հասարակությանն օգտակար լինել, սեփական պարտքը կատարելու ցանկությունը, սովորելու անհրաժեշտությունը հասկանալը, պատասխանատվության զգացումը: Այդուհանդերձ հսկայական է սոցիալական անհրաժեշտության դրդապատճառների գիտակցումը, պարտքի և պատասխանատվության, մասնագիտական ընտրությանը լավ պատրաստվելու ձգտումը: Սոցիալական դրդապատճառների թվին են պատկանում նաև այսպես կոչված դիրքային մոտիվները, որոնք դրսևորվում են շրջապատողների հետ հարաբերություններում որոշակի դիրք գրավելու, նրանց հավանությանը արժանանալու, հեղինակություն ձեռք բերելու ձգտման մեջ:

Դիրքային դրդապատճառ: Կարող է դրսևորվել ինքնահաստատման տարբեր տիպի փորձերով լիդերի տեղը զբաղեցնելու ցանկությամբ, այլ դպրոցականների վրա ազդելու, կոլլեկտիվում գերակայելու և այլնի մեջ: Սոցիալական համագործակցության դրդապատճառները կայանում են նրանում որ դպրոցականը ոչ միայն ցանկանում է շփվել և փոխազդեցության մեջ մտնել այլ մարդկանց հետ, այլ նաև վերլուծել ուսուցչի ու դասընկերների հետ սեփական համագործակցության ու փոխհարաբերությունների հնարներն ու ձևերը և մշտապես դրանք կատարելագործել: Տվյալ մոտիվը համարվում է ինքնադաստիարակության անձի ինքնակատարելագործման կարևոր հիմք [11, 218]:

Դասակարգման երկրորդ խումբը բնութագրում է դրդապատճառների հարաբերությունը և ոչ անմիջական ուսումնական գործունեությունը: Որոշակի գործունեությունը խթանող դրդապատճառները (այս դեպքում՝ ուսումնական գործընթացը ուղղակիորեն կապված չէ դրա հետ, այդ գործունեության նկատմամբ) անվանում են արտաքին: Եթե դր-

դապատճառները ոչ անմիջականորեն կապ ունեն ուսումնական գործունեության հետ, ապա նրանք համարվում են ներքին: Սովորելու դրդապատճառը կարող է լինել ներքին, ինքնուրույն ճանաչողական աշխատանքի դեպքում և արտաքին՝ մեծերի օգնությամբ:

Ներքին դրդապատճառները այսպիսին են՝ գործընթացի նկատմամբ հետաքրքրասիրությունը, գործունեության արդյունքի նկատմամբ հետաքրքրասիրությունը, ինքնազարգացման, սեփական ինչ որ որակների, կարողությունների զարգացման ձգտումը:

Արտաքին դրդապատճառներ դրսևորվում են այն ժամանակ, երբ գործունեությունն իրականացվում է որպես պարտքի պատասխանատվություն, հանուն հասակակիցների շրջանում որոշակի դիրք զբաղեցնելու, հարազատների, ուսուցչի և այլնի:

Եթե երեխան լուծում է առաջադրանքը, ապա այս գործողության արտաքին դրդապատճառներ կարող են լինել լավ գնահատական ստանալու ցանկությունը, ընկերներին ցույց տալ առաջադրանք լուծելու կարողությունը, ուսուցչի գովասանքին արժանանալու համար և այլն: Այս դեպքում ներքին դրդապատճառներ են համարվում խնդրի լուծման ուղիներ փնտրելու, արդյունքի հասնելու նկատմամբ հետաքրքրասիրությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրդապատճառը մի կողմից՝ մշտապես համարվում է դպրոցականի գիտակցության ներքին բնութագիրը, նրա գործունեության դրդապատճառը: Մյուս կողմից՝ այդպիսի դրդապատճառը կարող է լինել դրսից, այլ մարդուց: Եթե առանց մեծահասակի վերահսկողության և հիշեցման դրդապատճառը չի իրացվում, հետևաբար դպրոցականի համար այն համարվում է արտաքին: Ուսուցման սկզբն ուսուցչին անհրաժեշտ է ձգտել այն բանին, որ սովորողի մոտ նախ և առաջ ձևավորվեն ներքին դրդապատճառներ:

Ուսուցման դրդապատճառների դա-

սակարգման երրորդ տարբերակը հենվում է դրդապատճառների երկու տենդենցների՝ հաջողության հասնելու և անհաջողություն թույլ չտալու առկայության վրա:

Հաջողության հասնելու դրդապատճառավորված դպրոցականները սովորաբար իրենց առջև որոշակի դրական նպատակ են դնում, ակտիվորեն փորձում են իրագործել այն, ընտրում են միջոցներ ուղղված այդ նպատակին հասնելուն: Գործունեությունը նրանց մոտ առաջացնում են դրական հույզեր, ներքին ռեսուրսների համախմբում և ուշադրության կենտրոնացում:

Ներկայումս փոխվել է նաև դպրոց հաճախելու տարիքային սահմանը՝ 6 տարեկան, ինչն էլ իր հերթին է առավելապես ընդգծում կրտսեր դպրոցականի հարմարման և ուսումնական դրդապատճառի հիմնախնդիրների ուսումնասիրության կարևորությունը [11, 148]:

Դպրոցական կյանքի բովանդակության մեջ առանց իմաստի ու արժեքավորման հիմքի չի կարող գոյություն ունենալ գործունեություն:

Ուսումնական գործունեության դրդապատճառների ձևավորման վրա ներազդող գործոններից են՝ ուսումնական նյութի բովանդակությունը, ուսուցչի և սովորողների շփման ոճը, ուսումնական գործունեության մակարդակն ու բնույթը: Կրթության բովանդակությունը և ուսումնական տեղեկատվությունը ոչ մի նշանակություն չունեն երեխայի համար, եթե դրանք չեն բխում նրա պահանջներից և ինքնաբերաբար չեն դրդում ուսումնական գործունեության: Կրտսեր դպրոցականի հետ աշխատողների համար հատկապես կարևոր է տարբերել ձանաչողության նկատմամբ հետաքրքրություն և հետաքրքրություն ինչ-որ գործունեության նկատմամբ: Առաջին դասարանցին ուրախ գնում է դպրոց, իր ցանկությամբ մասնակցում դասարանական աշխատանքներին, չի ցանկանում

ընդհատել գործունեությունը դասի ժամանակ: Առաջին դասարանցին սիրում է օրինակ. կարդալ, գրել, նկարել, պատրաստել, դա նրան հաճույք է պատճառում: Երեխան ցուցաբերում է հուզական վերաբերմունք (սա հաղորդում է, որ իրեն դուր է գալիս լուծել խնդիրները, կատարել վարժություններ), չնայած կարող է ձանաչողական վերաբերմունքը բացակայել (նրան չի անհանգստացնում, ինչ է այն այսպես հասկացվում, այլ ոչ թե այնպես, որ տարբերակով է լավ, հեշտ տվյալ խնդիրի լուծման համար և այլն): Այս դեպքում առկա է միայն մեկ կոմպոնենտ-հուզական:

Այստեղ չի կարելի խոսել ոչ միայն ձանաչողական հետաքրքրասիրության, այլ ուսման նկատմամբ սիրո առկայության մասին: Ուսման դրդապատճառի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստում են դպրոցի և դասարանի ընդհանուր մթնոլորտը, երեխաների մասնակցությունը խմբակային աշխատանքներին, համագործակցումը ուսուցչի և աշակերտի, առաջադրանքների կատարման ժամանակ ուսուցչի օգնությունը ոչ թե ուղիղ միջամտությամբ, այլ խորհուրդների միջոցներով: Ինչպես նաև ուսումնական նյութը պետք է մատուցվի այնպես, որպեսզի առաջացնի դպրոցականների հուզական արձագանքը: Դրա համար անհրաժեշտ են ուսումնական նյութի մատուցման և մեկնաբանման հատուկ մոտեցումներ, ուսումնական նյութի բովանդակությունը պետք է լինի գրավիչ, հարկավոր է ներառել հետաքրքրաշարժ հարցերով վարժություններ, կազմակերպել գիտելիքների և կարողությունների ցուցադրում, որոնք կարող են ունենալ հասարակական և անձնական բնույթ, հաստատել միջառարկայական կապեր:

Տարբեր ոճեր ձևավորում են տարբեր դրդապատճառներ: «Անհաջողությունից խուսափելու» միտումն արգելակում է ներքին դրդապատճառի ձևավորումը: Ուսուցչի ժողովրդավարական ոճը, ընդ-

հակառակը, խանգարում է ներքին դրդապատճառին: Լիբերալ ոճը իջեցնում է ուսման դրդապատճառը և ձևավորում «հաջողության հույսի» դրդապատճառ:

Ուսումնական գործունեության կազմակերպման կարևոր պահ է գործնական-ձանաչողական փուլը: Այս փուլում ուսումնական գործունեության դրդապատճառ առաջացնելու համար հարկավոր է ձգտել, որպեսզի սովորողն սկսի գործել: Այդ առումով նպատակահարմար է իմացական (խնդրահարույց, որոնողական, վիճահարույց առաջադրանքներ), խաղային (ձանաչողական խաղեր, մրցույթներ), զգացմունքային (հաջողության ձգտում, թեմայով կլանվելը) և այլ բնույթի իրավիճակների ստեղծումը:

Հայտնի է, որ ուսումնական գործունեության համագործակցային ձևը, անհատականից առավել, ստեղծում է դրդապատճառ [11, 257]: Այն ակտիվ աշխատանքի մեջ է «ներքաշում» նույնիսկ պասիվ, թույլ մղումներ ունեցող աշակերտներին:

Ուսումնական գործունեության նկատմամբ ճիշտ վերաբերմունքի առաջացման վրա էական ազդեցություն կարող են գործել դրական հույզերը, որոնք առաջանում են սովորողների գործունեության ընթացքում և ձեռք բերված արդյունքից:

Ուսումնական գործունեության արդյունքների գնահատման դրդապատճառային դերը կասկած չի հարուցում: Կարևոր է, որպեսզի սովորողների ուսումնական գործունեության գնահատականի մեջ տրվի որակական, այլ ոչ քանակական տարրալուծում, ընդգծել դրական պահերը, ուսումնական նյութի յուրացման առաջխաղացումը, պարզաբանել թերությունների պատճառները, և ոչ միայն նշել դրանց առկայությունը:

Գնահատականներն ինքնանպատակ չպետք է լինեն սովորողների համար: Դրանից կարող է տեղի ունենալ ուսումնական դրդապատճառի տեղաշարժ գործունեության, ձանաչողական

գործընթացից գնահատական, որը ձեռք է բերվում անազնիվ միջոցներով: Դա հանգեցնում է ուսումնական գործունեության հանգամանքի և սովորողի անձի զարգացման դեֆորմացմանը: Դասի յուրաքանչյուր փուլ ուսուցիչը պետք է լինի հոգեբանական բովանդակությամբ: Քանի որ յուրաքանչյուր փուլ հոգեբանական իրավիճակ է: Որպեսզի կառուցվի գրագետ հոգեբանական կառուցվածքով դաս, կարևոր է, ուսուցիչը տիրապետի զարգացնող և դաստիարակող խնդիրների այն մասի կազմակերպման կարողության, որը կապված է դրդապատճառի և դպրոցականներ սովորելու կարողությունների վիճակի հետ [6, 69]:

Հարկավոր է հստակ ձևավորել, զարգացնել և խթանել սովորելու դրդապատճառներ:

Այսօր կրթության ն ու դաստիարակությանն առնչվող առավելապես սուր խնդիրները կապված են կամ դպրոցականի վարքագծի բացասական դրդապատճառի, կամ դրդապատճառների բացակայության (վերջինս հանդիպում է մեծ մասի մոտ), հետևաբար նաև կրթության ու դաստիարակության հիմնական ցուցանիշների իջեցման հետ:

Դպրոցական կյանքի հարմարվածության մակարդակով է պայմանավորված վերաբերմունքի ձևավորումը՝ գիտելիքների, հետագա մասնագիտության, միջանձնային հարաբերությունների ոճի նկատմամբ, ընկերություն անելու, ինչպես նաև սիրելու, սիրվելու ընդունակության, կյանքի նկատմամբ դիրքորոշումների և անձնային որակների:

Կրտսեր դպրոցականների աղապտացիայի և ուսումնական դրդապատճառի փոխկապվածության խնդրի վերաբերյալ կատարած տեսական վերլուծություններից պարզ դարձավ, որ հասուն մարդու հաջողությունները ենթադրում են նրա դպրոցական կյանքի բնականոն ընթացք և հարմարվածության բարձր մակարդակ:

ՊՐԱՇԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Басманова, Т.В. Состояние здоровья и проблемы школьной адаптации первоклассников [Текст]. Т.В. Басманова // Вопросы современной психологии . 2003, 258 с.
2. Безруких, М.М. Об организации обучения в первом классе четырехлетней начальной школы [Текст] / М.М. Безруких, Н.Ф. Виноградова, В.Р. Кучма, М.Р. Леонтьева // Дошкольник. Младший школьник. 2001, 321 с.
3. Битянова, М.Р. Адаптация ребёнка в школе: диагностика, коррекция, педагогическая поддержка [Текст] / М.Р. Битянова. Москва, 1997. 414 с.
4. Возрастная и педагогическая психология [Текст] / Под ред. А.В. Петровского.– М., Просвещение, 1973. 382с.
5. Гильбух Ю.З. Учебная деятельность младшего школьника: диагностика и коррекция неблагополучия К.1993, 450с.
6. Гуткина, Н.И. Психологическая готовность детей 6–7 лет к школьному обучению. Сюжетно–ролевые и развивающие игры с первоклассниками на уроках [Текст] Н.И. Гуткина // Готовность к школе. М., 1995, 244 с.
7. Ивановская, О. Г. Чем вызваны трудности школьной адаптации у первоклассников? [Текст] / О.Г. Ивановская, С.Ф. Савченко // Начальная школа. 1999. 195 с.
8. Ильин, Е.П. Мотивация и мотивы [Текст] / Е.П. Ильин.– СПб: Издательство «Питер», 2000. 265 с.
9. Ковалев, В. И. Мотивы поведения и деятельности [Текст] / В. И. Ковалев. М., 1988. 350 с.
10. Коломенских, Я. Л. Детская психология [Текст] / Я. Л. Коломенских, Е. А. Панько.– Минск, Университетское, 1988, 350 с.
11. Маркова, А. К. Формирование мотивации учения [Текст] / А. К. Маркова, Т. А. Матис, А. Б. Орлов. – Москва, 1990. 443 с.
12. Святогова, М. В. Динамика мотивации учения и адаптации к школе в младшем школьном возрасте [Текст] / М.В. Святогова, И.В. Вачков // Психологическая наука и образование. 2000. 370с.

УЧЕБНЫЕ МОТИВАЦИИ: ВИДЫ И ОСОБЕННОСТИ

МАРЛЕНА АЛЕКЯН

Школа 177им. Галины Староватовой, председатель методического объединения по армянскому языку и литературе

Формирование побудительных причин к обучению считается одной из важнейших задач современной школы. Мотивация обучения рассматривается как показатель эффективности образовательной деятельности, приводится классификация и интерпретация указанных мотивов.

TEACHING MOTIVATION: TYPES AND CHARACTERISTICS

MARLENA ALEKYAN

*Yerevan Basic School №177 named after Galina Starovoytova,
Teacher of methodical association of Armenian language and literature*

Formation of motivation towards teaching is considered to be one of the most important tasks of modern school. Teaching motivation is considered to be an indicator of the effectiveness of educational activities, a classification and interpretation of these motives is being provided.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայրուկ կրթության ֆակուլտետի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դասախոս, համալսարանի շահամարի կրթական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ՝ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՇՏԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոգվածում ներկայացված է հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցների ու մեթոդների տեսական հիմնավորումը, ինչպես նաև սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման հիմնական միջոցների, մեթոդների և կիրառման պայմանների վերլուծական նկարագրիրը: Նյութում հանգամանալից ներկայացված են նաև հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման ուղղված խաղեր, վարժություններ ու առաջադրանքներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. գրավոր խոսքի խանգարում, մտավոր զարգացման խանգարումներ ունեցող, շտկում, մայրենիի ուսուցման գործընթաց, լոգոպեդական աշխատանքներ

Վերջին տարիներին ուսուցիչների և լոգոպեդների պրակտիկայում մեծ թիվ են կազմում դպրոցական ծրագիրը դժվարությամբ յուրացնող, կարդալու և գրելու գործընթացում կայուն և կրկնվող բնույթի սխալներ ունեցող սովորողները: Գրելու և կարդալու գործընթացների խանգարումները տարածված են ինչպես բնականոն զարգացում ունեցող, այնպես էլ զարգացման խանգարումներ ունեցող սովորողների շրջանում: Սրանով է պայմանավորված գրավոր խոսքի խանգարումների շտկման խնդրի նկատ-

մամբ տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների, լոգոպեդների և ծնողների անհանգստությունը հետաքրքրությունը: Հատուկ (օժանդակ) դպրոցում սովորողները, ունենալով գլխուղեղի օրգանական ախտահարում և, դրանով պայմանավորված, ճանաչողական գործունեության կայուն խանգարում, որպես երկրորդային դրսևորումներ, ունեն նաև խոսքային խանգարումներ, որոնցում մասնավորապես գերակշռում են գրավոր խոսքի՝ գրելու և կարդալու գործընթացների խանգարումները՝ դիսլեքսիան և դիսգրաֆիան: Այս խնդիրներն ավելի շատ նկատելի են դպրոցական ուսուցման առաջին-երկրորդ տարում, շատ դեպքերում դրանք մնում են ողջ ուսումնական գործունեության ընթացքում, որոնք դժվարացնում են սովորողների ոչ միայն հաղորդակցվելու, գրել-կարդալու գործընթացը, այլև բացասաբար է անդրադառնում նրանց գիտելիքներ ձեռք բերելու, ժամանակակից աշխարհում այս երեխաների սոցիալական հարմարվողականության ու ինտեգրման գործընթացի վրա [8, 10, 11, 12]:

Հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում մայրենիի և մյուս առարկաների ուսուցման գործընթացում սովորողների ունեցած դժվարությունները հաղթահարելու գործընթացն իրականանում է նրանց պահպանված հնարավորությունների առավելագույն

օգտագործման հաշվին: Այս երեխաների գրավոր խոսքի խանգարումների շտկման նպատակով մայրենիի դասերին անցկացվող վարժությունների ու առաջադրանքների կիրառման նպատակն ոչ միայն ուսոցողական է, այլ ունի ճանաչողական, շտկողական, զարգացնող և դաստիարակչական նշանակություն, սակայն մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների գրավոր խոսքի խանգարումների շտկումը հնարավոր է և պայմանավորված է լոգոպեդի և ուսուցչի փոխհամաձայնեցված աշխատանքով: Մայրենիի ուսուցման գործընթացում և լոգոպեդական պարապմունքներին այս երեխաների հետ տարվող աշխատանքներն իրարից անկախ չեն. դրանք փոխլրացնում են միմյանց և ուղղված են երեխաների խոսքային և ոչ խոսքային գործընթացների զարգացմանը [1, 5, 6, 8, 11, 12]:

Մասնավորապես լոգոպեդի և ուսուցչի համագործակցությամբ առաջնային է դառնում մտավոր զարգացման խնդիրներ ունեցողների հնչյունահնչության զործընթացների, լեզվական վերլուծություն և համադրություն կատարելու՝ հնչյունը տառի և տառը հնչյունի հետ հարաբերակցելու, բառից հնչյունն առանձնացնելու, բառում հնչյունի տեղն ու դիրքը որոշելու, գրությամբ մոտ տառերն իրարից տարբերակելու և այլ կարողությունների զարգացումը: Սրանով պայմանավորված՝ ուսուցչի և լոգոպեդի աշխատանքում կարևորվում է մայրենիի ուսուցման գործընթացում սովորողների լեզվական տարրական գիտելիքներ ձեռք բերելը, ուսումնական մյուս առարկաների դժվարությունները հաղթահարելը և դրանք սեփական խոսքում գործածելը:

Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների գրավոր խոսքի խանգարումների վաղ բացահայտումը և շտկումը կարևոր են ուսուցումը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար: Մայրենիի ուսուցման գործընթացում

գրավոր խոսքի խանգարումների շտկումն իրականացվում է՝ հաշվի առնելով մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հոգեկան, անհատական և տարիքային զարգացման առանձնահատկությունները, ուսումնադաստիարակչական խնդիրները, նրանց բնորոշ գրավոր խոսքի խանգարումների և դրանց շտկման առանձնահատկությունները [2, 3, 4, 7, 9, 13]:

Մեր հետազոտության նպատակը հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների մայրենիի ուսուցման գործընթացում գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցների ու մեթոդների մշակումն է, որից ելնելով առանձնացրել ենք հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել և վերլուծել մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումների շտկման ժամանակակից մոտեցումները մայրենիի ուսուցման գործընթացում.

- որոշել այս երեխաների մայրենիի ուսուցման գործընթացում դրսևորվող գրավոր խոսքի խանգարումների հիմնական տեսակները.

- մշակել մտավոր զարգացման խնդիրներ ունեցողների գրավոր խոսքի խանգարումների շտկմանն ուղղված միջոցներ, մեթոդներ և դրանց կիրառման պայմաններ:

Հետազոտական աշխատանքի նպատակին ու առաջադրված խնդիրներին համապատասխան՝ մեր կողմից ընտրվել են հետազոտության հետևյալ մեթոդները.

- հոգեբանական և մանկավարժական հետազոտության մեթոդների (դիտում, հարցում, զրույց, անկետավորում) կիրառում.

- ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ ուսումնական ծրագրերի, ձեռնարկների և ատենախոսական նյութերի բովանդակության վերլուծություն.

- հետազոտման էմպիրիկ մեթոդ-

ների (գրավոր առաջադրանքներ, ընթերցանության նյութեր, ստեղծագործական և ստուգողական աշխատանքներ, լեզվաքերականական խաղեր և այլն) կիրառում.

- լոգոպեդական մեթոդների (բանավոր խոսքի, գրավոր խոսքի հետազոտում, լոգոպեդական պարապմունքների, խաղերի անցկացում) կիրառում.

Մեր կողմից ուսումնասիրվել և հետազոտվել են չորս հատուկ (օժանդակ) դպրոցի 1-4-րդ դասարաններում սովորող 285 աշակերտի գրավոր խոսքի խանգարումների առանձնահատկությունները: Հետազոտության արդյունքում բացահայտվել և պարզաբանվել են մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրելու և կարդալու գործընթացում դրսևորվող կայուն և կրկնվող բնույթի սխալները:

Ստորև բերված նկարում առանձնացրել ենք 3-րդ և 4-րդ դասարաններում սովորողների գրավոր խոսքում առավել հաճախ հանդիպող սխալները:



Նկ. 1 Հայրուկ (օժանդակ) դպրոցի փարսական դասարաններում սովորողների գրավոր խոսքում հանդիպող սխալների տոկոսային արտահայտությունը

Ինչպես երևում է նկարից, սովորողների գրավոր խոսքում գերակշռում են **հնչյունների, տառերի, վանկերի, ամբողջական բառերի, դրանց վերջավորությունների բացթողումները և տեղափոխումները** (14%), **արտասանությանը և հնչողությանը մոտ հնչյունների շփոթումները և փոխարինումները** (12%): Մեծ թիվ են կազմում **գրությանը մոտ կամ նման տառերի և բառերի շփոթումներն ու փոխարինումները** (9, 8%), **փարսական կողմնորոշման խանգարումները** (8, 4%) և այլն:

Մտավոր զարգացման խանգարումներ ունեցողների **լսողական, տեսողական ընկալման, վերլուծություն և**

համադրություն կապարելու կարողությունները յուրահատուկ ձևով են զարգացած: Նրանք դժվարանում են համեմատել, տարբերակել առարկաները, երևույթները և այլն: Աշակերտների **բանավոր կապակցված խոսքում** (երկ-խոսություն, իրավիճակային խոսք, հեքիաթների, պատմվածքների պատմում, տեսածի, լսածի, զգացածի վերարտադրում և այլն) և **գրավոր կապակցված խոսքում** (շարադրություն, փոխադրություն) առկա քերականական սխալների շտկման ուղղությամբ աշխատանքները պետք է տարվեն ինչպես մայրենիի դասերին, այնպես էլ լոգոպեդական պարապմունքներին՝ մտքերը հաջորդաբար

և տրամաբանորեն իրար կապելու, ժամանակային, խոսքիմասային, հոլովական ու դիմաթվային վերջավորությունները, կապերն ու կապական բառերը իրար հետ համաձայնեցնելու և նմանատիպ այլ աշխատանքներ [4, 5, 7, 9, 11, 13]:

Գրավոր խոսքի խանգարումների շտկման գործընթացում կարևոր է հաշվի առնել **սովորողների անհատական և հոգեկան գործընթացների զարգացման, անձնային հոգեբանական առանձնահատկությունները**:

Գրելու և կարդալու գործընթացում կարևոր և առանձնահատուկ նշանակություն ունեն ինչպես սովորողների **ընդհանուր շարժողականությունը**՝ նստելու դիրքը, գիրքը կամ տետրը աչքերից որոշակի հեռավորության վրա պահելը և այլն, այնպես էլ **մանր և նուրբ շարժողականությունը**՝ գրաշարժողական կարողությունների աչքերի և ձեռքի մատների շարժումների համաձայնեցված աշխատանքը: Հետազոտողները նշում են երեխաների մանր և նուրբ շարժողականության խանգարումների և նրանց տեսաշարժողական պատկերացումների խանգարումների կապը:

Վերը թվարկված գործոններից յուրաքանչյուրը գրեթե երբեք առանձին չի դրսևորվում և դրանցից մեկի խանգարումը կարող է առաջ բերել մյուս գործընթացների խանգարում, օրինակ, հնչյունահնչությային գործընթացների խանգարումը և դրանով պայմանավորված խոսքի մյուս բաղադրիչների խանգարումները կարող են առաջ բերել գրավոր խոսքի խանգարումներ և այլն:

Մեր կարծիքով, մտավոր զարգացման խանգարումներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումների արդյունավետ շտկումը համակարգային մոտեցման կամ բազմաշերտ ձևով իրականացման մեջ է՝ հաշվի առնելով հատուկ մանկավարժական, լոգոպեդական, սոցիալ-հոգեբանական և լեզվաբանական սկզբունքներն ու մոտեցումները: Դրանք են.


1. **Հայրուկ մանկավարժական մոտեցումը**, որի կիրառումը լոգոպեդական պարապմունքներին և մայրենիի ուսուցման գործընթացում նպատակ ունի հաշվի առնել ընդհանուր և հատուկ մանկավարժության սկզբունքները, մեթոդները, մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման պայմանները ուսումնական գործընթացը (խաղային ուսուցում, անհատական և տարբերակված ուսուցում և այլն):

2. **Լեզվաբանական մոտեցման** նպատակը դպրոցականների լեզվի և մտածողության զարգացումն է, ուսումնական այլ առարկաներից անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու, գրել-կարդալու, քերականորեն ձիշտ մտքեր ձևակերպելու, վերլուծելու, համադրելու, ընդհանրացնելու և մասնավորեցնելու կարողությունների զարգացումը:

3. **Սոցիալ-հոգեբանական մոտեցումը** նպատակ ունի ապահովել այս երեխաների հարմարեցումը միջավայրում՝ հաշվի առնելով նրանց ցածր ինքնագնահատականը, անվստահությունը սեփական անձի նկատմամբ, սովորելու ցածր մոտիվացիան, հետաքրքրությունների պակասը և այլն:

4. **Լոգոպեդական մոտեցման նպատակն է** լոգոպեդական մեթոդներն (խաղեր, վարժություններ, բառային) ու հնարները կիրառել՝ հաշվի առնելով երեխայի խոսքի նախադրյալների և խոսքի բոլոր բաղադրիչների, գրելու և կարդալու գործընթացների զարգացման առանձնահատկությունները, խոսքը պայմանավորող գործոնների՝ նյարդային համակարգի, հոգեկան գործընթացների զարգացման առանձնահատկությունները և այլն:

Ստորև բերված նկարում ներկայացված են մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումների շտկման մեր կողմից մշակված համակարգային կամ բազմաշերտ մոտեցումը:



Նկ. 2. Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումների շտկման համակարգային մոտեցման գծապատկեր

Հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցների, մեթոդների տեսական հիմնավորումների վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս կազմել շտկման բազմակողմանի կամ բազմաշերտ մոտեցման օրինակելի համակարգ, ինչպես նաև ընտրել, մշակել և այս երեխաների հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկություններին հարմարեցնել նրանց գրավոր խոսքի խանգարումների շտկման հատուկ միջոցները, մեթոդները:

Մեր կողմից որպես **գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցներ** ընտրվել, մշակվել և կիրառվել են մայրենիի ուսուցման գործընթացում գործադրելի սովորողների հնչյունահնչութային ընկալումը, բառապաշարը, կապակցված խոսքը, տեսատարածական պատկերացումներն ու կողմնորոշումը, գրաշարժողական կարողություն-

ները **շփող և զարգացնող լեզվական խաղեր**, ինչպես նաև աշակերտների տեսողական, լսողական հիշությունն ու ուշադրությունը, ընկալումը, վերլուծությունն ու համադրությունը, գրավոր խոսքը զարգացնող, **գործնական վարժություններ**: Դրանք կիրառելի են թե՛ մայրենիի ուսուցման գործընթացում, թե՛ լոգոպեդական պարապմունքներին՝ հաշվի առնելով երեխաների զարգացման, տարիքային և անհատական առանձնահատկությունները, վարժությունների ու առաջադրանքների անցկացման նպատակը, պայմաններն ու արդյունավետությունը: Այսպես, **գրավոր խոսքի խանգարումներ շտկման ուղղված վարժություններ և առաջադրանքներ**: Երեխաներին առաջարկվում է՝

1. Փոքրատառերով և մեծատառերով քարտեր, որտեղից նրանք պետք է գտնեն մեծատառերը փոքրատառերի միջից, ապա՝ փոքրատառերը մեծատա-

ների միջից:

2. Քարտեր, որտեղ նրանք պետք է ընդգծեն իրար նման տառերը:

Օրինակ՝ **ա, պ, ս, ի, խ, ր, ո, ու, ո, բ, ք, գ, չ, լ, թ, թ:**

3. Գտնել ձեռագիր տառերի մեջ տպագիր տառերը և հակառակը:

4. Իրարից հեռու գրված կամ խառը դասավորված տառերից կազմել բառեր: Օրինակ՝ **տ ու ն, ծ ա ո, մ ա յ ր, մ ու կ,**

ջրու, հցա, քեձ, ուռ, լսյու, ույնգ

5.1 Իրարից հեռու գրված կամ խառը դասավորված տառերի մասնիկներից ստանալ տառեր. երեխաներին օգնելու համար կարելի է համարակալել տառի յուրաքանչյուր մասնիկը:

5.2 Իրարից հեռու գրված կամ խառը դասավորված տառերից ստանալ բառեր. երեխաներին օգնելու համար կարելի է համարակալել յուրաքանչյուր բառի տառերը

5.3 Խառը դասավորված բառերից ստանալ նախադասություններ. կարելի է համարակալել բառերը:

6. Ուշադիր դիտել և կարդալ բառերը, միևնույն բառաշարքում գտնել և մատիտով օղակի մեջ վերցնել ավելորդ բառը.

յրուն, րուն, րուն, շուն, րուն, գույն, բույն, գույն, գույն, գույն,

6.1 Ուշադիր դիտել քառակուսու մեջ գրված բառերը ու տրված բառաշարքում գտնել գրությամբ դրան նման բառերը.

Արագ

ուրագ, արագ, ուրագ, արագ

Նավ

լավ, կավ, հավ, ցավ, նավ,

Ակնոց

թիկնոց, վզնոց, ակնոց, թևնոց,

7. Ցուցադրվում է նախ՝ մեկ ապա՝ միաժամանակ երկու-երեք բառաքարտ, երեխաները պետք է ուշադիր նայեն, կարդան և մտապահեն այդ բառերը, այնուհետև փակեն աչքերն ու ասեն, թե ո՞ր

բառն են մտապահել:

8. Բառը մի քանի անգամ կրկնելուց հետո ավելացվում է այդ բառին հնչողությամբ մոտ մի նոր բառ: Երեխաները պետք է լսողական ուշադրությամբ և հիշողությամբ տարբերակել, ապա, համեմատելով նախապես լսած բառի հետ, գտնել ավելորդ բառը

Օրինակ՝ **դուռ-դուռ-դուռ-դուռ-նուռ, հաց-հաց-հաց-թաց-հաց բույս-լույս-լույս-լույս-բույս սունկ-սունկ-փունկ-սունկ:**

9. Լսել և ձեռքերով ցույց տալ **մեծ - փոքր, բարձր-ցածր, վերև-ներքև, կարճ - երկար, շաք-քիչ** բառերի նշանակությունը:

10. Ուշադիր լսել և հարցերին պատասխանել՝ ցույց տալով գործողությունը:

Դերձակը կոճակ է կարում, իսկ մեքենավարը՝

Ձմերուկը նման է գնդակի, իսկ սեխը՝

Գնդակը կլոր է, իսկ գիրքը՝

Օդանավը թռչում է օդում, իսկ գնացքը՝

Նավը լողում է ջրում, իսկ օդապարիկը՝

Ֆուտբոլը խաղում են գնդակով, իսկ շախմատը՝

Կավձով գրում են այսպես, իսկ գրիչով:

11.1 Գտնել բառի «կորած» տառը:

Դու. - դուռ, դու Գե. -

Թե. - թել, թեյ, թեժ Նա. -

Կարա.- կարագ, կարաս, կարապ Մե. -

11.2 Քարտեր, որոնցում գրված են բառերի առաջին վանկերը, պետք է այդ վանկերով կազմել բառեր և գրել՝ օգտվելով բերված օրինակներից:

Օրինակ՝ գաթա, գույի, կամար, կոշիկ, քամի, քոթոթ:

գա- _____ կա- _____ քա-
_____ գո- _____ կո- _____

քո- _____
12. Փոխել տրված բառերի սկզբնա-

տառերը և ստանալ նոր բառեր: **Օրինակ, գանձ-փանձ-սանձ,**

ասարդ, ծառ, մայր, փուն, մուտք, կյաթ, մուկ, լույս, սև:

13. Երեխաներն ասում են բառեր, որոնք գրվում են գրատախտակին: Այնուհետև, հերթականությամբ ծածկելով յուրաքանչյուր բառի մի հատվածը, երեխաները պետք է կռահելով կարդան դրանք: **Օրինակ՝ փոնածառ, ծաղիկ, ձմերուկ, պայուսակ, պաղպաղակ, արագիլ:**

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ հետազոտության ընթացքում մեր կողմից

մշակված գրավոր խոսքի խանգարումների շտկմանն ուղղված վարժությունների ու առաջադրանքների արդյունավետ կիրառումը մայրենիի ուսուցման գործընթացում նպաստել են հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումներ ունեցող երեխաների կարդալու և գրելու կարողությունների, մասնավորապես, հնչույթային գործընթացների, տեսատարածական պատկերացումների ձևավորմանն ու զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռ. Ն. Ագարյան, Ա. Ռ. Չարչյան, Դիսլեքսիան և աչքի տեսաշարժողական գործառնությունները: Մանկավարժություն: Գիտամեթոդական ամսագիր 8, Երևան, 2013, էջ 27-37:
2. Ա. Ռ. Չարչյան, Կարդալու կարողության ձևավորման գործընթացի փուլային առանձնահատկությունները – Հատուկ կրթություն: Գիտամեթոդական տեղեկատու, Եր., 2009, էջ 39-54:
3. Ա. Ռ. Չարչյան, Գրավորի և ընթերցանության խանգարումներ առաջացնող մի քանի պատճառ – Պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2009, էջ 108-116:
4. Ա. Ռ. Չարչյան, Հատուկ (օժանդակ) դպրոցի սովորող գրավոր խոսքի խանգարումներով դպրոցականների խաղային ուսուցման ընդհանուր բնութագիրը – Շտկողական մանկավարժություն: Մանկավարժական միտք, «Տաթև գիտակրթական համալիր» 1-2, Եր., 2011, էջ 247-254:
5. Ա. Ռ. Չարչյան, Հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների կարդալու և գրելու կարողությունների ձևավորման խնդիրների վերլուծություն – Շտկողական մանկավարժություն: Մանկավարժական միտք: «Տաթև գիտակրթական համալիր» 3-4, Եր., 2011, էջ 235-240:
6. Ա. Ռ. Չարչյան, Հատուկ (օժանդակ) դպրոցների կրթական չափորոշիչների պահանջները հաղթահարելու խնդրի շուրջ – Հովի. Թումանյանի անվան ՎՄԻ: ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ Բ (հասարակագիտական պրակ), Վանաձոր 2011, էջ 314-329:
7. Аксенова А. К., Методика обучения русскому языку в специальной (коррекционной) школе: учеб. для студ. дефектол. фак. педвузов. — М.: Гуманитар. изд. центр ВЛАДОС, 2004. — 316 с.
8. Выготский Л. С., Мышление и речь //Избранные психологические исследования. М.: Изд-во АПН РСФСР, 1956. — 519с.
9. Корнев А. Н. Нарушения чтения и письма у детей.—СПб.: Речь, 2003 — 336с.
10. Костромина С. Н., Нагаева Л. Г., Как преодолеть трудности в обучении чтению. Упражнения, задания, конспекты занятий. Москва, 2006, —240с.
11. Лалаева Р. И., Нарушение речи и пути их коррекции у младших школьников. С-Пб.: Союз, 1998. — 222 с
12. Лурия А. Р., Очерки психофизиологии письма. / А. Р. Лурия. М.: Изд-во Акад.пед.наук. 1950. —352с.
13. Прищепова И. В., Дизорфография младших школьников: Учебно-методическое пособие.—СПб.: КАРО, 2006—240с.

ОСНОВНЫЕ ПОДХОДЫ КОРРЕКЦИИ НАРУШЕНИЯ ПИСЬМЕННОЙ РЕЧИ В
ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ РОДНОГО ЯЗЫКА У УЧАЩИХСЯ НАЧАЛЬНЫХ КЛАССОВ
С НАРУШЕНИЯМИ УМСТВЕННОГО РАЗВИТИЯ

АННА ЧАРЧЯН

Преподаватель факультета специального образования кафедры логопедии и восстановительной терапии, научный работник образовательно-исследовательского центра шахмат Армянского Государственного Педагогического Университета им. Хачатура Абовяна

В статье представлены теоретические обоснования методов и средств коррекции нарушения письменной речи у учащихся начальных классов в вспомогательной школе, а также обоснование эффективности подходов коррекции у учеников с нарушениями письменной речи. В тексте приводятся также упражнения и задания для коррекции нарушения письменной речи у учащихся начальных классов в вспомогательной школе.

THE ESSENTIAL CORRECTONAL WAYS OF WRITING DISORDERS OF PRIMARY
SCHOOLCHILDREN WITH MENTAL DEVELOPMENT DISORDERS IN NATIVE
LANGUAGE TEACHING PROCESS

ANNA CHARCHYAN

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan Chair of Speech and Rehabilitation Therapy , Lecturer, Researcher at the Chess Educational Research Center

The article touches upon the theoretical rationale of writing disorders correction means and methods of primary schoolchildren studying at special (auxiliary) schools, the analytical description of general correctional methods and approaches of writing are also being introduced. Games, tasks and exercises directed towards the correction of writing disorders of primary schoolchildren studying at special (auxiliary) school are also thoroughly introduce in the work.

Երևանի պետական համալսարանի ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի սամբոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌՈՒՍՏԱՐՏԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՎՐԱ

Հաղորդակցական տեխնոլոգիաներն օրեցօր զարգանում են, իսկ ի հաշիվ հեռուստառադիոտեխնոլոգիաների՝ աճում է համացանցից օգտվողների թիվը: Ավանդական հեռուստատեսությունն իր դիրքերը զիջում է, քանի որ հեռուստառադիոտեխնոլոգիաներն ավելի շատ են: Եթե լրջագույն քայլեր չձեռնարկվեն, ապա համացանցը հեռուստատարադրանքը կօգտագործի միմիայն իր նպատակների համար և վտազ կա, որ հեռուստատեսությունը երկար կյանք չի ունենա:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հաղորդակցական տեխնոլոգիա, ազդեցություն, հեռուստատարադրանք, փոխակերպում:

Հեռուստառադիոտեխնոլոգիան այսօր հեռուստատարադրանքը սպառում է յուրօրում կամ սոցիալական ցանցերում: Սա նշանակում է, որ նախկինում ամենադիտելի հաղորդումների ընթացքում հեռարձակվող գովազդը կորցնում է իր նշանակությունը: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հեռուստատարադրանքը ստեղծվում էր գովազդատուների վճարած գումարով, ապա այս դեպքում հեռուստառադիոտեխնոլոգիան նանսական հոսքերի բացակայության պայմաններում, կարող է դադարեցնել իր աշխատանքը:

Ավանդական ԶԼՄ-ներն ամբողջ աշխարհում փոխակերպվում են՝ հեռուստառադիոտեխնոլոգիաները հատ-

կապես: Նույն մարտահրավերները հաղթահարելու խնդիր ունեն նաև հեռահաղորդակցության ընկերությունները:

«Աշխարհում ավանդական հեռախոսագանգերի քանակը շեշտակիորեն նվազում է: Մարդիկ գերադասում են «Վայբերը», «Սկայպը», «Ուոթսափը», «Ֆեյսբոքը»: Համացանցի արագ տարածումն էլ հեռահաղորդակցության ընկերությունների համար լուրջ մարտահրավեր է ստեղծում և մենք հասկանում ենք, որ եկել է նոր ծառայություններով մրցելու ժամանակը»:

Հայաստանում առաջին քայլն այս ոլորտում իրականացրեց «Արմենիա» հեռուստառադիոտեխնոլոգիան. մեկ տարի առաջ համագործակցելով «Յուրոմ» ընկերության հետ ստեղծեց «Արմենիա Պրեմիում» հեռուստաալիքը, որտեղ գովազդ չկա, իսկ հաղորդումների ու ֆիլմերի զգալի մասը ցուցադրվում է մեկ օր առաջ: Նմանատիպ տարբեր ալիքներ են ստեղծվել, որոնք ուղղված են տարբեր տարիքային, սոցիալական, կրթական ու մշակութային խմբերին²:

Աշխարհի բազմաթիվ հեռուստառա-

1 «Բիլայն Հայաստան» ընկերության գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինի հետ փորձագիտական հարցազրույցից:

2 <http://www.tert.am/am/news/2016/11/07/Armen-Arzumanyan>, Հեռուստատեսությունը պետք է փոխվի, այլապես անդադնալիքներ կպարտվի համացանցին, «Պանարմենիան մեդիա գրուպ»-ի գործադիր տնօրեն Արմեն Արզումանյանի հարցազրույցից:

կերություններ ու հեռարձակողներ վաղուց կիրառում են վճարովի մալուխային հեռուստատեսության փորձը, և դա օգնում է գումար հայթայթել, ստեղծել հետաքրքիր նախագծեր, որոնք բաժանորդագրության արդյունքում հասանելի են դառնում հեռուստադիտողին: Չնայած որ Հայաստանում անալոգային հեռարձակումն ամբողջությամբ փոխակերպվեց թվայինի, այնուամենայնիվ, թվային ընդունիչների պահանջարկը հիմակա-նում զգացվեց մարզերում, որովհետև մայրաքաղաքում մալուխային հեռարձակման հնարավորություններն օգտագործվում են մեծ չափերով:

«Այսօր հեռուստատեսության զարգացման հիմնական ուղենիշը որակյալ և հետաքրքիր կոնտենտի արտադրությունն է, ինչը կարող են իրենց թույլ տալ միայն խոշոր և հարուստ հեռուստաընկերությունները»¹:

Հեռուստառադիոհեռարձակումն էլեկտրամագնիսական ալիքների միջոցով պատկերների և (կամ) հնչյունների կամ դրանց պայմանանշանների այնպիսի տարածումն է հաղորդագծով (ներառյալ՝ մալուխային կապով) կամ առանց հաղորդագծի (ներառյալ՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ արբանյակային կապով եթեր հեռարձակումը), որ այդ պատկերները կամ հնչյունները հասանելի լինեն հասարակությանը: Հեռահաղորդակցական կապի ծառայություններն իրենց մեջ ներառում են ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը: Այդ գործողությունների իրականացման համար հաղորդիչ միջոցները կարող են հիմնվել մեկ կամ մի քանի համակցված տեխնոլոգիաների

վրա: Այս ծառայություններն ուղղված են միայն տեղեկատվության փոխանցմանը և չեն առնչվում բովանդակային մասի ստեղծմանը: Հեռուստատեսային ազդանշանների փոխանցումը կարող է ներառել հեռուստաալիքով հեռարձակվող ամբողջական ծրագրի բաժանումը փաթեթների: Արբանյակային կապի ծառայությունները ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցման համար արբանյակային կապն ապահովող միջոցների սպասարկումն ու շահագործումը կամ այդ կապից օգտվելու հնարավորության տրամադրումը, հեռուստաալիքներով ու հեռուստատեսային կայաններից և ցանցերից կամ ռադիոցանցերից ստացված ձայնա-, տեսածրագրերի, տեքստերի փոխանցումն անմիջական սպառողին, ինչպես նաև ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը՝ արբանյակային հեռահաղորդակցական կապն ապահովող օպերատորի կողմից: Այստեղ դասակարգվող միավորների գործունեությունը չի ներառում ծրագրերի ստեղծման գործընթացը: Հեռահաղորդակցության այլ ծառայություններն իրենց մեջ ներառում են արբանյակների դիտումը, կապուղիների հեռուստաչափումը, ռադարային կայանների ծառայությունները, արբանյակային վերջնականայանների (տերմինալների) և մեկ կամ ավելի վերգետնյա հաղորդակցման համակարգերի միջև անմիջական հեռահաղորդակցական կապը (հեռարձակումը և ընդունումը) արբանյակային համակարգի հետ ապահովող սպասարկման միջոցների շահագործումը, ոչ սեփական ISP (Internet service provider) կամ կառավարվող ISP ցանցի միջոցով ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը օգտվողին, հասարակական վայրերում ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը հեռախոսացանցի միջոցով, գործող հեռահաղորդակցական համակարգերի միջոցով այլ ծառայությունների մատուցումը, հե-

1 <http://www.panorama.am/am/news/2016/07/07/%D4%B1%D5%AC%D5%A5%D6%84%D5%BD%D5%A5%D5%B5-%D5%8E%D5%B8%D5%AC%D5%AB%D5%B6/1609195>, ՌԴ կապի և զանգվածային հաղորդակցման փոխնախարար Ալեքսեյ Կոլինի հարցազրույցից:

ռահաղորդակցական կապի վերավաճառքի գործունեությունը (ցանցի որոշակի ծավալի ծառայությունների գնումը և վերավաճառքը, առանց լրացուցիչ ծառայությունների մատուցման)¹:

Լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններն են՝ հեռախոսային ցանցի, հեռագրական կապի, ինտերնետ հասանելիության, մալուխային հեռուստատեսային համակարգերի:

Անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններն են՝ բջջային հեռախոսակապի, ռադիոալիքային (փեյջինգային), շառավղային գործողության, ինտերնետ հասանելիության:

Մալուխային հեռուստատեսության հաղորդակցության համակարգերին միացման բաժանորդների քանակը որոշվում է մալուխային հեռուստատեսության համակարգին միացված բնակարանների քանակով²:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալների համաձայն 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բոլոր քաղաքային և գյուղական համայնքներն ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթով: Ընդ որում, համայնքների 4, 2 տոկոսն ապահովված է 1 օպերատորի, 18, 1 տոկոսը՝ 2 օպերատորների և 77.7 տոկոսը՝ 3 օպերատորների հանրային շարժական կապի ծածկույթով:

Ըստ օպերատորների հաշվետվությունների՝ բջջային կապի բաժանորդների թվաքանակը Հայաստանում 2016թ. երրորդ եռամսյակում հասել է 3 486 480

– ի, ինչը նախորդ եռամսյակի համեմատ ցույց է տվել 52 084 բաժանորդների աճ: 2015 թվականին այս ցուցանիշը հասնում էր 3 424 236-ի³:

Ըստ օպերատորների՝ բաժանորդները բաշխվում են հետևյալ կերպ. փակագծերում տրված է աճը մեկ եռամսյակի ընթացքում.

Vivacell – 2 112 606 (+28 444)

Beeline – 890 507 (+26 945)

Ucom – 483 367 (–3 305)⁴:

Սա նշանակում է, որ ինչքան ավելանում է բաժանորդների թիվը, այդքան ավելանում է հաղորդակցական նոր տեխնոլոգիաներով հեռուստաարտադրանք դիտողների քանակը: Դրան գուցահեռ հեռուստահեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգը և դրա իրականացման միջոցառումներն էլ նպատակաուղղված են ապահովելու բազմաբովանդակ հեռուստահեռարձակման լայն հասանելիությունը և մատչելիությունը, հաճախականությունների տիրույթների արդյունավետ օգտագործումը, հեռուստահեռարձակման և տեղեկատվական ցանցերի համակցելիությունը, հեռարձակման պլատֆորմների օգտագործման համաձայնեցվածությունը և տեղեկատվական ոլորտում կիրառվող տեխնիկական միջոցների համատեղելիությունը⁵:

Համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից 2010թ. դեկտեմբերի 16-ին անցկացված մրցույթներում

3 http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13460&phrase_id=57070, Ս. Մարտիրոսյան, Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտը 2014թ. տվյալներով:

4 <http://www.media.am/armenian-telecommunication-2016>, Ս. Մարտիրոսյան, 2016 թվականի Հայաստանի հեռահաղորդակցությունը:

5 Հայաստանի Հանրապետությունում թվային հեռուստատեսային հեռարձակման համակարգի ներդրման գործընթացը սկսվել է 2009թ-ին, երբ ՀՀ կառավարության 12.11.2009թ-ի թիվ 47 արձանագրային որոշմամբ հաստատվել է համապատասխան հայեցակարգը:

1 <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77362>, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշում, 20 մայիսի 2011 թվականի թիվ 03-Ն:

2 <http://www.armstat.am/file/Qualitydec/am/19.23.pdf>, ՀՀ ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական կայքէջ:

թվային հեռարձակման ցանցի միջոցով հանրապետական, մայրաքաղաքային և մարզային սփռման իրավունք է ստացել թվով 28 հեռուստաընկերություն, այդ թվում՝

- հանրապետական սփռում՝ 8 (երկու հանրային հեռուստաալիք՝ ընդհանուր ուղղվածության և հոգևոր-մշակութային, հինգ մասնավոր հեռուստաալիք՝ ընդհանուր ուղղվածության, մեկ վերահեռարձակվող հեռուստաալիք)։

- մայրաքաղաքային սփռում՝ 10 (մեկական ժամանցային, երիտասարդական, երաժշտական, մեկ մանկապատանեկան, գիտակրթական, դաստիարակչական, ճանաչողական, մեկ միջազգային և տեղական լրատվական-վերլուծական, մեկ միջպետական, մեկ ընդհանուր և երեք վերահեռարձակվող հեռուստաալիք)։

- մարզային սփռում՝ 10 (ընդհանուր ուղղվածության և տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող մեկական հեռուստաալիք յուրաքանչյուր մարզում)։

Թվային հեռուստատեսային հեռարձակման համակարգի ենթակառուցվածքների տեխնիկական լուծումները ամրագրվել և սկսվել են իրականացվել 2014 թվականի հունվարի 14-ից։ Աշխատանքներն իրականացնում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ընկերությունն իր հիմնական գործընկեր՝ շվեդական ԷՐԻՔՍՈՆ ընկերության հետ։ Աշխատանքներին մասնակցում են նաև համաշխարհային ճանաչում ունեցող իտալական՝ ԹԵԼՍԱՏ, պոլեանական՝ ԷԼԹԻ, իսպանական՝ ՊՐՈՄԱՔՍ և այլ ընկերություններ¹։

Թվային հեռուստատեսային հեռարձակման համակարգը բաղկացած է հետևյալ համակցված օղակներից՝

- հանրապետական մուլտիպլեքսավորման, վերահսկման և կառավարման կենտրոն։

- թվային DVB-T2 վերգետնյա հեռարձակման հաղորդիչ ցանց

- օպտիկա-մանրաթելային կապի գծերի ցանց։

- DVB-S2 արբանյակային կապի ցանց։

Հանրապետական մուլտիպլեքսավորման, վերահսկման և կառավարման կենտրոնում իրականացվում է հեռուստաընկերություններից տրվող ազդանշանների ընդունում, կոդավորում, մուլտիպլեքսների ձևավորում և հաղորդում թվային DVB-T2 վերգետնյա հեռարձակման հաղորդիչ ցանցին։

Ընդհանուր առմամբ, ներկայումս թվային ազդանշանը հասանելի է Հայաստանի Հանրապետության բնակչության շուրջ 66.3 տոկոսին²։

Տեղեկատվական դարաշրջանը հեղաշրջել է նույնիսկ ամենահեռավոր գյուղերում ապրողների կյանքը։ «Գլոբալ գյուղակում³», որտեղ ձայներն ու պատկերները հեռավոր տարածություններից կարող են ազդել որպես հոգեբանական ու քարոզչական ազդեցության միջոցներ, օգնում են, որ աշխարհի տարբեր անկյուններում գտնվող մարդիկ տեղեկանան միմյանց գտնվելու վայրի, մտածողության, վարքագծի, սպասելիքների, նախասիրությունների և դժվարությունների մասին։ Գրելու և կարդալու հմտությունները ձեռք բերելով և համակարգչին ու համացանցին հասու լինելով նրանք դառնում են «Գլոբալ գյուղակի» ոչ թե դիտողներ, այլ անմիջական անդամներ և այդ միջոցով կարողանում են հաղորդակցվել միմյանց հետ։

2 Տե՛ս, նույն տեղում։

3 «Գլոբալ գյուղ» եզրույթն առաջին անգամ օգտագործել է կանադացի գիտնական Մ.Մաքլուհանը նկատի ունենալով այն հանգամանքը, երբ գերարագ էլեկտրոնային լրատվամիջոցները կապակցում են աշխարհը մեկ հսկայական սոցիալական համակարգում։

1 <http://tna.am/?p=457>, Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանցի պաշտոնական կայք։

Հաղորդակցական տեխնոլոգիաները նոր որակ և նոր չափանիշներ ներմուծեցին, ինչը ավանդական ՋԼՄ-ների փոխակերպման բուն պատճառ հանդիսացավ: Ժամանակակից հեռուստատարատաղրությունը լուրջ մարտահրավերների առջև է կանգնած: Հայաստանի հանրային և մասնավոր հեռուստարն-

կերությունները պետք է օր առաջ ռազմավարական քայլեր մշակեն, որպեսզի կարողանան տեխնոլոգիական զարգացմանը զուգահեռ ստեղծել այնպիսի արտադրանք և կիրառել այնպիսի տեխնիկական և բովանդակային հնարքներ, որոնք հնարավորություն կտան ժամանակին համընթաց քայլել:

**ВОЗДЕЙСТВИЕ РАЗВИТИЯ КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ НА
ТРАНСФОРМАЦИЮ ТЕЛЕВИЗИОННОГО ПРОДУКТА
АСТГИК АВETИСЯН**

ЕГУ, кафедра телерадиожурналистики, кандидат филологических наук, доцент

Коммуникационные технологии развиваются с каждым днём. Количество пользователей интернета растёт, а число потребителей телевидения уменьшилось за последние десятилетия.

Современному телевидению приходится противостоять очень серьёзным вызовам. Общественное и коммерческие телекомпании Армении должны немедленно разработать стратегические действия, чтобы параллельно развитию технологий создать такой продукт, который поможет телевидению идти в ногу со временем.

**THE IMPACT OF DEVELOPMENT OF COMMUNICATION TECHNOLOGIES ON
TRANSFORMATION OF TELEVISION PRODUCT
ASTGHİK AVETISYAN**

YSU, Chair of Radio and TV Journalism, Candidate of Philological sciences, Associate professor

Communication technologies are developing day by day. The number of Internet users grows, while the number of TV consumers has been decreasing in recent decades.

The modern television faces very serious challenges. Public and business TV companies of Armenia should immediately develop strategic actions to create a product, which will help them keep pace with the development of technologies.

**ՄՈՔԻԼՈԼՈԳԻԱ. ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Հոդվածում անդրադարձ է կատարվում էլեկտրոնային դարաշրջանի ամենատարածված տեխնոլոգիաներից մեկին՝ բջջային հեռախոսներին ու Հայաստանում նրա ազդեցություններին ու հետևանքներին: Ներկայացվում է բջջային հեռախոսների ցտեղխման ու տարածման գործընթացը, մասնավորապես բջջայնացման արտադրությունների առանձնահատկությունները, ինչպես նաև բջջայինների ազդեցությունը մի շարք ոլորտներ վրա՝ բնություն, առողջապահություն, միջանձնային փոխհարաբերություններ, հաղորդակցություններ և այլն: Հոդվածում քննարկվում է նաև այն, թե ինչպես են բջջային հեռախոսները փոխել մարդկանց կենսակերպը. արդյո՞ք նրանք իմիջի էլեմենտներ են, թե՛, ըստ էության, օգտակար են և անհրաժեշտ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. մոբիլիոգիա, բջջային, տեխնոլոգիա, հաղորդագրություններ, անվտանգություն

Համաձայն մեդիումի տեսության՝ մարդկության պատմությունը կարելի է բաժանել չորս մեծ դարաշրջանների՝ ըստ տվյալ դարաշրջանին բնորոշ հաղորդակցության գերիշխող եղանակի՝ բնավորության, գրության, տպագրության և էլեկտրոնային դարաշրջանների: Վերջին՝ էլեկտրոնային հաղորդակցության դարաշրջանի սկիզբը համարվում է տասնիններորդ դարի առաջին կեսը, երբ սկսեցին լայնորեն օգտագործվել առաջին էլեկտրոնային տեղեկատվամիջոցները. հեռագիրը և հեռախոսը ավետեցին ռադիոյի, հեռուստացույցի դարաշրջանի գալուստը: Այս հոդվածի

շրջանակում անդրադարձել ենք էլեկտրոնային դարաշրջանի տեխնոլոգիաներից մեկին՝ բջջային հեռախոսին:

Բջջային հեռախոսի նախատիպը ստեղծվել է դեռևս 1947 թվականին: «Bell Laboratories» ընկերությունում խումբն առաջարկում էր մոբիլ հեռախոսներ կիրառել, ինչը հետպատերազմյան շրջանում բավական անհավանական էր մատչելիության տեսանկյունից: 1973 թվականին այդ ընկերությունը հանրությանն ու գիտական աշխարհին ներկայացրեց 1.5 կիլոգրամ քաշով սարքը, որով կարելի էր խոսել առանց լարի: Տարեցտարի այս գյուտը կատարելագործվեց այնչափ, որ մեր կյանքի ու գործի անբաժան մասնիկը դարձավ բազմաֆունկցիոնալ մի սարք, որն իր մեջ ներառում է զանգելու, նամակներ ուղարկելու, նկարելու, տեսագրելու, հեռուստահաղորդում դիտելու և էլի հազար ու մի գործողություն: Ապացուցվել է, որ բջջային ավելի անվտանգ է, երբ քիչ գործողություններ կատարելու հնարավորություն ունի: Այն որ բջջայինն իր օգտագործումով որոշակի վտանգ է պարունակում, այլևս կասկածից վեր է: Հետաքրքիր է, որ բջջային հեռախոսներ արտադրող ընկերությունների կողմից մշտապես ինչ-ինչ միջոցներով կանխարգելվում են հեռախոսների անվտանգության ու ակնհայտ վտանգի վերաբերյալ գիտահետազոտական հեղինակավոր խմբերի հետազոտությունների արդյունքների հրապարակումները: Տարիներ առաջ նույնիսկ լուրեր էին տարածվել «Nokia» ընկերության կոռուպցիոն գործողությունների մասին: Ամերիկյան մի հետազոտող խումբ այս

Ֆիրմայից ստացած միլիարդավոր դոլարների դիմաց հրաժարվեց հրապարակել իր հետազոտության արդյունքները: Ընդհանրապես, ներկայում ամենաշատ կաշառք տվող ընկերությունները հենց բջջային սարքավորումներ արտադրողներն են: Նրանց կաշառքները, ըստ ինտերնետային սղբյուրների, հասնում են մինչև Համաշխարհային առողջապահական կազմակերպություն, ՄԱԿ, Կարմիր Խաչ... Այս ամենը թերեւս ցույց է տալիս, որ բջջային հեռախոսների ետևում լուրջ անձինք են կանգնած, կա լուրջ ինդուստրիա և դժվար է պայքարել այդ ամենի դեմ:

Նոր տեխնոլոգիաների ի հայտ գալուն պես գիտնականները բաժանվեցին երկու խմբի, նրանց մի մասը խոսում է դրանց օգտակարության, իսկ մյուս մասը՝ վնասի մասին: Ֆլորե Բրիզելը (Florie Brizel), ով ավելի քան 6 տարի է՝ ուսումնասիրում է բջջային հեռախոսների ինդուստրիան, կամ ինչպես ինքն է ասում՝ մոբիլոլոգիան, ասում է, որ իշխանության լուծից ազատվելու համար նախևառաջ պետք է ճանաչել իշխանությանը: «Որոշ մարդկանց համար «ամենագոյ» հեռախոսը ընդամենը հեռախոս է, ուրիշների համար՝ շատ ավելին: Վերջին խմբի մարդկանց համար հեռախոսը ձեռքին ունենալը հավասարազոր է ավի մեջ ողջ աշխարհը ունենալուն, քանի որ դրանք թույլ են տալիս մարդկանց խոսել աշխարհի հետ: Բջջային հեռախոսները ոչ միայն դարձել են մարդկանց կյանքի անբաժանելի մասը, այլև փոխում են նրանց կյանքը, երբեմն՝ ավելի լավը, երբեմն՝ ավելի վատը, երբեմն՝ նույնիսկ առանց գիտակցելու այդ», – ասում է նա և հավելում, որ բջջային հեռախոսների ստեղծման սկզբնական ժամանակահատվածում դրանք ստեղծին մարդկությանը: Նա հավատացած է, որ այդ տեխնոլոգիան, որը մեզ առաջին հայացքից ազատություն է տալիս, իրականում բանտարկում է մեզ: «Բջջային հեռախոսների օգտագործման

ազդեցությունը ավելին է, քան անցնող մի երևույթ կամ ինչ-որ բան՝ արժանի օրինական ուսուցման: Տեխնոլոգիաները և մարդասիրությունը երբեք համատեղելի չեն: Մեկը միտված է դեպի անհայտը ուսումնասիրելու, զարգացնելու և շահագործելու այն, ինչը կարևոր է, իսկ մյուսը ուշադրություն է դարձնում անհատներին և նրանց շրջապատող աշխարհին՝ զարգացնելով հարաբերությունները, գիտակցությունը: Երկուսն էլ անհրաժեշտ են: Այստեղ մարտահրավերն այն է, թե ինչպես օգտագործել տեխնոլոգիան՝ բարձրացնել մարդասիրությունը, ոչ թե դեգրադացնել այն», – ասում է նա՝ օրինակ բերելով ամերիկացիներին, ովքեր բջջային հեռախոսով քվերակում են իրենց սիրելի կատարողի օգտին, կյանքի ընկեր են գտնում և այլն: Մարդկության նպատակն է հասնել խաղաղության, տնտեսական արդարության, էկոլոգիական առողջության, քաղաքական ազնվության, կայունության, լավ աշխատանքի, իսկ թե որքանով են մեր օգտագործած տեխնոլոգիաները նպաստում այս ամենին, դժվար է ասել: Բրիզելը չի քննադատում բջջային հեռախոսներին՝ մերժելով դրանք, նա նաև նշում է դրանց դրական կողմերը, մասնավորապես՝ օպերատիվությունը, ամենահաստիքները և այլն: Օրինակ բերելով այն, որ մի դեպքում բջջային հեռախոսով կարող ենք նկարահանել ինչ-որ անարդարություն և տեղադրել ինտերնետում, նա նաև նշում է, որ այդ բջջայինով կարելի է նկարահանել ինչ-որ տեսանյութ և դրանով թշնամիների դատություն անել, ընտանիքներ քայքայել և այլն: Նա հակված է բջջայինները համարել ավելի շատ չարագործ, քան բարեգործ և դրա համար բերում է իր պատճառները. «Մեզ թվում է, թե մենք կարող են վերահսկել, թե ում ենք նայում, երբ, որտեղ, բայց չենք կարող: Բջջային հեռախոսները մեզ ուժ են տալիս, բայց մյուս կողմից էլ՝ մենք արդեն ձուլված ենք դրանց», – նշեց նա: «Google»-ի գործադիր տնօրեն Էրիկ

Շմիդտը մեկ նախադասությամբ ամփոփել է բջջային հեռախոսների ազդեցությունը ժամանակակից կյանքի վրա՝ նշելով, որ մենք բոլորս պիտի ստիպենք նրանց մեր փոխարեն անել ամեն ինչ: Ի դեպ, արդեն ստեղծվել են հեռախոսներ, որոնք կարող են մարդու կողմից ստանալ ինչ-որ հանձնարարություն և կատարել դա: Բրիզելը ահագանգում է այս մասին՝ հայտարարելով, որ եթե այսպես շարունակվի, ապա մարդու գոյության անհրաժեշտությունը երկրագնդի վրա կասկածի տակ կդրվի, որովհետև տեխնոլոգիաները կանեն ամեն ինչ մեր փոխարեն:

Ուսումնասիրելով մոբիլոլոգիան տարբեր տեսանկյուններից, մասնավորապես՝ բջջային հեռախոսների ազդեցությունը վարքի, հանրույթների, մշակույթի, ժամանցի և տնտեսության վրա, Ֆլորիե Բրիզելը (Florie Brizel) նշում է, որ հեռախոսը մի տեխնոլոգիա է, որը վերացնում է սահմանները, մարդիկ սկսում են նմանվել իրար, իսկ տիրապետող է դառնում արևմտյան մշակույթ կամ աշխարհը արևմտականանում է: Սա կարող է կործանարար լինել փոքր ազգերի և մշակույթների համար: Նա օրինակ է բերում մորը և նորածին երեխային՝ նշելով, որ նրանք իրար հետ կապված են պորտալարով և ասում է, որ արևմուտքից բոլորիս կախվածության պորտալարն էլ տեխնոլոգիաներն են, բավական է հիշել, թե քանի ժամ ենք մենք անցկացնում նրանց հետ: Հայաստանը ևս, չստեղծելով սեփական տեխնոլոգիաները, դրանք վերցնում է արևմտյան հասարակությունից և հայ հասարակության ամենօրյա կյանքը ուղղակիորեն կապված և կախված է արևմտյան տեխնոլոգիաներից: Մռաջին հայացքից՝ այդտեղ կարող է ոչ մի վատ բան չլինել, այսինքն՝ նորմալ է, երբ դու չունես ինչ-որ բան և ուրիշից ես վերցնում, սակայն, տեխնոլոգիաները մի հասարակությունից մեկ այլ հասարակություն հենց այնպես չեն տեղափոխվում, դրանք իրենց հետ տանում

են որոշակի գաղափարներ: Արևմուտքը ամբողջ աշխարհում հասնում է տիրապետության ոչ թե պատերազմներով, այլ տեխնոլոգիաներով ու այնպես է անում, որ դա լինի տիրապետվող երկրների կամքով: Արևմուտքն Հայաստանում հասել է տիրապետության և իշխանության, իսկ արևելքն էլ անգիտակացաբար կամ գիտակցաբար թույլ է տալիս, որ իրեն տիրապետեն: Դրա ելքերից մեկն այն է, որ կամ դու պետք է քո տեխնոլոգիան ստեղծես, ինչը կապված է մի շարք պամանների հետ՝ ֆինանսական, տեխնիկական, մասնագիտական, և այդ առումով գրեթե անհնար է Հայաստանում: Կամ պետք է վերցնել տեխնոլոգիան և հարմարացնել ըստ քո հասարակության, որպեսզի այդ տեխնոլոգիան չձևափոխվի և հաջողություն բերի: Ապացուցված է, որ պատշաճորեն ներքնացված տեխնոլոգիաները ոչ թե վատթարացնում են մարդկային կյանքը, այլ ընդհակառակը, բարելավում:

Ամբողջ աշխարհում խոսվում է տեխնոլոգիաներից կախվածության մասին: Բազմաթիվ հետազոտություններ են կատարվում, տեսություններ են ստեղծվում: «Մեր կապվածությունը ինտերնետին վերածվել է իսկական կախվածության: Եվ, մի քանի հարցումների թարմ տվյալներով, այն (կախվածությունը) ուժեղ է», – գրում է Շան Լին «Los Angeles Times»-ի բլոգում: Համաձայն վերջերս «TeleNav» տեխնոլոգիական ընկերության անցկացրած հարցման՝ ամերիկացիների կեսից ավելին պատրաստ է մեկ շաբաթով հրաժարվել շոկոլադից, ակոհոլից և սուրճից, քան հեռախոսից: Հարցվածների մեկ երրորդը կհրաժարվեր սեքսից, 22%-ը՝ ատամի խոզանակից, 21%-ը՝ դուրս կգար տնից առանց կոշիկների, քան առանց բջջային հեռախոսի: Հարցվածների 66%-ը քնում է իրենց սմարթֆոնների հետ: Ավելի վաղ բրիտանական «Intersperience» ընկերության անցկացրած մեկ այլ հարցման համաձայն՝ մեր կախվածությունն այնքան

ուժեղ է, որ մարդիկ առանց ինտերնետի անցկացրած օրերը համեմատում են ակոհոլից կամ խմիչքից բաժանվելու հետ: Իսկ Մերիլենդի համալսարանի անցկացրած հարցման համաձայն՝ ինտերնետից և ՋԼՄ-ներից կտրված ուսանողների մոտ անգամ նկատվում են արստինենտային համախտանիշի նշաններ: Մեծ Բրիտանիայի ազգաբնակչության 1/3-ը տեխնիկական սարքավորում է գնում, որի կարիքն այդ պահին չունի ու որպես կանոն չի էլ ունենում, իսկ յուրաքանչյուր 5-րդ լեռը կատաղության ջղաձգում է ունենում, եթե միանգամից չի կարողանում տեխնիկական նորայնություն օգտագործել: Ռուսաստանում երիտասարդության 85%-ին տեխնիկայից հնարավոր չէ բաժանել: Իրավիճակն այնքան լուրջ է, որ 18-35 տարեկան մարդիկ անգամ լոգարանում չեն բաժանվում բջջային հեռախոսներից: Նրանց մի մասն էլ կախվածության մեջ է ականջակալներով նվագարկիչներից: Բարձր տեխնոլոգիաներից այս տեսակ կախվածությանը գիտական բացատրություն են տվել ճապոնացի գիտնականները: Գենետիկական ուսումնասիրությունների արդյունքում նրանք պարզել են, որ հատկապես սմարթֆոնները մեծ ազդեցություն են թողնում կոնկրետ ֆերմենտների վրա: Արդյունքում էլ մենք ի վիճակի չենք լինում ինքներս մեզ կառավարել Ֆիլանդիայում «հիվանդության» դեմ պայքարի ավելի հետաքրքիր միջոց են գտել: Կազմակերպվում է մրցույթ, որում հաղթում է նա, ով հնարավորինս հեռու կնետի... բջջային հեռախոսը: Այս «մարզաձևն» իսկապես թուլացնում է նյարդերը: Ի դեպ, այս «մարզաձևում» ռեկորդը պատկանում է Միկկո Լամպինին. նա բջջային հեռախոսը նետել է ավելի քան 100 մետր: Բրիտանացի հոգեբան Ռոբերտ Էդելմանը հավաստիացնում է, որ տեխնոլոգիաները բարձրացրել են հասարակության մեջ գոյություն ունեցող լարվածությունը: Հաղորդակցության գերարագ տարբերակների պատճա-

ռով մարդիկ դադարել են անձնական կյանքն աշխատանքից բաժանելուց կամ առանձնացնելուց: Հենց այդ պատճառով էլ համակարգչային մանրէները, դանդաղ ինտերնետը կամ վատ աշխատող ստեղնաշարը մեզ միանգամից ավերից հանում են: Որքան տեխնոլոգիաները զարգանում են, այնքան պակասում է համբերությունը: Ամերիկացիների 85%-ը խոստովանել է, որ օրվա ընթացքում իրենց ամենանյարդայնացնող երևույթը տեխնոլոգիաներն են: Նրանք նյարդայնանում են, գոռում և ջարդում այն ամենը, ինչ հայտնվում է ձեռքի տակ: Այս բոլոր տվյալները «Harris Interactive» ընկերության հարցումների արդյունքն են: Բժշկությունն արդեն իսկ սկսել է անհանգստություն հայտնել, որ շուտով պաշտոնապես կրնդունվի «գժվել է տեխնիկական անհարթության «հետևանքով» օխտորոշումը:

2005-ին չինական անկախ փորձագիտական խմբի եզրակացություններից տեղեկանում ենք, որ բջջային հեռախոսների ճառագայթումը միանշանակ վնասում է մարդու ԴՆԹ-ի կոդը: Նրանց տվյալների համաձայն՝ մարդկային գենը կարող է գոյատևել 200 տարուց ոչ ավել, իսկ 50-60 տարի անց երկրագնդում կծնվեն գենետիկորեն անբուժելի հիվանդություններով տառապող արարածներ: Հետաքրքիր է իմանալ, որ բջջային հեռախոսի ճառագայթմից ամենաանվտանգ վիճակում չծնված պտուղն է, մայրական ընկերքից ներս թափանցել այս ճառագայթները չեն կարող: Փոխարենը դրանք կրկնակի են ազդում երկունքի վիճակում գտնվող կնոջ մի շարք օրգանների վրա, իսկ ճապոնական մի գիտնականի հայտնագործության համաձայն՝ բջջայինի ճառագայթումն այլափոխում է լյարդի արտադրած լեդին՝ դարձնելով անավել թունավոր ու վնասակար, ուստի լյարդ-լեդապարկային հիվանդություններ ունեցողները պետք է հնարավորինս հեռու լինեն հեռախոսից: Բջջայիններն

իրական աղետ են լսողությունը խթանող սարքերդաշտն այնքան ուժգին են, որ դրանք վնասում են լսողական համակարգն ամբողջությամբ՝ նույնիսկ հասցնելով լիարժեք խլության: 2000 թվականին Առողջապահական համաշխարհային կազմակերպությունն ուսումնասիրել ու պարզել է, որ բջջային հեռախոսի ազդակները չունեն քաղցկեղածին հատկություններ, սակայն դրանից հետո հեռախոսները կատարելագործվել են և այժմ այլ անկախ փորձագետներ նույնիսկ մեղադրում են այս հեղինակավոր կազմակերպությանը լրացուցիչ հետազոտություն չանցկացնելու մեջ: Կանադական այս խումբը պարզել է, որ հատկապես նոր մոդելները՝ իրենց շուրջն առաջացնող մագնիսական ու ճառագայթային դաշտով, դառնում են քաղցկեղի զարգացմանն ու տարածմանը նպաստող կարևոր գործոն: Նույն ճառագայթային-մագնիսական դաշտը նաև հոգեներգործուն հատկություն ունի, հատկապես զանգի ընդունման պահին դրանք այնքան ուժգին են, որ ձնշելով մարդուն, ազդելով արյունատար անոթների վրա՝ նվազեցնում են արյան մատակարարումն ուղեղին: Հարկավոր է իմանալ նաև, որ այս ճառագայթները նպաստում են հորմոնալ խախտումների առաջացմանը: Գենետիկ կողի պես դրանք ազդում են նաև հորմոնների բաղադրության վրա, և հորմոնների ոչ առողջ լինելու կամ հակումների դեպքում խախտումներն անխուսափելի են: Հետաքրքիր է, որ վարակների դեպքում ևս ճառագայթներն «օգնում» են որոշ վարակահարուցիչ բակտերիաներ «բարգավաճում» են բջջային հեռախոսի շնորհիվ, սակայն ավելի վտանգավոր են ոչ թե հեռախոսները, այլ բջջային կապի հաղորդիչ ակեհավաքները: Դրանց քանակով է պայմանավորված բջջային կապի որակը, դրանք տեղադրվում են ամենուր՝ քաղաքում, գյուղում, բաժրաբերձ սարերի գագաթներին: Ստացվում է, որ բջջայինի հասանելիությանը

զոհ է գնում նաև էկոլոգիապես մաքուր ու անվտանգ գոտում հանգստանալու գործոնը: Իսկ դրանց շուրջը պտտվող մագնիսական դաշտերն իրոք գերլարված են, վնասակարությունը՝ ուղիղ 100 անգամ ավելի: Այսքանից հետո կարևոր է իմանալ, որ բջջային հեռախոսն առավել վտանգավոր է համակարգչի, ծխախոտի, սուրճի ու ալկոհոլի «ուղեկցությամբ»: Այսպիսով առկա են բազմաթիվ փաստեր, որոնք վիճակագրորեն ապացուցում են բջջային հեռախոսի վնասակարությունը: Չնայած այս ամենին, մարդիկ ավելի տարեցտարի շատ են օգտագործում բջջային հեռախոսը:

Շոտլանդիայում ուսուցիչները հավատացած են, որ բջջային հեռախոսներով հաղորդագրություններ գրելը վատ է ազդում դեռահասների գրական հմտությունների վրա: Նրանք նշում են, որ դպրոցահասականները այնքան հաղորդագրություններ են գրում, որ մոռանում են անգլերեն գրագետ գրել, քանի որ հաղորդագրության լեզուն այլ է, այդտեղ նրանք չեն հետևում քերականական կանոններին, բառերը կրճատում են: Ուսուցիչներն ահագանգում են, որ իրենց աշակերտները սկսել են խոսել և շարադրություններ գրել այն լեզվով, որով հաղորդագրություն են գրում իրեն ընկերներին: Հայաստանում ևս այս տեխնոլոգիայի ձևատագիրը հաստատում և շարունակում է երկրում առկա միտումը՝ գրագիտության և գրական հայերենի իրավիճակի անկումը, ժամանակակից կրթական համակարգի ստեղծման հավանականության նվազումը, սպառողականության տարածումը, հասարակության գավառականացումը և այլն: Ակնհայտ է, օրինակ, որ բջջայինների տարածումը ծառայում է բարբառային և ժարգոնային լեզուների սոցիալական կարգավիճակի ամրապնդման առկա միտումներին: Օրինակ՝ բջջայինների հետ միասին մեր բառապաշարում հայտնվեցին նոր բառեր՝ «էսեմեսվել», «բլյությունթվել», «ծնգալ» և այլն:

Այժմ մարդիկ ավելի շատ տեխնոլոգիաների հետ են շփվում, քան իրար հետ, ինչը բնականաբար ակնհայտորեն սպառնում է մարդկային հարաբերություններին: Դա էլ իր հերթին կարող է հեռահար աղետներ բերել, մասնավորապես՝ այն առումով, որ մարդը առանց իր նմանի հետ շփման չի կարող: Նոր տեխնոլոգիայի «շնորհիվ» փոխարինում ենք ոչ թե ինչ-որ մի բան, այլ ինչ-որ մեկին: Օրինակ՝ նախկինում, երբ բջջային հեռախոսներն այսքան տարածված չէին, երեխաները ժամանակ առ ժամանակ այցելում էին իրենց ծնողները, իսկ այսօր նրանք զանգում են և հետաքրքրվում նրանց որպիսիությամբ: Թերևս հենց դրա համար էլ բջջային հեռախոսը մենակության տեխնոլոգիա է, երբ դու այս աշխարհում քեզ ամենահարազատ իրը համարում ես բջջային հեռախոսը, դրա համար էլ չես կարողանում բոլոր անգամ բաժանվել դրանից: Հայաստանում բջջային հեռախոսների վերաբերյալ հետազոտություններ չկան: Այստեղ ևս դրանց օգտագործման բացասական հետևանքների մասին պարբերաբար ահազանգում են բժիշկները, հոգեբանները: Նրանք ևս նշում են, որ բջջայիններից կախվածությունը ակնհայտ է նաև մեզ մոտ, բավական է դուրս գալ փողոց և ամեն քայլափոխի կարելի է տեսնել բազմաթիվ օրինակներ: Պարադոքս է այն, որ տեխնոլոգիաներն այսքան արհեստական են, բայց այս արհեստականությունը բնական է մարդկանց համար, այդ իսկ պատճառով էլ նրանք երբեք չեն մտածում, թե ինչ տեխնոլոգիաներ են օգտագործում և ինչի համար:

Հայաստանում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների վերջին տարիների հիմնական փոփոխությունը բջջային հեռախոսների տարածման բուռն ընթացքն է: Դրան նպաստեց նաև հեռախոսային կապի ազատականացումը և բջջային օպերատորների մուտքը Հայաստան: Անցյալում

մնացին այն ժամանակները, երբ հազար ու մի ծանոթ էր պետք ունենալ հեռախոսի քարտ կամ բջջային հեռախոս գնելու համար, ինչպես նաև այլևս քո բջջային հեռախոսով չես կարող զարմացնել բոլորին, չես կարող լինել միակը: Այդպիսով՝ բջջային հեռախոսները դարձան մատչելի և տարածված, բայց հարց է, թե ինչքանով են անհրաժեշտ դրանք հայ հասարակությունում: Օրինակ՝ Երևանում, երբ ամեն օր դասի կամ աշխատանքի ես գնում, առավելապես աղջիկները քայլում են՝ բջջային հեռախոսները պինդ բռնած: Երթուղայինում ևս բոլորի բջջայինները զանգում են, իսկ խոսակցության հիմնական թեման նույնն է՝ ուր ես, երբ կհասնես, ինչ ես անում և այլն: Այսինքն՝ հարցեր, որոնց պատասխանները չիմանալով էլ մեծ ողբերգություն չի պատահի: Չէ՞ որ նախկինում էլ մարդիկ ապրում էին, պայմանավորվում, հանդիպում և կարծես վատ չէին ապրում առանց բջջային հեռախոսների: Այստեղից կարելի է հետևություն անել, որ եթե նախկինում այդպես ապրել են, ապա այժմ էլ կարելի է ապրել, քանի որ այնպես չէ, որ երկրագնդի վրա անդամնալի փոփոխություններ են տեղի ունեցել և բջջային հեռախոսները օդ ու ջրի նման անհրաժեշտ են դարձել: Առավել ևս, եթե կան մարդիկ, ովքեր հրաժարվել են բջջային հեռախոսից և դրա համար բավական փաստարկված հիմքեր ունեն: Բջջային հեռախոսից հրաժարված մարդիկ ապրում են բջջայինամուլների կողքին և դեռ հարց է, թե ով է ավելի լավ ապրում, ով ինչ է կորցնում և շահում: Դրանից բացի՝ մեզանում բջջային հեռախոսը այլ սոցիալական իմաստ է ստանում՝ պայմանավորված հանրության մեջ առկա կողերով: Մշակութաբան Հրաչ Բայադյանը գրում է, որ բջջային հեռախոսները հայաստանյան հասարակության մեջ շարունակում են մնալ արտաքին հարդարանքի տարր, ավելի հաճախ՝ պրետտիժային, քան գործնական մի բան: «Թերևս, այն

ավելի շատ մարմնացնում է այնպիսի բնութագրական սոցիալական հատկություններ, ինչպիսիք են՝ ոչ գործնականությունը և անպարտաճանաչությունը, զրույցի ոչ պարտադիր բնույթը՝ դրանց տալով հաղորդակցական նոր եղանակ, հաղորդելով տեխնոլոգիական հմայք և փայլ: Հայաստանում նոր տեխնոլոգիաների գաղափարաբանությունն այսօր առավելապես կապվում է հենց բջջայինների հետ: Միջին հայաստանցին, որին ավելի շքեղ բաներ մատչելի չեն, հենց բջջայինի հետ է կապում ժամանակակիցը և մոդայիկը, հասարակայնորեն ցուցադրելի սպառողական ինչ-ինչ կարողությունների առկայությունը, ինքնության որոշակի պատկեր և սոցիալական կարգավիճակի հավաստման հնարավորությունը», – գրել է նա:

Իհարկե, այս ամենի կողքին պետք է նշել նաև, որ բջջայինը դարձել է արագ տեղեկատվություն ստանալու աղբյուր, ու եթե շատերի համար դա արտաքին հարդարանքի տարր է, կա սովոր մարդկանց խումբ, ում համար բջջայինը ծառայում է «մինի» համակարգիչ, որով հետևում է լրահոսին, գրում մեկնաբանություններ, նամակներ: Այս առումով կարելի է արձանագրել, որ բջջային հե-

ռախոսների տարածումն ու մասսայականցումը բերեց ինտերնետային լրատվամիջոցների «հեռախոսային» լսարանի ձևավորմանը և աճին: Որևէ վիճակագրություն մեզանում չկա, որով հնարավոր կլինեք պարզել, թե Հայաստանում քանի հոգի է բջջային հեռախոսից մուտք գործում լրատվական կայք, այդ մասով առանձին լրատվամիջոցներ գուցե ունենան սեփական վերլուծությունը՝ հետագա ռազմավարության մշակման, թիրախ խմբերին առանձնացնելու համար, բայց մինչ նման հետազոտություն անելը, նախևառաջ կայքերը պետք է ունենան իրենց լրատվամիջոցի «մոբայլ» տարբերակը, որը կբացի արագ, նորմալ և բոլոր բջջային համակարգերից, իսկ այսօր Հայաստանում քիչ կայքեր ունեն նորմալ «մոբայլ» տարբերակ, պարզ է, դա կապված է ծախսերի հետ, բայց չպետք է անտեսել այն լսարանը, որը կարելի է ներգրավվել մոբայլ տարբերակի միջոցով: Մինչև տեխնոկրատները և տեխնաստյացները վիճում են հեռախոսների օգտակար-չօգտակար լինելու մասին, մեդիայի ղեկավարները կարող են օգուտ քաղել դրանից, այն ծառայեցնել սեփական բիզնեսին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <http://www.armmedicine.com/publ/23-1-0-145>
2. http://www.huffingtonpost.com/jim-luce/the-impact-of-cell-phones_b_508011.html,
3. <http://itarmeria.net/news/1785.html>
4. <http://youth.am/index.php?lang=1&id=7135&t=13>
5. David Cotton, Language leader, page 41
6. Հրաչ Բայադյան «Բջջային հեռախոսների մեսիջը», <http://hetq.am/arm/opinion/6622/>

МОБИЛЬНЫЕ ТЕЛЕФОНЫ: ВЛИЯНИЕ И ПОСЛЕДСТВИЯ В АРМЕНИИ

ИНГА МАРТИНЯН

ЕГУ, факультет журналистики, кафедра теории и истории прессы, аспирант

В статье мы затронули одну из самых распространенных технологий электронной эпохи. Представили процесс создания и распространения сотовых телефонов, особенности индустрии мобилологии, любопытные исследования, а также влияние мобильных на ряд сфер: природу, здравоохранение, грамотность, человеческие отношения, контакты и так далее. В статье показано также, как мобильные телефоны изменили жизнь людей, являются ли они элементом имиджа или действительно необходимы и полезны.

MOBILE PHONES, IMPACT AND CONSEQUENCES IN ARMENIA

INGA MARTINYAN

YSU, Department of Journalism, Postgraduate

In this article we touched upon one of the most common e-technology era. We presented the process of the creation and distribution of mobile phones, the peculiarities of mobile industry, interesting research, as well as the impact of mobile phones on a number of spheres: nature, health, literacy, human relations, communication and so on. As shown in the article mobile phones have changed human life, whether they are part of the image, or, indeed, necessary and useful.

ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հանրային կապերը (անգլ.՝ PR– Public relations) ժամանակակից հասարակական–քաղաքական կյանքի ամենագործուն գիտաձյուղերից է, որը առնչակցություն ունի գրեթե բոլոր գիտաձյուղերի հետ:

Հանրային կապերի ոլորտի ռահվիրաներից մեկը՝ անգլիացի սոցիոլոգ Մեն Բլեքը, հանրային կապերը սահմանում է հետևյալ կերպ. «Դա փոխըմբռնման միջոցով ներդաշնակության ձեռքբերման մշակույթ և գիտություն է, որը հիմնված է ճշմարտության և բացարձակ տեղեկատվության վրա»¹: Իսկ 1948 թ.–ին Մեծ Բրիտանիայում հիմնադրված հանրային հարաբերությունների ինստիտուտը հետևյալ սահմանումն է տալիս. «Հանրային կապերը պլանավորված, երկարատև աշխատանք է, որն ուղղված է հանրության և կազմակերպության միջև փոխադարձ կապի, բարիդրացիական հարաբերությունների ստեղծմանն ու պահպանմանը»²:

Պետք է նշել, որ այս հասկացողությունը հայաստանյան իրականություն մուտք է գործել ընդամենը 2000–ական թթ–ին այն դեպքում, երբ ամբողջ աշխարհում, մասնավորապես ԱՄՆ–ում PR–ը, որպես գործող տեխնոլոգիա, կիրառվում է 1900–ական թթ–ից: Այսպես՝ PR–ի առաջին

բյուրոն ստեղծվել է 1912 թ. ամերիկյան հեռախոսահեռագրային միավորմանն առընթեր: 1918 թ. PR–ի դասընթացներն առաջին անգամ ընդգրկվել են Իլլինոյս նահանգի ուսումնական ծրագրում: 1923 թ. Է. Բերնեյսը հրատարակել է PR –ի մասին առաջին գիրքը և այլն:

Առաջին պաշտոնական PR կառույցները Հայաստանում հիմնվեցին մոտավորապես 20 տարի առաջ: Այսօր արդեն իսկ կարելի է ասել, որ այն արագընթաց զարգացում ապրող գիտություն է, որը անհրաժեշտ է գրեթե յուրաքանչյուր ոլորտի, այդ թվում և՛ զբոսաշրջությանը:

Չնայած որ PR–ը մեր օրերում ամենաարագ զարգացող մասնագիտություններից է համարվում, իսկ զբոսաշրջությունը գրեթե բոլոր երկրների համար դիտարկվում է որպես տնտեսության զարգացող ճյուղ, որին պետական մակարդակով փորձ է արվում զարկ տալ, այնուամենայնիվ շատ քիչ երկրներում են այս ուղղությամբ գիտական հետազոտություններ տարվում: Եթե 2000 թ–ից հետո հրատարակված ռուսալեզու և անգլալեզու որոշակի գրականություն կարելի է գտնել, ապա հայալեզու գրականություն այս ոլորտի վերաբերյալ, կարելի է ասել, չկա: Այսինքն՝ «հանրային կապերը զբոսաշրջության ոլորտում» գիտահետազոտական դաշտը, կարելի է ասել, բաց է: Այնինչ զբոսաշրջությունը՝ որպես զարգացող ճյուղ կարիք ու–

1 С. Блек, Паблик рилейшнз. Что это такое?, Москва, 1990, էջ 17:

2 <https://hy.wikipedia.org>

նի հանրային կապերի լավ մասնագետների և տուրիստական գործունեության յուրաքանչյուր բնագավառ իր հերթին դրա կարիքն ունի: Այսպես, թե այնպես տուրիստական գործակալությունները, հյուրանոցային խոշոր համալիրները, պատկերասրահներն ու տուրիզմի այլ օժանդակ կառույցներ կիրառում են PR, սակայն համակարգված մոտեցում այս դաշտում, կարելի է ասել, դեռ նոր-նոր է ձևավորում:

Այս հոդվածի շրջանակներում մեր ուսումնասիրության նյութը հիմնականում ընդգրկում է երկու հարց. ի՞նչ մասնագիտական որակներ պետք է ունենա PR մասնագետն ընդհանրապես, որ կարողանա աշխատել զբոսաշրջության ոլորտում և ի՞նչ է ուսումնասիրում PR-ը զբոսաշրջության բնագավառում:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ արհեստավարժ PR մասնագետը պետք է ունենա.

- մասնագիտական կրթություն,
- տեքստի հետ աշխատելու ունակություն,
- տարատեսակ ՁԼՄ տեխնոլոգիաների իմացություն,
- մի քանի օտար լեզուների իմացություն,
- մենեջմենթի, մարքեթինգի, սոցիոլոգիայի, լրագրության, քաղաքագիտության, տնտեսագիտության, հոգեբանության, վիճակագրության հիմունքների իմացություն:

Ակնհայտ է, որ այս ոլորտի մասնագետներից պահանջվում են մի շարք ունակություններ և հմտություններ: Եվ դա բնական է, քանի որ PR-ը գործունեության տարբեր ոլորտներ ներառող գիտաձյուղ է:

Հանրային կապերի վերաբերյալ մասնագիտական գրականության տարբեր հեղինակներ առանձնացնում են PR մասնագետի մի շարք, ըստ իրենց, կարևոր որակներ: Որոշ հեղինակներ շեշտը դնում են բարոյական, իսկ մյուսները՝ մասնագիտական որակների վրա: Օրի-

նակ՝ PR-ի դասական համարվող Սեն Բլեքը առանձնացնում է PR մասնագետի հետևյալ հիմնական որակները.

- ողջախոհություն,
- կազմակերպչական գերազանց հմտություններ,
- դատողությունների պարզություն և հստակություն,
- ընկալումների օբյեկտիվություն և կրիտիկականություն,
- հարուստ երևակայություն և դիմացինի տեսակետը հասկանալու կարողություն,
- բնավորության տոկունություն,
- բացառիկ ուշադրություն մանրուքներին,
- ակտիվ և հարցախույզ միտք,
- ջանասիրություն, հակում դեպի երկարաժամկետ ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք,
- լավատեսություն և հումորի զգացում,
- ձկունություն և միաժամանակ մի քանի խնդիրներով զբաղվելու կարողություն¹:

Բնականաբար, այս որակներն անհրաժեշտ պայման են նաև զբոսաշրջության ոլորտում PR գործունեության զբաղվելու համար: Դեռ ավելին, այստեղ լիարժեք գործելու համար խիստ անհրաժեշտ է նաև զբոսաշրջության հիմունքների, աշխարհագրության, տուրիստական հետաքրքրություններ ներկայացնող երկրների պատմամշակութային արժեքների և այլնի վերաբերյալ լիարժեք տեղեկության առկայությունը:

Տուրիզմի ինդուստրիայի մեջ են մտնում զբոսաշրջության ոլորտում ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունները. տուրօպերատորներ, տուրիստական գործակալություններ, հյուրանոցային համալիրներ, սննդի ցանցեր, էկսքուրսիաների բյուրոներ և այլն:

PR-ը զբոսաշրջության ոլորտում նա-

1 Այս մասին մանրամասն տես Ս. Блек, Паблик рилейшнз. Что это такое?, Москва, 1990, էջ 208:

խապես պլանավորված և հետևողականորեն իրականացվող գործողությունների համալիր է, որը տուրիստական կազմակերպությունների և նրանց թիրախային լսարանի միջև հաստատում է վստահության վրա հիմնված բարիդրացիական հարաբերություններ: Տուրիստական կազմակերպությունների համար թիրախային լսարան են համարվում պոտենցիալ հաճախորդները, գործընկերները, առաքիչները, մրցակիցները, ՋԼՄ-ները, սեփական աշխատակիցները և այլն:

Հանրային կապերը կարևոր դերակատարություն ունեն զբոսաշրջային բիզնեսի զարգացման գործում, քանի որ այս կառույցի ծավալած գործունեության միջոցով հաճախորդը կարողանում է ձիշտ կողմնորոշվել բազմաթիվ տուրիստական գործակալությունների միջև, որոնք բոլորն էլ առաջարկում են գրեթե նույն բանը:

Եվ եթե հաշվի առնենք, որ տուրիստական գործակալությունների գովազդը դառնում է կամաց-կամաց ոչ արդյունավետ, ապա հանրային կապերն հասարակայնության շրջանում առավել երկարաժամկետ ու վստահելի գործունեության դաշտ են ապահովում: Իսկ հասարակայնության շրջանում շատ կարևոր է տուրիստական կազմակերպության վարկանիշի ձևավորումն ու դերակատարումը, որովհետև համանման կազմակերպություններից պոտենցիալ հաճախորդն ընտրելու է այն մեկին, ով ունի անխախտ, վստահելի վարկանիշ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զբոսաշրջության ոլորտում կարելի է առանձնացնել PR-ի մի շարք ուղղվածություններ.

1. Բրենդի առաջխաղացում
2. Տուրիստական ծառայությունների առաջխաղացում
3. Կազմակերպության իմիջի և հեղինակության ձևավորում
4. Հակաձգնաժամային PR

5. PR-ը զբոսաշրջության բնագավառում կարելի է օգտագործել նաև տուրիստական որևէ շրջանի կամ երկրի առաջխաղացման, հասարակայնության շրջանում դրա հանդեպ հետաքրքրության ձևավորման համար՝ որպես գրավիչ տուրիստական գոտի:

6. Ներքին PR-ը տուրիզմում և այլն: Զբոսաշրջության ոլորտում PR-ի կազմակերպումը ենթադրում է PR մի շարք գործիքակազմի կիրառում: Դիտարկենք հիմնական միջոցները և հանրային կապերի հիմնական մեխանիզմները.

1. ՋԼՄ-ների հետ համագործակցություն (մամլո հաղորդագրություններ, հոդվածներ, հարցազրույցներ, տուրեր՝ մամուլի աշխատակիցների համար կամ մամլո տուրեր, մամուլի ասուլիսներ և այլն):

2. Միջոցառումներ (նոր ուղղությունների ներկայացում, ցուցահանդեսներ, տոնավաճառներ, աշխատաժողովներ, թրեյնինգներ, սեմինարներ, հանդիպումներ, բացման հանդիսություններ, կազմակերպության հիմնադրման օրվա տոնակատարություններ, ֆլեշմոբեր և այլն):

3. Իմիջային գովազդ:

4. Բարեգործական ակցիաներ:

5. Ներքին PR (թրեյնինգներ, որակավորման բարձրացման դասընթացներ, կորպորատիվ կոդեքսներ, հանգստի կազմակերպում, թիմային աշխատանք, գովազդային տուրեր և այլն):

6. Պրոմո և PR կամպանիաներ:

7. Համացանցային տարածքում առաջխաղացում (կայք, սոցցանցեր, բլոգ, առցանց խորհրդակցություններ, ֆորումներ, էլեկտրոնային տեղեկատվության միջոցներ և այլն):

8. Ֆիրմային ոճ (գույն, գլխաբառ կամ առաջաբան, տառաչափ, գործարանային ապրանքանիշ, բլանկ, այցեքարտ և այլն):

Հանրային կապերը զբոսաշրջության ոլորտում առաջադրված նպատակին հասնելու համար իրականացվող որոշա-

կի գործողությունների ամբողջություն է: Այդ գործողությունները հիմնականում բաղկացած են չորս տարբեր, բայց իրար հետ փոխկապակցված մասերից.

1. վերլուծություն, հետազոտություն, խնդրի գիտակցում
2. ծրագրերի մշակում
3. հաղորդակցություն և ծրագրերի իրականացում
4. արդյունքների հետազոտում, գնահատական և հնարավոր վերամշակումներ:

Այս 4 մասերը հաճախ անվանում են RACE, որը հետևյալ բառերի հապավումն է՝ Research (հետազոտում), Action (գործողություն), Communication (հաղորդակցություն), Evaluation (գնահատական):

Յուրաքանչյուր PR միջոցառումից առաջ կարևոր է նպատակների հստակ ամրագրումը: Նպատակները կարող են լինել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ և յուրաքանչյուրի դեպքում պետք է մշակվի գործողությունների հստակ պլան-ժամանակացույց: Յուրաքանչյուր գործողությունից հետո PR խումբը պարտավոր է անցկացնել տվյալ գործողության վերլուծություն՝ արդյունավետության գնահատման և հետագա գործողությունների բարելավման համար:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ PR-ը զբոսաշրջության ոլորտում ներա-

ռում է.

1. այն ամենը, ինը կարող է նպաստել տուրիստական ընկերության և նրա հնարավոր շահակիցների միջև փոխհամագործակցության ձևավորմանը ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս:

2. Տուր կազմակերպության «հասարակական դեմքի» մշակում:

3. Միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն հասարակայնության աչքին կազմակերպության համբավի և վարկանիշի հաստատունությանը, առաջխաղացմանը կամ եթե վատ լուրեր են տարածվել, այդ լուրերի հերքմանը:

4. Միջոցառումներ, որոնք տուրիստական կազմակերպության իմիջի, համբավի բարձրացմանը՝ տուրիստական արտադրանք-առաջարկի գովազդի, ցուցադրության, վիդեո և կինոներկայացումների և այլ գործողությունների միջոցով:

5. Պլանավորված գործողություններ, որոնք կնպաստեն տուրիստական կազմակերպության և հասարակայնության միջև հարաբերությունների զարգացմանը և բարելավմանը:

Այս ամենով հանդերձ PR-ը տուրիզմի ոլորտում ո՛չ կեղծիք է, ո՛չ քարոզչություն, ո՛չ մամուլի հետ պարզունակ աշխատանք և ո՛չ էլ անվճար տուրիստական գովազդ:

СВЯЗИ С ОБЩЕСТВЕННОСТЬЮ В СФЕРЕ ТУРИЗМЕ НАРИНЕ ВАРДАНЯН

*НАН РА, Международнй научно-образовательный центр,
заведующая отделом обеспечения качества, кандидат филологических наук, доцент*

Связи с общественностью (PR – Public relations) – это современная научная дисциплина, которая перекрещивается почти со всеми научными дисциплинами, в том числе и с туризмом.

В этой статье мы рассмотрели два основных вопроса:

- 1) какую профессиональную квалификацию должны иметь специалисты по связям с общественностью, чтобы иметь возможность работать в сфере туризма ?
- 2) что является предметом исследования общественных отношений в сфере туризма ?

PUBLIC RELATIONS IN TOURISM

NARINE VARDANYAN

*International Scientific-Educational Center of NAS RA, Head of the QA Department,
Candidate of Philological Sciences*

Public Relations (PR– Public relations) – is a modern scientific discipline that crosses almost all scientific disciplines, including tourism.

Two main issues we reviewed in this article:

1. What professional qualifications should PR specialists have in general to be able to work in the tourism industry?
2. What is the study subject of public relations in the tourism industry?

**ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ**

Հոդվածում ներկայացվում են որոշյալ և անորոշ առման ձևախմբատային հատկանիշները արևմտահայ չափածոյում: Սույն քննության մեջ բերվում են առկայացման ձևային դրսևորումների օրինաչափ և դրանցից շեղվող այն կառույցները, որոնք հանդիպում են արևմտահայ բանաստեղծների ստեղծագործություններում: Իմաստային դաշտի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անորոշ հոդն ունի ոչ միայն անորոշության իմաստային գործառույթ, այլև իբրև վերաբերական այն հանդես է գալիս իմաստային ամենատարբեր նրբերանգներով՝ արտահայտելով հեղինակի զգացմունքային աշխարհը: Որոշիչ և անորոշ հոդերը արևմտահայ չափածոյի ոճավորման կարևորագույն միջոց են: Ըստ այդմ էլ, նրանք պիտի արժևորել իբրև գեղարվեստական խոսքի ոճավորման կարևորագույն միջոցներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. առկայացման կարգ, որոշյալ և անորոշ հոդ, ձևույթ, հոլով, ձայնավոր, բաղաձայն, արևմտահայերեն, հնչերանգ, հանգավորում, բանաստեղծական խոսք:

Արևմտահայերենում առկայացման կարգն ունի արտահայտության որոշակի դրսևորումներ, որոնք պայմանավորված են արևմտահայերենի լեզվական կառուցվածքի հատկանիշներով: Հետևելով այն լեզվաբաններին, որոնք առկայացման կարգի ենթակարգեր են համարում ցուցական, դիմորոշ, ստացական, որոշյալ

և անորոշ առումները¹ սույն աշխատանքում ներկայացրել ենք որոշյալ և անորոշ առումների ձևախմբատային հատկանիշները արևմտահայ չափածո խոսքում՝ միաժամանակ արժևորելով դրանց կարևորագույն դերը բանաստեղծական խոսքի ոճավորման համար:

Որոշյալ առման դեպքում առարկայական իմաստ արտահայտող միավորը հայտնի է, իսկ անորոշ առման դեպքում՝ ոչ: Գ. Զահուկյանը, **ս, դ, ն** վերջամասնիկներին հատուկ համարելով «որոշելու, անմիջականացնելու իմաստը», դրանք կոչում է «առկայացական հոդեր»²:

Արտահայտելով ցուցական, ստացական և դիմորոշ իմաստներ՝ դրանք միաժամանակ բառը դարձնում են որոշյալ հաղորդակցման տվյալ տիրույթում³: Հայերենի զարգացման ընթացքում **ն** հոդի մեջ ամրակայվում է որոշյալության իմաստի արտահայտման գործառույթը, որի դիրքային տարբերակը **ը** ձևույթն է՝ ձևավորված գրաբարում **ըն**-ով (*ձուկն, մուկն, գազարն* և այլն) վերջացող բառերի մեջ **ն**-ի՝ իբրև որոշիչ հոդի, անկման միջոցով: **Ը**-ն՝ իբրև որոշիչ հոդ, միջին հայերենում դեռևս չի գործածվում⁴. այն գործածության մեջ է մտնում նոր գրական հայերենում:

1 Տե՛ս Հ. Պետրոսյան, Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Հոդային կարգ, Եր., 1976, էջ 26-29:

2 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 139:

3 Տե՛ս նշվ. աշխ., էջ 284:

4 Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Եր., 1975, էջ 79:

Որոշյալ և անորոշ առումներն ունեն ձևախմբատալիս տարբերակվածություն և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում:

Գեղարվեստական խոսքում հոդերի կանոնարկված գործածություններին զուգահեռ հանդիպում են դրանց բազմաթիվ գործառնություններ, որոնք խոսքը դարձնում են ինքնատիպ, ներագրու և հասանելի ընթերցողի մտքին ու հոգուն: Ըստ այդմ՝ հոդերի գործածությունը ստանում է ոճական որոշակի արժեք ինչպես գեղարվեստական արձակում, այնպես էլ բանաստեղծական խոսքում: Յուրաքանչյուր հեղինակի լեզվում հոդի մասնավոր դրսևորումները պայմանավորված են գրողի լեզվամտածողության առանձնահատկություններով, ստեղծագործության ժանրային հատկանիշներով, բովանդակությամբ, տողաչափի պահպանման և հանգավորման պահանջով: Պետք է նշել, որ բանաստեղծական խոսքում առկայացման կարգի յուրաքանչյուր դրսևորում խոսքին տալիս է ոճական որոշակի «երանգավորում» և կազմում է բանաստեղծական խոսքի ոճավորման կարևորագույն միավորներից մեկը¹:

Որոշյալ և անորոշ առումները արևմտահայերենում արտահայտվում են **ս**, **ը**, **մը**, **մըն**, **մի** ձևությունների և դրանց բացակայության միջոցով (գրո ձևությ): Արևմտահայ հեղինակները հոդերի գործածությունը բանաստեղծական խոսքում կատարում են մեծ վարպետությամբ՝ այն դարձնելով իրենց ասելիքի արտահայտության հիմնական միջոցներից մեկը:

Արևմտահայերենում **ը** և **ս** որոշիչ հոդերին բնորոշ են գործառական հետևյալ օրինաչափությունները.

Ն որոշիչ հոդը գործածվում է ձայնավորով վերջացող բառի կամ բա-

ռաձևի հետ: Օրինակ՝ «Մեկ միես, մեկ միալ ... *նավասարին*»²:

«*Հովին շունչին* տակ ընդհատ զանգակատան երգ մը չէ»,

Որ *սարերուն* կը պատմե հին մներգ մը սգավոր»³:

Քանի որ արևմտահայերենում որոշիչ հոդ ստանում են թեք հոլովները ևս, հետևաբար եթե հոլովակազմիչ ձևությամբ ձայնավոր է, ապա բառաձևը ստանում է **ս** որոշիչ հոդը, օրինակ՝

«Օդը պարզ էր, հողմը մեղմիկ,
ծովուն ջուրերն ալ հանդարտիկ...»
(ՊԴ, 77):

Արևմտահայերենում սեռական հոլովը ստանում է որոշիչ հոդ, որը ունի նաև շարահյուսական որոշակի արժեք: Եթե սեռականով դրված գոյականը անորոշ առումով է, այն հանդես է գալիս որոշիչ գործածությամբ, իսկ եթե որոշյալ առումով է գործածված, ունի հատկացուցչի կիրառություն:

«Համբուրին հեթ շիթ միբզգացի արտասվաց,

Աչերս տեսան *արցունքներու* լոկ երկինք» (ՊԴ, 7):

Արցունքներու երկինք կապակցության մեջ ունենք *արտասվալից երկինք* իմաստը:

«Երբ որ տեսավ արյունլըվա *վարդին* ծոց՝

Վարդատարփիկ բլբուլն դողով թռչեցավ» (ՊԴ, 8):

Վարդին ծոց կապակցության մեջ ունենք հատկացուցիչ՝ *վարդը*, որի հատկացյալը *ծոց*-ն է:

«Փշրի՛ *Պարսկին* անդուլ կացին
Հայք բավ լացին» (ՊԴ, 9):

Ինչպես տեսնում ենք, որոշյալ անման դեպքում ունենք հատկացուցիչ, որն ունի հատկացյալ:

«Որակականի առումով սեռական անունը եզակի անորոշ ձևով վերագրուելով այլ անուններու՝ որակական

1 Տեն Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 249-254:

2 Պ. Դուրյան, Երկեր, Եր., 1947, էջ 78:

3 Ռ. Սևակ, Երկեր, Եր., 1955, էջ 34:

մականունն յատկութիւն կը ստանա»¹, իսկ հատկացուցչի պաշտոնում ձայնավորահանգ բառերում (ոչ միայն գոյականների, այլև առարկայական իմաստ արտահայտող այլ խոսքի մասերի դեպքում) սեռականը միշտ որոշյալ առումով է գործածվում.

«Որուն ականց տեղ անգին՝

Դառնաթախիծ մըտածմանց ... » (ՊԴ, 8):

Աներկբա է, որ «արևմտահայերենում որոշիչ և հատկացուցիչ սեռականների համար հոդառությունը քերականական տարբերակիչ հատկանիշ է»²:

Ժամանակի անունների հետ որոշիչ հոդի գործածությունը սեռական հոլովում նրանց տալիս է ժամանակային տիրույթի որոշակիացման իմաստ, օրինակ՝

«Ի՞նչ անուշ է հանդարտիկ հովն *իրիկվան*» (ՌՄ, 19):

«Գիշեր է լուռ, հանդա՛րտ գիշեր *ամառվան*» (ՌՄ, 21):

Նշված բառերն ունեն որոշչի իմաստ:

Ուղղական-հայցական հոլովով դրված ուղիղ խնդիրը գործածվում է որոշյալ առումով, օրինակ՝

«Նու կուգա Հայոց մարգերեն կարմիր,

Ազատեց Քրդեն Հայր վըշտակիր» (ՊԴ, 10):

Ուղղականաձև ներգոյականը նույնպես գործածվում է որոշյալ առումով, օրինակ՝

«Ո՛հ, թուր չէ *ձեռքն*, այլ խաչ բռներ արդեն» (ՊԴ, 10):

Հաճախադեպ է տեղի մակբայների՝ որոշյալ առումով գործածությունը ներգոյականի իմաստի արտահայտման համար, օրինակ՝

«Քաղաքներու կը պլպլա Լույսն *հենուն*» (ՌՄ, 21):

«Վարը քնացող ջուրին վրա տրտմաբար» (ՌՄ, 22):

Կապային ներգոյականի կառույցը նույնպես կարող է հանդես գալ որոշիչ հոդով, որը որոշյալությունը ընդգծելու համար կարող է դրվել և՛ կապի, և՛ կապական բառի վրա, ինչպես՝

«Ո՛, անոնց *գանգերուն մեջը՝* հաղթանակներու

ծարավեն գինով արծիվներու...»³:

Բացառական հոլովը նույնպես գործածվում է ն որոշիչ հոդով, քանի որ այն ձայնավորահանգ է, օրինակ՝

«Չը ցայտեր *աչքեն* շանթեր, այլ սե՛ր, գու՛թ. Դողա անկե Քուրդ» (ՊԴ, 10):

Գործիական հոլովը ևս կարող է հանդես գալ որոշիչ հոդով: Չնայած բաղաձայնահանգ լինելու պատճառով այն պիտի որ որոշիչ հոդ չստանար⁴, սակայն արևմտահայ բնաստեղծական խոսքում այն հաճախ է հանդիպում որոշյալ առումով, օրինակներ՝

«Արեգակն իր *մահովը* հորիզոններն եղեռնորեն՝ կը ներկեր ...» (Ս, 166):

«Մայրամուտի քաղցրիկ *շունչովը* լեցուն» (ՌՄ, 19):

Յու. Ավետիսյանը նշում է այն հանգամանքը, որ պայմանավորված Պոլսի բարբառում որոշիչ հոդով գործիականի հնարավոր գործածությամբ՝ արևմտահայերենում արձանագրվում է որոշիչ հոդի գործառույթը գործիական հոլովի հետ, որն իր մեջ ունի նաև ստացականության իմաստ⁵.

Արևմտահայ չափածո խոսքում հանդիպում ենք գործիական հոլովի հետ որոշիչ հոդի գործածության բազմաթիվ օրինակների: Ն որոշիչ հոդը գործածվում է ձայնավորով սկսվող բառից առաջ. սա ն-ի օրինաչափորեն

1 Եղ. Տասնապետեան, Քերականութիւն, Անթիլիաս, 1990, էջ 153:

2 Յու. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգահրական քերականություն, Եր., 2007, էջ 49:

3 Սիամանթո, Ընտիր երկեր, Եր., 1957, էջ 5:

4 Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 132:

5 Տե՛ս Յու. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 50:

հաստատված գործառույթ է և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում:

«Նա մեր հայ եղբարց *արցունքն է քավեր»* (ՊԴ, 10):

Այլ-ից առաջ ևս գործածվում է **ն** որոշիչ հոդը:

«Ու *ամենքն ալ* հոն պիտի ըլլան, այսօր մեզի հետ» (Ս, 5):

«Ասուպ կ'ըլլան, կ'ըլլան *վարդերն ալ*՝ վերբեր»¹:

Ի հակադրություն արևելահայերենի, որտեղ բացառվում է բաղաձայնից առաջ **ն** որոշիչ հոդի գործառույթը / չհաշված *սկ, սպ, զք, զգ, շփ* և նման կապակցություններով սկսվող բառերը/, արևմտահայերենում նման գործածությունները հաճախադեպ են: Նրանք կիրառելի են հատկապես բանաստեղծական խոսքում՝ պայմանավորված մի շարք գործոններով, օրինակ՝

«*Ձեկյունն* չ'եկավ նժդեհ ձակաստ շոյելու» (ՊԴ, 7):

Ն հոդը արևմտահայերենում, մասնավորապես չափածո խոսքում գործածվում է **հ**-ից

և **ե** ձայնավորից առաջ. «Պետք է ասել, որ արևմտահայ գրողները համեմատաբար ազատ են գգում իրենց **հ** (*հո* գիր) և **յ** (*հի* գիր) հնչյուններով սկսվող բառերից, իսկ երբեմն էլ նույնիսկ բաղաձայնից առաջ հոդերի ընտրության հարցում»²:

«Դեպի քաղաքներն ու գյուղերն ու *հնձաններն հեռավոր»* (Ս, 4):

«Հայն ու դամբանն, տաճարն, *հյունակն՝ Հայաստանն*» (ՊԴ, 15):

Ն-ի գործածությունը **հ**-ից առաջ տիրապետող է, երբեմն կարող է գործածվել նաև **ը** որոշիչ հոդը, օրինակ՝

«Բանալու համար մեծ *ձամփաները Հոյսին»* (Ս, 4):

Նույնը վերաբերում է նաև **ե**-ից առաջ **ն** և **ը** հոդերի գործածությանը, օրինակ՝

«Դեպի *եղեռնը երկարեցին ...»* (Ս, 5):

«Ու անոնք ալ որ մեր *վարպետներն եղան* ընդվզումի» (Ս, 5):

Հ-ից և **ե**-ից առաջ **ն** որոշիչ հոդի տիրապետող կիրառությունը պայմանավորված է նաև բանաստեղծական խոսքում հնչերանգի երաժշտական երանգավորման պահանջով: Համեմատենք՝

«Է՞ր կը հանձնես տերևը՝ գուժ մըրըրկին

Լեռան *ավազն՝ հեղեղներուն* մուլեգին» (ԴՎ, 21):

Բերված օրինակը վկայում է այն մասին, որ **հ**-ից առաջ **ն** որոշիչ հոդի գործածությունը ոչ միայն տիրապետող է, այլև ձգտում է օրինաչափության: Օժանդակ բայի զեղչման դեպքում ևս Դ. Վարուժանը գործածում է **ն** որոշիչ հոդը:

«Երազանքի համար է մեր օրորանն Ու *անկողինն՝* հույզի, *շիրիմն՝* լըռության» (ԴՎ, 20):

Բանաստեղծական խոսքում հաճախ որոշիչ հոդը դառնում է հանգավորման կարևոր միջոց, օրինակ՝

«Ի՛նչ անուշ է հանդարտիկ *հովն իրիկվան,*

Մայրամուտի քաղցրիկ շունչովը լեցուն.

Ծաղիկները կը մթագնին, կը հեան,

Կը նվազի *թռչնիկին* երգը ցնծուն...» (ՌՍ, 19):

Ն որոշիչ հոդի գործածությունը բանաստեղծական խոսքում որոշակի երաժշտականություն է ստեղծում, և այն դառնում է թե՛ բաղաձայնության դրսևորման և թե՛ հանգավորման արտահայտման միջոց: Այսպես՝ Վարուժանի բանաստեղծություններում հաճախադեպ է **ն** որոշիչ հոդի գործածությունը տողավերջում:

«Սրբազան՝ քնար, պիտ լարերն իր

1 Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1, Եր., 1986, էջ 5:

2 Յու. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 57:

մըկըրտվին՝

Մարտիրոսաված եղբայրության *ավագանն*» (ԴՎ, 14):

Տողամիջում նրա գործածությունը հաճախ ստեղծում է արտասանական դադար, որով ընդգծվում է որոշյալ առումով դրված բառը, օրինակ՝

«Ուր *գաղափարն*՝ պիտի բնակի գերդ Աստուած» (ԴՎ, 14):

«Կը տրոփե մեջս երգերու *սաղմն*. կըսպասեմ » (ԴՎ, 13):

Ինչպես երևում է, հոդերը կարևորագույն բաղադրիչ են հանդիսանում բանաստեղծության հանգավորման համար:

«Գա Մայայց սարեն, նա *ձախն ու սջը*

Մովսեսի քընարն, Դևոնդի *խաչը...*» (ՊԴ, 10):

Հողի ընտրության համար կարևոր է նաև բանաստեղծության բովանդակությունը: Օրինակ՝ Սիամանթոյի «Հույսին ճամփան» բանաստեղծության բովանդակությունը թելադրում է հեղինակին հույսի ճանապարհի ողջ դժվարությունը ներկայացնել որոշյալ առման համար հիմնականում գործածելով **ը** որոշիչ հոդը, որը գործածված է նաև ձայնավորից առաջ, օրինակ՝

«Բայց նվիրական *Ցավը ինքն* իր մեջը ձգե՛» (Ս, 4):

Ը հոդը որոշակի արտասանական դադարների համար ինքնատիպ գործառնություն է հանդես գալիս նաև Պ. Դուրյանի «Նոր սև օրեր» բանաստեղծության մեջ.

«Մինչ բնության՝ ընկան արյան *դարերը*,

Աշխարհ մը կա արցունք թափող *սարերը*» (ՊԴ, 19):

Անորոշ առումն արտահայտվում է **մը** (**մըն**) և 0 (գրո) ձևույթների միջոցով: Անորոշ հոդը ներկայանում է **մը** և **մըն** տարբերակներով. **մըն** տարբերակը հանդիպում է հիմնականում էական բայից ու **ալ** շաղկապից առաջ ընկած դիրքում: Երկու տարբերակ-

ներն էլ հողառու բառի նկատմամբ վերջահար անշեշտ տարրեր են: Ձայնավորից առաջ **մը**-ի ը-ն սղվում է և դրվում է ապաթարց **մ**՝: Օրինակներ՝

«Հոս կը պառկի: Քուն *մըն* է այդ՝ որ երբեք

Պիտ՝ չը բանա իր այդ գոցած աչքերն հեգ» (ԴՎ, 19):

«Փռա՛ց օրեր, ձեզ մոռնա՛լ ...

Երբե՛ք, այլ ձեզ պատրույզ *մ՛ըլլալ*, ու լույս տալ» (ՊԴ, 17):

Մի ձևույթը **ալ**-ից առաջ ևս գործածվում է **մ**՝ ձևով.

«Մեկ *մ՛ալ* հանկարծ սանդուխեն Վեր ելնելու ոտնաձայն մը ...» (ՊԴ, 77):

Սակավ, բայց գործածվում է նաև անորոշ հողի **մըն** տարբերակը, օրինակ՝

«Աչքերնուդ շող *մըն ալ*, ըստեպ, չի ցայտեր» (ԴՎ, 15):

Քանի որ **հ**-ից առաջ տարածված է **ն** և ոչ թե **ը** որոշիչ հողի գործածությունը, պատահական չէ **հ**-ից առաջ **մ**՝ ձևի գործածությունը ևս:

«Պիտ միանա ծիծաղ *մ՛հիմակ* այս սուգին» (ԴՎ, 21):

«Անոնք, անգետ, կը ծածկեն, հո՛ն, քիչ *մ՛հեռուն*» (ԴՎ, 23):

Օժանդակ բայից առաջ նույնպես գործածվում է **մ**՝ ձևույթը. **մըն**-ով կառույցները սակավադեպ են: Օրինակ՝

«Ո՛հ, կարծես թե նա երկնային Ջըվարթուն *մ՛էր* վար իջած» (ՊԴ, 77):

Ապաթարցով **մ**՝ ձևը սակավ, բայց հանդիպում է նաև անջատ գրությամբ, օրինակ՝

«Եթեր *մ՛ ասպեղց*, ուր փոխան

Հրաշեկ սլացք կը շողան» (ՊԴ, 26):

Բաղաձայնից առաջ անորոշ առման համար գործածվում է **մը** ձևույթը: Օրինակ՝

«Բնությունն ուզեց այդ մարմընույն մերժըված

Պապասպարան մը նըվիրել, ո՛հ, առանց

Մըտածելու թե *գերեզման մը* կուտա » (ԴՎ, 19):

Անորոշ հողը բազմիմաստ է. այն բացի անորոշ, անծանոթ առարկա կամ անձ ցույց տալուց, ունի իմաստային տարբեր գործառնություններ, որոնք հատկապես մեծ արժեք են ստանում բանաստեղծական խոսքում, որտեղ նրա գործածությունը դառնում է ստեղծագործության ոճավորման անբաժանելի մասը: Այսպես՝ Ռ. Սևակի «Հոգիս» բանաստեղծությունը բանաստեղծի հոգեկան աշխարհը ներկայացնող ինքնատիպ մի պատկեր է, որտեղ գարնանային հիասքանչ, ուրախ և գունեղ բնանկարում կանաչող դաշտերի և երփնաթույր ծաղիկների հակադրապատկերը անժամանակ թառամած մի տերև է՝ նման իր հոգուն: **Մը** անորոշ հողի գործածությունը **տերև** բառի հետ՝ գուգընթաց գարնան՝ շոշափելիորեն կենսալի թրթիռով լի գույները ներկայացնող **և** որոշիչ հողով ուղեկցվող բառերի մեջ ավելի շոշափելի է դարձնում մեռնող տերևի «կերպարը»: **Մը** հողը իր իմաստային ողջ նրբերանգներն է ներկայացնում բանաստեղծության մեջ. այն և՛ վերաբերականի իմաստ ունի, և՛ առկայացման կարգին բնորոշ՝ առարկայի խոսքային միջավայրում շոշափելի դարձնելու իմաստ:

«Հիվանդ *տերև մը* տեսա կանաչին մեջ դաշտերուն,

Ի՛նչ աղվոր էր գարունը, փափուկ հովեն օրորուն...» (ՌՄ, 23):

Բանաստեղծության ավարտին հեղինակը կրկնում է առաջին տողը՝ «Հիվանդ *տերև մը* տեսա կանաչին մեջ դաշտերուն»: Մեռնող տերևին համեմատում է իր հոգու հետ՝

«Անժամանակ թարշամած գարնան *տերև մ՛ է* հոգիս» (ՌՄ, 23):

Ավելին՝ տերևն այդ դառնում է որոշակի, շոշափելի ոչ միայն հեղինակի, այլև ընթերցողի համար:

Մը ձևույթը ինքնատիպ իմաստառ-

ձական գործառնությո՞ւ ունի Պ. Դուրյանի գրչի տակ:

«Սիրել» և «Դրժել» բանաստեղծությունների մեջ **մը** ձևույթը, վերաբերականի իմաստ ձեռք բերելով, արտահայտում է սեր, քնքշանք, խանդաղատանք.

«*Բույլ մը* նայվածք, *փունջ մը* ժլպիտ,

Քուրա մը խոսք դյուրեց իմ սիրտ» (ՊԴ, 28):

Բանաստեղծության կառուցման գլխավոր միջոցներից մեկը դառնալով՝ **մը** ձևույթը պատկերը դարձնում է շոշափելի և ներագոյու: Տաղանդավոր հեղինակի գրչի տակ այն արտահայտում է սիրող մարդու հոգեկան ներաշխարհը ներկայացնող ամենատարբեր իմաստային երանգները.

«Ո՛հ, *խուրձ մը* վարս, *եղեմ մը* շունչ, *Շրջազգեստ մը* շրշեց իմ շուրջ» (ՊԴ, 28):

«*Եթեր մը* տրոփ», «*փունջ մը* բոց». սրանք սիրող սրտի թրթիռը պատկերող անկրկնելի կառույցներ են: Այս օրինակները միայն բավական են՝ արժևորելու համար **մը** ձևույթի ոճական անկրկնելի դրսևորումները բանաստեղծական խոսքում և կարևորելու այն իբրև բանաստեղծական խոսքի կառուցման ինքնատիպ միավոր:

Իբրև վերաբերական **մը** ձևույթը հետաքրքիր ժամանակային տիրույթ է ստեղծում ժամանակ ցույց տվող բառերի հետ, օրինակ՝

«Եկո՛ւր, որպեսզի մեր շրթունքները քո շրթունքներդ ընդունին ...

Վայրկյանի մը ու *հավերժության մը* համար» (Ս, 6):

Այն երբեմն խոսքային որոշակիության տիրույթ է բերում, և բառը տվյալ պատկերում այնքան շոշափելի է, որ **մը** հողի հետ արտահայտում է որոշյալ առման իմաստ.

«*Գիշեր մը*, արյունռուշտ կատաղանքի ու կորուստի գիշեր» (Ս, 15):

Այստեղ խոսքը այն ահավոր գիշեր-

վա մասին է, որ ներկայացնում է Սի-
ամանթոն «Ճակատամարտը» բանաս-
տեղծության մեջ:

Մը ձևույթը հաճախ է հանդես գա-
լիս **անգամ** բառի հետ, օրինակ՝

«Հայ մայրերը հետին *անգամ մը* սև
արեգակին և ապագային ժպտելով՝

Այլևս ալիքներուն հետ կը մեռնին»
(Ս, 221):

Մը ձևույթը հաճախ հանդիպում է
նաև բանաստեղծությունների վեր-
նագրերում, օրինակ՝ «*Հաղթանակ մը*»
(Ս, 182), «*Մոր մը երազը*» (Ս, 196):

Կոչականները հաճախ հանդիպում
են անորոշ առման գրո ձևույթով,
որի լավագույն օրինակն է Սիաման-
թոյի «Տեսիլքը» բանաստեղծությունը՝
նվիրված Մաշտոցին.

«Ո՛վ հրաշալիք, ո՛վ հավատքի ան-
նյութական հուր,

Ո՛վ զարմանագործ գորություն,

Ո՛վ բոցեղեն բժժանք, ո՛վ անլուծ
խորհուրդ...» (Ս, 242):

Անորոշ հոդի ձևաիմաստային գոր-
ծառույթների բազմազանությունը
փաստում է այն, որ նրանց գործածու-
թյան համար կարևոր է բանաստեղծա-
կան տողաչափի պահպանումը, հան-
գավորումը, պատկերի իմաստային
նրբերանգները, բանաստեղծական
երաժշտականության պահպանումը
և, վերջապես, բանաստեղծության բո-

վանդակությունը:

Ինչպես **ն** և **ը** որոշիչ հոդերը, այն-
պես էլ **մը** անորոշ հոդի ձևային բոլոր
տարբերակները արևմտահայ չափա-
ծո խոսքի կառուցման և ոճավորման
համար կարևորագույն միավորներ են
թե՛ ձևային կառույցներում, թե՛ իմաս-
տային դաշտում: Անորոշ հոդը ոչ մի-
այն անորոշ առման իմաստի գոր-
ծառույթ ունի, այլև վերաբերականի,
ավելին՝ երբեմն կարող է նաև որոշյա-
լության իմաստ արտահայտել բանաս-
տեղծական տվյալ պատկերում:

Հետևաբար խոսելով արևմտահայ
չափածոյում առկայացման կարգի որո-
շյալ և անորոշ առման ենթակարգերի
դրսևորումների մասին՝ պետք է նշենք,
որ լինելով ձևաբանական մակարդա-
կի միավորներ՝ այդ կառույցներն ունեն
ոճական կարևոր գործառույթ և հան-
դես են գալիս իբրև բանաստեղծության
ոճավորման անհրաժեշտ միջոցներից
մեկը: Արևմտահայ չափածոյում **ն** և **ը**
որոշիչ հոդերի և **մը** (**մըն**, **մ՛**) անորոշ
հոդի դրսևորումները պայմանավոր-
ված են ոչ միայն արևմտահայերենում
առկայացման կարգի ձևաիմաստային
առանձնահատկություններով, այլև
գրողի լեզվամտածողությամբ, ասե-
լիքի նպատակաուղղվածությամբ,
բանաստեղծական խոսքի կառուցման
անհրաժեշտ գործոններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս – Սիամանթո, Ընտիր երկեր, Հայպետհրատ, Երևան, 1957, 251 էջ:
2. ԴՎ – Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, հ. 1, Երևան, 1986, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 594 էջ:
3. ՌՍ – Ռուբեն Սևակ, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1955, 260 էջ:
4. ՊԴ – Պետրոս Դուրյան, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1947, 442 էջ:

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ГРАММАТИЧЕСКИХ КАТЕГОРИЙ ОПРЕДЕЛЕННОСТИ И НЕОПРЕДЕЛЕННОСТИ В ЗАПАДНОАРМЯНСКОЙ ПОЭТИЧЕСКОЙ РЕЧИ

ИРИНА МЕЛКОНЯН

ЕГУ, кафедра диаспорологии, соискатель

В статье представлены формо–смысловые свойства определенных и неопределенных значений категорий в западноармянской поэтической речи. В настоящем исследовании приведены закономерные и отклоняющиеся от них структуры форменных проявлений грамматических категорий определенности и неопределенности, которые встречаются в произведениях западноармянских поэтов. Тщательное изучение смыслового поля показывает, что неопределенный артикль имеет не только смысловую функцию неопределенности, но и в качестве реляционного выступает в самых различных смысловых нюансах, выражая эмоциональный мир автора. Определенные и неопределенные артикли являются важнейшим средством стилизации западноармянской поэтической речи. При этом их нужно оценивать в качестве важнейших средств стилизации художественной речи.

PECULIARITIES OF EXPRESSING THE CATEGORY OF DETERMINATION IN WESTERN ARMENIAN VERSE

IRINA MELKONYAN

YSU, Chair of Diaspora Studies, Applicant

The article presents form and semantic features of the definite and indefinite articles in Western Armenian verse. The research envisages regular and diverted structures of article forms which are found in the works of Western Armenian poets. The detailed study of the semantic aspect of article shows that an indefinite article does not only have semantic function of indefinitnes but it also functions as an emotive word with various semantic nuances expressing the emotional world of an author. Definite and indefinite articles in Western Armenian verse are one of the most important means of speech styling. Therefore, they should be valued as an important means of style in fiction.

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ «ԱՐԵՎԵԼԷ» ՀԱՆԴԵՍԻ 15-ՐԴ ՀԱՄԱՐԻ ԱՆՈՏԱՑՎԱԾ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

1855–1856 թթ. Փարիզում տպագրվող «Արևելք» հանդեսի հերթական 15–րդ համարը, ամբողջությամբ պատրաստ լինելով, չի հրատարակվել, սակայն համարի լուսապատճենն առկա է ՀՀ ազգային գրադարանի՝ «Արևելքի» հավաքածուում: Հարցերին, թե ինչպե՞ս է այն հայտնվել գրադարանում, ինչո՞ւ 1980 թ. Գիտությունների ակադեմիայի կազմած «Արևելք» (1855–1856) և «Արևմուտք» (1859, 1864–1865) հանդեսների անոտացված մատենագիտություն» գրքում չկա համարի մատենագիտությունը, հնարավոր չեղավ պատասխանել բավարար փաստեր չունենալու պատճառով: Սույն հոդվածում տրվում է «Արևելք» հանդեսի 15–րդ համարի անոտացված մատենագիտությունը, որը լրացնում է «Արևելք» (1855–1856) և «Արևմուտք» (1859, 1864–1865) հանդեսների անոտացված մատենագիտություն» գիրքը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. Ստեփան Ոսկանյան, «Արևելք», 15–րդ համար, Հայաստանի ազգային գրադարան, անոտացված մատենագիտություն:

ՍՏ. ՈՍԿԱՆՅԱՆԻ «ԱՐԵՎԵԼԷ» ՀԱՆԴԵՍԻ ԹԻՎ 15-Ի ԱՆՈՏԱՑՎԱԾ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրելով Ստեփան Ոսկանյանի՝ Փարիզում տպագրած «Արևելք» և «Արևմուտք» հանդեսների՝ Հայաստանի ազգային գրադարանում առկա համարները և Գիտությունների ակադեմիայի կազմած «Արևելք» (1855–1856) և «Արևմուտք» (1859, 1864–1865) հանդեսների անոտացված մատենագիտու-

թյուն» գիրքը¹ (1980 թ.)՝ ցանկություն առաջացավ պարզելու, թե ինչու «Արևելք» հանդեսի 15–րդ համարի մատենագիտությունը ներառված չէր գրքում: Համարը կար ՀՀ ազգային գրադարանի՝ «Արևելքի» հավաքածուում: Եթե թե՛ ժամանակակիցների, թե՛ հետագա ուսումնասիրողների վկայությամբ «Արևելք»–ի 15–րդ համարը չի տպագրվել², ապա ինչպե՞ս է այն հայտնվել ՀՀ ազգային գրադարանի՝ «Արևելքի» հավաքածուում: Այս փաստը փորձեցինք բացատրել այն հանգամանքով, որ «Արևելք»–ի 15–րդ համարը, ամբողջությամբ պատրաստ լինելով, չի տպագրվել, և մատենագիտության հեղինակները այն՝ որպես չտպագրված համար, չեն ներառել իրենց աշխատանքում: Չնայած չի բացատրվում նաև, որ համարն իրականում տպագրվել է (այդ է վկայում ՀՀ ազգային գրադարանի՝ «Արևելքի» հավաքածուում առկա 15–րդ համարը՝ պարբերականի մյուս համարներին բնորոշ ձևաչափով), սակայն հետո արգելվել է գրաքննության կողմից: Հետագայում համարը հայտնաբերվել և ներկայացվել է հանրությանը: Պարզապես Ոսկանյանի հանդեսների անոտացված մատենագիտությունը կազմելիս և առհասարակ դրանց

1 Բյուլետենը պատրաստել են պատմ. գիտ. թեկնածու Մ. Ն. Հակոբյանը և ժ. Մ. Ծերունյանը (տես «Արևելք» (1855–1856) և «Արևմուտք» (1859, 1864–1865) հանդեսների անոտացված մատենագիտություն, Երևան, 1980, էջ 3):

2 Տես Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 108–109, Լեո, «Մուրճ», 1901, N 11, էջ 125–129: Հարցը մանրամասնորեն ուսումնասիրել է Ժիրայր Դանիելյանը «Բանասիրութեան բախողներուն մէջ: Յօղվածներ և ուսումնասիրութիւններ» գրքի «Ստեփան Ոսկանի «Արևելք» հանդեսի առեղծոածը» գլխում (Երևան: Մուղնի, 2011, էջ 259–280):

առնչվող հոդվածները պատրաստելիս (խոսքը վերաբերում է անցյալ դարի 60–ական թվականների վերջից մինչև 80–ական թվականներն ընկած ժամանակահատվածին) համարը չի եղել հայաստանյան գրապահոցներում, և Ոսկանյանի կյանքով ու գործով հետաքրքրված գիտնականներն իրենց հոդվածներում և մենագրություններում չեն անդրադարձել նշված համարի բովանդակությանը: Հարցը պարզաբանելու համար դիմեցինք ՀՀ ազգային գրադարանի համալրման բաժին, սակայն այնտեղ դժվարացան պատասխանել՝ պատճառաբանելով, որ հնարավոր չէ ձշտել մինչև վերջին տարիները ստացված գրքերի կամ ամսագրերի ձեռքբերման տարեթվերը:

«Արևելք» հանդեսի 15–րդ համարին է անդրադարձել նաև լիբանանահայ բազմավաստակ բանասեր, խմբագիր, հասարակական և կրթական գործիչ Ժիրայր Դանիելյանը 2011 թ. տպագրված իր «Բանասիրության բախղներուն մէջ: Յօդվածներ և ուսումնասիրութիւններ» գրքի «Ստեփան Ոսկանյանի «Արևելք» հանդեսի առեղծվածը» գլխում: Ճիշտ է, հեղինակը, անդրադառնալով Ոսկանյանի կյանքին և գործունեությանը, համադրելով տարբեր հեղինակների կարծիքները, ներկայացրել է «Արևելքի» 15–րդ համարի արգելման պատմությունը, սակայն սպառիչ բացատրություն չի տվել այն հարցին, թե ինչու գիտական շրջաններում չեն անդրադարձել այդ համարի բովանդակությանը:

Սույն հոդվածը ևս չի հավակնում տալ այդ հարցի սպառիչ պատասխանը՝ խնդրի առնչությամբ չունենալով բավարար փաստեր: Ժիրայր Դանիելյանի անդրադարձը պարզապես ամրապնդեց մեր վաղեմի ցանկությունը՝ հետևելով 1980 թ. տպագրված «Արևելք» (1855–1856) և «Արևմուտք» (1859, 1864–1865) հանդեսների անոտացված մատենագիտություն» գրքի օրինակին՝ տալ «Արևելքի» Հայաստանի ազգային գրադարանում

նում առկա 15–րդ համարի անոտացված մատենագիտությունը: Համարն ընդգրկում է 449–480 էջերը:

N15, փետրվարի 1, 1856, էջ 449–460:

1. Ազգային, Կ. Ա. Տատյան Պողոս ամիրային տետրակը¹ և Յունիվեր², էջ 449–460. Կոչ՝ ուղղված Տատյան Պողոս ամիրային՝ պաշտպանելու Հայաստանյայց եկեղեցու իրավունքները: Վկայակոչելով լրագրական օրենքը՝ ըստ որի՝ «Ճշմարիտ է որ Եվրոպայի մեջ ստորագրությունն է միշտ պատասխանատու, և գիրք մը, որմն է շարագրյալ ըլլա, հասարակության առջև ստորագրողինը կը համարվի: Մտադյուր կը հավանիմք թե այս է օրենք, այս է նաև արդարություն...»³ և պահանջում է, որ Տատյան Պողոս ամիրան հերքի Յունիվերում գրված հոդվածը:

Հոդվածի վերջում Ոսկանյանը կոչ է անում հայերին չհեռանալ ազգային ձշմարիտ արժեքներից. «Հայկա թռռե՛ր,

1 1855 թ. վերջին արքունի վառողապետ Պողոս ամիրա Տատյանը Փարիզում եղած ժամանակ այցելում է Փարիզի արքեպիսկոպոս Մ. Տ. Օգյուստին: Գաբրիել Այվազովսկին՝ իբրև թարգման, ընկերակցում է նրան: Խոսակցության ժամանակ Տատյան ամիրան հայտարարում է, թե Հայոց եկեղեցին հերձվածող չէ, (այդ ժամանակ կաթոլիկ շրջանակներում այդպիսի էին համարում), և թե Հայոց առաքելական եկեղեցին դավանաբանական հիմնական տարբերություն չունի Կաթոլիկ եկեղեցուց: Այնուհետև Պողոս Տատյան ամիրայի անունով (հավանաբար Գաբրիել վրդ. Այվազովսկու գրչից ելած) ավելի մանրամասն ֆրանսերեն մի գրքույկ է հրատարակվում: Հայ եկեղեցին դիմափոխող այս երևույթի դեմ ընդհանուր բողոք և զայրույթի այլք է բարձրացնում հասարակության մեջ, որին միանում է և Ստ. Ոսկանյանն «Արևելքի» համարներում (տես Ժ. Դանիելյան, Բանասիրության բախղներուն մէջ: Յօդվածներ և ուսումնասիրութիւններ, էջ 266–268):

2 Յունիվեր (L'Univers)– 1833–1914 թթ. Փարիզում տպագրվող կաթոլիկ օրաթերթ (տես Le petit Robert 2: Dictionnaire universel des noms propres.– Paris, 1977, p. 1862):

3 * «Արևելք» (1855–1856) և «Արևմուտք» (1859, 1864–1865) հանդեսների անոտացված մատենագիտություն» գրքում հանդեսներից բերված քաղվածքների ուղղագրությունը համապատասխանեցված է արդի արևելահայերենի ուղղագրությանը: Հոդվածում բերված քաղվածքները կատարել ենք՝ հետևելով մատենագիտության վերևում նշված օրինակին:

Արարատա որդի՛ք, հեռո՛ւ. մի մոտենաք վտանգը մահաբեր է և կորուստը հավիտենական. մի՛ մոտենաք, ուր գերություն կտիրեն հոն քրիստոնեություն չիկա... սհա՛ Հայաստանի նկարագիրը ՀԱՎԱՏՔ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: Ազատությունը միայն կրնա փառք տալ ձեզ երկրի վրա, հավատքը ազատությունով փառք ու արքայություն կուտա երկինքի մեջ...»:

2. Գրագիտական. Պ. Թեոֆիլ Կոթին՝ և իր Կոստանդնուպոլիս² անուն գիրքը, էջ 460–465:

Գոթինին տրված ընդհանուր բնութագիրը. «Թեոֆիլ Կոթինն տարօրինակ մատենագիր մ՛ է և օտարական մը, առաջի բերան, անոր ոճը և կերպարը չի կրնար հասկանալ: ... Այս հոդվածի մեջ կը փափագինք միայն իբրև ճամբորդ քննել այս մատենագիրը, որու անունը Պոլսո շատ հայերու ծանոթ է, և իր գիրքն քանի մը տող թարգմանել կամ համառոտել, որք մեր ազգայիններու կը վերաբերին»:

«... Իրմե առաջ և ո՛չ մեկ օտարական մը Թյուրքիայի մայրաքաղաքը այնքան ճշմարտությամբ նկարագրեր էր...»:

3. Երկրագործական. Օ (Հ.) Թյույսու-

զյան³, Լեդակաձառին բուսական աշխարհագրությունը, էջ 465–473: Տե՛ս NN 12, 13, 14:

4. Այլևայլք, էջ 474–475:

Երկու հաղորդում. ա) Եվրոպայի, մանավանդ Ֆրանսիայի լրագիրները տարբեր լուրեր են հրապարակում Հայաստանյայց առաքելական եկեղեցու մասին: Սիեքլ⁴ օրագիրը գրում է, որ գողը էջմիածնից գողացել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի թևը, որ պահվում էր արկղի մեջ: Հանդիմանում է հայերին «Հայերը անհոգ ժողովուրդ մ'են և ամենևին եռանդ չ'ունին զիրենք պաշտպանելու և օտար թշնամիի մը գրպարտությունը փարատելու: Այս մեզ միշտ տրտմություն տվեր է և կուտա, և որովհետև Հայաստանի կամ Ասիայի կողմերն ճիշդ լուրեր չ'ունինք անհնարին է գեթ պատասխան մը գրել և ճշմարտությունը պաշտպանել»:

բ) Յունիվերի լուրը՝ Մազինիի փոխանակագրի մասին, որ սխալմամբ ընկել է հռոմեական պաշտոնավորի ձեռքը: Մի խումբ պաշտոնավորներ որոշել են գումարը հետ չվերադարձնել և հռոմեության վերաբերյալ արձան շինել: «Մենք չ'ենք գանգատիր. օր մը Մազինիին կողմը հաղթելու ըլլա, նե այս գողերն արժանի վրեժը կ'առնու»:

5. Վիպական. Շատորբիան, Հետին Ապենսերաժ, էջ 475–480: Տե՛ս «Արևելք», NN 11, 12, 13, 14:

1 Գոթին Թեոֆիլ (1811–1872), ֆրանսիացի գրող, քննադատ: Պառնասյան դպրոցի սկզբնավորողներից (https://hy.wikipedia.org/wiki/Թեոֆիլ_Գոթին): Պոետ, քննադատ, վիպասան լինելուց գատ՝ Գոթինն ճանապարհորդությունների մոլի սիրահար էր. շրջագայել է ողջ Եվրոպայում, եղել Արևելքում և Ռուսաստանում (տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/Готье,_Теофил).

2 Թեոֆիլ Գոթին Կոստանդնուպոլիս է մեկնել 1852 թ. հուլիսի 9–ին և նույն թվականի հոկտեմբերին վերադարձել է Փարիզ (<http://www.librairieherodote.com/pages/litterature/editions-originales/theophile-gauthier-constantinople-par-theophile-gautier.html>): 1853 թ. տպագրվել է «Կոստանդնուպոլիս» ռեպորտաժների ժողովածուն: Բնականաբար, կենցաղ, ժանրային էսքիզներ. այս ամենը Թեոֆիլ Գոթինն նկարագրել է շատ ճշգրիտ, հստակ, միաժամանակ գեղարվեստորեն, իսկական ֆրանսիական հումորով (տե՛ս <https://www.livelib.ru/author/196115/top-teofil-gote>):

3 Հովհաննես Թյույսուզյան (1830–1898)– հայ մշակութային գործիչ: Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա մեկնել Փարիզ, ստացել երկրագործական բարձրագույն ուսում: 1855–ին աշխատակցել է ֆրանսիական մամուլի մասնագիտական հոդվածներով: Վերադառնալով Կ. Պոլիս, 1857–ին հրատարակել է «Որթածաղիկ կամ քյուլլեմե» գիրքը (https://hy.wikipedia.org/wiki/Հովհաննես_Թյույսուզյան):

4 Սիեքլ (Le siecle)– 1836–1917 թթ. Փարիզում տպագրվող քաղաքական օրաթերթ (տե՛ս Le petit Robert 2: Dictionnaire universel des noms propres.– Paris, 1977, p. 1704):

АННОТИРОВАННАЯ БИБЛИОГРАФИЯ 15–ГО НОМЕРА
ЖУРНАЛА СТ. ВОСКАНЯНА “АРЕВЕЛК”

КРИСТИНЕ ОГАННЕСЯН

НАН РА, Международный научно – образовательный центр, главный специалист учебной части

Очередной 15–ый номер журнала «Аревелк», который издавался в Париже в 1855–1856 гг., будучи целиком готовым к печати, не был опубликован. Но фотокопия номера имеется в сборнике “Аревелк” в Национальной библиотеке Армении. На вопросы как она попала в библиотеку, почему нет библиографии номера в книге “Аннотированная библиография журналов “Аревелк” (1855–1856) и “Аревмутк” (1859, 1864–1865)”, составленной в Академии наук в 1980 г., не было возможности ответить из–за нехватки фактов. В данной статье дается аннотированная библиография 15–ого номера, которая дополняет книгу “Аннотированная библиография журналов “Аревелк” (1855–1856) и “Аревмутк” (1859, 1864–1865)”.

THE ANNOTATED BIBLIOGRAPHY OF THE 15TH ISSUE OF THE JOURNAL
'THE AREVELK' BY ST. VOSKANYAN

KRISTINE HOVHANNISYAN

Chief Specialist of the Educational Department at ISEC NAS RA

The regular 15th issue of the journal «The Arevelk», was published in Paris in the years of 1855–1856, being fully prepared for the press, was not announced. However, the copy of this issue is available at “The Arevelk” collection at the National Library of Armenia. To such questions as how it appeared in the library, why there was no bibliography of the issue in the book “The Annotated bibliography of “The Arevelk” (1855–1856) and “The Arevmutk” (1859, 1864–1865) journals”, compiled by the Academy of Sciences in 1980, still couldn’t be answered due to lack of facts.

КОММУНИКАТИВНЫЕ НЕУДАЧИ КАК НАРУШЕНИЕ ЭТИКЕТНЫХ НОРМ В МЕЖКУЛЬТУРНОЙ КОММУНИКАЦИИ

Статья посвящена проблеме коммуникативных неудач в межкультурной коммуникации на примере нарушения этикетных норм. Данная проблема очень актуальна в связи с постоянно расширяющимися политическими, культурными, экономическими и научными связями между странами. Проблемы непонимания в процессе общения обусловлены многими факторами, среди которых особо выделяются культурные, обусловленные национальной спецификой. Образцы поведения, которые зиждутся на традициях, обычаях, религии, ценностях, нередко отличаются у разных народов, являясь причиной сбоев и неудач в процессе общения представителей разных культур.

Ключевые слова. межкультурная коммуникация, культура, коммуникативные неудачи, этикет, вербальный, невербальный и паравербальный язык, конфликт культур, стереотипы.

Коммуникация достаточно сложное явление, имеющее целью установление контакта между двумя и более людьми. Насколько общение может быть успешным, зависит от многих факторов – психологических, социальных, культурных, личностных и др. Очень часто в процессе общения возникает непонимание или недопонимание собеседников, в результате которого коммуниканты не приходят к пониманию или согласию. В науке установились некоторые термины, обозначающие это явление как “коммуникативные неудачи” (communicative failures) или “коммуни-

кативные сбои”.

Проблема исследования общения многоаспектна и требует междисциплинарного подхода. Она в достаточной мере изучена исследователями таких областей наук, как психология, культурология, лингвистика, социология, аксиология и др.

В настоящее время, в период продолжающейся глобализации, особую актуальность приобретают исследования в области межкультурной коммуникации. Все более расширяющиеся контакты между странами на разных уровнях – политическом, дипломатическом, культурном, экономическом, научном, в сфере бизнеса и туризма диктуют необходимость изучения поведения представителей разных народов в различных ситуациях общения.

Еще в прошлом столетии исследователи обратили внимание на то, что непонимание между людьми – это не только (и не столько) результат недостаточного владения иностранным языком, но и норм иноязычной культуры. Даже отличное владение иностранным языком не обеспечивает “грамотного” общения. Причина тому – отсутствие фоновых знаний о данной культуре (условий, обстановки, окружения, в котором происходит общение).

В ряду проблем, которые можно объединить под названием “поведенческие”, выделяется проблема вербального и невербального этикета. Паравербальный язык (интонация, тональность, темп речи, тембр, высота и громкость

голоса и т.п.) играет не последнюю роль в процессе общения, он также национально специфичен, как вербальный и невербальный языки.

Этикетные формулы общения имеют большую коммуникативную значимость. Они служат средством для установления, поддержания и завершения контакта, т.е. пронизывают общение от начала до конца. В любом обществе общение начинается с этикетных формул приветствия и завершается прощанием. В процессе общения, в зависимости от цели и ситуации, используются формулы просьбы, поздравления, пожелания, извинения, соболезнования и т.д. Все эти формулы усваиваются с детства в процессе социализации, а это значит, что они используются так часто, что доведены до автоматизма, стандартизированы.

Как вербальные, так и невербальные этикетные формы коммуникации отражают человеческие отношения, национальную специфику, социальную принадлежность участников коммуникации. Иначе говоря, они также национально обусловлены и социально дифференцированы. Этикетные формулы общения не есть нечто статичное и не изменяющееся во времени. Естественно, они претерпевают изменения в ходе исторического развития общества. Изменение структуры и строя общества, системы ценностей, взаимодействие и взаимовлияние культур и др. – все это факторы, влияющие на этикетное поведение людей в обществе. Безусловно, уровень образованности и воспитанности играет очень важную роль в этикетном поведении личности, однако в данной статье эта проблема нами не затрагивается.

Почему в межкультурном общении, даже при достаточно хорошем владении языком, возникают сбои в коммуникации? Причина номер один – это

различие культур, различие моделей поведения. Это несовпадение в культурах восприятия и понимания того, что можно, допустимо, необходимо, а что – нет. Если нормы этикетного поведения (вербального, невербального, паравербального) в обеих культурах совпадают, то здесь мы можем говорить о “диалоге культур”. Если же они вступают в противоречие, то происходит “конфликт культур”. Исследователями установлено, что культурные ошибки воспринимаются более негативно и труднее прощаются, чем языковые. Неправильное определение артикля, рода существительных, стилистические ошибки и т.д. воспринимаются с пониманием, с некоторым снисхождением. Ошибки же культурные вызывают отрицательную реакцию и воспринимаются болезненно, поскольку своя родная культура нередко представляется единственно возможной и правильной.

Столкновение культур происходит довольно часто, начиная с повседневного, бытового общения, кончая встречами политических лидеров на высоком уровне. В качестве примера рассмотрим следующие ситуации.

Автор книги “Война и мир языков и культур” С.Г.Тер-Минасова рассказывает: “Когда я приехала читать лекции в университет Хоккайдо в 2001 году, вошла в аудиторию и начала с обычных вводных слов, меня очень вежливо остановили и почтительно попросили сесть. Я никогда в жизни не читала лекции сидя. На лице моем отразилась такая степень недоумения и беспомощности, что мне сразу объяснили: “Если вы стоите, вы противопоставляете себя аудитории, и возвышаетесь над нею, смотрите на людей сверху вниз” [1: 104]. В российских и армянских аудиториях, как правило, принято читать лекции стоя, у кафедры. Мы часто не задумываемся над тем, почему мы

действуем подобным образом, и откуда пришла эта традиция? В любом случае, в сознании представителей многих культур – это не попытка “возвыситься над слушателями”, а скорее всего удобная форма контакта с аудиторией и, почему бы нет, проявление уважения и готовности служить аудитории.

Имеет ли значение, какой рукой следует протягивать вещь собеседнику – левой или правой? Мы не задумываемся над этим и не обращаем внимания. Скорее всего, левша протянет левой рукой, правша – правой. Однако в межкультурной коммуникации с представителями мусульманских и некоторых азиатских стран, не проповедующих ислам, преподнесение предмета левой рукой будет рассматриваться как серьезное оскорбление, поскольку в их культуре левая рука предназначена для гигиены и считается нечистой.

Как следует вести себя в переполненном транспорте, когда человеку нужно пройти к двери, чтобы выйти из транспорта? Естественно, не работать локтями, прокладывая себе путь. В армянской и русской культурах еще в недалеком прошлом использовалась фраза: “Вы на следующей остановке выходите?” Сама по себе эта фраза означала намек на то, чтобы пассажира пропустили к выходу. Оказывается, та же фраза может вызвать негодование и возмущение в Японии. “Характерно свидетельство профессора К. Преображенского; когда он был студентом 4-го курса японского отделения и поехал на практику в Японию, то, стоя в автобусе за человеком у двери, он спросил того на хорошем, с его точки зрения, японском языке: Вы выходите на следующей остановке?, на что получил гневный ответ: А Вам какое дело? Хочу выхожу, а хочу не выхожу”. [2: 170]. Фактически здесь имела место коммуникативная неудача в результате переноса своего

культурного “транспортного” стереотипного поведения в японскую культуру, где подобное поведение было истолковано как вторжение в личную зону.

Говоря о коммуникативных сбоях или неудачах в межкультурной коммуникации, мы не можем обойти вниманием проблемы, связанные с использованием языка, т.е. языковые трудности, которые можно классифицировать как очевидные и скрытые. При изучении иностранного языка вполне очевидны трудности, связанные с разницей в фонетике и орфоэпии, в грамматическом строе и др. Гораздо серьезнее обстоят дела со скрытыми языковыми трудностями, поскольку они не лежат на поверхности и на первый взгляд не таят в себе “опасности” ошибиться. В основном это касается лексических и лексико-фразеологических единиц. В качестве примера рассмотрим обращение к коммуниканту на “ты” или “Вы” (вежливое). В тех языках, где нет дифференциации обращения на “ты” или “Вы” к одному лицу, иногда при общении возникают проблемы с носителями тех культур, где обе формы функционируют. Обращение на “ты” к незнакомым, малознакомым рассматривается как неуважительное отношение или отсутствие воспитанности, между тем – это выученные с детства модели обращения, функционирующие в данной культуре.

Касаясь вопроса об обращениях, отметим, что они также национально специфичны, и при межкультурных контактах, особенно в официально-деловом общении, следует придерживаться принятых этикетных форм обращения. Во многих азиатских странах (Китай, Япония, Сингапур) в качестве обращения употребляется фамилия. В Испании уважительное обращение в официальной речи предполагает использование

модели Señor+фамилия к мужчине и Señora(Señorita) +фамилия к женщине. Однако при уважительном обращении к женщине (в не строго официальной обстановке) допускается также использование модели Señora(Señorita)+ имя. В настоящее время подобные формы обращения функционируют и в армянском языке, хотя еще в недалеком прошлом, в годы советской власти, обращения господин (սիրնի) и госпожа (սիրիկի) были неприемлемы. Это яркий пример изменения культуры общения под влиянием социально-исторических факторов и идеологии.

Какова роль паравербального общения в межкультурной коммуникации? То, что паравербальному языку в процессе коммуникации отводится большее место, а по результатам некоторых исследователей [4] бо́льшее, чем вербальному, не вызывает сомнений. Например, обыкновенное “спасибо”, интонационно произнесенное по-разному, может означать благодарность, отказ, обиду, иронию и т.д.

В межкультурной коммуникации интонация речевого общения “... зачастую определяет смысл и содержание передаваемой информации. Например, в европейских языках значимая информация выделяется при помощи контрастного ударения. В южноазиатских языках, наоборот: новая информация сообщается тише, чем уже известная. В некоторых арабских и африканских культурах громкость говорения используется как средство регулирования смены ролей говорящий – слушающий. В европейских культурах громкое и одновременное говорение означает спор или ссору” [6].

Обращаясь к невербальному языку, отметим, что в межкультурной коммуникации наиболее частые неудачи и сбои, с нашей точки зрения, происхо-

дят именно на этом уровне. Одни и те же жесты в разных культурах имеют разное значение; контакт глаз в одной культуре считается обязательным компонентом общения и расценивается как открытость, в другой – как агрессия или непочтительное отношение к взрослому или вышестоящему по статусу. Поцелуй как норма этикета также обусловлен традициями: в качестве приветствия он прошел длительный исторический путь. Улыбка как проявление вежливости имеет разное значение у различных народов. В некоторых азиатских странах выражение соболезнования родственникам и близким умершего обязательно сопровождается улыбкой, что вызывает культурный шок у других народов. Можно ли касаться своего собеседника во время общения? На этот вопрос нет однозначного ответа. Все зависит от того, носителем какой культуры является коммуникант. Известно, что в мусульманских странах строго запрещается касаться “чужой” женщины, даже протягивать или пожимать ее протянутую руку в официальной обстановке. В июле 2005 г. произошел конфликт культур на государственном уровне, когда председатель иранской делегации отказался пожать руку женщине – члену бельгийского парламента. В ответ на это она отменила встречу (Телепередача “Новости”, 1 июля, 2005г.).

В межкультурном общении почти невозможно полностью избежать коммуникативных неудач или сбоев. Но коммуникативная компетентность или грамотность, толерантное отношение к другой культуре, отказ от этноцентризма – склонности оценивать жизненные явления сквозь призму ценностей своего этноса, помогут избежать многих ошибок и более успешно общаться.

ЛИТЕРАТУРА

1. Тер–Минасова С.Г. Война и мир языков и культур. М.: Слово/Slovo, 2008, 344 с.
2. Формановская Н.И.. Речевое общение: коммуникативно–прагматический подход, –М., Рус.яз., 2002.– 216с.
3. Melikyan Laura. Communicative Failures as a Result of Cultural and Linguistic Stereotypes. The International Journal of Humanities, 2012, Volume 9, Issue 11, pp. 93–99.,
4. Mehrabian, Albert . (1981). Silent Messages: Implicit Communication of Emotions and Attitudes (2nd ed.). Belmont, CA: Wadsworth, 1981.
5. Samovar, L.; Porter, R; McDaniel, R. (2009). Communication Between Cultures. 7th Edition. Wadsworth, Cengage Learning.
6. Паравербальная коммуникация: сущность и средства. – http://studopedia.ru/2_92969_paraverbalnaya-kommunikatsiya-sushchnost-i-sredstva.html

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԷԹԻԿԵՏԻ ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԶԱԽՈՂՈՒՄՆԵՐ

ԼԱՌԻԱ ՄԵԼԻՔՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի դասախոս,
մասնավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Հոդվածը նվիրված է միջնշակության հաղորդակցության ընթացքում հաղորդակցական ճախողումների խնդիրների ուսումնասիրմանը՝ հիմնվելով էթիկետի նորմերի խախտման օրինակի վրա: Սույն հիմնախնդիրը շատ հրատապ է արդի ժամանակաշրջանում, քանի որ գնալով էլ ավելի են ընդլայնվում երկրների միջև քաղաքական, մշակութային, տնտեսական և գիտական կապերը: Հաղորդակցության ընթացքում միմյանց չհասկանալու խնդիրը պայմանավորված է տարբեր գործոններով, որոնց թվում հատկապես առանձնաձևում է մշակութայինը: Հաղորդակցության մոդելները, որոնք խարսխված են ավանդույթների, սովորույթների, կրոնի, արժեքների վրա, տարբեր ժողովրդների մոտ տարբեր են, և միջնշակության հաղորդակցության ընթացքում հաճախ հենց դրանք են դառնում ճախողման պատճառ:

COMMUNICATION FAILURES IN INTERCULTURAL COMMUNICATIONS AS A BREACH OF ETIQUETTE RULES

LAURA MELIKYAN

*International Scientific-Educational Center of NAS RA
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor*

The article deals with the problem of communication failures in intercultural communication on the example of breaches of etiquette rules. This problem is very urgent nowadays, as political, cultural, economical and scientific relations between different countries are increasingly expanding. The misunderstanding problem in the communication process is a result of various factors – especially cultural. Samples of communication which are based on traditions, customs, religion, values are often various in different nations; this is the reason of failures in the process of communication between representatives of different cultures.

ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՓԵՍԱՅԻ ՇԵՄԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԻՍԵՐԳԵՐՈՒՄ

Հոդվածում քննվում են հայոց հարսանեկան ծեսի ընթացքում փեսայի շեմի առջև երգվող ծիսերգերի ծիսապաշտամունքային մոտիվները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նորապսակների՝ որպես ծագող արևների բազմաձև բնութագրումներին, որոնց հիմքում հին արևապաշտության ընկալումներ են ընկած, ինչպես նաև նորապսակների՝ որպես նորատունկերի ընկալմանը, որն էլ կապվում է հարսանեկան կենաց ծառի նոր աճի գաղափարին:

Հանգուգային բառեր և արտահայտություններ. հարսանեկան ծիսաշար, ծիսակատարության, շեմ, հարսնաբերի ծիսերգեր, կատակերգ, բանատող, նորապսակ գույգ:

Հայոց ավանդական հարսանեկան ծիսաշարի ողջ ընթացքն ուղեկցվել է ծիսերգերով, որոնք տվյալ իրավիճակին բնորոշ տրամադրության և բազմազան հուզապրումների արտահայտությունները լինելուց բացի, ծեսի մասնակից-երգասացների խոր հանդամաբ օժտված են եղել նաև հմայական ներգործուն գործությամբ, որոնցով հարագատները նորաստեղծ ընտանեկան գույգին կամեցել են հաղորդել կենսագործման ու կենսանորոգման ուժ և ավյուն: Հայագիտության մեջ անշուշտ անդրադարձներ եղել են հարսանեկան ծիսակատարության հիմքում ընկած ծիսապաշտամունքային պատկերացումներին, սակայն ուսումնասիրությունները մեծ մասամբ ազգագրական բնույթի են, ուր որպես երկրորդային նյութ հիշատակվում են նաև ծիսերգային բնագրերը: Մեր ուսումնա-

սիրությունը հիմնվում է ծեսի խոսքային դրսևորումների քննության վրա: Սույն հոդվածում կփորձենք դիտարկել **շեմի** կամ, այլ կերպ ասած, **հարսնաբերի ծիսերգերում** դրսևորվող պաշտամունքային մոտիվները և դրանց հիմքում ընկած պատկերացումները:

Հարսին իր հայրական տնից հանելուց հետո հարսանեկան ուրախ թափորը սովորաբար ուղևորվում է եկեղեցի, այնուհետև՝ փեսայի տուն, ուր և կատարվում են շեմի ծեսերը: Որպես անցումային ծեսերի խտացված և համապարփակ տարբերակներ՝ շեմի ծեսերը հանդիսանում են հարսանիքի առավել խորհրդանշական կետերը¹, համապատասխանաբար, ծեսի այս փուլում երգվող երգերը ևս խտացնում են ծիսերգային բնագրերի առավել կարևոր և խորհրդանշական մոտիվները: Շեմի ծեսերի ընթացքում երգվող երգատեսակները հիմնականում հմայական-օրինաբանական գովքեր և աշխույժ կատակերգեր են:

Հարսանեկան ծեսը ներկայացնող բանահավաքները հիմնականում նույն երգերն են հիշատակում շեմի ծեսերը նկարագրելիս: Գամիրքում, օրինակ, եկեղեցուց վերադարձող նորապսակներին երգով էր դիմավորում փեսամայրը, որը, «տնեցիների զգացմունքներին որպես թարգման, հարս ու փեսին ուղղված խաղ էր ասում.

Երկու ֆիտան ժամեն կուգան
Առնենք, ելլանք վերի օդան,

1 Գայանե Շագոյան, «Յոթ օր, յոթ գիշեր», հայոց հարսանիքի համայնապատկեր, Եր., 2011, էջ 409:

Նազ քրե, նազդ վերցնեն,
Ալադով շաքար կերցնեն»¹:

Ակնում փեսայի դռան առաջ նվազածուններն ու հարսնուհիները երգել են «Բարի լուս, աղուոր, բարի լուս» սկսվածքով հարսի և փեսային նվիրված գովք-ձոներգը² :

Փեսայի շեմի ծիսերգերի մասին հարուստ տեղեկություններ է թողել Բենսեն: Նա նշում է, որ փեսայի շեմի առջև դռնբացեքի ծեսին զուգահեռ մի երիտասարդ երգում էր «**Մեր թագվորին ի՞նչ պիտեր**», «**Մեր թագվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց**» երգերը, որից հետո երգվում էր «**Թագվորամե՛ր, դուսարի**» ուրախ կատակերգը:

Թագվորի մեր, դո՛ւս արի,
Տե՛ս, քրզի ի՛նչ ինք բերի,
Քրզի քֆրող ինք բերի,
Գլուխ քթվող ինք բերի,
Քրզի բամբող ինք բերի³:

Վերջին կատակերգի՝ փեսայի դռան առաջ կատարվելու մասին բազմաթիվ այլ վկայություններ կան: Արձակում, ըստ ընդունված սովորության, կատակերգը կատարվում էր դռնբացեքի ծեսին զուգահեռ⁴: Վանում «Թագվորի մեր, տյիս արե» կատակերգը կատարվել է ամուրի երիտասարդների (**մխկների**) խմբի կողմից, որոնք երգելով շուրջպար էին բռնում փեսայի մոր շուրջը՝ ոտքի դոփյուններով թնդացնելով գետինը⁵: Ըստ երևույթին կատակերգը շատ սիրված է եղել և բավական լայն տարածում է ունեցել:

Ծիսական առանցքային գործողությունները երգային բնագրերում ամրագրվում են որոշակի կայուն բանաձ-

ևերով, որոնցով էլ հաճախ որոշվում է կոնկրետ երգի՝ ծեսի այս կամ այն փուլին պատկանելությունը: Այդպիսին է, օրինակ, «**Ժամեն կուզան ջուխար ֆիփան**»՝ հիմնիմաստակիր կայուն-բանատողը, որի շուրջ համախմբվում են ծիսական երկրորդական մանրամասների արտացոլող այլ արտահայտումներ:

Ծիսական համապատկերում՝ որպես ծեսի խոսքային անմիջական արտահայտություն, հարսնաբերի երգերում հաճախակի կրկնվում է նաև «**թաք գնացել, ջուխար էկել է**» կայուն-բանաձևը, որն իր առանձին դրսևորումն ունի նաև ծեսի նախնական փուլերում հնչող օրհնանք-բարեմաղթանքներում:

Հարսնաբերի փուլում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում փեսայի մոր կերպարը, որը սովորաբար իրավունք չունեի գնալ եկեղեցի և նորաստակ զույգին պետք է դիմավորեր տանը՝ ստանձնելով նորաստակներին հացով և քաղցրեղենով դիմավորելու պարտավորությունը: Մրանով պայմանավորված՝ այս ծեսի և՛ գովքերին, և՛ կատակերգերին բնորոշ և ամենահաճախ հանդիպող կայուն բանատողը փեսամորն ուղղված դիմում-կոչն է՝ «**Թագվորի մեր, դուսարի**», որն ըստ էության իր մեջ ամփոփում է այս փուլի ծիսական առանցքային գործողությունը: Այս դիմում-կոչը հիմնատող է դառնում հատկապես կատակերգերում՝ հանդես գալով և՛ որպես երգի սկզբնատող (տարբերակներում՝ «Հարսի կեսուր դուրս էլի»⁶, «Վի՛ր իլը հա՛յ, վի՛ր իլը, // Թաքվուրը մեր վի՛ր իլը»⁷ և այլն), և՛ հարակրկնություններով իր վրա վերցնելով երգի իմաստային ծանրաբեռնվածությունը:

Հարսնաբերի ընթացքում կատարվող ձոներգերն ու կատակերգերը, արտացոլելով միևնույն իրավիճակին հատուկ

1 Թեմուրճյան, Գամիրքի հայերը, ՀԱԲ, հ. 1, Եր., 1970, էջ 125:

2 Յ.Կ. Ճանիկեան, Հնուրիներ Ակնայ, Թիվլիս, 1895, էջ 418-422:

3 Ս. Մովսիսյան (Բենսե), Հարք (Մշո Բուկանըխ), ՀԱԲ, հ. 3, էջ 97, 109:

4 Արճակ, ՀԱԲ, հ. 8, Եր., 1978, էջ 68:

5 Երվանդ Տեր-Մկրտչյանը, Վանեցոց հարսանիքը (կենցաղագրական պատկեր), ՀԱԲ, հ. 1, Եր., 1970, էջ 170:

6 Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական-ագագրական հավաքածու, Կլենտեյլ, Գալիֆորնիա, 2009, էջ 115:

7 Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, Եր., 2015, էջ 435:

հոգեբանությունն ու ընկալումները, էականորեն տարբերվում են և՛ երգային կատարման ձևով, և՛ նպատակադրմամբ: Եթե առաջիններում հստակորեն ընդգծված են երգի ծիսապաշտամունքային մոտիվները, ապա երկրորդները հետագայում առավել թեթև, կենցաղային դրսևորում են ստացել՝ իրենց երգիծական մոտիվներում ձեռք բերելով նաև խրատական բնույթ, դառնալով ետհարսանեկան կենցաղային սովորույթների խոսքային ամրագրումներ:

Եկեղեցուց վերադարձող և փեսայի շեմի առջև կանգնած նորապսակ զույգին ուղղված գովք-ձոներգերը հիմնականում պարունակում են նոր կյանքի արարման, տիեզերական նոր կարգուկանոնի ստեղծման մոտիվներ, որոնք դրսևորվում են հնագույն պաշտամունքային ընկալումների հիմքով ստեղծված որոշակի կայուն խորհրդանիշ-պատկերների միջոցով:

Հարսանեկան այն ձոներգերը, որոնք, ըստ բանահավաքների վկայության, երգվել են փեսայի դռան առաջ, հատկանշվում են մեկ յուրահատկությամբ. կա՛մ սկսվում են **բարի լուս**¹ ձեգի ողջույնով («**Բարի լուս, աղուոր, բարի լուս, // Բարի լուսուն բարին վրայ**»), կա՛մ նոր ծագող արեգակի պատկեր-խորհրդանիշով, որով հիմնականում բնութագրվում է եկեղեցուց վերադարձող փեսան («**Բարով եկիր, դուն բարկ արև, // ծագեցար դուն մեր փան վերև**»²):

Այգաբացի ողջույնով սկսվածքներ հազվադեպ, բայց հանդիպում են նաև «Թագվորի մեր, դուրս արի» կատակերգերում: Երգի տարբերակներից մեկի սկսվածքային բանատողը ի հայտ է գալիս «**Թագվորի մայր, բարի լուս**»³ տարբերակով: Սկսվածքի մի ինքնատիպ

օրինակ ենք գտնում Հայկունու գրառած Ալաշկերտի բարբառային տարբերակում, որը թագվորագովքերի մի ընդարձակ երգաշարի մաս է կազմում:

Ե՛կ բարև, եկ բարև,

Թագուորին շատ արև⁴:

Հարսանիքին հաջորդող օրերի՝ այգը ողջունելու ծիսերգին բնորոշ սկսվածքը՝ «**էք արև, էք արևու փանք բարև**»⁵, տարբերակային նոր դրսևորում է ստանում. «**էգ, էք, այգ**»՝ ձեգի ողջույնի կոչերը այս տարբերակում փոխարինվել են թագվորամորն ուղղված «**ե՛կ**» հրամայականով:

Եկեղեցուց վերադարձող նորապսակներին արեգակնային հատկանիշներ վերագրելը և կամ՝ լուսաբացի ողջույների առատությունը հարսնաբերի երգերում որոշակի ծիսապաշտամունքային արմատներից են սերում: Վանեցիների հարսանիքը նկարագրող Երվանդ Տեր-Մկրտչյանը նկատում է. «Հին ատեններ պսակի արարողությունը կկատարվեր առավոտյան ժամերգության միջոցին – գուցե արևապաշտության ժամանակներեն մեզի հասած – արշալույսը դեռ չբացված, որպեսզի պսակվել է հետո նորածագ արևի շողերն ու ճառագայթները նորապսակներու վրա **իյնային**: Մինչև իսկ մեղք կհամարվեր արևածագեն հետո պսակվիլը»⁶:

Այն, որ նորապսակների՝ պարտադիր արևածագից հետո եկեղեցուց դուրս գալը ընդունված և սրբագործված ծիսակարգ է եղել, հուշում է նաև ժողովրդական ավանդությունը.

«**Երիտասարդն ու աղջիկը, առանց ծնողների կամքի, գնացել են պսակվելու: Հակառակ ընդունված սովորության, նրանք եկեղեցուց դուրս են եկել արևածագից առաջ, որի համար էլ ասուված**

1 Յ.Կ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, էջ 418–422:
2 Գ. Սրվանձոյանց, Երկեր, հ. 1, Եր., 1978, էջ 519–520:

3 Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, Եր., 1986, էջ 144:

4 Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 2, Մոսկվա–Վաղարշապատ, 1906 էջ 35:

5 Նույն տեղում, էջ 32:

6 Երվանդ Տեր-Մկրտչյան, Վանեցոց հարսանիքը (կենցաղագրական պատկեր), ՀԱԲ, հ 1, էջ 169:

պարժել ու քար է դարձրել նրանց»։¹

«Նոր կյանք, նոր կենսաշրջան սկսող» նորապսակների՝ արևից առաջ դուրս գալն ու քարանալը բանագետ Սարգիս Հարությունյանը հետևյալ կերպ է մեկնաբանում. «Արևածագից առաջ դուրս գալ եկեղեցուց՝ նշանակում է անարև մնալ, այսինքն՝ կյանք չունենալ, կյանքից զրկվել, որի հետևանքով էլ կատարվում է աստվածային պատիժը, և ծիսակարգը խախտող գույգը զրկվում է արևից, քարանում է»²:

Այս առումով բնորոշ է հատկապես Ակնում երգվող ծիսերգը, ուր առավոտյան և արևածագի մոտիվների հարակրկնությունները խտացնում են երգի ակնհայտ արևապաշտական բնույթը:

Բարի լուս, աղուոր, բարի լուս,

Բարի լուսուն բարին վրատ.

Ուր ցաթ է արևն ի վրատ=

Ծիսերգի հետագա բոլոր տները սկսվում են «Առավոտուն» բառով և ընթանում արևի և արևածագի պատկեր-խորհրդանիշի բազմաձև կրկնություններով:

Առաւօտուն աս ի՞նչ շաղ է.

Հարսն ի պաղճան վարդ կու քաղէ=

=**Առաւօտուն** կանուխ կանուխ.

Հարսինը սիրտն է պուլանուխ =

=**Առաւօտուն թեզ մի արև.**

Թագուորը տայ մօրը բարև.

Բարով եկիր դուն, **բարկ արև.**

Ցաթեցիր մեր փանն ի վերև=³(Ընդգծումները իմն են-ՆՎ)

Եթե նոր կյանքի շեմին կանգնած նորապսակների ելքը եկեղեցուց արտահայտվում է արևածագի խորհրդանիշ-պատկերով, ապա հարսնաբերի երգերի հաջորդ խորհրդանիշները արդեն արտահայտում են նոր տան, նոր աճի ու զարգացման մոտիվները: Վերջիններիս արտահայտումներն են դառնում հարսին

և փեսային բնորոշող կայուն խորհրդանիշ-փոխաբերությունները, որոնք ծիսական համատեքստում ընդգրկում են նորապսակների՝ եկեղեցուց դուրս գալու՝ սրբագործվելու, և տուն մտնելու՝ տունը նորացնելու և շենացնելու իմաստաբանությունը:

Վանի (Վանի ոշտունցիների) և Գամիրքի ժողովրդական հարսնաբերի երգերում եկեղեցուց դուրս եկող նորապսակները **նորափունկ** են անվանվում՝ «Ժամեն կուգա ջուխտ մի **Ֆիփան**»⁴: Իմաստաբանորեն այս խորհրդանիշին է հարում նաև բացառապես թագվորին բնորոշող՝ «**Գու ես մեր փան ոսկի սունք**»⁵ բանատողում փեսա-**ոսկի սյուն** խորհրդանիշը: Սյունը՝ որպես տիեզերքի մոդել, տիեզերքի և իր առանցքի (տիեզերական ծառ) խորհրդանիշ, սույն համատեքստում ի հայտ է գալիս նոր տան՝ իբրև տիեզերական նոր ստեղծվող կարգուկանոնի խորհրդանիշ⁶, որի առանցքը տվյալ դեպքում փեսան է՝ նոր ստեղծվող օջախի հենարանը: Սյուն-գերան խորհրդանիշ-պատկերը, որ հանդիպում է նաև ծեսի այլ փուլերում երգվող թագվորագովքերում (**Շինեցե՛ք հոյ շինեցե՛ք, // Ճեն ու շեմզալ զարպրեցեք, // Սունն ու զգերան նուր գանզցեք**⁷), իմաստային իր լիությանն է հասնում հենց շեմի ծեսերում: Եկեղեցուց վերադարձող նորապսակների՝ արևի նոր շրջապտույտի հետ նոր կենսաշրջան, նոր կյանք սկսած ընտանիքի համաբանությամբ **ոսկե սյուն-նորափունկ** խորհրդանիշները անմիջականորեն կապվում են երգերի վաղ պաշտամունքային ընկալումներ-

1 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 68:

2 Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 248:

3 Ճանիկեան, Ակն ու ակնցիք, էջ 419:

4 Ֆիտան - թուրքերեն փոխառություն է, որ նշանակում է տուն, նորատուն: Տես Աճառեան Հրաչեայ Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներուն, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 376:

5 Գ. Սրվանձտյանց, հ, 1, էջ 519:

6 Այս մասին տես Ռաիսա Խաչատրյան, Հայ ժողովրդական երգերի պոետիկան, Եր., 2010, էջ 83:

7 Ռ. Խաչատրյան, Թալին, ՀԱԲ հ. 19, Եր., 1999, էջ 115:

րի հետ, հարսանիքի՝ որպես սրբազան ամուսնության հնագույն առասպելի թատերականացման, փեսայի՝ որպես տիեզերքի ամուր հենապյան, տիեզերական կարգուկանոնը անխախտ պահպանող առանցքի, և նորապսակների՝ որպես կենաց ծառի նոր աճ տվողների՝ **նոր արունկերի**, որոնք պետք է ապահովեն բնության զարթոնքն ու նոր աճը:

Ինչպես արդեն նշեցինք, փեսայի շեմի առջև կատարվող հմայական այս գովք-ձոներգերին զուգահեռ լայնորեն կենցաղավարել է «Թագվորի մեր, դուրս արի» կայուն սկսվածք-բանատողով հայտնի կատակերգը, ուր լավագույնս արտահայտում է շեմային իրավիճակին բնորոշ՝ յուրային/օտար հակադրությունը, որով պայմանավորված՝ երգային տրամախոսություն է ծավալվում «ծիսական հակադիր» կողմերի միջև, ուր հակա-

սական բնութագիր է ստանում դառն «օտար» տարածքում գտնվող հարսի կերպարը, ծավալվում է հարս/սկեսուր հակադիր զույգի վերաբերյալ երգիծական մոտիվների ընդարձակ շարքը:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ հարսնաբերի կամ շեմի ծեսերին զուգահեռ կատարվող երգերը ծիսական համապատասխան իրավիճակը բավական հարազատորեն արտացոլելուց բացի, հարուստ են վաղ ծիսապաշտամունքային արմատներից սերող ընկալուններով՝ նոր արշալույսի, եկեղեցուց վերադարձող նորապսակների՝ որպես նոր տունների, տիեզերական նոր կարգուկանոնի ստեղծողների խորհրդանիշ-պատկերներով, որոնց ուսումնասիրությունը ի հայտ է բերում նախաքրիստոնեական ժամանակներից սերող պատկերացումներ:

ՊՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հրաչեայ Աճառեան, Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներուն, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:
2. Արձակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 8, եր., 1978:
3. Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական-ազգագրական հաւաքածոյ, Կլենտեյլ, Գալիֆորնիա, 2009:
4. Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 2, Մոսկվա-Վաղարշապատ, 1906:
5. Թեմուրձյան, Գամիրքի հայերը, ՀԱԲ, հ. 1, եր., 1970:
6. Ռաիսա Խաչատրյան, Հայ ժողովրդական երգերի պոետիկան, եր., 2010:
7. Ռ. Խաչատրյան, Թալին, ՀԱԲ, հ. 19, եր., 1999:
8. Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000:
9. Ա. Ղանալանյան, Ավանդապատում, եր., 1969:
10. Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, եր., 2015, էջ 435:
11. Սահակ Մովսիսյան (Բենսե), Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ. 3, եր., 1972:
12. Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, եր., 1986:
13. Գայանե Շագոյան, «Յոթ օր, յոթ գիշեր», հայոց հարսանիքի համայնապատկեր, եր., 2011:
14. Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, եր., 1978:
15. Երվանդ Տեր-Մկրտչյան, Վանեցոց հարսանիքը (կենցաղագրական պատկեր), ՀԱԲ, հ 1, եր., 1970:
16. Յ.Կ. Ճանիկեան, Հուպիոնք Ակնայ, Թիվլիս, 1895:

РИТУАЛЬНО–КУЛЬТОВЫЕ МОТИВЫ СВАДЕБНЫХ ПЕСЕН,
ИСПОЛНЯЮЩИХСЯ НА ПОРОГЕ ЖЕНИХА

НВАРД ВАРДАНЯН

ЕГУ, кафедра истории армянской литературы, кандидат филологических наук

Особое внимание уделено мотивам, в которых новобрачные характеризуются как восходящее солнце, в основе которых лежат древние представления о поклонения солнцу, а также восприятие новобрачных как саженцев, связанное с идеей нового роста свадебного дерева.

RITUAL–RELIGIOUS MOTIVES OF WEDDING SONGS–
SUNG AT THE GROOM'S THRESHOLD

NVARD VARDANYAN

*Yerevan State University, Assistant at the Chair of History of Armenian Literature,
Candidate of Philological Sciences*

The article investigates the ritual–religious motives of Armenian wedding songs sung at the groom's threshold. Particular attention is paid to the motives, in which the couple were described as the rising sun, is based on ancient ideas of sun worship. It also investigates the perception of the Bridal sapling associated with the idea of a new growth of the wedding tree.

КОМПАРАТИВНЫЙ АНАЛИЗ ПЕРЕВОДОВ ИРИНЫ СНЕГОВОЙ ПОЭЗИИ ВААГНА ДАВТЯНА

Данная статья посвящена переводческой деятельности И.Снеговой из поэзии известного армянского поэта XX века Ваагна Давтяна.

Целью исследования является проведение сопоставительного анализа переводов с их оригиналами для выявления их качества и соответствия. Из проведенного анализа следует, что Снеговой удалось верно передать смысл, стиль оригиналов, раскрывая при этом поэтическую индивидуальность армянского поэта русскоязычным читателям.

Новизна статьи заключается в том, что в ней впервые исследуются переводы И. Снеговой из поэзии В. Давтяна, послужившие еще одним шагом к укреплению и развитию русско-армянских литературных взаимосвязей.

Ключевые слова: поэзия; оригинал; вольный перевод; рифма; сопоставительный анализ; метафора; переводческое искусство.

Армянская литература с начала XX века была в центре пристального внимания выдающихся русских поэтов-переводчиков – В. Брюсова, А. Блока, О. Мандельштама, Б. Пастернака и других, которые с большим вдохновением переводили лучшие образцы армянской поэзии. Благодаря их многочисленным переводам, во второй половине XX века интерес русских поэтов-переводчиков к армянской ли-

тературе заметно возрос, объединив вокруг себя таких известных поэтов, как В. Звягинцева, И. Снегова, Е. Николаевская, А. Ахматова, Б. Ахмадулина, Д. Самойлов, Б. Слуцкий, Л. Озеров, Л. Левитанский, М. Дудин, П. Вегин, Ю. Мориц, М. Синельников и другие.

С середины шестидесятых годов XX века большой интерес к армянской поэзии проявила также поэтесса-переводчица Ирина Снегова (1922–1975), перу которой принадлежат переводы из поэзии Ов. Шираза, Паруйра Севака, Геворка Эмина, Маро Маркарян, Ваагна Давтяна.

Впервые к армянской поэзии Снегову приобщила ее наставница и преподаватель Института литературы имени М. Горького, поэтесса-переводчица Вера Клавдиевна Звягинцева, которая была большим знатоком и пропагандистом армянской поэзии.

Углубляясь в пласты армянской поэзии, раскрывая ее сущность, новизну и самобытность, И. Снегова не могла не оценить и оставить без должного внимания и поэзию Ваагна Давтяна, творчество которого раскрыло новую страницу в армянской литературе XX века.

Ваагн Давтян (1922–1996) – известный армянский поэт, переводчик, Заслуженный деятель культуры Армении.

Богат и своеобразен поэтический мир В. Давтяна. Его волнуют фило-

софские проблемы бытия. В поисках ответа на извечные вопросы жизни поэт пристально взглядывается в окружающий мир, раскрывая при этом взаимосвязь всего сущего на земле и связь их со Вселенной.

Поэзия В. Давтяна, отразившая в себе самые светлые, яркие краски жизни, стала излучать и распространять истинную красоту, дарующую людям свет и добро.

Характеризуя поэзию В. Давтяна, литературовед Л. Мкртчян писал: "В поэзии Давтяна много цвета и его очаровывающее обилие – от доброты поэта. За все заплачено добротой. И при некоторой высокой праздничности все доподлинно. Краски его лирики чистые и легкие. Он – поэт акварельный, ясный и таинственный, как таинственны самые простые вещи: камень, вода, свет. Кистью, как птица крылом, она слегка касается бумаги. Ему чужда твердость эпика. Он лирик-миниатюрист. Таков он, на мой взгляд, даже в поэмах". [5, с. 222]

Заметное место в творчестве Давтяна занимает также переводческая деятельность. Так, из русской литературы В. Давтяну удалось с предельной точностью воспроизвести на армянский язык лирику А. С. Пушкина и С. Есенина, приобщив к ней и армянских читателей.

Первый поэтический сборник В. Давтяна в переводе на русский вышел в свет в 1947 году, под названием "Первая любовь" [1]. В него вошли

переводы таких русских поэтов, как В. Звягинцева, М. Максимова, Е. Николаевская, И. Снегова и другие. В сборник вошли такие популярные стихотворения В. Давтяна, как "Песня Армении", "Седые камни", "Армянскому народу", "Пейзаж", "Мое сердце" и другие, которые были высоко оценены как русскоязычными читателями, так и литературной критикой. Впоследствии друг за другом на русском языке были изданы книги "Утро мира" (1950) [2], "Дорога через сердце" (1953, вторая редакция этой книги – 1960 г.) [3], "Лирика" (1956) [4], "Свет как хлеб" (1981) [5], "Сказание о любви" (1984) [6] и другие.

Среди многочисленных переводов из вышеперечисленных книг невозможно не оценить переводы И. Снеговой, которые под пером талантливой поэтессы нашли свое второе рождение на русском языке. Из наиболее удачных ее переводов выделим следующие: "Седые камни", "В поезде", "Садовник", "Кремлевские звезды", "Песня о доме", "Поэт", "Апрель".

Стихотворение "Поэт" В. Давтян посвятил памяти поэта В. Терьяна, который прожил "...с неистребимой нежностью мечты...". Перевод И. Снеговой и по смыслу, и по настроению близок к оригиналу, в котором грусть поэта одновременно переплетается с оптимизмом самого В. Давтяна, что, в свою очередь, придает ему особую эмоциональную окраску. На русском языке фрагмент перевода звучит так:

Подлинник: [10, р. 174]	Перевод И. Снеговой: [8, с. 119]
Դեռ չէր բախտել այդքան նրբին մի սիրտ,	Какое сердце нежностью сравнится,
Ու չէր եղել քնքշանքն այդքան անհուն,	Сравнится с этим сердцем глубиной?
Մալայն սառն էր աշխարհն, ու բախտը ըրիտ,	Жестокою была судьбы десница,

Եվ խենթ հողմն էր արդեն հասունանում:	Но нарастала буря за спиной.
Եվ նա զգաց, որ դա հողմն է միակ,	И понял он, что этой бури сила
Որը փրկի պիտի ծաղիկ ու տենչ,	Одна спасет и нежность, и цветы,
Որը փրկի պիտի սեր ու քնքշանք	Спасет наирских хижин камень милый,
Եվ նաիրյան երկրի խուղերը խեղճ:	Осуществит заветные мечты.
Ու երբ շանթն էր ձևում հող ու երկինք,	И в день, когда взыграла буря в мире
Ու երբ ցասման ահեղ ալիքն ելավ,	И гнев народа жарко закипел,
Նա իր քնքուշ սրտով նետվեց մրրիկ՝	Он, позабыв о сладкострунной лире,
«Ցնծուն ու խենթ, որպես մրրկահավ»...	Стал буревестником великих дел...

Из сопоставительного анализа перевода с подлинником видно, что перевод выполнен несколько вольно и это особенно ощущается в третьем столбце подлинника. Однако вольности, допущенные в переводе, не исказили смысл подлинника, а способствовали более верной передаче его смысла.

Перевод, как и оригинал, выполнен перекрестной рифмовкой **абаб**, благодаря чему он звучит так же выразительно и лирично.

Снеговой также в переводе удалось с мастерством воспроизвести сравнения, метафоры подлинника, которые по своему смыслу не уступают подлиннику. Сравним:

Подлинник: դեռ չէր բախել այդքան նրբին մի սիրտ; և խենթ հողմն էր արդեն հասունանում; որը փրկի պիտի սեր ու քնքշանք; և նաիրյան երկրի խուղերը խեղճ и другие.

Перевод: какое сердце нежностью сравнится; но нарастала буря за спиной; спасет наирских хижин камень милый, осуществит заветные мечты и другие.

Перевод, несомненно, удался Снеговой, верно передавшей личное отношение Давтяна к судьбе армянского поэта В. Терьяна, что особенно ощущается в следующих строках:

Он, позабыв о сладкострунной лире,
Стал буревестником великих дел...

Андрей Белый, в свое время, указывая на сложность переводческого искусства, писал: “Идеальный переводчик должен четко вибрировать на все особенности языка: в сущности каждый перевод должен быть суммой переводов смыслового, корневого, фонетического, ритмического; идеальный перевод есть перевод переводов, и потому—то подчас он труднее самого созидания вещи; переводчик есть сотворец, он, обладая всеми свойствами поэта, кроме того должен обладать всеми свойствами аналитика. И потому—то не все поэты суть талантливые переводчики, а только некоторые из них.” [9, с.54]

Переводческой удачей Снеговой можно признать также перевод стихотворения “Седые камни”, которое целиком пронизано оптимизмом В. Давтяна. В стихотворении поэт воссоздал колорит древней Армении, образ армянского мастера, изображающего на тысячелетних скалах гроздь винограда как символ мира и вечной красоты, передавая при этом свое мастерство из поколения в поколение. В переводе И. Снеговой патристические чувства армянского поэта воссозданы с большим гражданским пафосом. Фрагмент перевода звучит так:

Подлинник: [10, p. 190]	Перевод И. Снеговой: [4, с. 20]
Մի հին ավերակ, մանապատ քարեր,	Седые камни, древние руины
Շքեղ խոյակներ՝ տապալված գետին,	Хранят следы искусного резца, –
Նայում ու փառք են տալիս արդարև,	Смотрю я на замшелые картины
Նրա անանուն, անհայտ վարպետին:	И славлю их безвестного творца.
Նրան, որ այս ժեռ քարերի վրա	Тот мастер, что трудился здесь когда-то
Քանդակել է լոկ ողկույզներ ու նուռ,	Над глыбами тысячелетних скал,
Որ եղնիկներ է քանդակել չքնաղ,	Изображал лишь гроздь винограда
Սակայն ոչ երբեք նիզակներ ու սուր:	И никогда копыя не высекал.
Ով նիզակով է եկել մեզ վրա՝	А кто с копьем и грубой силой
Մեր կոթողները փշրել հանձարեղ,	Те памятники злобно разрушал,
Խլել մեր ձեռքից մուրճը շինարար,	Кто выбивал из наших рук зубила, –
Վաղուց փոշի է աշխարհում դատել:	Давным–давно летучей пылью стал.
Իսկ այն անանուն, անհայտ վարպետի	И, в мастерстве себе не зная равных,
Թոռների թոռը հիացրով անհուն	Вновь виноград и голубей полет
Ողկույզ ու նուռ է քանդակել կրկին	Неведомого мастера праправнук
Այստեղ՝ նորակերտ իմ երևանում: (1950)	На стройках вдохновенно создает.

Перевод, как и подлинник, состоит из четырех четверостиший, выполненных перекрестной рифмовкой: **абаб** с точной рифмой, где гласные и согласные звуки, входящие в созвучные окончания стихов, в основном, совпадают. Сравним:

подлинник: քարեր – արդարև, գետին – վարպետին, նուռ – սուր, հանձարեղ – դատել и др.

перевод: руины – картины, резца – творца, когда-то – винограда, скал – высекал, разрушал – стал и др.

Снегова также воссоздала образ трудолюбивого мастера, высекающего на камнях гроздь винограда, не упустив также деталь, указывающую на его миролюбие. С большим усердием Снегова передала и те строфы подлинника,

где поэт дал собирательный образ врага, разрушающего храмы, от которого, со временем, осталась одна лишь пыль. Это видно из третьей и четвертой строф. Однако в переводе не отражены такие символизирующие Армению образы, как **նուռ, եղնիկներ, նորակերպ երևան**.

Перевод Снеговой не уступает подлиннику также богатством своего поэтического языка, где благодаря многочисленным сравнениям стихотворение обрело ярко эмоциональную окраску. Сравним:

подлинник: մանապատ քարեր, կոթողները հանձարեղ, հիացրով անհուն и др.

перевод: седые камни, древние руины, искусного резца, замшелые кар-

тины и др.

В переводе, как и в подлиннике, ощущается настроение поэта, его оптимизм, который ярко отразился в заключительных трех стихах. На русском языке эти строки не уступают подлиннику. Из перевода следует, что Снегова блестяще передала психологию армянина, его трудолюбие и упорство, благодаря которым он не одно столетие смог выжить и победить своих врагов.

Для перевода Снеговой актуально высказывание К. Чуковского, который справедливо отмечал, что как актер выбирает роль соответственно со своим амплуа, так и переводчик должен выбирать оригинал для перевода. Об этом он писал: “Прежде чем взяться за перевод какого-нибудь иностранного автора, переводчик должен точно установить для себя стиль этого автора, систему его образов и ритмику.

Он должен возможно чаще читать этого автора вслух для того, чтобы уловить темп и каданс его речи, столь существенные не только в стихах, но и в художественной прозе”. [9, с. 57]

Из вышерассмотренных переводов можно заключить, что поэзия В. Давтяна была близка Снеговой по смыслу, стилю, духу, темпераменту, что и позволило переводчице воспроизвести поэтические образы, музыку и ритмику стихотворений армянского поэта.

К стихотворению “*Седые камни*” соотнесем высказывание современника В. Давтяна, выдающегося литовского поэта Э. Межелайтиса, который писал: “Мне кажется, что свои стихи Ваагн Давтян гравировал так ювелирно, филигранно, старательно и изобретательно, как старые армянские камнерезы украшали хачкары. В его поэтической технике я угадываю могучее влияние мастеров старинной армянской школы резьбы по камню. Его поэтическую технику я назвал бы хачкарной техникой.

И еще я вижу в его поэзии цвета знаменитого туфа. Розового, желтоватого, рыжевато-серого, голубого. Ваагн Давтян впитал в себя все, что можно впитать на земле Армении – земле, богатой ландшафтом, историей, архитектурой, красками, ароматами. Его душа напоминает кувшин с вином – бродит молодое вино, переливается через глиняные края... Талант поэта доказывается упорным трудом. Ваагн Давтян доказал это”. [5, с. 21]

Благодаря переводам И. Снеговой и других русских переводчиков, русскоязычный читатель познал не только Армению, но и полюбил и воодушевился ее прекрасной поэзией. Ее переводы глубоко прочувствованы и достойно переведены на русский язык. Являясь образцами вольных переводов, они свидетельствуют о поэтическом вкусе и таланте поэтессы.

Высоко оценивая переводческое искусство русских поэтов-переводчиков, литературовед Л. Мкртчян писал: “Известно, что поэзию интеллектуальную переводить легче, нежели поэзию чувств, где многое значат “мелочи”, оттенки. “Есть речи – значенье / Темно и ничтожно, / Но им без волненья / Внимать невозможно” (Лермонтов). Такие вот стихи переводить очень трудно. Перевел бы и адекватно, и точно, а волнение (неизбежность волнения) пропадает, остается одно значение (логическое) без чуда поэзии. И ты уже стихам не веришь...

Переводчики Давтяна пересоздали его лирику пылкими, чистыми и глубокими стихами”. [7, с. 122]

Ярким подтверждением высказыванию Л. Мкртчяна могут послужить и переводы И. Снеговой, которые выделяются особой эмоциональной окраской, знаменуя собой образцы высокой поэзии.

ЛИТЕРАТУРА

1. Давтян В. Первая любовь. Москва: Советский писатель, 1947. 150 с.
2. Давтян В. Утро мира. Москва: Советский писатель, 1950. 170 с.
3. Давтян В. Дорога через сердце. Ереван: Армянское гос. издательство, 1953. 110 с.
4. Давтян В. Лирика. Ереван: Армянское гос. издательство, 1956. 91 с.
5. Давтян В. Свет как хлеб. Ереван: Советакан грох, 1981. 232 с.
6. Давтян В. Сказание о любви. Москва: Художественная литература, 1984. 342 с.
7. Мкртчян Л. Если бы в Вавилоне были переводчики. Ереван: Советакан грох, 1987. 437 с.
8. Снегова И. Как бы там ни было. Москва: Советский писатель, 1978. 151 с.
9. Чуковский К. Искусство перевода. Москва–Ленинград: ACADEMIA, 1936. 223 с.
10. Davtyan V. Amaraein amprop. Erevan. Sovetakan groh, 1964, 382 p.

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԻՐԻՆԱ ՍՆԵԳՈՎԱՅԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԶԱՐՈՒՀԻ ՀԱՅՐՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Մ. Աբեղյանի գրականության ինստիտուտի ավագ աշխատող*

Հոդվածը նվիրված է XX դարի հայ հայտնի բանաստեղծ Վահագն Դավթյանի պոեզիայի՝ Ի.Սնեգովայի կողմից կատարված թարգմանչական գործունեությանը:

Հետազոտության նպատակը հանդիսանում է թարգմանությունների համեմատական վերլուծությունը, բացահայտելով նրանց որակը և համապատասխանելիությունը բնօրինակից: Կատարված վերլուծությունից երևում է, որ Սնեգովային հաջողվել է լիարժեք ներկայացնել իմաստը, բնօրինակի ոճը, որը նպաստել է ռուսալեզու ընթերցողներին բացահայտելու հայ գրողի բանաստեղծական ինքնատիպությունը:

COMPARATIVE ANALYSIS OF THE TRANSLATIONS BY IRINA SNEGOVA IN VAHAGN DAVTYAN'S POETRY

ZARUHI HAYRYAN

*National Academy of Sciences of the RA
Institute of Literature after M. Abegyan,
Candidate of philological Sciences, Associate Professor,
Senior Research Assistant*

The article is devoted to translation activities of I.Snegova in the poetry of the famous Armenian poet of the twentieth century Vahagn Davtyan.

The aim of the research is a comparative analysis of the translations and the original, identifying their quality and relevance. The analysis shows, that Snegova totally managed to present the true meaning of the original style, which greatly contributed to discover the originality of the poetic writer by Russian-speaking readers.

**«ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ,
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ**

Ասացվածքները հնուց ի վեր համարվում են ազգային իմաստության, մարդկության փորձի, համընդհանուր պատկերների և լեզվական փոխաբերությունների գանձարան: Զուգադրվող երեք լեզուներում «ընտանիք» գերհասկացության արտահայտող դարձվածային միավորների վեր հանումը առավել համապարփակ պատկերացում է տալիս զուգադրվող լեզուների լեզվամշակույթների նմանությունների և տարբերությունների մասին:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ընտանիք, գերհասկացույթ, «բարեկամական հարաբերություններ» իմաստային դաշտ, դարձվածային միավորներ:

«Ցանկացած լեզվի բառամթերքը հարուստ է դարձվածներով, որոնք լեզվական ինքնատիպ և «քմահաճ» իրողություններ են և լեզվի ու խոսքի մշակույթի զարգացման կարևորագույն գործոն» (Գ. Եղիազարյան, 2007, 3):

Ասացվածքները հնուց ի վեր համարվում են ազգային իմաստության, մարդկության փորձի, համընդհանուր պատկերների և լեզվական փոխաբերությունների գանձարան: Արտացոլելով մարդկային պատկերացումները բարու և չարի, շրջակա միջավայրի, մարդկային հարաբերությունների վերաբերյալ՝ ասացվածքները «կենսականորեն իրենց մեջ համադրում են

ազգային հանրագիտական արժանիքները, պոետիկ գլուխգործոցները և իրենց նրբագեղության մեջ անկրկնելի հռետորական արվեստի պատկերները» (Յ. Թարլանով, 1999, 3):

Ասացվածքների բովանդակության մեջ հարուստ նյութ կա տվյալ ազգի կամ հանրության մշակույթի, ծեսերի, սովորությունների, վարքուբարքի, մտածելակերպի, աշխարհընկալման և այլ առանձնահատկությունների մասին (Ա. Мамонтов, 2002; Г. Николаева, 1995; Т. Орлянская, 2002; Г. Пермяков, 1970; Ю. Сорокин, 1988; М. Шолохов, 1957; R. Dorson, 1978; A. Taylor, 1985):

Ինչպես իրավացիորեն նշում է Գ. Պերմյակովը, մի կողմից՝ դրանք լեզվական երևույթներ են, նման սովորական դարձվածների, մյուս կողմից՝ տրամաբանական միավորներ են (դատողություններ կամ մտահանգումներ), մի երրորդ կողմից դիպուկ արտահայտված և հմտորեն հղկված գեղարվեստական մանրապատումներ, որոնք արտացոլում են կենդանի իրականության ամենատարբեր փաստերը (Г. Пермяков, 1970, 8):

Սույն հոդվածում անդրադարձ չի կատարվում ասացվածք-առած եզրերի տարանջատմանը, քանի որ լիովին համաձայն ենք Լ. Եզեկյանի հետ, որ առածները, ասացվածքները և թևավոր խոսքերը, իրենց ոճական երանավորումներով ու արտահայտչականությամբ, պետք է դասել դարձվածների

շարքին և դիտել իբրև դարձվածային արտահայտություններ, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն անբաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից (Լ. Եգեկյան, 2003: 188):

Սույն հոդվածում փորձել ենք համեմատել «ընտանիք» գերհասկացություն արտահայտող ասացվածքները զուգադրվող երեք լեզուներում, վեր հանել դրանց միջև եղած ընդհանրությունները և տարբերությունները, փորձել տալ գոյություն ունեցող տարբերությունների բացատրությունները:

«Ընտանիք» գերհասկացության ողջ տիրույթը ծածկելու նպատակով ասացվածքները բաժանվել են երեք իմաստային դաշտերի՝ բարեկամական, ամուսնական և ծնող-երեխա հարաբերություններ, որոնցից միայն «բարեկամական հարաբերություններ» իմաստային դաշտն արտահայտող դարձվածային միավորները (այսուհետ՝ ԴՄ) կներկայացվեն սույն հոդվածում:

Կատարված ուսումնասիրության արդիականությունն այն է, որ ժամանակակից աշխարհում տարբեր ազգերի ներկայացուցիչների շփումը չի սահմանափակվում միայն լեզուների իմացությամբ, անհրաժեշտ է նաև ազգային բնավորության, աշխարհընկալման և աշխարհայացքի իմացություն, որն էլ կապահովի միջմշակութային արդյունավետ հաղորդակցություն: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև իսպաներենում «ընտանիք» հասկացույթին նվիրված աշխատությունների ի սպառ բացակայությամբ, իսկ անգլերենում և հայերենում նշված հասկացույթի համակողմանի ուսումնասիրությունների ոչ բավարար քանակով, անգլերենում և զուգադրվող

երկու լեզուներում դարձվածային միավորների վերոգրյալ երեք իմաստային դաշտերի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունների բացակայությամբ:

Մեզ հասանելի գրականության շրջանում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում վեր է հանվել «Ընտանիք» գերհասկացության ողջ տիրույթը՝ երեք իմաստային դաշտերն արտահայտող 613 ասացվածք իսպաներենում, 231՝ անգլերենում և 165՝ հայերենում:

Ստացված արդյունքները ներկայացնում ենք ստորև.

ա. Անգլերենում, ինչպես նաև իսպաներենում, երբեմն ասացվածքների մեջ գործածվում է «friend/amigo» բառը համապատասխանաբար՝ ի տարբերություն հայերենի, որտեղ այն փոխարինվում է «բարեկամ» բառով: Մաբացատրվում է այն հանգամանքով, որ անգլերենի «friend» բառային միավորն իր իմաստների շարքում ունի «բարեկամ» («one's close relatives») իմաստը, որը թեև համարվում է հնացած, բայց, այդուհանդերձ, ունեցել է երբեմնի կիրառություն: Ավելին, հայերենի «բարեկամ» բառային միավորը է. Աղայանի *Արդի հայերենի բացառական բառարանի* համաձայն նշանակում է նաև «մտերիմ մարդ», իսկ Ա. Սուբիասյանի *Հայոց լեզվի հոմանիշների բառարանում* «բարեկամ» բառային միավորի հոմանիշային շարքում գետեղված առաջին միավորն «ընկեր» բառն է: Ուստի, անկախ բառային տարբեր միավորների կիրառության, կարող ենք փաստել, որ անգլերենն ու հայերենն այստեղ առավել նմանություններ են հանդես բերում, ինչը չի կարելի փաստել իսպաներենի մասին, որտեղ «amigo» բառային միավորն ունի միայն «ընկեր» իմաստը

Օրինակ՝

Անգլերեն	Հայերեն	Իսպաներեն
Eat and drink with your friends but do not trade with them.	Առևտուրը բարեկամություն չի սիրում:	Anda de parranda con tu amigo, pero no hagas negocio de compraventa con e' l; entra en negocios con el enemigo pero no banquetees con e' l.
Lend your money and loose your friend.	Մաքուր հաշիվը բարեկամությունը երկար կպահի:	–
–	Մի' ունեցիր հարյուր դահեկան, ունեցի՛ր երկու բարեկամ:	Ma' s valen amigos en la plaza, que dineros en arca. Ma' s vale amigo en apuro que dineros en el puño.
–	Բարեկամ կա սրտի, բարեկամ էլ կա փոքի:	Hay amigo de corazo' n y lo hay de panza.
–	Ուղտապանի բարեկամը պիտի բարձր դուռ ունենա:	La puerta de la casa del que tiene amigo camallero, sera' alta.

բ. Իսպաներենի գրեթե բոլոր ասացվածքների արտահայտած իմաստներն առկա են նաև հայերենում, բայց արտահայտված չեն դարձվածաբանական միավորներով կամ ասացվածքներով.

Cuando fui nuera, nunca tuve buena suegra, y cuando fui suegra nunca tuve nuera. – Չկան լավ սկեսուրներ և լավ հարսներ:

En cuanto fui nuera, nunca tuve buena suegra, cuando fui suegra nunca tuve buena nuera. – Հարսները բողոքում են սկեսուրներից, սկեսուրները հարսներից,

բայց երբ նույն հարսները սկեսուր են դառնում, մոռանում են, թե իրենք ինչ են զգացել ու նույնն անում են իրենց հարսների գլխին:

Quien compra al amigo o al pariente, compra caro y queda doliente. – Ընկեր կամ բարեկամ չես կարող գտնել:

Los parientes del rico son tan numerosos como granos de arroz en un arrozal. – Երբ հարուստ ես, բարեկամներդ շատ են:

Բերված շարքում հանդիպում են այնպիսի ասացվածքներ, որոնց իմաստները հասկանալի են ռուսերենի միջոցով.

El amigo, lo escojo yo, el pariente, no.	Родственников не выбирают.
--	----------------------------

գ. Իսպաներենում, ի տարբերություն հայերենի, սկեսուրների վերաբերյալ ասացվածքների թիվը 36-ն է, անգլերենում 3, մինչդեռ հայերենում դրանք ընդհանրապես չկան: Իսպաներենի գրեթե բոլոր ասացվածքները հումորային երանգ ունեն, որը վկայում է այն մասին, որ իսպանական լեզվամշակույթում սկեսուր-հարս հարաբերությունները «պայթյունավտանգ» չեն: Հայերենում սկեսուրների մասին ասացվածքների

բացակայությունը և զոքանչների մասին ասացվածքների գոյությունը, ըստ մեզ, նախ վկայում է հայ հասարակության տղամարդակենտրոն լինելու, ապա՝ ռուսական լեզվամշակույթի ազդեցության մասին.

Իսպաներեն

Acuérdate, nuera, de que también serás suegra. (Acuérdate, nuera, que serás suegra.)
A las suegras, oírlas la misa y sacarles el

cuerpo.

A la suegra hay que sufrirla, como a la muela picada.

Allá vayas, casada, donde no halles suegra ni cuñada.

Aquella es bien casada, que no tiene suegra ni cuñada.

Barre la nuera, lo que ve la suegra.

Bien me quiere mi suegra, si de mi mal no se alegra.

Cuando fui nuera, nunca tuve buena suegra, y cuando fui suegra nunca tuve nuera.

Cuñada y suegra, ni de barro buenas.

Ջոբանջներ շատ անգամ կը մոռնան թե ժամանակին իրենք ալ գոբանջ ունէին:

¹. «Բարեկամական հարաբերություններ» արտահայտող իմաստային դաշտին պատկանող ասացվածքների հոմանիշային շարքեր հանդիպում են միայն իսպաներենում: Հոմանիշների առկայությունը վկայում է տվյալ հասկացությունների և դրանց արտահայտած իմաստների կարևորության մասին:

Ասացվածք	Հոմանիշային շարք	
A casa de tu hermana, una vez a la semana.	A casa de tu hermano no irás cada verano.	A casa de tu hermano no vayas de ordinario, y menos si es casado.

ե. Զուգադրվող լեզուներում ասացվածքների համարժեքների համընկնման պատկերն այսպիսին է.

Անգլերեն	Իսպաներեն
Visit your aunt, but not every day of the year.	A casa de tu tía, entrada por salida. A casa de tu tía, más no cada día
Happy is she who marries the son of a dead mother. She is well-married, who has neither mother-in-law nor sister-in-law by her husband.	Aquella es bien casada, que no tiene suegra ni cuñada.
The mother-in-law remembers not that she was a daughter-in-law.	Acuérdate, suegra, que fuiste nuera.

Անգլերեն	Հայերեն
A friend's frown is better than a foe's smile.	Ավելի լավ է բարեկամի լացացնի, քան թշնամիի ծիծաղեցնի:
Don't teach your grandma to such eggs.	Տատիկիդ ձու ուտել մի' սովորեցրու:
Eat and drink with your friends but do not trade with them. Lend your money and loose your friend.	Առևտուրը բարեկամություն չի սիրում: Մաքուր հաշիվը բարեկամությունը երկար կպահի: Ազգականների հետ կեր ու խմիր, բայց առևտուր մի արա: Եղբայրը եղբորն ասաց. «Առաջ հաշիվդ տես, հետո աչքիս լույսն ես»: Եթե բարեկամի փող տաս, թե փողդ կկորցնես, թե բարեկամիդ:
False friends are worsen than open enemies.	Կեղծ բարեկամները բացահայտ թշնամիներից վտանգավոր են:

Հայերեն	Իսպաներեն
Զորանշները շատ անգամ կմոռանան, թե ժամանակին իրենք ալ գոքանչ ունեին:	Acuérdate, suegra, que fuiste nuera.
Նեղ անցքի մեջ ո՛չ եղբայր կա, ո՛չ բարեկամ: Մեռածը և կորսվածը բարեկամ չի ունենա:	Al que es pobre todos sus parientes le despreciarán; si es rico, todos son sus parientes.
Լավ հարևանը լավ բարեկամից լավ է:	¿Quién es tu hermano? El vecino más cercano. Más vale buen vecino que pariente ni primo.

Հատկանշական է, որ հայերենի և իսպաներենի համընկնման դեպքերի մեծամասնությունը հումորային ասացվածքներն են: Ինչպես արդեն վերը նշել ենք, այս երևույթը շատ բնորոշ է իսպա-

նական լեզվամշակույթին:

գ. Անգլերենում և զուգադրվող երկու լեզուներում առկա է հարևաններին վերաբերող մի ասացվածք.

Անգլերեն	Հայերեն	Իսպաներեն
Better wed over the mix-en than over the moor.	Ճիպոտդ քուլիցդ կտրի՛ր:	A la hija de tu vecino, límpiale el moco y cájala con tu hijo. Con buen vecino, casarás tu hija y venderás tu vino.

է. «Բարեկամական հարաբերություններն» արտահայտող ընդամենը մեկ մշակութային ենք գտել անգլերենում: Դրանց իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթ լինել անգլիական մշակույթին, վարքուբարքին, առասպելներին և բա-նահյուսությանը: Իսպաներենում գտել ենք ընդամենը երեք մշակութային.

1. From clogs to clogs in only three generation. – «clog»- ը փայտյա հաստ տակացու ունեցող կոշիկի տեսակ էր, որը հագնում էին գործարանների աշխատակիցները Անգլիայի հյուսիսում: Ասացվածքն ակնարկում է, որ ինչքան էլ հարուստ դառնա աղքատ մարդը, միևնույն է նրա ծոռները ետ են վերադառնալու աղքատությանը՝ կրկին կրելով փայտե տակացու ունեցող կոշիկներ:

Ընդհանրացնելով կարող ենք փաս-

տել, որ «Բարեկամական հարաբերություններն» արտահայտող իմաստային դաշտն անգլերենում ներկայացված է 8, հայերենում՝ 44, իսկ իսպաներենում 113 ԴՄ-ներով: Հայրենում այս իմաստային դաշտը քանակապես ամենաշատն է, մինչդեռ անգլերենում և իսպաներենում «Բարեկամական հարաբերություններ» իմաստային դաշտը քանակապես ամենասակավն է, որը թերևս, կրկին վկայում է անգլիական և իսպանական ընտանիքների միջուկային լինելու մասին:

Վերոգրյալից գատ կարող ենք փաստել, որ որ մեզ հասանելի գրականության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ իսպաներենի գրեթե բոլոր ասացվածքների արտահայտած իմաստներն առկա են նաև հայերենում, բայց արտահայտված չեն

դարձվածաբանական միավորներով կամ ասացվածքներով: Այս համատեքստում հաճախ հանդիպում ենք այնպիսի ասացվածքների, որոնց իմաստները մեզ համար հասկանալի են, քանի որ դրանք առկա են ռուսերենում:

Անգլերենում հայտնաբերվել է մեկը, որի իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթ լինել անգլիական մշակույթին, վարքուբարքին, առասպելներիին և բանահյուսությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս.Մ. Ավագյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Արճակ, Հայկական ԱԱՀ, Գիտությունների ակադեմիա, Երևան, 1978:
2. Ռ. Գրիգորյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Գեղարքունիք, Հայկական ԱԱՀ, Գիտությունների ակադեմիա, Երևան, 1983:
3. Լ.Կ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն /Ուսումնական ձեռնարկ/, Երևան, Երևանի պետ. համալս. հրատ., 2003, էջ 188:
4. Գ. Եղիազարյան, Մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածները հայերենում և անգլերենում (զուգահեռական–տիպաբանական քննություն): Եր., 2007, 168 էջ:
5. Վ. Ս. Թեմուրձյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Գամիրքի հայերը (պատմա–ազգագրական ուսումնասիրություն), Հայկական ԱԱՀ, Գիտությունների ակադեմիա, Երևան, 1970:
6. Է. Խեմչյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Տավուշ, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2000, Երևան:
7. Ռ. Խաչարյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Թալին, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., Երևան, 1999:
8. Է. Խեմչյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Իջևան, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2008, Երևան:
9. Ա. Ղանալանյան, Առածանի, ԳԱ հրատ., Երևան, 1960:
10. Ա. Ղալիյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Արցախ, Հայկական ԱԱՀ, Գիտությունների ակադեմիա, Երևան, 1983:
11. Գ.Հ. Միքայելյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նոր Բայազետ, Հայկական ԱԱՀ, Գիտությունների ակադեմիա, Երևան, 1980:
12. Վ. Պետրոսյան, Սասնա Ազգագրություն, Հայկական ԱԱՀ Գիտությունների ակադեմիա, Երևան, 1965:
13. Ս. Սեֆերյան, Հովհաննիսյան Լ., Լազարյան Ա., Անգլերեն–հայերեն դարձվածաբանական բառարան, կազմ. ԵՀՀ, Երևան, 1986:
14. Ս. Սեֆերյան, Լազարյան Ա., «Իմաստախոս ժողովուրդ» (Հայերեն–անգլերեն ասացվածքներ և բառակապակցություններ), Արեգ հրատ., Երևան 2003:
15. Վ. Սվալլյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Միսսա Լեռ, Հայկական ԱԱՀ, Գիտությունների ակադեմիա, Երևան, 1984:
16. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, ԵՀՀ, Երևան, 1975:
17. Խ.Ս. Փորքեյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նոր Նախիջևանի հայ ժողովրդի բանահյուսություն, Հայկական ԱԱՀ, Գիտությունների ակադեմիա, Երևան, 1971:
18. Ա.Ա. Օդաբաշյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն: Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում (Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից), Հայկական ԱԱՀ, Գիտությունների ակադեմիա, Երևան, 1978:
19. A. Cowie & L. Machin, Oxford Dictionary of Current Idiomatic English. Oxford Univ. Press, 1975.
20. A. Johnson, Common English Sayings. Indiana Press. 1958.
21. A. Margullis, Russian–Englisj Dictionary of Proverbs and Sayings. McFarland, 2008.
22. A Comprehensive Dictionary of Idioms, English–Armenian, by M.G.K., Cairo, 1969.
23. F. P. Wilson, The Oxford Dictionary of English Proverbs. Oxford University Press, USA. 1970.
24. Hodder & Stoughton. A Concise Dictionary of English Idioms, London, Sydney, Auckland, 1993.
25. I. Gvardzaladze and others. 500 English Proverbs and Sayings, Moscow, 1966.
26. I. Simpson, The Concise Oxford Dictionary of Proverbs, Oxford University Press, 1985.
27. J. Simpson, A Dictionary of Proverbs. Oxford University Press, USA. 2009.
28. J. Speake, Oxford Dictionary of Proverbs, 4th edition, Oxford University Press, 2004.

29. J. Stansley, St. Clair, Most Comprehensive Origins of Cliches, Proverbs and Figurative Expressions (Kindle Edition), 2013.
30. Rosalind Fergusson, Dictionary of Proverbs, 2nd edition, Penguin Reference, 2000.
31. S. Kuskovskaya, English Proverbs and Sayings, Vysheshaya Shkola Publishers, Minsk, 1987.
32. Th. Preston, A Dictionary of English Proverbs: Proverbial Phrases with a Copious Index of Principal Words. CreateSpace Independent Publishing Platform, 2013.
33. V. Collins, A Book of English Idioms, Indiana Press, 1975.
34. Aguirre Prado, Antologıa de ancdotas, Barcelona, Editorial Labor, 1967.
35. Barros Alonso, Libro de los proverbios morales, Madrid, Ediciones Ibıricas, 1992.
36. Bergua Juan B., Refranero Espaol, Madrid, Ediciones Ibıricas, 1992.
37. Buitrago J., Alberto, Diccionario de dichos y frases hechas, Madrid, Editorial Espasa Calpe, 1995.
38. Campos G., Juana y Barella, Ana. Diccionario de Refranes, Madrid, Ediciones Espasa Calpe, 1993.
39. Casares, Julio, Diccionario ideolggico de la lengua espaola, Barcelona, Editorial Gustavo Gili, 1942.
40. Collins J., A Dictionary of Spanish Proverbs. Ulan Press. 2012.
41. Covarrubias, Sebastian de, Tesorro de la lengua Castellana, Barcelona, Editorial Alta Fulla, 1989.
42. Flonta T., A Dictionary of English and Spanish Equivalent Proverbs (Kindle Edition). Publisher: De-Proverbio.com. 2011.
43. Junceda L., Diccionario de refranes, dichos y proverbios. Madrid, Editorial Espasa Calpe, S.A., 2006.
44. Martınez K., Luis: Refranero general ideolggico espaol, Madrid, Editorial Hernando, 1978.
45. Mertvago P., Dictionary of 1000 Spanish Proverbs: with English Equivalents. Hippocrene Books. 1995.
46. The Big Red Book of Spanish Idioms. Mc-Graw-Hill. 2004.
47. Salomgn, Proverbios, Madrid, Antonio Romnn, 1961.
48. Кусковская С., Русские пословицы и поговорки с соответствиями в английском языке, Высшая школа, Минск, 1992.
49. Пермяков Г. Л. От поговорки до сказки (Заметки по общей теории клише) / М.: Наука, 1970, 175 с.

ИДИОМАТИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ СЕМАНТИЧЕСКОГО ПОЛЯ “РОДСТВЕННЫЕ ОТНОШЕНИЯ” В АНГЛИЙСКОМ, АРМЯНСКОМ И ИСПАНСКОМ

ЗРУИ СОГОМОНЯН

*Французский университет в Армении
звдующая кафедрой иностранных языков,
кандидат филологических наук*

С древних времен пословицы считаются сокровищницей национальной мудрости, человеческого опыта, общих образов и языковых отношений. В сопоставительных трех языках выявление пословиц и поговорок дает более обобщенное представление о сходствах и различиях гиперконцепта “семья” в английской, армянской и испанской лингвокультурах.

IDIOMATIC UNITS OF THE SEMANTIC FIELD “FAMILY RELATIONSHIP” IN ENGLISH, ARMENIAN AND SPANISH

ZARUHI SOGHOMONYAN

*French University in Armenia
Head of the Chair of Foreign Languages, Candidate of philological sciences*

Proverbs have always been considered as a treasury of national wisdom, human experience, universal images and linguistic relations. Revealing idiomatic units of the hyper-concept “family” in three languages under study will allow drawing a holistic picture of similarities and differences of linguacultures to be compared.

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ (ՀՆԼ) ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԵՆԹԱԼԵԶՎԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հոդվածում քննության է առնվում հատուկ նպատակներով անգլերեն (ՀՆԱ) իրավագիտական լեզվի ուսուցման մի քանի հարցեր: Վերլուծվում են ՀՆԱ-ի մի քանի հիմնական սահմանումներ՝ հատկապես հայկական կրթական տարածության համատեքստում: Էականն այդ վերլուծության մեջ այն է, որ ՀՆԱ-ի կրթական ծրագրերի, դասագրքերի և այլ ռեսուրսների պատրաստումը պետք է սկսել թիրախ խմբերում ուսումնառողների առանձնահատուկ կարիքների վերլուծությունից: Այդ վերլուծությանը հենվում է Հալիդեյի (և այլոց) «Լեզվաբանական գիտությունը և լեզուն» աշխատանքի վրա: Հետևությունն այն է, որ իրավաբանական խոսույթի պրակտիկան տեքստի և սոցիալական գործունեության միջև հանդես եկող յուրահատուկ միջնորդ է:

Հոդվածում առանձնացվում է իրավաբանական անգլերենին բնորոշ ինը գիծ՝ բառային մակարդակում և տասնմեկ գիծ՝ շարահյուսական մակարդակում: Բերվում են նաև այդ բնորոշ գծերը մեկնաբանող համապատասխան օրինակներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հատուկ նպատակների անգլերեն լեզու, կարիքների վերլուծություն, խոսույթի վերլուծություն, իրավունքի լեզու, իրավաբանական խոսույթի տիպ:

20-րդ դարի երկրորդ կեսից լայն տարածում գտավ «հատուկ նպատակների լեզու» (անգլերեն՝ LSP – Language for Specific Purposes) հաս-

կացություն-ձևույթը: Առանձնապես որպես կիրառական լեզվաբանության մի ճյուղ՝ ՀՆԼ-ն դարձավ առանձին գիտություն՝ իր առարկայով, սեփական մեթոդաբանությամբ և ուսուցման յուրահատուկ մեթոդներով:

Պատմական առումով ՀՆԼ-ի առանձին տարրեր կարելի է գտնել արդեն Հին Հունաստանում և Հռոմեական կայսրության մեջ: 1960-ականներին ՀՆԼ-ն դարձավ «անգլերենը որպես երկրորդ (օտար) լեզու» ուսուցանելու նորարարական շարժում, իսկ 1970-ականներից արմատավորվեց Եվրոպայի գերմանախոս երկրների լեզվադիդակտիկայի մեջ: Նշելով միասնական գերմաներեն լեզվի հնչյունաբանական, ուղղագրական և բառակազմական առանձնահատկությունները Ավստրիայի, Բելգիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի տարածքում՝ տերմինաբանության բնագավառում աշխատող գիտնականներն անհրաժեշտ համարեցին պահպանել գերմաներեն լեզվի միասնությունը՝ առնվազն հատուկ գիտելիքների ոլորտում:

ՀՆԼ-ն մոտ է հայերենում (և ռուսերենում) օգտագործվող ենթալեզու հասկացությանը. «ՀՆԼ-ն կարելի է համարել ենթալեզվի մի տեսակ, որը հարմարեցված է գիտության և տեխնիկայի բնագավառում հատուկ հաղորդակցության համար» [1, էջ 64]: ՀՆԼ-ն կարելի է դիտարկել որպես հատուկ նպատակների, օրինակ՝ բիզնեսի, իրավաբանության, բժշկության, տուրիզմի, տեխնիկայի և այլնի հա-

մար ստեղծված ենթալեզու: Իհարկե, «ենթալեզու» ձևույթը պայմանական է. «այն հիմնականում տերմինաբանական և քերականական միջոցների մի համակարգ է, որը բնորոշ է գիտության, տեխնիկայի և արտադրության հետ առնչվող լեզվին» [2, էջեր 18–19]:

Ֆունկցիոնալ լեզվաբանության տեսակետից ՀՆԱ-ն ֆունկցիոնալ լեզու է՝ լեզու հատուկ գործառնությունների համար և տվյալ ազգային լեզվի ենթալեզու: ՀՆԱ-ն մոնոֆունկցիոնալ է՝ ի տարբերություն ազգային լեզվի, որը բազմաֆունկցիոնալ է:

Հետագա շարադրանքը կտարվի «անգլերենը հատուկ նպատակների համար» (ESP–English for Specific Purposes) համատեքստում:

Հատուկ նպատակներով անգլերենի (ՀՆԱ) ուսուցումն առաջացել է որպես նշանակալից շարժում անգլերեն լեզվի ուսուցման ոլորտում [3]: Գրականության մեջ ՀՆԱ-ի ամենաշատ հղվող սահմանումները ներկայացված են Հաթչինսոնի և Ուոթերսի, Սթրիվենսի, Ռոբինսոնի և Դյուդլի-Իվանսի ու Սթ. Ջոնի կողմից:

Բերենք մի հատված Սթրիվենսի սահմանումից՝ նկատելով, որ դրանում նա առանձնացնում է ՀՆԱ-ի չորս բացարձակ և երկու փոփոխական բաղադրիչ:

Բացարձակ բնութագրիչներ

ՀՆԱ-ն անգլերեն լեզվի այնպիսի ուսուցում է, որ՝

- Նախատեսված է ուսումնառողների հատուկ կարիքների համար,
- Էապես առնչվում է որոշակի դիսցիպլինի, մասնագիտության և գործունեության բովանդակության հետ,
- Ուղղորդված է համապատասխան գործունեությանը նպատակահարմար լեզվին՝ շարահյուսության, բառակազմության, իմաստաբանության և խոսույթի (ինչպես նաև այդ

խոսույթի վերլուծության) առումով:

Փոփոխական բնութագրիչներ

ՀՆԱ-ն կարող է (բայց ոչ անհրաժեշտաբար)՝

- Սահմանափակվել լեզվական մեկ (կամ մի քանի) կարողությունների (օրինակ՝ կարդալու) ուսուցմամբ,
- Լինել քիչ աշխատատար, քան ընդհանուր անգլերենը,
- Լինել քիչ ժամանակատար,
- Լինել արդյունավետ՝ ուսումնառողին ուսուցանելու տեսակետից [4, էջ 2]:

Բերենք նաև Դյուդլի-Էվանսի սահմանումը, որում նույնպես առանձնացվում են բացարձակ և փոփոխական բնութագրիչներ.

- ՀՆԱ-ն կարող է նախագծվել հատուկ դիսցիպլինների համար,
- ՀՆԱ-ն կարող է գործածվել ուսուցման որոշակի իրադրության մեջ, ընդամին կիրառելով ընդհանուր անգլերենի ուսուցման մեթոդներից տարբեր մեթոդներ,
- ՀՆԱ-ն ավելի շատ նախատեսված է չափահասների կամ բուհերի ուսանողների համար, չնայած կարող է գործածվել նաև հիմնական և ավագ դպրոցում,
- ՀՆԱ-ն նախագծվում է միջին կամ բարձր գիտելիքներով ուսումնառողների համար,
- ՀՆԱ շատ դասընթացներ նախատեսված են որոշակի հենքային գիտելիքներ ունեցող ուսումնառողների համար, չնայած դրանից կարող են օգտվել նաև սկսնակները [5, էջեր 4–5]:

Ռոբինսոնը, ինչպես նաև Հաթչինսոնը, դիտարկում են կարիքների գնահատման անհրաժեշտությունը: Ռոբինսոնը պնդում է, որ ՀՆԱ-ն «սովորաբար նպատակաուղղված» է, իսկ ՀՆԱ դասընթացները մշակվում են՝ սկսելով կարիքների գնահատումից, որի նպատակն է «հնարավորինս հստակեցնել, թե ուսանողները կոնկ-

րետ ինչ պետք է անեն անգլերեն ուսումնառելու միջոցով» [6, էջ 3]: Բացի հիմնական չափանիշներից, Ռոբինսոնը ընդգծում է, որ ՀՆԱ-ն ունի որոշակի առանձնահատկություններ. ՀՆԱ դասընթացներն ունեն սահմանափակ ժամանակահատված, ուսանողները չափահասներ են և ընդգրկված են ըստ մասնագիտական հետաքրքրությունների խմբերում:

Սթրիվենսի և Ռոբինսոնի սահմանումները բնորոշվում են հետևյալ կերպ. յուրաքանչյուր սահմանում ունի իր հիմնավորվածությունը, բայց ունի նաև թույլ կողմեր՝ կամ սահմանման, կամ նկարագրված առանձնահատկությունների առումով: Սթրիվենսի սահմանումն ամենաընդգրկունն է, բայց կարող է առաջացնել որոշակի տարրնթերցում: Բովանդակության վրա հղումը երկրորդ բացարձակ առանձնահատկության մեջ կարող է ամրապնդել շատ դասավանդողների այն կեղծ տպավորությունը, որ ՀՆԱ-ն միշտ և անհրաժեշտաբար ուղղակիորեն առնչվում է թեմայի բովանդակությանը: Ռոբինսոնի միատարր խմբեր հասկացության հիշատակումը որպես ՀՆԱ-ի առանձնահատկությունը նույնպես կարող է հանգեցնել միևնույն եզրակացության [5, էջեր 3-4]:

Վերոնշյալ սահմանումներից կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ն հաշվի է առնում ուսումնառողների առանձնահատուկ կարիքները, նույնականացնում է կոնկրետ լեզվաբանական և խոսույթի բնորոշ գծեր և տրամադրում է վերապատրաստման դասընթացներ, որտեղ ուսումնառողները կարող են համապատասխանաբար գործել կոնկրետ ակադեմիական և մասնագիտական միջավայրում: Հետևաբար, կարիքների վերլուծությունը և լեզվի նկարագրությունը կարևոր են, քանի որ ՀՆԱ դասընթացները և նյութերը հիմնված են այս երկու բաղադրիչների վրա:

ՀՆԱ-ի առաջացման և հետագա զարգացման պատճառներից մեկն այն էր, որ անգլերենին անհրաժեշտ էր դիմակայել «Նոր աշխարհի» մարտահրավերներին: «Նոր աշխարհ»-ը սկզբնավորվել է 1940ականների կեսից (Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին) և շարունակվում է մինչ այժմ: Գիտության և տեխնոլոգիայի վերջին նվաճումները հասանելի դարձնելու համար մեծ թվով ոչ լեզվակիրներ սովորում են անգլերեն, քանի որ Երկրորդ աշխարհամարտից հետո հետազոտության մեծամասնությունն իրականացվել է անգլախոս երկրներում:

ՀՆԱ-ի առաջացման և զարգացման երկրորդ գործոնը, ինչպես նշում են Հաթչինսոնը և Ուոթերսը, «Լեզվաբանության հեղափոխություն» է: Այս հեղափոխությունը տեղի ունեցավ, երբ բրիտանացի երեք լեզվաբան հրատարակեցին շրջադարձային աշխատանք՝ «Լեզվաբանական գիտությունները և լեզուն» խորագրով [7]:

Ի հակադրություն տեսաբան լեզվաբանների, որոնք ավանդաբար լեզուն դիտարկում են որպես վերացական համակարգ, կիրառաբան լեզվաբանները սկսեցին դիտարկել այն որպես հաղորդակցման աղբյուր և պաշար, որն ունի զանազան կիրառություններ՝ համաձայն այն համատեքստի կամ իրավիճակի, որտեղ առաջանում է: Այս նպատակով լեզվի դասավանդման բարդությունն այն էր, որ ուսումնառողները, ովքեր լեզուն տիրապետում էին որպես վերացական համակարգ (ինչպես աուդիովիզուալ համակարգով ուսումնառողների դեպքում), որն անգլերեն լեզվի ուսուցման գերիշխող մոտեցումն էր 1960ականներին (մասնավորապես Հյուսիսային Ամերիկայում), քանի որ նրանք պատրաստ չէին լինի հաղորդակցվել կոնկրետ իրավիճակներում, որոնցում հավանաբար կհայտնվեին,

եթե ցանկանային կիրառել լեզուն: Անհրաժեշտ էր լեզվի դասավանդման այնպիսի մոտեցում, որը հիմնված կլիներ լեզվի նկարագրությունների վրա, ինչպես այն կիրառվում էր կոնկրետ իրավիճակներում [8, էջ 8]:

1964թ. բրիտանացի երեք լեզվաբանի կողմից ներդրված լեզվաբանական վերլուծության տեսակը հայտնի է որպես ռձի ռեգիստրի վերլուծություն:

Լեզվի նկարագրությունները հաճախ բաժանվում են մի շարք կատեգորիաների, որոնք ունեն ուսումնառության սեփական կոնկրետ սկզբունքները, հասկացությունները և նպատակները [9, էջ 25]: ՀՆԱ-ի համատեքստում, հնարավոր է նույնականացնել լեզվի նկարագրության մի շարք փուլեր [8, էջ 14], որոնցից առաջինը կարող է լինել ռձի ռեգիստրի վերլուծությունը:

Ռձի ռեգիստրի վերլուծությունը տեքստային ուսումնասիրություն է, որի նպատակն է որոշել տեքստի տեսակը: Վերլուծությունն իրականացվում է՝ հաշվելով տեքստում առկա բառային և քերականական միավորների հանդիպելիությունը:

Նմանատիպ վերլուծության անցկացման պատճառն այն է, որ ՀՆԱ մասնագետները մտահոգված են են աութենտիկ-իրական լեզվական իրավիճակների առանձնահատկությունների նույնականացմամբ, որտեղ ուսանողները կիրառում են անգլերեն: Հետևաբար, ՀՆԱ դասընթացները պահանջում են դասավանդման այնպիսի նյութեր, որոնք հատուկ են թիրախ իրավիճակներին: Այդ նպատակով, անհրաժեշտ է լեզվի նկարագրություն, ինչպես այն գործածվում է թիրախ իրավիճակներում [8, էջ 11]: Եթե գիտական կամ տեխնիկական գրականության քերականությունը չի տարբերվում ընդհանուր

անգլերենի քերականությունից, ապա որոշակի քերականական և բառային ձևեր շատ ավելի հաճախ են գործածվում [5, էջ 21]: Նման վերլուծությունը կբացահայտի գիտության ճյուղին հատուկ անգլերենը:

Սուելսը նշում է, որ չնայած 1962թ. Բարբերը Շվեդիայում հրատարակեց նորարարական հոդված գիտական լեզվի մասին, իսկ 1963թ. դուրս եկավ Մելինկոֆֆի «Իրավունքի լեզու» հոդվածը, նոր մոտեցման հիմնական խթանը Հալիդեյ եվ այլքն էր: Հալիդեյ եվ այլքի հեղինակությամբ «Լեզվաբանական գիտությունները և լեզվի դասավանդումը» աշխատանքը մեծ ազդեցություն թողեց՝ խթանելով տեսական աշխատանքը լեզվի նկարագրության ոլորտում ԱԱՆ (անգլերենը ակադեմիական նպատակներով) նյութերի ստեղծման և կիրառման ոլորտում: Բանն այն է, որ միայն հետազոտության նվազագույն բաժինն է իրականացվել ուսումնասիրելու, թե անգլերենի ավանդական դասընթացի որ մասն է անհրաժեշտ, ասենք՝ Հնդկաստանի էլեկտրակայանի ինժեներներին կամ Նիգերիայի ոստիկաններին. առավել քիչ է հայտնի, թե ինչ հավելյալ մասնագիտական նյութ է հարկավոր:

Սա այն հանձնարարություն է, որի համար անհրաժեշտ է հրավիրել լեզվաբանների: Նախքան դասավանդման համապատասխան նյութերով ապահովելը՝ անհրաժեշտ է մասնագիտական կարիքներից յուրաքանչյուրի համար մանրամասն ուսումնասիրել լեզվական ռեգիստրները և կոնկրետ անձանց կողմից գործածվող լեզուն՝ մեծ թվով օրինակների վրա:

Այդ դեպքում հնարավոր կլինի պարզել, թե կոնկրետ ինչ անգլերեն է գործածվում, օրինակ, Հնդկաստանի էլեկտրակայաններում. արդյունքում

տվյալ լեզուն դիտարկելուց, գրանցելուց և վերլուծելուց անմիջապես հետո կարելի է ստեղծել անգլերենի ուսուցման դասընթաց նման լեզվական վարքագիծ փոխանցելու համար [7, էջեր 189–190] :

Հալիդեյի և այլքի հեղինակությամբ «Լեզվաբանական գիտությունները և լեզվի դասավանդումը» աշխատանքը սահմանում է չափորոշիչներ ՀՆԱ հետազոտողների համար լեզու ուսումնասիրելու նպատակով:

Խոսույթի վերլուծություն

Ռեգիստրի (բառակազմի) վերլուծության մոտեցումը ըստ էության հիմնված էր նախադասության և ձևի վրա, երբ հաշվի չէր առնվում, թե ինչպես են նախադասությունները միավորվում՝ դրվագներ կամ ամբողջական տեքստեր ստեղծելու համար, մի բան որն հանգեցրեց այն փաստին, որ ուսանողների մոտ դժվարություններն առաջանում էին ոչ միայն լեզվական համակարգի վատ իմացության, այլ նաև այն պատճառով, որ ծանոթ չէին անգլերենով հաղորդակցական ակտեր ստեղծելու հետ:

Բերենք խոսույթի վերլուծության մի սահմանում. «Խոսույթի վերլուծությունը լեզվի ուսումնասիրությունն է հաղորդակցման տեսանկյունից և/կամ հաղորդակցման ուսումնասիրությունը լեզվաբանության տեսանկյունից: Նման սահմանման ցանկացած առավել մանրամասն կամ բառացի ձևակերպումը սովորաբար վերաբերվում է լեզվի՝ գործածվող հասկացություններին, լեզվին որպես փոխերգործության իմաստ, և լեզվին որպես իրադարձային և մշակութային համատեքստ: Կախված լեզվաբանական դպրոցից՝ ֆունկցիոնալիզմ, ստրուկտուրալիզմ կամ սոցիալական փոխներգործություն և այլն, լեզվաբանները հակված են առանձնացնել մեկ կամ մի քանիսը, բայց ոչ բոլոր կետե-

րը» [10, էջ 131]:

ՀՆԱ համատեքստում դիսկուրս վերլուծությունը քննարկելիս Սուելար [10] առանձնացնում է չորս տիպ՝ **բա-նավոր դիսկուրս, դիսկուրս վերլուծություն, հոկորական մոդելավորում և գործածման կանոններ**:

Նկատենք, որ խոսույթային պրակտիկան, մի տեսակ, հանդես է գալիս որպես միջնորդ տեքստի և սոցիալական գործունեության միջև: Բացի տեքստի վերլուծությունից խոսույթային վերլուծությունը ենթադրում է սոցիալական պայմանների նկարագրություն: Օրինակ՝ իրավաբանական խոսույթի մասնակիցներ են, մի կողմից, պետությունը, որը կարգավորում է իրավահարաբերությունները, մյուս կողմից, դատավորն ու դատախազը, դատախազն ու մեղադրյալը և այլն:

Իրաբավանական խոսույթին հատուկ է երկխոսությունը: Առանձնացվում են իրավաբանական խոսույթի հետևյալ ենթատիպերը. սահմանադրական իրավունք, վարչական իրավունք, քրեական իրավունք, ընտանեկան իրավունք, պայմանագրային իրավունք, աշխատանքային իրավունք և այլն: Իրավունքի այս ճյուղերից յուրաքանչյուրը բնորոշվում է բառապաշարի որոշակի համակարգով, որոնք բացահայտում են իրավունքի նորմի սահմանումները: Իրավաբանական խոսույթին հատուկ են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ հոմանիշային համակարգը, համանունությունը և բազմիմաստությունը: Նշենք, որ այսօրինակ տերմինաբանություն քիչ է հանդիպում այլ խոսույթներում: Բազմիմաստության օրինակ է, ասենք, «to commit» բայը, որն ունի հետևյալ իմաստները՝

1. գործ հարուցել
2. դատի տալ
3. կալանավորել
4. կատարել

իսկ «to call» եզրութային միավորը նշանակում է՝

1. կանչ
2. այցելություն
3. պահանջ
4. դադար

Իրավաբանական տեքստը հասկանալու համար հատուկ դժվարություն է ներկայացնում համանունությունը, օրինակ՝ «a few jurisdictions demand that the defense disclose before the trial the general nature of any defenses it will raise at trial»:

Ժանրային վերլուծություն

Հայլենդի համար ժանրը զարգացել է որպես «հզոր գործիք, որի միջոցով կարելի է հասկանալ մասնագիտական դիսկուրսները կապելով տեքստային նախասիրությունները սոցիալական պրակտիկայի հետ» [12, էջ 213]: Ժանրի հասկացությունը, որպես լեզվի դասավանդման հիմք, հարաբերականորեն նոր է. այն առաջացել է 1980թ. սկզբին [13, էջ 131]:

Աշխարհի տարբեր մասերում «Ժանրային մոտեցումը» ԱԱՆ-ում իրագործվել է տարբեր կերպ՝ կախված ուսուցման նպատակներից և դասավանդման տարբեր իրավիճակներից: Օրինակ՝ Բրիտանիայում և ԱՄՆ-ում ԱԱՆ-ի կիրառությունները հիմնականում վերաբերվում են միջազգային ուսանողների ուսուցմանը անգլիական միջավայր ունեցող համալսարաններում: Այստեղ հիմնական շեշտը դրվում է ակադեմիական միջավայրում անգլերենի կիրառման հստակեցման, ինչպես նաև անգլախոս ակադեմիական դիսկուրս ունեցող համայնքներում ուսանողին լեզվական հարմարման վրա: Ի տարբերություն ՄԹ-ի և ԱՄՆ-ի, Ավստրալիայում ժանրային մոտեցումը առաջացել է համայնքում քիչ արտոնություն ունեցող անդամներին աջակցելու և նրանց ակադեմիական հաջողության համար անհրաժեշտ ռեսուրսների


տրամադրման մտահոգությունից:

Անցնելով այս տեսական դրույթները իրավաբանական անգլերենի հարթություն տեղափոխելուն, նկատենք որ «իրավունքի լեզու» եզրույթն իր մեջ ներառում է մի շարք հաղորդակցական նպատակ ունեցող «օգտակար և տարբերակելի ժանրեր», որոնք միտված են իրականացվել տարբեր՝ ակադեմիական, մասնագիտական և կոնկրետ սոցիալական համատեքստերում:

Իրավագիտական լեզվի լեզվաբանական կարգավիճակը բաց է քննարկման իրավունքի և լեզվի ոլորտների մասնագետների համար: Որոշ մասնագետներ (Charrow and Crandall) այն համարում են ինքնին մի խոսվածք: Այն կարող է այլընտրաբար դիտարկվել որպես անգլերենի ռեգիստր, որպես ժարգոնի մի ձև, այսինքն՝ խոսքի մի տեսակ, որը ունի սահմանափակ կիրառում մասնագիտական խմբում կամ երկլեզվայնության մի ձև: Ինչպես առաջարկում է Դանթերը, երկլեզվայնությունը խոսքի հստակ տարատեսակ է, որի գործածումը սահմանափակվում է պաշտոնական և հանրային իրադարձություններով՝ ի հակադրություն ամենօրյա հաղորդակցման համար գործածվող խոսքի տարատեսակների [14, էջ 295]:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում իրավունքի լեզվի ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ աճել է: Բհատիան [15, էջ 227] նշում է, որ իրավունքի լեզվի նկատմամբ հետաքրքրությունն առնվազն երեք դիսցիպլինների՝ պրագմատիկայի, կիրառական լեզվաբանության և հասարակագիտության զարգացումների արդյունք է.

Բհատիան [15, էջ 227] դասակարգում է իրավունքի լեզուն հետևյալ կերպ՝



Իրավագիտական ենթալեզվի նկարագրման ձևերից մեկն այդ ենթալեզվի լեզվաբանական առանձնահատկությունների մատնանշումն է տարբեր մակարդակներում՝ բառային, շարահյուսական, ոճային և այլն:

Դանեթը նշում է երեք մակարդակ՝ բառային, շարահյուսական և ոճային [16, էջեր 447–481]:

Բառային մակարդակում իրավաբանական անգլերենն ունի ինը բնորոշ գիծ.

1) Տեխնիկական եզրույթներ («waiver», «restraint of trade», «restrictive covenant», «promissory estoppel»),

2) Սովորական եզրույթներ ոչ-սովորական իմաստով («assignment» նշանակում է իրավունքի, ունեցվածքի կամ պարտավորության փոխանցում, իսկ սովորական իմաստով նշանակում է

«հանձնարարություն, առաջադրանք»),

3) Լատիներենից, ֆրանսերենից կամ հին անգլերենից ծագող բառեր (insolvent, justice, judge, insolvency, attorney, property, hereafter,),

4) Բազմավանկ բառեր («collateral», «recommend»),

5) անսովոր նախդիրային դարձվածներ («in the event of default, provided that», որը նշանակում է «if»),

6) երկույթներ, այսինքն անգլոսաքսոնական ծագման բառի բառակապակցությունը ֆրանսերենից կամ լատիներենից առաջացած բառի հետ («will and testament, null and void, cease and desist, heirs and assigns, aid and abet»),

7) պաշտոնականություն («shall»–ի կիրառումը «will»–ի փոխարեն),

8) անորոշակիություն (հստակու-

թյան պակաս, ինչպես օրինակ՝ «all the rights and remedies available» բառակապակցությունը),

9) գերձգրտություն (բացարձակ եզրույթների գործածում, ինչպես օրինակ՝ «all» և «none»):

Շարահյուսական մակարդակում իրավաբանական անգլերենն ունի 11 բնորոշ գիծ.

1) Գոյականացում կամ բայերից գոյականների կամ գոյականական դարձվածքների կազմում («assign»-ի փոխարեն «make assignment» գոյականական դարձվածի կիրառում),

2) Կրավորական կառույցներ («may be provided by law»),

3) Պայմանի պարագաներ («in the event of default, provided than»),

4) Անսովոր հարակրկնություններ, հատկապես երբ հղում ենք նախկինում նշված գոյականին՝ օգտագործելով գոյականը և ոչ թե դերանուն. («borrower» բառի կրկնողությունը նախադասության երկու հաջորդական դարձվածներում «any obligation or any collateral on the borrower's part to be performed or observed; or the undersigned borrower shall die», սովորական գրավոր խոսքում երկրորդ դարձվածի ենթական կլիներ in «he» կամ «she»),

5) Հարաբերական դերանունների՝ «who», «which» կամ «that» բացթողում, («all the rights and remedies [which are] available to a secured party»),

6) Նախդիրային բառակապակցությունների հանդիպելիության բարձր հաճախականությունը և դրանց անսովոր տեղադրումը նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև («without demand or notice» նախդիրային բառակապակցության դիրքը հետևյալից. «a right ... (at its option) without demand or notice of any kind, to declare normally the phrase would go in a position following the verb, as in «a right to declare without demand or notice (at its option...)»),

7) Երկար նախադասություններ, որը հաճախ է հանդիպում օրենսդրությունում և առևտրային փաստաթղթերում,

8) Եզակի որոշիչներ. «such» և «said» բառերի կիրառումը գոյականներից առաջ, երբ այլ դեպքերում կիրառվում են այլ որոշիչներ, ինչպես օրինակ «this», «that» և «in any such event» և ոչ թե «in this event»,

9) Անդեմություն. երրորդ դեմքի նախընտրումը առաջին և երկրորդ դեմքերի նկատմամբ, («the party», «the borrower» և «the lessee» բառերի կիրառումը ի հակադրություն «I» կամ «you» դերանունների կիրառման),

10) Իմաստաբանորեն ժխտական բառերի կիրառումը «not»-ի փոխարեն («never», «unless», «except» և «un» ժխտական նախածանցով սկսվող բառեր),

11) Կապող բառերի և բառակապակցությունների զուգահեռ կառույցների օգտագործում «or» և «and» շաղկապների միջոցով («now or hereafter», «to be immediately due and payable»):

Խոսույթի մակարդակում իրավաբանական ենթալեզուն բնորոշվում է երկու հիմնական առանձնահատկություններով. առաջինը՝ իրավագիտական ենթալեզվում բացակայում է հարակցումը: Հարակրկնությունների սահմանափակ կիրառման պատճառով իրավագիտական ենթալեզուն իրար կցված նախադասությունների շարանի տեսք ունի: Երկրորդ. իրավագիտական ենթալեզուն չափազանց սեղմ է: Յուրաքանչյուր նախադասություն պարունակում է մեծ քանակությամբ տեղեկատվություն, որը հաջորդող նախադասություններում այլ կերպ շարադրված չէ, որպեսզի ընթերցողը կարողանա այն ընկալել: Նման ոճը կտրուկ հակադրվում է սովորական գրավոր անգլերենի ոճին, որն ըստ էության օգնում է ընթերցողի ընկալմանը վերաձևակերպումների միջոցով:

1. Суперанская А.В., Подольская Н.В., Васильева Н.В. Общая терминология. Вопросы терминологии. М., Наука, 1989. 246 с.
2. Дашкова Г.В. Подъязык вычислительной техники как разновидность стиля научной прозы, Функционирование языка в разных видах речи. Межвузовский научный сборник. Саратов, 1986.
3. S. Stoyhoff, (2004). Survey: Case studies in TESOL Practice. *ELT Journal* 58, 4: pp 379–393.
4. P. Strevens, (1988). ESP after twenty years: A re–appraisal. In M. Tickoo (Ed.), *ESP: State of the art* (1–13). SEAMEO Regional Language Centre
5. T. Dudley–Evans, And M. J. St. John (1998). *Developments in English for Specific Purposes: A Multi-disciplinary approach*. Cambridge: Cambridge University Press, 301
6. P. Robinson, (2000). *English for Specific Purposes*. In *Routledge Encyclopedia of Language Teaching and Learning*, M. Byram (Ed.) London: Routledge.
7. M. A. K. Halliday, A. McIntosh & P. Strevens, *The Linguistic Sciences and Language. Teaching*. (Longmans’ Linguistic Library.) London: Longman, 1964
8. J. Flowerdew, and M. Peacock (2001). *Research Perspectives on English for Academic Purposes*, Cambridge: Cambridge University Press, pp 8–24
9. A.J. Liddicoat and T.M. Curnow (2004) *Language Descriptions*: In *The Handbook of Applied Linguistics*, A. Davies and C. Elder (Eds.). Malden, MA: Blackwell Publishing.
10. H. Trappes–Lomax (2004) *Discourse Analysis*. In *the Handbook of Applied Linguistics*, A. Davies and C. Elder (Eds). Malden, MA: Blackwell Publishing.
11. J. M. Swales (2001), *Language for Specific Purposes*. In *English for Specific Purposes*, 20: 57–96
12. K. Hyland (2003), *Book Review. Genre in the classroom: multiple perspectives*: Ann M. John (Ed.). In *English for Specific Purposes*, 22: 213–219
13. A. Burns (2000), *Genre and genre–based teaching*. In *Routledge Encyclopedia of Language Teaching and Learning*: M. Byram (Ed.) London: Routledge
14. S. Berg–Selingson (2002), *The Bilingual Courtroom: Court Interpretations in the Judicial Process*. Chicago: The University of Chicago Press
15. V. K. Bhatia (1987), *Language of the Law*. In *Language Teaching: The International Abstracting Journal for Language teachers and Applied Linguistics*, 18 (2)
16. B. Danet (1980), *Language in the legal process*. In *Law and Society Review*, 14: 445–564

**АНГЛИЙСКИЙ ДЛЯ СПЕЦИАЛЬНЫХ ЦЕЛЕЙ (АСЦ) И НЕКОТОРЫЕ
АСПЕКТЫ ФОРМИРОВАНИЯ ЮРИДИЧЕСКОГО АНГЛИЙСКОГО**

АРУСЯК АРУТՅՈՅՅԱՆ

*НАН РА, Международный научно–образовательный центр,
начальник отдела внешних связей, преподаватель*

В статье рассматриваются некоторые вопросы обучения юридического английского в контексте «Английский для специальных целей» (АСЦ). Анализируются несколько определений АСЦ. Существенное в этом анализе является то, что конструирование (дизайн) учебных планов и программ, учебников и других ресурсов нужно начать с анализа специальных потребностей учащихся. Анализ этих потребностей основывается на исследовании Халидея «Лингвистическая наука и язык». Основываясь на этой работе, делается заключение: юридический дискурс это посредник между текстом и социальной действительностью.

ENGLISH FOR SPECIFIC PURPOSES (ESP) AND SEVERAL ASPECTS OF
FORMATION OF LEGAL ENGLISH

ARUSYAK HARUTYUNYAN

*International Scientific-Educational Center of NAS RA
Head of Foreign Affairs Department*

The article discusses several issues of teaching Legal English as English for Specific Purposes (ESP). Several definitions of ESP have been analyzed especially in the context of Armenian education areas. The focus of this analysis is that the development of ESP curricula, textbooks and other resources shall start with the analysis of special needs of learners in target groups. This analysis is based on ‘The Linguistic Sciences and Language’ work by Halliday and others. The following is concluded that the practice of legal discourse is a unique intermediary between the text and social activities.

The article outlines 9 features specific to Legal English at word level and 11 features at word order level. These features are defined and supported with specific examples.

ПРОБЛЕМА ОТБОРА МАСС–МЕДИЙНОЙ ЛЕКСИКИ ПРИ ОБУЧЕНИИ АНГЛИЙСКОЙ СПОНТАННОЙ РЕЧИ СТУДЕНТОВ–ЖУРНАЛИСТОВ

В статье рассматриваются проблемы развития навыков иноязычной спонтанной речи студентов – журналистов на основе отбора масс–медийной лексики. Важным представляется четкое определение всех тем и подтем изучаемого материала. Если лексический материал отбирается не только по традиционным схемам и программам, то на первый план выступает учет психолингвистических и экстралингвистических факторов обучения иностранному языку.

Ключевые слова: речевая компетентность, коммуникация, аутентичный текст, медиаречь, культурологическая спонтанная речь, безэквивалентная лексика, профессиональная коммуникация, медиатекст.

Традиционно преподаватели отдавали предпочтение тем иноязычным медиатекстам, медиадискурсам, которые представляли интерес с точки зрения особенностей английской стандартной лексики. Этим и объясняется то обстоятельство, что в основном аутентичные тексты были по возможности адаптированы, сокращены. Нестандартная, безэквивалентная лексика, неологизмы нередко были упущены или упрощены.

Повышение уровня речевой компетентности студентов–журналистов ориентировано на двустороннюю природу текста как продукта и процесса речетворчества. С одной стороны, речевая компетенция предполагает знание студентов о жанровых, стилистических, грамматических, лексических

признаках текста. С другой стороны, она предусматривает овладение способами деятельности, формирующими умения классифицировать тексты, распознавать их жанровые особенности, выделять стилистические, лексические приемы, применяемые в текстах, определять типы лексики и т.д.

Отбор масс–медийной лексики в процессе развития устной спонтанной речи требует учета и традиционных, и современных принципов обучения лексике.

А. А. Миролюбов, И. В. Рахманов, В. М. Цетлин в качестве основных принципов отбора речевого материала выделяют следующие принципы:

- семантический принцип лексики, отражающий наиболее важные понятия (используется при чтении литературы или при ведении беседы на иностранном языке);
- принцип стилистической неограниченности;
- принцип многозначности;
- принцип словообразовательной ценности (обеспечивает включение в минимум в первую очередь слов, способных дать наибольшее количество производных);
- принцип строевой способности (предполагает отбор строевых элементов языка — предлогов, артиклей, союзов и др.);
- принцип частотности (повторяемость слов в литературе);
- принцип исключения синонимов (из ряда отобранных для первоначального

списка синонимических значений в активный минимум выделяются только те слова, которые при наибольшей употребительности отличаются нейтральностью в стилистическом отношении) (Миролюбов, Рахманов, Цетлин, 1967: 46).

В рамках коммуникативной методики отбор и организация масс-медийной лексики по семантическому принципу представляется эффективным, поскольку спонтанная речь предполагает умение выделить ключевые понятия или вести беседы на иностранном языке.

Спонтанные тексты многофункциональны и для них характерны разные стили, поэтому принцип стилистической неограниченности может быть успешно использован в процессе обучения спонтанной речи.

То же самое касается принципа многозначности, так как медиаречь достаточно сложное явление.

Достаточно продуктивным представляется принцип словообразовательной ценности, поскольку медиаречь изобилует различными словообразовательными моделями. То же самое относится к принципу строевой способности.

По принципу частотности исследователи не только выделяют нейтральные слова, но и выявляют неологическую лексику.

Принцип исключения синонимов во многих учебно-речевых ситуациях не представляется эффективным в том плане, что спонтанную речь трудно развивать на основе аутентичных медиатекстов, отказавшись от различной нестандартной, нейтральной или национально-маркированной лексики.

Более продуктивным представляется подход Дж. Сквивнера, разработавшего принципы отбора лексического материала в рамках коммуникативной методики. Согласно его подходу, слова:

– должны быть связаны данным событием или местом, где это событие происходит;

– должны принадлежать одним и тем же грамматическим категориям или областям использования;

– должны быть использованы для достижения определенной цели» (Scrivener, 2005: 24). Примечательно, что данные принципы тоже не могут считаться универсальными, поскольку в масс-медийном дискурсе слова не всегда связаны с данным событием, и нарушение лексического состава или грамматического строя является своеобразным приемом в журналистике.

С точки зрения развития коммуникативной компетенции, лежащей в основе развития иноязычной спонтанной речи, выделяется подход Е. И. Пассова, предлагающего следующие принципы отбора:

- коммуникативность (наличие у речевого образца определенной задачи говорящего);
- образцовость (обеспечение структурной стороны усвоения);
- частотность (частота употребления слова в речи) (Пассов, 1977: 45).

Этот подход отличается тем, что автор в качестве единицы отбора предлагает ситуацию и выдвигает принцип коммуникативности. Е.И. Пассов определяет главные задачи для говорения следующим образом:

- 1) Составляется по возможности полный список ситуаций в той сфере общения, к которой готовят учащихся;
- 2) Из системы данной сферы выделяют наиболее употребительные речевые единицы и устанавливают речевые образцы всех уровней;
- 3) Речевые образцы распределяются по ситуациям в последовательности, которая зависит от различных факторов обучения;
- 4) Для каждой ситуации отбираются лексические единицы в зависимости от необходимости действий в данной ситуации (Пассов, 1977: 62).

Не менее важным является сопоставительный анализ типологии формул речевого этикета. В ситуативном обучении лексике очень трудно опреде-

лить границу между первым и вторым. Как известно, речевой этикет – это система правил речевого поведения и устойчивых формул вежливого общения, являющийся функционально-семантической универсалией. При этом практическое осуществление средствами массовой информации речевого этикета должно производиться с учетом своеобразия речевого поведения, правил общения, обычаев и ритуалов определенного региона или социума.

Журналисты должны последовательно изучать разговорную, ненормативную лексику, поскольку они так или иначе имеют косвенное или прямое отношение к так называемой «бульварной прессе». Различные примеры из англоязычной бульварной прессы доказывают, что для того, чтобы понять и воспроизвести масс-медийные тексты такого характера, журналисты должны преодолеть трудности грамматического, лексического, стилистического характера.

Очевидно, что студенты должны выделить и перевести те слова и выражения, которые являются яркими примерами разговорной и просторечной речи. Английские журналисты используют в своей речи различные идиомы, каламбуры, поговорки и поговорки. Например:

Hit the beach означает «выйти, высадиться на берег; высадить десант: Have you heard? We hit the beach this morning. (**I. Shaw, 'The Young Lions', ch. 25**). В данном контексте перевод идиомы не позволяет понять смысл предложения.

Для ее понимания нужны другие примеры.

Проблема состоит в их распознавании, переводе и, конечно, использовании в активной речи.

Широкое использование иных стилистических средств, приемов и фигур речи, таких как гиперболы, литоты, образные сравнения, метафоры (в том числе развернутые и «застывшие», лексикализованные), метонимия, паронимическая атт-

рация (особенно в рекламных текстах), иносказания, эвфемизмы и др. (чаще характеризует авторские материалы, комментарии, статьи и заметки на различные темы и т.п.).

Очевидно, что только на перформативном уровне реализации речевых навыков и умений можно в должной мере усвоить речевой этикет. Знание правил речевого этикета, их соблюдение позволяет человеку чувствовать себя уверенно и непринужденно, не испытывать неловкости и затруднений в общении.

При отборе масс-медийной лексики важно учесть стилистическую оппозицию — оппозицию между нормой и отклонением от нее. Пользуясь термином, предложенным Ю. М. Скробневым, здесь имеет место оппозиция «между традиционно обозначающим и ситуативно обозначающим» (**Арнольд, 1981: 55**).

Как известно, реалии переводятся с трудом и считаются безэквивалентной лексикой. Термин «безэквивалентная лексика» в русскоязычной литературе впервые стали использовать Е.М.Верещагин и В.Г.Костомаров. По их мнению, безэквивалентной лексикой являются «слова, служащие для выражения понятий, отсутствующие в иной культуре и в ином языке, слова, относящиеся к частным культурным элементам, т.е. к культурным элементам, характерным только для культуры А и отсутствующим в культуре В, а также слова, не имеющие перевода на другой язык, одним словом, не имеют эквивалентов за пределами языка, к которому они принадлежат» (**Верещагин, Костомаров, 1983: 53**).

При обучении иноязычной спонтанной речи следует учесть то обстоятельство, что студенты преодолевают определенные стереотипы межкультурного характера. В этом плане большое значение имеют национально – психологические лакуны. Например, когда не совпадают виды культурной символики, характерные для различных

этносов: «для японцев листья папоротника – знак пожелания удачи в наступающем году, а в русском узусе папоротник ассоциируется со смертью, кладбищем» (Соловова, 2006: 3).

Студенты должны постепенно усваивать кинесические и рутинные лакуны. При изучении поведенческих лакун, особенно эффективными представляется использование видеоматериалов в учебных целях. Правильная интерпретация жестов, принятых в чужой культуре, имеет первоначальное значение. Не менее важным представляется проблема обучения правильному и адекватному реагированию на всевозможные лакуны бытового или рутинного характера.

Принципиально важно выработать способы усвоения лакун в учебно-речевых ситуациях. В методике преподавания иностранных языков существуют различные подходы к преодолению различий двух культур.

Ю. А. Сорокин, И. Ю. Марковина выделяют два способа преодоления культурных лакун: заполнение и компенсация.

Комментирование может иметь учебный характер. Ю. В. Скугарова выделяет два основных способа комментирования:

– энциклопедический (сообщаются конкретные, точные сведения, заимствованные из справочных источников);

– исследовательский; комментарий, составленный таким образом, должен иметь лингвострановедческий характер (раскрывать национальные особенности восприятия внеязыкового факта) (Скугарова, 2001: 13–14).

При обучении спонтанной речи продуктивны оба способа. На начальном этапе эффективен энциклопедический способ комментирования. На среднем и продвинутом этапах студенты с удовольствием применяют исследовательский способ комментирования.

При использовании этих способов важно развивать фоновые знания, которые

представляют «совокупность представлений о том, что составляет реальный фон, на котором разворачивается картина жизни другой страны, другого народа» (Федоров, 1983: 146).

Исходя из этого, необходимо предлагать студентам аутентичные, актуальные тексты, содержащие много новых терминов, реалий и неологизмов.

В этом плане масс-медийные тексты представляются более эффективным средством в процессе усвоения иноязычной лексики.

Важно, чтобы студенты изучали способы образования новых слов в английской масс-медиа, имели четкое представление о словопроизводстве, словосложении, конверсии, сокращении, что позволяет определить тип словообразования, догадаться о значении слова в данном контексте.

Как известно, в современной методике в рамках когнитивной лингвистики в разных обучающих курсах для отбора слов создаются фреймовые словарные статьи. Эти словари представляют тематически отобранные концепты. Очевидно, что соответствующий масс-медийный концепт может быть представлен и стандартными и нестандартными словами, фразами, идиоматическими выражениями. В этом плане не менее важными представляются неологизмы: потенциальные слова и окказионализмы.

Использование масс-медийных текстов в учебных целях имеет ряд преимуществ, и недостатков. Не секрет, что в англоязычных СМИ встречаются не только образцы стандартной, но и нестандартной лексики. Все чаще в масс-медийных текстах или медиатекстах стало встречаться употребление жаргонизмов и сниженной лексики.

Таким образом, при отборе лексического материала учитываются не только традиционные принципы, но и данные анализа познавательных, перспективных потребностей студентов.

Принципиально важно четко опреде-

лить все темы и подтемы изучаемого материала. Если лексический материал отбирается не только по традиционным схемам и программам, то на первый план выступает учет психолингвистических и экстралингвистических факторов обучения иностранному языку.

При осуществлении отбора профессионально-ориентированной журналистской

лексики важно четко определить соотношение разговорной, профессиональной и специальной лексики, так как спонтанная речь журналиста не может состоять только из профессиональной или специальной лексики. Развитие умений компонентного, филологического и дискурсивного анализа лексики является важным условием обучения спонтанной речи.

ЛИТЕРАТУРА

1. Арнольд И. В. Стилистика современного английского языка /стилистика декодирования/. Учеб. Пособие для студентов пед. ин-тов по специальности № 2103 «Иностранные языки». Изд. 2-е, перераб. Л. Просвещение, 1981. – 295 с.
2. Верещагин Е.М., Костомаров, В.Г. О предметах, объеме и функциях лингвострановедения // Лингвистический аспект в преподавании русского языка как иностранного. Москва 1984. – 188 с.
3. Общая методика обучения языкам в средней школе. Под ред. А.А. Миролюбова. И.В. Рахманова, В. С.Цетлин, М., 1967. – С. 4-48.
4. Пассов Е.И. Основы методики обучения иностранным языкам. М.: Высшая школа, 1977. – 166 с.
5. Скугарова Ю. В. Проблемы понимания иноязычного литературно-художественного текста: Фак. ин.яз. – М., 2001– 21с.
6. Соловова Е.Н. Методика обучения иностранным языкам. Практикум к базовому курсу: Учебное пособие для вузов. — М.: АСТ: Астрель, 2008. — 192 с.
7. Федоров А.В. Основы общей теории перевода. М.: Высшая школа, 1983– 303 с.
8. Scrivener Jim Learning Teaching: A guidebook for English language teachers, Macmillan Publishers Limited. – 2005. 431p.– pp. 20–34.

ՀԱՆԳՎԱԾԱՅԻՆ–ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՈՒՍԱՆՈՂ–ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱԼԼԱ ՄԿՐՏՉՅԱՆ

*Խաչատրուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան,
ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս, մ.գ.թ.*

Զանգվածային–լրատվական բառապաշարի ընտրության գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքները, ինչպես նաև ուսանողների ճանաչողական, հեռանկարային պահանջմունքները:

Սկզբունքային նշանակություն ունեն ուսումնասիրվող նյութի թեմաները և ենթաթեմաները՝ հաշվի առնելով օտար լեզվի ուսուցման արտալեզվաբանական և հոգելեզվաբանական գործոնները:

Լրատվական բառապաշարի ընտրությունն իրականացնելիս անհրաժեշտ է հստակորեն որոշել խոսակցական, մասնագիտական և հատուկ բառապաշարի հարաբերակցությունը, քանի որ լրագրողի օտարալեզու ինքնաբերական խոսքը չի կարող բաղկացած լինել միայն մասնագիտական կամ հատուկ, մասնահատուկ բառապաշարից:

THE PROBLEM OF SELECTING MASS–MEDIA VOCABULARY TO TEACH
SPONTANEOUS SPEECH TO STUDENT–JOURNALISTS

ALLA MKRTCHYAN

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
Candidate of Pedagogical Sciences, Lecturer of Russian.*

In the process of selecting mass–media vocabulary it is necessary to take into account both the traditional such as modern principles of selecting and teaching vocabulary and students' cognitive, perspective needs.

The selection of the topics and subtopics of the teaching material are principally importance taking into account the extra–linguistic and psycholinguistic factors of teaching foreign languages.

In the process of selecting mass–media vocabulary it is necessary to clearly determine the correlation of colloquial, professional and special vocabulary as the foreign spelling of the journalist can not only be composed of professional or specific vocabulary.

**ԱԼԵՍԱՆ ԴՐՈ ՄԱՆՁՈՆԻԻ «ՆՇԱՆՎԱԾՆԵՐԸ» («ՖԵՐՄՈ ԵՎ ԼՈՒՉԻԱ»)
ՊԱՏՄԱՎԵՊԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ալեսսանդրո Մանձոնիի «Նշանվածները» վեպը, իտալական գրականության մեջ լինելով առաջին պատմավեպը, մեծ տարածում է գտնում, որը դառնում է ոչ միայն վառ օրինակ իտալացի հեղինակների համար, այլև հիմք շարունակելու իտալական գրականությունը նոր ուղղությամբ և ձևով: Պատմավեպում տեղ են գտել ժամանակագրի գրեթե բոլոր տարրերը, հեղինակը անդրադարձել է պատմական իրադարձություններին՝ ժանտախտ, պատերազմ, հացի կռիվներ, սով: Եվ իհարկե ոչ միայն պատմական իրադարձություններ կարող ենք տեսնել, այլ նաև պատմական դեմքեր:

Հանգուցային բառեր. ժանտախտ, պատերազմ, սեր, խարդախություն, հավատ, սով, միասնություն:

Ռոմանտիզմի դարաշրջանի հեղինակներից Ալեսսանդրո Մանձոնին ծնվել է 1785 թ. Միլանում՝ Ավստրիայի տիրապետության տակ գտնվող Լոմբարդիա քաղաքում և մահացել է 1873 թվականին, Հռոմի՝ միասնական Իտալիայի մայրաքաղաքը հռչակվելուց երկու տարի անց: Նա երբեք չէր բարձրաձայնում իր գաղափարները և այնուամենայնիվ գրողի կարծիքը և գաղափարները ունենում են հսկայական ազդեցություն երկրի քաղաքական կյանքում: Ա. Մանձոնին իր հեղինակությունը վաստակում է սեփական արտասովոր անհատականության և իհարկե գեղարվեստական ստեղծագործությունների՝ գլխավորապես «Նշանվածները» վեպի շնորհիվ: Վերջինս գրողին բերում է մեծ ճանաչում, դարձնելով նրան 19-րդ դարի Իտալիայի ամենախոշոր ստեղծագործողը, իտալական գրա-

կանության դասականներից մեկը, կայուն տեղ ապահովելով Ռիսորջիմենտոյի դարաշրջանում (M.Purpo 1988, 7):

Նախ և առաջ ասենք, որ ժամանակագրությունը առաջացել է Գերմանիայում 18-րդ դարի վերջում, այնուհետև տարածվել է Եվրոպայում և Ամերիկայում: Ռոմանտիզմի պաշտոնական ծնունդն Իտալիայում համարվում է 1816 թվականի հունվարը (A. Damerini 1942, 12):

Մանձոնիի պատմավեպում տեղ են գտել ժամանակագրի գրեթե բոլոր տարրերը: Նա ներկայացնելով պատմական կերպարների՝ պատմական հերոսների ժամանակականացման է անցել, և ինչու չէ նաև գեղարվեստական կերպարների իդեալականացման, սակայն հեղինակը մի փոքր հեռացել է կերպարների իրական լինելուց և իրադարձությունների մեջ հերոսներին դարձրել մասնակից այն գործողություններին որոնք չեն համապատասխանում պատմական իրականությանը: Այսինքն՝ նա վերցրել է պատմական, իրական անձանց, բայց նույն ձևով չի ներկայացրել նրանց: Իհարկե սա չի վերաբերում բոլոր կերպարներին: Ճիշտ է, գրողը նրանց չի օժտել այլ հատկանիշներով, բայց որոշ փոփոխություններ կատարել է նրանց դիմանկարի ձևավորման հարցում: Օրինակ՝ Անանուը, պատմական կերպար է, բայց վիպական գործողությունների ընթացքում հեղինակը իդեալականացրել է նրան: Հերոսի հանդիպումը կարդինալ Ֆեդերիկոյի հետ, նրա կտրուկ փոփոխությունը, անընդմեջ կապ պահելը կարդինալի հետ, թեթև շեղում է իրական պատմությունից: Վե-

պում հերոսի կերպարանափոխությունը կտրուկ և միանգամից է կատարվում: Հանցավոր, չար և դաժան անձնավորությունը միանգամից կերպարանափոխվում և դառնում է դրական հերոս, ինչը որոշ չափով հակասում է իրականությանը: Անանունի կերպարը ստեղծելով, գրողը ոգեշնչվել է պատմական կերպար՝ Ֆրանչեսկո Բերնարդինո Վիսկոնտիից, ով հայտնի ավագակ էր և ապրել է XVI – XVII դարերում: Պետք է նշել նաև, որ ավագակը սերում էր ճանաչված ազնվական Վիսկոնտիների տոհմից (A.Galletti 1942, 8):

Մեկ այլ կերպար հայր Քրիստոֆորոն (նշանակում է խաչակիր), ում հեղինակը կրկին իդեալականացնում է: Պատմելով նրա կյանքի դրվագները, պարզ երևում է, որ նրա շուրջ կան այնպիսի մարդիկ, ովքեր բռնություններ և դաժանություններ են կատարում: Եթե նկատի ունենաք, որ Ա.Մանձոնին պատմական կերպարի միջոցով է տալիս հայր Քրիստոֆորոյի (պատմական կերպար Քրիստոֆորո Պիչենարդի դա Կրենոնա) կերպարը, կտեսնեք մի փոքր շեղում: Նա իդեալականացրել է այս անձնավորությանը որպես արդարության պաշտպան, համարյա հակադրելով դոն Արոնդիոյին, որպես ստորության խորհրդանիշ:

Հերոսներից շատերը իրական, պատմական կերպարներ են, որոնք ստեղծվել են պատմական հենքի վրա: Ինչպես արդեն նշվել էր, կան հերոսներ, որոնք իդեալականացված են, ինչն անհրաժեշտ է դառնում պատմական իրադարձությունների ամբողջական պատկեր ստանալու համար: Ա. Մանձոնիի պատմավեպում բազմաթիվ պատմական հերոսներ՝ դրական և բացասական կերպարներ, միավորվում են սոցիալական հակադիր շերտերում. հարուստներ և աղքատներ, արիստոկրատներ և աշխատավորներ և այլն:

Ռոմանտիկ հեղինակները անդրադարձել են պատմական տարբեր դաշառյալների: Պատմության հանդեպ

հետաքրքրությունը դառնում է ռոմանտիզմի ձեռքբերումներից մեկը, որի շնորհիվ ստեղծվում են գրական արժեքավոր կոթողներ և ժամանակի փորձությանը դիմակայող գլուխգործոցներ: Ա. Մանձոնին իր վեպը սկսելիս ներառել է այն տարրերը, երբ ձևավորվում էր ռոմանտիզմը: Ռոմանտիզմի սկզբունքներից էր անցյալի իրադարձություններին անդրադառնալը: Ա. Մանձոնիի «Նշանվածները» վեպում ակնհայտորեն տեսնում ենք, որ նա ոչ միայն անդրադառնում է անցյալի իրադարձություններին, այլև այդ ամենը միահյուսում է իր վեպի գործողությունների զարգացմանը:

Ռոմանտիզմի մեկ ուրիշ տարր այստեղ նույնպես տեղ է գտել՝ դա հավատքի արժեքն է, որը վեպում միահյուսվում է մեկ այլ տարրի՝ հերոսների ռոմանտիկականացման հետ: Հորինված կերպարներից Լուչիան և Ազնեսը մեծ հավատքի տեր մարդիկ են: Նրանց հավատքի շնորհիվ է, որ իրադարձությունների ընթացքը փոխվում է: Գրողը նկարագրում է այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել այդ ժամանակաշրջանում, միահյուսելով պատմական և հորինված կերպարները: Կերպարների ստեղծման ժամանակ Մանձոնին կարողանում է համադրել գեղարվեստական չափանիշը և պատմական տեղեկությունները, որոնց օգնությամբ ստանում է բազմակողմանի և համակարգված կերպարներ: Ընթերցողը կարողանում է հետևել միլանցիների գործողություններին, ակնատես է լինում ականավոր մարդկանց քաղաքական գործունեությանը: Ընթերցողը հայտնվում է դոն Ռոդրիգոյի կամ էլ Անանունի ամբողջում, այնուհետև մենաստանում: Ականատես ենք լինում նաև հացի համար պայքարին, սովի ժամանակաշրջանին, տեսնում ենք, թե ինչ օրենքներ են գործում և ովքեր են դրանց կատարողները, զգում ենք պատերազմի վտանգը և ժանտախտի արհավիրքները:

Ա.Մանձոնին այն հեղինակն է, ով դեմ էր, որ գրականությունը հասանելի լինի

միայն հասարակության մեկ խավին: Այդ պատճառով նրա պատմավեպում տեղ են գտնում այնպիսի կերպարներ, ովքեր չունեն ազնվականական ծագում, այլ հասարակ մարդիկ են, որոնց միջոցով ձևավորվում է դարաշրջանի պատկերը: Գրողը ստեղծագործում է հասանելի լեզվով, որ հասկանալի լինի բոլորին: Նա ժողովրդի կողմնակիցն է, նրա համար կարևոր է կանգնել ժողովրդի կողքին և օգնել նրան:

Ա. Մանձոնիի պատմավեպում հսկայական տեղ է զբաղեցնում ժանտախտը, որը միահյուսվում է հերոսների կյանքին և շատերի համար ճակատագրական դառնում: Թեպետ այդ ժամանակ ժանտախտը դարաշրջանի աղետ էր և արդեն իսկ իր հետ բազում դժբախտություններ էր բերել: «Նշանվածները» վեպի XXXII գլխի սկզբում նշվում է, որ 1630 թ. մայիսի 4-ին, երբ ժանտախտը գրավում է Միլանը, ավելի դժվար է դառնում բավարարել հասարակության պահանջները: Սպինոլային խնդրում են օգնել և լուծումներ գտնել երկիրը ծայրախեղ վիճակից դուրս բերելու համար, սակայն նրա պատասխանը մոայլ և անորոշ է լինում: Իտալիայի ժողովրդի համար էլ ավելի դժվար ժամանակաշրջան էր, քանի որ այդ ժամանակաշրջանը համընկավ մինչպատերազմյան և պատերազմական իրադարձությունների հետ (A. Manzoni 1985, 250):

Իտալացի ժողովրդի համար օտարերկրացիների ճնշումը բերում է տառապանքների և զրկանքների երկարատև մի ժամանակաշրջան: Փորձելով ավելի մոտիկից հաղորդակից լինել այդ ժամանակահատվածին, իտալացի գրողը ուսումնասիրում է պատմական այն փաստերն ու իրողությունները, որոնք պայմանավորում էին դրանք: Ահա այստեղ, առաջին անգամ իտալական գրականության մեջ հայտնվում է ժողովրդի հավաքական կերպարը:

Ալեսանդրո Մանձոնիի վեպի սկիզբը և ավարտը կապվում են պատճա-

ռահետևանքային համոզիչ կապերով: Վեպի գործողությունները սկսվում են 1628 թ. նոյեմբերի 7-ի պատմական իրադարձություններով, և ավարտվում 1630 թ. դեպքերով, գործողությունները տևում են երկու տարի, որոնք պայմանավորում են գրողի մտադրությունները որոշակի պատմական ժամանակաշրջանի համար: Մանձոնին ընտրում է կենտրոնացված գործողությունները և հակասությունների սրման տարիները: Միլանի քաղցի տարիների կռիվներին հաջորդում են գերմանացիների ներխուժումը և ժանտախտի սարսափելի համաճարակը: Պատերազմից և սովից արդեն իսկ տառապած ժողովրդի գլխին հաջորդում են անվերջանալի դժբախտությունները:

Մինչև բոլորովին վերջերս, ընդունված էր համարել, որ «անանուն ձեռագիրը», որի վրա հղում է կատարում Մանձոնին, որպես իր ստեղծագործության առաջին հիմք, ոչ ավելի, քան գրական հնարք է: Բայց արդեն 1960 թվականին Տուրինի համալսարանի պրոֆեսոր Ջովանի Զիետոն «Lettere italiane» ամսագրում հրատարակում մի հոդված, որտեղ ցույց է տալիս բարոկկոյի շունչը «Նշանվածները» պատմավեպում: Նրա մեջ խոսվում է այժմ արդեն մոռացված գրող Պաչե Պագինիի (իտալացի փիլիսոփա, պոետ) «Կորած կավալերի պատմությունը» գրքի մասին, որը հրատարակվել է 1644 թվականին, Վենետիկում: Գրքում նկարագրվում են Լյուչիանայի չարագործությունները, որին սիրում է Դրուզոն, բայց որը, հետագայում պետք է առևանգվեր հզոր սինյոր Ստրապակուորիի կողմից՝ փակվելով չարաշունչ և գաղտնի դոյակում, որը պահպանվում է բրավոյի կողմից, սակայն Ազնեսի խնամքին վստահված Լյուչիանային հաջողվում է դուրս պրծնել իրեն առևանգողների ձեռքից: Գրքում մանրամասն նկարագրված է նաև ժանտախտի համաճարակը, որի ժամանակակիցն է եղել հեղինակը: Այսպիսով, ոչ միայն պյուժեների, այլև գործող անձանց անունների նմանությունը,

համընկնում են «Նշանվածների» մի շարք դետալների հետ: Հնարավոր է, որ Մանձոնիի համար որպես «անանուն ձեռագիր» կարող էր ծառայել Պաշտ Պագինիի վեպը: (**Danilo S.** 1990, 23)

Ա. Մանձոնիի վերոնշյալ ստեղծագործությունը տարիներ շարունակ եղել է ուսումնասիրության առարկա բազմաթիվ գրողների համար, որոնցից են Ա. Մորավիան, Լ. Պիրանդելլոն, Ի. Կավլինոն Ու. Էկոն և այլոք: Այս հեղինակները կարծես հիմք են դրել այն կարևոր հարցադրումների համար, որոնց հետագայում անդրադարձել են ժամանակակիցները՝ ուշադրության արժանացնելով կերպարակերտման առանձնահատկություններին:

Ստեղծելով իր պատմավեպը, գրողն արտահայտել է ժամանակի գաղափարները, իսկ պատմական դեմքերը դարձրել գեղարվեստական կերպարներ: «Նշանվածները» վեպը հսկայական ազդեցություն ունենալով պատմավեպի զարգացման գործընթացում միաժամանակ պահպանել է իր արդիականությունը, իսկ էական հացադրումների միջոցով կարող ենք տեսնել վեպի առանձնահատկությունները.

- Վեպի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ա. Մանձոնիի պատմավեպում համատեղվում են ռոմանտիզմի գրեթե բոլոր տարրերը

- Հեղինակը անդրադառնում է հավերժական թեմաներին: Մի կողմից վեր է հանում իր ժամանակի համար արդիական դարձած խնդիրները, մյուս կողմից՝ քննում է բոլոր ժամանակների համար արդիական թեմաները՝ սերը, պայքարը, խարդավանքը, պարտությունը և հաղթանակը: Անդրադառնալով ժանտախտի թեմային գրողն ընդգծում է նրա ազդեցությունը ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական ոլորտներում, ցույց տալով մարդու դիմակայող և տոկուն տեսակը, որը արդիական է բոլոր ժամանակների համար:

- Պատմական իրադարձությունները առավել հավաստի դարձնելու հա-

մար հեղինակը իր վեպի հերոսների մեջ խտացնում է պատմական բազմաթիվ դեմքեր: Միննույն ժամանակ հեղինակը իդեալականացնում է նրանց, տալով դրական հատկանիշներ և իրադարձություններում դրսևորվելու հնարավորություններ:

- Գրողի ստեղծած և իդեալականացրած կերպարները միաժամանակ անթերի և սիրելի են նաև իր՝ հեղինակի համար: Դրանք ինչպես պատմական, այնպես էլ ժողովրդական կերպարներ են՝ հասարակ, աշխատավոր մարդիկ:

- Հեղինակը նպաստում է վիպական առեղծվածի գոյությանը:

- Հավատը այն գլխավոր շարժիչ ուժն է, որը զարգացնում է վեպի գործողությունները և տալիս դրական ավարտ: Ա. Մանձոնիի հերոսները այնքան լի էին հավատով, որ այն դրականորեն ազդում է իրենց շրջապատի վրա: Հավատի շնորհիվ է, որ Անանունը վեպում վերափոխվում և դառնում է դրական կերպար:

- Ի տարբերություն «Ֆերմո և Լուչիայի», որը գրված է ֆլորենտական բարբառով, իտալացի գրողը «Նշանվածները» պատմավեպում գնում է լեզվի պարզեցման, որ պատմավեպը հասանելի լինի հասարակության բոլոր խավերին:

«Նշանվածները» պատմավեպի առաջին տարբերակը զանազանվում է այն օրինակից, որը 1840 թվականին, քսան տարվա աշխատանքից հետո տպագրությանն է հանձնել Ալեսանդրո Մանձոնին: Վեպի նախնական տարբերակը՝ «Ֆերմո և Լուչիա» վեպը բաղկացած էր չորս մասից, որը վերնագրված է գլխավոր հերոսների անուններով: Ոգեշնչվելով հեղափոխական ժամանակաշրջանի ավանդույթներով, Ա. Մանձոնին առաջինն էր, որ գլխավոր հերոս դարձրեց հասարակ, աշխատավոր մարդուն, ինչը նորություն էր իտալական գեղարվեստական գրականության համար: Վեպն ավարտելուց հետո հեղինակը չի գոհանում իր գրածով, դիմում է իր ընկերներ

էրմես Վիսկոնտին և Չարլզ Կլաուդիո Ֆաուրելիոյին, որոնց առաջարկությամբ բազմաթիվ փոփոխություններ է կատարում: 1825-ին գրողն իր պատմավեպը բաժանում է՝ երեք մասի, իսկ 1827-ին, երկու ամսվա ընթացքում «Նշանվածները» վեպը վաճառվում է երկու հազար օրինակ: Հեղինակը վեպի վրա աշխատելը չի դադարեցնում մինչև 1840 թվականը, անգամ երբ հրատարակվել էր «Նշանվածները» վեպի վերջնական տարբերակը (G. Squarotti Barberi 1988, 5):

«Ֆերմո և Լուչիա» մասը բաղկացած է 37 գլուխներից: Վերջինս ունի երկու ներածություն, որոնցից մեկը վերլուծում է վեպի գեղարվեստական արժանիքները, մյուսը՝ XVII դարի պատմական իրողությունները:

Մեծ է «Ֆերմո և Լուչիայի» և «Նշանվածները» պատմավեպի միջև եղած տարբերությունը: Գրողը պահպանել է պատմության փաստերը, բայց «Նշանվածների» կառուցվածքը այլ կերպ է արված: 4 մասից և 37 գլուխներից բաղկացած պատմական նյութը դառնում է միասնական կառույց՝ 38 գլուխ, որտեղից հանվում են որոշ շեղումներ: Օրինակ «Նշանվածները» պատմավեպում սիրային նկարագրություններ չեն տրվում: Վերամշակվում է վիպական լեզուն և ոճը՝ Ֆերմոյի լեզուն, գրական – գեղարվեստական անցումները: Առաջին և գլխավոր սկզբունքներից է գլխավոր հերոսի անունը՝ Ֆերմո, որը XVII դարի Լոմբարդիայում տարածված էր, խորհդանշելով երիտասարդի ուժեղ բնույթը: Ա. Մանձոնիի պատմելաոճը զուսպ է և խորը: Այն երևում է սիրահարների զգացմունքների նկարագրության բացակայությունից:

Տարբեր է Անանունի կերպարը «Նշանվածները» և «Ֆերմո և Լուչիա» վեպերում: Այստեղ նրան անվանում են Կ. դել Սագրատո, «եկեղեցու կոմս», եկեղեցու բակում մարդասպանության կատարելու համար:

Տարբեր մեկնաբանություն ունի դոն Ռոդրիգոյի մահը: «Նշանվածները» վե-

պում այս դրվագը դուրս է մնացել և խոսվում է միայն վեպի վերջին գլուխներում: Ֆերմոյի և Լուչիայի մասին պատմվում է առանձնահատուկ անհանգստությամբ, երբ արգելանցում դոն Ռոդրիգոն տեսնում է Լուչիային ու Ֆերմոյին: Վիրավորանքից խանդից նա մոլեգնում է, իսկ որոշ ժամանակ անց՝ մահանում:

Ալեսսանդրո Մանձոնին ստեղծում է պատմավեպը օգտվելով իրական փաստերից: Նման սկզբունքը տեղ է գտել «Ֆերմո և Լուչիա» հատվածում: Վեպի գործողությունները տեղի են ունենում Լոմբարդիայում XVII դարում՝ իսպանացիների իշխանության տարիների ընթացքում: Միլանում աղետների ժամանակաշրջանն էր. սովի և խռովության տարիներ (1628), Մանտուայի պատերազմ (1618–1648) և այլն: Պատմավեպը հեղինակը ներկայացնում է որպես մի ճշմարիտ պատմություն՝ զգուշորեն հավաստիություն տալով պատմական փաստերին:

Ա. Մանձոնին օգտագործում է գրական հնարքներ, ընդարձակում է գրականությունը, հայտնաբերում է ձեռագրեր: «Ֆերմո և Լուչիան» պատմավեպի մշակումը մի կողմից՝ գրողի լուսավորչական կրթության արդյունքն է, որը կարծես ցույց է տալիս XVII դարի իրադարձությունները, մյուս կողմից՝ արտահայտում է 1821-ի պատմական ձախողման հետևանքները՝ նպատակ ունենալով է ներկայացնել իշխանության խեղաթյուրված վիճակը:

Վեպի գաղափարը հեղինակի մոտ ծնվել է Փարիզում ապրելու տարիներին (1819–1820), երբ զբաղվում էր Վ. Սկոտի պատմավեպի ընթերցանությամբ: Հավաքելով պատմական այլ փաստեր և աղբյուրներ, վերջիններս նյութ հանդիսացան պատմական այնպիսի կերպարների ստեղծման համար, ինչպիսիք են Մոնցայի միանձնուհու, Անանունի կամ Կ. Սագրատոյի, կարդինալ Ֆեդերիկո Բորոմեոյի և մյուսների կերպարները: Հավաքված պատմական փաստերը օգ-

տակար եղան նաև սովի և ժանտախտի նկարագրություններն առավել հավաստի դարձնելու համար:

Իր աշխատանքի ընթացքում «Ֆերմոն և Լուչիայից» մինչև «Նշանվածները», Ա. Մանձոնին կենտրոնանում է գրական լեզվի որոնման մեջ, փնտրում է մի լեզու, որը բավականություն կտար հասարակության լայն խավերին: 1827-ից հետո Ռիտորջիմենտոյի մշակույթում, երբ անհրաժեշտ էր ազգային լեզվի ներկայությունը, հեղինակը պատմավեպի համար որոնում է լեզվի նոր որակ, որի պատճառով ուսումնասիրում է նախկինում օգտագործվող տոսկանական լեզուն: Որոշ ժամանակ մնալով Ֆլորենցիայում՝ ծանոթանում է տոսկանական լեզվի ավանդույթների հետ (M. Adele Garavaglia 1996, 7):

Վեպի սյուժեն հիմնված է դժբախտ իրադարձությունների նկարագրությունների վրա, երկու խեղճ մարդկանց մասին, որոնք զոհ են դառնում դաժան բռնություններին: Սկզբում ներկայացվում են այն խոչընդոտները, որոնց հանդիպել են Ֆերմոն և Լուչիան դոն Ռոդրիգոյի մեղքով և ստիպված փախչում են գյուղից: Վեպի երկրորդ մասում խոսվում է Լուչիայի դեմ նյութած դավերի մասին, երբ Մոնցայի մենաստանում Հերտրուդը և նրա մեղսակիցը դոն Ռոդրիգոյի հրամանով փախցնում են Լուչիային: Այնուհետև Անանունի, այստեղ Կոնտե դել Մագրատոյի հանդիպումը կարդինալ Ֆեդերիկո Բորոմեոյի հետ: Երրորդ մասում, Լուչիայի ազատ արձակվելուց հետո, հետևում է Ֆերմոյի պատմությունը, որը Լուչիային թողել էր Մոնցայում: 4-րդ մասում պատմվում է պատերազմի և ժանտախտի մասին, որտեղ տեղ են գտնում երկու սիրահարների Բերգամոսկո հասնելու ճանապարհորդական նկարագրությունները:

Կերպարների հոգեբանությունը սխեմատիկ է, մի կողմից լավ մյուս կողմից վատ՝ ուժեղ և դրամատիկ ներքին խնդիրներով և բախումներով հագեցած: Ըստ Ա. Մանձոնիի ցավի տառապանքի առկայությունը խոսում է երկնային գո-

յության մասին:

Այս տարբերությունները ուսումնասիրելիս պարզ են դառնում հետևյալ կետերը՝

- «Ֆերմոն և Լուչիան» գրվել է 1821-1824 և չի հրատարակվել: «Նշանվածների» առաջին հրատարակությունը եղել է 1827 թվականին, իսկ վերջնական խմբագրումը 1840-42 թվականներին:

- «Ֆերմոն և Լուչիան» բաղկացած է չորս մասից և 37 գլուխներից, իսկ «Նշանվածները» պատմավեպը մեկ միասնական կառույց է՝ բաղկացած 38 գլուխներից:

- «Ֆերմոն և Լուչիա» ստեղծագործության նախնական տարբերակում տեսնում ենք անմիատարրություն՝ պատմական և հեղինակային մասերի միջև, իսկ «Նշանվածները» վեպում ամենամեծ միատարրությունը պատմողական կառուցվածքում է:

- «Ֆերմոն և Լուչիա» վեպում կա վիպական տարրերի կենտրոնացում (ինչպես ժանտախտի նկարագրության մեջ), իսկ «Նշանվածները» վեպում նկատելի են վիպական տարրերի և որոշ մանրամասների մեղմացում, օրինակ Մոնցայի մինաձնուհու դրվագի «կրճատումը»:

- «Ֆերմոն և Լուչիայում» հեղինակը քիչ ուշադրություն է հատկացնում հերոսների հոգեվիճակին (օրինակ Կոնս Մագրատոյի կամ միանձնուհի Հերտրուդի կերպարներում), իսկ «Նշանվածները» վեպում հակառակը՝ հոգեբանական մեծ ուշադրություն է հատկացված մասնավորապես Անանունի և Հերտրուդի կերպարներին:

Ուսումնասիրելով Ալեսսանդրո Մանձոնիի «Նշանվածները» պատմավեպը՝ վստահաբար կարող ենք ասել, որ այն արդիական է բոլոր ժամանակների համար: Թեև Մանձոնին ժոմանտիկ հեղինակ է, իսկ ժոմանտիզմը համարվում է անցյալի ուղղություն, սակայն հեղինակի անդրադարձը հավերժական թեմաներին և գաղափարներին, ստեղծագործությանը հաղորդում են մնայուն արժեք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. M. Puppo, Poetica e critica del Romanticismo italiano, Roma, 1988
2. Galletti, Le origini del Romanticismo Italiano e l'opera di A. Manzoni, Milano, 1942
3. S. Danilo, Manzoni e il romanzo storico: tra Verità e Finzione, Roma, 1990
4. G. Bàrberi Squarotti, Il conte Attilio, ritratto di un'anima frivola, Milano 1988
5. A. Damerini, Classicismo e romanticismo nella musica, Firenze, 1942
6. A. Manzoni, I Promessi Sposi, Milano, 1985
7. M. Adele Garavaglia, Antologia da I Promessi Sposi Mursia, Milano, 1996

ОСОБЕННОСТИ ИСТОРИЧЕСКОГО РОМАНА МАНДЗОНИ “ОБРУЧЕННЫЕ” (ФЕРМО И ЛУЧИЯ)

АННА АРУТЮНЯН

*ЕГУ, факультет романо-германской филологии,
отделение итальянского языка и литературы, магистр*

Роман Алессандро Мандзони «Обрученные», будучи первым историческим романом в итальянской литературе, находит широкое распространение и становится не только ярким примером для итальянских авторов, но и основой для продолжения развития итальянской литературы в новом направлении и по-новому. В роман включены почти все элементы романтизма, автор упомянул исторические события – чума, война, битвы за хлеб и голод. И конечно, в романе мы можем увидеть не только исторические события, но и исторические личности.

FEATURES OF HISTORICAL NOVEL THE “BETROTHED LOVERS” (FERMO AND LUCIA) BY A. MANZONI

ANNA HARUTYUNYAN

*Faculty of Romance-Germanic Philology
Department of Italian Language and Literature, Master's degree student*

The “Betrothed Lovers”, a novel by Alessandro Manzoni, being the first historical novel of Italian literature, being the first historical novel in Italian literature, was widespread and not only a vivid example for Italian authors, but also the basis for the continuing development of Italian literature in a new direction. The novel brought Manzoni immediate acclaim and had enormous patriotic appeal for Italians of the nationalistic Risorgimento period. The novel includes almost all elements of romanticism – the author referred to the historical events, plague, war, hunger, food fights. And, of course, here we can see not only historical events, but also historical figures.

**ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ԴԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ՌԻՍՈՒՑԱՆԵԼԻՍ**

Հաղորդակցության բնագավառում միջմշակութային հաղորդակցության խնդրի արդիականությունը բացատրության կարիք չունի: Համաշխարհայնացման արդի փուլում միջմշակութային փոխհարաբերությունների ու հաղորդակցության հիմնախնդիրը ձեռք է բերել տեսական ու գործնական մեծ նշանակություն: Մեր դարաշրջանում դա առավել ցայտուն է դրսևորվում, քանի որ մարդկությունը հայտնվել է զարգացման միասնականացման մի նոր փուլում: Այսօր աշխարհում տեղի ունեցող ամեն մի իրադարձություն հասանելի է բոլորին համաշխարհայնացման գործընթացների, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումների շնորհիվ:

Ժամանակակից աշխարհը ձևավորել է միջմշակութային փոխհարաբերությունների ու մի համընդհանուր ցանց, ինչը գլխավորապես կապված է համաշխարհային տնտեսական շուկայի ստեղծման, տեղեկատվական տեխնոլոգիաների տարածման և քաղաքակրթական այլ զարգացումների հետ: Այդ իսկ պատճառով գիտելիքն ու տեղեկատվությունը ձեռք են բերել առանձնահատուկ դեր և նշանակություն:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. միջմշակութային հաղորդակցություն, փոխներթափանցումներ, ինքնություն, քաղաքակրթական զարգացումներ, համաշխարհայնացում:

Լեզուն, որում արտացոլված է տվյալ մշակույթը, հիմնականում այն խոչընդոտ-պատնեշն է, որը բաժանում է ազգությունները և նրանց մշակույթնե-

րը, ինչպես նաև ազգային ինքնության պաշտպանությունն է: Երկու դեպքում էլ յուրաքանչյուր լեզու և մշակույթ խոչընդոտներ է ստեղծում այն օտարերկրյա տարրերի ներթափանցումից պաշտպանվելու նպատակով, որոնք փորձում են ներխուժել իրենց տարածք և դրանով իսկ հակասել տվյալ լեզուներին և մշակույթներին:

Անհերքելի է այն փաստը, որ ժամանակակից հասարակությունը համաշխարհայնացման դարաշրջանում հաղորդակցական գործընթացի ըմբռնման խիստ կարիք ունի: Մի կողմից անհրաժեշտ է ուսումնասիրել այն տենդենցները, որոնք նպաստում են տարբեր քաղաքակրթությունների, ժողովուրդների և մշակույթների միավորմանը, մյուս կողմից անհրաժեշտ է գիտակցել այն փաստը, որ սերտ շփման արդյունքում են պայմանավորվում ազգային ինքնությունն ու մշակույթը: Ինչպես մշակույթում, այնպես էլ լեզվում և հասարակությունում ակնառու են առանձնացման և միավորման տենդենցներ, որոնք հավասարապես արդիական են ուսումնասիրության համար: Վերջերս հետազոտողների շրջանում մեծացել է միջմշակութային հաղորդակցության խնդիրների ուսումնասիրությունը:

Միջմշակութային կոմպետենցիաների ուսումնասիրությամբ զբաղվում է միջմշակութային հաղորդակցությունը:

Այն արագ զարգացող և հասարակության կողմից պահանջարկ ունեցող տեսական և կիրառական գիտական ուղղություն է, որը հատվում է լեզվա-

բանության, մշակութաբանության, լեզվադիպլոմատիկայի և հաղորդակցական արվեստի հետ: Միջմշակութային հաղորդակցությունը շատ ավելի կիրառական բնույթ ունի, քան մշակութային լեզվաբանությունը, քանի որ այն և՛ ներառում է միջմշակութային հաղորդակցության կոմպլեքսիաների ուսումնասիրություն, և՛ սերտորեն կապված է օտար լեզուների դասավանդման հետ:

«Միջմշակութային հաղորդակցություն» տերմինը բազմիմաստ է, քանի որ այն տարբեր մշակույթների ներկայացուցիչների բուն հաղորդակցման գործընթացն է, որտեղ արտացոլվում են տարբեր լեզվամշակույթների նմանություններն ու տարբերությունները, միջմշակութային հաղորդակցության գործընթացի ուսումնասիրության գիտական, ինչպես նաև օտար լեզուների դասավանդման ոլորտ է, որն իր մեջ ներառում է միջմշակութային հաղորդակցության կոմպլեքսիաների ձևավորում, որոնք ձեռք են բերվում օտար լեզուների տիրապետման արդյունքում:

Լեզվամշակութային կոմպլեքսիաների ձևավորումը կապված է կրթական գործընթացում անհատի կամ միկրոսոցիումի կողմից ներմշակութային և միջմշակութային կարողությունների ձեռքբերման հետ:

Օտար լեզուների և միջմշակութային հաղորդակցության դասավանդման գործընթացում հաճախ կիրառվող համեմատական վերլուծությունը վերհանել է համեմատվող մեթոդների բազմաթիվ յուրահատուկ մշակութային-արժեքային համակարգեր և ուսանողների վարքագծի կանոններ:

Այդ ուսումնասիրությունների արդյունքները անհրաժեշտություն առաջացրին կրթական ծրագրեր գրելիս ուսուցանվող նյութերի՝ ավելի մանրակրկիտ ընտրություն կատարել:

Բարձրագույն կրթության նոր պետական ստանդարտների համաձայն՝ սահմանվել են բուհերի շրջանավարտների

վերապատրաստման մի շարք առաջնային պահանջներ, այդ թվում՝ օտար լեզուներով ազատ հաղորդակցվելու ունակություն և ուսանողների ակտիվ շարժունակության ապահովում:

Օտար լեզուների դասավանդումն ավելի նպատակահարմար է կառուցել մեծամասամբ տեքստերի ուսումնասիրության հիման վրա, որի հիմքում ընկած է գիտական և գեղարվեստական գրականություն:

Ուսուցման աղբյուրների սինթետիկ մոտեցման շրջանակներում լեզուն պետք է դիտարկել լեզվակիրների հետ սերտ կապի, ինչպես նաև մշակույթի ազդեցության ներքո:

Հակառակ դեպքում հաղորդակցվող կողմերի միջև աններդաշնակության և թյուրըմբռնման հետևանքով ի հայտ է գալիս «լեզվական պատնեշ» հասկացողությունը, որն էլ խանգարում է բնականոն հաղորդակցմանը:

Հայաստանյան կրթական համակարգում Բոլոնիայի գործընթացի նոր նպատակներն ու խնդիրներն անհրաժեշտություն առաջացրին վերանայել և համապատասխան ուղղումներ մտցնել օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում:

Ժամանակակից ինտենսիվ կրթական մեթոդաբանության հիմքում պետք է դնել հաղորդակցական գործունեության ակտիվ մոտեցում՝ հիմնված համընդհանուր հումանիստական ոլորտի գիտելիքների վրա:

Հաղորդակցական գործունեության մոտեցման շրջանակներում ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել խոսակցական և լսողական ասպեկտներին, որոնք, ավանդական թարգմանչական/քերականական մոտեցման համաձայն, գրեթե անտեսվել են: Այսօր ժամանակակից կրթական ռազմավարությունը պահանջում է վերանայել օտար լեզուների դասավանդման հաղորդակցական եղանակը, քանի որ հաղորդակցումն իրականացվում է հաղորդակցական

գործունեության միջոցով: Մարդկային արդյունավետ գործունեության ընթացքում վերջինս իր հերթին ծառայում է սոցիոմաների արդյունքում առաջացած խնդիրներ լուծմանը:

Այդպիսի հաղորդակցման արդյունքում բոլոր մասնակիցներին համախմբում է համատեղ գործունեության ընթացքում առաջացած իրական կամ ենթադրյալ խնդիրների միասնական լուծման հարցը օտար լեզվի միջոցով. Արդյունքում բոլորը ներգրավվում են հաղորդակցական գործունեության մեջ:

Ուսուցման անհատական մոտեցման իրականացման ձևն առավելագույնս ուշադրություն է պահանջում ուսանողների հոգեբանական բնութագրերի առանձնահատկությանը, երբ ստեղծվում են դրական (խթանիչ) անհրաժեշտ պայմաններ կրթական պրոցեսում անձի ակտիվ և ազատ զարգացման համար: Այլ կերպ ասած՝ բարձրանում է ուսուցման անհատականացումը:

Ավելի ու ավելի մեծ ուշադրություն է դարձվում յուրաքանչյուր ուսանողին գնահատելու կարողությանը, նրա դրդապատճառներին և մասնագիտական հեռանկարներին:

Այս մոտեցումը հնարավորություն է ընձեռում ուսանողներին ազատորեն արտահայտել իրենց մտքերն ու զգացմունքները հաղորդակցման ընթացքում: Դասի ընթացքում ուսուցիչը խրախուսում է այն բոլոր կարծիքներն ու ակտիվ դիրքորոշումները, որոնք ընդգծում են ուսանողների ինքնուրույնությունը:

Խոսակցական նյութի օգտագործումը նախատեսված է անհատական խոսակցական մտքի զագացման համար: Խմբային աշխատանքի մեթոդը պահպանում է «Մենք անհատականություն ենք» հասկացությունը: Թույլ տրված սխալները չեն քննադատվում: Որպես նման մոտեցման իրականացման հետևանք, նկատվում է ուսանողի անձի ինքնաարտահայտման աճ, որը երբեմն ավելի շատ է կարևորվում, քան իրենց ձեռք

բերած լեզվական գիտելիքները:

Ինչպես գիտենք, կոմպետենցիան գիտելիքների, հմտությունների և անձնական հատկանիշների համագումարն է, որը մարդուն հնարավորություն է տալիս տարբեր գործողություններ կատարել: Ընդհանուր կոմպետենցիաները լեզվական չեն, ապահովում են ցանկացած գործունեություն, այդ թվում՝ հաղորդակցական: Վերլուծելով է որոշ գիտամեթոդական գրականություն և միջազգային կազմակերպությունների փաստաթղթեր՝ ակնառու է դառնում, որ կոմպետենցիաների մոտեցման կիրառման նպատակը կարելի է բնութագրել որպես՝

1. ուսուցման գործընթացում անմիջականորեն ներգրավված ուսանողների ազատ և ստեղծագործ մտածողություն,
2. գիտելիքների և հմտությունների ձևավորում, որոնք բուհի շրջանավարտին հնարավորություն են տալիս հասկանալու հասարակությունում առկա սոցիալական պայմանների համապատասխանությունը,
3. անհրաժեշտ տեղեկատվության ինքնուրույն հայթայթում և մշակում,
4. առաջնորդության և նորանձնական հատկությունների ձևավորում:

Ակնատռու է նաև խոսույթային կոմպետենցիաների կարևորությունը, որը հաղորդակցական կարողությունների անբաժանելի մասն է և տարբեր տեսակի խոսույթների իմացություն է ենթադրում. Տեքստը՝ որպես լեզվական նյութի ներկայացման միավոր, տեքստը՝ որպես տեղեկատվության հաղորդագրության, տեքստը՝ որպես խոսքային հմտությունների և կարողությունների ձևավորման միջոց:

Հաղորդակցման/երկխոսության իրավիճակն էլ հենց բացատրում է խոսույթի և նրա ստեղծման հմտությունների հասկացությունը:

Այդ իսկ պատճառով ուսուցողական տեքստերի ընտրության հարցում շատ կարևոր է, որ նրանք համապատասխան

նեն ոչ միայն ուսուցման գործնական նպատակներին, այլև իրենց բովանդակային բաղադրիչով համապատասխան են ընդհանուր կրթական և դաստիարակչական նպատակներին:

Խոսելով ապագա մասնագետների վերապատրաստման որակի և արդյունավետության մասին՝ հարկ է նշել, որ նրա արդյունավետությունը և միջազգային չափորոշիչների համապատասխանատվությունը կորոշվի նախ և առաջ հումանիտար կարողությունների վերջնական ձևավորմամբ:

Նրանք կարող են ունենալ լեզվական, մշակութային, երկրագիտական սոցիալ-մշակութային գիտելիքներ, որի հիմքում ուսուցման մեջ հմտությունների մոտեցումն է:

Այսօրվա աշխարհում կրթության ժամանակակից հասկացությունը անպակերտացնելի է առանց անձի միջմշակութային հաղորդակցման հմտությունների, գրավոր և բանավոր հաղորդակցության, որը մշակվել է կրթության, գիտության և գրականության միջոցով, և ինչպես տեսանք, կարևոր սոցիալական դեր ունի:

Հանրությունը չի կարող քաղաքական, տնտեսական և այլ զարգացումներ ապրել՝ առանց մշակութային ժա-

ռանգության գնահատման: Միայն այն աշխարհը, որը տիրապետում է միջմշակութային հաղորդակցություն հմտություններին կարող է սոցիալապես շարժունակ լինել ժամանակակից հասարակությունում:

Հայաստանյան կրթական չափորոշիչների մշակման, միասնականացման և հիմնական սկզբունքների սահմանման ժամանակ պետք է առաջ քաշել օտար լեզվի՝ որպես միջմշակութային հաղորդակցության հիմնական միջոցի գործնական իմացության խնդիրը:

Աշխարհում տեղի ունեցող համընդհանուր գործընթացների՝ համաշխարհայնացման շնորհիվ այսօր առավել քան երբևէ կարևորվում է օտար լեզուների, հատկապես անգլերենի՝ որպես տարբեր լեզվամշակույթներ կամրջող հաղորդակցման միջոցի անհրաժեշտությունը:

Այն ապահովում է մի շարք խնդիրների լուծում:

Դա կրթության շարունակությունն է կամ մասնագիտական գործունեությունը օտար միջավայրում, ինչպես նաև առօրյա հաղորդակցական իրավիճակներում հաղորդակցության և լեզվատերկրագիտական հմտությունների կիրառումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Акопян К. З. Пределы глобализации (культура в контексте глобализационных процессов) // Материалы постоянно действующего междисциплинарного семинара Клуба ученых «Глобальный мир». Вып. 5(17). М., 2002.
2. Бауман З. Индивидуализированное общество. М., 2002.
3. Гураль С.К., Шатурная Е.А. Болонский процесс : роль дискурсивной компетенции в обучении иностранным языкам // Успехи современного естествознания. –2008.–№7.
4. URL: www.rae.ru/use/?section=content&op=show_article&article_id=7783176 .
5. Исаев В.Д. Человек в пространстве цивилизации и культуры. – Луганск: 2003.
6. Карасик В.И. Языковой круг: личность, концепты, дискурс.– : Гнозис, 2004.
7. Кобзева Н. А. Компетентностный подход как основа в обучении иностранному языку в техническом вузе [Текст] / Н. А. Кобзева // Молодой ученый.–2011. –№2.
8. International Bureau of Education Competency-based approaches <http://www.ibe.unesco.org/en/communities/community-of-practice-cop/competency-approaches.html>

THE ROLE OF INTERCULTURAL AND INTERPERSONAL COMMUNICATION IN TEACHING FOREIGN LANGUAGES

GOHAR GRIGORYAN

*International Scientific–Educational Center of the National Academy of Sciences of the RA
Head of the Chair of Foreign Languages, Candidate of Philological Sciences, Associate Professor*

The article comprises various aspects of the role of intercultural communication. Approaches of communicative foreign language teaching methods in modern educational system are discussed.

РОЛЬ МЕЖКУЛЬТУРНОЙ И МЕЖЛИЧНОСТНОЙ КОММУНИКАЦИИ В ПРЕПОДАВАНИИ ИНОСТРАННОГО ЯЗЫКА

ГОАР ГРИГОРЯН

*Национальная Академия Наук РА, Международный научно–образовательный центр,
заведующая кафедрой иностранных языков, кандидат филологических наук, доцент*

В статье рассматриваются различные аспекты роли межкультурной коммуникации. Определяются методы и подходы коммуникативного обучения иностранным языкам в современном образовании.

ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Հոդվածն ուղղված է անգլերենի բառապաշարում տեղ գտած փոխառությունների կամ փոխառյալ բառերի ուսումնասիրմանը, նրանց ունեցած դերին անգլերեն լեզվի գրավոր և բանավոր խոսքի, լեզվի բառապաշարի, հնչյունական և քերականական կառուցվածքների զարգացման գործում: Հոդվածում նաև ներկայացված է մի շարք լեզուներից արված փոխառությունների ցանկ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. փոխառյալ բառեր, փոխառություններ, փոխատու լեզու, փոխառյալ լեզու, հնչյունական համակարգ, բառապաշար, ազդեցություն:

«Չկա աշխարհում մի ժողովուրդ, որ իր գոյության ամբողջ ընթացքում բոլորովին անջատ ու մենակ ապրած լինի: Բոլոր ժողովուրդներն էլ փոխադարձ հարաբերության մեջ են և այդ հարաբերություններից է կախված լեզուների բախտը (**Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1955 թ., հ. 1, էջ 368**)»: Եվ իրոք, աշխարհում հազիվ թե գտնվի փոխառյալ բառերից զերծ գոնե մեկ լեզու: Եվ սա բնական է, քանի որ փոխառություններն ու փոխառնված բառերը արդյունք են այլ ժողովուրդների հետ տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի զարգացման և պատմական անցյալի: «Փոխառյալ բառերը օտար ազդեցությունների մեջ ամենից ցայտունն են և նրանց թիվն օրեցօր աճում է՝ կախված միջազգային հարաբերություններից» (**Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1955 թ., հ. 1, էջ 368**):

Անգլերենին ևս բնորոշ են փոխառություններն ու փոխառյալ բառերը (անգլ.՝

loanwords կամ borrowings): Քանի որ Բրիտանական կղզիները բազմիցս ենթարկվել են օտար ասպատակությունների և նվաճումների, լեզվական այս երևույթը կրել է շարունակական բնույթ անգլերեն լեզվի ողջ զարգացման ընթացքում:

Նշենք, որ փոխառությունների մեջ են մտնում ոչ միայն առանձին փոխառնված բառերը, այլև փոխառնված առանձին տարրեր (օր.՝ ածանցներ, բառակազմական կաղապարներ և այլն): Քիչ չէ պատահում, երբ փոխառյալ բառը ավելի շատ գործածական ձևեր ունենա փոխառու լեզվի, քան փոխատու լեզվի մեջ (փոխատու լեզուն այն լեզուն է, որից փոխառնվում է տվյալ բառը կամ լեզվական տարրը, իսկ փոխառուն էլ այն լեզուն է, որի մեջ ներթափանցում են փոխառյալ բառերը): Օրինակ, ֆրանսերեն **»clique»** բառը սահմանափակ գործածության բառ է ֆրանսերենում (հայ. թարգամանբար՝ “կլան, հանցախումբ”), սակայն փոխառու անգլերեն լեզվում այն ունի բազմաթիվ ածանցումներ՝ – cliquedom, cliqueless, cliquery, cliquomania, cliquomaniac, cliquishness, cliquism, cliquy կամ cliquey (**Jespersen, Otto: Growth and Structure of the English Language, Oxford: Basil Blackwell, 1952, p. 102**).

Փոխառությունները սովորաբար վերաբերում են հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական տերմիններին, կենցաղային, տնային գործածության առարկաներին, տեղանուններին, աշխարհագրական անուններին, անձնանուններին և այլն, : Նկատենք, որ լեզվից-լեզու առանձին բառերի կամ տարրերի փոխանցումը

բավական բարդ գործընթաց է և այն, պահանջում է որոշակի ժամանակ, սակայն, փոխառնված բառերը կարող են ենթարկվել արտասանական որոշակի փոփոխությունների, այսինքն, փոխատու լեզվից անցնելով տվյալ փոխառյալ լեզու, հնարավոր է որ նրանք չպահպանեն իրենց արտասանական նախկին համակարգը: Սովորաբար տվյալ բառի կամ տարրի փոխանցումը այս կամ այլ լեզու կատարվում է փոխատու լեզվին բավականին լավ ծանոթ լինելու պայմաններում: Այս դեպքում, սովորաբար պահպանվում է բառի նախնական արտասանությունը: Օրինակ, ներկայիս անգլերենի *garage* բառը փոխառություն է ֆրասերենից և գրեթե պահպանել է իր ֆրանսերենի արտասանությունը՝ ֆրանսերենի “ղ” հնչյունը փոխարինելով անգլերենում հնչող “ր”-ով, սակայն փոխատու լեզվին գրեթե չտիրապետող անձինք ավելի հակված են չպահպանելու, այսինքն փոխելու արտասանությունը:

Ինչպես արդեն վերը նշեցինք, բառերը փոխառելու գործընթացը բարդ է և պահանջում է ժամանակ: Փոխառնված բառերը, որոնք անհասկանալի են փոխատու լեզվին չտիրապետող տվյալ անձին կամ անհատին, սկզբում հանդես են գալիս որպես “օտար բառեր”: Ժամանակի ընթացքում, երբ մեծանում են օտար բառերի օգտագործման շրջանակները, և ամրապնդվում է նրանց տեղը տվյալ լեզվի համակարգում, նրանք վերածվում են փոխառությունների կամ փոխառյալ բառերի:

Նկատենք, որ անգլերեն լեզուն ունի փոխառյալ բառերի բավական հարուստ համակարգ: Փոխառյալ բառերն այստեղ ավելի մեծ տոկոս, են կազմում, քան բուն անգլերեն բառերը: Ինչպես դանիացի լեզվաբան Օտտո Յեսփերսենն է նշում. “...անգլերեն լեզուն փոխառությունների շղթա է”, որը, նրա համոզմամբ, հետևանք է Մեծ Բրիտանիա ներխուժած օտար նվաճողների աս-

պատակությունների (**Jespersen, Otto: Growth and Structure of the English Language, Oxford: Basil Blackwell, 1952, p. 102**). Սակայն օտարերկրացիներին չի հաջողվում բրիտանացիներին լիովին պարտադրել իրենց սեփական լեզուները, այլ միայն նրանք այս կամ այն չափով միախառնվում են տեղական բնիկ լեզվին՝ որոշակի ազդեցություն թողնելով անգլերեն լեզվի բանավոր և գրավոր խոսքի էվոլյուցիոն զարգացման վրա:

Սկզբում գալիս են հռոմեացիները՝ իրենց հետ բերելով լատիներենը: Մինչ կելտերը կոչյակցեին հռոմեացիների և այսպես կոչված “մայրցամաքային գերմանացիների” (continental Germans) հետ կողք-կողքի, անգլերենի բառապաշարն են թափանցում մի քանի հարյուր լատիներեն բառեր: Իսկ քրիստոնեության ընդունումից հետո՝ 6-րդ դարում, եկեղեցու միջոցով ավելի շատ լատիներեն բառեր են փոխառնվում:

Երբ մեր թվարկության 5-րդ դարում անգլոսաքսերը ներխուժում են Բրիտանիա, նրանք իրենց հետ բերում են իրենց լեզուն՝ **Englisc** կամ **Old English** (հին անգլերեն): Կելտերենը կամաց-կամաց իր տեղն է զիջում նոր փոխառյալ բառերին: Հին անգլերենի բառերից են, օրինակ, **shirt, sheep, dog, work, field, the, you** և այլն: 9-րդ դարում վիկինգների ներխուժման հետևանքով անգլերենի բառապաշար են ներթափանցում նորվեգական բառեր, ինչպես, օրինակ, **skirt, skin, get, leg, same, wrong** և այլն: Հետագայում նորմաններն իրենց հետ Բրիտանիա են բերում ֆրանսերեն լեզուն, որի ազդեցությունը անգլերեն լեզվի համակարգի վրա զգալի է լինում: Ֆրանսերենը շուտով դառնում է ուսյալ վերնախավի լեզուն, իսկ անգլերենով խոսում էին միայն ավելի ցածր խավի մարդիկ: Շուտով անգլերենը արգելվում է օգտագործվել գրավոր խոսքում, սակայն 14-րդ դարի վերջում անգլերենը կրկին

սկսվում է օգտագործվել գրավոր խոսքում, քանի որ ֆրանսերենը դարձել էր ամբողջովին վերնախավի լեզուն: Հարյուրամյա պատերազմի ընթացքում էդուարդ III-ը /1327-77/ արգելում է իր բանակում խոսել ֆրանսերենով: Նա այս ձևով ցանկանում էր իր զինվորների գիտակցությանը հասցնել անգլիացի լինելու գաղափարը: Որոշ աղբյուրների համաձայն՝ այսօր անգլերեն լեզվում ֆրանսերենից փոխառյալ բառերը կազմում են մոտ 10.000 բառ, իսկ այլ աղբյուրների համաձայն էլ նրանց թիվը շատ ավելին է /N.A.Vavilov: **Aspects of British history, Moscow, 2000, pp. 72-73/:**

Այնուամենայնիվ, 14-15-րդ դարերում Բրիտանիայում եկեղեցու և կրթության լեզուն լատիներենն էր: Այսպիսով, մի կողմից լատիներենի, մյուս կողմից էլ ֆրանսերենի ու բնիկ անգլերենի առկայության հետևանքով անգլերենում երևան են գալիս բազմաթիվ հոմանիշներ: Այսինքն, միևնույն բառը կարող էր ունենալ մեկից ավելի հոմանիշներ: Այս է պատճառը, որ ժամանակակից անգլերենում այսօր առկա են միևնույն բառի համար բազմաթիվ հոմանիշներ, որոնք, հաճախ, շփոթության մեջ են գցում անգլերեն լեզուն սովորողներին և թարգմանիչներին: Օրինակ՝

Begin (անգլ.)- commence (ֆր.)- initiate (լատ.)

Time (անգլ.) - age (ֆր.) - epoch (լատ.)

Ask (անգլ.)- question (ֆր.)- interrogate (լատ.)

Նկատենք, որ ֆրանսերենից որոշ փոխառյալ հոմանիշ բառեր անգլերենում ունեն ավելի քաղաքավարի իմաստ, որը հետևանք է նորմանների նվաճման հետևանքով դասակարգային բաժանման:

Օրինակ՝

Belly (անգլ.-փոր)- stomach (ֆր. - ստամոքս)

Stool (անգլ. -աթոռակ, տաբուրետ) - chair (ֆր. -աթոռ)

Կենդանի, այսինքն, չմորթված կենդանիներն ունեին սաքսոնական անվանումներ, օրինակ, **swine, ox, calf, sheep**, իսկ մորթվելուց հետո արդեն գերիշխում էր նրանց նորմանական անվանումը՝ **pork** (խոզի միս), **beef** (տավարի միս), **mutton** (ոչխարի միս) և այլն:

Վերածննդի դարաշրջանում անգլերենում հայտնվում են մի շարք փոխառյալ բառեր իտալերենից, իսպաներենից, սակայն իտալերենի կամ իսպաներենի ազդեցությունն արդեն այնքան մեծ չէր, քանի որ անգլերենը, որպես լեզու, արդեն ձևավորվել էր:

Ներկայացնենք մի շարք փոխառյալ բառերի ցանկ տարբեր լեզուներից, որոնք, անշուշտ, կհետաքրքրեն անգլերեն լեզուն սովորողներին և ուսումնասիրողներին (**Համացանց. Borrowed Words: Major Periods of Borrowings**):

Իտալերենից

Alto, arsenal, balcony, broccoli, cameo, casino, cupola, duo, fresco, gazette (ֆրանսերենի միջոցով), gondola, macaroni, piano, opera, pantaloons, prima donna, soprano, studio, torso, umbrella. viola, violin etc.

Իսպաներենից

Armada, adobe, alligator, barricade, bravado, cannibal, canyon, coyote, embargo, desperado, guitar, marijuana, mosquito, mustang, ranch, tornado, tortilla, vigilante etc.

Ֆրանսերանից

Attorney, bailiff, chancellor, chattel, country, court, crime, defendant, evidence, government, jail, judge, jury, noble, parliament, prison, revenue, state, tax, verdict, abbot, chaplain, chapter, clergy, friar, prayer, preach, priest, religion, sacrament, saint, sermon, baron, baroness, count, countess, duke, duchess, marquis, marquess, prince, princess, viscount, viscountess, noble, royal, lord, lady, knight, kingly, queenly, army, artillery, battle, captain, company, corporal,

defense, enemy, marine, navy, sergeant, soldier, volunteer, beef, boil, dine, fry, mutton, pork, poultry, roast, salmon, stew, veal, art, bracelet, claret, clarinet, dance, diamond, fashion, fur, jewel, oboe, painting, pendant, satin, ruby, sculpture, change, charge, chart, devout, dignity, enamel, feign, fruit, letter, literature, magic, male, female, pilgrimage, proud, question, regard, special etc (անշուշտ, ֆրանսերենից փոխառյալ բառերի միայն մի չնչին մասն ենք ներկայացնում, հասկանալի պատճառներով)։

Գերմաներենից

Loafer, noodle, poodle, quartz, hex, liverwurst, pinochle, schnitzel, stein, lederhosen, zeppelin, strafe, delicatessen, hamburger, frankfurter, wiener, hausfrau, kindergarten, schuss, wunderkind, spritz etc.

Մանսկրիտերենից

Ombudsman, ski, slalom, smorgasbord, maelstrom etc.

Հինդի լեզուներից

Bandanna, bangle, bungalow, cot, jungle, maharaja, pajamas, punch, shampoo, dungaree,

cummerbund, juggernaut, loot etc.

Լատիներենից

Agile, abdomen, anatomy, area, capsule, compensate, dexterity, discuss, disc/disk, excavate, expensive, fictitious, gradual, habitual, insane, janitor, meditate, notorious, orbit, peninsula, physician, superintendent, ultimate, vindicate etc.

Հունարենից

Anonymous, atmosphere, autograph, catastrophe, climax, comedy, critic, data, ecstasy, history, ostracize, parasite, pneumonia, skeleton, tonic, tragedy (այս բառերից շատերը թափանցել են անգլերենի բառապաշար միջնորդ լեզվի՝ լատիներենի միջոցով)։ Անգլերենի **ism** և **ize** վերջավորությունները ևս հունարենից են։

Հոլանդերենից

Avast, boom, bow, commodate, cruise,

dock, freight, leak, pump, scoop, skipper, smuggle, spice, yacht, ease, etching, landscape, sketch, brandy, cookie, cranberry, gin, waffle etc.

Ջարմանալի է, բայց փաստ է, որ անգլերենում առկա են փոխառություններ անգամ արաբերենից, չինարենից, ճապոներենից, պարսկերենից (ֆարսի), և այլն։

Արաբերենից

Bedouin, emir, gazelle, giraffe, harem, hashish, lute, minaret, mosque, myrrh, sultan, vizier, bazaar, caravan etc.

Չինարենից

Chop suey, chow mein, dim syum, ketchup, tea, ginseng, kowtow, litchee etc.

Ճապոներենից

Geisha, judo, jujitsu, kamikaze, karaoke, kimono, samurai, soy, sumo, sushi, tsunami etc.

Պարսկերենից (ֆարսի)

Check, checkmate, chess etc.

Նկատենք, որ փոխառությունները լինում են անմիջական (ուղղակի) կամ միջնորդավորված (անուղղակի)։ Անմիջական փոխառության դեպքում փոխառու լեզուն իր պատմական զարգացման ընթացքում անմիջականորեն է փոխառում այս կամ այն բառը կամ տարրը փոխառու լեզվից։ Իսկ միջնորդավորված փոխառությունների դեպքում փոխառնվող բառերը տվյալ լեզու են թափանցում միջնորդ լեզվի միջոցով։ Օրինակ, հունարենից անգլերեն թափանցած մի շարք բառեր եկել են միջնորդ լեզվից՝ լատիներենից։ Այդպիսի բառերից են՝ **parasite, climax, comedy, data** և այլն։ Միջնորդավորված փոխառությունները բնորոշ են նաև հայերեն լեզվին։ Օրինակ, **մեղալիոն, լիդեր, կարամել, դիրիժոր, ինստիտուտ, ռեժիսոր, էվոլուցիա, ռեստորան** բառերը հայերենում փոխառնվել են ռուսերենից, իսկ ռուսերենն էլ իր հերթին փոխ է առել նրանց անգլերենից, ֆրանսերենից, իտալերենից, հոլանդերենից, իսպաներենից և այլն (**Համացանց։ Փոխառություններ**։

Վիքիպեդիայի ազատ հանրագիտարան): Գոյություն ունեն նաև բանավոր և գրավոր (կամ գրքային) փոխառություններ: Սովորաբար բանավոր փոխառությունները կատարվում են բանավոր խոսակցական շփման ընթացքում: Այս դեպքում հնարավոր են հնչյունական, արտասանական աղավաղումներ, քանի որ փոխառյալ բառերը հիմնականում հարմարեցվում են տվյալ լեզվի հնչյունական, քերականական և իմաստային համակարգին: Իսկ գրավոր կամ գրքային փոխառությունները կատարվում են գիտական, տեխնիկական, հասարակական-քաղաքական, մամուլի, գրականության, պաշտոնական, փաստաթղթերի շնորհիվ: Սովորաբար գրավոր փոխառությունների դեպքում փոխառյալ բառերը պահպանում են իրենց իրենց սկզբնաղբյուրային հնչյունական

կազմը և իմաստը:

Իհարկե, փոխառությունների մասին կարելի է խոսել անվերջ, քանի որ լեզուների զարգացումը շարունակական գործընթաց է: Նկատենք, որ վերոհիշյալ փոխառյալ բառերի ցանկն անգլերենում սրանով չի սահմանափակվում: Կան նաև այլ լեզուներից վերցված փոխառություններ, որոնց մասին այստեղ չենք վերջ տալ, քանի որ նրանք արժանի են առանձնահատուկ քննարկման (ինչպես, օրինակ, հայոց լեզուն): Ընդհանրապես փոխառությունները նպաստում են տվյալ լեզվի զարգացմանն ու հարստացմանը, սակայն հարկ է զերծ մնալ անհարկի փոխառություններից, որոնց կարիքը հաճախ չի զգացվում, քանի որ նրանց համապատասխան համարժեքները վաղուց գոյություն ունեն տվյալ լեզվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1955 թ., հ. 1, էջ 368):
2. Jespersen, Otto: Growth and Structure of the English Language, Oxford: Basil Blackwell, 1952, p. 102
3. N. A.Vavilov: Aspects of British history, Moscow, 2000, pp. 72–73
4. Համացանց. Borrowed Words: Major Periods of Borrowings
5. Համացանց: Փոխառություններ. Վիքիպեդիայի ազատ հանրագիտարան

ЗАИМСТВОВАННЫЕ СЛОВА В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

АСМИК АБРААМЯН

*НАН РА, Международный научно-образовательный центр,
преподаватель английского языка*

Каждому языку свойственны заимствованные слова, которые имеют большое влияние на эволюционном развитии устной и письменной речи данного языка. В статье рассматриваются заимствованные слова, проникшие в английский язык из различных языков, и их роль на лексико-грамматическое и фонетическое развитие языка. В статье также представлен список ряда заимствованных слов, имеющих свое стабильное место в лексике современного английского языка, которые, несомненно, представят интерес для студентов и всех интересующихся английским языком.

BORROWED WORDS IN ENGLISH

HASMICK ABRAHAMYAN

*International Scientific Educational Center of NAS
Lecturer of English*

Borrowed words (loan words) are typical for every language and have a great influence on the evolutionary development of spoken and written languages. The given article deals with borrowed words (loan words) penetrated into the English language from a variety of languages and their role in phonetic language development. The article also lists a number of borrowed words having found their stable place in the word stock of modern English. Undoubtedly, the article will be interesting for students and those, who are interested in the English language.

ПРИНЦИПЫ ОТБОРА АУТЕНТИЧНЫХ ТЕКСТОВ В ЦЕЛЯХ РАЗВИТИЯ УСТНОЙ РЕЧИ СТУДЕНТОВ–ЭКОНОМИСТОВ

В данной статье рассматриваются газетные аутентичные тексты как важное средство обучения и совершенствования устной речи студентов–экономистов. Анализируются основные функции аутентичных текстов в учебных целях, а именно познавательная, развивающая, воспитательная и информативная, которые способствуют всестороннему усвоению текста, включая профессиональную лексику.

Ключевые слова: устная речь, аутентичный текст, вербальная коммуникация, дискурс, учебный текст.

В методике преподавания иностранных языков существуют множество принципов использования аутентичных текстов в учебных целях.

Как отмечают исследователи, работа с аутентичным текстом предполагает развитие особых умений, так как они ориентированы на определенный род речевой деятельности. Использование аутентичного текста в учебных целях целесообразно тем, что он, выступая как своеобразное речевое произведение, “реализуется как в устной, так и письменной речи” (Филиппов, 1989; Штерн, 1991 и др.).

Таким образом, обучение устной речи студентов–экономистов предполагает своеобразную текстовую деятельность, в которой отражается не только знание языковой системы, единиц и правил их изменения и сочетания, но и владение механизмом порождения и восприятия сообщений с учетом целей и задач общения, фактора адресата, сферы общения, условий.

Опора на лингвистические, культурологические знания учебного или аутентичного текста способствует более успешному развитию коммуникативно–речевых способностей студентов.

При обучении иноязычной устной речи важно определить свойства и типы аутентичных текстов, которые используются в учебных целях. В общей лингвистике считается, что основными свойствами текста являются цельность, связность и отдельность, а также выделяются такие характерные признаки как завершенность/незавершенность текста, наличие темы в тексте и т.д.

Что касается типов текста, то исследователи разграничивают следующие виды текста: информационные, функциональные, структурно–семиотические, коммуникативные. Анализ содержательных характеристик данных текстов показывает, что коммуникативные тексты являются эффективным учебным материалом в плане развития устной речи.

С точки зрения принципа коммуникативности, методисты различают “научные и ненаучные”, “художественные и нехудожественные”, “монологические и диалогические”, “моноадресатные и полиадресатные тексты” и др. Таким образом, все виды коммуникативной деятельности (презентации, конференции, дискуссии, диалоги, контракты) реализующиеся в экономической сфере можно условно классифицировать согласно разным критериям, исходя из коммуникативных интенций адресата и адресанта. Справедливо отмечает Н.С. Валгина, что существующие классификации но–

сят условный характер, даже если учитываются особенности “общей и единой типологии”. Художественный текст, согласно автору, можно отнести к “группе ненаучных, а с другой стороны, – одновременно к группе монологических и диалогических” (Валгина, 2003).

Важно определить какие тексты необходимо отбирать в процессе обучения устной речи студентов–экономистов. Традиционно в учебном процессе используются учебные тексты. Особенности учебного текста обусловлены, прежде всего, тем, что он обслуживает особую сферу – учебную, и выступает средством обучения. Несмотря на это, на нынешнем этапе развития методики преподавания иностранных языков предпочтение отдается аутентичным текстам. Такая тенденция характерна как для профессиональных, так и для профессионально–ориентированных курсов иностранных языков.

С одной стороны, возникает необходимость решения таких методических задач, как отбор, адаптация, моделирование учебного текста, выбор способа его презентации, с другой стороны, подчеркивается значимость отбора аутентичных текстов в учебных целях. В данном случае речь идет об аутентичных текстах или дискурсах, которые могут быть продуктивными средствами развития устной речи, а именно о газетных статьях, используемых в учебных целях для студентов – экономистов.

С точки зрения обучения устной речи студентов, важно то, что некоторые авторы под аутентичными текстами понимают тексты, произведенные для того, чтобы выполнить некий социальный заказ при изучении языка, не написанные специально для изучающих второй язык (образцы газетных или журнальных статей, радиопередачи, рекламные объявления)” (Little, Devitt, Singleton, 1988).

По сути, газетные тексты вполне могут служить готовым, аутентичным материалом для обучения иноязычной устной речи. В этой связи методисты предлагают термин “методически аутентичный текст”. По мнению Е. В. Носоновича, “методически аутентичный текст представляет собой естественное речевое произведение, созданное (скорее, по нашему мнению, привлечённое) в методических целях” (Е.В. Носонович, 1999: 18).

Обосновывая эффективность применения аутентичных неадаптированных текстов, О.Н. Киян сравнивает учебные и аутентичные тексты, выделяя искусственность, упрощенность учебных текстов. Согласно автору: “Препарированные учебные тексты теряют характерные признаки текста как особой единицы коммуникации, лишены авторской индивидуальности, национальной специфики”. Тот же автор выделяет также стилистические характеристики аутентичных текстов. Студенты работают над разностилевыми текстами с большим интересом. Более того, такие тексты оптимально представляют культуру страны изучаемого языка.

Важно то, что “аутентичные тексты иллюстрируют функционирование языка в форме, принятой носителями языка, и в естественном социальном контексте” (О.Н. Киян, 2010: 4).

Более того, аутентичные материалы мотивируют студентов. В этом плане газетные тексты, которые касаются экономической сферы, представляют большой интерес для будущих экономистов. Они не только приближают их к целевой языковой культуре, но к области будущей профессиональной деятельности.

Е.В. Носонович и Р.П. Мильруд рассматривают содержательные аспекты аутентичности учебного текста и выделяют 7 таких аспектов. Они выделяют, в первую очередь, куль-

турологическую аутентичность. Она предполагает “использование текстов, формирующих представления о специфике другой культуры, об особенностях быта, о привычках носителей языка”(Носонович, Мильруд, 1999: 6–12). Не менее важным представляется “информативная аутентичность”. При отборе таких текстов важно учесть возрастные особенности и интересы студентов–экономистов. Так, на первом курсе обучения отдается предпочтение изучению аутентичных текстов общего экономического характера, в связи с тем, что студенты на данном этапе еще только знакомятся с основными понятиями предмета экономики, в то время как на высших курсах, по мере углубления профессиональных знаний, содержание аутентичных текстов носит более специализированный характер, предоставляя возможность студентам–экономистам расширить свои профессиональные знания, основываясь на иноязычном аутентичном тексте.

С точки зрения интерактивных методов обучения, большой интерес представляет понятие “реактивная аутентичность”, так как “при разработке учебного текста” предлагается “вызывать у обучаемых аутентичный эмоциональный, мыслительный и речевой отклик”. В том же логическом ключе трактуется понятие “аутентичность оформления”, которое предполагает привлечь внимание студентов и облегчить “понимание коммуникативной задачи текста, установление его связей с реальностью”. В содержательном и функциональном плане важным представляется учет аутентичности учебных заданий текстам, так как такие “задания должны стимулировать взаимодействие с текстом, должны быть основаны на операциях, которые совершаются во внеучебное время при

работе с источниками информации” (Носонович, Мильруд, 1999: 6–12). Так, после анализа газетного аутентичного текста в аудитории, студентам предлагается в качестве внеаудиторной работы подготовить презентацию по уже известной теме, таким образом, реализуя закрепление пройденного материала.

Принципиально важно отметить, что использование аутентичного текста в целях развития иноязычной устной речи имеет практическую направленность. Это предполагает выполнение ряда функций: познавательной, развивающей, воспитательной и т.д.

Как известно из истории методики, познавательная функция текста выполняется при всех видах речевой деятельности (ознакомительной, изучающей и просмотровой).

В практическом плане для аутентичного текста характерна, в первую очередь, развивающая функция. Основательный анализ функциональных характеристик текста подтверждает сказанное. Согласно С.К.Фоломкиной “иноязычному тексту свойственны:

- 1) функция расширения и пополнения языковых знаний студента;
- 2) функция тренировки языкового материала, которым учащиеся должны овладеть;
- 3) функция развития устной речи – говорения;
- 4) функция развития умения читать” (Фоломкина, 1985: 20).

При рассмотрении функции аутентичного текста в плане развития словарного запаса у студентов–экономистов необходимо учитывать особенности развития словообразовательной системы изучаемого языка, процесс становления новых словообразовательных моделей слов и изменения словообразовательного процесса.

Аутентичные тексты содержат достаточно богатый лексический материал, в том числе специальную лексику. Исходя из этого, кроме вышеуказанных функций, они выполняют функции интериоризации иноязычных высказываний, безэквивалентной лексики, в том числе профессиональных терминов и понятий, неологизмов в сфере экономики, формирования иноязычного речевого механизма, реализации речевой интенции студентов-экономистов, актуализации средств родного языка, формирования полноценных качеств лексического навыка, его автоматизации и закрепления. Так, например, работа над газетным аутентичным текстом может способствовать изучению таких неологизмов как brandalism (размещение на общественных и офисных зданиях наружной рекламы, которая, как правило, уродует их внешний вид), todollarize (переориентировать национальную экономику на доллар), tokitchen-sink (предавать огласке всю информацию о плохом финансовом положении компании), которые являются отражением современной экономической действительности.

С методической точки зрения, газетные аутентичные тексты крайне продуктивны. Они являются одной из самых распространённых форм современного бытового языка, а их совокупная протяженность намного превышает общий объём речи в прочих сферах чело-

веческой деятельности. Исходя из этого, в учебных целях преподаватели должны отдавать предпочтение газетным аутентичным текстам, так как они, отражая современные тенденции экономических событий, одновременно расширяют и словарный запас, и профессиональные знания студентов-экономистов.

В целом можно заключить, что сам процесс работы с аутентичным текстом предполагает формирование и развитие устной речи. Любой вид работы с текстом способствует развитию устной речи, даже если эта работа носит рецептивный характер. Кроме усовершенствования коммуникативных умений и навыков, аутентичные тексты развивают также и профессиональные знания, таким образом, выполняя информативную, познавательную и развивающую функции.

Таким образом, в рамках усовершенствования навыков устной речи студентов-экономистов, считается целесообразным использовать газетные аутентичные тексты таких электронных ресурсов, как www.economist.com, www.ft.com, www.theindependent.com, www.theguardian.com и т.д., которые обогащают профессиональный словарный запас студентов-экономистов, а также одновременно информируют о последних событиях, которые происходят в современном экономическом мире.

ЛИТЕРАТУРА

1. Валгина Н.С. Теория текста. М.: Логос, 2003. – 173 с
2. Киян О. Н. Аутентичность как методическая категория в обучении иностранному языку. — [Электронный ресурс]. — Режим доступа: <http://main.isuct.ru/files/konf/antropos/section/4/KIYAN.htm>. – С.4–9.
3. Носонович Е.В., Мильруд Р.П. Критерии содержательной аутентичности учебного текста // Иностранные языки в школе, 1999. – № 2. – С. 6–12.
4. Фоломкина С.К. Текст в обучении иностранным языкам. // Иностранные языки в школе.– 1985. – № 3. – С. 18–22.
5. Little D., Devitt S., Singleton D. Authentic texts in foreign language teaching: theory and practice. Dublin. Authentic.– 1988.–112 p.

ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԳԵՏ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՆԱԿՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ԼՅՈՒՍՅԱ ՏԵՐ–ՍԱՐԳՍՅԱՆ

*Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան,
լեզուների ամբիոնի անգլերենի դասախոս*

Հոդվածում քննության են առնվում բնագրային տեքստերի միջոցով տնտեսագետ ուսանողների բանավոր խոսքի ձևավորման և զարգացման սկզբունքները՝ հաշվի առնելով դրանց բովանդակությունը, գործառույթները, բառապաշարի և դարձվածային միավորների պաշարի, ոճաժանրային առանձնահատկությունները: Առանձնացվում են բնագրային տեքստերի ճանաչողական, զարգացնող և ուսուցողական գործառույթները:

THE PRINCIPLES OF SELECTING AUTHENTIC TEXTS TO DEVELOP SKILLS OF
STUDENTS MAJORING IN ECONOMICS

LUSYA TER–SARGSYAN

Armenian State University of Economics, Chair of Languages, Lecturer of English

The article deals with the principles of forming and developing students' oral speech through authentic texts, taking into account their content, functions, the peculiarities of vocabulary, phraseological units, genre and style. When selecting authentic texts for developing students' speaking skills should be taken into account their cognitive, developing and educational functions.

**ԵՐԿՐՈՐԴ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ՎԵՐԼՈՒԾԱՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**

Հոդվածում քննարկվում է երկրորդ լեզվի ուսումնասիրության գործընթացում վերլուծաքննադատական հմտությունների և դրանց զարգացման եղանակների ու լսարանում այդ եղանակների կիրառման կարևորությունը: Հոդվածն առաջարկում է կիրառել վերլուծաքննադատական ներուժի զարգացմանն ուղղված մի քանի տարբերակներ հատկապես երկրորդ լեզվում ավելի արագ ու արդյունավետ արդյունքներ գրանցելու համար:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. օտար լեզու, վերլուծաքննադատական և ստեղծագործական միտք, բնավորություն, էգո, ինտեկտուալ չափանիշներ, արդյունավետ ուսուցում

Երկրորդ լեզվի ուսումնասիրության գործընթացում անհրաժեշտ պայմաններ են 21-րդ դարի հմտություններ համարվող քննադատական մտածողությունն ու ստեղծագործական ներուժը: Այս երկու հմտությունների առկայությունը չափազանց կարևոր է ոչ միայն լեզվի ուսումնասիրության գործընթացի համար, այլև այն ուսանողների համար, որոնք, որպես մասնագիտություն, ընտրում են հոգեբանությունը: Ի՞նչ է քննադատական մտածողությունը. այն վերլուծելու, քննարկելու, փաստարկելու, եզրակացնելու, հետևություններ անելու, ներկայացնելու, խորհելու, դիտարկելու, բանավիճելու, հակադրելու և մի քանի այլ հմտությունների համալիր է, որի տարրերից մի քանիսի, եթե ոչ մեծ մասի զարգացումը կարելի է կապել ներքին խոսքի զարգաց-

ման հետ: [1, էջ 519-522]: Կա կարծիք, որ քննադատական մտածողության հմտություններ պետք է սովորեցնել հոգեբանության երեք հարթություններում՝ գործնական, տեսական և մեթոդական: Հոգեբանության մեջ զարգացած քննադատական մտածողություն ունեցող մասնագետներին այլ կերպ անվանում են «իմաստուն սպառողներ», «բնավորության ավելի զգոն դատավորներ», «վարքագծի ավելի զգույշ ու խելամիտ ներկայացնողներ»: Այլ կերպ ասած՝ վարքագծային հստակ, ճշգրիտ գնահատման համար հոգեբանության մեջ քննադատական մտածողությունն անհրաժեշտ պայման է: [2, էջ 52]: Սա գործնական հարթությունն է, իսկ ահա տեսական հարթությունում նույնպես կարևոր է քննադատական մտածողության գործնոր՝ հատկապես վարքագծի գիտական մեկնաբանման գնահատման տեսությունում: Այսինքն՝ տեսական հարթությունում քննադատական մտածողության նպատակը ոչ թե հոգեբանության էությունը, տեսությունները, սկզբունքներն ու օրենքներն իմանալն է, այլ դրանք հասկանալն ու տեղին կիրառելը: Տեսական ոլորտում քննադատական մտածողություն զարգացնելու համար կարելի է, օրինակ, վարքագծին առնչվող ցանկացած բարդ թեմա (օր.՝ հոգեբանական խնդիրներ ունեցող ուսանողները և երկրորդ լեզվի ուսումնասիրությունը, կամ աուտիզմով կամ դիսլեքսիայով տառապող երեխաների ուսումնական դժվարությունները, և այլն) ընտրել և փորձել տալ սեփական վարքագծային տեսական բացատ-

րությունները: Սա մի մարտահրավեր է, որը թույլ է տալիս համադրել, մշակել և ավելացնել արդեն ապացուցված կամ առաջարկված տեսությանը, ավելացնել թեկուզ մի փոքրիկ մանրուք, որը կարող է հետագայում հիմք ծառայել ավելի մեծ և խորը բացահայտումների համար: Մեթոդական հարթությունում հոգեբանության շատ ֆակուլտետներ իրենց ուսանողների շրջանում փորձում են զարգացնել քննադատական մտածողության ունակություններ՝ կիրառելով գնահատական հետազոտական մեթոդներ. նախ և առաջ, ուսանողը պետք է սովորի, թե ինչի կարող է հանգեցնել գիտական մեթոդը, այնուհետև ուսանողը պետք է կիրառի իր կողմից յուրովի ընկալված գիտական այդ մեթոդը՝ բացահայտելով մոդելի տարրերը արդեն գոյություն ունեցող ուսումնասիրություններում: Մեթոդական քննադատական մտածողության նպատակներից մեկն այստեղ այն է, որ ուսանողը սկսում է գնահատել առկա ուսումնասիրության որակը և մարտահրավերներ է նետում հետազոտության բացահայտումներին ու եզրակացություններին: Ինչպես հոգեբանության մեջ, այնպես էլ լեզվում, քննադատական մտածողության բուն էությունը նույնն է, սակայն դրա զարգացման մեթոդները բնականաբար տարբեր են: Հոգեբանության մեջ հաճախ լսում ես այն տեսակետը, որ երբ ուսանողն անտեղյակ է իր մտածողությունում առկա որոշ էական խնդիրներին, նշանակում է, որ նա «չմտածող», «չարձագանքող» տեսակ է, իսկ երբ նա կանգնում է որևէ խնդրի առաջ կամ նրան մարտահրավեր են նետում, նա արդեն տեղեկանում է իր մտածողությունում առկա խնդիրների մասին: [3, էջ 2-3]: Սկզբնական շրջանում ուսանողին կարելի է քննադատական մտածողության հմտություններ սովորեցնել հարցի տեսական կողմը ապահովելով, սակայն այս հմտությունը զարգացնելն ու կատարելագործելը գործնական ան-

հրաժեշտություն ունի: Կարծում ենք, որ քննադատական մտածողության հմտություններ սովորելու ու զարգացնելու համար անհրաժեշտ են որոշակի հոգեբանական գործոններ. նախ և առաջ պետք է ընդունենք, որ մեր մտածողության հետ լուրջ խնդիրներ ունենք, և հետո նոր միայն սկսենք դրա առաջացման ու զարգացման ուղղությամբ քայլեր ձեռնարկել: Ուսումնական հաստատություններում ընդհանրապես «մտածող տեսակ» կերտելու համար հետաքրքիր առաջադրանքներ կան, որոնց նպատակն է անգամ «ամենաչմտածող» մարդուն ստիպել մտածել: Նշեմ դրանցից ամենակարևորները. [3, էջ 4-6]:

- Օգտագործել «վատնված» ժամանակը

- Մեկ խնդրի լուծում օրվա մեջ

- Յուրացնել ինտելեկտուալ չափանիշներ

- Պահել ինտելեկտուալ օրագիր

- Վերաձևել բնավորությունը

- Համաձայնություն կնքել ձեր էգո-ի հետ

- Վերասահմանել աշխարհընկալումը

- Կապ հաստատել հույզերի հետ

- Վերլուծել կյանքի վրա որևէ խմբի կամ անհատի ազդեցությունը և այլն:

Ինչպես տեսնում ենք, այս առաջադրանքների մեծ մասը հոգեբանական նախադրյալներ ունեն, և բնականաբար առողջ քննադատություն ունենալու համար անհրաժեշտ է հոգեբանական կայունություն և առողջ հոգեկան ու մտային վիճակ:

Օր.՝ «Օգտագործիր վատնված ժամանակը» ռազմավարությունը մտածողություն ձևավորելու առաջին փուլերից է, երբ, օրինակ, հեռուստացույցի ալիքներն անդադար փոխելու կամ բազմոցին ժամերով աննպատակ պառկելու փոխարեն պետք է օգտվել այդ ժամանակից, մտովի ետ գնալ անցկացրած, օրինակ, նախորդ օրը և գնահատել այդ օրվա ձեռքբերումներն ու ձախողումները, օրվա ընթացքում ցուցաբերած սե-

փական ուժեղ կողմերն ու թուլությունները: [3, էջ 6–8]: Կարող ես մտածել այնպիսի հարցերի շուրջ, ինչպես օրինակ, այսօր «ինչպես եմ նայել այն կամ այն խնդրին, որ հարցում եմ սխալվել, որ հարցում այլ կերպ կվարվեի, եթե ժամանակը հետ տայի, ինչը կփոխեի, ինչ բացասական մտքեր են այսօր ինձ անտեղի նյարդայնացրել, ինչ եմ արել, որ գոնե փոքր-ինչ մոտենամ իմ երկարաժամկետ նպատակներին, արդյոք գործում եմ իմ արժեհամակարգին ու սկզբունքներին ներդաշնակ» և նման այլ հարցեր: Իհարկե, այս հարցերից յուրաքանչյուրը որոշակի ժամանակ է պահանջում, սակայն աստիճանաբար այս հարցերին ժամանակ տրամադրելուց հետո կփոխվեն մտածողական ու վարքագծային նմուշները:

Երկրորդ՝ օրական «մեկ խնդիր» ռազմավարությունը, նույնպես լավ միջոց է վերլուծաբննադատական հմտություններ զարգացնելու համար: Օրվա մեջ կարող եք ընտրել ձեզ նյարդայնացրած կամ թեկուզ մի-փոքր անհանգստացրած խնդիր և վերլուծել դրա տարրերը, օրինակ, թե ինչն է խնդրի բուն էությունը, ինչով է այն խանգարում մեր կարիքներին ու նպատակներին, ինչպես կարելի է այն արագ ու հեշտ լուծել, և ամենակարևորը, արդյոք տվյալ խնդրի լուծումը մեր վերահսկողության հարթությունում է, թե դրանից դուրս:

Երրորդ՝ ինտելեկտուալ չափանիշների յուրացումը, յուրաքանչյուր շաբաթ ինտելեկտուալ հատկություններից մեկի զարգացումն է, ինչպես օրինակ, պարզություն, ճշգրտություն, ճշտություն, համապատասխանություն, խորություն, լայնություն, տրամաբանություն, նշանակություն, կարևորություն, և այլն: Օրինակ, ուսանողներին մեկ շաբաթ շարունակ դասախոսը կարող է կենտրոնացնել պարզության վրա, փորձել նրանց օգնել նկատել, թե այս կամ այն անձի հետ հաղորդակցվելիս երբ են ոչ պարզ արտահայտվել, կամ

իրենց հետ ով է անհասկանալի կամ ոչ պարզ արտահայտվել, կամ ընթերցելիս որ հատվածն է անհասկանալի, կամ գրելիս ինչ են ուզում պարզ ասել, որ չի ստացվում: [4, էջ 22–25]: Զուտ լեզվական ասպեկտում կան մի քանի քայլեր, որոնց միջոցով կարելի է սովորեցնել «պարզություն» չափանիշը. զգուշանալ բառերի ընտրության հարցում և փորձել հատուկ բառերի օգնությամբ հստակ ներկայացնել իրենց ասելիքը, հետո վերասահմանել նույն միտքը այլ կերպ, տալ օրինակներ՝ ելնելով սեփական փորձառությունից, օգտագործել փոխաբերություններ, դարձվածքներ, նկարեր, սխեմաներ՝ պատկերավոր ներկայացնելու համար իրենց ասելիքը: Սա հիանալի միջոց է հատկապես ոչ միայն քննադատական մտածողությունը զարգացնելու, այլև օտար լեզվի բառապաշարը բազմապատկելու համար:

Չորրորդ՝ ինտելեկտուալ օրագիր պահելու տեխնիկան, նույնպես ունի իր արդյունավետությունը, եթե շարունակական ու պատասխանատու բնույթ է կրում: Ուսանողն օրագրում նկարագրում է մի իրադրություն, որը շատ էական նշանակություն է ունեցել իր համար, մանրամասն նկարագրում է, թե ինչպես է արձագանքել այդ իրադրությանը, այնուհետև վերլուծում, թե կոնկրետ ինչ է տեղի ունեցել այդ իրավիճակում, փորձում է խորը ներթափանցել խնդրի մեջ և ամենավերջում՝ գնահատել, թե ինչ սովորեցրեց իրեն այդ իրադրությունը, ինչն այլ կերպ կաներ, եթե վերապրեր նույն իրավիճակը:

Հինգերորդ՝ «վերաձևավորիր բնավորությունդ» եղանակը, ինտելեկտուալ գծերից մեկն ընտրելն ու այն ուսանողի մեջ սերմանելն ու զարգացնելն է, դա կարող է լինել ինտելեկտուալ հաստատականություն, անկախություն, կարեկցանք, քաջություն, համեստություն և այլն: Օր.՝ համեստություն սերմանելիս, անհրաժեշտ է ուսանողներին սովորեցնել նկատել և ամենակարևորը՝

ընդունել սեփական սխալը, նկատել նաև այն, թե ինչպես է ինքը հրաժարվում ընդունել իր սխալը, անգամ եթե ամեն ինչ վկայում է նրա սխալ լինելու մասին, նկատել թե ինչպես է սկսում ինքնապաշտպանվել, երբ ինչ-որ մեկը փորձում է իր աշխատանքի կամ մտածելակերպի մեջ որևէ թերություն գտնել, նկատել, թե ինչպես է իր հստակեցնող մեծամտությունը խանգարում ուսման գործընթացին, հատկապես, երբ ուսանողին թվում է, որ արդեն ծանոթ է մատուցվող նյութին և կարիք չունի այն կրկին լսելու:

Վեցերորդ՝ էգոյի հետ հաշտություն կնքելու մեխանիզմն առաջարկում է ուսանողին օրվա ընթացքում դիտարկել իր եսակենտրոն մտածողությունը տվյալ հարցերի շուրջ խորհելով. ինչ հանգամանքներում եմ միշտ մտածում ի օգուտ ինձ, արդյո՞ք երբևէ բորբոքվել եմ աննշան բաներից, արդյոք երբևէ որևէ անմիտ բան եմ արել կամ ասել իմ համառության պատճառով, արդյո՞ք պարտադրել եմ իմ կամքը մյուսներին, արդյո՞ք ցանկացել եմ իմ կարծիքն արտահայտել որևէ հարցի շուրջ, սակայն չեմ արտահայտվել և ավելի ուշ գայրոյթ եմ զգացել, և նման այլ հարցեր: [4, էջ 40–43]: Հենց բացահայտում եք, թե ձեր եսակենտրոն մտածողությունը ինչպես է «շահագործում» ձեզ, կարող եք աշխատել այն ավելի ռացիոնալ մտքերի միջոցով փոխարինելու ուղղությամբ. դա կարող եք անել համակարգված ինքնաարտացոլման և ինքներդ ձեզ հարցեր տալու միջոցով, ինչպես օրինակ, ինչպես կվարվեք ռացիոնալ մարդը, ինչով է տարբերվում ռացիոնալ մարդու արարքը իմ կողմից կատարած արարքից: Տվյալ պարագայում մարդիկ հաճախ կարծում են, որ ռացիոնալ մարդը կվարվեք հենց այնպես, ինչպես իրենք են վարվել, ինչը, հավանաբար, ինքնախաբեություն է:

Յոթերորդ՝ աշխարհընկալումը վերասահմանելու մեխանիզմը, ենթադր-

ում է այն գաղափարը, որ մենք բոլորս ապրում ենք մի աշխարհում, որը և՛ անձնական, և՛ սոցիալական է, որում յուրաքանչյուր իրավիճակ ունի սահմանում, այսինքն դրան տրված է նշանակություն, և այդ իրավիճակին սահմանում տալը վճռվում է ոչ միայն նրանով, թե ինչպիսի վերաբերմունք ունենք դրանկատմամբ, այլ նաև նրանով, թե ինչպես ենք գործում այդ իրավիճակում: [5, էջ 112–116]: Այսինքն մենք կարող ենք այս կամ այն իրավիճակը պիտակավորել որպես բացասական, մինչդեռ մյուսները նույն իրավիճակը կարող են որակել դրական: Այսինքն, մեզանից է կախված, թե ինչպես կնայենք այս կամ այն իրավիճակին, ինչպես բացասականը կվերածենք դրականի, (և հակառակը), ինչպես փակուղի թվացող իրավիճակները նոր բանի շրջադարձային սկիզբ կդարձնենք, սխալներին՝ որպես նոր բան սովորելու հնարավորություն կնայենք: Այս ռազմավարությունը գործնականում կիրառելու համար առաջարկվում են որոշակի ուղեցույցներ. օրինակ, մտաբերենք մի քանի հերթական բացասական իրավիճակներ, որում մեզ հիասթափված, բարկացած, դժբախտ կամ մտահոգված ենք զգացել: Այսպես մենք կարող ենք բացահայտել բացասական հույզի խորքում ընկած պատճառը, այդպես մենք կարող ենք գտնել հնարավոր այլընտրանքային սահմանումներ դրանցից յուրաքանչյուրի համար, ինչպես նաև ծրագրել նոր արձագանքներ և նոր հույզեր նմանատիպ իրավիճակների համար: Եթե կա խնդիր, կա լուծում, պետք է մտածել ու գտնել այն, եթե չկա լուծում, ուրեմն պետք է մոռանալ այդ խնդրի մասին ու դադարել մտահոգվել, որովհետև, միևնույն է, այն լուծում չունի:

Ութերորդ՝ հույզերիդ հետ կապ հաստատելու ռազմավարությունը նախատեսում է հետևյալը. երբ որևէ բացասական հույզ եք ունենում, անընդհատ հարցրեք ձեզ, թե կոնկրետ որ միտքն է

բերում այդ հույզը, օրինակ, եթե բարկացած եք, հարցրեք ինքնեդ ձեզ, թե կոնկրետ ինչն է ձեզ բարկացնում, որն է իրական պատճառը ձեր բարկության, կամ ինչպես կարող եք հումոր տեսնել դրա մեջ:

Իններորդ՝ ամենավերջին մեխանիզմը, ձեր կյանքի վրա որևէ խմբի ազդեցության վերլուծությունն է, որն առաջարկում է վերլուծել այն վարքագիծը, որը խրախուսվում է և, հակառակը, չի խրախուսվում այն խմբերում, որոնց դուք պատկանում եք: [5, էջ 160–165]: Այստեղ պետք է վերլուծել, թե տվյալ խումբը ինչ է քեզանից «պահանջում», ինչ է քեզ «արգելում» անել, արդյոք ճնշում է «գործադրում» ձեզ վրա և արդյոք արժե մերժել այդ ճնշումը, այսինքն յուրաքանչյուր խումբ հարկադրում է որոշակի մակարդակի համապատասխանելիություն:

նելիություն:

Ինչպես տեսնում ենք, այս մեխանիզմներից գրեթե բոլորի հիմքում ընկած է հոգեբանական գործոնը, և այս մեխանիզմները քննադատական մտածողություն զարգացնելու նպատակով կարելի է օգտագործել ցանկացած գիտական բնագավառում, այդ թվում՝ լեզվական ասպեկտում: Նշեն, որ վերոնշյալ մեխանիզմներից թեկուզ մի քանիսի կիրառումը լսարանում զգալիորեն խթանում է ուսանողների քննադատական մտածողությունը, ուստի և նրանց ստեղծագործական միտքը, և սա բնական է, որովհետև վերը նշված մեխանիզմների զարգացումը և կատարելագործումը վերջիվերջո հանգեցնում է իդեալականության, ստեղծարարության, ստեղծագործական մեծ ներուժի բացահայտմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Философская энциклопедия, Т3, Москва 1964.
2. О. К. Тихомиров Психология мышления. Москва 1984
3. Paul, R. & Elder, L. (2001). Modified from the book by Paul, R. & Elder, L. (2001). Critical Thinking: Tools for Taking Charge of Your Learning and Your Life
4. Lipman, M. (1988). Critical Thinking: What It Can Be? Educational Leadership. 46(1), 38–43.
5. Cooperative Learning: Critical Thinking and Collaboration, Across the Curriculum, second edition, Adams, Dennis; Hamm, Mary, 1996

МЕТОДЫ РАЗРАБОТКИ И ПРИМЕНЕНИЕ НАВЫКОВ КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ В УСВОЕНИИ ВТОРОГО ЯЗЫКА

ЛИЛИТ МЕЛИКЯՆ

Университет Урарту, аспирант

В статье подчеркивается роль навыков критического мышления в устроении второго языка и методов развития и применения этих навыков в классах. Статья предлагает применять разные методы развития критического потенциала при изучении второго языка для большого и быстрого прогресса в процессе обучения.

METHODS OF DEVELOPMENT AND APPLICATION OF CRITICAL THINKING SKILLS
IN LEARNING A SECOND LANGUAGE

LILIT MELIKYAN

Urartu University, postgraduate

The article highlights the significance of critical thinking skills in second language acquisition and the methods of developing those skills and applying them in classrooms. The article proposes to use different methods of critical capacity development in the study of a second language for a large and rapid progress in the learning process.

ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

Հայաստանի ազգային գրադարանի փնտրեն, փնտրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի ազգային գրադարանի փնտրենի տեղակալ

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈՒՈՎՈՒՅԹՈՒՄ

Հայաստանի ազգային գրադարանը, որպես աշխարհում հայերեն տպագիր ժառանգության խոշորագույն պահոց, ստեղծում է բոլոր հնարավոր պայմանները՝ հայ տպագիր գիրքն ու մամուլը մեկ ընդհանուր դաշտում ամփոփելու և ներկայացնելու համար: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, ինչպես նաև գրադարանային ավտոմատացման համակարգերը օժտված են անսահմանափակ հնարավորություններով՝ հայ տպագիր ժառանգությունը հավաքագրելու և ամբողջացնելու համար:

Ի թիվս այլ շտեմարանների՝ Հայաստանի ազգային գրադարանում այսօր շարունակվում են «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարանների ստեղծման աշխատանքները: Նպատակը՝ այս երկու շտեմարաններում հավաքել և ամբողջացնել հայ տպագիր գրքի և մամուլի պատմությունը, հեղինակների և խմբագիրների կենսագրականները, հրատարակիչների, տպագրիչների և տպարանների մասին տեղեկատվությունը: Հնարավոր բոլոր տարբերակներով (սքանավորում, ներբեռնում այլ կայքերից, նվիրատվություններ հեղինակներից) ձեռք են բերվում գրքերի և

պարբերականների թվային պատճենները և կցվում են մատենագիտական գրառումներին՝ գիրքը կամ պարբերականը առցանց ընթերցելու համար:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հայ գիրք, հայ մամուլ, տպագրություն, հայկական գաղթօջախներ, էլեկտրոնային պաշարներ, թվայնացում, տպագիր նյութերի երկարաժամկետ պահպանություն, Հայաստանի ազգային գրադարան:

Գիրքը և մամուլը՝ որպես տեղեկատվության փոխանցման կարևորագույն կրիչներ, իրենց ուրույն դերն են ունեցել հայապահպանության գործում՝ սկսած տպագրության գյուտից մինչև մեր օրերը: Հասարակության պատմական զարգացմանը զուգահեռ, տպագիր ժառանգությունը ստանձնել է տվյալ ժամանակահատվածի ձեռքբերումներն ապագա սերունդներին փոխանցելու բարդ գործառնություն, ինչը հնարավորություն է տվել ճիշտ գնահատելու անցյալը: Այս երևույթն առավել ընդգծվում է, երբ անդրադարձ ենք կատարում հայ գրատպության պատմությանը: Հայ գրքի, հետագայում նաև հայ մամուլի տպագրության պատմության ընթացքը զուգահեռվել են հայ

ժողովրդի պատմությանը, ինչը Ռ. Իշխանյանի բնութագրմամբ՝ «...հեղաշրջիչ է եղել մարդկության պատմության մեջ»¹: Ներկայացնենք հայ գրքի և մամուլի տպագրության պատմության օրինաչափ զարգացման ընթացքը:

Հայ գրատպության սկիզբ է համարվում 1512 թվականը, երբ Հակոբ Մեղապարտի ջանքերով Վենետիկում տպագրվել են հայերեն առաջին գրքերը: Հայ պարբերական մամուլի տպագրության պատմությունը սկսվում է 1794 թվականից, երբ Մադրասում Հարություն Շմավոնյանի ջանքերով հրատարակվել է «Ազդարար»-ը: Նշենք, որ առաջին պարբերականն իր բոլոր չափանիշներով համընկնում էր գրքի ձևաչափին:

Արդեն իսկ պարզ է, որ հայ գրքարվեստի և մամուլի պատմությունը կերտվել է պատմական Հայաստանի սահմաններից դուրս: Պատճառներից մեկը բուն հայկական տարածքներում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակն էր, որի արդյունքում մեծ չափերի էր հասնում արտագաղթը: Երկրորդն այն էր, որ եվրոպական տարբեր քաղաքներում ձևավորված հայկական համայնքները մասնակցում էին այդ երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային հարցերի կարգավորման և զարգացման գործընթացներին, այդամենը ծառայեցնում էին հայ ժողովրդի և սեփական գաղթօջախի շահերին: Հայտնվելով օտար միջավայրում՝ հայերը ինքնակազմակերպվում էին, համախմբվում և ձևավորում համայնքի կյանքն ու գործունեությունը: «Ամեն տեղ, ուր արդեն գաղթականություն կար, եթե միայն չէր հանգել նորամեջ հայրենիքի սէրը, ազգասիրական զգացմունքը, ազգայնության գաղա-

փարը, և եթե չէր կուլ գնացել իրան տիրապետող ազգի տարրի մեջ, սկսում էր կամ հետաքրքրվել իր հայրենական նոր գրականությամբ, կամ մասնակցել և կամ վերջապես գործել այդ բանում՝ կամենալով մի և նոյն ժամանակ իր բնակության տեղը հայ նոր գրականության գրեթե կեդրոն դարձնել»²:

Փաստենք հետևյալը. Աբգար Դպիր Թոխաթեցին Կ. Պոլսում հայերեն գիրք է հրատարակել դեռևս 1568 թ, իսկ նույն Կ. Պոլսում թուրքերեն առաջին գիրքը տպագրվել է 1729 թ.: Իրանում հայերեն առաջին գիրքը տպագրվել է 1638 թ. Խաչատուր վարդապետ Կեսարացու ջանքերով, երբ Միջին Արևելքում դեռևս տպարան գոյություն չունեին, իսկ պարսկերեն առաջին գիրքը տպագրվել է 1830 թ.³: Փաստերը խոսում են այն մասին, թե ինչ կարևոր նշանակություն է ունեցել տպագրությունը հայ իրականության մեջ: 16-րդ դարում հրատարակվել է 17 հայերեն գիրք՝ Վենետիկ՝ 8 գիրք, Կ.Պոլիս՝ 6 գիրք, Հռոմ՝ 3 գիրք: Սրան զուգահեռ նույն հարյուրամյակում հրատարակվել է հայերեն հատվածներ պարունակող 16 այլալեզու գիրք:

17-րդ դարում հայ գրքարվեստն ու տպագրությունը զարգացել են՝ ընդգրկելով աշխարհագրական նոր տարածքներ: Հայ մշակույթի, պատմագրության, գրականության զարգացմանը զուգահեռ որակական նոր փուլ է մտել գրատպության արվեստը: Ինչպես նշում է Ռ. Իշխանյանը՝ «Այս դարի երկրորդ կեսում էր, որ հայ գրքի տպագրությունը անջատ, ընդհատվող պոռթկումներից վերածվեց մշտական, անընդմեջ մի գործողության, որ այդպես շարունակվելով՝ հասավ մեր օրե-

1 Այս հարցի շուրջ հիմնավոր ուսումնասիրությունները տես Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, Ե. 2012:

2 Յարոյ, Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ, Թիֆլիս, 1878, էջ 13:

3 Տես Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, Ե. 2012:

րը»¹: 17-րդ դարում տպագրվել է 165 անուն հայերեն գիրք: Հայ գրքի տպագրության կենտրոններ են դարձել Հռոմը (38 գիրք), Վենետիկը (32 գիրք), Ամստերդամը (40 գիրք), Լվովը (3 գիրք), Փարիզը (2 գիրք), Մարսելը (20 գիրք), Նոր Զուղան (12 գիրք), Կ. Պոլիսը (2 գիրք), Լիվոռնոն (1 գիրք), Զմյուռնիան (1 գիրք), Լայպցիգը (1 գիրք), Սուչավան (1 գիրք), Պադուան (1 գիրք) և այլ քաղաքներ: Կարելի է վստահ նշել, որ ի տարբերություն նախորդ դարի՝ 17-րդ դարը աչքի է ընկնում տպագրված գրքերի առատությամբ և տպագրության բարձր որակով: 18-րդ, իսկ ավելի ուշ 19-րդ դարից գրատպության արվեստը մտել է ժողովրդի առօրյայի մեջ, դարձել է պահանջված հասարակության տարբեր խավերի կողմից: Զարգացման այս միտումը շարունակվել է նաև 20-րդ դարում՝ ընդգծելով գրքի արժեքը մեր իրականության մեջ: 19-րդ դարում աշխարհի տարբեր ծագերում տպագրվել է մոտ 9200 հայերեն կամ հայերեն էլից տվյալներ պարունակող գիրք, 20-րդ դարում այդ թիվը հասել է շուրջ 80.000-ի:

Հայ գրատպության համատեքստում կարևորվում են տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված գրացուցակները կամ մատենագիտությունները, որոնք լավագույնս պատկերացում են տալիս գրատպության և հայկական տպարանների անցած ուղու մասին: 19-րդ դարում հայ գրքի և մամուլի մատենագիտության պատմությունը թևակոխել է նոր գիտական փուլ՝ մատենագիտական ցանկերը ներկայացնելով որոշակի վերլուծություններով: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Իգնատիոս Փափագյանը կազմել է 1565-1800 թթ. տպագրված հայերեն գրքերի ցուցակ, որը մնացել է անտիպ, բայց անտիպ այս աշխատանքը դարձել

է Գարեգին Զարբհանայանի «Հայկական մատենագիտություն» գրքի հիմքը: Այսպես սկզբնավորվել է հայ տպագիր գրքի մատենագիտության պատմությունը, որը հետագա տասնամյակներում հսկայական առաջընթաց է ունեցել: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամները պարբերաբար տպագրել են մատենագիտական ցանկեր, որոնցում ներկայացրել են միաբանությունում պահվող, ինչպես նաև իրենց հրատարակած գրքերը:

Հայկական պարբերականների վերաբերյալ մատենագիտական ուսումնասիրությունները երևան եկան արդեն 19-րդ դարի կեսերին, երբ հրապարակում գտնվող պարբերականների թիվը չէր անցնում մի քանի տասնյակից: Դրանք սովորական պարզ ցուցակներ էին, որոնք տպագրվում էին ժամանակին լույս տեսնող պարբերականների՝ «Բազմավէպ» հանդեսի, «Եվրոպա» շաբաթաթերթի, «Փարիզ» թերթի էջերում: 19-րդ դարի երկրորդ կեսին, պարբերականների աճին զուգահեռ, դրանց ուսումնասիրությունը զարգացման նոր փուլ մտավ: Սկսեցին հրատարակվել ոչ միայն պարբերականների լրիվ ցուցակներ, այլև առանձին պարբերականների կամ առանձին աշխարհագրական վայրում հրատարակված պարբերականներին վերաբերող ուսումնասիրություններ, օրինակ, Յարոյի «Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մէջ» (Թիֆլիս, 1878), Գ. Գալեմքարյանի «Պատմություն հայ լրագրության ի սկզբանե մինչև մեր ժամանակը» (Վիեննա, 1893), Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը սկզբից մինչև մեր օրերը» (Ալեքսանդրապոլ, 1895) և այլն:

Հայ մատենագիտության պատմության մեջ ակնառու են այնպիսի անհատներ, ինչպիսիք են Ստ. Նազարյանը, Ալ. Խուդաբաշյանը, Հովհ. Շահխաթունյանցը, Գ. Զարբհանայանը, Գ. Գալեմքարյանը, Գ. Լևոնյանը,

1 Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, Ե. 2012, էջ 32:

Մ. Պոտուրյանը, Մ. Միանսարյանցը, Ղ. Ալիշանը, Ա. Ղազիկյանը, Հ. Անսայանը, Հ. Պետրոսյանը, Ա. Բաբայանը, Հ. Կոստիկյանը, Ն. Ոսկանյանը, Ռ. Իշխանյանը և այլք: Նրանց կազմած մատենագիտական ցանկերի շտրիիվ հայ իրականության մեջ ձևավորվել է «ազգային մատենագիտություն» հասկացությունը, ինչն էլ այսօր հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տպագրված գրքերի և մամուլի քանակի, որակի, տպագրական գտնվելու վայրի և այլ կարևոր գործոնների մասին¹:

Հայ մատենագիտության պատմությունը որակական նոր փուլ է մտել, երբ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում 1946 թվականից ձեռնամուխ են եղել հայ գրքի ամբողջական մատենագիտության կազմման աշխատանքներին: Անհրաժեշտ էր մեկ ամբողջության մեջ ներառել և ներկայացնել հայ տպագիր գիրքը: Առաջին հատորը պետք է ներառեր 1512–1800 թթ. տպագրված հայ հնատիպ գրքերը, սակայն որոշ ժամանակ անց աշխատանքները դադարեցվել են, քանի որ բացակայում էին համապատասխան աշխատանքային պայմաններն ու միջոցները: 1958 թ. ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության որոշմամբ վերսկսվել են աշխատանքները, գրադարանի գիտխորհրդին ներկայացվել են որոշ թեզիսներ և ապագա գրքի կազմման հայեցակարգը, որոնք սակայն մերժվել են՝ նախարարության ծրագրերին չհամապատասխանելու պատճառով: Հատկապես գրքի կառուցվածքի, գրքերի նկարագրության հարցերը լուրջ քննարկումների նյութ են դարձել: Հայեցակարգային փաստաթուղթը, որն արտացոլում էր աշխատանք

քի նպատակը, գործառույթները, որոշ դիտողություններով հաստատվել է 1958 թ. դեկտեմբերի 30–ին, որից հետո սկսվել են աշխատանքները: Առ այսօր հրատարակվել է հինգ հատոր՝ ներկայացնելով հայ գրքի պատմությունը 1512–1930 թվականներին: Ավարտական փուլում է գտնվում 6–րդ հատորը, որը ներառում է 1931–1940 թվականների հրատարակությունները: Յուրաքանչյուր հատոր ժամանակագրական կարգով հնարավորինս ամբողջական ներկայացնում է հայ տպագիր արտադրանքը՝ տպագրված աշխարհի տարբեր անկյուններում: Հատորների վերջում այբբենական կարգով արտացոլվում են անձնանունների, վերնագրային, առարկայական, աշխարհագրական, ինչպես նաև տպարանների ու մատենաշարերի ցանկերը: Կատարվող հսկայածավալ աշխատանքը առավելագույնս նպաստում է հայ գրքի պահպանության և հանրահռչակման համընդհանուր գործին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկա փուլը առաջադրում է նոր լուծումներ հայ գրքի և մամուլի մատենագիտության կազմման հարցում: Խոսքը տեղեկատվական նոր տեխնոլոգիաների և ավտոմատացման համակարգերի մասին է, որոնք ընդարձակում են գրքի և մամուլի պահպանության, խնամքի, ապագա սերունդներին անխաթար փոխանցելու հնարավորությունները: Սրան զուգահեռ, գրքերի ու մամուլի թվայնացման աշխատանքները սկսում են կրել զանգվածային բնույթ՝ ընդգրկելով ավելի մեծ ծավալներ, ամբողջական դարձնելով հայ գրքի և մամուլի պատմությունը:

Հայաստանի ազգային գրադարանը ստեղծում է հնարավոր բոլոր պայմանները՝ հայ տպագիր և էլեկտրոնային գրքերն ու մամուլը մի ընդհանուր դաշտում ամփոփելու և ներկայացնելու համար: Ստեղծված տարաբնույթ էլեկտրոնային շտեմա-

1 Հայ մատենագիտության պատմությունը, այդ թվում՝ հայ գրքի մատենագիտությունը, լավագույնս ներկայացված է Ռ. Իշխանյանի աշխատություններում: Տես Իշխանյան Ռ., Հայ մատենագիտության պատմություն, Պրակ Ա-Գ, Եր., 1964–1968:

րանների շարքում առանձնանում են «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարանները¹, որոնց ստեղծման աշխատանքները սկսվել են 2010 թվականից Հայաստանի ազգային գրադարանում և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանում: Այսօր այս երկու գիտահետազոտական կենտրոններն աշխատում են զուգահեռ՝ համատեղելով շտեմարանների ստեղծման իրենց ջանքերն ու կարողությունները: «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում ներառվում են 1512 թվականից մինչ այսօր աշխարհի տարբեր երկրներում տպագրված հայերեն, հայատառ, ինչպես նաև հայերեն հատվածներ պարունակող գրքերը: Առանձնանում են նաև բազմալեզու հրատարակությունները, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է: «Հայ մամուլ» էլեկտրոնային շտեմարանում ներառված են 1794 թվականից մինչև մեր օրերը աշխարհի տարբեր ծագերում հրատարակված հայատառ պարբերականները: Այստեղ ներառվում են նաև այլալեզու, երկլեզվյան ու բազմալեզվյան մամուլի այն անվանումները, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է, ինչպես նաև էլեկտրոնային պարբերականներ: Ազգային գրադարանի մամուլի հավաքածուում հաշվվում է 3760 անուն պարբերական, որից 2.108 անուն՝ հանդես և 1.652 անուն՝ լրագիր: Դրանցից մեկ անուն՝ 18-րդ դ., մեկ անուն՝ 18-19-րդ դդ., 332 անուն՝ 19-րդ դ. և մնացած անունները՝ 20-21-րդ դդ. /սկսած առնված տպագրության սկիզբը/: Դրանք են Ազդարար (Մադրաս, 1794 թ.), Տարեգրություն (Վենետիկ, 1799 թ.), Արմենիա (Մարսել, 1885 թ.), Արշալույս Արարատյան (Զմյուռնիա, 1840 թ.), Բազմավեպ (Վենետիկ, 1843 թ.),

Հանդես ամսօրյա (Վիեննա, 1887 թ.), Արծվիկ Տարոնո (Մուշ, 1863 թ.), Հյուսիսափայլ (Մոսկվա, 1858 թ.), Մշակ (Թիֆլիս, 1872 թ.), Մուրճ (Թիֆլիս, 1889 թ.), Լուսա (Թիֆլիս, 1896 թ.) և այլ արժեքավոր անուններ: Լույս ընծայվելով որոշակի պարբերականությամբ՝ հանդեսները և թերթերը, հատկապես օրաթերթերը, շաբաթաթերթերը, հայկական կենտրոններում ու գավառներում կատարվող իրադարձությունները արձանագրել են վավերական արժանահավատությամբ: Պարբերականները անսպառ նյութ են պարունակում հայ ժողովրդի պատմության, հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի և այլ բնագավառների վերաբերյալ, և այդ առումով դրանք հետազոտողների համար համարվում են աղբյուրագիտական անփոխարինելի շտեմարաններ: Թերևս այդ է պատճառը, որ պահպանության առումով պարբերականները առավել խոցելի են, քան գրքերը: Ուստի հայկական մշակույթային ժառանգության պահպանման, քարոզչության ու հանրահռչակման համար թվայնացման միջոցով դրանց երկարաժամկետ պահպանության ապահովումը օրախնդիր հարց է, ինչը արդեն 5-րդ տարին է՝ Ազգային գրադարանը հետևողականորեն իրականացնում և համակարգում է²:

Երկու շտեմարաններում էլ սկզբունքը մեկն է՝ հայատառությունը: Նպատակը՝

1. Ամբողջական ներկայացնել հայ գրքի և մամուլի պատմությունը՝ տեսանելի դարձնելով պատմության հարցականները և օրինաչափ զարգացման պատկերը:

2. Հավաքել աշխարհով մեկ սփռված հայերեն և հայերեն հատվածներ

2 Պետք է նկատի ունենալ որ 2010-2013 թթ. ընթացքում ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը թվայնացրել և համացանցում է տեղադրել գիտական հանդեսների ավելի քան 400 հազար էջ:

1 Շտեմարանները հասանելի են համացանցի հետևյալ հասցեներով՝ <http://tert.nla.am>, <http://haygirk.nla.am/>

պարունակող օտարալեզու գրականությունը՝ ապագայում կորուստներից խուսափելու նպատակով:

3. Ճշտել աշխարհով մեկ սփռված գրքերի և պարբերականների աշխարհագրական տարածքները՝ նշելով յուրաքանչյուր միավորի գտնվելու վայրը, ինչպես նաև ֆիզիկական վիճակը:


4. Պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը՝ թվայնացնել գրքերը և մամուլը՝ ընթերցողական լայն լսարան ունենալու համար:

5. Իրականացնել հավաքածուների երկարաժամկետ պահպանություն:

Շտեմարանները կառուցվում են

հետևյալ սկզբունքներով.

ա. Նախ նկարագրվում է տվյալ գիրքը կամ պարբերականը: Մատենագիտական նկարագրությունը հնարավորություն է տալիս ամփոփ տեղեկատվություն ստանալ գրքի կամ պարբերականի ստեղծման, վայրի, տարեթվի, ստեղծողի, պատասխանատուների մասին: Մատենագիտական գրառման մեջ կարևորվում են բոլոր այն լրացուցիչ տեղեկությունները, որոնք հնարավորինս կոյուրացնեն գիրքն ուսումնասիրելու և ընկալելու ընթերցողական պահանջները:



Normal view

MARC view

ISBD view

Ուրբաթագիրք /

Type: Book

Publisher: Վենետիկ : [տպ. Հակոբ Մեղապարտի](#), 1512

Description: 124 էջ : 16 սմ.

Subject(s): [Միջնադարյան բժշկարան](#) | [Աղոթքներ](#) | [ՀԱԳ](#) | [Հայ հնատիպ գիրք](#)

Online resources: [Կարդալ առցանց](#)

Contents:

Tags from this library:

No tags from this library for this title.

average rating: 0.0 (0 votes)

Ազդարար /

by [Ըմբառնեան Յարուօին Ժողագեցի \(Խմբ.\)](#).

Type: Continuing Resource

Analytics: [Show analytics](#)

Publisher: Մայրաքաղաք : [տպ. Յարութեան Ըմբառնեան Ժողագեցի](#), 1794

Description: 102 էջ : նկ., նկարիչ : 18 x 10 սմ.

Subject(s): [Յարութեան Ըմբառնեան Ժողագեցի](#) | [Մայրաքաղաք](#) | [Մայրաքաղաք](#) | [ՀԱԳ](#) | [Ինկուպի](#)

Online resources: [Կարդալ առցանց](#)

Copyright: Online resource is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license. Առցանց կարդալից պատճենված են «Արհեստը ընկալի» նախնիները (CC BY-NC 3.0) սրբուհիները.

Tags from this library:

No tags from this library for this title.

2. Մատենագիտական յուրաքանչյուր գրառմանը կցվում է թվային տարբերակը՝ գիրքը կամ պարբերականը՝ առցանց ընթերցելու համար: Մամուլի և գրքերի թվայնացման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի ազգային գրադարանում և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում: Թվայնացման աշխատանքներին մասնակցում են նաև համայնքային և մարզային գրադարանները, մշակութային, հոգևոր հաստատություններ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մատենադարանը, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանները,

Խնկո-Ապոբ անվան ազգային մանկական, Գիտատեխնիկական, Գիտաթշկական գրադարանները, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, Գրականության և արվեստի թանգարանը, ԵՊՀ և մյուս բուհական գրադարանները, առանձին պարբերականների խմբագրությունները, ինչպես նաև անհատներ Հայաստանից և արտերկրից:

Երկու շտեմարաններում էլ թվային տարբերակները տեղադրվում են PDF ձևաչափով: «Հայ մամուլ» էլեկտրոնային շտեմարանում յուրաքանչյուր անուն պարբերականի համար ստեղծվում են աղյուսակներ, ինչը հեշտացնում է ընթերցողի որոնողական աշխատանքը:

ԱՇԽԱՏԱՐ												
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
1794	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1795	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1796	17	18										

Նշվում է պարբերականը, տարեթիվը և յուրաքանչյուր համարը, որին էլ կցվում է պարբերականի PDF տարբերակը:

Բացի դրանից, կատարվում են որոնողական աշխատանքներ՝ աշխարհի տարբեր գրադարաններում պահպանվող հայալեզու գրքերի ու պարբերականների թվային տարբերակները հայտնաբերելու ուղղությամբ: Նման աշխատանքների արդյունքում հայտնաբերվում են գրքեր ու պարբերականներ, որոնց անուններն անգամ անհայտ են եղել, և որոնք դուրս են մնացել տարբեր դարաշրջաններում ստեղծված մատենագիտական ցանկերից: Կատարվում են ներբեռնումներ, և պահպանելով հեղինակային իրավունքի բոլոր նորմերը՝ այդ թվային տարբերակները նույնպես կցվում են համապատասխան գրառումներին: Արդյունքում ամբողջական են դառնում շտեմարանները՝ ամբողջացնելով նաև հայ գրքի ու մամուլի պատմությունը: Օրինակ՝ Ազգային գրադարանի հա-

վաքածուում և մատենագիտական ցանկերում բացակայում էին Յակոբ Շահան Զրպետեանի ուսումնասիրությունը հրատարակված 1812 թ.՝ հիմնված Ֆրանսիայի Կայսերական գրադարանի 2 ձեռագրերի վրա և 1926 թ. հրատարակված «Մարկոսի Ավետարանի» անգլերեն ուսումնասիրությունը Ալբերտ Էդմունդսի խմբագրությամբ: Ներկայումս գրքերն իրենց արժանի տեղն են գտել «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում: Հայտնաբերվում են նաև մինչ այժմ մատենագիտական աղբյուրներում չհիշատակված պարբերականների անուններ: Օրինակ, Արման Հակոբյանի՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում պաշտպանած՝ ««Բաբելոն» հայալեզու ասորական պարբերականը որպես հայ-ասորական լեզվական համակեցության եզակի նմուշ» ատենախոսության հրապարակված սեղմագրից (Եր., 2016թ.) տեղեկանալով 1919-1921թթ. Բոստոնում հրատարակված հայալեզու պարբերականի մասին, նրա թվային տարբերակները գտանք

<http://assyrianarchive.org> կայքում¹: Որոնումների արդյունքում գտանք և շտեմարանում գրառեցինք նաև Բոստոնում ասորիների հրատարակած և մինչ այժմ հայ մամուլի մատենագիտական ցանկերում բացակա «Նինուէ» պարբերականը /1927–1928թթ./ (պարբերականի որոշ համարներ հայալեզու են)²:

Ներկայումս թվայնացման լայնածավալ աշխատանքներ են ընթանում աշխարհի բազմաթիվ գրադարաններում՝ ԱՄՆ Կոնգրեսի գրադարանում, Բրիտանական գրադարանում, Ֆրանսիայի ազգային գրադարանում, Ռուսաստանի ազգային գրադարանում, Եվրոպական գրադարանները մասնակցում են *Europeana*³ անվանումով համաեվրոպական նախագծի իրականացմանը /նախագծի անդամ է հանդիսանում նաև Հայաստանի ազգային գրադարանը/, Ամերիկյան համալսարանական և հանրային գրադարանները իրականացնում են թվայնացման «Հաթի Թրասթ»⁴ նախագիծը, «Գուգլ» կորպորացիան իրականացնում է թվայնացման իր նախագիծը⁵, ՅՈՒՆԵՍԿՕ-ն ևս ակտիվորեն աջակցում է տպագիր ժառանգության թվայնացմանը իր «Գուտենբերգ նախագծով»⁶: Նման նախագծերի կայքերից շատ հաճախ հնարավոր է լինում հայտնաբերել հայերեն գրքեր՝ մեծամասամբ դրանք 17–19-րդ դարերի հրատարակություններ են, և երբեմն հանդիպում են գրքեր, որոնք բացակայում են Հայաստանի գրադարաններում, իսկ երբեմն էլ պատահում են գրքեր, որոնք ներառված չեն հայ գրքի մատենագիտական ցանկերում: Բանի որ նման գրքերի

թվային պատճենները ազատ հասանելի են հանրությանը, ապա այս գրքերի մատենագիտական նկարագրությունից հղում է կատարվում գրքի թվային պատճենի վրա: Խնայվում են թե՛ ժամանակ և թե՛ հաշվողական պաշարներ: Այլ գրադարաններից ու կայքերից կատարված ներբեռումների շնորհիվ լրացվում են բացակա գրքերի թվային պատճենները, որի արդյունքում միայն հնատիպ շրջանի 751 գրքի կցված է թվային տարբերակ: Ընդ որում՝ հնատիպ շրջանի 159 գիրք, ֆիզիկապես բացակա լինելով պահոցներից, հնարավոր է ընթերցել առցանց տարբերակով: Կատարված աշխատանքների շնորհիվ 2016 թ. միայն Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գրադարանում թվայնացրել և Հայաստանի ազգային գրադարանին են տրամադրել 10 հնատիպ գրքի թվային տարբերակ, որի մեջ առանձնանում է հատկապես 1513 թ. հրատարակված «Պատարագատետրը», 1704 թ. «Պարտեզ հոգևորը», 1779 թ. հրատարակված «Սաղմոսարանը»: [Archive.org](http://archive.org) կայքից ներբեռնվել և 3 գրքի կցվել է թվային տարբերակ: Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկոյ կաթողիկոսարանի կողմից Հայաստանի ազգային գրադարանին են տրամադրվել մի շարք արժեքավոր գրքերի թվային տարբերակներ, որոնք բացակայում են գրադարանի պահոցներից: Զմմառի վանքում թվայնացվել և Հայաստանի ազգային գրադարանին են տրամադրվել 1714 թ. Հռոմում տպագրված «Չորք խոկմունք յաղագս յաիտենականութեան» ինչպես նաև 1717 թ. Կ. Պոլսում տպագրված «Համառօտ հաւաքումն իրաց մանաւանդագունից» հնատիպ գրքերի թվային տարբերակները: Ամստերդամի համալսարանում թվայնացվել և Հայաստանի ազգային գրադարանին է տրամադրվել հնատիպ 9 գրքի թվային տարբերակ, որոնց մեջ առանձնանում են Վենետիկում 1696 թ. տպագրված «Տօմար»-ը, 1686–1688

1 <http://tert.nla.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=5832>

2 <http://tert.nla.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=6027>

3 <http://www.europeana.eu/>

4 <https://www.hathitrust.org/>

5 <https://books.google.com/>

6 <https://www.gutenberg.org/>

թթ. տպագրված «Ճաշոց»-ը, Ամստերդամում 1717 թ. տպագրված «Ժամագիրքը»: Գրադարանի բարեկամ Ավո Հովհաննիսյանը տրամադրեց 1931 թ. Սպահանում հրատարակված և մատենագետներին անհայտ աշակերտական «Մանուկ» պարբերականը¹: Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրման կենտրոնը տրամադրեց 1927 թ. Հալեպում հրատարակված «Նոր Բաստիլ» պարբերականի թվային պատճենը²:

«Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանը հասանելի է համացանցի <http://tert.nla.am/> հասցեից: Աշխատանքի արդյունքն արդեն իսկ գրավիչ է ընթերցողի համար: Գրացուցակի «Կարդալ առցանց» հղման ներքո հասանելի են պարբերականի համարները և դրանց թվային պատճենները: Օգտվողն առանց գրադարան այցելելու կարող է ընթերցել անհրաժեշտ նյութերը, ներբեռնել անհատական համակարգիչ կամ տպել:

Ազգային գրադարանի կայքէջում՝ **«Թվայնացված մամուլի վիճակագրություն»³** հղման ներքո ներկայացված է «Հայ մամուլ» շտեմարանի ձևավորման դինամիկան՝ ըստ ամիսների և ըստ տարիների:

Հայ մամուլ առցանց գրադարանի թվայնացված նյութերը ձևավորվել են հետևյալ ուղիներով.

ա) Համացանցում առկա նյութերի փնտրում և բեռնաթափում: Երբեմն մեկ անուն մամուլի տարբեր տարիների համարները ժողովում ենք մի քանի կայքերից: Օր.՝ Կոունկ հայոց աշխարհին /Թիֆլիս, 1860–1863/ հանդեսի երեք տարիների բոլոր 36 համարները

1 http://tert.nla.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=2466&query_desc=kw%2Cword%3A%20%D5%84%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%AF

2 <http://tert.nla.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=6026>:

3 <https://dl.dropboxusercontent.com/u/16623558/stat.pdf>

գտել և բեռնաթափել ենք երեք տարբեր հասցեներից՝ <https://books.google.am>, <http://www.digitale-sammlungen.de>, <https://babel.hathitrust.org>;

բ) Հղում համացանցում առկա առցանց գրադարաններին;

գ) Այլ հաստատություններից նյութերի թվային տարբերակների ձեռքբերում: Այս առումով համագործակցում ենք բամաթիվ գրադարանների և անհատների հետ;

դ) Այսօր գործող պարբերականների խմբագրություններից հերթական համարների թվային պատճենների ստացում (Ժամանակ, Ազգ, Գոլոս Արմենիի, Հայաստանի Հանրապետություն, Հայ գինվոր, Արցախի մամուլի անուններից՝ Մարտիկ, Ջրաբերդ, մարզային պարբերականներ՝ Հայրենական, Գեղամա աշխարհ կլն);

ե) Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուի նպատակային թվայնացում՝ նկատի առնելով մամուլի հրատարակության ժամանակը, ընթերցողական պահանջը, վտանգվածության աստիճանը:

Որպես լրակցաց արտածում՝ մատենագիտական գրառումները արտածվում են դիտման «Նորմալ դիտում» ձևաչափով (նկ 1): Անհրաժեշտ է «Կարդալ առցանց» հղումից անցնել աղյուսակին (նկ. 2), այնուհետ ընտրել տարբերակը, համարը և կարդալ (նկ. 3):

Արմենիա : Ազգային, քաղաքական լրագիր :

Փորթուգալեան, Մկրտիչ[տնօրէն-լամբ.]

Տեսակ: Շարունակվող պաշար
Հրատարակիչ: Մարսել : [տպ.Մ. Փորթուգալեանի](http://www.portsugalean.com), 1885–1921

Նկարագրություն: 4 էջ ; 45 x 31 սմ.
Այլ վերնագիր...Արմենիա

Խորագիր(ներ): [Արմենական կուսակցություն](#) | [Կուսակցական մամուլ](#) -- [Պարբերականներ](#) -- XIXդ | [Մարսել](#) | [Ֆրանսիա](#) | [Թերթ](#)

Առցանց պաշարներ: [Կարդալ առցանց](#)

Նկ.1.

ԱՐՄԵՆԻԱ

1885	1886	1887	1888	1889	1890	1891	1892	1893	1894
1895	1896	1897	1898	1899	1900	1901	1902	1903	1904
1905	1906	1907	1908	1909	1914	1915	1918	1919	1920
1921									

Նկ. 2



Նկ. 3.

Շտեմարանի ձևավորման ընթացքում պարբերականների տարեթվերի ու համարների ամբողջականության հնարավոր վերականգնման, պակասող համարների թվային պատճենների ձեռքբերման ուղղությամբ բավականին աշխատանք է կատարվում, ինչի աշխարհագրական ընդգրկումը հաճախ տեսանելի է աղյուսակներից: Օրինակ, «Արշալոյս Արարատեան» (Զմյուռնիա, 1840–1887), «Արմէնիա» (Մարսել, 1885–1921) և այլ պարբերականների մի քանի տարեթվերի ամբողջական հա-

մարներ տրամադրվել են Հայաստանի և արտերկրի մի քանի հաստատությունների կողմից: Նման պարագայում այդ համարների ներքո նշվում է գործընկեր գրադարանի կողմը:

Աշխատանքներ են տարվում նաև մատենագիտական աղբյուրներում աստղանիշով գրառված պարբերականների որոնման, բնագրի կամ թվային պատճենի ձեռքբերման ուղղությամբ: Այսպես, Աստրախանում 1813–1816թթ. հրատարակված «Արևելեան ծանուցմունք = Восточные известія» պարբերականի 1913թ. ամբողջ լրակազմը և 1916թ.

վերջին՝ 27-րդ համարը ձեռք ենք բերել Աստրախանի երկրագիտական հավաքածուի առցանց գրադարանի կայքից: Հայտնի փաստ է, որ հայկական կրթամշակութային և հոգևոր կենտրոններում (Զմնառ, Երուսաղեմ, Վիեննա) պարբերականների, հատկապես խմորատիպ, հարուստ հավաքածու կա: Դրանց մատենագիտական ցանկերի ձեռքբերման և ուսումնասիրության արդյունքում վստահաբար կարող ենք ասել, որ հայկական պարբերականների թիվը կաճի:

Շտեմարանները հնարավորություն

են տալիս կատարելու վիճակագրական վերլուծություններ: Զուտ տեխնիկական աշխատանքներից զատ կատարվում են բանասիրական ուսումնասիրություններ՝ ճշտելով այս կամ այն գրքի կամ պարբերականի հրատարակության տարեթիվը, տպարանը կամ հրատարակչությունը և այլ տվյալներ:

«Հայ գիրք» և «Հայ մամուլ» էլեկտրոնային շտեմարանները օժտված են ձկուն հնարավորություններով՝ տպագիր ժառանգությունը ընթերցողին մատուցելու և օգտվելու համար:

АРМЯНСКОЕ ПЕЧАТНОЕ НАСЛЕДИЕ В ПРОЦЕССЕ ИСТОРИЧЕСКОЙ ЭВОЛЮЦИИ

ТИГРАН ЗАРГАРЯН

*Национальная библиотека РА, директор
кандидат технических наук*

АЙКАНУՍԻ ԿԱԶԱՐՅԱՆ

Национальная библиотека РА, замдиректор

МАЙА ГРИГОРЯН

Национальная библиотека РА, заведующая отделом библиографии и научных исследований

Национальная библиотека Армении является самым крупным хранилищем армянского печатного наследия. Информационные и коммуникационные технологии, а также библиотечные системы автоматизации наделены неограниченными возможностями для формирования сводных каталогов армянского печатного наследия.

В Национальной библиотеке продолжают работы над созданием баз данных “Армянская книга” и “Армянская пресса”, целью чего является сосредоточение и обобщение в них истории армянской книги и прессы, биографий авторов, редакторов и издателей, а также сведения об издательствах. Всевозможными методами (сканирование, загрузка с различных сайтов, дар от авторов или издателей) приобретаются оцифрованные копии книг и периодики и прикрепляются к библиографическим записям для чтения онлайн.

THE ARMENIAN PRINTED HERITAGE THROUGH THE CENTURIES

TIGRAN ZARGARYAN

Director of the National Library of Armenia, PHD in Technical Sciences

HAYKANUSH GHAZARYAN

Deputy Director of the National Library of Armenia

MAYA GRIGORYAN

*Head of the bibliography and research department of the National Library of Armenia,
PHD in Philological Sciences*

The National Library of Armenia as the largest repository of Armenian printed heritage in the world is responsible for preparing and producing national bibliographic lists of Armenian books and Armenian periodicals. Information and Communication Technologies and Library Automation systems are endowed with unlimited potential for the formation of combined catalogs of the Armenian printed heritage.

The National Library continues working on the creation of the database of «Armenian Books» and «Armenian Press». The purpose is to concentrate and summarize the history of Armenian books and press, biographies of authors, editors and publishers, as well as information on the publishing houses. By various methods (scanning, downloading from various sites, also from gifts of the authors or publishers) copies of books and periodicals are thus being acquired, digitized and attached to the bibliographic records for online reading.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР
INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

Հրատարակչության անունով՝
ԷՄԻՆ ՄԿՐՏՅԱՆ

Համարի թողարկման պատասխանատու և
գլխավոր խմբագիր՝
ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Սրբագրիչ՝
ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝
ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70 × 100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 29, 5 տպ. մանուկ
Տպաքանակը՝ 150



ԶԱՆԳԱԿ

ՀՐԱՏԱՐԱՎԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2

Հեռ.՝ (+37410) 23 25 28

Էլ կայքեր՝ www.zangak.am, www.book.am

Էլ փոստ՝ info@zangak.am

Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak